

7898

929

7-17

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՏԱԳՐԱԿԱՆ

ՀՀՀ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ
ՏՈՐՄԻ ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ԳՐԵՑ


ՅՈՎԱՔ ԹԱԴԵՈՍԵԱՆ
ԵՐԱՌԱՐԱՐ ԼԱԶԱՐԵԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ



ԳԻԵՆԱԱ

ԹԻՒԹԻՒՐ ՍՊԱՐԱԿ ՏԵՇԻՐԱԿ

1953



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԵՆԱԴՐԱՆ
ՀԱՏՈՒ ՁՎԱՅ.

NATIONALBIBLIOTHEK
BAND 176.

GESCHICHTE DER LAZAREFFS UND DES LAZAREFFISCHEN INSTITUTES DER ORIENTALISCHEN SPRACHEN ZU MOSKAU

von
JOSEF THADEOSSIAN



W I E N
MECHITARISTEN-BUCHDRUCKEREI
1953

329
P-14



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՅՍԻ ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵ- ԻԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ԳՐԵՑ

ՅՈՎԵՒՓ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՐԱԿԱՆԱՐԱՑ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ



ՎԻԵՆԱ

ՄԵԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1953

91 073 - each



24626-61 9-

2004

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ծուռ հանճարեղ գրող Լիւ Տոլստոյը ասում է .

«Զկայ աւելի մեծ հաճոյք քան այն, որ գրողը ստանում է իր ստեղծագործութիւնից» :

Իսկ հայ գրողը պիտի աւելացնի .

«Զկայ աւելի մեծ երջանկութիւն հայ գրողի համար քան այն, Երբ նա տեսնում է իր ստեղծագործութեան պառազը լոյս աշխարհ հանած եւ հանրութեան սեփականութեան դարձրած» :

Ահա՝ այսպիսի մի երջանկութեան արձանացրեց մեզ «Հանդէս Ամսորեայ»ի խմբագրապետ Հ. Ներսէս Ալիխնեանը, որ ոչ միայն շարունակաբար գրեթէ երկու տարի տպագրեց իր ուսումնաբերքում մեր աշխատանքը՝ «Պատմութիւն Խազարեան տոհմի և Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց», այլ եւ առանձին՝ գրեղիկով այսօր լոյս է ընծայում, առանց մեր մասնակցութեան դոյզն ինչ չափով երատարակութեան նիւթական ծախսերի մէջ :

Մեր լեզուն չափազանց աղքատ է գտնելու պատշաճ արտադայտութիւններ այն երախտագիտական բուռն զգացումների, որոնցով լցուած է մեր սիրտը հանդէպ գերաշնորհ Հ. Ներսէս Ալիխնեանի եւ ընդհանրապէս

Վիենայի Մխիթարեանների ամբողջ Միաբանութեանը :

Առանց այդ վեհանձն վերաբերմունքի մեր այդ աշխատանիքը՝ ի քիւս մեր միւս անտիպ մնացած աշխատանիքների՝ պիտի մնար անշարժութեան մատնուած . . . :

Արդ, բարոյական պարտի ենի համարում այս երկու խօսքով հրապարակաւ յայտնելու մեք սրտագին շնորհակալութիւններն ու երախտագիտական զերմ զգացումները մեր անզուգական գիտնական ու բազմահիմուտ խմբագրապետ Հ. Ներսէս Ակինեանին ու Վիենայի Մխիթարեան Միաբանութեան իրենց այս վեհանձն գործի համար, որ այնիան համապատախանում է Մխիթարեանների աւանդութեան՝ *լինել մշտավառ հնոց Հոյ գրի ու գրականութեան, Հոյ պահծալի Մշտակոյթների*:

Երախտապարտ՝

ՅՈՎ.ՍԵՓ ԹԱԴԵՈՍԵԱՆ

Թեհրան, Դեկտ. 1953:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

12

ՆԱԽԱՐԱՐՈՒՄՆԵՐ	1—11	
ՆԵՐԱՌԱՐՈՒԹԻՒՆ	12—94	
Ա. Քաղաքական կացութիւնը Անգրեգվկառ սում 19րդ դարի սկիզբներին և Ռուսականի թափանցումը Անգրեգվկառ		12
Բ. Արեւելեան Հայուստանի մշակութային պիճակը 19րդ դարի սկիզբներին		73
ՄԱՍԻ Ա. Պատմութիւն Լազարեան տոհմի	95—286	
Գլուխ Ա. — Լազարեան տոհմի ցեղասպեա Ղազար Նազարեան Լազարեանց		95
Գլուխ Բ. — Կոմս Յովհաննէս Ղազարեան Լազարեան		173
Գլուխ Գ. — Մինաս և Խաչոսուր Ղազա- րեան Լազարեան		159
Գլուխ Դ. — Յովակիմ Ղազարեան Լազա- րեան		169
Գլուխ Ե. — Յարութիւն Յովակիմեան Լա- զարեան		193
Գլուխ Զ. — Յովհաննէս Յովակիմեան Լա- զարեան		197
Գլուխ Է. — Խաչոսուր Յովակիմեան Լա- զարեան և Մանուկն Յովհաննէս Խաչո- սուրեան		223
Գլուխ Ը. — Ղազար Յովակիմեան Լազա- րեանց և պարսկահայերի դադթը Ռուսական		248
ՑԱՀԱՅԻՆԻԱՅՐ՝ Լազարեանների բարեգոր- ծութիւնները	276	

ՄԱՍԻ Բ. Պատմութիւն Լազարեան ձեմարանի	
Արեւելեան լեզուաց	287—460
Առաջին մաս.	
Գլուխ Ա. — Ընդհանուր տեսութիւն	287
Գլուխ Բ. — Լազարեան ձեմարանը իր զարգացման առաջին շրջանում (1815— 1837)	346
Գլուխ Գ. — Լազարեան ձեմարանը իր զարգացման եկորորդ շրջանում (1837— 1848)	360
Գլուխ Դ. — Լազարեան ձեմարանը իր զարգացման երրորդ շրջանում (1848— 1865)	368
Գլուխ Ե. — Լազարեան ձեմարանը իր երկրորդ յիսնամեկի առաջին 25ա- մետրում (1865—1890)	402
Գլուխ Զ. — Լ. ձեմարանը, որովէս ազ- գային ոգու վայ հնոց	410
Գլուխ Է. — Աշխարհաբարի յաղթանակը ձեմարանում	427
Գլուխ Ը. — Ձեմարանի աշակերտութիւնն ու վարչական կազմը	436
Գլուխ Թ. — Մանկավարժական դործը ձեմարանում	448
Գլուխ Ժ. — Արձանի ի յիշտառակ ձեմարանի հիմնադիրների	457
ՄԱՍԻ Գ. Պատմութիւն արեւելեան լեզու- ների Մասնագիտական Գաստրաների կամ Լիկեռնի	462—484
ՏԱԻՆԵՐԻԱԼԾ	485—507
1. Լազարեանների դրամական նուիրա- տուութիւնները Լազարեան ձեմարանին	485
2. Ձեմարանի շրջանուարտների համառու անուանացուցակը	486

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Լազարեանները 18րդ դարի կէսից սկսած
մինչեւ 19րդ դարի կէսերը ի յայտ են բերել
մեր ազգային հասարակական-քաղաքական ու
ժակութային կեանքի մէջ այնպիսի՛ բեղուն
ու վճռական նշանակութիւն ունեցող գոր-
ծունէութիւն, որին միացրել են իրենց ան-
ձնական մեծ առաքինութիւնները, որ ար-
ժանի են, որպէս զի նրանց յիշատակը միշտ
մնայ թարմ ու կենդանի:

Եթէ Լազարեանները ոչինչ ուրիշ գործ
կատարած չլինէին, այլ միայն այն, որ
նրանք եւ պատճառ եղան եւ մեծապէս
նպաստեցին տասնեակ հազարաւոր հայ ըն-
տանիքների ազատագրութեան գործին ա-
սիական բռնակալների անհանդուրժելի դար-
ձած իշխանութիւնից եւ ապա ապահովեցին
նրանց խաղաղ զարգացման ուղին Ռուսաս-
տանի հովանու տակ, — արդէն իսկ բաւա-
կան է, որպէս զի յետազայ հայ սերունդ-
ները միշտ երախտազիտական զգացումնե-
րով առլցուն վառ ու կենդանի պահեն նրանց
յիշատակը:

Բայց Լազարեանները օժտուած էին նաև
մի այլ բացառիկ առաքինութեամբ, որ յա-
ւերժ օրինակ պիտի ծառայէ մեր բոլոր կրե-
սոսների եւ օտար պետութիւններում կառա-
վարական բարձր պաշտօններ վարող աղ-
դայինների համար:

Լազարեանները իրենց ամբողջ կեանքով
ու գործունէութեամբ ապացուցեցին, որ
կարելի է հաւատարմութեամբ, անկեղծ
նուիրումով ծառայել մի հիւրընկալ օտար
պետութեան, բայց երբեք չմոռանալ իրենց
հայ ազգը:

Եւ արդարեւ, Լազարեանները մեծ հա-
ւատարմութեամբ ծառայել են Ռուսաստա-
նին՝ հինգ կայսրների եւ երկու կայսրու-
հինների օրօք, երբ Ռուսաստանի ներքին եւ
արտաքին քաղաքականութիւնները այնքա՞ն
խոր տարրերութիւններ են ունեցել, երբ ուս
կեանքը յաճախ փոթորկուել է ներքին ու
արտաքին մեծամեծ ցնցումներով, նրանք
անխախտ պահպանել են իրենց բարձր դիր-
քերն ու մեծամեծ ծառայութիւններ մատու-
ցել Ռուսաստանին:

120 տարուայ ընթացքում նրանք ձեռք են
բերել մեծ հարստութիւն, հասել բարձր աս-
տիճանների, իրենց պատասխանատու պաշ-
տօնների մէջ արժանացել մեծ ու բացառիկ
պատիւնների ու փառքի, բայց երբեք չեն մո-
ռացել, որ իրենք ամենից առաջ հայ են եւ

սլարտականութիւններ ունին հանդէս իրենց հայրենիքի, իրենց ազգի ու ժողովուրդի: Նրանք անվախ ու բացարձակ կերպով ցուցացրել են իրենց հայրենասիրական ջերմ զգացումներն ու ձգտումները մեծամեծ դործերով: Մի խօսքով նրանք կարողացել են զիաշսերն՝ կայսեր եւ զԱստուածոյն՝ Աստուծոյ տալ:

Եւ Հիմնեցին այն կրթական մեծ հաստատութիւնը այն օրերին, երբ Հայաստանը յօշոտուած էր ասիական բռնակալների ձեռքով եւ հայ ժողովուրդը գալարւում էր անհուն տառապանքների ու տղիտութեան խաւարի ճիրանների մէջ:

Եւ Լազարեան ճեմարանը եղաւ մի լուսարձակ փարոս, որ վայելելով ոռւս հզօր պետութեան մշտական հովանաւորութիւնը — մի հովանաւորութիւն, որ Լազարեանները կարողացան մեծ հեռատեսութեամբ եւ իրատեսութեամբ ապահովել, — տարածեց իր լուսոյ ճառադայթները մինչեւ Արաքսի ափերը, մինչեւ Պարսկաստանի խորքերը, թափանցեց ամենայետին գիւղացու խրճիթը եւ վանելով տղիտութիւնը, առատօրէն ցանեց հայկական ապագայ վերածնունդի սերմերը: Հարիւր տարի ճեմարանը մտաւոր սնունդ է տուել հայութեան եւ առաջ մղել նրա մշակութային յառաջադիմութիւնը:

Զիայ որեւէ կշիռ ու չափ, որպէս զիկարելի լինի չափել, ճանաչել ու գնահատել այն նպաստը, որ նա բերել է հայ ժողո-

վուրդի մտաւոր լուսաւորութեան վեհ գործին՝ հայ լեզուին, հայ զրականութեան, հայ պատմագիտութեան եւ հայ հասարակական-քաղաքական կեանքի զարթօնքին իր հարիւրաւոր շրջանաւարտների, իր գիտնական ուսուցիչների, իր տպարանի միջոցով։

Ճեմարանի թողած հետքերը — թէեւ նա այլեւս գոյութիւն չունի 1918 թուականից սկսած, 1917 թ. Հոկտեմբերեան յեղափոխութեան հետեւանքով — այսօր էլ զեռ զգալի են ու չօշափելի մեր կեանքի մէջ։

Բայց չնայած այդ բոլորին, Լազարեան ճեմարանը չունի իր պատմութիւնը, չունին նաեւ նրա հիմնադիրներն ու պահպանողները՝ Լազարեանները, իրենց կենսագրականները, մատչելի հայ ընթերցող հասարակութեան լայն խաւերին . . . :

Ահա՛ թէ ինչո՞ւ պէտք էր այդ բացը լրացնել։ Եւ մենք յանձն առինք այդ աշխատանքը նաեւ մի շարք այլ շարժառիթներից մղուած։

Իինելով Լազարեան ճեմարանի նախկին սան՝ Լազարեանների որդեգիրը¹, մենք ստացել ենք մեր միջնակարգ կրթութիւնը ճե-

¹ Մեր դիւդը, այն է Վերին Ազուլիսը, արտօնութիւն էր ստացել Լազարեաններից միւտ յաջորդաբար ունենալու ճեմարանում Լազարեանների հաշուին մի աշակերտ՝ գիւղի դպրոցի յառաջադէմ տղաներից։ 1886—1887 թ. ուսուարութեանը աւարտել էր Վ. Ազուլիսի Մկրտիչ Բարխուդարեանը։ 1887 թ. ինձ վիճակուեց փոխարինելու նրան, որպէս Լազարեանների սան։

մարանում, որ եւ դուռ է բաց արել մեզ համար նաեւ բարձրագոյն կրթութիւն ստանալու Մոսկուայի համալսարանում։ Այս հանդամանքը մեզ վրայ բարոյական պարտականութիւն է դնում մեր երախտագիտական տուրքը տալու այդ բազմերախտ տոհմին։ Զէ՞ որ, ինչպէս մենք, այնպէս էլ հարիւրաւոր որբ ու չքաւոր գիւղացի երեխաներ, որոնք նոյնպէս բախտ են ունեցել սովորելու Ճեմարանում Լազարեանների հաշուին, դատապարտուած պիտի լինէինք զոհ զնալու մեր խաւար միջավայրին ու չքաւորութեան։

Լազարեանները իրենց հեռատեսութեան և իրատեսութեան մէջ հէնց սկզբից ապահովել էին 30 որբ կամ չքաւոր հայ երեխաների ձրի կրթութիւնը Ճեմարանում, իրենց հաշուին, որպէս զիշերօթիկներ։ Այդ որդեգիրների թիւը իմ ժամանակ արդէն հասել էր 44ի։

Այս տեսակէտից չափազանց ուշադրաւէ, որ Լազարեան Ճեմարանը հէնց սկզբից եղել է ապահասակարգային դպրոց, մինչդեռ մեր թեմական դպրոցները, սկսած Ներսիսեան դպրոցից, երկար ժամանակ կրել են դասակարգային բնոյթ եւ յատկացուած են եղել հայ հոգեւորականների, ազնուականների ու վաճառականների զաւակների ուաման համար։

Լազարեան Ճեմարանի այդ ժողովրդավար բնոյթը կազմել է նրա բազում առաւե-

լութիւններից մէկը, թերեւս, ամենից էտկանը:

Այսուհետեւ բարի նախանձախնդրութիւնն էլ իր բաժին դերն է կատարել մեր ներկայ ձեռնարկի մղիչ հանգամանքների շարքում:

Եւ արդարեւ, Ներսիսեան դպրոցը Թիֆլիսում, Երեւանի Թեմական դպրոցը եւ նոյն իսկ Ղարաբաղի Թեմական դպրոցը, որոնք հիմնուել են մի քանի տասնեակ տարիներ աւելի ուշ, քան Լազարեան Ճեմարանը, ունին իրենց ընդարձակ ու համառօտ պատմութիւնը, մինչդեռ Լազարեան Ճեմարանը մինչեւ այսօր էլ չունի իր ո՛չ ընդարձակ եւ ո՛չ համառօտ պատմութիւնը, ինչպէս եւ նրա հիմնադիրները՝ Լազարեանները՝ չունին իրենց կենսագրականները . . . :

Այս պատմական անարդարութիւնն էլ պէտք էր վերացնել . . . :

Այս բոլոր պատճառների եւ նկատումների շարքում կայ եւ մի այլ պարագայ, որը անկարելի է անտեսել:

1912 թուին Լազարեան Ճեմարանի վերատեսուչ ուսուս Գիդուլեանովը, պրավտումներ կատարելով Ճեմարանի անցեալի մէջ, եկել էր ոչ անհիմն այն եզրակացութեան, որ Ճեմարանի հիմնադրութիւնը եղել է 1814 թ. եւ ո՛չ 1815 թ., ինչպէս ընդունուած էր ամբողջ 100 տարուայ ընթացքում: Այս իսկ պատճառով նա որոշեց կատարել Ճեմարանի հարիւրամեայ յորելեանը 1914 թ.

աշնանը։ Այս մասին նա, ի միջի այլոց, յայտնեց Մոսկուայում գտնուող ձեմարանի շրջանաւարտներին եւ առաջարկեց նրանց բերել իրենց մասնակցութիւնն եւ օժանդակութիւնը յորելեանի կազմակերպական աշխատանքներին։

Այդ ժամանակ ես պաշտօնավարում էի ձեմարանում։

Սիրով արձագանգելով վերատեսչի կոչին, Մոսկուայում գտնուած ճեմարանաւարտները, շուրջ 25—30 հոգի, հաւաքուեցինք խորհրդակցական ժողովի ձեմարանում, մշակելու մեր աշխատանքների ծրագիրը։ Ժողովի նախագահ ընտրուեց Մոսկուայի հանրածանօթ ազգային-հասարակական գործիչ իրաւաբան Ստեփան Մամիկոնեանը։

Այդ խորհրդակցական ժողովը իր միշտաք որոշումների շարքին վճռեց կազմել ձեմարանի համառօտ պատմութիւնը, տպադրել այն եւ ապա ձրի ցրուել հայ ժողովրդի մէջ։

Եւ այդ դործը յանձնարարուեց ինձ։ Ես սիրով ընդունեցի ինձ եղած առաջարկը եւ մէծ եռանդով նուիրուեցի այդ աշխատանքին։

Աղքիւրների պակաս էլ չունէի. ձեմարանի հարուստ մատենադարանը իմ տրամադրութեան տակ էր։

1914 թ. գարնան վերջերքին արդէն աւարտած ու պատրաստ էր իմ աշխատանքը,

ամփոփուած չորս քառածալ հաստ տետրակակների մէջ :

Բայց նոյն թուի ամբանը պայթեց առաջին համաշխարհային պատերազմը եւ Ճեմարանի յորելեանի խնդիրը ջուրն ընկաւ :

Ճեմարանը դէպքերի բերումով այլեւս բախտ չունեցաւ տօնելու իր յորելեանը, մանաւանդ որ 1918 թ. աշնանը նա դադարեց գոյութիւն ունենալուց :

Իսկ 1921 թուին կորուստի մատնուեց եւ մեր այդ աշխատանքը :

Եւ մենք ստիպուեցինք միւսանդամ զրադուել նոյն խնդրով :

Այժմ միւ-երկու խօսք մեր այս նոր աշխատանքի բնոյթի մասին :

Մեր այս գործը չունի ինքնուրոյն ուսումնասիրութեան քնոյթ. նա հետամուտ է մի շատ համեստ նպատակի՝ ի մի հաւաքել Լազարեանների եւ Լազարեան ճեմարանի մասին եղած տեղեկութիւնները, ցրուած քազում հայերէն եւ ռուսերէն հրատարակութիւնների մէջ, յանախ զրաբար ու երբեմն նաև շատ խրթին լեզուով գրուած աղբիւրների մէջ, եւ ամբողջացնելով աջդ ամէնը, ներկայացնել հայ ընթերցող հասարակութեան մատչելի լեզուով։ Շատ յաճախ մեր աղբիւրների մէջ եղել են բառիս բուն նշանակութեամբ սոսկ երկու խօսքով յիշատակութիւն մի դէպքի, մի անուան. այդպիսի աղբիւրների անունները մենք չենք յիշատակել։

Ասենք եւ այն, որ ինքնուրոյն ուսումնասիրութիւն չէր կարող լինել մեր աշխատանքը հետեւեալ անյաղթահարելի արգելքների հետեւանքով։

Ամենից առաջ նրա համար, որ Լազարեան ձեմարանի հարուստ մատենադարանը, ուր ժամանակին ի պահ դրուած էին նաև Լազարեան տոհմի բազմահասոր քղբակցութիւնները եւ ուր գտնվում էին նաև ձեմարանի տարեկան հանդեսների ժամանակ ներկայացուած հաշուետուութիւնները ձեմարանի կրթական գործի եւ նիւթական վիճակի մասին, — այժմ գտնվում են Խ. Հայաստանում եւ մատչելի չեն մեզ։

Երկրորդ, մենք չենք ունեցել եւ չէինք էլ կարող ունենալ մի շարք կարեւորագոյն աղրիւրներ, ինչպիսիք են՝

ա. Հայ ժողովրդի պատմութեան տեսութեան վերաբերող ակտերի ժողովածուն (1833—1838 թթ. ոռուսերէն լեզուով)։

բ. Լազարեան ձեմարանին վերաբերող բարձրագոյն հրովարտակների ու հրամանագրերի ժողովածուն (1839 թ. ոռուսերէն) եւ ապա այնպիսի ուսումնասիրական պատմական մեծարժէք հրատարակութիւններ, որպիսիք են՝ Շոպէնի, Սիրտէյ Գլինկայի, Բրիկնէրի, Սչերբատովի եւ այլ հեղինակների գործերը, որոնք անհրաժեշտ էին ձեռքի տակ ունենալ լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրական աշխատանքի համար։

Այս ձեռնարկների եւ աղբիւրների պակասը այսուհանդերձ չի արժէքազրկում մեր աշխատութիւնը. մենք օգտուել ենք մի շարք այնպիսի ձեռնարկներից, որոնք կազմուած են հեղինակաւոր ուսումնասիրողների ձեռքով հէնց վերոյիշեալ աղբիւրներից քաղած տուեալների հիման վրայ. այսպիսով, մենք օգտուել ենք, այսպէս ասած, երկրորդ ձեռքից; բայց այդ ձեռքերը եղել են կարող ու բարեխիղճ :

Յիշատակենք այդ կարգի մեր աղբիւրներից, մի քանիսը .

ա. Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայտագատաց Լազարեան տուհմի : Շարադրեալ ի Մսերայ Մագիստրոսէ եւ ասպետէ Գրիգորեան Մսերեանց : Մոսկուա, ի տպարանի Արեւելեան լեզուաց ձեմարանի Տեարց Լազարեանց : 1856—թթէ :

բ. Պատմական ակնարկ Լաղ . ձեմարանի Արեւելեան լեզուաց հանդերձ համառօտ կենսագրականներով ձեմարանի հիմնադիրների, Յաւելուածներով պատմական ակնարկին ու կենսագրականներին : 2րդ հրատ. կազմեց Պրոֆ. Ալեքսէյ Զինովիւ . Մոսկուա, Տպարան Լազարեան ձեմարանի 1863 (ոռուսերէն) :

գ. Ձառեր եւ հաշուետուութիւն, արտասանուած Լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուաց 50ամեակի առթիւ տեղի ունեցած հանդիսաւոր հաւաքոյթին : Մոսկուա, Տպարան Լազարեան ձեմարանի, 1865 (ոռուսերէն) :

Դ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան
Լեզուաց մասնագիտական դասընթացքների
30ամեակը: Մոսկովա, 1903:

Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն
և Կովկասի Հայք XIX. դարում: Մասն Ա.
(1800—1832) և Մասն Բ. (1831—1842):
Աշխատասիրեց Աղեքսանդր Երիցեանց:
Թիֆլիս 1894 և 1895:

Գ. Լէօ, Յովսէփ Կաթողիկոս Արդու-
թեան, Թիֆլիս 1902:

Է. Լէօ, Պատմութիւն Երեւանի Հայոց
Ժեմական դպրոցի, 1837—1912, Թիֆլիս
1914:

Ը. Բարձրագոյն հրովարտակք, կանոնա-
դրութիւնք եւ ցուցակ Լազարեան Ճեմարանի
Արեւելեան Լեզուաց ի Մոսկով և Կանոնք
Խորին բարձրագոյնս հաստատեալք, ծախիւք
Տ. Հոգաբարձուի Լազարեանց Ճեմարանի ի
յիշատակ մատաղահաս Յովհաննու Խաչա-
տրեան Լազարեվի: Ի Մոսկով, ի Տպարանի
Լազարեանց Ճեմարանի Արեւելեան Լեզուաց:
1852 (հայերէն եւ ռուսերէն):

Մնացեալ աղբիւրները, որոնցից մենք
օգտուել ենք, յիշատակուած են թէ բնագրի
եւ թէ առանձին ցանկի մէջ:

Մէջբերումներ անելիս այդ աղբիւրնե-
րից, մենք պահպանել ենք բնագրերի թէ
լեզուն եւ թէ ուղղագրութիւնը ամենայն հա-
րազատութեամբ:

Ի վերջոյ պարտք ենք համարում յայտ-
նելու մեր խորին չնորհակալութիւնները շատ

յարդելիք Պ. Տիգրան Արգարեանին (Ն. Զու-
ղա), որ մեզ տրամադրեց ձեմարանի
50ամեակին նուիրուած թանկարժէք ու հա-
զուազիւտ դարձած հրատարակութիւնը, ինչ-
պէս եւ Թեհրանի Հայ Ակումբի Վարչու-
թեան ու մասնաւորապէս գրադարանապետ
երիտասարդ Պ. Նորայր Ստեփանեանին,
որոնք դիւրութիւններ տուին լայն չափով
օգտուելու Ակումբի գրադարանից :

Թէհրան, 1947 թ. Օգոստոս 30:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քաղաքական կացութիւնն Անդրկովկասում
19րդ դարի սկիզբներին եւ Ռուսաստանի
քափանցումը Անդրկովկաս :

(Պատմական համառօտ տեսութիւն :)

Ա.

Արեւելեան Հայաստանը 19րդ դարի
սկիզբներին գեռ եւս գտնուում էր պարսկա-
կան ու թրքական պետութիւնների բիրտ
տիրապետութեան տակ եւ հեծում էր նրանց
մեծ ու փոքր բռնակալ իշխանաւորների ան-
խիղճ եւ անլուր հարստահարութիւնների ու
կեղեքումների ծանր բեռան ներքոյ . . . :

Ռուս պետութեան աստիճանական թա-
փանցումը միայն, նախ տնտեսապէս, առեւ-
տրական գետնի վրայ, եւ ապա քաղաքակա-
նապէս, ընդլայնելով ու տարածելով իր սահ-
մանները մինչեւ Երասխ գետի ափերը, գրա-
ւելով ամբողջ Անդրկովկասը 19րդ դարի
20ական թուականների վերջերքին, — վերջ
տուեց իրերի յիշեալ ողբերգական կացու-
թեան. հայ ժողովուրդը հնարաւորութիւն

ստացաւ կեանքի խաղաղ պայմաններում, պետական օրինական կարգերում, արագօրէն ստեղծել իր համար տնտեսական բարգաւաճ վիճակ, շէնցնելով ամայի երկիրը, և ապա բռնել կուլտուրական յառաջադիմութեան ձամբան: Արդէն 50ական և 60ական թուականներին նա ապրում էր իր Վերածնութեան չքնաղ օրերը: Մի խօսքով, Հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդը փթթեց ու զարգացաւ ամենակարճ ժամանակում այն աստիճանի, որ նա գարձաւ ամրող Անդրկովկասում տնտեսական ու քաղաքական խոշոր գործօն տարր:

Մեր նիւթից դուրս է նկարագրութիւնը Հայութեան դառն վիճակի յիշեալ ասիական բռնապետութիւնների օրով, սակայն որպէս յիշեցում, որ ներքնապէս կապուած է Հետագայ դէպքերի հետ, առաջ ենք բերում մի երկու պատմական վկայութիւններ:

«Վէրք Հայաստանի» մէջ անմահ Ա. Արովեանը նկարագրում է Հայութեան դժբախտ վիճակը Երեւանի խանութեան մէջ, ի միջի այլոց, հետեւեալ յուղիչ տողերով.

«Աղջիկն ասես քաշում էին, տղէն ասես տանում, շատ անգամ թրքացնում, հաւատից հանում, շատ անդամ էլ զլուխը կտրում, էրում, նահատակում: Ոչ տունն էր իրանը (Հայինը), ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը . . .» :

Մի այլ վկայութիւն :

«Դարաւոր անիշխանութեան ամբողջ ժամանակամիջոցում, ասում է Գիւտ աւ. քահ. Աղանեանը, հազիւ թէ երբ եւ իցէ հայ աշխարհն այնքան բազմաթիւ տիրողներ ունեցած լինի, ինչպէս 18րդ դարում։ Թէպէտ Հայաստանը քաղաքականապէս բաժանուած էր իսկապէս երկու տէրութեանց մէջ՝ Պարսից եւ Տաճկաց եւ մի փոքր մասն էլ Վրաց իշխանութեան ներքոյ էր, բայց այնքան խաներ ու փաշաներ կային երկրի մէջ, գրեթէ վասսալական իշխողներ, որոնք շատ փոքր կախում ունէին երկու տէրութեանց Շահերից ու Սուլթաններից, որ կարծես թէ երկիրը բազմաթիւ մանր պետութիւնների կամ խանութիւնների բաժանուած լինէր. այդ բանն այն վատ հետեւանքն ունէր, որ յաճախ այդ խանները, զանազան հաշխոներից դրդուած յարձակում գործելով միմեանց վրայ, աւերում էին երկիրը եւ պատճառ դառնում ազգաբնակութեան թշուառութեան, որ ստիպուած էր շատ անգամ իր ծննդավայրը թողնելով գաղթել օտար երկիրներ, ուր աւելի ապահով էին համարում իրենց կեանքը¹։

Այդ ապահով երկրներից մէկը, ամենից մերձաւորն ու որպէս քրիստոնեայ մի պետութիւն, ուր կրօնական ազատութիւն էր

¹ Տե՛ս Գիւտ աւ. քահ. Աղանեանց, «Դիւան Հայոց Պատմութեան», Գիրք Ա. և Բ., 1780—1834, Թիֆլիս 1893։

տիրում, Ռուսաստանն էր հիւսիսում, դէպի
որն եւ Հայերը ամենից առաջ դարձրին իրենց
Հայեացքները:

Արեւելքից, արեւմուտքից եւ Հարաւից
Հայաստանը օղակուած էր մահմեղական
ցեղերով ու պետութիւններով, միայն մօտա-
ւոր հիւսիսում էր գտնւում քրիստոնեայ
Վրաստանը, որն ինքն էլ տառապում էր
նոյն գժրախտ պայմաններում. մնում էր մի-
այն հեռաւոր Ռուսաստանը, որն արդէն տա-
րածել էր իր իշխանութիւնը մինչև Վոլգա
գետը եւ Կասպից ծովի ափերը:

Քանի որ Լազարեանների հոյակապ տոհմը
խոչոր դեր է կատարել, մի կողմից ընդա-
ռաջելով իրենց թշուառ Հայրենակիցների
ձգտումներին ձեռք բերելու Ռուսաստանի
հզօր հովանաւորութիւնը կամ իրաւունք
գաղթելու Ռուսաստան, եւ միւս կողմից մե-
ծապէս նպաստել է Ռուս պետութեան թա-
փանցումին Անդրկովկաս, ուստի Հարկ ենք
Համարում մի պատմական թռուցիկ Հայեացք
ձգել ոռւս-Հայկական յարարերութիւնների
զարգացման վրայ, կանգ առնելով միայն
գլխաւոր կէտերի վրայ, մասնաւորապէս այն
դէպէրի վրայ, որոնց մէջ այս կամ այն մաս-
նակցութիւնն են ունեցել Լազարեանները,
ուկած 1750ական թուականներից :

Ծուռ-Հայկական գոխյարաբերութիւն-ները սկսուել են շատ վաղ ժամանակներից, 17րդ դարի կէսից, ցար Ալէքսէյ Միխայլովիչ Ծոմանովի օրով (1645—1676) :

Ծուռ պատմաբան Սոլովեովը պատմում է հետեւեալ դէպքը.

«1660 թ. Մոսկուա էր եկել հայ վաճառական Զաքար Սահրադովը եւ բերել էր իր հետ որպէս նուէր ցարին հարուստ զահ, ընդելուզուած աղամանդներով, յակինթներով, զոհարներով, արեւելեան փիրուզայով եւ տաճկական էմայլով²» :

Նոյն պատմաբանի ասելով, թաղաւորի արտաքին գործոց հիմնարկում մանրամասն հարց ու փորձի են ենթարկում այդ չնաշխարհիկ հիւրին, կամ ենալով պարզել առեւտրական կապեր ստեղծելու հնարաւորութիւններն ու պայմանները: Սահրադեանը յայտարարում է, որ թէ ինքն եւ թէ իր հայրը պատրաստ են աշխատելու ու ծառայելու քրիստոնեայ մեծ արքային եւ այդ ո՛չ թէ իրենց անձնական շահի համար:

Նոր Զուղայի պատմութեան հեղինակը՝ Յարուբիւն Տէր-Յովհաննեանը առաջ է բերում Վենետիկի «Բազմավէալ» թերթից (1843 թ. թիւ 2. յունուար 15, էջ 13) նոյն Զաքար Սահրատեանի մասին հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները «ըստ իսկական բնագրոյն» :

² Հատոր 12, էջ 273:



«Ան ատենի (իմա՛ ի մէջ եօթն եւ տասներորդ դարու) Հայ վաճառականներուն պատմութեանը մէջ երկու երեւելի դիպուած կայ. հիմակու հիմայ անոնք պատմենք առտեղն, ստոյգ աղբիւրներէ առնելով. ա. Ռուսաց Ալէքս թագաւորին օրերը 1659ին Ասպահանցի Հայ վաճառականներէն Զաքար Սահրատեան անունով մէկը, որ Պարսից փոխարքային ալ գործակալն է եղել, ծովով Աժտէրխան կու գայ, անկէց ալ 1660ին թագաւորական հրամանով Մոսկուա քաղաքն կը հասնի ինը ընկերով: Ասիկայ թագաւորին ընծայ կը բերէ մէկ պղնձի վերայ քաշուած պատկեր մը Քրիստոսին ընթրիքն, մէկ ոսկէ մատնի, այլ եւ այլ սուղ բաժակներ, ազնիւ բմպելիքներ, ու անուշահոտ նիւթեր, բայց ամենէն երեւելի ընծան եղած է քագաւորական արոոր, որ Զաքարին հայրը շիներ է եղեր: Ասոր շատ տեղը ոսկի է, ու վրան մեծ ու պզտի 876 ադամանդ կայ, 1 լալ, 1223 յակինք մանր ու խոշոր, երեք կարգ մարզարիտներով ձեւացուցած հրեշտակներ 3: Ան ատենի վաճառականները անոնց ամենու գինը կտրեր են 24·443 րուպլի, որ հիմիկուան արժէքով 550·000 զուրուչէն աւել կ'ընէ: Թագաւորն ալ գրեթէ նոյնչափ ստակ կու տայ Սարհատեանին, անկէ զատ իրեն ուրիշ ընկերներուն թագաւորական ոռնչիկ կը կապէ, ան հինգ ամիսի չափ ժամանակն որ Մոսկուա կեցեր են. եւ ետքը իրենց տեղը կը

³ Ընդդումները մէրն են:

մամրէ : Վրան Եօթ տարի անցնելէն ետեւնոյն Ալէքս թագաւորը ջուղայեցւոց հետ գրով դաշնագրութիւն կ'ընէ , ու անկէ ետքը Պարսկաստանի Հայերը կը սկսին աւելի շատ երթալ ու դալ Ռուսաստան : Իսկ ան աթուր Ռուսի թագաւորները հին ատենը կը գործածեն եղեր թագ դնելու օրերին , մեծ տօներուն Եկեղեցական ընդունելու ժամանակին : Հիմա միայն թագաւոր օծելու ատենը կը գործածեն Վերափոխման Տաճարին մէջ , իսկ սովորաբար Կրանովիթայա պալաթա⁴ բառած Թանգարանը կը պահուի ⁵ :

«Բազմավիպ»ի հազորդած «երկու երեւելի դիպուածներից» միւսն էլ հետեւեալնէ . այս դէպքը արժանի է յիշատակութեան ոչ միայն ոռւս-հայկական յարաբերութիւնների

⁴ Գրանօնական պալատա Կրեմլի մէջ . Դրանովիտի պալատա , որահ :

⁵ Տե՛ս «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահանք» : Աշխատասիրեալ ի Պ. Յարութիւն թ. Տէր-Յովհանեանց Նոր Ջուղայեցւոյ , յԱտենապորէ Ամենափրկչեան Սրբոյ Վանաց . Ն. Ջուղա . Տպարան Ամենափրկչեան Ս. Վանաց : 1880 , Հատոր Ա. , էջ 497 և Հատոր Բ. , էջ 317 : Վերի մէջը երումը տե՛ս Հատ . Ա. , էջ 166—167 : Այս չքեղ զահը մենք տեսել ենք 90ական թուականների սկզբին , երբ Լազարեան ծեմարանի աշակերտ էինք : Մեզ՝ մի խումբ աշակերտներիս առաջնորդող թանգարանի պաշտօնեան իր բացատրութիւնների ժամանակ ասում էր , որ այդ զահը նուիրաբերել են ցար Ալէքսէյ Միխայլովիչին Հնդկաստանի Հայերը : Հետեւարար , սխալ պիտի համարել այն կարծիքը , իրը թէ Հայերը այդ դահը վաճառել են ցարին , ինչպէս մի քանի հեղինակներ են Հաղորդում եւ ինչպէս կարելի է եզրակացնել «Բազմավիպ»ի պատմածից : Ն. Ջուղայի յիշեալ պատմարանը եւս իր Հերթին սրբազրում է «Բազմավիպ»ի տուած տեղեկութիւնները , ոլնդելով , որ զահը ծախուած չէ եղել , այլ նուէր է եղել ցարին :

տեսակէտից, այլ եւ նրա համար, որ նրա մէջ մասնակցութիւն է ունեցել Լազարեաններից մէկը:

«Շատին ծանօթ ու Եւրոպացւոց մէջ շատ անուանի է Կատարինէ Բ. կայսրուհին դաւագանի ծայրի աղամանդը. կ'ըսեն թէ աս աղամանդը ատենով Դահմազզուլի խանինն է եղեր, որ Նադրշահ ալ կ'ըսուի: Պարսից թագաւորութեան շփոթած ատենները, Նատրշահին հարստութիւնները ցրուելէն ետքը Շաֆրազ անունով Հայ վաճառականը՝ պարսիկ զինուորէ մը կը զընէ աս աղամանդը, ու 10 կամ 15 տարիէն ետքը Աժտէրխան կը բերէ: Ռուսի Վաճառականներուն մէջ գնող կը փնտոէ չի գտնար. թագաւորական գանձին ծախել կուզէ՝ մըսիկ ընող չըլլար, ուստի միտք կը դնէ որ Եւրոպայի ուրիշ Տէրութիւններուն տանի. բայց Եղիազարեան (կարգա՛ Լազարեան) Հայ ազգի իշխանին միջնորդութեամբը վերջապէս Օռլով կոմսը աս աղամանդը գնելու կ'ըլլայ թագաւորական գանձին համար, 400·000 բուլլիով, որ Հիմա զրեթէ 12·000·000 զուրուշ կընէ: Շաֆրազը աս չափաւոր ստըկին կը զիջանի, յանձն կառնէ, բայց կը խնդրէ որ կայսրուհին ալ իրեն մէկ չնորհք մը ընէ: Օռլով կ'առնէ աղամանդը, աղուոր տուփի մը մէջ դրած զատկին առաջի օրը Կատարինէին կ'ընծայէ, կայսրուհին ալ ան 400·000 բուլլին, Շաֆրազին տալէն ետքը ազնուականութեան աստիճան ալ կու տայ անոր: Աս աղամանդը

ճանչցողները ինչուան հարիւր միլիոն ֆրանքի կ'արժեցնեն, որ 500 միլիոն դուրսէ ըսել է» :

Այս գէպքի մասին ոռւս անուանի պատմագիր Պօտոսն հետեւեալ կերպով է պատմում. «Լազարեան տոհմի պատմութիւնը ամուր կազուած է Ռուսաց կայսերական թագը դարդարող մի թանկագին գոհարի հետ : Այդ աղամանդը, որ Շահ-Նադիրին էր պատկանում, բերել է Լազարեան տոհմի անդամներից մէկը : Շահի սպանուելուց յետոյ այդ թանկագին քարը ձեռքէ ձեռք անցնելով ընկաւ վերջը Պետերբուրգում բնակող Շաֆրադ (կարդա՛ Շաֆրադ) անունով մի հայք ձեռք : Լազարեանը յանձն կ'առնու այդ գոհարը կոմո Օրլովի համար գնել տալու : Գոհարը գնուեցաւ 400.000 մանէթի :

«Օրլով՝ Զատկի առաջին օրը կարմիր ձուի ձեւով շինուած մի տուփի մէջ այդ գոհարը նուիրեց Եկատարինէ կայսրուհոյն : Այդ աղամանդն իւր մեծութեամբ, փայլովը, տաշուածքովն ու ջրովը մի հազուագիւտ րան է . ճանաչողները գնահատում են մի քանի միլիոն :

«Եկատարինէն Հրամայեց դարդարելնը նով կայսերական գայիսոնը⁶ :

⁶ Տե՛ս «Վերածնութիւն Հայաստանի» : Գրեց Ռուս պատմաբան Վ. Պօտոս : Ռուսերէնից թարգմանեց Պ. Պ., Պարիս 1904, արտասալքած «Բանասէր» Հանդեսից : Մէջրերումը՝ էջ 17 : Պօտոսի այս պատմածի մէջ էլ կայ շփոթ : Մէկ ասւում է, որ «Լազարեան տոհմի անդամներից մէկն է բերել» : Եթէ այդ ճիշտ է, ապա

Այս միջանկեալ դէպքից յետոյ, վերադառնանք ցար Ալէքսէյ Միխայլովիչի օրով ոռւս-հայկական փոխյարարերութիւններին:

Զաքար Սահրատեանի տուած այցելութիւնը Մոսկուայի կառավարութեան ապարդիւն չի անցնում:

Ցար Ալէքսէյ Միխայլովիչը 1667 թ. մայիս 31ի հրովարտակով մի շարք արտօնութիւններ է տալիս Հայ վաճառականներին, թոյլատրելով ներածել մետաքս եւ ասիական ապրանքներ:

1673 թուին փետրուար 7ին նոր հրամանագրով վերահաստատում են նախկին արտօնութիւններն եւ ապա համաձայն Հայ վաճառականների կողմից յայտնուած բաղձանքների՝ որոշ նպաստաւոր փոփոխութիւններ են մտցւում առեւտրական գործառնութիւնների մէջ:

Այնուհետեւ առեւտրական կապը շարունակուել է եւ աւելի ու աւելի զարգացել ու իր յետեւից բերել նաեւ մի շարք քաղաքական լուրջ քայլեր, որոնք դուռ են բաց արել

բերողը կարող էր լինել միայն Լազարեան տռհմի Յեղապետք Ղազար Նազարեան Ղազարիանցը, որ 1749 թ. փոխագրուեց իր ամրող ընտանիքով Մոսկուա: Մէկ էլ ասում է, որ մի ոմն Շաֆրազ Հայից է զնուած Պետրոսուրդում Լազարեանի միջնորդութեամբ: Այդ Լազարեանն էլ կարող էր լինել միայն կոմս Յովհաննէս Ղազարիանը, որ ցեղատպետ Ղազար Լազարեանի աւագ որդին էր, եւ որը մօտիկ բարեկամ էր կոմս Օրլովին: Այսպէս թէ այնպէս աղամանդի զոյութիւնը Եկատերինա կայսրուհու ձեռքն անցնելին ու Լազարեանների մէկի կամ երկուսի մասնակցութիւնն այդ զործում պիտի համարել աղամանական իրողութիւն:

Ռուսների, թափանցման Հիւս . Կովկաս և
Անդրկովկաս՝ Արեւելեան Հայաստան :

Այս տեսակէտից շատ նշանաւոր են Պետ-
րոս Ա. Մեծ կայսեր և մանաւանդ Եկատե-
րինա Բ. կայսրուհու ժամանակաշրջանները :

Պետրոս Մեծը (1682—1725) Ռուսաս-
տանի մեծ բարենորոգիչը, որ Մոսկուայի
թագաւորութիւնը իր խոշոր նուաճումներով
վերածեց կայսրութեան, իր հեռատես քաղա-
քականութեան մէջ ոչ միայն չանտեսեց Հայ-
երի կողմից արուած դիմումներն առեւտրա-
կան ու քաղաքական նպատակներով, այլ և
ամէն կողմից ջանում էր ընդառաջել սյդ դի-
մումներին և ընթացք տալ, վասն զի ինքն
էլ որոճում էր Ռուսաստանի սահմանները
տարածել մինչև Կասպից ծովը : Մեծապէս
զնահատելով ծովերի հսկայ նշանակութիւնը
իր երկրի տնտեսական բարգաւաճման, ինչ-
պէս և Ռուսաստանի քաղաքական կշռի
բարձրացման համար, հանճարեղ կայսրը,
Բալթիկ ծովը նուաճելուց յետոյ, իր խորա-
թափանց հայեացքը դարձրեց նաև դէպի
հարաւարեւելք՝ Սեւ և Ազով ու Կասպից
ծովերի նուաճումը : Վերջինը մեծ յարմա-
րութիւններ էր տալիս զարգացնելու Ռու-
սաստանի առեւտուրը Արեւելքի երկիրների
հետ, մասնաւրապէս իր առասպելական
հարստութիւններով հոչակուած Հնդկաս-
տանի հետ : Եւ նա խորապէս ըմբռնեց թէ
Հայերը որքան օգտաւէտ կարող են լինել
իրենց շինարար աշխատանքներով և օժան-

զակութեամբ իր լայն ծրագիրների իրազործման ճամբի վրայ: Այս իսկ պատճառով էր, որ նա անկեղծ համակրանք էր ցուցադրում եւ հնարաւոր սահմաններում ընդառաջում Հայերի բաղձանքներին, խոստանում էր իր բարձր հովանաւորութիւնը:

Նրա տուած մի շաբք հրովարտակները փայլուն ասլացոյցներ են նրա այդ վերաբերմունքին թէ՛ դէպի հայ վաճառականներն եւ թէ՛ հայ քաղաքական գործիչները, ինչպիսին էր, օրինակ, Խորայէլ Օրին:

Պետրոս Մեծի առաջին ծանօթութիւնը հայ վաճառականների հետ տեղի է ունենում Ամստերդամում, ուր 1697 թուին նա գնացել էր սովորելու նաւաշինութեան գործը: Այս-տեղ նա ծանօթանում է Զէլէպի Ապրօեան երեք եղբայրների հետ, որոնք յայտնի էին իրենց ընդառաջակ վաճառականութեամբ Հնդկաստանի, Պարսկաստանի եւ Տաճկաստանի: Ապրոյեան եղբայրները թէեւ Պետրոս Մեծին ընդունել էին սուկ մի ՛՛ուս ազնուականի տեղ, բայց եւ այնպէս ցոյց էին տուել նրան «մեծ մարդասիրութիւն», ձեռնառութիւն եւ հիւրասիրութիւն»:

Պետրոս Մեծը, Ամստերդամից դէպի Անգլիա մեկնելիս, նամակով շնորհակալութիւն է յայտնում Զէլէպի Ապրոյեաններին եւ մի շաբք առանձնաշնորհումներ է տալիս նրանց: Այդ նամակից միայն եղբայրները իմանում են, որ իրենց բարեկամ հիւրը ՛՛ուսաց Պետրոս Ա. կայսրն է եղել:

Օգտուելով այդ ծանօթութիւնից 1717 թ. Զէլչպի Ապրօեան Եղբայրները դիմում են Պետրոս Մեծին եւ խնդրում առեւտուրի ազատութիւն Ռուսաստանում :

Կայսրը սիրով ընդառաջում է նրանց «աղերսագրին» եւ 1717 թ. Յունուար 28ին յատուկ հրովարտակով տալիս է նրանց առեւտուրի ազատութիւն Ռուսաստանում, հանդերձ մի շարք արտօնութիւններով :

Հրովարտակից երեւում է, որ Եղբարք Ապրօեանները, «քնակիչք Զմիւռնիոյ, մեծ վաճառականութիւն ունեն Արեւելիան Երկիրների հետ եւ այս կողմերու Երովական թագաւորութեանց մէջ, եւ իրենց վաճառականութեան մեծ մասը մետաքս է եւ ուրիշ Պարսից եւ Օսեթից բերքեր՝⁷» :

Նման հրովարտակներ արուած են Եղելնաեւ 1711 ապրիլ 13ին, 1719 յունիս 6ին եւ 1723 մայիս 14ին եւ յունիս 3ին ընդհանրապէս հայ առեւտրականներին :

Վերջին հրովարտակի մէջ ասուած է նաեւ, որ իրաւունք է տրւում Հայերին ընդունել Ռուսաց հպատակութիւն, «զինի որոյ — ասում է Ն. Զուղայի յիշեալ պատմիչը — բազումք յերեւելի վաճառականաց Զուղայուզըցան ի հպատակութիւն ուսւաց, եւ ոմանք եւս ընտանեօք գաղթեցան ճանապարհաւ Մա-

⁷ Վ. Գ. Զարդարեան, «Յիշատակարան»: Հայ Երեւելիներու կենսագրութիւնները» եւ այլն, էջ 273—275: Հրովարտակի լրիւ թարգմանութիւնը բերուած է «Յիշատակարանում», որտեղից եւ յիշեալ երկարութաղուածքն է արուած:

զանդարանի, Գիլանու յԱստրախան. ուրանօր եւ ընկալան զմեծամեծ արտօնութիւնս, զորս վայելեն մինչեւ ցայսօր ժառանգք նոցա^{8»:}

1723, նոյեմբեր 10ի հրովարտակով, ուղղուած Գաճնասարի Եսայի կաթուղիկոսին, իւղրաշիներին եւ ամբողջ Հայ ժողովրդին, իրաւունք էր տրուած բնակութիւն հաստատել Գիլանում, Մազանդարանում, Բաքւում եւ Դերբենդում, որոնք գրաւուած էին 1722 եւ 1723 տարիներին:

1724, նոյեմբեր 10ի հրամանուգրի մէջ, ուղղուած զօրավար Կրոպոտովին, ասուած էին, ի միջի այլոց, հետեւեալ նշանակալից խօսքերը.

«Հրամայում եմ քեզ, որ այն Հայերին, որոնք կը գան Ս. Խաչ ամրոցը, անմիջապէս տրամադրես յարմար եւ արդաւանդ հողեր, ուր նրանք կը ցանկանան, որպէս զի նրանք բնակութիւն հաստատեն. ցոյց տուր նրանց ամէն տեսակ օժանդակութիւն, ամէն պաշտպանութիւն եւ այնպէս վարուիր, որպէս զի որեւէ զժողոհութիւն ու զանգատների տեղիք չտրուի, վասն զի յիշեալ Հայ ժողովուրդը մենք առել ենք մեր մասնաւոր կայսերական հովանաւորութեան ու ողորմածութեան ներքոյ^{9»:}

⁸ Յարութիւն Տէր-Յովհաննեանց, «Պատմութիւննոր Զուղացու», Ա., էջ 177:

⁹ Ճառեր եւ հաշուետուութիւն, արտասանուած հանդիսաւոր հաւաքոյթին Լազարեան Ճեմարան Արեւելեան լեզուաց 50ամեւակի առթիւ (ոռևերէն), Մոռ-

Պակաս նշանակալից չէր Պետրոս Մեծի 1723, յունիս 3ի նամակը, ուղարկուած Յովհաննէս Կարապետ Հայի միջոցով եւ ուղղուած «Ազնիւ հայ ժողովուրդին, որ բնակւում է Պարսկաստանում» :

Այս գրութեան մէջ կայսրը յայտարարել էր, որ «նա կ'ազատագրի Հայերին անհաւատների լուծից, հէնց որ Ռուսաստանը կ'ամրանայ կասպից ծովի ափերին : Իսկ եթէ այդ լուծը անհանդուրժելի է, թող հայերեւելիները գաղթեն այն քաղաքները, որոնք արդէն գրաւուած են Ռուսների կողմից . իսկ ժողովուրդը թող համբերութեամբ սպասի, մինչեւ որ ուսւ զօրքը պատրաստ լինի նրանց ազատագրելու¹⁰» :

Պոտոսն իր յիշեալ աշխատանքի մէջ այս առթիւ ասում է, որ հայ ու վրացի գաղթականներ 700 հոգու չափ անմիջապէս մտան Ռուսաց զինուորական ծառայութեան մէջ եւ կազմեցին երկու առանձին գնդեր, Հայերը՝ գրագոնի եւ Վրացիք՝ հուսարի գունդ¹¹:

Այսուհետեւ նոյն Պոտոսն աւելացնում է հետեւեալ ուշագրաւ տողերը. «Բայց այն ինչ Հայոց մի անհան մասը ապաստան էր գտել Ռուսաց սահմաններում, ամբողջ աղպարհակութիւնը հեծում էր նեղութեան մէջ.

կուս, տպ. Լազարեան ձեմարանի, 1865, 4⁰, էջ 154: Տեսուչ Գէորգ Քանանեանի ձառը, էջ 6:

¹⁰ Անդ, էջ 6: Մանօթութեան մէջ բերուած է ամբողջ Հրամանագիրը:

¹¹ Այս զնդերը լուծուեցին 1764 մայիս 4ի բարձրագոյն հրամանով Եկատերինա Բ. կայսրուհու օրով:

նրա ոյժերից վեր էր կռուել մահմետականութեան հետ եւ նա օգնութիւն էր խնդրում : «Մինչեւ ցայսօր — գրում են հայերը Պետրոսին — չորս կողմից շրջապատուած լինելով թշնամիներով, մենք պաշտպանուում էինք, որքան մեր ոյժը ներում էր, իսկ այժմ Տաճիկները մեծ զօրքով եկել տիրել են պարսկական շատ քաղաքների . . .» :

«Դժրախտաբար — նկատում է հեղինակը — այս վերջին պատգամաւորութիւնը կենդանի չգտաւ Ռուսաց հանձարեղ կայսերը . . .»¹² :

Կանգ չենք առնում Խորայէլ Օրիի, նրա յաջորդ Մինաս Վարդապետի, ապա Շահամիրեանի եւ Յովսէփի Էմինի թափած ջանքերի նկարագրութեան վրայ, որոնք նոյնպէս աշխատում էին Ռուսաստանի օժանդակութեամբ եւ հովանաւորութեան ներքոյ ստեղծել աղատ Հայաստան . այդ ամէնը նախ ծանօթ են հայ ընթերցող հասարակութեան եւ բացի այդ մեզ շատ կը չեղէր մնը բուն նիւթից :

Ասենք միայն այսքանը, որ Հայերի աղատագրութեան ժամը դեռ չէր խիել . . . :

Ռուսաստանը 18րդ դարի առաջին կէսին

¹² Տես հեղինակի վերոյիշեալ աշխատանքը, էջ 6: Պետրոս Մեծը վախճանուեց 1725 յունուար 28ին: Հետաքրքրուազները աւելի մօտիկից ծանօթանալու համար Պետրոս Մեծի հայ ժողովրդի հետ ունեցած յարաբերութիւններին, կարող են զիմել Կ. Եզովիլի Հոյակապ աշխատանքին ուռասերէն լեզուով՝ «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ»:

գեռ եւս պատրաստ չէր ոչ մի տեսակէտից
նուանելու Անդրկովկասն եւ իր սահմանները
տարածելու մինչեւ Արտքս :

Արեւելեան Հայաստանն էլ իր հերթին,
կոտորակուած ու մատնուած անվերջ ներքին
Երկպառակութիւնների, այդ ժամանակա-
շրջանում, միանգամայն անընդունակ ու ան-
կարող էր սկսելու եւ յաջողութեամբ վարե-
լու ազգային ազատագրութեան ընդհանուր
շարժում՝ օտարների ծանր լուծը թօթափելու
համար :

Այսու հանգերձ հայ ազատագրական մեծ
պայքարի այդ առաջին ուահվիրանների գոր-
ծունէութիւնը, թէեւ գործնական ու շօշա-
փելի դրական արդիւնքներ չտուեց, բայց
ի գուր չանցաւ. նա ունեցաւ բարյական
հսկայ նշանակութիւն, վասն զի նա վառ պա-
հեց հայ ժողովրդի մէջ ազատ հայրենիքի
վեհ գաղափարը, թոյլ չտուեց որ ժողո-
վուրդը յուսահատութեան մատնուի ու ի
սպառ լքուի իր անսահման թշուառութեան
մէջ; Եւ արդարեւ, հայ ժողովրդը շարու-
նակեց իր հայեացքները սեւեռած պահել
դէպի Ռուսաստանն եւ նրանից ակնկալել իր
փրկութիւնը :

Բացի այդ՝ նրանց գործունէութիւնը ու-
նեցաւ նաև պատմական մեծ արժէք. նրանց
սկսած ազատագրական պայքարը աւանդա-
բար անցաւ 18րդ դարի վերջերքի հայ քա-
ղաքական գործիչներին Յովհաննէս Լազա-
րեանին եւ Յովսէփ կաքողիկոս Արդու-

թեանին եւ ապա 19րդ դարի առաջի կէսին քերեց Արեւելեան Հայաստանի աղատութիւնը մահմետական բռնակալների անարդ լուծից :

Ճիշտ է, որ այդ աղատութիւնը այն չէր, որի մասին երազում էին 18րդ դարի յիշեալ բոլոր քաղաքական գործիչները, բայց եւ այնպէս նրանց քաղաքական ծրագրի գլխաւոր մասն էր, որ վերջապէս իրականութիւն ստացաւ :

Պետրոս Մեծի անարժան յաջորդների ժամանակ էլ Հայերը շարունակեցին իրենց քաղաքական ու տնտեսական կապը՝ Ռուսաստանի հետ, բայց որեւէ արդիւնքի չհասան։ Իրար արագօրէն յաջորդող վեց միապետները, զուրկ լինելով Պետրոս Մեծի պետական հանճարից, ոչ միայն չշարունակեցին նրա քաղաքականութիւնը, այլ եւ յետ նաև հանջեցին։

Այսպէս, օրինակ, յայտնի է, որ կայսրուհի Աննայի (1730—1740) օրով կասպից ծովի ափերին գտնուած Բաքու եւ Դերբենտ քաղաքները, որոնք Պետրոս Մեծի օրով նուաճուած էին, վերադարձին Պարսիկներին։

Իրերի այս վիճակը Պետրոս Մեծից յետոյ մինչեւ Եկատերինա Բ., կայսրուհու օրերը, գեղեցիկ կերպով նկարագրում է նոյն Ռուս անուանի պատմաբան Պօտտօն իր յիշեալ աշխատանքի մէջ։ Խօսքը տալիս ենք նրան։

«Ֆելդմարշալ իշխան Դոլգօրուկովը ինքն է վկայում այն արիսկան ճակատամարտների մասին, որ մի ժամանակ ունեցան Հայերը Տաճկաց, Պարսից եւ Լեռնականաց հետ։ Այդ մի հերոսական պատերազմ էր։ Մի բուռն հայեր ութ օր շարունակ դիմադրում էին սարասկեար Սարի-Մուստաֆայի 10.000 տաճկական արիւնուուշտ բանակին։

«Նոյն Դոլկօրուկովը իր զեկուցադրի մէջ աւելացնում է, թէ Հայերը պահանջում են շօափելի եւ իրական օգնութիւն զէնքի զօրութեամբ, եւ եթէ այժմէն իսկ այդ օգնութիւնը նոցա զլացուի եւ չտրուի, արդէն ուշ կը լինի ապագայումը զբաւել նոցա մեր կողմը։

«Եթէ քաջեռանդն իշխան Դոլգօրուկով մնար Կովկասում, շատ կարելի է այս երկրի վիճակն այլապէս տնօրինուէր։

«Բայց Դոլգօրուկովը ընկաւ. կայսրուհի Աննա Յովհանովնան անուշադիր գտնուելով պաշտպանելու Մեծ Պետրոսի նպատակի իրազործումը, վճռում է միանգամայն ձեռնաթող անել նորա նուաճած երկիրները այսնքն Դերբենդն ու Բաքուն։

«Մուսաց զօրքը նահանջում է դէպի Թերեքի ափունքը, իսկ Հայերը կրկին Տաճիկների ձեռքիւց ընկնում են Պարսից իշխանութեան ներքոյ։

«Նոր տիրապետողների երկիւղը ստիպում է շատ հայերի Ղարաբաղի սքանչելի բնութիւնը, նորա օդն ու ջուրը փոխել Թե-

բեքի ճահճային ավերի հետ։ Այստեղ են ձգտում անմիջապէս զօրքի ետեւից նոքա եւս, որոնք բնակութիւն էին հաստատել Գիւլանումն եւ Սուրբ Խաչի բերդումը։ Այսպէսով է ահա կազմակերպւում Ղզլարի Հայ Գաղթականութիւնը Թերեքի ափին։

«Գուցէ չափազանց կ'աւելանար գաղթականների թիւը, եթէ կայսրուհի Աննա Յովհաննովան ի հաճոյս Նադիր Շահի մի հրովարտակ չհրատարակէր 1734 մայիս 29ին, որով ի նշան բարեկամութեան առ Շահն եւ բարեհաճութեան առ Պարսից ազգն հրամայում էր, Պարսկաստանից դուրս եկած բոլոր Վրացիներին, Հայերին եւ ուրիշ օտարազգիներին վերադարձնել կրկին Շահին, մինչեւ անգամ նոցա եւս, որոնք վերադառնալու ցանկութիւն չունին¹⁸։

«Եւ թէպէտ կայսրուհի Աննայի կառավարութեան այս անբացատրելի սխալմունքը մի քանի տարուց յետոյ փոքր ի շատէ ուղղուեցաւ մի առանձին հրովարտակի շնորհիւ, որով արգելուում էր ուսւահպատակութիւնը ընդունող Հայերէն Պարսիկներին յանձնելու, բայց առաջին կարգադրութեան տպաւորութիւնը երկար ժամանակ չէր ջնջում հայ մտքերից։

¹⁸ Պատմաբանը դժբախտաբար, չի ասում, թէ այդ հրամանը զործադրուեց թէ ոչ կամ եթէ գործադրուել է, ասկա ի՞նչ չափով, քանի՞ հոգի վերադառնան։ Մեր ձեռքի տակ եղած աղբիւրներում էլ չգտանք առեղեկութիւն այդ մասին։

«Այսպէս թէ այնպէս, Հայերի յուսոյ միակ յենակէտը, այնու ամենայնիւ, Ռուսաստանը պէտք է լինէր. նա միայն իւր հովանաւորութեամբ կարող էր պաշտպան հանդիսանալ Հայերի շահերին:

«Եւ ահա մի քանի տարուց յետոյ, 1760 Անգլիայից Ս. Պետերբուրգ է գալիս Էմին Յովսէփինան¹⁴ անուամբ հարուստ հայը, որ Հնդկաստանում ահազին միլիոններ էր դիզել: Նա խնդրում էր օգնել Հայերին իւրեանց անկախութիւնը ձեռք բերելու, իսկ այս բանի համար առաջարկում էր իւր ամրող կարողութիւնը:

«Բայց կայսրուհու (Ելիզավետա Պետրովնայի, 1741—1761) կառավարութիւնը նորատակ չունէր այդ ժամանակ կովկասի գործերում էապէս խառնուելու: Այդպիսով

¹⁴ Անչուշտ, անուան վրիպումն կայ. ոլիտի լինի Յովսէփ Էմին: Յայտնի է որ Յովսէփ էմինն էր, որ այդ թուականներին 1759—1769 թթ. գործում էր Ռուսաստանում ու Կովկասում նպատակ ունենալով վերականգնել Հայ ժողովրդի անկախութիւնը Ռուսաստանի օգնութեամբ:

Յովսէփ էմինի մասին Երեւանի երիտասարդ գիտնական Ա. Ռ. Յովհաննիսեանը հրատարակել է յատուկ ուսումնակրութիւն, որը, դժբախտաբար, մեր ձեռքի տակ չունենք: Այս գրքի մասին Մոսկովյի «Օկտեարբ» ամսագրի մէջ, 1946 թ. 11—12 համարում զետեղուած է Պրոֆ. Բ. Զախոտերի քննադատական յոդուածը: Ա. Ռ. Յովհաննիսեանի աշխատասիրութիւնը առաջին վորձն է գիտնականորէն, պատմական վաւերագրերի վրայ հիմնուած, լուսաբանելու այդ Հայ քաղաքական դործչի գործունէութիւնը մեր նորագոյն պատմութեան ամենահետաքրքրական ժամանակաշրջանում: Յովսէփ էմինը հանդիսանում է Խարայէլ Օրիի ամենաբարժանաւոր յաջորդը:

իմինի առաջարկութիւնը համակրութիւն չդտաւ¹⁵» :

Յիշեալ երկու կայսրուհիները, շատ քիչ էին հետաքրքրում պետական գործերով եւ նրանց փոխարէն երկիրը կառավարում էին պատահական իշխանաւորներ (временщик) որոնք չէին յիշում Պետրոս Մեծին եւ նրա քաղաքականութեան բնոյթն եւ ուղղութիւնը. հետեւարար, թէ արտաքին եւ թէ ներքին քաղաքականութեան մէջ մեծապէս շեղուեցին հանճարեղ կայսեր զծած ճամբից . . . :

Յամենայն դէպս երկու կայսրուհիների օրով էլ Ռուսաստանում դանուած հայ առեւտրականներին շարունակում էին հովանաւորել, տալ առեւտրական արտօնութիւններ, թոյլատրում էին հիմնել մետաքսի ու կտաւի գործարաններ, զրադուել շերամապահութեամբ ու բամբակի մշակոյթով : Այդ երեւում է այն հրովարտակներից, որոնք հրատարակուած էին 1736 օգոստոս 5ին, 1740 սեպտեմբեր 17ին, 1741 յունիս 15ին, 1746 օգոստոս 5ին եւ այլն :

Արեւելահայութեան իղձերի ու ձգտումների մի նոր ժամանակաշրջան է բացւում Եկատերինա Բ. կայսրուհու (1762—1796) օրով, որը ներշնչում է հայերին մօտալուս ազատագրութեան եւ անկախութեան վառ յոյսեր ու մեծ ակնկալութիւններ :

Նախ, որովհետեւ այս կայսրուհին միան-

¹⁵ Պօտտօ, էջ 6—7:

գամայն իւրացրել էր Մեծն Պետրոսի արտաքին քաղաքականութիւնը՝ ընդլայնելու Ռուսաստանի պետական սահմանները մինչեւ Սեռու Կասպից ծովերը եւ այդպիսով ճանապարհ հարթել Ռուսաստանի առեւտուրի համար Արեւելքի եւ առաջին հերթին Հնդկաստանի հետ :

Երկրորդ, այս կայսրուհին ապրում էր մի ժամանակ, երբ ամբողջ Եւրոպան ողողուած էր Ֆրանսական մտաւոր շարժման նոր գաղափարներով՝ Վոլտերի, Մոնտեսկիոյի, Ժ. Ժ. Ռուսօի վարդապետութիւններով։ Յայտնի է, որ կայսրուհին նամակադրութիւն ունէր Վոլտերի հետ եւ յափշտակուած էր նրա բանականութեան քարոզչութեամբ։ Կայսրուհին եւս, բոլոր «լուսաւորիչներին» հետեւելով, համոզուած էր, որ պետական բարձրագոյն իշխանութիւնը կարող է արմատականօրէն փոխել պետական կառուցուածքն ու հասարակական կարգերը համաձայն բանականութեան թելադրանքների։

Վերջապէս, կայսրուհին ըրջապատուել էր իր կարող ու տաղանդաւոր պետական գործիչներով, ինչպիսիք էին՝ կոմս Պանինը, նուրբ դիւնագէտ, կոմս Բեզրորոդկո, Օրլով եղբայրները, կոմս Պոտեռմկինը, իշխան Վեազեմսկին, կոմս Սիվերսը, Բէցկի, կոմս Ռումեանցեւ, կոմս Սուվորով եւ այլն։

Այս շքեղ փաղանգին էին պատկանում նաեւ հայազգի երկու հռչակաւոր գործիչներ կոմս Յովհաննիկս Ղազարեան Ղազարեանն

Եւ Ծուսաստանի Հայոց թեմի առաջնորդ
Յովսէփի արքեպիսկոպոս Արդուքեան-Երկայ-
նարազուկը, հետագայում ամենայն Հայոց
Կաթողիկոսը :

Այս Երկուսն էլ ներշնչուած էին ու խան-
դավառուած Արեւելահայութեան ազատա-
գրութեան եւ Հայաստանի անկախութեան
գաղափարներով : Ինչպէս Խորայէլ Օրին եւ
Յովսէփի իմինը, սրանք եւս համոզուած էին,
որ միայն Ծուսաստանի օժանդակութեամբ
եւ հովանաւորութեան տակ հնարաւոր է վե-
րականզնել Հայաստանի անկախութիւնն ու
ապահովել նրա յարատեւ գոյութիւնը : Եւ
իրենց ամբողջ կեանքի ընթացքում շղաղա-
րեցին այդ ուղղութեամբ մտածել ու գոր-
ծել¹⁶ :

Այս Երկու հոչակաւոր հայ մարդկանց
դուծունէութիւնը դարդանում էր համընթաց
Ծուսական նուաճումներին Ծուսաստանի Հա-
րաւ-Արեւելքում :

Այս սկզբնական ժամանակաշրջանում
սրանք աշխատում էին Պարսկապատանից եւ
Տաճկաստանից Ծուսաստան գաղթեցնել
հայերին եւ գաղթականներին ամէն կերպ
օգնել, լայն արտօնութիւններ ստանալով
կայսրուհուց եւ նիւթապէս ու բարոյապէս
օժանդակելով գաղթական Հայերին :

1768 թ. Տաճկաստանը պատերազմ յայ-
տարարեց Ծուսաստանին. այդ պատերազմը

¹⁶ Այս մտաին աւելին կոմս Յովհաննէս Լազա-
րեանի կենսագրականի մէջ :

վերջացաւ Ռուսների փայլուն յաղթանակով 1774թ. Քուչուկ-Բայնարջիի¹⁷ դաշնագրով։ Բատ այս դաշնագրի, Ռուսաստանը ստացաւ Ազով եւ Կերչ քաղաքները, ուրիշ խօսքով Դոն, Բուգ եւ Դնեպր մեծ գետերի բերաններն ու Կերչ նեղուցը։ Բացի այդ Ղրիմի խանութիւնը, որ գտնւում էր Թիւրքիայի գերիշխանութեան ներքոյ, այդ դաշնագրով ստացաւ իր «անկախութիւնն ու ազատութիւնը», բայց արդէն 1783 Ղրիմը միացուեց Ռուսաստանին, որպէս նրա մի նահանգը։ 1787 սկսուեց երկրորդ ռուս-տաճկական պատերազմը, որը վերջացաւ 1791 կրկին ռուսների յաղթանակով ու Եասսայի դաշնագրով, ըստ որի Դնեստր եւ Բուգ գետերի միջեւ եղած ամբողջ տարածութիւնը անցաւ Ռուսների ձեռքը։

Այլիսով Ռուսաստանի ամբողջ հարաւային մասը՝ Սեւ ծովի եզերքը, Դնէստր գետից մինչեւ Դօն գետը, մի հսկայ տարածութիւն իր արգաւանդ սեւահողովը, անցաւ Ռուսների ձեռքը։ Կայսրուհին այդ շրջանը անուանեց «Նոր Ռուսաստան» եւ նրա կառավարութիւնը յանձնեց կոմս Պոտենցիինին փոխարքայի կոչումով։ «Նոր Ռուսաստանը» դրեթէ ամայի էր. պէտք էր չէնացնել, դրաւել ժողովուրդ ու կենդանութիւն տալ նրան։

Այս հանգամանքից օգտուեցին Յովհան-

¹⁷ Քուչուկ Բայնարջին փոքրիկ քաղաք է Բուլղարիայում։

նէս Լաղարեանն եւ Յովսէփ արքեպ. Արդութեանը :

Յովհաննէս Լաղարեանը, որ նշանակուած էր իշխան Պոտեռմկինի մօտ, որպէս քաղաքական գործերի խորհրդատու ու տնօրէն եւ որը մեծապէս օգտակար եղաւ իշխանին իր այդ պաշտօնի մէջ, խորհուրդ տուեց Արդութեանին դիմել Ղրիմի Հայերին եւ յորդորել նրանց գաղթել հարաւային Ռուսաստան : Արդութեանը մեծ յաջողութեամբ գլուխ բերեց այդ գործը :

Եւ Ղրիմի Հայերի գաղթը սկսուեց 1778 յուլիս 18ին եւ վերջ գտաւ միայն նոյն թուի սեպտեմբեր 28ին, երեք նուագով : Բայ Աէօի գաղթեցին 12·370 հոգի, իսկ ըստ ոռւս պատմարան Պոտոֆի՝ 20·000 Հայեր :

«Արժան չնստաւ Հայերին այս գաղթականութիւնը — նկատում է Պոտոֆ — ահագին կորուսա, զրկանք ու զոհողութիւններ բաժին ընկաւ նրանց : Երկու տարի շարունակ¹⁸ թափառում էին Հայ գաղթականները, վրանների տակ, համբերութեամբ տանելով ցուրտը, տօթը եւ քաղցը . նրանցից շատերը չդիմացան թափառականութեան ծանր հարուածներին եւ մեռան աղեկէզ՝ յիշելով իւրեանց հայրենի Ղրիմը, նրա վահքերն ու եկեղեցիները, իսկ մնացածները այնու ամենայնիւ հաստատուն քայլերով դիմեցին դէպի իւրեանց նպատակը եւ վերջապէս Դօն գետի

¹⁸ Ստորեւ կը տեսնենք, որ ճիշտ չէ երկու տարին, այլ մի տարի միայն :

ամիին հիմնեցին Նախիջեւան քաղաքը, ուր կառավարութիւնը անխնայ շոայլեց նրանց արտօնութիւններ, օգուտներ եւ իրաւունքներ ¹⁹» :

Արդարեւ, 1779 նոյեմբեր 14ի հրովարտակով կայսրուհին, չնորհիւ Յովհաննէս Լազարեանի եւ Արդութեան արքևպիսկոպոսի միջնորդութիւնների, հետեւեալ մի շարք արտօնութիւնները տուեց Ղրիմից դաղթած եւ Նոր Նախիջեւանում բնակութիւն հաստատած հայերին.

ա. Տալ 12.000 դեսետին հող. բ. ազատ կացուցանել հայերին ամէն տեսակ հարկերից եւ տուրքերից 10 տարի. գ. առեւտուրի ազատութիւն. դ. իրաւունք կառուցելու եկեղեցիներ. ե. իրաւունք կառավարուելու իրենց ներքին կեանքի մէջ իրենց հին օրէնքներով եւ սովորութիւններով ²⁰:

Նոր Նախիջեւանի հիմքը դրել է 1779 հանդիսաւոր ծիսակատարութեամբ Յովհանէփ արքեպ. Արդութեանը եւ կնքել Նոր Նախիջեւան անունով : Ղրիմի քաղաքներից եկած բնակիչները տեղաւորուեցին նորաշէն քաղաքում, իսկ զիւղացիները՝ նորակառոյց հինգ գիւղերում՝ Չալթըր, Մեծ Սալա, Սուլթան-Սալա, Թոփտի եւ Նիսվիթա ²¹:

¹⁹ Տես Պատմոի յիշեալ աշխատանքը, էջ 7—8:

²⁰ Այս արտօնութիւնները վերահաստատուեցին Պատել կայսեր կողմից 1797 յուլիս 4ի եւ 1799 յունիւար 4ի հրովարակներով, կրկին նոյն երկու հայ գործիչների միջամտութեան չնորհիւ :

²¹ Նոր Նախիջեւանի հիմնարկութեան թուականի վերաբերմամբ էլ կան տարբերութիւններ աղքիւր-

Մի քանի տարի անց, այն է 1784 նոյն Արդութեանը հիմք դրեց նաեւ նոր Նախիշեւանի Ս. Խաչ վանիքի ի յիշատակ Ղրիմի Հայոց Ս. Նշան հին վանքի եւ հաստատեց այնտեղ տպարան :

Քերովրէ Քուշներեանը իր յօդուածաշարքում հետեւեալ տեղեկութիւններն է տալիս Ս. Խաչի մասին .

«Ս. Խաչ Նախիշեւանու հիւսիսային կողմը, քաղաքէն եօթ վերստ հեռաւորութեամբ, ապառաժ լերին վրայ շինուած է. դիրքը վայելուչ է : Սորա հիմը օրհնած է 1784 Յովսէփ Արդութեանց . վանքը կամ առաջնորդարանն անշուք սենեակներով է . ապառաժէն քաղցրահամ ջրոյ աղրիւր կը հոսի դէպ ի վար, ուր շինուած է ընդարձակ պարտէղ : Վանքիս եկեղեցւոյն մտից աջակողմեան պատին վրայ այս յիշատակարանս կարգացի .

«Շնորհօքն Աստուծոյ կառուցի զԱռրր Խաչ վանքս, ի սմա դպրոց եւ զտպարան, և Սանահնեցի Արդութեանց Շիօշ-Բէկի որդի, և սուրբ Էջմիածնայ նուիրակ, Թուսաց

ների մէջ : Պատոն համարում է, որ հիմքը դրուել է 1780 թուին, քանի որ Ղրիմից Հայերի գաղթը սկսել է 1778 թ. եւ երկու տարի գաղթականները թափառել են այս ու այն կողմ : Ուրիշ աղրիւրներում մտանունշուած է 1781 թ. : Հ. Քերովրէ Քուշներեանը իր «Ճամբորդութիւն ի նոր Նախիշեւան» յօդուածաշարքում (Բաղմավէպ, 1887) մատնանշում է 1779 թ. : Այս թուականը պիտի համարել աւելի վաւերական, քանի որ կայսրուհու վերը յիշուած հրովարտակը տրուած է նոր-Նախիշեւանցիների անունով 1779 թ. նոյեմբեր 14ին :

Երկրի Հայոցս առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս, ի կայսրութեան ամենայն Ռուսաց Եկատերինէ Ալքսէյօվնայի երկրորդի, եւ ի հայրապետութեան Հայոց Տեառն Ղուկասու, աշխատութեամբ հոգեւոր որդւոյ իմոյ Բայտղիտցի Կարապետ վարդապետի: Օծեալ եղեւ յամի Տեառն 1791 եւ ի Հայոց թուականի 1240, ի սեպտեմբերի²²:

Երկրորդ ուսու-տաճկական պատերազմից յետոյ ծնունդ առաւ նաեւ մի ուրիշ Հայոց քաղաք՝ Գրիգորիովոլը:

Խամայիլ բերդից, Աքերման, Քովչան ու Բենդէր քաղաքներից Հայերը գաղթեցին Թուսաստան: Այս Հայերի համար Արզութեանը 1792 յուլիս 25ին նոր քաղաքի հիմը դրեց եւ անուանեց այն Գրիգորիովոլ ի յիշատակ Գրիգոր Լուսաւորչի եւ նոր վախճանուած իշխան Գրիգոր Պոտենտիլինի²³: Արզութեանը նոյն ժամանակ հիմնեց եւ Երկու գիւղ՝ Խօսիվովկա, իր անունով եւ Վասիլեևկա՝ իր եղբօր որդու անունով:

Գրիգորիովոլի նորաբնակ Հայերն էլ ստացան նոյն արտօնութիւններն եւ առանձնաշնորհումները կայսրուհուց, ինչ որ ստացել էր նոր Նախիջևանը²⁴: Բացի այդ

²² Բազմավէսլ, 1887, էջ 193—194:

²³ Այդ արտօնութիւնները վերահստատուեցին Պատել կայսեր կողմից 1790 թ. հոկտեմբեր 28ի հրովարտակով:

²⁴ Տե՛ս այս մասին կայսրուհու 1794 թ. հոկտեմբեր, 12ի հրովարտակը եւ լէօփ «Յովսէփ կաթողիկոս Արզութեանը», էջ 89:

նրանց տրուեց նաեւ դրամական օժանդակութիւն պետական դանձարանից 185.781 բուրլի :

Եկատերինա կայսրուհու օրով խնամք էր տարւում ոչ միայն «Նոր Ռուսաստանը» շէնցընելու հայ դաղթականներով ու հայ դաղթավայրեր ստեղծելով, այլեւ շռայլելով նրանց բազում արտօնութիւններ, ինչպէս նաեւ խրախուսելով հայ անհատներին ծաղկեցնելու Ռուսաստանը նոր արդիւնաբերական ձեռնարկներով, ինչպէս օրինակ, մի ոմն Մովսէսի, Աստաղատի գիւղացու, շերամաբուծութեան արհեստով գրադուելու եւ տարածելու այն ոռւսների մէջ²⁵ :

Նորին կայսրուհու շրջապատում, մասնաւրապէս իշխան Պոտեռմիխի շրջանում, շատ աւելի հեռուներն էին գնում եւ որոճում էին նաեւ լայն քաղաքական ծրագիրներ հայերին ու վրացիներին ազատութիւն եւ անկախութիւն շնորհելու մասին :

Այս ծրագրի իրականացումը մօտիկ ապագայում այնքան հաւանական էր թւում նրա հեղինակներին, որ Պոտեռմիխի եւ Զուբովի շրջանում արդէն մշակուել էին Հայոց թագաւորութեան զինանշանը, Հայոց թագաւորի օծման հանդիսաւոր արարողութեան ծրագիրը, ինչպէս եւ սահմանել էին երեք շքանշանների նախագիծը. մէկը պիտի ներկայացնէր Նոյի տապանը ծիածանի գոյնի ժապաւէնով, միւսը՝ Քրիստոսի անձեռագործ

²⁵Տե՛ս «Դիւան Հայոց Պատմութեան», էջ ձիջ—ձիկ:

դաստառակը եւ երրորդը՝ Գրիգոր Լուսաւորչի նկարը :

Այս ծրագիրների մասին Պօտտօն իր վերոյիշեալ աշխատանքի մէջ տալիս է հետեւեալ շատ հետաքրքրական տեղեկութիւնները :

«1783 թուին Ռուսաց զօրքը գրաւում է Վրաստանը եւ այն օրից նա դառնում է Ռուսաստանի աւատական թագաւորութիւն :

Այդ ժամանակ ահա ծրագիրներ են կազմւում Հայաստանի ազատութեան համար եւ ամենահզօրն Պոտենմկինը սկսում է ջերմ հաղորդակցութիւններ շարունակել Հայոց Յովոչի Արքեպիսկոպոսի հետ Ասիայում Հայաստանը մի հզօր քրիստոնեայ տէրութիւն դարձնելու մասին Ռուսաց բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ :

Այսպէս նորից Հայոց խնդիրը ասպարէզի վրայ է գրուում :

Պաշտօնական շատ վիաստերով ապացուցուած տեղեկութիւններ կան, որ ինքն իշխան Պոտենմկինը ձգտում էր թագաւորել վերածնուած Հայաստանում, որը սահմանակից պիտի լինէր Պարսկաստանին, Տաճկաստանին եւ Ռուսաստանին եւ ունենար կապից ծովում իւր նաւահանդիսոր:

Արդէն արտասահմանումը — Հնդկաստանում եւ Չինաստանում — նա ոսկեզօծ ամանեղէններ էր պատրաստել տուել հայ թագաւորական զինանշաններով²⁶:

²⁶ Մի այսպիսի յախճապակեայ սափոր հայ դրօշը վերան պահուում է Տփղիսի թանդարանում: Պօտտօն:

Այն միջոցում տպագրուած Հայոց դրքերի
վերայ տպուում էին հայ թագաւորաց դրօշ-
ները :

Յովսէփի արքեպիսկոպոսը նամակներ
դրում էր Էջմիածնի կաթողիկոսին եւ շատ
երեւելիի Հայերին՝ ուրախ լինել եւ Աստու-
ծուն փառք տալ . նա աղօտ կերպով մատնա-
ցոյց էր անում մի նշանաւոր փոփոխութեան
վերայ, որ պատրաստուում էր Հայերի հա-
մար մեծահռչակ Հիւսիսի հողատարութեան
շնորհիւ :

Բանը նորանումն է, որ Յովսէփի Արքե-
պիսկոպոսին առաջարկեցին կազմել այն
դաշնագրի ծրագիրը, որը պէտք է կազուէր
նախապէս Ռուսաց կայսրութեան եւ Հայ
ազգի մէջ :

Այս հետաքրքիր դոկումենտի մէջ առա-
ջին տեղը բռնում էր Հայ եկեղեցւոյ լիակա-
տար անկախութիւնն եւ . ազատութիւնը եւ
Հայաստանի ընտրեալ թագաւորը — լինէր
նա Հայ, թէ կայսրուհու մերձաւոր անձնուէր-
ներից մէկը — պարտաւորուում էր դաւանել
Հայ կրօնը եւ պահպանել հայ օրէնքները :

Թագաւորի թագաղբութիւնը առաջար-
կուում էր կատարել Ս. Էջմիածնի մէջ, ըստ
օրինաց Հայոց նախկին թագաւորաց : Մայ-
րաքաղաքը որոշուում էր Անին կամ Էջմիա-
ծինը : Հայ թագաւորութեան դրօշը պէտք է
կազմուէր Հայոց նախկին Երեք դրօչներից,
այն է Արշակունեաց միագլուխ Արծիւը,

Քրիստոնէութեան ժամանակի Գառն Աստուծոյ և Փոքր Հայոց երկու արծիւները²⁷:

²⁷Մի այլ տեղում (էջ 22) նոյն հեղինակը Պօտասո, աւելի մանրամասն կանդ առնելով հայկական դրօշի նկարագրութեան վերաց, առլիս է հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները.

«Իրաւաբանութեան նախարարութեան մէջ (իմանը Արդարադատութեան նախարարութիւն), 1833 թուին մի խնդիր զարթնեցաւ հայկական նախկին դրօշների մասին և այդ խնդրի հետամտութիւնը յանձնուեցաւ զիտական Պրոֆ. Զրպեսին»:

«Զրպեսը Հայոց հին մատենագիրների վկայութեան համաձայն պատասխանեց, որ Կիւրոսին ժամանակակից Տիղրանի օրով Հայոց դրօշն էր եօթնողիսանի վիշապ. վերջերում՝ Արշակունեաց Հարստութեան ժամանակ՝ վիշապը փոխուեցաւ միագլուխ արծուի: Քրիստոնէութեան մուտ գործելովը Հայ դրօշակների վերաց նկարուում էր վրեշտական անձնուադործ պատկերը, յետոյ դաստառակի տեղ դրին Գառն Աստուծոյ՝ խաչը ձեռքին: Վերջապէս, Ռուբինեանների դրօշն եղաւ առիւծ: Այս բոլոր զինանշաններից միասին առած, կամեցան Հայոց նահանդի համար մի ընդհանուր դրօշ կազմել: Բայց չգիտեմ ինչպէս փոխուեցաւ բանը, որ դրօշի վերջնական նկարը հետեւեալը եղաւ. կապայտ տեղի վերաց մի արծաթեայ վահանի մէջտեղումը նկարուած է Մասեաց միւնապատ գաղաթը. սպիտակ ամպերը նորան չըջապատել են. լեռան կտարին նոյնան ոսկեայ տապանն է դրուած:

Դրօշի ներքին մասը երկուոփ է բաժանուած. ոչ կողմում, կարմիր տեղի վերաց Հայոց նախկին թագաւորաց թաղն է. թաղն ամրողն ոսկեայ է, արծաթեայ աստղերով եւ մարզարիտներով զարդարուած, իսկ թագակապը եւ աստաղը կապտապոյն են: Զախ կողմում կանաչ տեղի վերաց կծմբածնի վանքն է ամրող արծաթեայ, իսկ կաթուզիկներն իւրեանց խաչերով՝ ոսկեայ են:

Դրօշի վերի մասումը՝ ոսկի տեղի վերաց՝ նկարուած է Ռուսաց երկդիլսեան արծիւը: Նա դրկած, բռնած ունի իւր ճանկերի մէջ վերայիշեալ վահանը: Իսկ այս ամենի գլխին դրուած է կայսերական թագը:

Վերջերումը, երբ Հայոց նահանդը միացաւ նոր հաստատուած Երևանին կոչուած նահանդի հետ, դրօշն էլ ուրիշ կերպ փոխուեցաւ: Մի կապտապոյն

Ի յիշատակ Հայաստանի հաստատուում
էր երեք շքանշան, առաջինը Նոյեան տա-
պանի անունով՝ ծիածանին նմանեցրած
երեք գոյնով՝ կարմիր, կանաչ եւ կապոյտ-
երկրորդը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ա-
նունով եւ երրորդը՝ ի պատիւ փրկչական
անձեռագործ դաստառակի :

Քաղաքականապէս տնօրինուում էր, որ
Հայաստանը գտնուի Ծուսաստանի հովանա-
ւորութեան ներքոյ : Մի փոքրաթիւ ոռւսա-
կան բանակ պէտք է մնար Հայաստանի մէջ
նորա սահմանները Տաճկաց եւ Պարսից ար-
շաւանքներից պաշտպանելու աղազաւ, իսկ
Հայ թագաւորների որդկերանցից մէկը մնա-
լու էր շարունակ կայսեր պարտառումը : Հայոց
թաղաւորութիւնը պարտաւորուում էր իւր
հանքերից արտահանած ոսկուց եւ արծաթից
մի որոշ մասն յատկացնել Ծուսաստանին :
Պատերազմական դէպքերում երկու պետու-
թիւններն եւս պարտական էին միմեանց
օդնութիւն տալ :

Այս դաշնագրութեան մի ամենահե-
տաքրքիր յօդուածն այն էր, որ Հայերը պա-
հանջում էին, որ իւրեանց աշխարհի մէջ
ստրկութիւն (իմա' ճորտութիւն) չը ներս
մտնէր, ինչպէս իւրեանց աղքային բնաւո-

վահանի վերայ նկարուած է մի արծաթեայ ժայռ. վա-
հանի գլուխը պսակում է մի Ծուսական ոսկի խաչ,
իսկ վահանի վերայ դրուած է կայսերական թագը :

Բայց ոռւսաց կայսերական բուն դրօշի վերայ
մնացել է մի առիւծ, որպէս Ծուրէնեան հարստութեան
դրօշ :

բութեան մի տարօրինակ եւ հակառակ երեւոյթ : Այս մասին նոքա մատնացոյց էին անում իւրեանց պատմութիւնից այն դէպքը , որ երբ Յոյները տիրելով Հայաստանին կամեցան Հայերից ստրուկներ տալ իւրեանց իշխաններին , Հայերը թողին նորանց եւ մտան Բաղդատու խալիֆների հպատակութեան ներքոյ , առաւել գերազառ համարելով խալիֆների ծանր քաղաքական ճնշումները իւրեանց ներքին ընտանեկան աղատութեան կորուստից :

Այս ծրագիրն իրագործելու համար մեծ դրութիւն եւ դրամական ոյժ էր հարկաւոր . միակ յոյսը բնականապէս իմին Յովսէփեանի (Յովսէփ իմին) առաջարկութիւնն էր , որ մի քանի տարի առաջ նուիրում էր իւր միւլլիոնները Հայաստանի աղատութեան դործին : Սակայն իմինը կենդանի չէր այժմ եւ նորա հարստութիւնը՝ ժառանդական ցեղի վերջանալու օրէնքին համաձայն՝ մնացել էր Օստ-Ինդիական բանկին :

Այս անգամին եւս գտնուեցաւ ոմն Շամիր-Խան՝ նոյնպէս Հնդկահայ , որ իւր լիքը քսակը առաջարկեց Հայաստանին : Սակայն ըստ նորա կարծեաց պատերազմ սկսելու կարիք չկար . Հարկաւոր էր ոսկով զնել Հայաստանը Տաճկաստանից եւ Պարսկաստանից ²⁸ :

²⁸ Այս Մագրասցի հայ աղդայինը՝ Շամիր-Խանը մի նամակ էր ուղղել Ժամանակի Պուկաս կաթողիկոսին (1780—1799) , որը վարում էր չափազանց զգուշաւոր քաղաքականութիւն եւ յատուկ աշխատանքներ չէր անում Պոտենոմկինի եւ Արդութեանի յիշեալ քաղա-

Այս մեծահարուստ անձը առաջարկում էր Բօրչալուում, Լոռում և Երեւանի նահանգում մշակել լեղակ, շաքարի եղէզն, բամբակ և սուրճ, հիմնել գործարաններ և այդպիսով դարերով աւեր ու քարուքանդաշխարհին միանգամից վերակենդանութիւն տալ:

Ուրեմն դրամագլուխն ի նկատի և պատրաստ էր և մնում էր գործ սկսելը:

Վճռուեցաւ սկսել Ղարաբաղի խանութիւնից — այն է զահավէժ անել իրավահիմնանին և նորա տեղը հայ կառավարիչ կարգել: Բուն ձեռնարկութիւնը դիտաւորութիւն կար սկսել առաջիկայ 1784 թուի մասոր և զօրքն արդէն պատրաստուում էր:

Բայց այն ինչ ծրագիրը գրուում էր և իրագործութեան պատրաստութիւններ տես-

քական ծրագրի իրագործման համար, և կշտամբում էր վեհափառին, առելով՝ «Կ'երեւի թէ հանիվ թիդ ծալայութիւն այլազգեաց և ո'չ սիրել զազատութիւն»: Տե՛ս այս մասին «Սիոն», 1947, թիւ 3, էջ 111: — Շամիր-խանի, Յովսէփ Էմինի Երեւան գալը հայ ժողովրդի կեանքի այդ մռայլ օրերին իրենց աղաւատաննչ ձգտումներով ու պատրաստակամութեամբ ամէն զոհարերութեան, չափազանց նշանակալից Երեւոյթ է ինքնըստինքեան և միաժամանակ փայլուն ապացոյց է, թէ որքան խոր ու ծաւալուն է եղել հայ հասարակութեան մէջ, նայն իսկ վերին խաւերում, Հայաստանի ազատութեան և անկախութեան դողափարը: Իրերի այս հողերանական վիճակի հանդէպ ակամայ համեմատութեան պահանջ է զգացւում 19րդ դարի վերջերին և 20րդ դարի սկզբներին մեր հայ կեանքի մէջ տեղի ունեցած ահաւոր դէպքերի հանդէպ մեր հասարակութեան վերին խաւերի կողմից ցուցադրած վերաբերմունքն ու բռնած դիրքը:

նուռում էին, քաղաքական հանդամանքները
խիստ խճճուեցան :

Օմմար խանը աւերում է Վրաստանը,
չնայելով որ Ռուսաց զօրքն այդ ժամանակ
նատած էր այնտեղ եւ պատրաստուում էր դի-
մել Ղարաբաղի վերայ : Ռուսաստանը այդ
ժամանակ երկրորդ Տաճկական պատերազմն
էր սկսում եւ էլ Հնարաւորութիւն չի ունե-
նում Վրաստանը պաշտպանելու : Հայաս-
տանը նորից բարձի թողի մատնուում է իր
ճակատագրին եւ իւր ձգտումների համար են-
թարկուում է վրէժխնդրութեան հարուած-
ներին : Պարսիկներն ու Իրահիմ խանը սար-
սափելի հայածանքներ եւ բռնութիւններ են
դործ դնում Հայերի դէմ : Հայաստանը նո-
րից արխւնաշաղախ է լինում, Ռուսաստա-
նին հաւատարիմ եւ անձնուէր մնացած բո-
լոր մէլիքները կոտորուում են եւ ի սպա-
ջնջուում են եւ մի քանիսին միայն յաջողում
է փախչել Տփիսիս՝ Հերակլ թագաւորի մօտ :

Ոչ Հայերն եւ ոչ Ռուսաց կառավարու-
թիւնը չէին կարողանում այնու ամենայնիւ
հրաժարուել այն նուիրական գաղափարից,
այն նպատակից, որ պատմական հանդա-
մանքների ընթացքներին ստեղծւել էին եւ
Պետրոս Մեծը նախատեսել էր» (Էջ 8—10) :

Արդարեւ, յետագայ պատմական իրա-
դարձութիւնները իրենց աստիճանական զար-
դացմամբ բերին ի վերջոյ Արեւելեան Հայաս-
տանի ազատութիւնը Պարսիկների ու Տա-
ճիկների գաղանարարոյ տիրապետութիւնից :

Շարունակենք հետեւելու այդ պատմական դէպքերի ընթացքին:

**

Պաւել կայսեր օրով (1796—1801) թէեւ շարունակուեց Ռուսաստանում եղած հայ առեւտրականների եւ նոր գաղթող Հայերի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքը, բայց կանգ առաւ նուաճողական քաղաքականութիւնը դէպի Անդրկովկաս. դեռ աւելին, նա անակնկալ կերպով յետ կանչեց իր զօրքերը, որի հետեւանքով երկիրը Աղայ Մահմատ խանի բարբարոսութիւններին զոհ զնաց:

1797 հոկտեմբեր 7ի հրամանագրով կայսրը թոյլատրեց հայ մելիքներին իրենց հպատակ ժողովուրդով՝ 11.000 ընտանիք, ընդունել Ռուսաց հպատակութիւն եւ բնակչութիւն հաստատել — ինչպէս ասուած է բնագրի մէջ — «Կովկասեան սահմանագծի» շրջանում, այսինքն՝ Կովկասեան լեռնաշղթայի այս կողմը:

Սակայն ամենանշանաւոր դէպքը, որ այս կայսեր օրով տեղի ունեցաւ եւ ապահովութիւն բերեց նաեւ հարիւրաւոր հայ ընտանիքներին, դա Վրաստանի միացումն էր Ռուսաստանին 1801 թ.:

Վրաստանին սահմանակից Պարսից խանութիւններից հարիւրաւոր հայեր դիւրութեամբ վախչում էին եւ ապաստան գտնում իրենց հայրենակիցների մօտ, որոնք հնուց բնակութիւն էին հաստատել Վրաստանում:

Ալեքսանդր Ա. կայսեր օրով (1801—1825) նոյնպէս նուաճողական քաղաքականութիւնը դէպի Արեւելեան Հայաստան երկար ժամանակ կանգ առաւ : Յայտնի է , որ այս կայսեր ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր դէպի Արեւմտեան Եւրոպա , դէպի Նապոլէոն Ա. կայսեր նուաճումները Միջին Եւրոպայում , որոնք ի վերջոյ հանգեցին 1812 թ . ոռուաֆրանսական պատերազմին :

Այսու հանդերձ այս կայսրն էլ շարունակեց արդէն պատմական աւանդութիւն դարձած քաղաքականութիւնը՝ հովանաւորութիւն ու բարեհաճ վերաբերմունք դէպի Հայերը : Այս տեսակէտից ուշադրաւ է այն հրովարտակը , որը նա ուղղել էր Վրաստանի Հայերին 1813 թ . սեպտեմբեր 16ին :

Այս հրովարտակը արդիւնք էր հետեւեալ դէպքերի .

1804 թ . իշխան Յիցեանովն ու զօրավար Գուգովիչը յարձակում գործեցին Գանձակի վրայ ու ջարդ տուին պարսիկներին : Այս յաղթանակով Գանձակի խանութիւնը անցաւ ուրսական իշխանութեան ներքոյ :

Այնուհետեւ 1804—1813 թ . մի շարք կոիւներ մղուեցին Երեւանի խանութեան դէմ , Երեւանը նուաճելու նպատակով . դժբախտաբար , ակնկալուած յաջողութիւնը չունեցան այդ կոիւները :

Այս բոլոր կոիւների ժամանակ Հայերը ոչ միայն մնացին Հաւատարիմ Ռուսաստա-

նին, այլ եւ զէնքով բերին իրենց թանկաղին օժանդակութիւնը:

Թէ՛ Ցիցեանովը, — վկայում է Պօտոսն — որ «առանձին մեծ ատելութիւն էր զգում դէպի Հայերը», եւ թէ՛ բոլոր Ռուս զօրավարներն ու Հրամանատարները «միաձայն վկայեցին իրանց օրով Հայոց կատարած մեծամեծ յաղթութիւնների մասին»: Բաիշչեւը զրում է, որ Կախէթիի խոռվարար ապստամբութիւնների ժամանակ, հայ Աղզը, որ Վրաստանի մարդարնակութեան նշանաւոր մասն է կաղմում, անյոզդողդ մնաց Հաւատարմութեան մէջ եւ զոհելով իր կարողութիւնը, մինչեւ կեանքն եւս, կոռւեց ապստամբների դէմ եւ բազմիցս ապացուցեց իւր քաջութիւնն եւ անկեղծ անձնուիրութիւնը» (Պօտոս, էջ 12):

Այս զեկուցումների հիման վրայ էր, որ կայսրը յիշեալ Հրովարտակը յայտարարեց եւ որի մէջ ասուած էր.

«Վրաստանում բնակուած իմ սիրելի եւ հաւատարիմ հպատակ Հայ Աղզին: Հայերը ցոյց են տուել իրենց մշտական խաղաղասիրութիւնն եւ հաւատարմութիւնը, երբ թեւամտութիւնն ու չարամտութիւնը ջանում էին ի զուր տեղ խախտել մեր կողմից Վրաստանում հաստատուած հանդիսան, ու խռովայոյդ պայմաններում մնացին ամուր եւ անսասան իրենց պարտաճանաչութեան մէջ դէպի մեղ եւ դէպի մեր գահը, զոհարերելով

իրենց ստացուածքը, իրենց կարողութիւններն եւ նոյն խել իրենց կեանքը յօդուամեր ծառայութեան եւ ընդհանուրի բարիքի: Նման պարտաճանաչութիւն վրաստանի Հայերի, նրա բոլոր դասակարգերի կողմից ցուցադրուած, նրանց ծառայութիւններն ու սխրագործութիւնները մեղ վրայ դնում են հաճելի պարտականութիւն վկայելու ամրող աշխարհի առաջ մեր արդարացի երախտազիտութիւնն ու բարեհաճութիւնը: Թո՛ղ այս վկայութիւնը պահպանուի ի փառս եւ ի պատիւ նրանց եւ ի յիշատակ դալոց սերունդների»:

Այսուհետեւ 1813 թ. Հոկտեմբեր 12ի Գիւլիստանի գաշնագրով Պարսկաստանը զիջեց Ռուսաստանին՝ Նուխին, Շամախին, Ղարաբաղի, Թալիշի, Բաքուի, Ղուբայի ու Դերբենդի խանութիւնները: Այս շրջաններում հայութիւնը կազմում էր տեղական աղքարնակութեան ստուար մասը:

Միաժամանակ նոյն այդ գաշնագրով հաստառուեց, որ Ռուսաստանի սեփականութիւնն են կազմում Դաղստանը, Վրաստանը, Խմերեքիան, Գուրիան, Արխագիան եւ Շօրագեալը, այսինքն՝ գրեթէ ամրող Անդրկովկասը, բացի Երեւանի ու Նախիջեւանի խանութիւններից:

Նշանակալից է մասնաւորապէս հերոսական Ղարաբաղի աղասագրութիւնը, այն Ղարաբաղի, որ մի դարուց աւել կատաղի կոխւ-

ներ էր մզել Պարսկաստանի դէմ, անթիւ զոհեր տուել ու աննկարագրելի տառապանքներ կրել . . . :

Պատմութիւնը ունի իր առեղծուածական երեւոյթները :

Անդրկովկասի ազատագրութիւնը վիճակուեց կատարելու Ռուսաստանի մի կայսեր՝ Նիկոլայ առաջինին (1825—1855), որ հոգով, սրտով ու մտքով հակառակ էր ամէն ազատութեան եւ որը իր երկրում եղաւ ամէն ազատութեան դահիճը . . . :

Հետեւարար, բնական էր, որ նա եւ Անդրկովկասի ազատութիւնը չարդարացրեց Հայ ազատագրական շարժման ուահվիրաների՝ Խորայէլ Օրիի, Յովսէփ Էմինի, Յովհաննէս Լազարեանի, Յովսէփ Արդութեանի փայտայրած վառ երազները՝ ունենալ ազատ եւ անկախ Հայաստան Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ :

Ճիշտ է, որ Հայ ժողովրդի սիրտը շահելու համար այդ նոյն կայսրը հրամացեց Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները անուանել «Նահանգ Հայոց եւ մուծանել զայնի մականուն մեր», բայց եւ այնպէս, նախ, դա չափազանց քիչ էր համեմատած ամրող մի դար Հայերի ակնկալած ազատութեան հետ, երկրորդ, այդ «Հայոց Նահանգը» իր վարչական կարգերով ոչնչով չէր տարրերում մի վորոնչժի նահանգում տիրող ոստիկանական կարգերից . . . :

Նիկոլա կայսրը երկու պատերազմներից յետոյ Պարսկաստանի հետ՝ 1826—1828 թ. եւ Տաճկաստանի հետ՝ 1828—1829 թ. միայն նուաճեց ամբողջ Անդրկովկասը։

Ուուս-պարսկական պատերազմը, կոմս Պասկեւիչի գլխաւոր հրամանատարութեան ներքոյ, սկսուեց ու տարուեց շատ յաջող։ Պարսկաստանը, որ Նադիր-Շահից յետոյ միրճուել էր ներքին երկպառակութիւնների մէջ, արդէն վաղուց կորցրել էր իր դիմադրական ոյժը. պետութեան հիմերը արդէն փուել էին ու քայքայուել։ Ուուս-հայկական ուժեղ զրոհի տակ՝ նախ 1827 թ. հոկտեմբեր մէկին ընկաւ Երեւանը, որ համարուում էր մի անառիկ բերդ, այնուհետեւ Պարսիկ-ները նահանջեցին մինչեւ Թեհրան։ Ուուս զօրքը հետապնդեց եւ պատրաստ էր արդէն անցնել մինչեւ Թեհրան ու այն եւս զրաւել, երբ Պարսիկները հաշտութիւն խնդրեցին, որը եւ կնքուեց Թուրքմանչայում 1828 թուին։ Բայ այս դաշնագրի Պարսկաստանը զիջեց Ռուսաստանին Արաքս գետի ձախակողմեան ամբողջ հողամասը, ուրիշ խօսքով՝ Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները։

Մեր այս ներածական համառօտ տեսութեան սահմաններից ի հարկէ դուրս է այդ պատերազմի մանրամասն նկարագրութիւնը, բայց եւ այնպէս չենք կարող չնկատել, որ հայ ժողովուրդը, Ներսէս Աշտարակեցու անձնազոհ առաջնորդութեամբ եւ յորդորնե-

րով²⁹ նետուեց պատերազմի դաշտը մեծ խանդավառութեամբ եւ բերեց մեծ օժանդակութիւն Ռուսաց զօրքին պատերազմի ամբողջ ընթացքում, չխնայելով ոչ իր գոյքն եւ ոչ էլ իր կեանքը։ Հայ ժողովուրդը խորապէս զիտակցում ու զգում էր, որ հասել է ժամը, երբ վերջապէս պիտի խորտակուի Ասիական բոնապետութիւնների իշխանութիւնը եւ պիտի թօթափի իրենից դարերի դաժան լուծը . . .։ Նա պարզ նախատեսնում էր, որ ապրում է մի վճռական պատմական մոմենտ, որից յետոյ նրա կեանքը հիմնովին պիտի փոխուի եւ պիտի սկսի մի նոր գարաջրջան՝ խաղաղ ու ազահով կեանքի ժամանակաշրջան։ Եւ հետեւելով իր հոգեւոր մեծ առաջնորդին, ոչինչ չխնայեց Ռուսական զէնքի յաջողութեան համար։ Յայտնի է նաև, որ Ներսէսի կողքին զործում էր նաև Գրիգոր Մանուչարեանց եպիսկոպոսը իր հեծելագունդով եւ ցուցադրել էր մեծ քաջազործութիւններ, որոնց համար ստացել էր Ս. Գէորգի, Ս. Վլադիմիրի եւ Ս. Աննայի շքանշանները։

Այս պատերազմը ունեցաւ նաև մի այլ խոշոր հետեւանք. Պարսկաստանից Արեւելիան Հայաստան դադթեցին 40.000 Պարսկա-

²⁹ Դեռ 1826 թ. Ներսէս Աշտարակեցին ցրում էր պատերազմաշունչ չրջարերականներ ժողովուրդի մէջ, առելով՝ «Դիմագրեցէք թշնամուն եւ սորա արրանեակներին, կամ Ռուսաց զօրքի հետ միասին եւ կամ թէ ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի. իսկ եթէ հարկ լինի մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»։

Հայեր զինդապետ Ղազար Ղազարեանի առաջ-նորդութեամբ եւ հաստատութեցին գլխաւորապէս Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւններում :

Այս գաղթի ընդհանուր նկարագրութիւնը տրուած է ստորեւ՝ գնդապետ Ղազար Ղազարեանի կենսագրականի մէջ, ուստի այս տեղ կանգ չենք առնում այդ նշանաւոր դէպքի վրայ :

Մուս-Տաճկական պատերազմը 1828—1829 թ. մզուում էր երկու ճակատներում՝ Բալկաններում՝ զօրավար Դիրիչի հրամանատարութեան տակ, եւ Արեւելեան Հայաստանի ոռւս-տաճկական սահմանագծում՝ կոմս Պասկեւիչի հրամանատարութեան ներքոյ :

Երբ զօրավար Դիրիչը դրաւեց վառնա եւ Շումար ամրոցները եւ յետոյ Աղրիանուագոլիս քաղաքը, իսկ կոմս Պասկեւիչը նուանեց Կարս եւ Ախալցխա ամրոցներն եւ ապա կրպում քաղաքին տիրեց, Տաճկաստանը հարկագրուեց տեղի տալ եւ հաշտութիւն խնդրել։ 1829 թ. Աղրիանուագոլիս քաղաքում կնքուեց հաշտութեան դաշնապիրը, ըստ որի Դանուր գետի ստորին հոսանքի ձախ կողմը եւ Սեւ ծովի արեւելեան ափերը (Կուբան գետի բերանից դէպի հարաւ եւ Ախալցխա իր շրջանով), այսինքն՝ Անապան եւ Փոթին եւ ապա Ախալցխան ու Ախալքալաքը անցան Մուսների ձեռքը :

Բացի այդ Մոլուխան, Վալախիան ու Սերբիան հռչակուեցին ինքնավար երկիրներ Ռուսաստանի հովանու տակ. Յունաստանը յայտարարուեց անկախ թագաւորութիւն:

Այս պատերազմի ընթացքում Հայերը իրք 100.000 հոգի գաղթեցին Կարինի (Կրգերում) շրջանից, Կարինի Կարապետ եւ Կարսի Ստեփան Եպիսկոպոսների առաջնորդութեամբ: Այս գաղթականութիւնը լցրեց Արաքսի ամայի ու աւեր հովիտը աշխատասէր եւ ստեղծագործ կորովով օժտուած խաղաղ հայ աղքարնակութեամբ:

Կարինից մասնաւոր գաղթը սկսուեց 1829 թ. հոկտեմբեր 14ին, իսկ ընդհանուր գաղթը՝ 1830 թ. մայիսից:

Այդ գաղթով Կարինի ամբողջ շրջանը դրեթէ դատարկուեց հայ աղքարնակութիւնից, ամայացաւ ու մատնուեց տնտեսական տաղնապի:

Ռուս կառավարութիւնը եւ զինուորական իշխանութիւնը ամէն կերպ օգնում էին ու խնամք տանում դիւրացնելու եւ անվտանգ պահելու Հայերի ելքը. տրամադրեցին որոշ զօրամասեր ուղեկցելու գաղթողներին եւ պաշտպանելու նրանց Քուրդերի հաւանական յարձակումներից, տուին սայւեր փոխադրելու անկարողներին եւ նրանց գոյքը, բաժանում էին հաց. տուին նաև զրամական օժանդակութիւն՝ իրք 20.000 ռուկի փոխարինաբար, հետապայում մաս-մաս վերադանելու պայմանով:

Հաստ Ա. Երիցեանի տոռած տեղեկութիւնների³⁰, Տաճկահայաստանից գաղթելէին.

Արզրումի Փաշայու-		
թիւնից	7·298	գերդաստան
Արդահանից	67	„
Կարսի Փաշայու-		
թիւնից	2·467	„
Բայազէթի Փաշայու-		
թիւնից	4·215	„
	<hr/>	
ընդամէնը	14·047	գերդաստան :

Եթէ հաշուելու լինենք, որ ամէն մի գերդաստան բազկացած էր 8 հոգուց, որ չի կարելի այն ժամանակուոյ հայ նահապետական ընտանիքի համար համարել բարձր թիւ, կը ստանանք՝ 112·352 հոգի, որը միանդամայն համապատասխանում է բոլոր մեր պատմիչների մատնանշած ընդհանուր թուին՝ հարիւր հազար հոգու:

Արզրումցիք բնակուեցին Ախալցխա և Ախալքալաք քաղաքներում և նրանց շրջակայ գիւղերում:

Կարսեցիք ընտրեցին Գիւմրի (Ալէքսանդրոպոլ-Լենինականը), Արագածի լանջերը, Ազարանն ու Թալինը:

³⁰ Տես Ա. Երիցեան, «Ամենայն Հայոց կաթուղիկոսութիւնը եւ Կովկասի Հայք 19րդ դարում»: Հատուր Ա. եւ Բ.: Թիֆլիս 1895 թ.:

Բայազէթցիք՝ Սեւանայ լճի կողմերը, Դարաչիշագ եւ մասսամբ Սուրբալու զետեղուեցին՝³¹:

Այս պատերազմի ժամանակ էլ հայ ժողովուրդը բերել էր իր գործօն մասնակցութիւնն եւ ցուցադրել մեծ քաջազործութիւններ:

«Հէնց որ ոռւս-տաճկական պատերազմը սկսուեց, գրում է մի ոռւս հեղինակ, Տաճկահայերի մէջ ծնունդ առաւ ուրախութեան յուզմունք: Բարձր Դուռը (Թիւրքիան) սահմանակից շրջաններից Հայերին փոխազրեց հեռաւոր վայրեր, բայց դրանով զժուար էր արգելք լինել Հայերին արտայայտելու իրենց համակրանքը Ռուսաստանին: Որքան ոռւս զօրքերը առաջ էին ընթանում, այնքան աւելի վճռական կերպով էին Հայերը արտայայտում խօսքով ու գործով իրենց համակրանքն ու աջակցութիւնը: Հայերից կազմուել էին կամաւոր գնդեր, որոնց վրայ մի առանձին կատաղութեամբ էին յարձակուում տաճիկ զինուորները: Բայց Հայերը շարունակում էին անխախտ արտայայտել իրենց ջերմ հաւատարմութիւնը Ռուսաստանին: Ի դէմս Հայերի, կոմս Պասկեւիչի վկայութեամբ, ոռւս զօրքերը գտան «Քաջ զինակիցներ եւ զերմեռանդ մասնակիցներ»: Նրա պաշտօնական հաղորդագրութիւնից երեւում է, որ Բայազէթում 2000 Հայեր կոռւել են ոռւս զօրքի շարքերում. Ղարսում 800 հոգի ձիա-

³¹ Անդ:

ւորներ պաշտպանում էին ոռւսական սահմանը և լ, վերջապէս երբ ոռւս զօրքերը հասան էրդերում, ամբողջ Հայ ազգարնակութիւնը ընդունեց նրանց խանդավառ ցոյցերով^{32»:}

*

Անդրկովկասի նուաճումով, Սեւ, Ազովու Կասպից ծովերի եղերքի գրաւումներով, որոնք տեւեցին մէկ զարուց աւելի, Ռուսաստանի պետական ծաւալումը դէսի Հարաւ-Արեւելք կանդ առաւ: Այժմ հերթը հասել էր Հիւսիսային Կովկասի լեռնականներին՝ Զերքէզներին, Զէչններին և այլոց խաղաղացնելու: Նիկոլա Ա.ի ամբողջ թագաւորութեան ընթացքում անընդհատ կոիւներ էին մզուում նրանց դէմ:

Հիւսիսային Կովկասը խաղաղուեց, ըմբռուստ լեռնականների դիմադրութիւնը զըսպուեց միայն Ալէքսանդր Բ.ի օրով 1864թ., երբ լեռնականների առաջնորդ հոչակաւոր Շամբիլը անձնատուր եղաւ 1859 թ. և ապստամբութեան թափը հետզհետէ կոտրուեց և երկիրը վերջնականապէս խաղաղուեց:

Նիկոլա Ա. կայսրը, Անդրկովկասի նուաճումից յետոյ, անմիջապէս ձեռնամուխ Եղաւայդանը ոռւսական պետական կարգերն հաստատելու և օրէնքներ մտցնելով, կազմակերպելու վարչութիւնը:

³² Տե՛ս Զանչեանի «Եղբ. Օպնութիւն», էջ 653:

Այդ աշխատանքների մէջ ամենից նշանաւորը եղաւ 1836թ. «Պօլօժենիկն»³³, որը կայսրը հաստատեց յառուկ հրովարտակով նոյն թուի մարտ 11ին եւ ապա անմիջապէս գործադրութեան դրուեց:

Պիտի ասել, որ նման մի վարչական կանոնագրի մշակման անհրաժեշտութեան գաղափարը Հայ լուսաւորչական Եկեղեցու համար առաջին անդամ յղացել էր ազա Մինաս Լազարեանը՝ Դաւիթ-Դանիէլեան տիսուր վէճի ծանր տպաւորութեան տակ, մի վէճ, որ տեւեց մօտ վեց տարի՝ 1801թուից մինչեւ 1807թ. եւ որը Ա. Երիցեանի վկայութեամբ, «ազգիս ընդհանրապէս, եւ Արոռին զլխաւորապէս, մեծամեծ վնասներ պատճառեց»:

1805թ. Մինաս Լազարեանը գրել էր Աստրախան Եփրեմ Եպիսկոպոսին և թիֆլիս Յովհաննէս Գեղարդակրին եւ առաջարկել, որ սրանք համոզեն Դանիէլ կաթուղիկոսին, որպէս զի էջմիածնում մի «սիւնիոնուարան» հաստատէ իր նախագահութեամբ և որոշ կանոններով կառավարէ Եկեղեցւոյ վարչական գործերը և այդպիսով վերջ տրուի այն տիսուր ու խայտառակ անցքերին, որոնք կատարւում էին էջմիածնում³⁴:

Այժմ, Երբ ամբողջ Արեւելեան Հայաս-

³³ «Պօլօժենիկ»ի լրիւ վերտառութիւնն է՝ «Բարձրագոյն կանոնագրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի թուսատանն»:

³⁴Տե՛ս Երիցեան, Հ. Բ., էջ 267:

տանը սկսել էր իր խաղաղ կեանքը և գտնուում էր կոմս Պասկեւիչի վերին կառավարութեան ներքոյ, նոյն մտքին է դալիս նաեւ ինքը Պասկեւիչը և առանց յապաղելու Հայոց եկեղեցւոյ վարչական կանոնագրի մշակման գործը զնում է գործնական գետնի վրայ եւ նրա ջանքերը պսակուում են 1836թ. «Պօլօժենիկյով» :

Այս «Պօլօժենիէն» իր բազում խոչոր պակասներով հանդերձ, անշուշտ մի դրական երեւոյթ էր հայ կեանքի մէջ, որի բնական կեանքը միանդամայն խաթարուած էր Պարսից ու տաճկական իշխանութիւնների ժամանակ : «Պօլօժենիէն» յամենայն դէպո մտցնում էր հայ հոգեւոր կեանքի մէջ մի որոշ կարգ ու կանոն, կանխում էր անձնական բռնագրօսիկ ելոյթները, որոնք անցեալում յաճախ տեղի էին ունենում, մասնաւորապէս էջմիածնի միաբանութեան շարքերում . Մայր աթոռի դրամական գործերը որոշ հսկողութեան տակ էր զնում ու կանոնաւորում, եւ վերջապէս, որ գլխաւորն է, իրաւունք էր տալիս հոգեւոր բարձր կառավարութեան բաց անելու ծխական ու քեմական դպրոցներ : Մի խօսքով, հայ ժողովուրդը ստանում էր եկեղեցական-կրթական ինքնավարութիւն, ազատութիւն իր ներքին գործերի մէջ, բայց մերժուում էր ազգային պետականութիւն ստեղծելու իրաւունքը :

«Ճիշտ է, ասում է Լէօն, Պօլօժենիէն միմիայն լուսաւորչական Հայոց եկեղեցուն

Էր վերաբերուում եւ միմիայն զուտ եկեղեցական հարցեր էր չօշափում, բայց եւ այնպէս, եթէ ի նկատի առնենք Հայ եկեղեցու կազմակերպութիւնը, նրա ոգին, դա միաժամանակ եւ ժողովրդական օրէնք էր, որ ահազին ազգեցութիւն ունեցաւ մեր պատմական ճակատագրի վրայ, սկսած իր գործադրութեան ժամանակից, շուրջ տուեց, կարելի է ասել, մեր պատմութեան անիւր: Ռուսաց օրէնսդրութեան մէջ Պօլօժենիէի միջոցով ընդունուում եւ պաշտօնական վաւերացում էր ստանում մի ամրող ժողովուրդ — «Հայկական ժողովուրդը» — որ ունի իրաւունքներ, ընտրողական քուէ, սեփականութեան իրաւունք: Բայց այս բոլորը լոկ Հայ լուսաւորչական եկեղեցու շուրջը, լոկ իրրեւ մի եկեղեցական համայնք³⁵:

Այսպէս, թէեւ — կրկնում ենք — մեր պատագրութեան ուահվիրաների փայփայած երազները՝ ստեղծել ազատ ու անկախ Հայաստան, չիրականացաւ. Հայ ժողովուրդը ճանաչուեց Նիկողայոս կայսեր օրով լոկ որպէս մի կրօնական համայնք, Երեւանի նահանգում, որի տակ հասկացւում էր ամրող Անգրկովկասի Հայութիւնը, այսու հանգերձ Պարսից ու Տաճիկների գաղանարարոյ իշխանութեան կործանումը եւ Հայ ժողովրդի դարաւոր անհուն տառապանքների վերջ դանելը

³⁵ Լէօ, Պատմութիւն Երեւանի Հայոց թեժական հոգեւոր գպրոցի, 1837—1912. Թիֆլիս 1914, էջ 116:

1828—1829 թթ. Ռուսաստանի տիրապետութեամբ, պատճառեց ամբողջ Հայութեան աննկարագրելի ուրախութիւն ու խանդավառութիւն :

Էջոն իր յիշեալ աշխատանքի մէջ բերում է ընդարձակ պատմական վկայութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ աստիճանի էր հասել այդ օրերին Հայոց հրճուանքը՝ սկսած Խաչատուր Արովեանից, Մեսրով Թաղիագեանից մինչեւ Հնդկահայերը :

Եւ քանի որ մեր այս համառօտ տեսութեան նեղ սահմաններից դուրս է ընդարձակ նկարագրութիւնը այդ խանդավառութեան, ուստի սահմանափակուում ենք միայն հետեւեալ միերկու փոքրիկ մէջ բերումներով այդ վաւերագրերից, մի գաղափար տալու համար հայ ժողովրդի վրայ թողած տպաւորութեան մասին՝ Անդրկովկասի նուաճումից յետոյ Ռուսների կողմից :

Երեւանի 10 դիւզերի եւ Երեւան քաղաքի «առաջաւոր անձանց» դրութեան մէջ, ուղղուած «Առ սուրբ Էջմիածնի բարձրագոյն կառավարութիւնն» 1828 թ. յուլիսին, ասուած է ի միջի այլոց :

«...Ի սրբազան հարցդ եւ ի նախնի պատմչաց մերոց լուեալ եւ ընթերցեալ եմք թէ Հայոց ազգն երեւելի թաղաւորութիւն մի էր, ուրեմն ըստ բաւականին զօրք եւ ժողովուրդք պարտէին ունիլ, զի կառավարեցէին զայնպիսի թագաւորութիւն։ Այժմ բոլոր ի մէջ Հայաստանու Ատրպատականի հա-

զիւ յիսուն հազար տնօրք գտանին ի Հայոց, մնացեալքն ցիր ու ցան եղեալ են ընդ ոլորտս տիեզերաց» :

«... Գոհանամբ զԱստուծոյ եւ զսուրբ Պատկերէ Նորին Կայսերական Մեծութեան ամենայն Ծուսաստանու Նիկոլայ Պաւլովիչէն որ մենք, ի ներկայիս գտանեցեալ անարժան ծառայքս Աստուծոյ եւ հաւատարիմ հաւատացեալքս սուրբ կայսրութեան նորին անզրաւ ուրախութեամբ տեսաք եւ վայելեմք զյաւիտենական ազատութիւն մեր եւ որդւոց մերոց ի յանտանելի բռնութեանց եւ յապօրինաւոր հարկապահանջութեանց բարբարոսացն. ուստի մնացեալ Հայքս ի սահմանու Երեւանու գրով եւ բանիւ ձայն տամք ցրուեալ ազգիս մերոյ ի զանազան իշխանութիւնս եւ ի գաւառս բանիւ Սաղմոսին. Այսօր է զոր արար Տեր, եկեալ ժողովեցարուք, եղբարք մեր, ընդ հովանեաւ գայիսօնի Քրիստոսասէր Ծուսաց կայսերութեանն, ցնծասցուք եւ ուրախ լիցուք, զի այց արար մեզ Բարձրեալն, ազատեցաք ի գերութեանց եւ զրօշակքն թագաւորութեանց մերոց ի ձեռս որդւոցն Հայկազնէից զարհուրեցանեն զնախաչար թշնամիս նոցին» եւ այլն :

Կալկաթահայերի գրութեան մէջ, 105 ստորագրութեամբ, ուղղուած Ներսէս Աշտարակեցուն, ասուած է հետեւեալը .

«... Զիարդ հեռաւորութիւն տեղւոյ խափան լիցի մեզ խոստովանել զերախտագիտութիւն մեր առ երկնակառոյց հզօր տէ-

րութիւնն Մոսկովաց՝ որք ի սիրոյ բնութեան
եւ քրիստոնէական կարեկցութեամբ շար-
ժեալ՝ յառաջ մատեան առ անկեալս յիւրեանց
նախնական շքեղութեանց, եւ ձեռն տուեալ
նոցա հանին զնոսա ի խաւարչտին գրոյ ան-
յոյս գերութեան ի լուսանորոդ վայրս ցան-
կալի ազատութեան . . .³⁶» :

Բաց ենք թողնում Մադրասի հայերի,
Թաղիաղեանի գրութիւնները, որոնք նոյն
ոգով եւ ոչ պակաս խանդավառութեամբ են
գրուած :

Հայ ժողովրդի այս հրճուանքն ու խան-
դավառութիւնը, որ ազատութիւն էր գտել
զարաւոր ստրկութիւնից, ի զուր չէին. նրա
կաշկանդուած հոգեւոր եւ մտաւոր կարողու-
թիւնները շղթայազերծուելով ու խաղաղ աշ-
խատանքի հնարաւորութիւններ ձեռք ձդե-
լով, զարմանալի կարճ ժամանակամիջոցում,
ընդամենը 20—30 տարուայ ընթացքում,
ձեռք բերեցին տնտեսական շօշափելի բար-
գաւաճում ու ցուցազբեցին մշակութային
վերելք :

1855 թուի Դրիմի պատերազմից յետոյ,
յայտնի է, որ Մուսաստանում, Ալէքսանդր
Երկրորդ կայսեր օրով, սկսուեց մեծ բարե-
նորոգումների մի սքանչելի ժամանակա-
շրջան, երբ գիւղացիութիւնը 1861 թ. փետ-
րուար 19ին կայսերական հրովարտակով ա-
զատադրուեց ճորտութիւնից, երբ մեծ բա-

³⁶ Անդ, էջ 102 և 105:

բենորողումներ կատարուեցին դատաստանական կազմակերպութեան մէջ, երբ ժողովուրդը ստացաւ ներքին ինքնալարութիւն ի դէմս զեմստոյական հաստատութիւնների, եւ երբ, վերջապէս, մամուլն ու դրականութիւնը մի որոշ չափով ազատութիւն ստացան արտայայտելու ու տարածելու ամենայառաջաղէմ գաղափարներ :

Այս մտաւոր ազատարար շարժումը ունեցաւ իր փրկարար ազգեցութիւնը նաև Հայ կեանքի վրայ : Բաւական է միայն մատնանշել, որ 1850ական թուականների երկրորդ կէսից սկսուեց այն մտաւոր մեծ շարժումը ամբողջ ռուսահայութեան մէջ, որ յայտնի է Վերածնուրեան շրջան անունով եւ որի գլխաւոր ներկայացուցիչներն եղան՝ Ստ. Նազարեանը, Միք. Նալբանդեանը, Սմբատ Շահազիզը, Գամառ-Քաթիպանը եւ նրանց շրջապատող մի փայլուն փաղանդ մտաւորականների, որոնք մեծ զարկ տուին Հայ լեզուի, Հայ դրականութեան, Հայ Հրապարակախօսութեան զարգացման ու 19րդ դարի յառաջաղէմ գաղափարների տարածման Հայ կեանքի բոլոր ասպարէզներում :

Այս երեւոյթի պատճառների շարքում խոշոր դեր ունի թէ Հայ ժողովրդի բնածին աշխատախրութեան եւ տոկունութեան ստեղծագործ ողին, եւ թէ այն Հանգամանքը, որ Անդրկովկասը, ամայի ու խոպան Պարսից ու Տաճկաց իշխանութեան մռայլ օրերին, լցուեց Հայ ազգարնակութեամբ, մի

ազգարնակութիւն, որի բնական աճման թափն էլ միշտ եղել է զօրեղ:

Իսկ ազգարնակութեան թիւն ու աճումը, յայտնի է, որ հանդիսանում է մի ժողովուրդի ընկերային, տնտեսական եւ մշակութային զարդացման ու յառաջադիմութեան դիմաւոր ազգակներից մէկը:

Այս տեսակէտից Արեւելեան Հայաստանը 1830 թուից յետոյ ներկայացնում էր մի շատ ուշագրաւ պատկեր:

Բայ Դաւիթ Անանունի ուսումնասիրական տուեալների³⁷, 1830ական թուականներին միայն Անդրկովկասը ունեցել է շուրջ 300·000 հայ բնակչութիւն բնիկ եւ նորեկ զաղթականների հետ միասին:

Բայ Մխիթար վարդապետի թերած վիճակագրական տեղեկութիւնների³⁸, 1902 թուին Հայերի թիւը Անդրկովկասի հինգ հանգներում՝ Երեւանի, Կարսի, Գանձակի, Թիֆլիսի եւ Բագուի, կազմում էր մի պատկառելի քանակութիւն, այն է 1,292·00 հոգի կլոր թուով ասել է թէ հազիւ 65—67 տարուայ ընթացքում Հայերի թիւը բառապատկուել էր:

Եզրափակելով մեր խօսքը ուսուական թափանցումի մասին դէպի Անդրկովկաս,

³⁷Տե՛ս էջ 108. Դ. Անանունի, «Թուսահայերի հասարակական զարդացումը 19րդ դարում», Հ. Ա. 1916:

³⁸Տե՛ս էջ 135. Մխիթար վարդապետի, «Հայերը թուսաստանում», Վաղարշապատ 1906:

մատնանշելով հայ ժողովրդի ունեցած զոր-
ծօն մասնակցութիւնն այդ թափանցումի ըն-
թացքին, եւ ապա նրա աղղեցութիւնը հայ
կեանքի զարգացման վրայ, ասենք եւ այն,
որ ոռւս եւ հայ ժողովրդի այդ մերձեցումը
միայն Հայերի համար չէր, որ մեծապէս շա-
հաւէտ եղաւ, այլ եւ ոռւս պետութեան եւ
ոռւս ժողովրդի համար:

Այս հանդամանքը դեռ 1865 թուին պար-
զել էր գեղեցիկ կերպով Լազարեան ծեմա-
րանի այն ժամանակի տեսուչ (հետագայում
համբաւաւոր վերատեսուչ) Գեորգ Քանա-
նիանը իր ընդարձակ ճառի մէջ, ասուած Լա-
զարեան ծեմարանի 50տմեակի առթիւ կայցա-
ցած հանդիսաւոր հաւաքոյթում:

«Թուս եւ Հայ ժողովրդների մերձեցումը,
ասուած է այդ ճառի մէջ, արդիւնք էր մի
կողմից ներքին ու կրօնական պատճառների,
միւս կողմից քաղաքական ու սօցիալական
նկատառումների:

«Հին Հայաստանի կարեւորագոյն կեն-
տրոնները, կրօնական ու պետական — Ար-
մաւիրն ու Արտաշատը, Սիւնիքը, Դւինը,
Վաղարշապատն ու Էջմիածինը — ընկան
պատմական ճակատագրի կամքով, ոռւս
միապետների իշխանութեան տակ: Հայ ժո-
ղովուրդը, որ 5 դար առաջ կորցրել էր իր
քաղաքական անկախութիւնը, ընդմիշտ ան-
քակտելի կապերով կապեց իր գոյութիւնը մի
հզօր երկրի հետ, որի վեհութեան ու բար-

դաւաճման համար նա բերեց իր հետ բաւականաչափ պայմաններ :

«Ի սկզբանէ գերադասելով քաղաքացիական կեանքի յառաջադիմութիւնը ուազմական սխրադործութիւնների փայլից, ի սկզբանէ սիրելով Փիղիքական ու մտաւոր աշխատանքն ու նրա բարի արդիւնքները, նա իր նոր հայրենիքի մի շարք մասերում երեւան բերեց այն ոյժերը, որոնցից կախում ունի ամէն մի երկրի բարդաւաճումը։ Նա իրանով բազմապատկեց այն տարրերը, որոնցով պայմանաւորուած է ամէն պետութեան կայունութիւնը։ Հայ գանդուածները, որոնք մի դարի ընթացքում լցնում էին Ռուսաստանի սահմանները, չէին հանդիսանում մի պարզ քանակութիւն, երկրորդական արժէք ունեցող յաւելում չէր գոյութիւն ունեցող ժողովրդական ոյժերին։ Նա բերեց իր հետ նիւթական ու բարոյական հարստութիւն։

«Հայ գաղքականութիւնը ստրկութեան մէջ տանջուած մասսաների հետ միասին Ռուսաստան բերեց նաեւ իր լաւագոյն ոյժերը։

«Տառապող, տուն եւ ապաստան փնտռող գաղքականների հետ, Ռուսաստան հոսեցին հարստութիւն, ձիրք, առեւտրական փորձառութիւն եւ գործնական գիտելիքներ։

«Կարելի է շատ օրինակներ բերել այդ բաւադոյն ոյժերի հոսանքի դէպի Ռուսաստան։ Բայց ամենապայծառ օրինակը մեր աչքի առջեւն է՝ կեանքն ու գործունէու-

թիւնը այն տոհմի, որ իր անունը կապել է
մեր դպրոցի հետ³⁹:

Ահա՝ այս տոհմի ներկայացուցիչների ա-
ռաքինի ու փայլուն գործունէութեան պատ-
մութեան էլ նուիրուած է մեր ներքոյ հա-
մեստ աշխատասիրութիւնը:

Լաղարեանները իրենց ջերմ հայրենասի-
րութեան ոգով տողորուած մի գործունէու-
թիւն են ունեցել, որով անջնջելի հետքեր են
թողել Հայոց պատմութեան փայլուն էջե-
րում. էջեր, որոնց ընթերցումը լցնում է
մարդու սիրուը ազգային պարծանքի վեհ
զգացումով ու ակամայ մղում դէպի երախ-
տադիտութիւն նրանց անմահ յիշատակի
հանդէպ:

³⁹ Տե՛ս էջ 14—15 «Ճառեր եւ հաշուետուութիւն,
արտասանուած հանդիսաւոր հաւաքոյթում Լաղարեան
Ճեմարանի 50ամեակի առթիւ» Գ. Քանանեանի ճառը:
(Ժուլի 1865 լեզուով:)

Բ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԽՈՒՐ
ՎԻՃԱԿԻ 1907 ԴԱՐԻ ՍԿԻԶԲՆԵՐԻՆ ԵՒ ՊԱՅՔԱՐԸ¹
ՆՐԱ ԴԵՄ

Թուրք-պարսկական դաժան տիրապե-
տութեան տակ հայ ժողովուրդը, որ չունէր
կեանքի ու զոյքի ապահովութիւն, ոչ էլ
անտեսական բարգաւաճ վիճակ, որ միշտ
ենթակայ էր չարքաշ աշխատանքի իր օրուայ
հացն հայթայթելու ու իր բազում կեղեքիչ-
ների անկուշտ ախորժակներին բաւարարե-
լու, որպէսզի մի կերպ կարողանայ իր ողոր-
մելի զոյութիւնը պահպանել, — բնականա-
բար չէր կարող զարգացնել ազգային մշա-
կոյթը: Նա չունէր ո՛չ զպլրոց, ո՛չ տպարան,
ո՛չ գրականութիւն եւ ո՛չ մամուլ:

Ազգային մշակոյթի օջախները վառ էին
միայն գաղութներում՝ Հնդկաստան, Վենե-
տիկ, Վիեննա, Մոսկուա, Պոլիս, Ջմիւն-
նիա եւայլն:

Հայ եկեղեցին իսկ Արեւելեան Հայաս-
տանում ու նրա հոգեւոր սպասաւորներն եւս
դրեթէ ոչնչով չէին տարբերում բուն ժո-

զովրդից . նոյնքան տղէտ էին , նոյնքան խաւարամիտ եւ նոյնքան միարձուած նախապաշարումների մէջ . . .

«Հայ եկեղեցին , ասում է Դաւիթ Անանունը , որպէս միակ կազմակերպուած ոյժ , մի կազմակերպուած դիակ էր ¹» :

Մ . Թաղիադեանցը իր «նանապարհորդութիւն ի Հայս» գրքի մէջ նկարագրում է հայ ժողովրդի հոգեւոր կենդրոնի՝ Ս . Էջմիածնի , որ հայ ժողովրդի սրտի ու մտքի վառարանն էր , կրթական վիճակը ամենամուայլ գոյներով . . .

«Ուսման եղանակը կամիածնի մէջ , ասում է նա , 1813—1816 թթ . Երկու տևսակ էր՝ խցի ու վարժատան : Նա , որ խցի աշակերտ էր , միաժամանակ եւ սպասաւոր էր . սովորում էր այն , ինչ որ գիտէր իր վարդապէտը , մեծ մասամբ վոխեր , Երգեր , Սաղմոս եւ Շարական : Սակայն այդ վարդապէտներից աւելի մարդասէրները , թէեւ իրենք անտեղեակ էին ազատական արուեստներին (իմա' աշխարհիկ գիտութիւնները) , բայց եթէ գտնում էին մէկին , որ գիտէր այն , խնայողութիւն չէին անում , ուղարկում էին իրենց մանուկներին նրա մօտ սովորելու : Եւ այսպիսով նրանցից ոմանց ուսումը լինում էր շատերին նախանձելի , իսկ տկարներին եւ

¹ Դ . Անանուն , «Բուսահայերի հասարակական գարդացումը ԺԹ . գարում , Ա . , 1916 :

աղքատներին յուսահատութեան իրաւացի պատճառ :

«Իսկ վարժատան ուսումն էր մէկ ծերունի վարդապետի հսկողութեան տակ : Վարժարանը հաւաքուած էին խառն ի խուռն հարիւրաւոր մէծ ու փոքր մանուկներ, 5 տարեկանից մինչեւ 20 տարեկան հասակ ունեցող : Վարժապետը չէր յոդնեցնում իրեն առանձին-առանձին ամէն մի աշակերտին հարցուփորձ անելու : Նա հաղորդում էր ինչ որ գիտէր, իսկ աշակերտները միմիանցից էին քաղում, ինչ որ խրացնում էին :

«Գիշերուայ ժամը 3ին, հաւախօսից առաջ, վեր էին կենում նրանցից մեծերը եւ ազդարարում աղօթքի կանգնելու : Եթէ ժանուկները դժուարանում էին վեր կենալ կամ դանդաղում էին, ապա նրանց թիկունքներին իջնում էին ցուպերի հարուածներ : Ժամերգութիւնը տեսում էր շատ երկար : Անդրանանաչ մանուկները, քնաթաթախ եւ յոդնած, ստիպուած էին լինում երբեմն 3—4 ժամ ոտքի վրայ կանգնել : Եւ չէին դիմանում . յաղթահարուած քնից ընկնում էին մէջքի վրայ, քաշում էին մի ապահով անկիւն կամ սեղանատան մի խորշը եւ թաց ու ցուրտ սալայատակի վրայ խրմփացնում : Եւ ահա՛ վրայ էր հասնում բարեգութ վարժապետը եւ իր աքացիով փախցնում նրա քունը եւ իրան էլ քաշում ապաշխարելու սառցատանը : Նրանք սովորում էին առհասարակ

փոխեր եւ եկեղեցու շարականներ, Նարեկիտ աղօթքներ, մասնաւորապէս աղօթքներ առ սուրբն կոյս Մարիամ եւ առ այն սուրբը, որի անունը աշակերտը կրում էր իր վրայ^{2»}:

Թիֆլիսը հանդիսանում էր հայութեան մի երկրորդ մտաւոր կենդրոնը, ուր կարելի էր սպասել աւելի միսիթարական վիճակի. բայց այստեղ եւս նոյն դրութիւնն էր, ինչ որ Ա. Էջմիածնում էր տիրում . . .

Ա. Երիցեանը, իր վերոյիշեալ պատմական աշխատասիրութեան մէջ³ գծում է կրթական զործի պատկերը Վրաստանի մայրագագում . . .

«Ամբողջ քաղաքիս մէջ, քաջ հայերէն իմացողը համարւում էր միմիայն Նորաշէն եկեղեցւոյ Երկու ոտքով կաղ ժամկոչ Եղիազար Գալստեանը, որ իր կաղութեան պատճառով մնացել էր առանց ձեռնադրուելու: Եկեղեցուց ոչ հեռու Խարազիսանայում (կօշկակարների թաղը) սա վարձած ունէր մի դուքան, ուր գետնի վրայ չոքած էին 13 հողի մոնթեր, ապագայ քահանայացուք, եւ տաւարի ոսկրէ թիակի վրայ՝ քենի անուանեալ, դրում եւ կարդում էին բարձրաձայն: Ուսուցանողն էր նոյն ժամկոչ Եղիազարը փալախայով հանդերձ: Դուքանը դոներ չունէր, բաց էր, եւ փողոցում անցուդարձ անողները կանգնում նայում էին որպէս մոնթերի

² Անդ էջ 111—113:

³ «Կովկասահայք», Ա., էջ 78—79:

իմաստութիւն ուսանելուն, նոյնպէս նոցա
փալախայ ուտելիս. «վա՛յ վա՛յ» գոռալուն։
Դասաւութիւնն էլ կանոնաւոր չէր։ Շա-
բաթը երկու անգամ այդ դպրոցում խալիֆայ
Եղիպարը թանաք էր եփում եւ կաւեղին ա-
մաններով ուղարկում էր մոնթերին ծախե-
լու փողոցէ փողոց։ Օր չէր անցնիլ, ժամ չէր
անցնիլ, որ ծանօթները, բարեկամները եւ
առ հասարակ խալիֆայի «պատիւը» ճանա-
չողները չգային խնդրելու մէկը թէ «մերոնք
(գերդաստանը) այսօր բազնիք են դնում ամ-
բողջ օրով, մի կամ երկու մոնթեր բան
տուր՝ լուացքի բողչէքը տանեն ու բերեն»,
միւսը խնդրում էր թէ՝ «կտուրս կաթում է,
թող մոնթերը դան՝ ոտքով տափտափեն
կտուրը», երբորդը թէ՝ «սանամէրդ (կնիկս)
այսօր հաց է թխում, թող մոնթերից մէկը
գայ ծըծի երեխային օրօրելու» եւայլն։

«Եւ մեծահոգի խալիֆան վեհանձնաբար
բաւականութիւն էր տալիս ամէնքին՝ ում
«խաթրը» որ ունէր, ուղարկելով մոնթերին
լուացքը բազնիք տանելու, կաթող կտուր-
ները տափտափելու եւ կամ երեխային օրօր
կարդալու»։

Թիֆլիսի հայ Հոգեւորականութեան
կրթական վիճակն էլ նոյնքան ողբալի է եղել։
Փողոցներում, Երիցեանի ասելով, վիստում
էին անգործ քահանաներ, որոնք «առա-
ւոտից մինչեւ երեկոյ դատարկ շրջում էին
ու զուարձախօսութիւն անում . . .»։

Յօական թուականներին անդամ, Երբ
Թիֆիհոռում 1824 թ. արդէն բացուած էր
Ասրսիսեան դպրոցը, իսկ Մոսկուայում
աւելի վաղ՝ 1815 թ. Լազարեան Ճեմարանը,
այնուամենայնիւ Ա. Երիցեանի վկայու-
թեամբ՝

«Էջմիածնի կացութիւնը շատ տխուր էր
մտաւոր զարդացման կողմից: Բացի քանի
մի վարդապետներից, մնացած միաբանները
եպիսկոպոսներով հանդերձ, խոր տղիտու-
թեան մէջ էին ընկղմուած: Վանքն ուսում-
նարան չունէր, տպարան չկար, եւ տպարա-
նին յատկացեալ շինութեան մէջ սպահում էին
վանքի ժողոված բուրդը⁴:»

Դ. Անանունը, վերոյիշեալ տեղեկու-
թիւնները հազորդելով, պնդում է, «որ
«չնայած դրան (հոգեւորականութեան տղի-
տութեան) հոգեւորականութիւնը հեղինա-
կութիւն էր»:

Ինչո՞ւ: Որովհետեւ, ասում է նա, «Երե-
տգիտ էր հովիւր, աւելի եւս տգիտ եւ կոյր
էր հօսք⁵:»

Իրերի այս տխուր վիճակում էլ, սա-
կայն, հայի մտաւոր անդաստանը զուրկ չէր
մնում իսպառ տաղանդաւոր, եռանդուն, լու-
սամիտ ու ջերմ հայրենասէր մշակներից:
Ժամանակ առ ժամանակ հանդէս էին գալիս

⁴ Տե՛ս անդ Հ. Բ., էջ 126:

⁵ Տե՛ս Դ. Անանուն, «Բուսահայերի Հ. զ. ԺԹ.
դարում», էջ 100:

աշխարհական եւ հոգեւորական մեծ դէմքեր,
որոնք, որպէս մի-մի փայլուն աստղեր լոյս
էին սփռում իրենց խաւար միջավայրի վրայ
եւ ճանապարհ հարթում դէպի հայ ժողովրդի
յառաջադիմութիւն :

Այսպէս էին, օրինակ, Սիմեոն կաթողի-
կոսը (1753—1780), Յովհաննիկ Լազարեանը
(1735—1801), Յովսենիկ եպիսկոպ. Արդու-
րեանը (1743—1801), Ալամդարսան Վարդա-
պետը (1796—1834), Մ. Թաղիադեանը
(1803—1858), Ներսէս Ե. Աշտարակեցին
(1770—1857), Խաչատուր Աբովեանը (1804—
1848) եւ ուրիշները :

Բայց մի ժողովրդի յառաջադիմութեան,
նրա լուսաւորութեան միակ յարատեւ գոր-
ծօնը՝ ի վերջոյ դպրոցն է, հայ դպրոցը՝ հայ
լեզուի, հայ պատմական աւանդների, հայ
գրականութեան, հայ մտքի զարդացման
հաստատուն պատուանդանը։ Դպրոցը՝ այն
անփոխարինելի հնոցն է, ուր կուոմ ու
կոփեւում են տգիտութեան, խաւարամտու-
թեան դէմ պայքարող ոյժերը :

Եւ ահա՝ 18րդ դարի վերջերքին եւ 19րդ
դարի սկիզբներին երկու հայ մեծ դէմքեր,
երկու ազգանուէր ականաւոր հայ գործիչներ
գրեթէ միաժամանակ յղանում են դպրոց
հիմնելու միտքը։ Դպրոց, որ ունենար յա-
րատեւ կեանք եւ ուր կրթական դործը
դրուած լինէր լուրջ հիմունքների վրայ հա-
մաձայն դարու լուսաւոր դադավարների։

Մէկը՝ հեռաւոր հիւսիսում՝ Մուկույում,
միւսը՝ Անդրկովկասի սրտում, Վրաստանի
մայրաքաղաք Թիֆլիսում։ Երկուսն էլ պարս-
կական տիրապետութեան սահմաններից
դուրս, ոռւս պետութեան հովանու տակ։

Առաջինը՝ կոմս Յովհաննիս Ղազարեան
Ղազարեանն էր, Ղազարեան հոյակապ տոհմի
ամենաշողջողուն ներկայացուցիչը, միւսը՝
Թիֆլիսի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս
Աշտարակեցին, հետագայում մեծահամբաւ
կաթողիկոսը։

Ղազարեան ձեմարանի հիմերը դրուեց
1815թ., իսկ Ներսիսեան դպրոցինը՝ 1824թ.։

Այս երկու դպրոցները եղան մի մի
կրթական հնոցներ, մի մի լուսատու ջահեր,
որոնց ճառագայթները թափանցեցին Արեւե-
լեան Հայաստանի ամենախուլ անկիւնները,
եղան ուռւսահայութեան մտաւոր զարգաց-
ման, մշակութային կեանքի յառաջադիմու-
թեան մեծագոյն ազդակները։

Այս դպրոցները եղան առաջինները,
որոնք ուսումն ու կրթութիւնը աշխարհակա-
նացրին, դրին մանկավարժական հիմունք-
ների վրայ եւ առաջնորդուեցին եւրոպական
յառաջադիմութեան լուսաւոր դադարիարնե-
րով։

Ահա՛, օրինակ, թէ ի՞նչ կարծիք ունէր
Ղազարեաններից մէկը՝ Խաչատուր Ղազա-
րեանը դպրոցական ուսման մէջ կիրառելիք

մանկավարժական մեթոդների մասին, այդ
օրեւրին .

1811 թ. իր մի նամակի մէջ, ուղղուած
Եփրեմ կաթողիկոսին, նա գրել էր .

«Դպրոցում ուսուցումը պիտի լինի հա-
մեստ թարց (առանց) իւիք ցաման, բարկու-
թեան եւ գանից պատժոյ հմտեցուցանել, զի
բարկութիւն, սպառնալիօք ահացուցանելն եւ
խիստ պատժելն բարբարոսական է գործ,
միշտ խոռվեցուցիչ եւ յուսահատեցուցիչ ա-
շակերտի . . . ⁶» :

Ներսիսեան դպրոցի պատմութեան եր-
կու ականաւոր հեղինակները՝ Ա. Երիցեան
եւ Ստ. Մալխասեանը շատ հիմնաւոր ու շատ
ցայտուն կերպով ներկայցցրել են Ներսի-
սեան դպրոցի կատարած մշակութային հոկայ
գերը մեր ազգային-հասարակական կեանքի
զարգացման եւ յառաջադիմութեան համար :

Լազարեան Ճեմարանը, դժբախտաբար,
չի ունեցել իր ականաւոր պատմիչներն կամ
պատմիչը :

Մենք փորձում ենք մեր ներկայ աշխա-
տասիրութեան երկրորդ մասում այդ բացը
լրացնել մեր շատ համեստ ոյժերով եւ շա-
փականց աննպաստ պայմաններում : Ճեմա-
րանի պատմութիւնը՝ որ ընդգրկում է 103
տարուայ մի ժամանակաշրջան, անշուշտ կը
պարզի նրա կատարած անգնահատելի դերը
հայ ազգային-հասարակական ու մշակու-

⁶ Լէօ, «Պատմութիւն Երեւանի թեմ. դպրոցի»,
էջ 92:

թային կեանքի մէջ. բայց մինչ այդ, քանի
որ խօսքը հայ դպրոցների նշանակութեան,
եւ նրանց տարած պայքարի մասին է 19րդ
դարի սկզբներին հայ կեանքում իշխող տգի-
տութեան դէմ, հարկ ենք համարում առաջ
բերել մի երկու վկայութիւն, Լազարեան
ձեմարանի մասին:

Գէորգ Քանանեանը Լազարեան ձեմա-
րանի 50ամեակին խօսած իր ճառի մէջ⁷ հա-
կիրձ կերպով եւ շատ ընդհանուր գծերով
պարզում է ձեմարանի նշանակութիւնը հայ
մատադ սերունդի կրթութեան գործում:

«Մուսաստանի կենդրոնում, ասում է
նա, Հայերի համար ծնունդ առած դպրոցի
համբաւը տարածուեց ո'չ միայն լայնածա-
ւալ Մուսաստանի բոլոր ծայրերը, այլ եւ նրա
սահմաններից դուրս՝ զանազան երկիրնե-
րում բնակութիւն հաստատած հայերի մէջ։
Պարսկաստանի Հայերը, Ասիայի թուրքական
գաւառների եւ նոյն իսկ հեռաւոր Հնդկաս-
տանի հայերը սկսեցին նայիլ ձեմարանի վրայ
որպէս լաւագոյն կրթական հաստատութեան
վրայ իրենց երեխաների համար։ Ձեմարանը
դարձաւ մի տեսակ բարձրագոյն դպրոցական
կենդրոն Մուսաստանի զանազան քաղաքների
եւ Ասիայի զանազան երկիրների համար։
Ամեն կողմից սկսեցին զալ դէպի այդ կեն-
դրոնը հայ երիտասարդ ոյժեր եւ ստանալով
նրա մէջ իրենց մտաւոր ու բարոյական վե-

⁷ Տե՛ս այդ ճառի էջ 21։

բածնութիւնը եւրոպական կրթութեան ազգեցութեան տակ, տարածեցին այնուհետեւ նրա սերմերը այն բոլոր վայրերում, ուր Ռուսաց յաղթական գէնքը գործեց: Հայքնիկները ո'չ միայն Կովկասի եւ Անդրկովկասի ամենահեռաւոր տեղերից, այլ եւ Սպահանից, Կալկաթայից, Երզրումից եւ նոյն իսկ Պօլսից շտագում են օդտուելու կրթութեան բարիքներից իրենց երեխանների համար, այն կրթական հաստատութեան մէջ, որը ծնունդ է առել Լազարեան տոհմի առատաձեռն բարեգործութեամբ: Ճեմարանի ուսումնական եւ դաստիարակչական գործի յաջող զարգացումը միաժամանակ սկսում է դրաւել նաև ուսու երեխաններին: Եւ ճեմարանը այս ուղղութեամբ էլ լրացնում է մի որոշ չափով ուսու դպրոցական հաստատութիւնների պակասը»:

Անդրկովկասի քաղաքակրթութեան գործում պատկառելի գեր է կատարել Լազարեան ճեմարանը, վկայում է Լ. Մանուչեանը «Ռուսահայ գրականութեան պատմութեան» մէջ: — «Դորպատի նման մի մտաւոր կենդրոն էր Լազարեան ճեմարանը, որ տեղ 40ական թուականներին թագաւորում էր «Հայկական ոգին» եւ մշակում էր աշխարհիկ լեզուն»: «Լազարեան ճեմարանն էր գրեթէ բացառապէս մատակարարում ընտիրուանողներ Դորպատի համալսարանին⁸»:

⁸ Տե՛ս Լեւոն Մանուչեան, Ռուսահայ դրականութեան պատմութիւն, Հատոր Ա, Բ, Գ. Եւ Դ., 1909:

Լէօն իր «Պատմութիւն Երեւանի քեմական դպրոցի» մէջ, մատնանշում է Լազարեան ձեմարանի մի ոյլ մեծ ժառայութեան վրայ, որ նա կատարել է հայ դպրոցի եւ հայ մշակութային կեանքի մէջ.

«Եթէ մենք, Ռուսահայերս կարող ենք ցոյց տալ, որ 19րդ դարի համարեա Երկրորդ տասնամեակից մեզանում սկսում են դասագրեր կազմել⁹, այս բանը մենք պարտական ենք այն հզօր դրդիչներին, որոնք հէնց այդ ժամանակներից էլ առաջ եկան մեր կեանքի մէջ։ Յայտնի է, որ իրերի կարգի մէջ անխուսափելին է պահանջ եւ բաւարարութիւն։ Առաջին հզօր պահանջը ծնեցնում էր հայկական առաջին բարեկարգ դպրոցը — Լազարեան ձեմարանը։ Պահանջ առաջադրելու հետ նա կարողութիւն ունէր եւ բաւարարութիւն տալու այդ պահանջին, քանի որ ապահովուած դպրոց էր, քանի որ նրան կեանք տուածած եւ նրան կառավարող մեկենասները, չնորհիւ հէնց իրանց մեծ հարստութիւնների եւ իշխանական ձգտումների, մեծ ոյժ էին հանդիսանում հայութեան համար քէ ժաղավական եւ քէ մտաւոր ասպարեզներում։ Լազարեանների տունը, անկասկած, մի խոչոր կուլտուրական կենտրոն էր մանաւանդ այն ժամանակ, երբ հայութիւնը խորասու-

⁹ Մեր խոսքը, ասում է Լէօն Ժանօթութեան մէջ, նոր դասադրքերի մասին է եւ մենք նկատի չունենք հին աւանդական դասադրքերը, Այրբենարան, Սաղմոս եւ այլն։

զուած էր տղիտութեան խաւարի մէջ։ Լազարեան ձեմարանը ուսում էր տալիս հայերեխաներին եւ այդ գործը հեշտացնելու համար տալիս էր եւ դասագրիքը, որոնի արդեն բոլոր հայ դպրոցներին էին հարկաւոր։ Մոսկվան, գլխաւորապէս շնորհիւ այդ հիմնարկութեան, դառնում է Ռուսահայերի մտաւոր կենտրոնը, ամենաառաջաւորը եւ ամենաեռանդունը ուսահայ գաղութների մէջ, ուր համալսմբում է հայ մտաւորականութիւնը եւ հաստատում է հայ գրականութեան եւ գիտութեան բարձր ներկայացուցչութիւնը։ — Այս դերի մէջ Մոսկվան մնում է մինչեւ 60ական թուականների երկրորդ կէսը եւ այդ ժամանակամիջոցում էլ Հայդասպրքերի մեծադոյն մասը կապ ունէին ձեմարանի հետ թէ իրրեւ զասատուներ եւ թէ իրրեւ աշակերտներ^{10»}։

Եթէ այս բոլորի վրայ աւելացնելու լինինք այն անժխտելի փաստը, որ Լազարեան ձեմարանն ու Լազարեաններն իրենց բեղուն բազմաճիւղ գործունէութեամբ եղան այն ամուր պատուանդանը, որի վրայ կառուցուեց 50ական-60ական թուականների մեր Վերածնունդի շքեղ շէնքը, — մենք, անշուշտ, արձանագրած կը լինենք մի պատմական ճշմարտութիւն, սակայն ո՛չ լրիւ, քանզի Լազարեան ձեմարանը այնուհետեւ էլ՝ իր գոյութեան երկրորդ յիսունամեակում,

¹⁰ Տե՛ս Լէօ, «Երեւանի թեմ. դպր. պատմ.», էջ 227—228։

շարունակել է իր մշակութային և հասարակական մեծ դերը կատարել բովանդակ հայութեան մէջ և հայութեան համար։ Անհնարին է չափ ու կշիռ գտնել այն անսահման օգուտների, որ նա բերել է իր հարիւրամեայ գոյութեան ընթացքին։

Չնայած որ Լազարեան ձեմարանը 1918 թ. աշնանից սկսած գոյութիւն չունի, այսու հանդերձ մեր ազգային կեանքի բոլոր մարզերում դեռ այսօր էլ գործում են բազմաթիւ ձեմարանաւարտներ։ Այն սերմերը, որ նա ցանել է առատօրէն հայ կեանքի, հայ մշակոյթի անդաստանում, տուել են ու տալիս են դեռ իրենց բազմարդիւն պտուղները։

Անկեղծ ու ջերմ յարգանքի, պատկանանքի ու երախտագիտութեան խօսք ունին ասելու ներկայ ու դալոց սերունդները Լազարեան չքեզ տոհմին ու Լազարեան ձեմարանին։

*

Նախ քան Եղբափակելը մեր խօսքը այս համառօտ պատմական տեսութեան մէջ, պարզաբանենք մի խնդիր եւս, որ ժամանակին զրադեցրել է հայ հասարակութեան միտքը և կարող է այսօր եւս յարուցուել ու տարակուսանքների ու թիւր կարծիքների տեղիք տալ։ Այդ խնդիրը հետեւեալն է։

Ինչո՞ւ համար Լազարեաններն իրենց դպրոցի համար ընտրեցին Մոսկուան, որ այնքան հեռու էր հայկական շրջաններից

եւ ոչ թէ, օրինակ, Թիֆլիսը կամ Էջմիածինը :

Ժամանակին այս հարցումի պատասխանը տուել է Լազարեան Ճեմարանի տեսուչ Գէորգ Քանանեանը եւ վերջ տուել բոլոր տարակուսանքներին եւ առարկութիւններին, իսկ ժամանակին ու կեանքը եկան փայլուն կերպով ապացուցելու, որ Ճեմարանի հիմնադիրներն եղել են չափազանց իրատես ու հեռատես իրենց որոշման մէջ, եւ չեն սխալուել ընտրելով Մոսկուան որպէս վայր իրենց դպրոցի համար :

— «Կեանք տալով այս դպրոցին, ասել էր Գ. Քանանեանը վերը յիշուած իր ճառի մէջ Ճեմարանի 50ամեակի առթիւ (էջ 17—18), նրա հիմնադիր Յովհաննէս Լազարեանն ու նրա կազմակերպիչ Յովհակիմ Լազարեանն ի նկատի ունէին թէեւ մի համեստ, բայց չառ պարզ ու յստակ կերպով դիտակցուած ու միանգամայն արդիւնաշատ նպատակ : Կամենալով բաւարարել Ռուսաստանում ապրող հայ ազգաբնակութեան կենսական ոլահանջին, նրանք ուզում էին նուիրել իրենց հայրենակիցներին մի դպրոց, ուր նրանց երեխաները կարողանային ստանալ սկզբնական ընդհանուր կրթութիւն, որից յետոյ, ստանալով անհրաժեշտ մտաւոր զարգացում ու բարոյական դաստիարակութիւն, ի վիճակի լինէին ժամանակի ընթացքում լինել օգտաւէտ քաղաքացիներ հասարակութեան ու պետութեան համար : Պէտք է նկատել նաեւ,

որ տեղի ընտրութեան խնդրում իրենց գպրոցական հաստատութեան համար, նրանք առաջնորդուել են նոյնքան ողջամիտ ու ճշմարիտ մտքով։ Մոսկուան գերազասելի էր կայսրութեան բոլոր միւս վայրերից։ Մոսկուան, ներկայացնելով բազում նպաստաւոր պայմաններ, հաւասարապէս բաւարարում էր ծնունդ առնող դպրոցի պահանջներին։ Հակառակ այն կարծիքի, որ սխալ էր համարում հիմնադիրների միտքը՝ հիմնել դպրոց հեռու հայ ժողովրդի բնակավայրերից, մենիք ընդհակառակը համարում ենի վայրի ընտրութեան մէջ ամենաերջանիկ ու եական պայման նրա կայունութեան ու բարգաւանման։ Եթէ այդ պահանջը ներկայ ժամանակներում կարող էր ունենալ բանաւոր հիմունքներ, նա բոլորովին ընդունելի չէ մի կրթական հաստատութեան համար 50 տարի առաջուայ պայմաններում։ Եթէ չխօսենք այն հանդամանքի մասին, որ հիմնադիրներն ու հետագայ բոլոր հոգարաձուները Լազարեան տոհմից անմիջականօրէն մասնակցում էին դպրոցի ընթացիկ կեանքի կարգաւորման մէջ, մի մասնակցութիւն, որ կենարար կերպով ազգում էր նրա յաջող ընթացքի վրայ, կային բազմաթիւ մղիչ պատճառներ ընտրելու Մոսկուան։

«Այն քաղաքները, ուր Հայերը կազմում էին շօշափելի թիւ, գտնուում էին Կովկասում և Անդրկովկասում, ուր այդ ժամանակ տիրում էր կատարեալ քաօսական վի-

ճակ, մի հանդամանք, որ չէր կարող նպաստել դպրոցի կանոնաւոր գարգացման ու բարգաւաճման։ Մինչդեռ Մոսկուան միանդամից բաւարարում էր դպրոցի բոլոր պահանջներին։ Այստեղ վաղուց ի վեր գոյութիւն ունէր հայկական գաղութ։ Մոսկուան, որպէս առեւտրական կենտրոն, անընդհատ դրաւում էր նորանոր հայ եկեղեցներ։ Բաց ի այդ, որպէս ոուսական կրթական կենտրոն, իր հոչակաւոր համալսարանով, տրամադրում էր բոլոր այն միջոցներն ու առաւելութիւնները, որոնք անհրաժիշտ են ամէն մի դպրոցի յաջող գարգացման համար։ Լազարեան ձևմարանը Մոսկուայում ընձեռնում էր իր սաներին նաեւ մի այլ անգնահատելի պայման՝ ծանօթացնում էր նրանց լեզուի, կեանքի ու բարքերի հետ այն հասարակութեան ու պետութեան, որի քաղաքացիները նրանք պիտի լինէին ապագայում»։

Թէեւ այս մէջըերումի մէջ Գ. Քանանեանը սպասիչ կերպով լուծում է խնդիրը, այսուհանդերձ նրա բերած նկատառումները չեշտուած են շատ ընդհանուր գծերով եւ բացի այդ նկատի չի առնուած հիւս։ Կովկասում, Կովկասում եւ Անդրկովկասում բացուած հայ դպրոցների կեանքն ու վիճակը։

Եթէ մի վայրկեան նկատի առնելու լինենք նաեւ այդ հանդամանքները, չենք կարող չընդունիլ, որ 19րդ դարի ոչ միայն սկզբում, այլ եւ հետագայում, աւելի ուշ ժամանակներում գոյութիւն չունէին հայ կեանքի

մէջ նպաստաւոր պայմաններ մի դպրոցի յաջող զարգացման ու անխախտ յառաջադիմութեան համար:

Ամենից առաջ, երբ 1815 թ. Լազարեան ձեմարանի հիմքը դրուեց, Անդրկովկասն զտնւում էր Պարսից իշխանութեան ներքոյ, որ արդէն ինքնին անհնարին էր դարձնում կանոնաւոր կրթական գործ վարելը:

Վրաստանը, ճիշտ է, որ 1801 թ. միացուեց Ռուսաստանին, այսուհանդերձ այնտեղ էլ դեռ եւս չկար որեւէ ապահովութիւն:

Անգամ Ռուսաստանի հարաւում 19րդ դարի առաջի կէսին հիմնուած դպրոցները չունեցան այն յարատեւութիւնն ու յաջողութիւնը, որ ունեցաւ Լազարեան ձեմարանը:

Ի՞նչ վիճակում էին եւ ի՞նչ ճակատագիր ունեցան, օրինակ, Նոր-Նախիջևանի դպրոցը, որ հիմնել էր Յովսէփ արքեպ. Արդութեանը եւ հետագայում Գարրիէլ քահ. Պատկանեանի ուսումնարանը նոյն Նոր-Նախիջևանում, բացուած 40ական թուականներին. կամ Ս. Խաչի տպարանն ու դպրոցը նոյն Յովս. արքեպ. Արդութեանի կողմից ծնունդ առած. կամ Աստրախանի Աղարարեանների դպրոցը, բացուած 19րդ դարի առաջին տասնամեակում եւ, վերջապէս, Թէոդոսիայի Խալիքեան ուսումնարանը, որի հիմքը գրել էր Գարրիէլ արքեպ. Այսպէսանը 1858 թ. եւ որը փակուեց արդէն 1871 թուին....:

Ի հարկէ, չի կարելի ժխտել, որ այդ դպրոցները ժամանակին բերել են մեծ օդուտներ հայ մատաղ սերուզի կրթութեան գործին եւ առ հասարակ մեր ազգային մշակոյթին, բայց եւ չի կարելի չխոստովանել, որ նրանք չարդարացրին այն բոլոր յոյսերն եւ ակնկալութիւնները, որոնք կապուած էին այդ դպրոցների հետ եւ որ նրանց կրթական դերը եղաւ շատ սահմանափակ:

Այնուհետեւ գալով Անդրկովկասի մեր թեմական դպրոցներին, մենք կը տեսնենք, որ նրանք եւս չափազանց աննախանձելի վիճակ են ունեցել:

Աղ. Երիցեանն ու Ստ. Մալխասեանը իրենց Ներսիսեան դպրոցի պատմութեամբ եւ Լէօն Երեւանի թեմական դպրոցի պատմութեամբ ցուցադրում են նրանց կեանքի մի պատկեր, որ խորապէս յուղիչ է . . . : Ի՞նչ տառապանքների, ի՞նչ զրկանքների, ի՞նչ ներքին ու արտաքին ցնցումների են ենթարկուած եղել նրանք իրենց ծննդեան օրից իսկ սկսած :

Ներքին անվերջ խոռվութիւնները արգելք են եղել յարատեւ բնականոն կրթական կեանք ստեղծելուն այդ դպրոցներում . . . : Մի ներքին տագնապ յաջորդել է միւսին . . . :

Հոգարարձութիւնների ու տեսուչների շարունակական ընդհարումներն ու պայքարները, որոնց հետեւանքով կրթական գործի պատասխանատու վարիչ-տեսուչները արագ-

օրէն վովոխուել են, հոգեւոր իշխանութեան եւ ապա ուսւա բիւրոկրատիայի անտեղի ու բռնազրօսիկ միջամտութիւնները, աշակերտութեան ըմբռստութիւնները տեսուչների եւ ուսուցիչների դէմ՝ անընդհատ խախտել են դպրոցի խաղաղ կեանքը, իսկ երբեմն էլ պատճառ եղել դպրոցի վակլման տարիների ընթացքում . . . :

Լէօի կարծիքով մեր թեմական դպրոցների տիսուր վիճակի գլխաւոր պատճառը եղել է այն հանգամանքը, որ նրանք ծնունդ են եղել 1836 թ. «Պոլոժենիայի», իսկ այդ Պոլոժենեան «բացարձակապէս հոգեւորականութեան ձեռքն էր տուել Ռուսահայոց ազգային դաստիարակութիւնը եւ հայ հոգեւորականութիւնը հարիւրաւոր փաստերով ցոյց էր տալիս թէ որքան անօգնական եւ անկարող է նա այդ դերի մէջ» :

Արդ Լազարեանները, հիմնելով իրենց դպրոցը Մոսկուայում, ցանկացել էին խուսափել Հէնց այդ հոգեւորականութեան միջամտութիւնից: Նրանք շատ լաւ ծանօթ էին¹¹, թէ ինչ է կատարւում Ս. Էջմիածնում 18րդ դարի վերջերքին, ինչքա՞ն անա-

¹¹ Յայտնի է, որ Լազարեանները սերտ կազ էին պահպանում Ս. Էջմիածնի հետ եւ գտնուում էին մշտական թղթակցութեան մէջ: Այդ թղթակցութիւնից երեւում է, որ նրանք լաւատեղեակ էին Ս. Էջմիածնի դործերի ու վիճակի մտսին: Նրանց նամակների միայն մի փոքր մասն է, որ հրատարակուած են Ա. Երիցեանի «Կովկասահայքում եւ Գիւտ աւ. քահ. Աղանեանի «Դիւան Հայոց պատմութեան» մէջ:

պահով էր Ս. իջմիածնի վիճակը, նրանք
դտնւում էին Դաւիթ-Դանիէլեան կաթողի-
կոսների կռութ տխուր օրերի ծանր տպաւո-
րութեան տակ եւ հոգեակս տառապում էին,
տեսնելով թէ որքա՞ն մեծ զնասներ է կռում
ազգն ու իրենց պաշտած հայ եկեղեցին . . . :

Եւ նրանք կամեցան միանգամայն զերծ
պահել իրենց դպրոցը ամէն կողմնակի մի-
ջամտութիւնից, կամեցան միշտ իրենց աչքի
առաջ ունենալ այն, վարել դպրոցական
գործը իրենց հասկացողութեամբ, որը շատ
աւելի բարձր էր, քան այն ժամանակի հայ
կղերի կրթական գործի ըմբոնումները։ Եւ
նրանք, իրոք, դրին ձեմարանի կրթական
գործը այնպիսի բարձր մակարդակի վրայ,
որ դարձաւ մի առաջնակարգ դպրոց նոյն խոկ
ոռւսական դպրոցների շարքում։ Նրանք կա-
մեցան ապահովել նրա իրաւական վիճակը,
այնպէս, որ նա զերծ մնայ պատահականու-
թիւններից ու ամէն կարգի ցնցումներից։
Այս նպատակով տասնեակ տարիների ըն-
թացքում նրանք մեծ ջանք թափեցին, մին-
չեւ որ հասան իրենց նպատակին ու տուին
ձեմարանին հաստատուն դպրոցական ծրա-
գիր եւ վարչական կանոնագիր, հաստա-
տուած կառավարական բարձրագոյն իշխա-
նութեան կողմից։ վերջապէս, նրանք կամե-
ցան պահել ձեմարանը իրենց անմիջական
հսկողութեան տակ, որպէս զի կարողանան
միշտ վերահստու լինել նրա կարիքներին ու

պահանջներին։ Եւ իրօք նրանք գուրզուրում ու խնամում էին ճեմարանը որպէս մայրը իր որդուն, եւ անընդհատ մեծ գումարներ էին նուիրաբերում ճեմարանին լրացնելու նրա պակասները, բաւարարելու նրա պահանջներին։ Ո՞ւմ կարող էին նրանք վստահել այդ խոչոք գումարները, եթէ ճեմարանը հիմնուած լինէր Կովկասում կամ Անդրկովկասում։

Զէ՛, Լազարեանները իրենց պայծառատեսութեան ու իրատեսութեան մէջ չէին վրիպել, ընտրելով Մոսկուան որպէս ճեմարանի վայր։ Եւ կեանքն ու պատմութիւնը լիովին արդարացրին այդ ընտրութիւնը։

Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

Ոչինչ այնպէս նշանաւոր առնէ զմարդ,
Որպէս առաքինութեանց հանդէս:
Թէ անմռուց են առ մեղ Հայկ եւ Տիգրան
եւ Աբամ,
Եւ Լազարեանցըն բարիք ո՛չ մռասցին յա-
ւիտեան:
Կալիպեան ուսումնաբանի աշակերտ-
ների ծօնը 1865 թ. ձեմարանի 50ա-
մեակի առթիւ:

Գևորգ Ա.

ԱԱՋԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ ՅԵՂԱՊԵՏ՝ ՊԱԶԱՐ

ՆԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

(1700—1782)

Հայ ազգը կորցրեց իր անկախ պետա-
կանութիւնը 1393 թ. Ռուբինեանց հարստու-
թեան անկումով:

Այսուհետեւ Հայաստանը բաժանուեց մի
չարք մանր իշխանութիւնների, որոնցից շա-
տերը մեծ նախանձախնդրութեամբ պահե-
ցին ու պաշտպանեցին իրենց անկախ կամ
կիսանկախ գոյութիւնը մինչեւ 18րդ դարը,
բայց անզօր եղան բարձրանալու համագ-
զային պետականութիւն ստեղծելու անհրա-
ժեշտութեան գաղափարին: Կենդրոնախոյս

ձգտումներն ու հակումները առաջ բերին նրանց միջեւ փոխադարձ հակառակութիւն ու թշնամութիւն, որոնց մէջ նրանք իսպառ ջլատեցին ու քայքայեցին իրենց Փիզիքական ու բարոյական ոյժերը . . . :

Կենտրոնական հակումների գերակայութիւնն եւ համազգային պետականութեան դադավարի թուլութիւնը հայ իշխանաւորների մէջ եղել են նաեւ հնում՝ հայ նախարարների մէջ, որի հետեւանքով Հայաստանը յաճախ դարձել է ուազմարեմ նրա թշնամիների համար արեւելքից եւ արեւմուտքից: Հայաստանը այդ ժամանակներում աւերուել է ու մոխրակոյտի վերածուել. բայց եւ այնպէս հայ ժողովրդի ո'չ ստեղծագործ ովին, ո'չ էլ ազատատենչ ձգտումները երբեք չեն խորտակուել ի սպառ. նա շարունակել է մի կողմից շէնացնել իր երկիրը, իսկ միւս կողմից մշակութային կոթողներ կանգնեցնել, սակայն պետականօրէն մնացել է կոտորակուած ու ջլատուած:

Ինչո՞ւ. ինչո՞ւմն է այս պատմական առեղծուածի զաղտնիքը:

Նիկոլ Աղբալեան այսպէս է պարզաբանում այդ երեւոյթը¹:

«Յեղական կենցաղն ու մտայնութիւնը

¹ Պատմութիւն Հայոց գրականութեան, էջ 106:


շատ աւելի արմատացան ու զօրաւոր եղան
քան պետաշէն մղումը։ Այս մղումի լիա-
կատար զարգացման արգելվ դարձան երկրի
կազմութիւնը, որ դիւրութիւն չէր տալիս
մերձաւոր շփումների եւ փոխազդեցութեան.
ինքնարաւ տնտեսութիւնը, որ չէր առեղծում
տնտեսական զօրաւոր կախում երկրի տար-
բեր մարզերի միջև։ Երկրի շուրջ ստոր-
ծուած մէծ պետութիւնները, որ մեծապէս
զնահատում էին մեր լեռնաշխարհը իբրեւ
ոազմական դիրք քշնամու դէմ եւ իբրեւ
ապահով անցք դէպի հակառակորդի աշ-
խարհը, ուստի երէ չին զօրում զրաել
իբրեւն, սակայն միշտ քայլայում էին ներ-
ֆին զօրացման ու միութեան ճգտումը»։

*Մատնանշուած բոլոր հանգամանքները
ի զօրու են եղել նաեւ 18րդ դարում Արեւե-
լեան Հայաստանում, ուր գոյութիւն ունէին
մի շարք առանձին իշխանութիւններ Սիւնի-
քում, Ուտեաց աշխարհում, Գուգարքում,
Գողթնում եւ մի շարք այլ գաւառներում²:*

Այս իշխանութիւնները՝ մէկը միւսի
ետեւից, ոչնչացան մահմեղական բռնակալ-
ների անողոք հարուածների տակ կամ զոհ
զնացին իրենց փոխազարձ թշնամութեան։

Արեւելեան Հայաստանի այդ անկախ իշ-

² Տե՛ս՝ «Պատմութիւն Հայոց» Զամշեանի, Հա-
տոր գ.։



Լազար Ն. Լազարիսից

խանաւորներից մէկն է Եղել նաև իշխան Մանուկ Լազարեանը :

«Սրա որդին էր — պատմում է Մսեր Մսերեանը — Ղազար . ի Ղազարայ ծնան Մանուկ եւ Սափար . ի Մանուկայ՝ Նազար (կամ Նազարէք) եւ ի Ամանէ Միւս Ղազար (կամ Եղիազար), այն, որ Պետ եւ Գլուխ եկաց հռչակաւոր տոհմին Լազարեանց 3» :

Բայց ինչպէ՞ս պատահեց, որ Լազարեան տոհմի այս շառաւիզը եկաւ Ռուսաստան, ստացաւ Եկատերինա Բ. կայսրուհուց ոռուաց ազնուականութեան իրաւունք եւ ապա հիմք դրեց Լազարեան հռչակաւոր տոհմի երկու սերունդներին, որոնց ներկայացուցիչները ի յայտ բերեցին վայլուն գործունէութիւն յօդուտ իրենց խեղճ Հայրենիքին եւ հզօր Ռուսաստանին :

Այդ մասին պատմուած է յիշեալ կայսրուհու 1774 թ. մայիս 20ի բարձրագոյն հրովարտակի մէջ, որը դրեթէ ամբողջութեամք առաջ ենք բերում, քաղելով այն Մ. Մսերեանցի «Յիշատակարան»ից :

... «Հաւաստի լեալ է մեզ, զի որ գտանի

³Տե՛ս էջ 2 «Յիշատակարան» կենաց եւ դորձոց մեծանուն պայտապատաց Լազարեան տոհմի : Շաբադրեալ ի Մսերայ մազիստրոսէ եւ առագետէ Գրիգորիեան Մսերեանց : Ի Մոսկուա ի տպարանի Արեւելեան լեզուաց ձեմարանի Տեարց Լազարեանց : 1856-ի թիւ : էջ 60 + 109 + 159 = 328:

արդեն ի Մերում կայսրութեան՝ Ղազար (Նազարեան) Ղազարեանց ընդ որդուց իւրոց, է՛ յԱզնուական սերնդոց ի Հայու որում Վկայեն եւ մատուցեալքն առ ի նմանէ վաւերական Վկայագիրք տուեալք յԱրքայէն Վրաց ի Թէյմուրասայ⁴ եւ ի ծայրագոյն Պատրիարքէն Հայոց եւ զի նախահաւ նոցա Մանուկ Ղազարեան, յետ սպառելոյ ի Հայաստան Արքայական զարմի, եւ յետ բաժանման նոյն թագաւորութեան ի մասուն, Է՛ր մի ի Պայազատացն՝ որք տիրէին յառանձին առանձին վաւառս: Շահարաս Առաջին (արքայ Պարսից)⁵ ոչինչ օգտեալ յերկարատեւ յանյաջող պատերազմացն՝ զորս մղէր ընդդէմ նոցա, հարկեցաւ զիջանիլ ի հաշտութիւն, եւ սկսաւ վարիլ ընդ նոսա շողոմիւք եւ ժաղցրութեամբ, այնպէս՝ զի բազուսք յականաւոր եւ ի մեծահարուստ գերդաստանաց յօժարեցան ունել բնակութիւն ի մայրադադիր անդ նորա (այն է յԱսպահան), ընկալեալ զազատութիւն յամենայն զինուորական ծառայութեանց: Խոկ Շահարաս ի մտի եղեալ զոմանս ի նոցանէ յինքն յանկուցանել, շնորհեաց նոցա ժաղաժական ինչ ատի-

⁴ «Թուի՛ թէ թամբազն իցէ ոա՝ Հայր Մեծի իշխանին Վրաց Հիրակլեայ. որ թագաւորեաց յամէն 1724—1762»: Մ. Մոերեանց:

⁵ Շահարաս Ա. — 1586—1629. Շահարաս Բ. — 1642—1666. Նադիր Շահ — 1736—1747:

նանս՝ առ ի պատիւ եւեր։ Ի թիւ Աստիճանաւորացն այնոցիկ՝ էր եւ նա ինքն Մանուկ Լազարեանց։ Է՛ր նորա որդի մի Լազար անուն, որ յաւուրս Երկրորդին Շահաբասյ կարգեցաւ Վերատեսուչ Փողերանոցի եւ Գանձապետ Արքունի։ Ի նմանէ ծնան Մանուկ եւ Սափար. ի Մանուկայ՝ Նազարէր։ Եւ ի սմանէ միւս Լազար, որ մինչ էրն ի Պարս, ծանօթ գոլով Արքունի Դրանն կատարեաց զրազում պաշտամունս յանձնարարութեամբ Նատիրշահայ. կացուցաւ եւս Հրամանատար կամ Պետ ի վերայ ժողովրդեան Զուղայ բաղաքի։ Այլ ապա ի պատճառս աղմկացն յուզելոց ի Պարս՝ ել անտի, եւ եմուտ ի սահմանս Կայսերութեան մերոյ հանդերձ որդուովք եւ ստացուածովք իւրովք. ուր եւ կանգնեաց զերեւելի գործարանս, եւ եցոյց մեզ հանապազ ընդ որդուոց իւրոց բազմապիսի ծառայութիւնս։ Որոյ վասն շնորհեցաք Մեք նմին Լազարայ Լազարեանց եւ որդուոց նորա զիրաւունս Ազնուականութեան Թուսաց, ի 20 մայիսի 1774 ամի 6»։

Այսպիսով Լազարեանների տոհմագրութիւնը ներկայացնում է հետեւեալ պատկերը.

«Տե՛ս Ա. Մակրեանցի «Յիշտակաբանի» ժառ Բ., էջ 1—2. ուր բերուած են մարզանութիւնները բոլոր բարձրագոյն հրովարտակների, արուած Լազարեան տոհմի անդամներին։

իշխան Մանուկ Ա. Եղիազարեան (Լազարեան),
Նահապետ Լազարեան տռհմի:

(Տարագրուել է Հայաստանից Ազահան Շահարքաս Ա.
օրով)

Ղազար (Լազար) Առաջին

(Շահարքաս Բ.ի օրով վերատեսուչ տարբունի փողերա-
նոցի եւ դանձապետ)

Մանուկ Բ. եւ Սաֆար

Նազար կամ Նազարեր

Ղազար կամ Ղազար Բ.

(Յեղապետ Լազարեան տռհմի: Նորիք Շահի օրով
Ն. Զուղայի Պետ կամ Տեղակալ: Նադիրշահի մահից
յետոյ տարագրուեց Ռուսաստան 1749 կամ 1750 թ.)

Յովհաննես, Միհան, Խաչատոր եւ Յովակիմ
(1735—1801) (1737—1809) (1741—1774) (1743—1826)

Յարուբին, Յովհաննես, Ղազար, Խաչատոր
(1791—1813) (1786—1858) — (1789—1871)

Մանուկն Յովհաննես, վերջին շատաւել
(1844—1850)

Մանուկ Լազարեանի, տռհմի նահա-
պետի, տարագրութեան մասին Պարսկաս-
տան հաղորդում է նաեւ ոռւս պատմաբան
Աերդէյ Գլենկան մատնանշելով միաժամա-
նակ այն յարգանքի եւ հեղինակութեան

վրայ, որ նա վայելել էր իր հայրենակիցների կողմից տարագրութեան ընթացքին և Ն. Զուղայում.

«Շահ-Աբաս ի նմանութիւն Զուղայոյն Հայոց՝ զաւանին շինեալ յիւրմէ առ երի Ասպահանայ անուանեաց «'Նոր Զուղայ»։ Յամին 1605 Մանուկ Լազարեանց գուարեացեալ յուսվ վերածնութեան Հայաստանի, նախ առաջին ի Հին Զուղայոյ անապարեաց ի Նորն. եւ հորդեաց նանապարի փութալոյ անդր խրոցն հայրենակցաց, որք ի յարգանս ունեին զնա՝ ո՛չ վասն իշխանական աստիճանի, եւ ո՛չ վասն հարսութեանն, այլ միայն վասն անձնանուեր փութոյն ի կազդուրել եւ ի քաջալերել զվհատեալ ոգիս որդւոցն Հայաստանի։ Վեհանձն ոգիք անպատում զգանքերկրութիւն ի բերկրեցուցանելն զիւրեանց չարչարակիցս ⁷»։

Եկատերինա Կայսրուհու յիշեալ հրովարտակի մէջ միայն հարեւանցօրէն է ակնարկ արուած Լազարեանի Ռուսաստան փոխադրուելու սկատճառի վրայ՝ «այլ ապա ի սկատճառս աղմկացն յուզելոց ի Պարսս»։ Բայց յայտնի է, որ հէնց Նադիր Շահի կենդանութեան ժամանակ Ն. Զուղայի հայերը

⁷ Այս հատուածը թարգմանաբար բերել է Մ. Մուրենցը իր «Յիշատակարան»ում (էջ 92, Մասն Գ), քաղելով Սերգէյ Գրինկայի յայտնի հեղինակութիւնից՝ «Պատմութիւն Հայոց», տպագրուած 1832 թ., որը, սպառուած լինելով վաղուց, մենք չունէինք մեր ձեռքի տակ,

Ենթարկուել են անսահման կեղեքումների ու խժգժութիւնների, իսկ նրա մահից յետոյ Պարսկաստանում տեղի են ունեցել մեծ խռովութիւններ, ստեղծուել է մի կատարեալ քառոս, միանդամայն անհանդուրժելի մասնաւորապէս հայերի համար:

Նոր-Զուղայեցիների այդ օրերին կրած տառապանքների մանրամասն նկարագրութիւնը տալիս է Նոր Զուղայի համբաւաւոր պատմիչ Յարութիւն Տէր-Ցովհանեանցը. մի փոքրիկ հատուած նրա աշխատասիրութիւնից, գաղափար տալու համար ստեղծուած կացութեան մասին:

«Նադերշակը ունելով քնաւորութիւն յոյժ ընչասէր եւ ազահ, եւ յաղագս զօրականացն հարկ լինելով նմա պատրաստել զոռնիկս, զուղայաբնակ վանառականացն Հայոց հասոյց զմեծամեծ տառապանս, ստանալով ի նոցանէ քազում գումարու:

... «Արկանէ հարկս ի վերայ նոր Զուղայեցոցն ի քույցն 1739 մինչեւ ց1747, պահանջելով ամ ըստ ամէ անընդհատ ո՛չ պակաս քանի զտասն հազար քուման մինչեւ ց45·000 քուման՝ զորս յամի միում միայն...: Երկու ամօֆ նախ քանի զմեռանին իւր յամի 1745 էարկ ի վերայ Զուղայեցոց զոռոգանս 65·000 Նադիրի⁸ եւ յանձն

⁸ Պատմիչը ինքն եւս չդիմէ, թէ «Նադիրին» թուման էր թէ մի այլ արծաթադրամ՝ քանզի առում է՝ «չիք նշանակութիւն յօրինակ հրովարտակին եւ ի ստացագիրն»:

արար Մահմադողաքէկ ախոռապետի իւրում ստանալ զայն . որոյ եկեալ ի Զուղայ բազում տանջանօֆ ստացաւ յընթացս միամսինյ ժամանակի զմեծաքանակ զայն գումար ի իշխանաց (Հայոց) ⁹» :

Այս իշխանների թւումն էր և մեր Խօջա Աղաղարը կամ Ղաղարը:

Եւ ահա՝ Խօջա Ղաղար Ղաղարեանցը . որ առաջ աղատուելու համար շատ աւելի անախորժ ու վատթար անակնկալներից , մանաւանդ որ Նաղիրչահի սպանութիւնից յետոյ ստեղծուեց միանդամայն խառնաշփոթ կացութիւն , հաւաքում է իր ընտանիքը , վերցնում իր հետ խոչոր դրամագլուխ եւ թանկագին հազուագիւտ իրեր ու զնում Ռուսաստան 1749 կամ 1750 թուին , ձգելով իր սեպ-հական ապարանքն ու կալուածները ¹⁰:

⁹ Տես էջ 250, Հ. Ա. յիշեալ Հեղինակի «Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան» : Ն. Զուղա, Տպարան Ամենափրկչեան Ս. Վանաց : 1880, Հ. Ա. 1881, թ. Հ. Բ. :

¹⁰ Լէօն Խօջա Ղաղար . Ղաղարեանի գողթի թուականը դէպի Ռուսաստան համարում է 1747 թ. , իսկ Մ. Մուսկեանը՝ 1749 կամ 1750 թ. յենուելով Հետեւեալ հանգամանքների վրայ . նախ , որ տեղափոխութիւնը կատարուել է Նաղիրչահի մահից յետոյ , իսկ այդ շահը սպանուել է 1747 թ. , երկրորդ , որ գաղթի ժամանակ Խօջա Ղաղարի կրոսեր որդին՝ Յովակիմը Յ արեկան է եղել , իսկ ուր ծնուել է 1743 թ. : Մենք , համարելով Մ. Մուսկեանցի տուեալներն ուելի հաւանական ու ճշմարտութեան մօտ , ընդունել ենք նոյնպէս 1749 կամ 1750 թ. :

Երկու խօսք նաև Ղաղարեանների տան մտաբն Սպահանում ու Ն. Զուղայում :

Նոր Զուղայի պատմիչը իր յիշեալ աշխատասիրութեան մէջ (Հ. Ա. , էջ 107) Հաղորդում է , որ

**Խօջա Ղազար Լազարեանը նախ քան
Բուսաստան տարագրուելը ունեցել է չորս
տղայ զաւակ՝ Յովհաննես, ծն. 1735թ.,
Մինաս, ծն. 1737թ., Խաչատուր, ծն.
1741թ. և Յովհակիմ, ծն. 1743թ. ամէնքն
էլ ծնուած Ն. Զուղայում:**

Խօջա Ղազարի Բուսաստան փոխադրու-

**Մանուկ Լազարեանցը 1605թ. Հին Զուղայից փոխա-
դրուելով Սպահան, բնակութիւն է հաստատում Սպա-
հանի Շամսապատն թագում, ապա 51 տարի անց, Լա-
զարեանները փոխադրում են Ն. Զուղայ եւ Դաշտ
թագամասում շինում են նոր տուն: Այս տունը գոյու-
թիւն է ունեցել մինչեւ 1880թ. եւ յայտնի Նազարէ-
թեանց տուն անունով՝ «յանուն Նազարէթ որդւոյ
Ազագարի թոռին Մանուկյայ: Տունն նոցա կայ այժմ
(այսինքն՝ երր հեղինակը զբելիս է եղել իր պատ-
մութիւնը 1880թ.) ի ձեռս ժառանգացն Զաքարիա
Կրէտեանց, որոյ մեծութիւնն եւ ապարանիցն զայել-
չութիւն վկայէ պայծառութեան նոյն տոհմի: Կից այն-
միկ տան՝ տուն որ կայ այժմ ի ձեռս Տէր Մարտիրոս
քահանայի Տէր-Յովհակիմեան, եղեալ կահանոց նոցա,
տուն Կիրակոսի Տէր-Յարութիւնեան՝ ասպաստանց
(ախոռ ձիերի համար) նոցին, եւ տունն Մկրտչի Ծա-
ռուր Անդրէտեան՝ տեղի բնակուրեան ծառայից նո-
ցունք:**

**Այս առթիւ յիշատակենք նաեւ մեր Հայրենակից
Մուշեղ Սարգսեանի (այժմ հանգուցեալ) տուած տե-
ղեկութիւնները, քաղելով նրա ձեռագիրներից, մա-
հուանից յետոյ մեզ հասած:**

**Պ. Մուշեղ Սարգսեանը, մասնագիտական կրթու-
թեամբ հմուտ գիւղատնտես, իր Ն. Զուղայ եղած
ժամանակ հետաքրքրուել է Լազարեան տոհմի պատ-
մութեամբ, այցելել է վերը յիշատակուած տները,
լուսանկարել նրանց ներսի մասերը, մատնանշել չէնքի
մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները: Ի միջի այլոց
բացատրում է Դաշտ թագամասի անուան ծագումը:
Այդ թագամասը, ասում է նա, Դաշտ է կոչւում,
որովհետեւ այնուեղ են բնակութիւն հաստատել Ներ-
քին-Ազուլիսից տարագրուած բնակիչները՝ զօկերը,
իսկ յայտնի է, որ Ներքին Ազուլիսին տեղական բնա-
կիչները Դաշտ անունն էին առաջիս:**

թեան հանգամանքները Ն. Զուղայի յիշեալ պատմիչ Յարութիւն Տէր-Յովհանեանը հետեւեալ կերպով է նկարազրում.

«Այլ մինչ ի ժամանակս թագաւորութեանն Նադիրշահի զօրացաւ բռնակալութիւնն ի Զուղայ, եւ վանառականի Զուղայու մատնեալ տուժից եւ տուգանաց անհանգիստ լինէին. իշխանապետն Աղազար (Ղազար) խոհական մտախոհութեամբ յամի 1743 զանդրանիկ որդին իւր աղայ Յովհաննէս առաքեաց ի Ռուսաստան զի թերեւս երէ ի դէպ համարեսցէ նա հաստատել յայնմ օտար սահմանի զբնակութիւնս իւրեանց, տեղափոխեսցին ի Զուղայոյ՝ յաղագս զերծ մնալոյ յանկոպար հարստահարութեանցն այնի ժամանակի» (Էջ 95):

Այս վարկածը գրեթէ բառացի կրկնում է նաեւ Լէօն իր «Հայկական տպագրութեան» Բ. հատորի մէջ, Էջ 439.

Մենք միանդամայն անհաւանական ևնք համարում, որ Խօջա Ղազարը նման մի լուրջ յանձնարարութիւն տուած լինի իր առագ որդի Յովհաննէսին, որ այդ ժամանակ՝ 1743 թուին ընդամէնը 8 տարեկան մի մանուկ էր եւ այն էլ այն ժամանակուայ խառնակ օրերին եւ հաղորդակցութեան ծանր, իսկ շատ անդամ անապահով պայմաններում:

Լէօն զեռ աւելացնում է իր կողմից, որ «Յովհաննէսը լաւ լուր է բերում եւ Աղազարը 1747 թ. ընդ միշտ թողնում է Զուղան եւ ընտանիքով զնում Ռուսաստան»:

Աւելացնենք, որ Լազարեանների քաջահմուտ կենսագիր Մուեր Մուերեանցը նման բան չի գրում իր «Յիշատակարան»ում :

Այսպէս թէ այնպէս Խօջա Ղաղարը, ապահով հասնելով Հաշտարխան, հաստատուն բնակութիւն չի հաստատում այնտեղ. նա մնում է այնտեղ միայն երկու տարի. այդժամանակամիջոցում նա պտտում է Ռուսաստանի Պանազան քաղաքներ եւ ի վերջոյ ընտանիքով փոխադրուում է Մոսկուա եւ այստեղ մշտական բնակութիւն հաստատում :

Այն փողոցը, ուր Խօջա Ղաղարը բնակութիւն է հաստատում եւ ուր հետազոյում նրա զաւակները կառուցեցին Ս. Խաչ Հայոց Եկեղեցին եւ Լազարեան Ճեմարանը, մինչեւ այսօր էլ ի յարդանս Լազարեանների յիշտակին կոչում է՝ Հայոց Փողոց :

Խօջա Ղաղար Լազարեանը, փոխադրուելով Մոսկուա, ճեռքերը ծալած չի նստում, այլ անմիջապէս գործի է անցնում, շահեցնելու իր բերած դրամագլուխը եւ ընդ միշտապահովելու իր ընտանիքը, իր զաւակներին :

Եւ արդարեւ, արդէն 1753 թ. Մոսկուայի շրջակայքում, մայրաքաղաքից 60 վերստ հեռաւորութեան վրայ, Բօդօրօղուկի զաւառում, Ֆրեանովո գիւղում, նա զնում է մի կալուած 500 շունչ ճորտ գիւղացիներով հանդերձ : Այստեղ նա կառուցում է կտաւի ու կերպասի գործարաններ, հրաւիրում ար-

տասահմանից (Եւրոպայից) հմուտ վարպետներ ու գործառներ :

Շուտով նա այնպիսի կատարելազոր-ծութեան է հասցնում իր գործարանների ար-տադրոյթները, որ նրա պատրաստած մե-տաքսեայ գործուածքները ստանում են մեծ հոչակ ոչ միայն Ռուսաստանում, այլ և ար-տասահմանում : Ժամանակակիցները վկայում են, որ Խօջա Ղազարի պատրաստած մե-տաքսը իր որակով, իր նրբութեամբ ու գե-ղեցկութեամբ ոչնչով պակաս չէր ֆրան-սիայի Լիօն քաղաքի հոչակաւոր մետաքսից : Եկատերինա Բ. կայսրուհու պալատի մե-տաքսի բոլոր պէտքերը հողացւում էին Լո-զարեանի գործարանների արտադրոյթներից : Կայսրուհին այդ մետաքսը ուղարկում էր որ-պէս նուէր նաև արտասահմանի բարեկամ արքունիքներին :

«Դիպակի ոսկերելիք — գրում է Մ. Մսե-րեանցը — կերպասի մետախսայի, քա-րինչիք («քարխատ», քաւիշ) եւ այլ պէս-պէս գործածք որ ի գործարանաց անտի ելանիկին՝ ընտիրք յոյժ էին, գեղեցիկ եւ ազնուա-գոյնիք, ոչինչ ընդհատք ի Գաղղիացւոցն եւ յԱնգղիացւոց, մինչեւ Արքունեացն անգամ Փերերպուրկայ ի պէտս գալ» (էջ 6) ¹¹:

¹¹ Նոյն տեղեկութիւնները տալիս է նաև ուսու-պատմաբան Սերգէյ Գլենկան «Հայ ժողովրդի պատ-մութեան» մէջ ինչպէս եւ յիշատակուած են «Ուկաների ժողովածուիք» մէջ, որոնցից եւ օդառուել է «Յիշատա-կարանիք» Հեղինակը՝ Մ. Մսերեանցը :

Ղազար Լազարեանի դործարանները
սկսարաստում էին նաև պատարդքեր կամ
«քուղք» նկարենք» (ոռւս. «օրօի») «որովք
պատեալ զարդարեցան բազում սենեակք
յԱրքունիս Փեթերպուրկայ՝ յանուանեալս
Զիմիյ և Թավրիչէսքիյ» (էջ 96, Մ. Գ.) :

Ղազար Լազարեանը հոչակ ստացաւ ու
ժեծ դիրք դրաւեց և ապա ազնուականու-
թեան իրաւունք ստացաւ կայսրուհուց իր եւ
իր զաւակների համար ո՛չ միայն իր դոր-
ծարանային արդիւնարերութեամբ, որը նա
հասցրեց կատարելագործութեան. ճիշտ է,
այդ ձեռնարկներով աշխատանք հայթայթեց
բազմաթիւ ոռւս բանուորներին, արհեստա-
ւորներին ու գիւղացիներին և միաժամանակ
տարածեց Ռուսաստանում մետաքսագործու-
թիւնը. այս ամէնը գնահատուեց թէ կառա-
վարութեան և թէ բարձր հասարակական
շրջանների կողմից, բայց դրանով չսահմա-
նակիակուեց նրա դործունէութիւնը: Լաւ
ծանօթ լինելով Արեւելքի կեանքին, նա թան-
կադին տեղեկութիւններ ու խորհուրդներ էր
տալիս կառավարութեան, օգտագործում էր
իր առեւտրական կապերն ու ծանօթութիւն-
ները զարկ տալու Ռուսաստանի առեւտուրի
զարգացման Արեւելքի, մասնաւորապէս
Պարսկաստանի հետ:

Խօջա Ղազարի համբաւը հասել էր մին-
չեւ արտասահման: Մ. Մոերեանցը «Գաղ-

զիական ընդհանուր բառարան արուեստից եւ գիտութեանց» հրատարակութիւնից առաջէ բերում հետեւեալ երկտող վկայութիւնը.

«Զարդարեալ գոլով երկնապարզեւ ձրիւք Ղազար Եղիազարեան (Նազարեան) ունիք ապաքէն զայնպիսի ինչ սպաս ծառայութեան մատուցանել Ռուսիոյ, որ երախտապարտ նմին կացուցանելոց էր զազդոյլովս» (Էջ 7. Ա. Մաս) :

Լազարեան տոհմի այս համբաւաւոր ցեղապետը, որ հայ ստեղծագործող հանճարի մի ներկայացուցիչը հանդիսացաւ այդ վաղ ժամանակներում, օտար Երկնքի տակ, վախճանուել է խոր ծերութեան հասակում՝ 82 տարեկան, 1782 թ. յունուար 8ին Մոսկուայում եւ թաղուել է Մոսկուայի Վաղանգովսկի Հայոց Գերեզմանատանը՝ Ս. Յարութիւն եկեղեցում։ Նա ծնուել էր 1700 թ. ապրիլ 3ին Ն. Զուզայում։

Տապանագիրը հայերէն եւ ոռոսերէն լեզուներով հետեւեալ պարզ վերտառութիւնն ունի.

«Աստանոր հանգչին ոսկերք առն բարեպաշտի՝ Ազնուականին Ղազարայ Նազարեան Լազարեանց, ծնելոյ ի 1790 ամի, յԱպրիլ 3, եւ փոխելոյ յաստեացս յ8 յունուարի 1782 ամի, ի Մոսկով» :

Դապար Լազարեանի կինը՝ Աննա Յովան-
կիսեան, որի հայրը Զուղայեցի ականաւոր
դէմքերից է եղել, վախճանուել է 1770 թ.
յունուար 13ին, 60 տարեկան հասակում, եւ
թաղուել է Մոսկուայի Պրեսնեա թաղամասի
գերեզմանատան՝ Ս. Աստուածածնի Հայոց
եկեղեցում :

ԳԼՈՒԽ Բ .

ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՇԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

(1735—1801)

«Հասարակական կարիքները ողիտի բաւարարուեն իր հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցներով»:
Գէորգ Քանահնեան :

Ա .

Յովհաննէս Լազարեանցը՝ ցեղապետ
Ղազար Նազարեան Լազարեանի աւագ որ-
դին էր, ծնուած Ն. Զուղայում 1735 թ.
նոյեմբեր 23ին :

Յովհ . Լազարեանը բնութիւնից օժտուած
էր մեծ չնորհքներով ու առաքինութիւննե-
րով՝ տաղանդաւոր, եռանդուն, գործու-
նայ, բնաւորութեամբ՝ բարեհամբոյր, մեծ
տակտով ու քաղաքագէտ : Նա կարողացաւ
համեմատարար իր կարձ կեանքի ընթացքին՝
Եկատերինա Բ . կայսրուհու և Պատել Ա .
կայսեր ժամանակ հասնել մեծ պաշտօնների
և արժանանալ նրանց մշտական վստահու-
թեան, հովանաւորութեան ու բարեկամու-
թեան :

Մ . Մսերեանցը նրա մասին ասում է .

«...եւ քուէր իմն, քէ առանձին ինչ ոզի հանճարոյ յերկնից պարզեւելոյ առաջնորդէ նմա յամենայնի» :

Լազարեան Ճեմարանի տեսուչ (Հետապայում՝ վերատեսուչ) Գէորգ Քանանեանը իր ճառի մէջ, ասուած Ճեմարանի 50ամեայ յորելեանի առթիւ կայացած Հանդիսաւոր հաւաքոյթին, Հետեւեալ կերպով է բնութագծում Ճեմարանի հիմնադիր կոմս Յովհ. Լազարեանին .

«Եկատերինա կայսրուհու ժամանակակից կոմս Յովհաննէս Լազարեանը, աւագագոյնը իր եղբայրների մէջ, բոնում է պատուաւոր տեղ իր դարաշրջանի հոչակաւոր մարդկանց շարքում : Նա փայլում էր նոյն բարձր շնորհքներով, ներշնչուած էր նոյն վեհ գաղափարներով, որոնք զարգարել էին ու խանդավառել պետական մեծ մարդկանց սերունդը : Նրա լայն ծանօթութիւնը Արեւելեան աշխարհի հետ, նրա հմտութիւնը Փինանսական ու պետական գործերում, փայլուն ընդունակութիւնները, նրա նուիրումը իր նոր հայրենիքի շահերին՝ բաց արին նրա առջեւ գործունէութեան լայն ասպարէզ: Նրա բազում կարեւոր ծառայութիւնները, մատուցուած պետութեան, արժանացան Մեծ կայսրուհու բարեհաճ վերաբերմունքին դէպի նա, իսկ նրա խորհուրդներն Արեւելքի գործերի մասին ստացան մեծ կշիռ ու արժէք կառավարական շրջաններում :



Յովհաննիկս Լազարեանց

«Միաժամանակ կենդանի պահելով իր
հոգու մէջ ջերմ զգացմունքներ ու նուիրում
դէպի իր հայրենակիցները, որոնք տառա-
պում էին մահմեղական լծի տակ, նա իր
կեանքի նպատակը դրեց թեթեւացնել նրանց
վիճակը։ Այդ մեծահոգի միտքը զուզադի-
պեց պետութեան շահերին, որոնց նա ծա-
ռայում էր։ Եւ նա նուիրուեց նրա գործա-
դրութեան իր բոցավառ սրտի ամրող զօ-
րութեամբ, չխնայելով ո՛չ նիւթական միջոց-
ներ, ո՛չ աշխատանք եւ ոչ էլ եռանդ։ Նրա
ջանքերով, նրա նիւթական միջոցներով ու
բարոյական օժանդակութեամբ էր, որ ծնունդ
առին Սեւ եւ Ազով ծովերի ափերին առեւ-
տրական կայաններ, ուր եւ ապաստան գտան
Ասիայից եկող հայ զաղթականները։ Առա-
տաձեռն նուիրատուութիւնները յօդուտ այդ
քաղաքների եւ մշտական խնամքը նրանց
քնակիչների հասարակական կարիքների մա-
սին հանդիսանում են լաւագոյն յուշարձան-
ներ այդ հոչակաւոր մարդու գործունէու-
թեան։ Բայց ապրելով ու գործելով իր ամ-
րող կեանքի ընթացքում հասարակութեան
եւ իր հայրենակիցների օգտին, կոմս Յով-
հաննէս Լազարեանը կամեցաւ իր փառաւոր
գործերի շարքը պսակել մի այնպիսի սխրա-
դործութեամբ, որ միանդամայն համապա-
տասխանում էր նրա վեհ հոգուն։ Նա առելի
քան որ եւ է մէկը շատ լաւ հասկանում էր,
որ հասարակական կարիքները պիտի բաւա-

բարուեն իր հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցներով։ Այս գիտակցութեամբ ներշնչուած, նա վճռեց իր կարողութեան մի խոչոր մասը յատկացնել իր հայրենակիցների մտաւոր ու բարոյական վերածնութեան դործին։ Նրա մէջ հասունացաւ մի վսեմ միտք՝ կառուցել մի զպրոց հայերի համար ոռոսական կայսրութեան կենտրոնում եւ մահուանից առաջ նա իր ուխտը յանձնեց իր կրտսեր եղբօր, պարտադրելով նրան իր կամքի իրազործումը այն միջոցներով, որ նա կտակով թողնում էր¹։

Այդ կտակով կոմս Յովհ. Լազարեանը թողել էլ 200.000 ոռորլի թղթադրամ կամ 57.142 ոռորլի արծաթ, ի յիշատակ իր վաղամեռիկ որդի Յարութիւն Լազարեանի։

Այդ գումարով էլ, համաձայն հանդուցեալի կտակի, 1815 թ. Հիմնուեց Մոսկուայում Լազարեան Ճեմարանը, որ եւ դարձաւ հայ չքաւոր երեխաների մտաւոր կրթութեան ու բարոյական դաստիարակութեան վառ օջախը։

Էկոն իր երկու հեղինակութիւնների մէջ՝ «Հայկական Տպագրութիւն» և «Յովհակի կարողիկոս Արդութեան», յաճախ է յիշա-

¹ Տե՛ս էջ 15—16 «Ճառեր եւ հաշուետուութիւն, արտասանուած հանդիսաւոր հաւաքոյթում Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց 50ամեակի առթիւ»։ Մոսկուա։ Տպարան Լազ. Ճեմարանի։ 1865, 4^o, էջ 38 + 91 + 6 + 8 + 12 = 155. Ծուռերէն լեզուում։

տակում Լազարեաններին ու դրուստում
նրանց գործունէութիւնը:

Վերջին գրուածքի մէջ նա հետեւեալ
կերպով է բնութագծում Յովհաննէս Լազա-
րեանին.

«Յովհաննէս Լազարեանը ունէր բնական
մէծ խելք, իսկ Ռուսաստան անցնելուց յե-
տոյ, ստացաւ լաւ կրթութիւն: Մոսկուայում,
իր հօր ընտանիքում ապրելը չէր կարող
բաւարարութիւն տալ նրա սրտին, ուստի
նա փոխադրուեց Պետերբուրգ. մշտական
բնակութիւն հաստատեց այնուղ եւ միան-
դամից մօռեցաւ պետական բարձր շրջան-
ներին: Մեծ հարստութեան տէր էր Յով-
հաննէսը, բայց եւ այնպէս մտաւ պետական
ծառայութեան մէջ. ստացաւ բարձր աստի-
ճաններ: Նա պետական բանկի վարչութեան
անդամներից մէկն էր եւ իրքեւ հմուտ Փի-
նանսագէտ՝ նշանաւոր ծառայութիւն էր մա-
տուցել ոռւսաց կառավարութեան»:

Այդ ծառայութիւններից մէկը հետե-
ւեալն էր.

Ռուսաստանը այդ ժամանակներում չու-
նէր հաղորդակցութեան յարմար ճանապարհ-
ներ ու միջոցներ: Պերմ հեռաւոր նահան-
գից եւ Սիբիրից սղնձէ դրամների փոխա-
դրութիւնը Պետերբուրգ (այժմ՝ Լենինգրադ)՝
եւ Ռուսաստանի գաւառական քաղաքները
կապուած էր մէծ զժուարութիւնների հետ:
Եւ ահա՝ արքունի գանձարանի պետ իշխան

Վեազեմսկին առաջարկում է Յովհ . Լազարեանին ստանձնել այդ գործը գոնէ 12 տարով : Յովհաննէսը յանձն է առնում , կազմակերպում է դրամի փոխադրութեան գործը եւ մեծ յաջողութեամբ գլուխ բերում այն , որով աւելի եւս մեծ վատահութիւն ու յարգանք ներշնչում Արքունիքին իր հանդէպ² :

Լէօն շարունակելով իր խօսքը , ասում է .

«Հարուստ , փարթամ հայ ազնուականը այնպիսի աստիճանի հասաւ , որ այլ եւս ոչինչ չէր կարող պահանջել բախտից : Ոչինչ չէր պակասում նրան : Եկատերինայի թագաւորութեան բոլոր աստղերը , բոլոր հոչակաւոր պետական մարդիկ նրա մօտիկ ծանօթներն ու բարեկամներն էին . այսպէս էին՝ իշխան եւ կոմս Օրլով եղբայրները , իշխան Պոտեռմիկինը , կանցլէր իշխան Բէզրովոդկո , զիժաւոր դատախազ իշխան Վեազեմսկին , կոմս Սիվերսը , կոմս Ռումեանցերը , իշխան և կոմս Զուրովները , իշխան Սուվորովը , կուրակինները եւ ուրիշ շատերը :

«Սակայն այսքան փառքն ու բարեկեցութիւնը Յովհաննէս Լազարեանին չդարձրին անմատչելի , հպարտ իշխանաւոր , մանաւանդ մոռացնել չտուին նրան , որ նա խեղճ , ցիրուցան մի ազգի զաւակ է : Այդ ազգի բարօրութիւնը նրա մշտական հոգսերի առարկան էր . եւ պեղճ իշխանաւորը իր

² Այս դէպքի մասին պատմում է Մ. Մակրեանցը իր «Յիշտատակարան»ում , էջ 10 :

բարձր դիրքով, իր մեծ հարստութեամբ աշխատում էր ամէն կերպ օգտակար լինել իր ազգակիցներին։ Նա էր, որ հաղորդում էր կառավարութեան տեղեկութիւններ արեւելեան դործերի մասին, պաշտպանում էր հայերի դատը, խնդրում էր նրանց համար շնորհներ և արտօնութիւններ։ Նա էր, որ հայերին Ռուսաստան դադթեցնելու միտքն էր արծարծում պետական բարձր շրջաններում, համոզուած լինելով, որ իր ազգակիցները այդ ճանապարհով կաղատուին ասիական բռնակալների ճանկերից և խնայող ու ապահով կեանք կը դտնեն։ Հայրենիքում մնացող հայութեան մասին էլ նա մտածում էր եւ եռանդուն կերպով աշխատում էր, որ հայերը քաղաքական ազատութիւն դտնեն։

«Յովհաննէս Լազարեանը նշանաւոր է եւ իր լայն ու գեղեցիկ բարեգործութիւններով։ Զրկուածների, չունեւորների մտաւոր ու նիւթական պակասութիւնները հնար եղածին շափ վերացնելու դործում նա ղեկավարում էր լայն մարդասիրական հասկացողութիւններով։ Միայն իր ազգին չէր նա նուիրարերութիւններ անում։ Առանձնապէս պատիւ է բերում նրա անուան ու սրտին այն հանգամանքը, որ նա իր գիւղերում ու գործարաններում սուսաց և կեղեցիներ էր կառուցանում, դպրոցներ էր բաց անում։ Գիւղացիներին նա չէր ծանրաբեռնում զանազան տուրքերով, այլ խնայելով նրանց, աշխա-

տում էր խելացի տնտեսութեամբ բարեկարգել իր կալուածները³։

Յովհաննէս Լազարեանի այս միանդամայն ճիշտ բնութագրութիւնից պարզ երեւում է, որ բացի իր բնական չնորհքներից ու տաղանդից, անշուշտ, մասամբ ժառանգած հօրից ու պատերից, նա զտնուել է նաև ժամանակի յառաջադէմ գաղափարների աղեցութեան տակ։

Չպիտի մոռանալ ու միշտ պիտի յիշել,
որ Յովհաննէսը ապրում էր ու դործում
18րդ դարի Երկրորդ կեսին, իսկ այդ ժամանակ ամբողջ Եւրոպան ողողուած էր Ֆրանսիացի լուսաւորիչների՝ Վոլտէրի, Մոնտեսկիոյի, Ժան Ժակ Ռուսոյի, Հանրագէտների փիլիսոփայական աղատամիտ վարդապետութիւններով։ Անհատի աղատութիւնը, բողոքը ամէն կարգի բռնութիւնների դէմ, մի խօսքով հումանիտար գաղափարները տարածուել էին ամենուրեք սկսած զիւղական խրճիթներից մինչեւ թագաւորական պալատները։ Գահակալ միապետներն անդամ վարակուած էին դարաշրջանի լուսաւոր եւ աղատատենչ հովերով։ Ինքը՝ կայսրուհի Եկատերինա Բ. ը իր թագաւորութեան առաջին Երկու տասնամբնեակներում խանդավառուած էր նոյն աղատամիտ դաղափարներով։ Իր կառա-

³ Տե՛ս Աէս, «Յովհաննէսը. Կաթ. Արդութեան», էջ 57—81, յաղաւումներով։

վարական գործերի, օրէնսդրական վորձերի ու գրական աշխատանքների մէջ կայսրուհին ջանում էր զարկ տալ սկսուած մտաւոր շարժման զարգացման ու տարածման իր միջավայրում, մասնաւորապէս ազնուականութեան վերին խուերում։ Մի խօսքով, Պետերբուրգի օղն եւս խտացած էր դարչաջանի լուսաւոր գաղափարներով եւ ազատամիտ ձգտումներով։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը միայն (1783—1794) սկիզբ դրեց ոչ ակցիայի, որը սաստկանում էր նոյն չափով, ինչ չափով յեղափոխական սարսափներն էին ուժեղանում . . .։ Այսու հանդերձ սպատամիտ գաղափարների ցանած սերմերը խսպառ չմեռան, այլ ժամանակի ընթացքում տուին իրենց բարի պառուղները :

Յովհաննէս Լազարեանը հօրից ստացած հարուստ ժառանգութիւնը՝ կալուածներն ու զործարանները, խելացի տնտեսութեամբ բարեկարգեց ու ընդարձակեց, նոր կալուածներ զնելով։ Համաձայն ժամանակի ոգուն ու իր լայնախոհութեան ու բարեսրտութեան, նա բարելաւեց իր գիւղացիների ու բանուորների ազգուստի պայմանները. աչքաթող չարաւ նաեւ նրանց երեխաների կրթութեան գործը, ամենուրեք բաց արեց գիւղական գպրոցներ, կառուցեց եկեղեցիներ, հիւանդանոցներ, ազգաստաբաններ։ Շնորհիւ իր ձեռնարկած բարենորոգչական աշխատանքների, նա բարձրացրեց իր կալուածների ու

գործարանների արտադրական կարողութիւններն ու կրկնապատկեց իր եկամուտները և դարձաւ մեծ հարստութեան տէր մարդ :

1778 և 1784 թթ. նա գնեց Պերմ նահանգում կոմս Ստրոգանովներից մի ընդարձակ դաստակերտ իր գործարաններով : Այդ կալուածը 700·000 դեսետին ունեցող մի շատ մեծ հողամաս էր, ուր կային չորս գործարաններ, որոնք արտադրում էին՝ տարեկան՝ 500·000 փութ թուջ (չուղուն), 230·000 փութ երկաթ, 700·000ից մինչեւ 1,000·000 փութ աղ :

Բացի այդ, իշխան Գրիգորի Օրլովի առաջարկով նա գնեց Պետերբուրգի շրջակայքում, 40 վերստ հեռաւորութեան վրայ մայրաքաղաքից, Ռոմիշա արքունական աւանը հոյակապ ազարանքներով, ծաղկանոցներով, կտորեղէնի գործարանով և 1200 հոգի բնակիչներով :

Ռոմիշայում էին հիւրընկալուում ուսու արքայական տան անդամները՝ իշխան-իշխանուհիները և պետական մեծ դէմքերը. այստեղ էր Յովհաննէսը ընդունել արեւելեան մեծ շքեղութեամբ և հիւրասիրութեամբ Պետերբուրգ ժամանած Աւստրիայի կայսր Յովհաննէֆի Բ.ին, որ հոչակուած էր իր ազատախոհութեամբ, Շվեյցարիայի թաղաժառանգին, Ֆրանսիայի թաղաւոր Լիւդովիկոս ԽVI թղի ասրագիր եղրօր՝ կոմս դ'Արտուրցին իր

Հքախմբով (1793 թ.) եւ ապա զանազան դուքսերին եւ իշխաններին:

«Ամէնքն էլ, — ասում է Մ. Մսերեանցը — ընդունում էին արեւելեան չքեղութեամբ, ըստ արժանի պատույն մեծութեան եւ համբաւոյ»:

Ինքը՝ Յովհ. Լազարեանը յաճախ հրաւիրում էր սեղանակից լինելու Եկատերինա կայսրուհուն ու Պատել կայսրին Գատչինոյի արքայական պալատում:

Կայսերական հրովարտակներից ⁴ մենք իմանում ենք, որ Յովհ. Լազարեանը իր պետական ծառայութեան ընթացքին ստացել է մեծամեծ չնորհներ, աստիճաններ, չքանչաններ: Յիշատակենք միայն մի քանիսը:

1786 մարտ 12ին ստանում է Աւստրիայի կայսր Յովհէփ Բ.-ից բարոնի կոչում, իսկ 1788 մարտ 30ին՝ կոմսութիւն: Երկու անգամ էլ այդ չնորհների նուիրումին կցուած են ընդարձակ գրութիւններ, ուր մատնանշուած են Յովհաննէսի մատուցած ծառայութիւնները:

1791 դեկտ. 1ին Եկատերինա կայսրուհին չնորհում է Ատենական Խորհրդականի աստիճան (Կոլլեժակի սովետնիկ):

1800 յունիս 3ին Պատել կայսրը չնորհում

⁴ Այդ հրովարտակների բնագրերը բերուած են թէ «Լ. Ճ. 50ամեակին» նուիրուած ժողովածուի մէջ և թէ Մ. Մսերեանի «Յիշատակարան»ում:

է նրան ներգործական Պետական խորհրդականի աստիճան :

1801 փետրուար 24ին Պատել կայսրը շնորհում է Շքանչան Հրամանատար Կարզի Ա. Յովհաննու Երուսաղէմացւոյ, որը համարեւոմ էր մին ամենաբարձր շքանչաններից :

Եարուաւի եւ Ա. Պետերրուրդի նահանգների ազնուականութիւնները, յենուելով Յովհաննէսի հօրը կայսրուհի Եկատերինա Բ.ի կողմից արուած ազնուականութեան իրաւունքի վրայ, առնում են նրան իրենց շարքերը :

Յովհ. Լազարեանը, որպէս բարեկաչտ հայ մարդ, նուիրուած հայ Եկեղեցուն եւ ազգին, ի նկատի առնելով, որ Պետերրուրդի հայ գաղութը Եկեղեցի չունի եւ, փոքրաթիւ լինելով, ի վիճակի չէ իր միջոցներով Եկեղեցի շինել, ինքն է ձեռնարկում մայրաքաղաքում Եկեղեցի կառուցելու իր սեփական միջոցներով։ Եւ 1779թ. Պետերրուրդի գլխաւոր փողոցում, Նեւսկի պրոսպեկտի վրայ, բարձրանում է Ա. Կատարինէ (կոմսի կնոջ անունով) Հայոց հոյակապ Եկեղեցին, որն իր կից շէնքերով բռնում է 1395 քառ.սամէն⁵ տարածութիւն։

1791թ. Յովհ. Լազարեանը կրկին իր սեփական միջոցներով կառուցում է մի երկրորդ Հայոց Եկեղեցի, այս անդամ մայ-

⁵ Մէկ սամէնը = 2 մետրի։

բաքաղաքի Վասիլեւսկի թաղամասում, Հայոց գերեզմանատանը, իր վաղամեռիկ որդու Յարութիւնի անունով, որն իր պարտէզով բռնում է 10.000 քառ. սաժէն տարածութիւն։ Այս երկու եկեղեցիների շինութեան վրայ իրենց յարակից չէնքերով բարերարը ծախսել էր 120.000 ռուբլի։

1784 եւ 1789 թթ. նա կառուցում է նաև չորսյարկանի քարաշէն տներ բնակութեան համար Ա. Կատարինէ եկեղեցու գաւթի առաջեւի մասում ու նուիրում եկեղեցուն։ Այդ տներից ստացուելիք եկամուտներն էլ յատկացնում է Եկեղեցուն։

Հիմնադիրը, որպէս մի իրատես ու հեռատես մարդ, կամենալով կանխել ապագայում ծագելիք ամէն թիւրիմացութիւն, եկեղեցու եւ տների կառավարութեան զործում, մշակում է յատուկ պայմանագիր, ուր մանրամասն կարդադրութիւններ է անում երկու եկեղեցիների կառավարութեան ու տների օգտագործման եղանակի ու պայմանների մասին։ Այդ պայմանագիրը այնուհետեւ հաստատում է Ռուսաստանի թեմակալ առաջնորդ Յովսէփ արք. Արդութեանը։

Այս պայմանագրի մէջ, ի միջի այլոց, ուշագրաւ է այն, որ հեղինակը չի մոռանում կարգադրելու, որ եկեղեցին պիտի ունենայ փոքրիկ դպրոց հայ երեխաների համար եւ ապա իր եկամուտներից եկեղեցին օդնի հայ չքաւորներին։

Հանգստարանի եկեղեցւոյ մասին նոյն պայմանագրի մէջ ասուած է .

«Ի միջի Ս. Յարութիւն տաճարին, որ առ հանգստարանաւ, միայն արիւնակիցք իմ թաղեսցին, իսկ այլք՝ ի Հանգստարանի ⁶» :

Յովհ. Լազարեանը իր բարեգործ ձեռքը չէր կարկառում միայն կարօտեալներին օդնելու համար . նա միշտ պատրաստ է եղել նաեւ ամէն կերպ աջակցելու հայ մշակոյթի, հայ գրի ու գրականութեան զարգացման գործին, եւ այդ ո՛չ միայն դպրոցներ հիմնելով, այլ եւ տպագրելով իր դրամական միջոցներով հայ հեղինակների արժէքաւոր գործերը :

Դժբախտարար պատմութիւնը չի պահպանել մեծ բարերարի նման գործերի յիշատակը : Գոնէ մեր ձեռքի տակ եղած բազմաթիւ աղբիւրների մէջ մենք գտանք միայն մի դէպք արձանագրուած . այդ դէպքի մասին հաղորդում է Լէօն իր «Հայկական Տպագրութեան» մէջ :

«Մարգար Խօջէնց Երեւանցին, — պատմում է Լէօն, — թարգմանել էր «Թելիմաքը» : Դա ֆենելոնի աշխարհահռչակ «Տելիմաք»ի թարգմանութիւնն է, որ երեւում էր մեր մէջ առաջին անգամ եւ հէնց այդ պատճառով էլ առանձին պատիւ էր Նոր Նախիջեւանի տպարանի համար : Գիրքը բաղկացած է երկու հատորից, պարունակում է

⁶ Տե՛ս Մ. Մոերեանց, «Յիշատակարան», Պ. մաս, էջ 7 և 8:

իր մէջ 500ից աւելի երեսներ. տպուած է 1794 թ. Յովհաննէս Լազարեանի ծախսով ի յիշատակ նրա Յարութիւն որդու»:

Բնդհանրապէս Յովհ. Լազարեանի բարեգործութիւնները այնքա՞ն շատ են եւ այնքա՞ն բազմապիսի, մատուցած հայ եւ ոռու ժողովուրդներին, մասնաւորապէս Ռուսաստանի նորահանտատ հայ գաղթավայրերին, որ նրանց մանրամասն տեսութիւնը պահանջում է յատուկ աշխատանք ու ժամանակ, մի բան, որ մեր թէ հնարաւորութիւններից եւ թէ ներկայ աշխատանքի սահմաններից դուրս է:

Տկարութիւնը ստիպում է Յովհ. Լազարեանին, կայսեր թոյլտուութեամբ մեկնել Կովկասի հանքային ջրերը բուժուելու: Բայց նա դեռ չէր հասել Հաշտարիսան, երբ հասնում են կայսեր սուրհանդակները և բերում կայսեր հրամանը անմիջապէս վերադառնալ Պետերբուրգ . . . :

Վերադառնալով մայբաքաղաք, Լազարեանը իսկոյն ներկայանում է կայսեր: Վերջինս առաջարկում է նրան ծախել իրեն Ռոփշայի ապարանքը: Լազարեանը, ի հարկէ, տալիս է իր համաձայնութիւնը: Կայսրը առաջարկում է նշանակել գինը: Լազարեանը հրաժարում է, յայտնելով, որ ապարանքն էլ, իր բոլոր ունեցածն էլ պատկանում են կայսեր: Այնուհետեւ միջամտում են կոմս Կուտայիսովն ու իշխան Բէղրօրօդկօն, և

կայսրը ինքն է նշանակում արժէքը՝ 500·000 ռուբլի թղթադրամ՝ մինչդեռ ժամանակակիցների վկայութեամբ ազարանքը արժէր ո՞չ պակաս քան մէկ միլիոն ռուբլի:

Լազարեանը առանց առարկութեան տալիս է իր համաձայնութիւնը և բացի այդ 100·000 ռուբլի էլ գումարից նուիրում մայրաքաղաքի ուսումնարաններին ու հիւանդանոցներին:

Այս առթիւ Մ. Մսերեանը նկատում է.

«Եւ այս՝ ո՞չ ազնուական միայն՝ այլ եւ ուշիմագոյն հանճարոյ համարելի է գործ, եւ կիրթ քաղաքականութեան անժխտելի հաւաստիք» :

Լազարեանի այդ վեհանձն ժեստը շատ լաւ տպաւորութիւն է թողնում կայսեր վրայ և նա շնորհում է նրան Ա. Յովհաննու երուսաղէմացւոյ շքանշանը 1801 թ. փետրուար 24ին:

Արդարեւ, որ Յ. Լազարեանը եղել է նուրբ քաղաքագէտ ու մեծ տակտով պետական գործիչ: Ամենափայլուն ազացոյցը դրան ծառայում է այն պատմական իրողութիւնը, որ երբ Պաւել կայսրը, յաջորդելով Եկատերինա Բ.ին, գահ բարձրացաւ, անմիջապէս հեռացրեց իրենց պաշտօններից իր մօր բոլոր մերձաւորներին, որոնցից իւրաքանչիւրը բարձր գիրքի ու պաշտօնի տէր պետական անուանի գործիչ էր: Յովհ. Լազարանը այն բացառիկ անձնաւորութիւններից

էր, որ կարողացաւ պահպանել ո՛չ միայն իր դիրքը, այլեւ վայելել կայսեր անխախտ վստահութիւնն ու հովանաւորութիւնը։ Դա մի հազուազիւտ երեւոյթ էր այդ ջղագրգիռ, անհաւասարակշուած, հիւանդադին պոոթելումների ևնթակայ բոնակալ միապետի օրով։

Հարիւրաւոր մարդիկ, պաշտօնեաներ, զինուորականներ առանց դատ ու դատաստանի, կայսեր մի խօսքով, ուղարկւում էին բանտ կամ աքսոր Սիրիր . . . :

Եւ իր հէնց այդ բնաւորութեան էլ նա զոհ զնաց . . . Պալատական դաւադրութիւնը վերջ տուեց նրա կեանքին 1801 թ. մարտ 11ին։

Ալէքսանդր Ա. կայսրը, որ անմիջապէս յաջորդեց հօրը, շտապեց ներում տալ բոլոր անմեղ զոհերին։ Այդ ներումից օդտուեցին՝ աղատուելով բանտարկութիւնից եւ վերադառնալով աքսորից՝ 536 հոգի քաղաքացիներ եւ 12.000 հոգի սպաներ ու պաշտօնեաներ։

Բայց արդէն հաշուած էին նաև կոմս Յովհաննէս Լազարեանի կեանքի օրերը։ Զրկուելով հնարաւորութիւնից դնալ կովկասի հանքային ջրերը բժշկուելու, նրա առողջութիւնը աստիճանաբար վատթարացաւ եւ վերջապէս 1801 թ. հոկտեմբեր 24ին նա կնքեց իր մահկանացուն 66 տարեկան հասակում։

ՄԷԾ շուքով կատարուեց նրա յուղար-

կաւորութիւնն ու թաղումը Ս. Պետրոսուրդի
Հայոց գերեզմանատան Ա. Յարութիւն տա-
ճարում :

Մեծ հայ պետական եւ ազգային հասա-
րակական անդուդական գործիչի մահը սպա-
ցին ո՛չ միայն Երկու մայրաքաղաքների հայ
եւ ոռւս հասարակութիւնները, ոչ միայն
Ռուսաստանի նորաբնակ հայ գաղութները՝
Հաշտարխանի, Ղղլարի, Մողղոկի, Գրիգո-
րիոսովոլիի, Ղրիմի, Նոր Նախիջևանի, Դար-
րանդի հայ հասարակութիւնները, այլ եւ Նոր
Զուղան, Ա. Էջմիածինը եւ առհասարակ բո-
վանդակ հայ ժողովուրդը :

Ամէնքը զգում ու գիտակցում էին, որ
կորուստը շատ մեծ էր. յաւիտենականու-
թեան գիրկն անցաւ այն մեծ հայ մարդը, որ
միշտ նախանձախնդիր իր ազգի բարօրու-
թեան, ապահովել էր նրանց նիւթական
գոյութիւնն եւ ձեռք բերել ոռւս հզօր պե-
տութեան հովանաւորութիւնը :

Հանգուցեալը ժառանգ չթողեց. նրա
շատ գուստըները՝ Աննա եւ Մարիամ վախճա-
նուել էին մանուկ հասակում, իսկ միակ որ-
դին՝ Յարութիւնը, որ ծառայում էր ոռւ-
սաց գօրարանակում եւ Երկրորդ ռուս-տաճ-
կական պատերազմի ժամանակ գտնուում էր
իշխան Պոտենտիինի հրամանատարութեան
ներքոյ, վախճանուել էր 1791 թ. յունուար
12ին, 23 տարեկան ծաղիկ հասակում. նու
ծնուել էր 1768 թ. յուլիս 24ին:



Յարութիւն Յ. Լազարեանց

Յովհաննէս Լազարեանը իր ամբողջ հարստութիւնը, կալուածներն ու գործարանները, կտակով թողեց իր կրտսեր եղբօր՝ Յովհանիմին, պատուիրելով մի որոշ գումար յատկացնել կնոջն ու Եղիոր Մինասին մինչեւ նրանց մահը:

Յովհաննէս Լազարեանի տապանագիրը հայերէն եւ ռուսերէն լեզուներով՝

«Առաջի տապանագրիս հանդչի մարմին կառուցանողի տաճարիս՝ բարեգործ առն՝ ներգործական պետական խորհրդականի՝ եւ Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ նշանակիր Հրամանատար Ասպետի, Յովհաննու Լազարեան Լազարեանց, փառաւորելոյ բազմօրինակ օգտակար գործովք եւ բարեպաշտ կենօք, ծնելոյ ի Զուղայ յամի 1735, ի 23 նոյեմբերի, եւ հանգուցելոյ ի Տէր ի 1801 ի 24 հոկտեմբերի» :

Յովհաննէս Լազարեանի կինը՝ Կատարինէ Յովհաննիսիսեան Լազարեանց (Միրզախաննեան տոհմից) իր մահից յետոյ՝ 1819թ. օգոստոս 18ին, կտակով թողել էր Լազարեան ձեմարանին՝ 2.857 ռուբլի արծաթ (շուրջ 8.600 ռուբլի թղթաղբամ):

Լազարեան ձեմարանը, յարգելով իր հիմնադրի անմահ յիշատակը, իր տարեկան դպրոցական հանդէսը կատարում է նրա մահուան տարեղարձին՝ հոկտեմբեր 24ին:

Այդ օր Մոսկուայի Ս. Խաչ եկեղեցում,

որ զտնւում է Հայոց իփողոցում, դէմ յանդիման ձեմարանի, կատարւում է հանդիսաւոր Ս. Պատարագ եւ ապա հոգեհանդիս թէ հիմնադրի եւ թէ Լաղարեան ամրող տոհմի բոլոր անդամների յիշատակին:

Պատարագին եւ հոգեհանդստին ներկայ են լինում՝ ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան՝ Մոսկուայի կրթական շրջանի հոգարարձուն իր օգնականի հետ, ձեմարանի վերատեսուչը, տեսուչը, ամրող ուսուցչական ու դաստիարակչական կազմերը, ձեմարանի ամրող աշակերտութիւնը, ինչպէս եւ Մոսկուայի հայ հասարակութեան ականաւոր դէմքերը ու նախկին սաները: Ամէնքը իրենց տօնական նշանազգեստներով, գարդարուած շքանշաններով, մեղալներով:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, վերատեսչի հրաւերով, ամէնքը հաւաքում են ձեմարանի Հարցաքննութեան շքեղ դահլիճը (Ակտօայ զала) Պետական հիմնից յետոյ, որ երգում է ձեմարանի երգչախումբը, կազմուած աշակերտներից, վերատեսուչը կարդում է իր ընդարձակ զեկոյցը ձեմարանի կրթական ու ֆինանսական վիճակի մասին եւ վեր հանում նախկին ուսումն. տարուայ ընթացքում ձեմարանի ունեցած յաջողութիւնները, նրա կարիքները եւ անհրաժեշտ բարեփոխութիւնների պահանջը:

Շրջանաւարտներին ու յառաջադէմ աշակերտներին բաժանում են իրենց վկայա-

կանները, մեղալները (ոսկի և արծաթէ) ու նուէրները:

Այդ օր գիշերօթիկ աշակերտների ամենամեծ տօն օրն է: Նրանց տրւում են տօնական թէյ, նախաճաշ, ճաշ եւ ընթրիք, իսկ երեկոյեան ամբողջ աշակերտութեան տանում են թատրոն կամ ցիրկ:

❖

ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐԵԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻ

Յովհաննէս Լազարեանը, չնորհիւ իր մեծարժէք, բեղուն ազգային հասարակական-քաղաքական դործունէութեան, պատուաւոր տեղ է բռնում 18րդ դարի հայ քաղաքական ազատագրական շարժման ուահպիրաների շարքում: Նա հանդիսանում է շարունակողը Խարայէլ Օրիի, Յովհէփ Էմինի սկսած աշխատանքների Հայաստանի ազատագրութեան համար ասիական բարբարոսիշխանութիւնների անարդ լծի տակից:

Բայց Յովհաննէս Լազարեանը, որպէս նուրբ քաղաքաղէտ ու մեծ տակտի տէր գործիչ, ձեռնամուխ չի լինում իր ազգային հայատակների իրադորժման մէկէն ի մէկ, այլ իր աշխատանքները տանում է աստիճանաբար, միշտ յարմարուելով ժամանակի պայմանների եւ իր դիրքի ամբապնդման:

Նրա հասարակական-քաղաքական գործունէութեան դրդապատճառները պիտի մինուել ամենից առաջ նրա մանկութեան

օրերին ստացած տպաւորութիւնների մէջ, որոնք անջնջելի հետքեր են թողել նրա հոգու վրայ:

Մանուկ հասակում նա ականատես է եղել այն խժդժութիւններին. որոնց ենթակայ է եղել իր ծննդավայրի, Ն. Զուզայի, հայ հասարակութիւնը, ի մէջ առեալ նաեւ իր հարազատներին ու ազգականներին: Այսուհետեւ նա յաճախ լսել է իր հօրից այն բոլոր հալածանքների տիտոր պատմութիւնները, որոնց մէջ վառ գոյններով նկարագրուած են եղել հայ ժողովրդի քաշած տառապանքները մահմեղական իշխանութիւնների ծանր լուծի տակ: Այս ամէնը մանուկ Յովհաննէսի վառ յիշողութեան մէջ խորապէս տպաւորուած, հանգիստ չեն տուել նրան երբեք:

Ապա կրթութեամբ ձեռք բերած ծանօթութիւնը Եւրոպական քաղաքակրթութեան ու մշակոյթի, ու նաեւ Ռուսաստանի պատմութեան հետ, ինչպէս եւ իր զարաշրջանի լուսաւոր գաղափարների իւրացումը, — գաղափարներ, որոնք խօսում էին ո'չ միայն մարդ-անհատի անկապտելի իրաւունքների, այլ եւ ազգերի ազատութեան մասին, — սակածում են այն հաստատուն պատուանդանը, որի վրայ եւ հիմնում է Յովհ. Լազարեանի ազադայ քաղաքական դործունէութիւնը:

Գտնուելով Ռուսաստանի քաղաքական կեանքի կենտրոնում, մշտական շփուելով

ոսւս եւ Եւրոպական քաղաքական գործիչ-ների ու դիւանագէտների հետ, աշալուրջ հե-տեւելով ժամանակակից քաղաքական կեանքի իրադարձութիւնների ընթացքին, նա առիթ չէր փախցնում իր նպատակների ու բազ-ձանքների իրագործման համար հող պա-տրաստելու, իսկ այդ նպատակներն ու բազ-ձանքները միշտ էլ ուղղուած են եղել մի բանի՝ քերեւացնել իր ազգի կրած տառա-պանքները ու տալ նրան խաղաղ ապրելու եւ աշխատելու հնարաւորութիւններ :

Եւ պիտի ասել, որ Եկատերինա Բ. կայսրուհու օրով առիթների պակասութիւն չկար :

Ռուս-տաճկական երկու պատերազմները, Հարաւային Ռուսաստանի՝ «Նովորոսիայի»՝ նուաճումը մինչեւ Ազով ծովի ափերը Դրիմի գրաւումը. լաւագոյն առիթները եղան Յովհ. Լաղարեանի համար :

Օգտագործելով իր բարձր դիրքը, իր սերտ կապերը ու բարեկամութիւնը պետա-կան ականաւոր եւ ազգեցիկ գործիչների հետ, ապա յենուելով կայսրուհու անխախտ բարեհաճ վերաբերմունքի վրայ դէպի իրեն, նա քարոզում ու համոզում էր ամենքին, որ Ռուսաստանի պետական կենսական շահերը պահանջում են խրախուսել տանկահայերի ու պարսկահայերի գաղքը դէպի Ռուսաստան :

Հայերը, ասում էր նա, խաղաղ եւ աշ-խատասէր ժողովուրդ են, բնակութիւն հաս-

տատելով Ռուսաստանի նորանուած հարուսային ընդարձակ, բայց ամայի ու խոպան տափառանները, կարճ ժամանակամիջոցում կը չէնացնեն Երկիրը, կառուցելովք քաղաքներ ու գիւղեր, զարկ կը տան արդիւնաբերութեան եւ ներքին ու արտաքին առեւտուրին, մասնաւորապէս Արեւելքի Երկիրների հետ, որոնք նրանց լաւ ծանօթ են և ուր ունին կապեր. այդպիսով նրանք մեծապէս կը նպաստեն ո՛չ միայն իրենց նոր հայրենիքի տնտեսական բարդաւաճման, այլ եւ տարածելով Ռուսաստանի քաղաքական ազգեցութիւնը, կը բարձրացնեն ուսւ պետութեան հմայքը ամրող Արեւելքում:

Յովհ. Լազարեանի այս քարոզչութիւնը նպաստառը հող գտաւ Եկատերինա Բ. կայսրուհու վարած արտաքին քաղաքականութեան մէջ, որն ո՛չ այլ ինչ էր, եթէ ոչ Պետրոս Մեծի արտաքին քաղաքականութիւնը. կայսրուհին իրեն համարում էր Պետրոս Մեծի գործի շարունակողը, իսկ այդ գործը ունէր մի զերազոյն նպաստակ՝ նուաձելով կասպից, Սեւ եւ Ազով ծովերին կից հողամասերը, ճանապարհ հարթել դէպի Արեւելք, դէպի Ռվիկանոսները, դէպի իր առասպելական հարստութիւններով հոչակուած Հեղկաստանը՝ Ռուսաստանի արտաքին առեւտուրի համար:

Եւ Յովհաննէս Լազարեանի քարոզչութիւնն ու այդ ուղղութեամբ թափած ջան-

քերը ո՞չ միայն ի զուր չանցան, սպակուեցին կատարեալ յաջողութեամբ, ոյլ և տուին մեծ արդիւնքներ :

Եւ սկսուեց տաճկահայերի ու պարօկահայերի, ինչպէս եւ Արեւելեան Հայաստանից հայերի զաղթը դէպի Ռուսաստան, ուր նրանք սիրով հիւրընկարում էին : Միւերկու տասնեակ տարիներում ծնունդ առան մի շաբք հայկական առեւտրական կայաններ՝ քաղաքներ ու գիւղեր :

Բայց բաւական չէր ժողովրդին զբաւել ու բնակեցնել ամայի ու խոպան վայրերում : Անիրաժեշտ էր նաև նոր բնակիչներին տալ հնարաւորութիւններ ապրելու եւ աշխատելու :

Եւ Յովհաննէս Լազարեանը ջանք չխնայեց ձեռք բերելու կառավարութիւնից բացառիկ տռանձնաշնորհումներ ու արտօնութիւններ, երբեմն նաև դրամական օժանդակութիւն : Չրաւականանալով այդքանով, նա ինքն էլ իր առաստաճենութեան մէջ բերեց մեծ օգնութիւն նրանց, կառուցելով եկեղեցիներ, զպրոցներ, հիւանդանոցներ եւ հոգալով նրանց անհրաժեշտ կարիքները դրամական նուիրատուութիւններով :

Եւ արդիւնքը եղաւ այն, որ այդ գաղթավայրերի հայ ժողովուրդը կարձ ժամանակամիջոցում ստեղծեց իր համար տնտեսական բարդաւաճ վիճակ եւ արդարացրեց կառավարութեան ակնկալութիւնները, զարկ

տալով տեղական արդիւնաբերութեան, արհեստներին եւ ներքին ու արտաքին առեւտուրին:

Այսուհետեւ այդ դադթավայրերը դարձան նաեւ Հայ ազգային մշակոյթի միմիցառ հնոցներ: Բացուեցին մեծ ու փոքր պարոցներ, տպարաններ, ծաղկեց Հայ գիրն ու գրականութիւնը: Ծնունդ առաւ մի մտաւորականութիւն, որ Հազիւ 50 տարի անց, նա կերտեց Հայկական Վերածնութեան փայլուն դարաշրջանը, միշտ համախորհուրդ ու համագործակից Արեւելեան Հայաստանի մտաւորական գործիչների հետ:

Իսկ այդ մտաւորականութիւնը ստեղծեց այն լուսաւոր ջահերը, որոնք վառուեցին ամենուրեք. Մոսկուայում՝ Լազարեան ճեմարանը, Հաշտարիսանում՝ Աղարարեան եղրայրների գպրոցը, Ս. Խաչում՝ վանքի գպրոցն ու տպարանը, Հիմնուած Յովոչի արքեպ. Արդութեանի ճեռքով. Թէոդոսիայում՝ Խալիպեան վարժարանը, Հիմնուած Գարրիէլ արքեպ. Այլաղեանի ջանքերով. Եօր Նախիջևանում՝ Գարրիէլ քահ. Պատկանեանի գպրոցը, ուր, ի միջի այլոց, իր սկզբնական կրթութիւնը ստացաւ 19րդ դարի ամենամեծ Հայ դրական-քաղաքական գործիչներից ամենակարկառուն դէմքը. Միքայէլ Նալբանդեանը:

Պատմութեան առաջ մեղանչած չլինելու
համար, յիշատակենք, որ Յովհաննէս Լա-
զարեանը իր գործունէութեան մէջ ունեցաւ
մէ մեծ ու անփոխարինելի գործակից եւ ա-
ջակից ի դէմս Ռուսաստանի թեմի առաջ-
նորդ Յովսէփ արքեալ. Արդուքեանի:

Յովհաննէս Լազարեանը, թէ իր բարձր
դիրքի հետեւանքով եւ թէ իր պաշտօնների
հոգսիրով ծանրաբռնուած լինելով, որ եւ է
հնարաւորութիւն չունէր անմիջականօրէն
շփուելու ժողովրդի հետ եւ իր նպատակներն
ու ծրագիրներն իրագործելու: Եւ ահա'
ովատմութեան անհասանելի կամքով հանդէս
եկաւ մէկը, որ եղաւ նրա մտերիմ բաշեկանն
ու գործակիցը, եւ որի միջոցով նա կարող
էր գործել, յաճախ ինքը մնալով ստուերում,
եւ առաջ քաշելով նրան, որի հոգեւորական
կոչումը միայն արդէն մեծ առաւելութիւն-
ներ էր ներկայացնում:

Բայց Յովսէփ Արդուքեանը սովորական
հոգեւորականներից չէր. նա պատկանում էր
մեր մեծ հոգեւորական դէմքերի շարքին:
Բուռն խառնուածքով, անսպառ եռանդով,
բնական սուր խելքով, խոր ու անկեղծ հայ-
րենասիրութեամբ, մեծ տակտով ու ճար-
տար խօսքով նա թողնում էր մեծ տպառ-
րութիւն իր շրջապատի վրայ: Նա ոչ միայն
վայելում էր իր հօտի սէրն ու յարդանքը, այլ
եւ ձեռք էր բերել մեծ հեղինակութիւն պե-
տական բարձր շրջաններում, ուր նա մտա-

Յովհաննէս Լաղարեանի միջոցով։ Նրա ոգեշունչը քարոզները արտասուք էին խլում նոյն իսկ ռուս ականաւոր անձանց աչքերից։

Ո՞վ էր Դրիմի դաղթի կազմակերպողն ու գաղթականների առաջնորդը։ Ո՞վ էր Նոր Նախիջեւանի եւ Ս. Խաչ վանքի (1791 թ.) հիմնադիրը։ Ո՞վ էր Գրիգորիոսովովի (1792 թ.) հիմնադիրն ու Նրա դաղթական բնակիչների խնամատարը։ միշտ եւ ամէն տեղ Յովհաննի արքեպ։ Արդութեանը։

Բայց այս մեծ հոգեւորականի գործունէութեան պատմութիւնը մեր նիւթից դուրս է։ Բնդզծենք միայն, որ Հայ ժողովրդի բախտից էր, որ այդ երկու ժամանակակից Հայ գործիչները երբեք չկորցրին իրենց արժանապատութեան զգացմունքը և տեղիք չտուին անհամաձայնութիւնների։ միշտ Համերաշխ, միշտ իրար նեցուկ, միշտ գիտակից ամէն մէկը իր դերին, նրանք փոխադարձարար լրացնում էին մէկը միւսի գործը։ Հայի նախանձն ու սնուտի սնամառութիւնը երբեք տեղ չդտան նրանց մեծ սրտերում։ Հաւասարապէս ոգեւորուած Հայ ժողովրդի բարօրութեան վեհ գաղափարով, նրանք մի մտահոգութիւն ունէին՝ օդտագործել լաւագոյն կերպով ու մեծագոյն չափով իրենց բարձր դիրքն ու հեղինակութիւնը յօդուտ իրենց բազմաչարչար ժողովուրդի, իրենց «խեղճ» ազգի։

Էէօն գեղեցիկ ու միանդամայն իրակա-

նութեան համապատասխանող կերպով լրա-
սաբանել է այդ երկու հայ մեծ գործիչների
փոխարարերութիւնները, եւ մենք հաճոյքով
խօսքը տալիս ենք նրան՝ հայ գրականութեան
ու պատմութեան այդ անխոնջ պրապտողին:

«Յովսէփ արքեպ. Արդութեանին, — ա-
ռում է Լէօն — թեւ տուողը, նրա համար
բոլոր յարմարութիւններ ստեղծողը, նրա
խորհրդատուն՝ Յովհաննէս Լազարեանն էր:
Զպէտք է մոռանալ այս անունը. պէտք է
միշտ աչքի առաջ ունենալ, որ Արդութեանը,
ինչպէս վկայում է ժամանակակիցներից
մէկը (Մարգար Խօջենց Երեւանցին), մի
քայլ անդամ չէր անում առանց Լազարեանի:
Այս երկու անձնաւորութիւնները կատարե-
լապէս յափշտակուած, անխոնջ եռանդով
նուիրուում են Պարսկական Հայաստանի ա-
զատութեան գործին:

«Լազարեանն էր, որ մտցրեց առաջնոր-
դին իր բարձրաստիճան ծանօթների շրջանը.
Նրա միջոցով Արդութեանը ծանօթացաւ ու-
րարեկամացաւ պետական մարդկանց հետ,
ընդունուեց կայսերական պալատում, ուր ար-
ժանացաւ Եկատերինայի առանձին բարեհա-
ճութեան եւ ուշադրութեան: Յովսէփ ար-
քեպիսկոպոսի համար մի առանձին բախտ
էր, որ իր հօտի մէջ ունէր Յովհաննէս Լա-
զարեանի պէս մի նշանաւոր եւ հայրենասէր
հայ: Առանց այդ հայի աջակցութեան նա չէր
կարող այնքան առաջ գնալ, այնքան աչքի

ընկնող դիրք գրաւել։ Ի հարկէ, Եթէ Ար-
զութեանը չունենար իր մէջ բնական ձիրք,
ընդունակութիւններ, Լազարեանի ծանօթու-
թիւնները ոչինչ օգնութիւն չէին անի նրան։
Յովսէփին հարկաւոր էին նպաստաւոր հան-
գամանքներ, չրջան. մնացածը նա ինքը դի-
տէր, թէեւ այս էլ պէտք է տուել, որ Լազա-
րեանը համարեա ամէն մի զործի մէջ նրա
հետ էր¹։

*

Թէ Յովհաննէս Լազարեանը, թէ Յով-
սէփ արքեպիսկոպոսը չէին լինի այն մեծ ազ-
գային դեմքերը, երէ շմտածէին ու չնուի-
րուէին նաեւ Մայր Հայրենիքում օտար լուծի
տակ տառապող հայ ժողովրդի բաղաքական
ազատազրութեան գործին։

Եւ նրանք շատ լաւ էին գիտակցում,
որ միայն ազատ ու անկախ Հայաստանի
ստեղծումով էր, որ հայ ազգը կարող էր
փրկուել ու լծուել խաղաղ ստեղծազործ աշ-
խատանքների եւ բերել իր լուման համա-
մարդկային քաղաքակրթութեան ու մշա-
կոյթի տաճարին։ Եւ նրանք, իրօք յափշտա-
կուած այդ իդէալով, զործի անցան։

Իսրայէլ Օրիի, Յովսէփ էմինի նման,
որոնք եւս այն համոզումն ունէին, որ իրենց

¹ Լէօ, «Յովսէփ կաթողիկոս Արդութեան»,
էջ 61—62 եւ 101—102։

ազգային իդէալին կարող են հասնել միայն հզօր Ռուսաստանի միջամտութեամբ ու օպնութեամբ։ Բայց այդքանով էլ խնդիրը չէր լուծւում վերջնականապէս եւ ամբողջութեամբ։ Նրանք շատ լաւ էին ըմբռնում, որ Հայաստանը ազատագրուելով, չի կարող յարատեւ գոյութիւն ունենալ, չըջապատաժ լինելով մահմեդական հոծ ազգարնակութեամբ ու մահմեդական մեծ պետութիւններով, որոնք պատրաստ էին ամէն վայրկեան վերջ տալու նրա անկախութեան։ Նրանք ուզում էին, որպէս զի Հայաստանը միշտ վայելէ հզօր Ռուսաստանի հովանաւորութիւնը եւ դրա մէջ էին տեսնում միակ երաշխիքը։

Մէր ներածութեան մէջ մենք արդէն տեսանք, որ իշխան Պօտենոմէլինի ժամանակ Հայաստանի ազատութեան եւ անկախութեան ծրագիրը, ներշնչուած նոյն Լազարեանի կողմից, հէնց այդ երկու հիմնական սկզբունքների վրայ էր դրուած։

Դժբախտաբար, շատ բան մեզ յայտնի չէ — զոնէ մէր ձեռքի տակ եղած աղբիւրների մէջ չկան տեղեկութիւններ Լազարեանի քաղաքական գործունէութեան մասին, բայց պատմութիւնը, բարեբախտաբար, պահպանէլ է մի շատ կարեւոր ու չափազանց ուշագրաւ լիաստաթուղթ, որ որոշ չափով լոյս է սփռում Լազարեանի այդ ուղղութեամբ ունեցած գործունէութեան վրայ, ինչպէս նաև որոշ գաղափար է տալիս Լազարեանի քա-

դաքական հայեացքների ու այն միջոցների մասին, որոնցով նա ուզում էր լուծել հայկական հարցի կնճիռը:

1780թ. յունուար 10ին Յովհաննէս Լազարեանը ներկայացնում է հոչակաւոր զօրավար Սուվորովին մի յուշագիր, որի մէջ հեղինակը նկարագրում է Արեւելեան Հայաստանի վիճակը եւ ապա ցոյց տալիս այն միջոցները, որոնցով կարելի է վերականգնել Հայաստանի անկախութիւնը:

Այդ յուշագիրը կրում է հետեւեալ վերաբերութիւնը.

«Յիշատակագիր պ. Յովհաննէս Լազարեանի՝ Հայաստանի ներկայ դրութեան եւ նրա վերականգնելու միջոցների մասին» :

Էջոն, օգտուելով ոռւս պատմիչ Բուտկովի «նիւրեր Կովկասի պատմութեան համար» հեղինակութիւնից, առաջ է բերում այդ «Յիշատակագրի» հայերէն թարգմանութիւնը իր «Յովհաննէս կաթողիկ. Արդութեան» գրքի մէջ (էջ 111—114) .

«Հայաստանը — դրում է Յովհաննէս Լազարեանը, — մի քանի դար է ինչ զրկուել է իր թագաւորից եւ առանձին կառավարութիւնից. շատ տեղերի տիրել են թուրքերն ու պարսիկները, իսկ մի փոքր մասը, այսինքն Ղարաբաղը, այժմ էլ մնում է անկախութեան մէջ: Բայց եթէ ազգից մի որ եւ է գլխաւոր դուրս գայ, շատ հեշտ միջոցով կարող է Հայաստանը նորից վերականգնել

Եւ մի կարձ միջոցում տեղի կ'ունենայ ժողովրդի մի ո՛չ փոքր հոսանք դէպի Հայաստան։ Բնութիւնից ամուր տեղերը բաւական լաւ միջոց կարող են դառնալ ինքնապաշտամանութեան համար։ Հողի յատկութիւնը եւ կլիման, առանց որ եւ է պակասութեան, կարող են տալ բոլոր հարկաւոր մթերքները, նոյն խոկ սեփական վառօդ, երկաթ եւ արճիճ էլ կարող են ունենալ։ Դարարադի մելիքները թէ եւ ոչոքից կախում չունեն, բայց իրանց անհամաձայնութեամբ պատճառ են դարձել, որ նրանց ոյժերը ջլատուել են։

«Բացի դրանից, այդ տիրողների տղիւտութիւնը բոլորովին անպէտք է դարձնում նրանց թէ իրանց եւ թէ ամբողջ ազգի համար։ Միւս տեղերի հայերը, լինելով պարսիկ խաների իշխանութեան տակ, հարստահարուած են եւ նրանց մեծ մասը փախել է Թիւրքիա։ Եթէ ժողովրդի ընտրութեամբ կամ բարձրագոյն (կայսերուհու) բարեհաճութեամբ ազգից մի գլխաւոր դուրս գար, առաջին անգամի համար բաւական կը լինէր, որ նա կարողանար հաստատուել Դերբենդում եւ նրան օգնութիւն տրուէր տիրելու Շամախուն եւ Փանձակին։ այն ժամանակ Դարարադից եւ Սղնախից, որոնք անկասկած կը միանան, բաւականաչափ զօրք հաւաքելով, կարող է երեւանն եւ ուրիշ քաղաքներ գրաւել։ Դրա համար հարկաւոր է երկու կամ երեք հազարից ո՛չ աւել զօրք երկու տա-

բուայ ընթացքում, մինչեւ որ այդ գլխաւորը կը գրաւէ Երեւանը. գրաւելուց յետոյ, հայ-կական զաւառների եկամուտներով առանց որ եւ է պակասութեան կարելի է պահել զօր-քերի մի մեծ քանակութիւն: . Բայց Հայոց գլխաւորը սկզբում պիտի ունենայ մի քիչ թնդանօթաձիղ եւ հետեւակ զօրք, որպէս զի կարողանայ պաշտպանուել եւ ապահով լի-նել, մինչեւ որ ազգային զօրքը կը սովորէ կանոնաւոր կրթութիւն եւ այնուհետեւ նա ինքը կարող կը լինի ամրացնել իր սահման-ները եւ պաշտպանուել Թիւրքիայի եւ Պարս-կաստանի յարձակումներից:

«Ելապիսի մի ձեռնարկութիւն կարող է կայսերական մի խօսքով եւ ամենահեշտ մի-ջոցով, առանց ամենափոքր կասկածի ան-գամ, զլուխ գալ եւ նրա (կայսերուհու) հո-վանաւորութեամբ մի կարճ միջոցում ո՛չ միայն կ'ամրապնդուի ի յաւիտենական փառս Ռուսաստանի, այլ եւ ապագայում կարող է ծառայել Թիւրքիան եւ Պարսկաստանը ձնչե-լու համար, որովհետեւ երբ հայ ժողո-վուրդը կը համախմբուի իր կառավարու-թեան իշխանութեան տակ եւ մի քիչ էլ կը սարածէ իր սահմանները, այն ժամանակ կը ստանայ աւելի մեծ եկամուտներ, քանի որ կ'ունենայ առատ բերքեր տուող շատ տե-ղեր եւ ընդ միշտ կը պահէ 15ից մինչեւ 20 հազար զօրք, իսկ թիւրքերի կամ Պարսկաս-տանի դէմ պատերազմ լինելու դէպում՝

ժամանակով կարող կը լինի գործածել մինչեւ վաթսուն հազար և աւել։ Բաց ի դրանից նոյն ազգը պարտաւորուել կարող է, հարկաւոր դէպքերում, Ռուսաստանին տալ զօրք այնքան, որքան կարող կը լինի իւրաքանչիւր ժամանակ, եւ միշտ երախտապարտ կը լինի Ռուսաստանին իր փրկութեան ու վերականգնման համար, իսկ թիւրքաց պետութիւնը ժամանակով այս փոփոխութիւնից առաջացած մեծ վնաս կը նկատէ թէ իր ժողովրդի և թէ իր եկամուտների մէջ»։

Անկախ եւ ազատ Հայաստանի այս ծրագիրը առանձին մեկնարանութիւնների կարօտը չունի. պարզ երեւում է, որ հեղինակը ջանացել է, մի կողմից, ցոյց տալ իր ոռուքարեկամներին եւ մասնաւորապէս զօրավար Սովորովին, որոնք միանգամայն անձանօթ են եղել մեր երկրին ու նրա պատմութեան հետ, թէ որքան շահաւէտ է Ռուսաստանի համար Հայաստանի ազատագրութիւնը, եւ, միւս կողմից, որ այդ գործը որ եւ է դժուարութիւն չի ներկայացնում. նա ո'չ մեծ ծախս է պահանջում եւ ոչ էլ զինուորական մեծ ոյժ, այլ բաւական է միայն կայսրուհու մի խօսքը, որպէս զի ձեռնարկը հեշտութեամբ ի կատար ածուի եւ այն էլ մի շատ կարճ ժամանակամիջոցում . . . :

Այս ծրագրի մանրամասն քննազատութեան էլ կարիք չկայ, քանզի նա կազմուած է մի վեհ նպատակով, որն ինքնին արդարաց-

նում է հեղինակի բոլոր դատողութիւնները, անկախ նրանից, թէ այդ դատողութիւնները որքան են համապատասխանում իրականութեան եւ թէ որքան գործադրելի են:

Այսու հանդերձ այս «Յիշատակադիրը» նշանաւոր է նաև այն տեսակէտից, որ աղերսանիքի բնոյթ չի կրում, որ նրա հեղինակը ջանացել է շահազրուել Ռուսաստանին իր ծրագրի գործադրութեան մէջ: Այս կողմից Լազարեանը հետեւել է աւելի իսրայէլ Օրիի մեթոդին, քան Սիմէօն ու Ղուկաս կաթողիկոսներին, որոնց գիմումները մի-մի աղերսագիր են եղել:

**

Յովհաննէս Լազարեանի ջանքերն էլ Ռուսաստանի օդնութեամբ փրկել իր աղջը, ստեղծել ազատ եւ անկախ Հայաստան Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ յաջողութիւն չունեցան . . . : Եւ, ի հարկէ, նրա մեղքը չէր, նրա ժամանակակից Ռուսաստանը (ինչպէս վերը նկատել էինք), իր սոցիալ-քաղաքական պայմանների մէջ, դեռ ևս այն հզօր Ռուսաստանը չէր, որ ի վիճակի լինէր նուաճել Արեւելքը:

Պետրոս Մեծի սկսած ներքին բարենորոգութիւնները դեռ վերջացած չէին. դեռ շատ անելիքներ կային ստեղծելու համար մի հզօր պետութիւն: Բաց ի այդ Եկատերինա Բ.ի օրով Ռուսաստանի արտաքին քաղաքական յարաբերութիւնները չափազանց բարդացել

Էին ու խճճուել։ Ահաստանի բաժանումները՝ 1773, 1793 և 1795 թ., Ֆրանսիական Մեծ յեղափոխութեան բռնկումը եւ նրա հետեւանքով առաջ եկած բէակցիոն տրամադութիւնները միապետական Երկիրներում, Ռուս-տաճկական Երկու պատերազմները՝ 1768—1774 թթ. և 1787—1791 թթ., Շվեդական պատերազմը՝ 1788—1790 թթ., իսկ ներքին կեանքում՝ 1771 թ. Ժանտախուը իր յարակից ժողովրդական ըմբոստութիւններով, այնուհետեւ Պուդաչեւի ապատամբութիւնը 1773 թ., Վերջապէս իշխան Պօտենմկինի մահը 1791 թ., որ հայ ժողովրդի ազատագրութեան պաշտպանն էր, — այս ամէնը ստեղծեցին այնպիսի մի ծանր կացութիւն, որ Լազարեանի ծրագրի իրադորձումը անհնարին դարձրեց։

Մի խօսքով 18րդ դարում կատարուած ազատագրական քայլերը՝ Իսրայէլ Օրիի, Յովսէփի Էմինի, Լազարեանի կողմից ժամանակակրէպ ձեռնարկներ էին, ներշնչուած, մի կողմից նրանց հեղինակների վառ ու անկեղծ հայրենասիրական զգացումներից ու լաւատեսութիւնից, իսկ միւս կողմից՝ այն անլուր տառապանքներից, որոնց ենթակայ էր իրենց «իսեղմ» ազգը . . . :

Բայց եթէ հայ ազատագրութեան այդ սահմանական չհասան գործնահետեւանքների, չտեսան իրենց աչքերով հայի ազատութիւնը, այնուամենայնիւ միանդամայն ա-

պարզիւն չանցանց նրանց ջանքերն ու փորձերը. նրանց ձեռնարկների բարոյական ու պատմական արժեքը շատ մեծ եղաւ:

Ո՞վ գիտէ, եթէ այդ անձնուէր, Փանատիկոս-Հայրենասէրների թափած ազատագրական ջանքերը տեղի ունեցած չլինէին, եթէ նրանց հայ ժողովրդին ներշնչած վառ յոյսերն ու հաւատը լաւագոյն ապագայի չլինէին, ո՞վ գիտէ, թերեւս, հայ ժողովուրդը իր անհուն տառապանքների մէջ կորցնէր իր դիմագրական ոյժը, մատնուէր յոսեանսութեան ու վհատութեան եւ Փիղիքապէս ու բարոյապէս քայքայուէր, լքուէր ու փչանար . . . :

Հայաստանի մոսցլ երկնակամարի վրայ ժամանակ առ ժամանակ երեւացող այդ փայլուն աստղերն են եղել, որ լուսաւորել են հայ ժողովրդի գժուարին ճամբան գէպի իր ազատագրութիւնը եւ միշտ վառ պահել լաւագոյն ապագայի յոյսերը²:

² «Յովոէփ Արդութեանի գործողութիւնները — սուսմ է եր. Շահազիզը — երջանկայիշատակ Եկատերինէ Կայուրուհու բարեհամ ու շաղրութիւնը ոէ էպի Հայոց ազգը, իշխան Պոտենոմկինի գիտաւորութիւնները Հայաստանի վերաբերութեամբ քաղցր յոյսեր էին զարթեցնում Հայերի մէջ Հեռաւոր Հնդկաստանում եւ ստիպում էին նոցա սրտերը եւս բարախելու ընդհանուր հայրենեաց սիրով եւ պատրաստում են նորա շահերի համար նուիրելու իրենց ունեցած-չունեցածը: Հնդկարնակ Շամիր աղա Շահրիմանեանը իր անբաւուկիներով մտածում է զնել Հայաստանը Օսմանցւոց եւ Պարսից ձեռքից. Հնդկարնակ Ամիր խանը դարձեալ նոյն նողատակին Համնելու Համար առաջարկում է իր ոսկիները երջանկայիշատակ Նիկողայոս կայսեր,

Եւ նրանց անունները գրուած են Հայոց պատմութեան մէջ ոսկի տառերով ու մնում են յաւերժ յիշատակելի:

Նրանց ձեռնարկները եղան մի-մի օղակ հայի աղատատենչ ձգտումների ոսկէշղթայի մէջ, որի մի ծայրը գտնում է անհուն ժամանակներում, իսկ միւսը հասել է մինչեւ մեր օրերը . . . :

Փա՛ռք այդ օղակների դարրնողներին . . .

ՅԱԻԵԼՈՒՄԾ

ՅԱՎԱՐԱՆՆԵՍ ԼԱԶԱՐԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ՈՒԹՈՒԱԳԾԽԻՆ

Յիշատակենք նաև մի երկու պատմական վաւերագրեր Յովհաննէս Լազարեանի աղղային հասարակական դործունէութեան վերաբերեալ:

Այդ վաւերագրերը ուշագրաւ են եւ արժէքաւոր ո՛չ միայն, որպէս երեւոյթներ նրա յիշեալ դործունէութիւնից, այլ և նրա համար, որ գրուած են եղել այն ժամանակ, երբ նա ծանր հիւանդ, գրեթէ մերձ ի մահ վիճակում է եղել . . . : Ասել է թէ մինչեւ իր վերջին շունչը փչելը չի դադարել հետաքրքրուել աղղային դործերով եւ իր հնարաւորն անել յօդուտ իր սիրեցեալ աղղի:

Ար եթէ նա չկամենայ իւր զէնքը դործ զնել, իւր փողք բարեհաճի զնել Այրաբատեան աշխարհը Պարսից ձեռքից»: Տե՛ս Եր. Շահազիզ — «Մերտիչ Յովսէփեան կմին», էջ 10—11:

Այդ վաւերագրերը բերուած են Գիւտ քահ. Աղանեանցի «Դիւան Հայոց Պատմութեան» մէջ (Գիրք Ա.—Բ., էջ 103—106) և վերաբերում են Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսական վէճին:

Առաջին վաւերագիր

«Յովհաննէս աղայ Լազրով գրում է Եփրեմ Էպիսկոպոսին.

«Պարոն Կնորինդն եկաւ աստ. թէպէտ յառաջ ոչ էի ծանօթ ընդ նմա, իսկ ի գալն նորա բարեկամացայ ընդ իւրն եւ ունէաք բազում խօսակցութիւն ի վերայ ընտրութեան կաթուղիկոսին եւ Գրիգոր վարդապետին, եւ ի յայտ եղեւ որ Գրիգոր վարդապետն հնարագիտութեամբ իւրով բոլորովին այլապէս է հասկացուցեալ նմա զամենայն բանն. եւ յորժամ ունկնդիր եղեւ զիս՝ իսկոյն փոշիմանեաց զհաւատալոյն իւրոյ բանից նորա. եւ խոստացաւ ըստ ամենայնի հետեւել ճշմարտութեան: — Վասն ընտրութեան եւ հաստատութեան Դաւիթ կաթուղիկոսին՝ եցոյց նա զիր ստացեալ Ստամբոլուի Տամարէն, որ զեկուցանէ զնա, թէ վասն հաստատութեան Դաւիթ կաթուղիկոսին Փերմանին ի Սուլթանէն եւ հաւանութեան մահսարք ի բոլոր ազգէն ջանայ փութով ի զուրս հանել. ահա՛ տեսանեմք որ յորժամ մեծի կայսերն մերում ասացեալ են վասն կտակի հանդուցելոյն է օգուտ եւ հարկաւոր

վասն աղքի, հաճեալ է զի լինիցի այնոլէս...
միայն ես որքան կարող եմ, հետեւիմ դար-
ձուցանել զմիսս մեծամեծաց ի կողմն ճշմար-
տութեան: Իսկ եթէ իւիք կերպիւ Գրիգոր
վարդապետն կարացաւ կացուցանել ինքեան
աստ առաջնորդ ընդգէմ ցանկութեան բոլոր
ազգին եւայլն: 1801 9 օգոստոս ի Ս. Բ. :»

Երկրորդ վաւերագիր

Այս վաւերագիրը ունի, հետեւեալ նա-
խաբանը, որից յետոյ բերուած է Յովհան-
նէս Լազարեանի նամակը իր երկու եղբայր-
ներին՝ Մինաս և Յովակիմ Լազարեաններին:

«...Այլ այսոցիկ ամենայն վերոյգրեալ
Եղելութեանց համբաւք¹ հասեալ ի Ռու-
սաստան առ տէրութիւնն, մանաւանդ զիր
եւ կոնդակ Դաւթի, եւ ընդգէմ նորին աղա-
զակ միաբանիցն իջմիածնի եւ գրութիւնք
բողոքանացն Դանիէլի ի Սանկտ Պետեր-
բուրգն թագաւորանիստ եւ ի Մօսկով առ
պերճափառ հարազատսն երեսին Յովհաննէս,
Մինաս և Յովակիմ վեհազնեայ աղայսն
Եղիազարեան, որոց մեծ եղբայր Աղայ Յով-
հաննէս վեհազն իշխան գտանելով անդ ի
Սանկտ Պ² ծանուցանէ ի գուռն Կայսեր եւ
ամենայն իշխանաւորացն տէրութեան զա-
նարժան արարան Դաւթի եւ Գրիգորի Աղքեր-
մանցւոյ, զտարագրութենէն Դանիէլի եւ

² Լուրեր Դաւթիթ-Դանիէլեան կաթողիկոսների
վէճի մասին, հետազայ տողորում պարզուամ է, թէ
ոյզ «Համբաւք» ինչ զէպքերի մասին էին:

զտառապահաց միարանիցն . եւ գայլ ինչ ինչ
հարկաւորաց ոյր սակա եւ ի քաղաքէ անտի
զրէ ի Մօսկով առ երկոսին հարազատոն իւր՝
հոգ տանել ընդ նուիրակ եւ առաջնորդ
Եփրեմ արքեպիսկոպոսին ի գալ անդր ի
Մօսկով Ալէքսանդր Պավլովիչ կայսերն յօ-
ծումն թաղընկալութեան եւ զիրաւունոն ի
լոյս հանել : Զի գոլով ինքն ի ծերութեան եւ
անձամբ իսկ տկար ի մահիմի , անկար էր ա-
մենայնի անձամբ լինել հողացող . այլ միայն
ի Ս . Պ . հոգացաւ զհարկաւորսն կանխառ-
այս օրինակ .

«Աղաղարեան Մինաս և Յովակիմ

Սիրեցեալ եղբարք իմ :

«Յուսամ որ սրբազան Եփրեմ արքեպիս-
կոպոսն ժամանեալ իցէ ի Մօսկով՝ ասել
նմա , որ նորին Կայսերական Մեծութիւնն
հաստատեալ է ըստ ըղձի ազգին . եւ գրէ իսկ
ի մեծն Պոլիս առ Թամարով զեսպանն , զի
մի թողցէ հանել Փէրման վասն Դաւթին , թէ
հանեալ եւս իցէ՝ փոխարկել : Եւ այժմ
պարտ է սրբազանին Դանիիլի խմացումն առ-
նել՝ որ այսուհետեւ դնմանէ է կախեալ
պատրիարքական իշխանութիւնն :

«Նաեւ հրաման է Երեւանու խանին մի
բնաւ ձեռնամուխ լինել արդելման ի յառաջ
մատչումն Դանիիլին . զի նմա ոչինչ գոյ
գործ : Իսկ Եփրեմ արքեպիսկոպոսն հա-

տատեալ է լինել առաջնորդ Հայոցս Ռուսաստանու . ուրեմն խնդրեմ ի ձենջ՝ որ յամենայն գործառնութիւնս եւ յամենայն պատահմունս նպաստ եւ ձեռնտու լինիք դորին սրբազնութեան կացուցանելով զգա առաջի նորին բարձր Սրբազնութեան տեառն Ամբրոսիոսի միտրապօլիտին, նաեւ Տրօչինցկոյն, Էնարալ պրօքօրօրին կնեազ Ալէքսէյ Պօրփոփիչ Գուրագինին, եւ այլոց ում եւ պատկանի . որ եւ մնամ բարեաց ձերոց եւ բոլոր ազգին² խմոյ բաղձացող խոնարհ Եղբայր ձեր

Յովհաննէս Աղազարեան :

1801 սեպտ . 6 :

Ի Մ . Պ . : »

Այս նամակի ամսաթուից երեւում է, որ նամակը գրուած է կոմս Յովհաննէս Լազարեանցի կողմից նրա մահուանից մի ամիս 18 օր առաջ . նա վախճանուել է յաջորդ ամսին՝ հոկտեմբեր 24ին :

*

Նա իր ծանր մահամերձ վիճակում չի դադարում կարգադրելու աղքային գործերը, չի մոռանում նոյն իսկ իր մասնաւոր նամակում իր լաւագոյն բարեմաղթութիւններն անելու ազգին . . . :

² Բնդծումը մերն է :



Մինաս Լ. Լազարեանց

Գլուխ գ.

ՄԻՆԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ ՂԱԶԱՐԵԱՆՑ

(1737—1809)

Մինաս Լազարեանը ցեղապետ Ղազար
Նազարեան Լազարեանցի երկրորդ որդին էր,
ծնուած Ն. Զուղայում 1737թ. և հօր ու
միւս երեք եղբայրների հետ տեղափոխուած
Ռուսաստան վոքր հասակում :

Կենսագրական տեղեկութիւնները շատ
պակասաւոր են :

Մ. Մսերեանցն անդամ նրա կենսագրա-
կանին նուիրել է ընդամէնը մի էջ, իսկ
Պրոֆ. Ա. Զինովեև՝ 10 տող . . . :

Բայ ընդունուած սովորութեան Մինաս
Լազարեանն եւս մտնում է պետական ծա-
ռայութեան մէջ, որը, ըստ Երեւոյթին, չի
բաւարարել նրան բարոյապէս եւ անհամա-
պատասխան է եղել նրա հեզ ընաւորութեան,
ուստի Պալատական Խորհրդականի (Նադ-
գորնի սովետնիկ) աստիճանին հասնելով,
թողնում է ծառայութիւնը ու նուիրուում ազ-
գային հասարակական ու բարեգործական
աշխատանքների :

Մինաս Լազարեանի պետական ծառայու-
թիւնից յայտնի է, որ սուս-տաճկական
երկրորդ պատերազմի ժամանակ եղել է իշ-
խան Պօտեռմկինի քաղաքական գործերի
խորհրդատուն, իր մեծ եղբօրից յետոյ :

1800 և 1806 թթ. Մոսկուայի Ս. Խաչ
եկեղեցու բակում կառուցել է երկու քարա-

շէն եւ երկու փայտաշէն տներ, իսկ 1815թ., նրա մահից յետոյ, բայց նրա ծախսով, նրա Եղբայր Յովակիմը, աւելացնելով որոշ դումար, կառուցում է մի փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցի Ս. Յարութիւն Քրիստոսի անունով Հայոց Վագանկովսկի հանգստարանում, իսկ այդ եկեղեցու կողքին փայտաշէն տուն Գերեզմանատան պահապանների եւ գերեզմանատուն եկող յուղարկաւորների հանգստեան համար:

Մ. Մաերեանցը հետեւեալ կարճ խօսքերով է բնութագրում Մինաս Լազարեանին. «Սա զառաջինն ի ծառայութեան կայր յԱրքունի. զՊալատական խորհրդականի ունելով զաստիճան։ Կամակա՛ր ապա հրաժեշտ ի պաշտամանէն տուեալ, եւ ամենայնիւ գործոց բարեպաշտութեան զանձն նուիրեալ մինչ ցվախճան իւր, անուն ժառանգեաց արժանապէս զառն բարելաւի՝ իմաստնոյ եւ հայրենասիրի. զի (որպէս եւ ականատեսացն վկայեն բանք) զամենայն աւուրս իւր նշանաւորս կացոյց նա՝ յօդուտ ազգին եւ հայրենեացն անխոնջ վաստակեալ, եւ յոլով կրեալ աշխատութիւն ի դէպս կարեւորագոյն զործոց քաղաքայնոց եւ եկեղեցականաց, մանաւանդ ի բնակեցուցանելն ի Ռուսաստան զմերազգեայ ժողովուրդս» (էջ 18):

Մոսկուայի Փրեսնեա թաղամասի Ս. Աստուածածին Հայոց եկեղեցուց, կառուցուած գեռ 17րդ դարում, փոխադրում է իր

Հանդուցեալ աղդականների մարմինները և
ամփոփում վագանկովսկի Հայոց գերեզմա-
նատանը :

Այսուհետեւ Ա. Երիցեանն է, որ իր մի
շարք պատմական ուսումնասիրութիւնների
մէջ տալիս է մեզ թանկագին տեղեկութիւն-
ներ Մինաս Լազարեանի ազգային հասարա-
կական գործունէութեան մասին։ Այդ տե-
ղեկութիւններից երեւում է, որ Մ. Մսե-
րեանցի վերոյիշեալ խօսքերը, թէ «յօգուտ
ազգին և Հայրենեացն անխոնջ վաստակեալ»
որ եւ է չափազանցութիւն չեն պարունա-
կում կամ սին գովասանք չէ, եւ որ Մինաս
Լազարեանը, իրօք, չառ գործօն մասնակ-
ցութիւն է ունեցել իր ժամանակի ազգային,
մասնաւորապէս եկեղեցական գործերում։

Խօսքը տալիս ենք Ա. Երիցեանին։

«Դեռ նոր էր սկսւում Դաւիթ-Դանիէ-
լեան կոխուը երբ 1801 թ. Հոկտեմբերին
վախճանուեց Լազարեանց աւագ եղբայր
Յովհաննէսը, — նա որ այնքան նպաստեց
Արդութեանց Յովսէփի կաթուղիկոսանա-
լուն։ Վախճանուածին յաջորդեցին Մինաս
և Յովակիմ Եղբայրներն եւ նոյնքան եռան-
դով խառնուեցին ազգային գործերում։
Յայտնի է, որ սկզբում, երբ Յովսէփի եւ

¹ Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսների վէճը տեղի է ունեցել 1801—1807 թթ. եւ տեւելով ամբողջ վեց տարի մեծամեծ վնասներ է տուել — բարոյական ու նիւթական — էջմիածնին եւ ազգային ընդհանուր շա-
հերին։

Դանիէլի մէջ վիճակ պիտի ընկնէր՝ թէ նոցանից ո՞վ լինի կաթուղիկոս, Լազարեանք Յովսէփին կամեցան եւ Դանիէլին աքսոր ուղարկել տալով՝ յաղթանակ տարան յօդուտ Արդութեանի։ Բայց Յովսէփի վախճանուելուց յետոյ, երբ ազգը կրկին անդամ ընտրեց Դանիէլին, Լազարեանք ո՛չ միայն սորա ջերմ կուսակիցք դարձան, այլ եւ կայսերական հրովարտակով հաստատել տուին կաթողիկոսական աստիճանում»։

Դաւիթ - Դանիէլեան վէճը չափազանց ծանր տպաւորութիւն է թողնում Լազարեան եղբայրների վրայ։ Սրանք չափազանց մտահոգուած Ա. Էջմիածնում տիրող ծանր դրութիւնով, խորհում են, թէ ի՞նչ միջոցներով հնարաւոր է Էջմիածնի կեանքը բարելաւել ու դնել հաստատուն, օրէնքով որոշուած հիմունքների վրայ։ Այս մասին Երիցեանը պատմում է հետեւեալը.

«Վշտանում էր մայրաքաղաքում նստած ազգասէր եղբարց սիրոր, երբ նոցա ականչին էին հասնում Էջմիածնում կատարուող տիսուր ու խայտառակ անցքերի համբաները։ Լազարեաններն այդ բոլորը վերադրում էին Էջմիածնում կարգ ու կանոն չլինելուն, որից, ի հարկէ, օգուտ էին քաղում վանքի անզուսպ միարանները։ Հետեւարար նոքա այն համոզմունքին էին գալիս, որ եթէ Հայոց հոգեւորականութիւնը մի հաստատվարչական կանոնադրութիւն ունենայ, վերջ

կը դրուի բաղդախնդիրների կամայականութեանցը։ Միւս կողմից՝ համեմատելով Հայոց հոգեւոր բարձրագոյն վարչութեան անմիտար դրութիւնը ոռւսաց Եկեղեցւոյ վարչական կազմակերպութեան հետ, որի Մինուդը կարողանում է խաղաղութեամբ կառավարել իւր բազմաթիւ հօտը, Լազարեանք կարծում էին, թէ անհրաժեշտ է մի սինոդական կառավարութիւն հաստատել եւ այս մտքի ի կատար ածելն առաջարկում էին Դանիէլ կաթողիկոսին։

«Մինաս Լազարեանցը իւր այս ցանկութեան մասին 1805 թուին գրեց Հաշտարխան — Եփրեմին, եւ Թիֆլիս — Յովհաննէս Գեղարժակրին, առաջարկելով սոցա, որ համոզեն Դանիէլ կաթողիկոսին, որպէս զի Էջմիածնում մի սինոդապարան հաստատէ եւ իւր նախագահութեամբ ու որոշ կանոններով կառավարէ Եկեղեցւոյ վարչական գործերը²»։

Երիցեանը այնուհետեւ հազորդում է, որ կաթողիկոսը ընդառաջեց Մինաս Լազարեանի առաջարկին եւ համապատասխան դիմում կատարեց ոռւսաց կառավարութեան, բայց վերջինս հրաժարուեց ընթացք տալ այդ դիմումին պատճառարանելով, որ Էջմիածինը գտնուում է Պարսից տիրապետութեան ներքոյ եւ ոռւս կառավարութիւնը չի կարող

² Ա. Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 264—267. ու նաեւ նոյն հեղինակի՝ «Ներսէս եպիսկոպոս Դանիէլ կաթողիկոսի ժամանակ», էջ 9:

մի օտար պետութեան ներքին գործերին մի-
ջամտել:

Ինչպէս յայտնի է, Մինաս Լաղարեանի
այդ մտայնացումը 31 տարուց յետոյ իրա-
կանութիւն ստացաւ:

1828—1829 թթ. ռուս-պարսկական պա-
տերազմի յաջող վախճանից յետոյ, Երբ ամ-
բողջ Արարատեան աշխարհը «Հայոց նա-
հանգ» անուան տակ կազմեց Ռուսաստանի
մի մասը, նոյն մտքին եկաւ նաև Պասկեւիչը,
բայց, ի հարկէ, բոլորովին տարրեր շար-
ժառիթներից մղուած: Նա խնդիրը անմի-
ջապէս դրեց գործնական գետնի վրայ: Եր-
կար բանակցութիւններից յետոյ կենտրոնա-
կան իշխանութեան հետ, ի վերջոյ մշակուեց
մի կանոնագիր, որը կայսեր հաւանութիւնը
ստացաւ եւ ապա կայսեր յատուկ հրովար-
տակով այդ կանոնագիրը գործադրութեան
մէջ դրուեց. դա՝ համբաւաւոր 1836 թ. «Պօ-
լոմէնիէն» էր. որի մասին խօսեցանք արդէն:

Երիցեանը իր մի այլ աշխատասիրութեան
մէջ՝ «Նիւքեր ներսէս Ե.ի կենսագրութեան
համար» պատմում է, որ Մինաս Լաղարեանը
եղել է մշտական սերտ յարաբերութիւնների
մէջ Ս. Էջմիածնի հետ՝ թէ կաթողիկոսի եւ
թէ միաբաններից ոմանց հետ: Նա յիշատա-
կում է մի շարք նամակներ, որոնք դրուած
են եղել ներսէս Աշտարակեցու կողմից, նրա
դեռ արեղայ եւ վարդապետ եղած ժամանա-
կաշրջանում (1794, 1800—1808 թթ.) աղա

Մինաս Լազարեանին եւ վերջինից ստացած պատասխանները։ Երիցեանը առաջ է բերում նաև այդ նամակների բովանդակութիւնը։ Այդ նամակները արժէքաւոր են ոչ միայն նրա համար, որ լոյս են սփոռում մեր եկեղեցական կարգերի վրայ, այլ եւ վկայում են, թէ որպիսի՞ մեծ ջերմեռանդութեամբ աղա Մինասը նուիրուած է եղել իր ազգին եւ ազգային եկեղեցուն։

Երիցեանը իր «Ներսէս եպիսկոպոսը Դանիէլ կաթողիկոսի ժամանակ» գրքոյկում հաղորդում է մի ուրիշ փաստ եւս.

«... Դանիէլ կաթողիկոսը դեռ եւս օգոստոս ամսախն դարձաւ ուռւաց կայսեր՝ խընդրելով Եփրեմի կաթողիկոսացնելու մասին։ Կաթողիկոսի նամակը կայսերական դրանը հասցնողն եղաւ աղա Մինաս Լազարեանը, վերջինս իւր կողմից եւս միեւնոյն մտքի մի խնդրագիր ներկայացրեց արքային։»

Յայտնի է, որ այդ դիմումները անհետեւանք չմնացին եւ որ Դանիէլ կաթողիկոսի մահից յետոյ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Եփրեմը՝ կաթողիկոս ընտրուեց։

Երիցեանը իր «Կովկասահայք»ի Բ. հատորի մէջ հետեւեալ դնահատանքն է տալիս ընդհանրապէս Լազարեաններին ու նրանց ազգանուէր գործունէութեան։

«Գուցէ ո՞չ Արդութեանց Յովսէփ արհին, ո՞չ Դանիէլը եւ ոչ իսկ Եփրեմը երբեք

Հստանային Ռուսիոյ կայսրից իւրեանց կաթողիկոսական հաստատութեանց հրովարտակները, եթէ այնքան ջանք գործ չդնէին Լազարեան Յովհաննէս, Մինաս եւ Յովակիմ Եղբայրները։ Այս պաշազատ ու մեծատուն անձինք կշիռ եւ նշանակութիւն ունէին Ռուսական Արքունեաց առաջ, եւ սիրելի լինելով մայրաքաղաքների մեծամեծաց աչքում, միշտ լսելի էին անում իւրեանց ձայնը Հայոց վերաբերեալ խնդիրներում։

«Նոքա ջերմ եւ անկեղծ սիրում էին իւրեանց մայրենի եկեղեցին եւ ազգը, եւ հաւատարմութեամբ պաշտպանելով ազգիս շահները, նիւթապէս եւ բարոյապէս նախանձախնդիր էին Հայոց յառաջաղիմութեանը։ Մահմեդական բռնակալութեան տակ ճնշուող հայերի աչքերը դարձած էին առ Լազարեան Եղբայրները, որոնք նոցա համար մի լուսատու աստղ էին հեռաւոր հիւսիսում։ Աիմէոն եւ Ղուկաս կաթողիկոսների ժամանակներից Լազարեանց կայսերական դրան առաջ Հայոց հայրապետի «Վլէֆիլ» (հաւատարմատարն) էին ճանաչուած եւ սոցա օգնութեանն էին դիմում, ով որ եւ է ակնկալութիւն ունէր Ռուսիոյ տէրութիւնից։ Այս վեհանձն եւ ազգասէր Եղբարց բազմամիւղ դրագրութիւնները կուտակուած են Մոսկուայի Լազարեան Ճեմարանի մատենադարանում, որոնք մի օր լոյս աշխարհ գալով, պիտի

լուսարանեն նոցա բազմակողմանի գործունէութիւնը յօդուտ իւրեանց ազգի³ :

* * \

Մինաս Լազարեանը անգաւակ վախճանուել է 72 տարեկան հասակում՝ 1809 թ. յունուար 18ին. թաղուել է Ս. Պետերբուրգի Հայոց հանգստարանում և ունի հետեւեալ պարզ տապանագիրը.

«Յայսմ վայրի հանգչին ոսկերք առն բարեպաշտի՝ խորհրդականի Արքունի դրան Մինասայ Լազարեան Լազարեանց, ծնելոյ ի Զուղայ, եւ փոխելոյ ի յաւիտենական կեանս ի հասակի եօթանասուն երկուց ամաց՝ ի 18 յունուարի 1809 ամի» :

ԽԱԶԱՏՈՒՐ ԴԱԶԱԲ ԵԱՆ ԼԱԶԱԲ ԵԱՆՑ
(1741—1774)

Յեղապետ Խօջա Ղազար Նազարեան Լազարեանցի երրորդ որդին էր Խաչատուր Լազարեանը. ծնուել է Ն. Զուղայում 1741 թ. դեկտեմբեր 12ին:

Սա չի ունեցել աչքի զարնող ազգային հասարակական գործունէութիւն, մանաւանդ որ վախճանուել է շատ վաղ՝ 32 տարեկան հասակում :

Խաչատուր Լազարեանի ամենամեծ գործը, որով անմահ յիշատակ է թողել եւ

³ ՏԵ՛Ա Հ. Բ., էջ 264—265:

որին ինքն էլ զոհ գնաց, դա՝ Մոսկուայի Հայոց վերացման Ս. Խաչի քարաշէն Եկեղեցու կառուցումն է իր սեփական նիւթական միջոցներով։ Այդ Եկեղեցին մինչեւ այսօր էլ կանգուն է և Մոսկուայի հայ համայնքի կրօնական կարիքներին է բաւարարում։ Դանւում է Հայոց փողոցում, Լազարեան ձեմարանի դէմ-դիմաց։

Եկեղեցու կառուցումը աւարտուել է 1779 թուին. նրա շինութեան աշխատանքներին Խաչատուր Ղազարեանցը անձամբ հսկելիս է եղել, որի ժամանակ էլ ցրտառութիւն է ունենում, հիւանդանում է ու վախճանուում, առանց տեսնելու Եկեղեցու շինութեան աւարտումը, — 1774 թ. Յունիս 11ին։ Թաղուած է Մոսկուայի Հայոց Վազանկովսկի Գերեզմանատանը։

Տապանագիրն է.

«Յանդիման վիմիս ամփոփեալ կան ոսկերք Աղնուատոհմիկ առն՝ Խաչատրոյ Ղազարեան Ղազարեանց, որ ծնեալ ի Նոր Զուղաց մերձ յԱսպահան յամի 1741, ի 12 դեկտեմբերի, փոխեցաւ ի կեանսն յաւիտենից ի 11 յունիսի 1774 ամի, ի Մոսկով»։

ԳԼՈՒԽ Դ.

ՅԱՎԱԿԻՄ ՂԱԶԱՐԵԱՆ ՂԱԶԱՐԵԱՆՑ

(1743—1826)

ՅԵղապետ Խօջա Ղազարի չորրորդ՝
կրտսեր որդին էր Յովակիմ Ղազարեանը. նա
ծնուել է Ն. Զուղայում 1743 թ. սեպտեմ-
բեր 5ին:

Ղազարեան մհծահամբաւ տոհմի առա-
ջին եւ երկրորդ սերունդի բոլոր անդամների
կեանքի ու գործունէութեան մասին տեղե-
կութիւնները, ցաւօք սրտի, չափազանց պա-
կասաւոր են, մինչդեռ կարելի էր սպասել,
որ նրանց երկու կենսազիրները՝ Մ. Մսե-
րեանցն ու Պրոֆ. Ալ. Զինովեւը, որոնք
իրենց աշխատութիւնները գրել են 1856 եւ
1863 թթ. այսինքն՝ երբ դեռ կենդանի էին
տոհմի երկու նշանաւոր ներկայացուցիչ-
ները՝ Յովհաննէս եւ Խաչատուր Յովակի-
մեան Ղազարեանները, երբ ողջ էին նաեւ շա-
տերը նրանց ժամանակակիցներից, երբ դեռ
թարմ էին յիշողութիւնները, կը տային
աւելի հարուստ եւ աւելի արժէքաւոր տե-
ղեկութիւններ նրանց մասին, բայց իրակա-
նին մէջ այդպէս չէ. երկուսն էլ շատ հա-
կիրճ եւ նոյն իսկ շատ ժլատ են....:

Մեզ օգնութեան է գալիս կրկին Ալ-
երիցեանը իր մի շարք ուսումնասիրական
պատմական մեծարժէք դործերով, որոնց
մէջ ցրուած են արժէքաւոր տեղեկութիւններ
Լազարեանների մասին:

Յովակիմ Ղազարեան Լազարեանցը ու-
նեցել է թէ պետական եւ թէ ազգային հա-
սարակական բեղուն գործունէութիւն, սա-
կայն նրա մեծագոյն գործն եղել է ամենից
առաջ ի կատար ածել իր մեծ եղրօր՝ կոմս
Յովհաննէս Ղազարեանցի կտակը՝ հիմնել
Մոսկուայում հայ չքաւոր մանուկների հա-
մար Հայոց դպրոց, հանդուցեալի թողած
200.000 ռուբլի դրամագլխով:

Եւ արդարեւ, Յովակիմ Ղազարեանի
ամբողջ կեանքը կապուած է եղել այդ
դպրոցի՝ Ղազարեան ձեմարանի հիմնադրու-
թեան նախապատրաստական եւ կառուցման
աշխատանքների, նրա կրթական գործի լա-
ւագոյն կազմակերպութեան, նրա նիւթական
ապահովութեան եւ իրաւական վիճակի բա-
րեկարգման մեծամեծ ու տանջող հոգսերի
հետ: Ձեմարանի առաջին տասնամեակի
պատմութիւնը՝ պատմութիւնն է աղա Յո-
վակիմի թափած ջանքերի, նրա բարոյական
ու նիւթական զոհաբերութիւնների: Նա եղել
է կառավարութիւնից հաստատուած ձեմա-
րանի առաջին հոգաբարձուն եւ de facto
նաեւ նրա առաջին վերատեսուչ (Դիրեկ-
տորը):

Նրա պետական ծառայութեան մասին
գրեթէ ոչինչ չգիտենք. գիտենք, որ Մոս-
կուայի նահանգի ոռու ազնուականութիւնը
ընդունել է նրան իր շարքերի մէջ 1792 թ.
որ ստացել է 1812 թ. Հայրենական պատե-
րազմի առթիւ կայսերական հրովարտակով
սահմանուած Ասկեղղնձեայ Շքաղբամ Վլա-
գիմիրեան ժապաւէնով. որ 1816 թ. ստա-
ցել է Ասպետական շքանչան Հրամանատար
Կարգի Ա. Յովհաննու Երուսաղէմացւոյ:

Աղա Յովհակիմը ունեցել է Տուլա քա-
ղաքից 45 վերստ հեռաւորութեան վրայ կա-
լուած՝ Պոկրովսկիոյէ գիւղը:

Այս կալուածում Յովհակիմ Լազարեանը
1787 թ. ընդունել է Եկատերինա Բ. կայսրու-
հուն իր մեծ շքախմբով, բաղկացած 21 երկ-
սեռ հոգուց, երր մեկնելիս է եղել այցելու-
թիւն տալու նորանուած Նոր Ռուսիային՝
Խերսօն քաղաքին ու Ղրիմին: Աղա Յովհ-
ակիմը ընդունել է կայսրուհուն մեծ պատիւ-
ներով, սրտագին ու շքեղ հիւրասիրու-
թեամբ: Կայսրուհին մնացել է Երկու օր,
հանգստացել եւ ապա շարունակել իր ճամ-
բորդութիւնը: Եկատերինան եւ նրա շքա-
խումբը մնացել են այնքան գոհ հիւրասի-
րութիւնից, որ կայսրուհին նուիրել է նրան՝
«մատանի մեծագին եւ տուփ պնչաղեղոյ
աղամանդեայս», հաղորդում է Մ. Մու-
րեանցը:



Յովակիմ Լազարեանց

Գէորգ Քանանեանը իր վերը յիշատակուած ճառի մէջ, ասուած Ճեմարանի 50ամեակի առթիւ կայցացած հանդէսին, տալիս է Յովակիմ Լազարեանի հետեւեալ բնութագիրը.

«Մեծահողի կտակարար կոմս Յովհաննէս Լազարեանը չէր կարող գտնել աւելի լաւ գործադրող իր բարի կամքի, քան էր նրա կրտսեր եղբայրը՝ Յովակիմ Լազարեանը։ Սա ստեղծուած էր հասարակութեան օգտին ծառայող գործերի համար։ Յովակիմ Լազարեանը պատկանում է այն փոքրաթիւ մարդկանց շարքին, որոնց համար կեանքը յարատեւ սխրագործութիւնների մի ամրող շարան է։ Յովակիմ Լազարեանը անարատ բնաւորութեան տէր մարդ էր, վեհ հոգով ու լուսաւոր մտքով։ Աշխարհի ունայն հրապոյրները ոչինչ արժէք ունէին նրա աչքում։ Մնուցանելով իր մէջ քաղաքացիական զգացումներ, ունենալով խոշոր նիւթական կարողութիւն, նա վարում էր նահապետական պարզ կեանք։ Նա վզրուկ էր (վելմօյա — «վելմոժա» — «ջենտլմէն» Յ. Թ.) բառիս լաւագոյն խմաստով։ Այն խոր յարդանքը, որ տածում էին դէպի նրա հայրենակիցները, մի բնական ու ակամայ տուրք էր, որ տրւում էր նրան նրա բարձր բարեմասնութիւնների համար, իսկ նրա բարոյական ազգեցութիւնը իր հայրենակիցների վրայ՝ անսահման էր։ Ի հարկէ, նրա ձգտումների միակ նպատակն

էր՝ հանրային շահը։ Քրիստոնէական բարեգործութիւնը նրա հոգու պահանջ էր։ Այդիսկ պատճառով իր հանգուցեալ եղրօրմիտքը՝ կառուցել դպրոց հայ երեխաների համար, կենդանի արձագանդ դտաւ նրա սրտում։ զարմանալի չէ, եթէ այդ միտքը դարձաւ նրա սեփական գուրգուրալից միտքը։ Նա նուիրուեց նրա իրազործման իր ազնիւ սրտի ամբողջ թափով։ Նա նուիրեց նրան իր բոլոր բարոյական կարողութիւնները, իր ամբողջ Երկարատեւ կեանքը, իր հարստութեան մի խոշոր մասը։ Այս առաքինի քաղաքացին իր մեծագումար նուիրատութեամբ, իր անխոնջ աշխատանքներով ու խնամքով կառուցեց մեր այս դպրոցը, որը այսօր ապրում է իր 50ամեակը» (էջ 16—17)։

Իսկ Պրոֆ. Ալ. Զինովեւը իր կողմից հետեւեալ կերպով է ընութագրում աղա Յովակիմին։

«Յովհաննէս Լազարեանը իր առողջամիտ նախատեսութեան մէջ եւ իր ընտանիքի անդամների ընդհանուր համաձայնութեամբ, նախապատուութիւն տուեց իր կրտսեր եղրօր՝ Յովակիմին, ընտրելով իրեն յաջորդ, եւ չսխալուեց այդ ընտրութեան մէջ։

«Յովակիմ Լազարեանի բոլոր ձեռնարկները եւ այն դիրքը, որ նա կարողացաւ ստեղծել իր համար, այդ անմոռանալի մարդը, ապացուցեցին, որ նա պատուով եւ արժանաւորութեամբ կատարեց եղրօր կտակը։

«Յովակիմ Լազարեանը պատկանում է այն մարդկանց շաքարին, որոնք գիտեն լինել կենտրոնական դէմք եւ չենթարկուել բազմազան հանդամանքներին, որոնք անխուսափելի են հասարակական կեանքի ու գործունէութեան մէջ։ Գիտակցելով իր բարոյական ոյժը, նա յարմաբեցնում էր նրա հետ իր գործառնութիւնները, զրա համար էլ նրանք միշտ ճիշտ էին, հիմնաւոր էին ու բարեյաջող։ Որպէս քրիստոնեայ եւ իր ընտանիքի բարի հայր, նա շատ ծառայութիւններ է մատուցել Եկեղեցուն եւ դաստիարակել իր երեխաններին աստուածավախութեան ոգով։ որպէս բարի կալուածատէր եւ հարուստ զրամատէր՝ միսիթարւում էր իր գործերի ծաղկեալ վիճակով։ որպէս առաքինի քաղաքացի, ամենքից յարգուած էր, եւ որպէս մարդկութեան բարեկամ, նա իր կենդանութեան ժամանակ եւ մահուանից յետոյ մեծ բարեգործութիւններ է արել ու շահել բարի յիշատակ եւ օրհնութիւն։ Այդպիսի մի կեանք հարուստ չէ արկածներով, բայց նրա ամբողջ կեանքը նման է մի լուսապայծառ օրուան, որ իր արեւմուտից յետոյ էլ թողնում է լաւագոյն յիշողութիւններ¹։»

* *

¹ Տե՛ս ՊրոՊ., Զինովեւ, էջ 18:

Ինչպէս իր մեծ Եղբայրները, աղա Յովակիմն էլ միշտ բերել է իր հեղինակաւոր աջակցութիւնն ազգային գործերի կարգադրութեան մէջ, նրա տան դռները, ինչպէս նաեւ հետագայում իր որդիների տան դռները, միշտ բաց են եղել հիւրընկալելու թէ Հայոց կաթողիկոսներին եւ թէ հայ ազգային գործիչներին:

Այսպէս, օր., Ա. Երիցեանը հաղորդում է.

«...Օգոստոս մէկին Եփրեմը հանդիսաւոր մուտք գործեց կայսերական մայրաքաղաքը եւ իջաւ Յովակիմ Լազարեանի պատրաստած ապարանքում: «Աստուած կեանք տածէ — գրում էր կաթողիկոսի ուղեկից Ռէթէոս Եպիսկոպոսը իջմիածնայ — որ հոգաց զծախսս ամիսն 300 բուրլի յինքենէ տալով... եւ միշտ աղա Յովակիմն փոյթ է շուտով հոգալ զգործ մեր ի դարձուցանել...²»:

Ծնորհիւ Յովակիմ Լազարեանի ջանքերի նոյն օգոստոս 20ին կայսրը՝ Ալէքսանդր Ա. Նը ընդունում է Եփրեմ կաթողիկոսին, որին ուղեկցել էին յիշեալ Ռէթէոս Եպիսկոպոսը, Երկու վարդապետներ եւ ինքը Յովակիմ Լազարեանը:

Ա. Երիցեանը հաղորդում է մի այլ ուշադրաւ դէպքի մասին.

²Տե՛ս Ա. Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 49: Յիշատակենք, որ Եփրեմը կաթողիկոս է եղել 1809—1830 թթ.:

«1817թ., Երբ Ներսէս արքեպիսկոպոսը (Հետագայում կաթողիկոս) արդէն միտք էր յղացել Թիֆլիսում հիմնել մի գպրոց և մտահոգուած էր նիւթական միջոցներ հայթայթելու խնդրով, ուրախութեամբ իմանում է, որ դեռ 1801 թուին վախճանուած Յովհաննէս Լազարեանը, Լազարեան Ճեմարանի հիմնադիրը, կտակել է, որ Երբ Թիֆլիսում Հայոց ուսումնարան լինի, իր ժառանգներից ստանան 3000 ըուրլի»:

Ապա Երիցեանը հաղորդում է, որ 1818թ. Յովհակիմ Լազարեանը վճարել է այդ գումարը, աւելացնելով նրա տոկոսները՝ 2000 ըուրլի և իր կողմից էլ նուիրարերելով նոյն նպատակին 2100 ըուրլի. ընդամէնը՝ 7100 ըուրլի:

Այս տեղեկութիւնները չափազանց արժէքաւոր են. ի հարկ է ո՞չ թէ նրա համար, որ Լազարեան երկու եղբայրները դրամական օգնութիւն են տուել Ներսիսեան դպրոցին, քանզի նման բարեգործութիւններ բազմաթիւ են եւ միշտ էլ յատուկ են եղել այդ զարմանալի տոհմի բոլոր անդամներին, — այլ նրա համար, որ այդ փաստը վկայում է, թէ Յովհաննէս Լազարեանը, նախ, որքա՛ն մտահոգուած է եղել ազգային կրթական գործին զարկ տալու գործով, եւ ապա թէ որպիսի՛ պայծառագիտութիւն է ունեցել նա ըմբռնելու ու նախատեսելու մի Հայոց դպրոցի անհրաժեշտութիւնը նաեւ Թիֆլիսում, այդ ժա-

մանակուայ մի հայաշատ կենտրոնում, պայքարելու այն անսահման տղիտութեան ու խաւարի դէմ, որ այդ օրերին իշխել է Անդրկովկասում եւ, վերջապէս, որ այդ նախատեսութիւնը նա ունեցել է գեռ իր մահից առաջ (1801թ.), երբ Ներսէս արքեպիսկոպոսը, թերեւս, դեռ չի ունեցել դպրոց հիմնելու մտադրութիւնը։ Եթէ ընդունելու լինենք, որ այդ մտադրութիւնը Ներսէս եպիսկոպոսն էլ ունեցել է նոյն ժամանակաշրջանում, դա միայն մի նոր ապացոյց է, որ երկու մեծ հայրենասէրների, երկու մեծ լուսամիտ հայ գործիչների մշտական մտահոգութիւնները՝ լոյս ու կրթութիւն տարածել իրենց ժողովրդի մէջ, զուգազիպել են իրար։

Յովակիմ Լազարեանի բարի գործերից է եղել նաև Մոսկուայի Հայոց եկեղեցու բակում կառուցել 1782թ. երկու տուն այդ եկեղեցւոյ պաշտօնեաների համար եւ ազա իր ծախսով նորոգել տալ Եկեղեցւոյ շէնքը 1821թ.։

1818թ. Յովակիմ Լազարեանը, տեսնելով, որ ինքը արդէն ծերացել է եւ ձեմարանի հոգաբարձուի պատասխանատու ու բազմապիսի աշխատանքները այլեւս ի վեճակի չէ վարելու, նոյն թուի յունիս 15ին յանձնում է այդ պաշտօնը իր աւագ որդի Յովհաննէսին, իսկ կրտսեր որդուն՝ Խաչատուրին նշանակում նրան օդնական։

1826թ. յունուար 26ին Յովակիմ Լազա-

բեանը կնքում է իր մահկանացուն 83 տարեկան խոր ծերութեան հասակում, մեծ վշտի մատնելով իր հարազատներին, ծեմարանի աշակերտութեան, ուսուցչական կազմին և ողջ հայ հասարակութեան :

Գէորգ. Քանանեանը հանդիսանում է լաւագոյն արտայայտիչը այդ զգացումների³.

«Անփոխարինելի կորուստը առաքինի քաղաքացու խոր դառնութեամբ լցրեց իր բոլոր հայրենակիցների սրտերը։ Շատերը ի դէմս նրան կորցրին իրենց անձնական հովանառորին, մտերիմ բարեկամին եւ բարեզործին։ Ամենքը միասին զրկուեցին իրենց լաւագոյն եղբայրակցից։ Հասարակութիւնների կեանքի մէջ, որոնք ուժեղ են իրենց բարոյական շահախնդրութիւններով, երբեմն երեւան են դալիս երջանիկ ընտրեալներ։ Նախախնամութիւնը նրանց վրայ շռայլում է իր լաւագոյն շնորհները։ Նա առաջնորդում է նրանց բարոյ ու պատուի պայծառ ուղիով, եւ կեանքը այդ ընտրեալների մնում է մի թանկագին կտակ քաղաքացիների եւ հետագայ սերունդների համար։ Այդպիսին էր կոմս Յովհաննէս Լազարեանը, այդպիսին էր Յովակիմ Լազարեանը։ Լիակատար իրաւունքով կարելի է ասել նրանցից իւրաքանչիւրի մասին Տակիտոսի խօսքերով՝ posteritati narratus et traditus superstes erit»։

³ Տե՛ս նրա ճառը, ծեմարանի 50ամեակի առթիւ արտասանած, էջ 24։

Յովակիմ Լազարեանի աճիւնը ամփոփուած է Մոսկուայի Վագանկովսկի Հայոց հանգստարանում։ Նրա շիրիմի վրայ փորագրուած է չափածոյ արձանագիր, բաղկացած 20 տողից, որից առաջ ենք բերում միայն հետեւեալ չորս տողը։

«Ղամբար լուսափայլ, Արփի Հայրենեաց,
Վըճիտ հայելի վարուց քոց նախնեաց,
Ընդէ՞ր յայդ անլոյս դագաղ ստուերամած
Խաւարեալ հանգչիս ի սուդ Հայկազնեաց»։

Յովակիմ աղայի յուղարկաւորութեան ժամանակ էլ ասուած են բանաստեղծութիւններ եւ յուղիչ դամբանականներ։

Ոմն Մարգար Իօրալեանը արտասանել է իր մի ընդարձակ բանաստեղծութիւնը, որի մէջ կարդում ենք այսպիսի տողեր։

«Զի՞ք մեր Հայր քաղցրագութ, չի՞ք անզոյդ
բարերար։

Մեր լապտեր բարութեան՝ որը մանկանց
ապիկար։

Յնդեցաւ ցրուեցաւ իշխանիս ցող բարեաց։

Թօթափեա՛ զծիրանի, զգեցիր զքուրձ ող-
բոց,

Զի շիջաւ քոյդ արփի՛ ուղփաճեմ ճրագա-
րան . . .»։

Իսկ Դաւիթ Օտապաշեանցը իր դամբա-
նականի վերջում ասում է.

«Արդ, ո՞վ լծակցեալ եղբարք, ի ժամուս, յորում ի մուտս դարձաւ արեւն կենաց մերոց, բարձաւ ի զլիսցս թագն պարծանաց, պակասեցաւ ի մէնջ բոլոր բարեաց օթեւանն, աւազ որդւոցս սիրեցեալ եւ կարօտեալ ի քաղցը հօրէն . . .» եւայլն⁴:

**

Յովակիմ Լազարեանցի ամուսինը՝ Աննա Սարգսեանը վախճանուել է 1820 թ. մարտ 11ին: Ունեցել են հինգ զաւակներ՝ Յովիաննէս, Խաչատուր, Յարութիւն, Ղազար Առաջին եւ Ղազար Երկրորդ, ու նաեւ վեց աղջիկ: Սրանք կազմում են Լազարեան տոհմի երկրորդ սերունդը:

Ղազար Ա. եւ աղջիկներից երկուսը վախճանուել են վաղահաս մահով:

II

ՄԻ ԷԶ

ՅՈՎԱԿԻՄ ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՑ

Մ. Մսերեանը, որպէս Յաւելուած, Յովակիմ Լազարեանի այնքան ժլատ կենսագրութեան, առաջ է բերում ամբողջութեամբ մի շատ թանկագին ու արժէքաւոր փաստաթուղթ, որի մէջ արտացոլուած է Յովակիմ

⁴Տես Մ. Մսերեանց, Գ. մաս, էջ 144—145:

Լազարեանի նախ հոգեկան առաքինութիւնները՝ նրա հայրենասիրութիւնը, նրա սէրը դէպի ուսումն ու կրթութիւնը, նրա ձգտումները գիտութիւն տարածելու բովանդակ հայժողովրդի մէջ, տեսնելով դրա մէջ միակ զօրաւոր զէնքը փրկելու ազգը այն խաւարից, որի մէջ նա ընկղմուած է, — եւ ապա այն մէծ մտահոգութիւնները՝ լաւագոյն կերպով կազմակերպելու իր կառուցած դպրոցի կրթական գործը, որի վրայ նա գուրգուրացել է իր ամբողջ կեանքի ընթացքին, ինչպէս մայրը իր հարազատ երեխայի վրայ։ Այդ փաստաթուղթը վկայում է նաև, որ աղա Յովակիմը աղա չէր իր լիքը գրապանի հետեւանքով, այլ եւ աղա էր իր լուսաւոր գաղափարներով, իր մտաւոր պատրաստականութեամբ։

Այդ պատմական փաստաթուղթը կրում է Հետեւեալ խորագիրը՝

«Տ. Յովակիմայ Լազարեանց Յայտարարութիւն առ իւր համազգիս»։

Այս Յայտարարութիւնը մի ընդարձակ դրութիւն է, որ կրում է 1820 թուականը։ «Հանդէս Ամսօրեայ»ի սուլ էջերը թոյլ չեն տալիս առաջ բերելու այն ամբողջութեամբ, ուստի մենք մի քանի կարեւոր մէջբերումներով ենք բաւականանում։

Հեղինակը սկզբում խօսում է ու ջանում ապացուցանել այն մէծ օգուտները, որ ունին

Եւ բերում են ուսումն ու կրթութիւնը ընդհանրապէս ամէն մի ժողովրդի համար։ Իրայս հիմնական միտքը լուսարանելու համար բերում է պատմութիւնից օրինակներ եւ մատնանշում է հին յոյների, հոռվմայեցիների, անգլիացիների, Փրանսիացիների վրայ և ապա «ի յետնումս զի՞տսս իսկ»։

Այնուհետեւ նա անդրադառնալով մեր ժողովրդի անցեալին եւ ներկային, ասում է. «Ահա՛ այս է եւ այսչափ շահեկանութիւն եւ պիտանութիւն դպրութեան. զորոյ յարգն մինչդեռ աշխարհահամբաւ հարք մեր ճանաչէին, եւ ի հայրենիս մեր մուծանել նկրտէին՝ մեք եւս զօրէն այնց լուսաշախիդ ազգաց ազատաքայլ ճեմէաք, եւ վեհապանծ փառօք բերկրամիտ կենցաղավարէաք։ Բայց բարէ՛թշուառութեան մերում. երբ դպրութիւնն ի մէնջ անդուսնեցաւ, եւ ուսումնականութիւնն տեղի տուեալ դադարեցաւ, ոկսաք այնուհետեւ զօրինօք բարւոք կենցաղավարութեան ապախտ առնել, եւ զազատականութիւնն մեր յանարդանս մատնել, յանձանց մերկացեալ մինչ իսպառ զամենայն զպարծանս տիեզերասաստ մերոց նահապետաց, որով առ սակաւ սակաւ ընտելացաք զստրկութիւնն յօժարակամ յանձն առնուլ, եւ նախամէծար համարել զայն քան զշքեղաշուք վեհանձնութիւննախնի Հայկազանց»։

Յիշատակելով այն պատմական իրողութիւնը, որ 17րդ դարում մեզ մօտ հանդէս

Եկան դիտնական հոգեւորականներ, որոնք խաղաղ ապաստան գտան Եւրոպացիների մօտ, նրանք ձեռնամուխ եղան «լուսաւորել զմիտու մեր թարգմանութեամբ եւ տպագրութեամբ օգտակար իմաստալից ինչ ինչ դրեանց», բայց իրենց նպատակին չհասան «վասն անփարթամ՝ անսկաշտպան եւ սակաւաթիւ դուրս նոցա՝ յետ սակաւուց լքեալ տկարացան, եւ ակամայ կամօք հրաժեշտ տուեալ յաստուածահրաւէր խորհրդոց իւրեանց՝ տեսին դառնութեամբ որտի զայնքան աշխատանոս իւրեանց յանարգանս մատնեալ եւ յումպէտս կարգեալ։ Սոքա էին անմահական յիշատակաց արժանի դերաշուք Ոսկան վարդապետն, Թուվմաս Էպիսկոպոսն, Ղուկաս Դպիրն Վանանդեցի, եւ այլք ոմանք»։

Այնուհետեւ Հեղինակը դարձնում է իր հայեացքը դէպի Մխիթարեանները։ Սկզբում նա գովարանում է նոցա աշխատասիրութիւնը, որի չնորհիւ «Հետազոտութեամբ իւրեանց Երեւելի ընծայեցուցին զանձինս ի նորոգումն բազմահարուստ Հայկական բարբառոյ մերոյ, որպէս եւ ի ձեռն ազգի ազգի յողնիմաստ մատենից շարագրութեամբ եւ թարգմանութեամբ՝ քաջադիպութեամբ իմն յառաջադէմ մատուցան ըստ կարի յարդարել զմիտու մեր յըմբոնումն կարեւոր մակացութեանց (դիտութիւնների)», — բայց դառնութեամբ նկատում է.

«Բայց սակայն բաժանեալք ի մէնջ, եւ

յարեալք յեկեղեցին Հոռվմայ՝ գուն գործեցին (ջանք դրին) ի սկզբանէ անտի եւ այսր՝ աշալուրջ ճարտարութեամբ առ սակաւ սակաւ եւ զմեզ օտարացուցանել յուղղաղաւան սրբոյ Եկեղեցւոյ մերմէ եւ ի շաւղաց մերոց լուսարուխ աստուածահաճոյ Հայրապետաց»:

Կրօնական խտրութեան զդացմունքը ընդզրկում է բարեպաշտ հայ լուսաւորչական Յովակիմ Լազարեանցի հոգին եւ նա հրաժարում է տեսնել Միսիթարեանների կրթական-ուսումնասիրական աշխատանքների մէջ որեւէ օգուտ հայ ազգի համար . . . :

Այսպէս, ուրեմն, հայ ազգի ներկան շատ անմիտիթար է երեւում հեղինակին, ուստի լցուած դառն վշտով, բացականչում է՝

«Տեսէ՛ք, ուրեմն՝ թէ քանի ողբալի է վիճակ Հայրենեաց մերոց . . . »: Այս ընդհանուր տիսութիւնից յետոյ, հեղինակը անցնում է ձեմարանի հիմնարկութեան խնդրին եւ յայտնում է, որ իր եղբայրը «Աղա Յովհանէսն Եղիազարեանը» իր ազգի եւ Հայրենիքի այդ իսկ տիսուր պայմաններից մղուած, դեռ շատ տարիներ առաջ, քան իր մահը, միտք էր յղացել հիմնելու մի դպրոց՝ «համբուրելի հիմնարկութիւն», բայց նա իր բազում «յողնախուռն» զբազմունքների հետեւանքով, ի վիճակի չէր եղել, ուստի մահուանից առաջ կտակել էր իրեն՝ «նուաստութեան իմում կատարել զբաղձանս սրտի իւրոյ լաւագոյն իմն եղանակաւ»:

«Յաղագս այսորիկ յամի 1814 եկեալ իմ
ի Ս. Պետերբուրգայ աստ ի Մոսկով՝ օդնա-
կանութեամբ Աստուծոյ, եւ բարեհաճու-
թեամբ օրհնեալ ազգախնամ Տէրութեանս՝
ձեռն արկի շինել զլայնանիստ հոյակապ Հա-
մալսարան¹. եւ յետ ծախելոյ աւելի քան
զ200 հազար ոռւրլի ի սեփական գոյից իմոց՝
բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յարքու-
նական գանձանակէ (այն է զտոկոսիս բար-
դեալս ի բազում ամաց հետէ ի մայր գու-
մարէ անդր մուծելոյ յինչն, ըստ զօրութեան
կտակի գերազանց եղբօր իմոյ Աղայ Յովհան-
նէսի), հաղիւ թէ հասուցի զայն յիւր աւարտ
ի 1816 եւ ի սկզբան յետազայ ամի ժողովեցի
զՀայկածին մանկունս յամենայն շրջակայ նա-
հանգաց, եւ սկզբուն կալայ ի ձեռն քաջակիրթ
դաստիարակաց վարժել զնոսա ի փառս մար-
դասիրին Աստուծոյ»:

Այնուհետև յայտնում է, որ եղբօր կտա-
կած 200 հազար ոռւրլին թողել է արքունի
գանձանակում, որ տարեկան բերում է
10 հազար ոռւրլի տոկոս, եւ աւելացնում է՝

«Բայց յայտմանէ ես յարդեանց իմոց յա-
ւելեալ եմ զայն մայր գումար մինչեւ կա-
րողանալ պահպանել ըստ ամենայն հանգա-
մանաց բարեխաւութեան զ30 Հայ մանկունս
որբոց եւ աղքատաց»:

¹ «Համալսարանի անուն՝ ի թղթի աստ եւեթ
տեսանի բնծայեալ ձեմարանին Լազարեանց, եւ այն՝
յայտ է թէ՝ ըստ կամս կարծեաց կամ ըստ առանձին
ինչ հաճոյից շարագրողի բանիցդ»: Մ. Մակեան:

Ի վերջոյ աղա Յովակիմը յայտնում է, որ եթէ գրամական նուիրատուութիւններ լինեն ձեմարանին, այն ժամանակ կարելի կը լինի 30ից աւելի աշակերտներ ընդունել, իսկ եթէ գտնուեն Հայորդիք, որոնք կը բարեհաճեն նուիրաբերել ձեմարանին՝

«... Զտպազիր կամ զձեռազիր մատեանս, եւ կամ զտետրակս. որպիսի են Պատմագրութիւնք, ձառընտիրք, Մեկնութիւնք, եւ այլն, հաւաստի կարէ լինել՝ զի մեք պահպաննեցուք խնամով ի բազմահարուստ զրատան մերում (յորոյ վերայ արդէն ծախեալ եմ աւելի քան զ20 հազար ոռորդի) . արձանացուցանելով զանուն նորա ի ճակատ ընծայեալ մատենին. եւ հանդերձ Խորհրդարանաւ խմով չնորհակալ եղէց զնմանէ յատուկ նամակաւ: Նոյնպէս որ կտակաւ ախորժեացէ աւանդել զնուէրս ինչ յընդարձակութիւն եւ յառաւելութիւն աշակերտաց Համալսարանի¹, ընկալցի չնորհակալութիւն ի մէնջ, եւ յանուն նորա յիշատակեսցի յազդաց յազգս»:

Հետազյում, մեր ներկայ աշխատասիրութեան երկրորդ մասում՝ ձեմարանի բուն պատմութեան մէջ, կը տեսնենք, որ աղա Յովակիմի այս դիմումը հայ հասարակութեան անարձագանք չմնաց. եղան դրամով նուիրատուներ, որոնք իրենց անունով մէկերկու որդեգիրներ էին պահում ձեմարա-

նում, եղան նաեւ ձեռագիրներ եւ թանկարժէք գրքեր նուիրողներ:

Այս յայտաբարութեան մէջ ասուած է նաեւ, որ ի նկատի առնելով իր ծերութիւնն եւ բազում զբազմունքները, լիովին յանձնաբարում է ձեմարանի կառավարութիւնը իր երկու աւագ որդիներին՝ Յովհաննէսին եւ Խաչատուրին:

«Սոքա — ասում է Հեղինակը — զարդացեալ իսկ յերեւելի ձեմարանս Ռուսիոյ՝ քաջայարմարք են յուղղել զընթացս սորա ի բարին եւ ի կատարեալն: Եւ ունին յօդնականութիւն ինքեանց զՄորհրդարան բաղկացեալ յերեւելի յաստիճանաւոր եւ ի գիտնական ոմանց աղնուականաց երկրիս, եւ ի թագաւորական Պոօֆէսորաց ձեմարանիս Մոսկովու. ընդ որո է եւ գերապատիւ Սերովք գիտնական վարդապետն մեր, առաքեալ յատկապէս ի Սրբազնակատար եւ ի Ծայրագոյն Քահանայապետէ Սրբոյ կծմիածնի՝ յԵփրեմայ, լինել գործակից որդւոց իմոց, եւ Տեսրւչ Համալսարանիս»:

Աղա Յովակիմ խօսում է նաեւ ձեմարանում աւանդուող առարկաների մասին, ուսման վարձի մասին, մի խօսքով տեղեկութիւններ է տալիս ձեմարանի մասին. քանի որ այս ամէնի մասին խօսք լինելու է հետագայում, ուստի զանց ենք առնում «Յայտաբարութեան» այդ մասը:

Յովակիմ Լազարեանը յղացել էր նաև
մի ուրիշ շատ գեղեցիկ միտք, որ կարող էր
մեծ օգուտներ բերել հայ պատմութեան եւ
հնութիւնների ուսումնասիրութեան գործին,
եւ որին նա ձեռնամուխ է լինում անմիջա-
պէս գործադրելու, բայց որը, դժբախտա-
բար, երկար կեանք չի ունենում. նա մեռ-
նում է իր նախաձեռնողի մահուան հետ
միասին . . . :

1823թ. օգոստոս 4ին, — պատմում է
Գէորգ Թանանեանը իր ճառի մէջ, ասուած
ձեմարանի 50ամեակին, — ձեմարանին կից
կազմուեց «Հայկական հնութիւնների սիրող-
ների ընկերութիւն», նախաձեռնութեամբ
Յովակիմ Լազարեանի եւ նրա անմիջական
մասնակցութեամբ: Թէեւ այդ Ընկերութեան
ծրագիրն ու գործունէութիւնը, նրա կարճա-
տեւ գոյութեան ընթացքին չէին կարող ստա-
նալ իրենց պատշաճ զարդացումը, բայց նպա-
տակը որին պէտք էր ձգտել, դրուած էր
միանգամայն պարզ եւ խոստանում էր
բեղմնաւոր արդիւնքներ տալու: «Հայա-
տանի հետազօտութիւնները, — ասուած էր
Ընկերութեան որոշումների մէջ, — բաց կա-
նեն հնութիւնների հետաքրքրական հետքեր»:
Ընկերութիւնը մտադիր էր գործի հրաւիրել
ո՛չ միայն հայ, այլ եւ օտար գիտնական ոյժե-
րին՝ զրադուելու հայկական եւ արեւելեան
հարուստ հնութիւնների հետազօտութիւննե-
րով: Ընկերութիւնը դիմելով նրանց ասում

էր՝ «Թախանձագին կերպով հրաւիրւում են մասնակցելու Ընկերութեան գործունէութեան, ուղարկելով զրքեր, ձեռագիրներ, հրովարտակներ եւ յօդուածներ զանազան լեզուներով, որոնք վերաբերում են Հին Հայկական թագաւորութեան պատմութեան եւ արժէքներին» :

Քանանեանը յիշատակում է նաև մի քանի յօդուածներ Ընկերութեան կանոնագրից, որոնք լոյս են սփռում Ընկերութեան անելիքների վրայ եւ միաժամանակ ի յայտ են բերում Յովակիմ Լազարեանի աղպային մտքի լուսաւորութեան մշտական մտահոգութիւնները :

Յօդ. 1. Ընկերութեան աշխատակիցները պիտի զրագուեն թարգմանութիւններով զանազան յօդուածների, համաձայն Ընկերութեան Նախագահի ցուցմունքների :

Յօդ. 2. Այն յօդուածները, որոնք կը ստուան Նախագահի եւ Ընկերութեան հաւանութիւննը, կը թարգմանուեն զանազան լեզուներից միայն ուսւսերէնի ու կը զետեղուեն Մոսկուայի եւ Պետերբուրգի ամսադիրներում։ Ժամանակով, ըստ Ընկերութեան Հայցողութեան, բոլոր տապագրուած յօդուածները կը հրատակուեն միասին «Հայտատանի Ֆենիկս» անուան տակ։

Յօդ. 3. Ընկերութիւնը պիտի ունենայ իր զրագմունքների արձանագրութիւնները, որպէս զի տարեգերջին երեւան դայ, թէ ինչ օգտաւէտ ու կարեւոր գործներ են կատարուած ի վառս եւ ի պատիւ Հայտատանի։

«Տարակոյս չկայ, — նկատում է Գ. Քանանեանը, շարունակելով իր խօսքը, որ այդ Ընկերութիւնը, ձեռք բերելով աստիճանաբար նոր եւ դործունեայ աշխատակիցներ,

կարող էր հիմք դնել Հին Հայաստանի դպրութեան լուրջ գիտական ուսումնասիրութեան, կարող էր պսակուել շատ կարեւոր արդիւնքներով ընդհանրապէս Արեւելքի հետ ծանօթութեան գործում, ինչպէս եւ նրա դրականութեան ու դպրութեան հետ։ Բաց ի այդ, ընկերութիւնը չափազանց բարերար ազդեցութիւն կ'ունենար ձեմարանի սաների վրայ եւ կը մղէր նրանցից լաւագոյններին ու տաղանդաւորներին դէպի մի շահաւէտ եւ բարձր նպատակի, կը զարգացնէր նրանց մէջ սէր դէպի լուրջ ու հիմնաւոր ուսումնասիրութիւն հին լեզուների, ինչպէս նաև եւրոպական եւ արեւելեան լեզուների։ (Տես Գ. Քանանեանի ճառը, էջ 20—21։)

Ճառախօսը այսպէս ծանօթացնելով ընկերութեան ծրագրի հետ ու պարզելով նրա գիտական մեծ արժէքը, ցաւ է յայտնում, որ Ծնկերութիւնը շատ կարճատեւ կեանք ունեցաւ. ցանկանում է, որ հիմնադրի գեղեցիկ միտքը իր յաջորդներն ու շարունակողներն ունենայ, որպէս զի ձեմարանի երկրորդ յիսնամեակը պսակուի նման մի հիմնարկութեան բեղմնաւոր արդիւնքներով։

Անշուշտ, շատ ցաւալի է, որ այդ բաղձանքներն եւ յոյսերը չարդարացան ու արձագանդ չգտան ժամանակակից հայ մտաւորականների ու դիտնականների մէջ . . . :



Յովհաննէս Լազարեանց

ԳԼՈՒԽ Ե.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԱԱԶԱՐԵԱՆՑ
(1791—1813)

Յարութիւն Լազարեանը աղայ Յովակիմի երրորդ որդին էր. ծնուել է 1791 թ. փետրուար 15ին:

Մ. Մսերեանը այսպէս է բնութագրում.

«Մնաւ՝ զարգացաւ եւ հրահանգեցաւ ընդձևամբ բարեկիրթ դաստիարակաց:

Առողջ էր նա անձամբն, հասակագեղ, զուարթ, հեղ բարիւք, եւ զիմօք պայծառ»:

Պատանեկական հասակում Յարութիւնը ժանուար է զինուորական ծառայութեան մէջ, ուր նա ցուցազրում է արտակարգ ուազմական ընդունակութիւններ: Այնուհետեւ մանակցել է 42 կոխների, մեծ քաջազործութիւններ արել եւ իր զինուորական մեծ տաղանդը ի ցոյտ բերել: Անշուշտ, նա կ'ունենար շատ փայլուն ապագայ, կը հասնէր մեծամեծ աստիճանների ու փառքի, եթէ անողոք հակառագիրը այնքա՞ն վաղ չկարէր նրա երիտասարդական ծաղիկ կեանքի թելը՝ 22 տարեկան հասակում . . . :

Իր այդ մատաղ հասակում արդէն ունեցել է թիկնապահ զնդի շթաբս-բիութիստրի աստիճան, ստացել է Ս. Աննացի Բ. աստիճանի եւ Ս. Վլազիմիրի չորրորդ աստիճանի չքանչաններ «հանդերձ փնջով», իսկ կուլմայի պատերազմում Նազոլէոն Ա.ի զէմ ցոյց

տուած արտակարգ քաջազործութիւնների համար՝ Սուր Էւ Խաչ, «այլ եւ Շքաղրամ արծաթի, եւ Բրուսաց անուանեալ Շքանշան. ի վարձ արժանաւորագոյն վաստակոց»:

Ծառայել է կայսերական թիկնապահ զնդի մէջ, իսկ 1805 թ. օգոստոս 29ին կայսերական հրովարտակով նշանակուել է թարգման Արտաքին դործոց կայսերական Ատեանում:

Հաւատարիմ իր տոհմային աւանդներին Յարութիւնն էլ, որպէս նախանձախնդիր հայ ժողովրդի կրթական գործի յառաջդիմութեան, եւ բացի այդ, որովհետեւ նաև «ի մատաղ տիոցն սիրող էր նա իմաստից, եւ Հայրենակցացն լուսաւորութեան առաւել յոյժ փափագող», ուստի եւ նուիրում է Լազարեան ձեմարանին 50.000 ռուբլի թղթադրամ¹:

Յարութիւն Լազարեանը վախճանուել է 1813 թ. հոկտեմբեր 4ին Լայպցիկի հոչակաւոր արիւնահեղ ճակատամարտում Նապուլիոն Բոնապարտի դէմ, ստանալով մահացու հարուած թնդանօթային ռումբից:

1815 թ. կայսեր Հրամանով Յարութիւնի մարմինը փոխագրում են Լայպցիկից Պետերբուրգ եւ ամփոփում Հայոց Հանգստարանի Ա. Յարութիւն եկեղեցում:

Վշտահար ծնողները բազում նուիրատուութիւններ են անում նրա յիշատակին եւ

¹ Պրոֆ. Զինովեևի առելով, այդ զումարը նուիրել են ծնողները ի յիշատակ իրենց վազամեռիկ սիրեցեալ զաւակի: Տե՛ս էջ 22:



Յարութիւն Յ. Ղազարեանց

ի միջի այլոց նաև Ն. Զուղայի Ամենա-
փրկչեան վանքին, որովէս զի ամէն տարի հո-
գեհանգիստ կատարեն նրա յիշատակին:

Հանգուցեալի շիրիմն ունի հետեւեալ
տապահագիրը.

«Աստանօր ամփոփեալ կայ մարմին թիկ-
նապահ Գուսարեան Գնդի Շթապրօթմիսթրի
և զանազան նշանաց կրող Ասպետի՝ Յա-
րութիւն Յովակիմեան Լազարեանց, ծնելոյ
յամի 1791, և անկելոյ յարիւնահեղ սպառ-
բազմին որ տո Լէյիցիկաւ ի 4 հոկտեմբերի
1813 ամի, ի 22ամաց հասակի»:



Ուշագրաւ է Մոսկուսցի մի ուսու լրագրի
(որի անունը Մ. Մուրեանցը չի յիշատա-
կում) հետեւեալ զրութիւնը, նուիրուած Յա-
րութիւն Լազարեանի յիշատակին:

Այդ զրութիւնը, որ հրատարակուած է
1817 թ. փետրուար 28ին, պարունակում է
իր մէջ նաև մի քանի կենսագրական թան-
կագին տեղեկութիւններ:

«Վաշտապետ և Ասպետ կայսերական
Անձնապահ Գնդի՝ Յարութիւն Յովակիմեան
Լազարեանց, քաջասիրտ այս պատանի եմուտ
ի ծառայութիւն ի սկզբան անդ հոչակաւոր
սպառերազմին Ռուսաց, որ եղեւ յամի 1812,
կցորդելով յինքեան ընդ ողեկան կատարե-
լութեանց զարտաքինն զեղեցկութիւն դի-
մաց, և ընդ զինուորական հրահանգաց՝
զհմտութիւնն բազում արուեստից և լե-

զուաց, ի ժամանակի ահաւոր ճակատամարտին որ առ Աէյփցիպաւ՝ զմահարերն ընկալաւ հարուած, որով զրկեցաւ յարեւէ ծաղկափթիթ կենացն ի քսաներկուամեայ հասակի: Էր նա զարդարեալ բազում նշանօք զորս ստացեալն էր ի վարձ դովանի ծառայութեանցն եւ այրական քաջութեանցն ի մարտու. Էր Եւս սիրելի յաչս իւրոց մեծաւորաց եւ ընկերաց: Զգալով լիսարէս զմեծութիւն կորստեանս՝ որո՞վ իւթք կարեմք պատուել զյիշատակ քաջի զօրականիս, Եթէ ոչ զայս արձակելով առ նա բարբառ ի որտէ «խաղաղութի՛ւն քոյոցդ ոսկերաց, օրհնեա՛լդ ծնունդ հօր բարեպաշտի»²:

ԴԼՈՒՅ Զ.

ՅՈՒՆԱՆՆԵՍ ՅՈՒԱԿԻՄԵԱՆԵ ԽԵԶԱՐԵԱՆՑ
(1786—1858)

I.

Յովհաննէս Լազարեանը՝ աղա Յովակիմի աւագ որդին էր. ծնուել է 1786 թ. փետրուար մէկին:

Կենսագրական տեղեկութիւնները Լազարեանների կրկու կենսագիրների մօտ էլ չտփազանց պակասաւոր են եւ վերաբերում են զլիսաւորապէս նրա ստացած շքանշաններին ու պետական պաշտօնների յիշատակութեան . . .

² Տե՛ս Մ. Մոկրեանցի «Յիշատակարան», մաս Գ., էջ 93:

Բարձրագոյն հրովարտակների թարգմանութիւններն են, որոնցից կարելի է առնել մի շարք թանկագին տեղեկութիւններ։ Այսպէս, այդ հրովարտակներից խմանում ենք, որ Յովհաննէսը իր սկզբնական կրթութիւնը ստացել է Պետերբուրգի գերմանական մի դպրոցում եւ ապա անցել Մոսկուայի համալսարանը, որն աւարտել է 1821 թուին¹։ Իր զինուորական ծառայութիւնը կատարել է Կայսերական թիկնասպահ զօրագունդի մէջ (Գվարդիա)։ 1801 թ. յուլիս 3ին նա մտել է պետական ծառայութեան մէջ Մոսկուայի «Արտաքին դործոց կայսերական Ատեանի Դիւանում»։

1801 թ. Հոկտեմբեր 9ին նշանակուել է թարգման Ալէքսանդր Ա. Կայսեր թագադրութեան հանդէսի ժամանակ։

1815 թ. մայիս 3ին ստանձնել է Լազարեան ձեմարանի հոգարարձուի պաշտօնը²։

1831 թ. Մոսկուայում եւ չըջակայքում տարածուել է խօլերայի համաճարակը։ Յով-

¹ Պրոֆ. Զինովէևի առելով, Յովհաննէսը իր սկզբնական կրթութիւնը ստացել է իր ծնողների ընտանիքում, այնուհետեւ քննութիւն տալով, մտել Մոսկ. Համալսարանը (էջ 19)։ Մենք հետեւել ենք Մ. Մոսկուանցին։

² Պիտի ենթագրել, որ Մ. Մոսկուանցի այս հաղորդագրութեան մէջ (էջ 27) սպրդել է տպագրական սխալ, քանզի ըստ Պրոֆ. Զինովէևի Յովհաննէսը նշանակուել է ձեմարանի հոգարարձու հօր կողմից, որն եղել է ձեմարանի առաջին հոգարարձու 1815 թ. սկսած, 1818 թուին յունիս 15ին, իսկ եղբայրը՝ Խաչատրուրը՝ նրա օղնական նոյն 1818 թուին։ Տե՛ս Զինովէւ, էջ 33։

հաննէս Լազարեանը հրաւիրւում է խօլերայի տարածման գէմ պայքարի գործին բերել իր մասնակցութիւնը։ Եւ Յովհաննէս Լազարեանը ցուցադրում է այնպիսի եռանդուն ու խելացի գործունէութիւն, որ վարձատրում է մայիս 22ին Ս. Աննայի երկրորդ աստիճանի չքանչանով, զարդարուած կայսերական թագով։

1834 թ. Հոկտեմբեր 22ին ստանում է Ո. Վլադիմիրի 3րդ աստիճանի չքանչան «ի տրիտուր գովանի եւ ջերմեռանդն ծառայութեան եւ սեպհական աշխատութեանց», որ ցոյց էր տուել Մոսկուայի Յաղթական կամարի կառուցման գործում։

Աւելացնենք մեր կողմից, որ այս կամարը իր գեղեցկութեամբ ու հնութեամբ կազմում է Մոսկուայի պատմական չէնքերից մէկը։

1835ին Մոսկուայում տեղի է ունենում նուսական ձեռագործների եւ արուեստների ցուցահանդէս։ Յովհաննէս Լազարեանը բերում է իր եռանդուն եւ օգտաշատ մասնակցութիւնը, նախ ցուցահանդէսի չէնքի կառուցման եւ ապա կազմակերպութեան գործում։ Այդ առթիւ նա ստանում է կայսրից աղամանդեայ մատանի, վրան գրուած կայսեր անունը, եւ ապա «նորին կայսերական Մեծութեան Դրան Մենեկապետի» (Կամեր-էր) կոչումը։

Այնուհետեւ գալիս են մի շարք բարձրագոյն հրովարտակներ ու հրամանադրեր, որոնցով գնահատուած են նրա բազմազան այլ ծառայութիւնները, մատուցած պետութեան և մասնաւորապէս Լազարեան Ճեմարանին՝ «ի տրիտուր յարատեւ ջերմեսանգութեան յօդուտ Լազարեան Ճեմարանի» և «յաղաղս մեծամեծ նուիրանացն» յօդուտ նոյն Ճեմարանի։ Ի միջի այլոց այդ առթիւ ստացել է «ոսկեայ աղամանդայնու տուփ պնչաղեղոյ հանդերձ քանդակաւ փակաղըի անուան Ն. Կ. Մեծութեան»։

41 Հրովարտակներից ու հրամանադրերից, որոնցով գնահատուած են Յովհաննէ ու Լազարեանի բազմազան մարզերում ցոյց տուած ծառայութիւններն ու կատարած աշխատանքները, մենք սուած բերինք միմիայն մի քանիսը, կարեւորագոյնները, մի զաղափար տալու համար Յովհաննէ ու Լազարեանի կեանքի ու գործունէութեան մասին, ինչպէս եւ այն մեծ դիրքի մասին, որ նա նուաճել էր սուսաց կառավարական բարձր շրջաններում, և այն էլ մեծ մասամբ Նիկողայոս Ա. կայսեր բոնապետական իշխանութեան մոսյու օրերին... .

Յիշխանակենք նաև, որ 1854 թ. սեպտեմբեր 10ին ստացել է Պարսից Շահից «Առիւծի և Արեգակից» առաջին աստիճանի չքանչանը։ Այս առթիւ Մոսկուայի Պարսից Դեսպանի Յովհաննէ ու Լազարեանին ուղղած

համակի մէջ հետեւեալ ուշադրաւ պատճառ-
ուարանութիւնն է բերուած .

«... Բայտ հաստատուն համաձայնութեան
եւ սերս յարակցութեան՝ զոր ունին ի միջի
իւրեանց երկոքին հզօրագոյն Պետութիւնք՝
Պարսից եւ Ռուսաց, կառավարութիւնն Պար-
սից պարտ վարկանի յայտնել զիւր երախ-
տագիտութիւն իւրաքանչիւր հպատակի Ռու-
սաց՝ որ օգտակար ինչ վաստակս ցուցանէ
վասն Պարսկաստանի:

«Զերդ Գերազանցութիւն, որպէս Հոգա-
րարձու Լազարեան Ճեմարանի Եղելոյ ի
Մոսկուա, յարաջան Հոգողութեամբ հանա-
պազ փոյթ եւ խնամ կալաք դաստիարակե-
լոցն ի նմա՝ հպատակաց նորին Մեծութեան
Շահի» եւայլն :

Այս նամակից երեւում է, որ Լազարեան
Ճեմարանը Եղել է նաև պարսկահոյութեան
համար մի լուսատու կանթեղ, որի ճառա-
գայթները թափանցել են նաև Պարսկաս-
տանի հայ ժողովրդի ամենախուլ անկիւն-
ները, լուաւորել այն ու տուել շօշափելի ար-
դիւնքներ: Ճեմարանի բուն պատմութեան
մէջ մէնք կը տեսնենք, որ արդարեւ մի շարք
պարսկահոյ մանուկներ են սովորել Ճեմա-
րանում, ապա աւարտելով այն, վերագար-
ձել են Պարսկաստան, մտել պետական ծա-
ռայութեան մէջ, ամենայն հաւատարմու-
թեամբ ծառայել, հասել մեծ պաշտօնների
ու մեծապէս օգտաւէտ Եղել թէ Պարսից կա-

ուսպարութեան ու ժողովրդին եւ թէ իրենց ազգին :

Յովհաննէս Լազարեանը զանազան ժամանակներում եւ տարբեր հանդամանքներում վարել է նաև թարգմանի պաշտօն պետական հիմնարկներում . ի միջի այլոց նաև Ալէքսանդր Ա. կայսեր թագադրութեան ժամանակ : Այս հանգամանքը ցոյց է տալիս , որ նա տիրապետել է մի շարք եւրոպական եւ արեւելեան լեզուների : Եւ արդարեւ , 1821թ. ապրիլ 4ին նա ստացել է Մոսկուայի համալսարանի աւարտման վկայական , որից երեւում է , որ նա ստացել է լաւ կրթութիւն եւ բացի այդ Ռուսերէն , Գերմաներէն ու Ֆրանսերէն լեզուների մէջ ցոյց է տուել մեծ յառաջադիմութիւն եւ հմտութիւն :

Յովհաննէս Լազարեանը եղել է Պետերուրպի Բանտերի Խնամատար Կոմիտէի անդամ :

1847թ. ընտրուել է անդամ Գրականութեան եւ Հնութիւնների Փարփակի Ասիական ընկերութեան :

Վերջապէս , եղել է պատուոյ անդամ Պետերուրպի Բնագննաց Ընկերութեան եւ Պետերուրպի ու Մոսկուայի Տնտեսական Ազատ Ընկերութեան , որը , ի գէպ , այնքան մեծ հոչակ ստացաւ 19րդ դարի վերջերքին , մասնաւանդ Ալէքսանդր Ա. կայսեր յետադէմ օրերին իր ազատախոհ գործունէութեամբ :

Մենք կարևոր չհամարեցինք մի առ մի թուելու այն բարձր պաշտօններն ու ստացած աստիճաններն ու չքանչանները։ Իր երկարատև պետական ու կրթական գործունէութեան ընթացքին, արձանագրենք միայն, որ նա հասել է ներգործական պետական խորհրդականի աստիճանին եւ ստացել չքանչաններից մեծագոյնները՝ Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ և Ս. Նախակոչ Առաքելոյն Անդրէի։

Յովհաննէս Լազարեանը ունեցել է կալուածներ՝ Պերմ Նահանգում 19·222 չունչ ճորտ գիւղացիներով։ Սոլիկամսկում՝ աղաւանքեր, երկաթի և թուղի (չուղուն) գործարաններ։ Մոսկուայում մի փայտաշէն և Նիժնի Նովգորոդում՝ մի փայտաշէն և մի քարաշէն տուն, իսկ Եարոսլավկի Նահանգի Դանիլեւսկի գաւառում մի փոքրիկ հողամաս 27 չունչ ճորտ գիւղացիներով։

Յովհաննէսն եւ իր եղբայր Խաչատուրը 1853 թ. նուիրել են Ճեմարանին իրենց սեփական տունը Մոսկուայում «Հանդերձ ամենայն շինուածովքն՝ որ առ նմին եւ գետնով՝ որոյ տարածութիւնն է 2983½ քառ. սաժէն»։

Բացի այդ՝ երկու եղբայրները զանազան ժամանակներում եւ զանազան առիթներով մինչեւ 1864 թ. արել են զրամական նուիրատաւութիւններ Ճեմարանին, որոնք կազմում են մի պատկառելի զումար՝ 502·437 ոռորդի

արծաթի կամ թղթաղբամով աւելի քան
մէկուկէս միլիոն :

Յովհաննէս Լազարեանը գտխճանուել է
կաթուածից, անզաւակ, 1858 թ. փետրուար
6ին, 72 տարեկան հասակում և թաղուել է
Գետերբուրդի Հայոց Գերեզմանատան Ա. Յա-
րութիւն եկեղեցում : Յուղարկաւորութիւնը
կատարուել է մեծ շուքով : Ի միջի այլոց,
ներկաց են Եղել ձեմարանի սաներից 20 հոգի
իրենց Դաստիարակ-լիբրակացուների հետ,
որոնք յատկապէս այդ նպատակով բերուել
են Մոսկուայից Եղրօր՝ Խաչատուր Յովակի-
մեան Լազարեանցի հաշուով և 5 օր հիւրըն-
կալուել նրա տանը :

Մահից առաջ կտակով նա թողել էր ձե-
մարանին 50·000 ռուրլի արծաթ . Եղբայրը՝
Խաչատուրը իր կողմից աւելացնում է ի յար-
դանս Եղրօր յիշատակի 10·000 ռուրլի ար-
ծաթ, որպիսի գումարը թղթաղբամով կադ-
մում է շուրջ 200·000 ռուրլի :

*

Լազարեաններին նուիրուած են բազում
ներբողներ թէ ձեմարանի աշակերտների և
ուսուցիչների և թէ ուրիշ աղքայինների
կողմից : Մի մասը բերուած է Մ. Մոսկեանի
«Յիշատակարան»ում : Այդ ներբողները՝ ար-
ծակ թէ չափածոյ, գրուած են գրարար և
ձոռում ոճով, թէ եւ ներշնչուած ջերմ զգա-
ցումներով :

Ի միջի այլոց, Լէօն իր «Ստեփան Եստղաբեկի կենսագրութիւն» աշխատանքի մէջ Հրատարակել է Երկու բանաստեղծութիւններ, որոնց հեղինակը ինքը մեր մէծ Հրատարակախոսն է. մէկը գրուած է 1841 թ. մարտ 30ին և ապրիլ 19ին: Առաջինը նուիրուած է ընդհանրապէս Լազարեան տոհմին, միւսը՝ յատկապէս Յովհաննէս Լազարեանցին: Առաջ Էնք բերում այդ նշխարները:

Թէ ո՞նի ի Հայո արժանաւոր տնմահութեան Առայգ արգեամբք, ընտիր զոհիւք ի շահ ազգի Այդ զիհ մատոյց քաջ վայել է ո՞ր այլ անուան,

Թէ ոչ Զերում, Տեարք Լազարեան, չքեզ տոհմի:

Աւրա՛խ լերուք, ուրա՛խ լերուք, զԶեզ Առանուած

Կոչեաց լինել վաստք և պարծանիք Հայաստանի:

Այն Մոսկովեան Աթէնք Հայոց որո՞յ ստեղծած,

Այո՛, մտաց, որտի ձերոյ ազգասիրի:

Լէօն հետեւեալ բացարութիւնն է տալիս այդ ստանաւորի գրութեան շարժառիթի մասին:

«...Երեւում է, տունմ է նա, — որ Ետզարեանցը զնացել էր չնորհաւորելու Լազա-

րեանների Զատիկը եւ, ինչպէս սովորութիւն էր, մատուցեց նրանց այդ ոտանաւորուղերձը» :

Երկրորդ բանաստեղծութիւնը, որ նուիրուած է յատկապէս Յովհաննէս Լազարեանին, ըստ երեւոյթին, թելաղբուած է երախտաղիտական գգացմունքից, ոյն բարիքների համար, որ «վայելել է նա Լազարեան Ընտանիքից», — ասում է Լէօն :

Մի՛ տարադէպ թուեսցին Քեզ ազգի պաշտպան

Յնորհաճանաչ որտի զեղմունք, նուագ արդար՝

Քանի՛ արդէն առատ բարիք աղբերացան
Յիս բաղդառորս Քո յընտանեաց գերամեծար :

Զքեզ այսօր գովեմ երդեմ,
Իմ Յովհաննէս աստեղապարդ,
Կեցցե՛ս Դու լոյս Հայոց մաղթեմ
Կեցցես անչէջ, վայլե՛լ զուարթ³:

*

Յովհաննէս Լազարեանի մահուանից յետոյ, 1859 թ. Մոսկուայում լոյս էր տեսել նրա յիշատակին նուիրուած մի գիրք՝ «Յիշատակարան բազմերախտ հոգաբարձուի⁴... Յովհաննու Լազարեանց» խորազբույ:

³ Տե՛ս Լէօն, «Ամառ Նազ Կենս», էջ 112—113:

⁴ Բաց ենք թողնում նրա բոլոր տատիճանների ու տիտղոսների յիշատակութիւնը:

Այս գիրքը մենք ունեինք մեր ձեռքի տակ, բայց ցաւում ենք ասելու, որ գրեթէ ոչինչ նոր ու արժէքաւոր տեղեկութիւններ չի պարունակում իր մէջ, որպէս զի լրացնէինք հանգուցեալի կենսագրականը:

Բերուած են հայերէն եւ ոուսերէն լեզուներով այն դամբանականները, որոնք առուած են եղել նրա յուղարկաւորութեան ժամանակ. յօդուածներ, որոնք նոյն առթիւ լոյս էին տեսել հայ եւ ոուս մամուլի մէջ. յիշատակուած է, որ հոգեհանգիստներ են կատարուած Ս. էջմիածնում, Ն. Զուղայում, Կ. Պոլոսում եւ այլ տեղերում. յիշուած են ցաւակցական նամակներն եւ բարձրագոյն հրովարտակները հանգուցեալի ստացած չքանչանների ու աստիճանների մասին:

Կայ միայն մի յօդուած, որ տպագրուած է Եղել Պետերբուրգի մի ոուս թերթում, որի անունն էլ չի յիշատակուած, եւ որի մէջ կան մի-երկու արժէքաւոր տեղեկութիւններ:

Այդ յօդուածի խորադիրն է՝ «Թարգմանութիւն յօդուածոյն իրատարակելոյ ի ոուսերէն լրագրի Ս. Փերերպուրկայ՝ յաղագսախնանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարէանց»:

«Ի 6 փետրուարի — գրում է յօդուածագիրը — վախճանեցաւ յետ կարճժամանակայ ծանր հիւանդութեան, ի հասակի 72 ամաց, ներգործական Պետական Խորհրդական, Մենեկապետ Յովհաննէս Յովակիմեան,

Լազարեանց, Հոգարարձու Եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց Ս. Փեթերապուրկայ և Մոսկուայ, Լազարեան Ճեմարանի Արեւելիան Եկուաց՝ որ ի Մոսկուա, պատուառը անդամ Կայսերական Հասարակական Մատենադարանի⁵, անդամ ժողովոյ սահմանելոյ ի Փեթերապուրկ յաղագս բանախց և զանազան ուսումնական ընկերութեանց :

«Բովանդակ կեանք նորա էր անընդհատ շղթայ իմն գործոց բարեաց։ Սիրելով նա զրարեվայելչութիւն տաճարաց Աստուծոյ, նուիրէր նշանաւոր գումարս ի հիմնարկութիւն և ի պահպանութիւն Եկեղեցեաց։

«Որք յայց Ելանէին կալուածոց նորա ի Փերմ նահանգի, զարմանային ընդ հոյակապութիւն տաճարացն կանոնելոց ծախիւք նորա։ Լազարեան Ճեմարանն՝ հիմնեալն ի հօրեղբօրէ նորա և ի հօրէն՝ պատկանի նոյնպէս նմա իւրօնին ընդարձակութեամբ և միջոցօքն յաղագս պահպանութեան բազմաթիւ մանկանց աղքատ ծնողաց։ Ի տպարանի, որ կառուցեալն է առընթեր Ճեմարանիս սյսորիկ, նմանապէս եւ յայլ տեղիս⁶, տպադրեալ են ծախիւք նորա բազում օգտակար մատեանք։ Ի լույ նորա զիթշտու տառապելոց՝ ո՞չ երբէք հրաժարէր յօդնելոյ նոցա.

⁵ Այս տեղեկութիւն էլ նոր է. մենք ուրիշ աղքարներում չենք հանդիպել նման յիշատակութեան։

⁶ Որ Լազարեանը հիմնել է տպարաններ նաև ոյլ վայրերում, մենք չկամնք մեր մեռքի տակ եղած աղքարների մէջ ո՞չ մի յիշատակութիւն։

առանց ամենեւին խորելոյ զկրօն նոցին և
զազգ : Առաւելապէս հող տանէր նու զբա-
րութիւնէ սակաւաթիւ եղբարց խրոց ի Քրիս-
տոս, զորս Աստուած յանձնեաց հողաբար-
ձութիւնն նորա . կանգնէր վասն ստրուկ
(իմա՞ ձորտ . Յ . Թ .) շինականաց դպրոցս,
հիւանդանոցս, աղքատանոցս . վճարէր զար-
բունի հարկսն վասն չքաւորաց . յօժարու-
թեամբ տայր զազատութիւն ի սորիկական
կոչմանէ եւ երեւեցուցանէր ուրախութիւն
ի սրտէ՝ ի լինել մեծի կերպարանափոխու-
թեանն ի կեանս սորիկացն կալուածատեարց,
որ սկսաւ ի վերջին ժամանակս :

⁷ Այս տեղեկութիւնը շատ արժէքաւոր է Յով-
հաննէս Լազարեանի նկարապրի ամրողացման տեսա-
կէ աից . նա վկացում է, որ Յովհաննէսը ո՛չ միայն
եղէլ է մարդարէս մէկը, այլ եւ որ նա զործել է ժա-
մանակի յառաջազէմ ու ազատամիտ զազափարներին
համբնթաց : Յացանի է, որ չնոյած նիկոլայ Ա. կայ-
ուեր բնող հանրապէս յետադէմ քաղաքականութեան, նաև
ցանկութիւն էր ունեցել եւ եկել էր այն համոզման,
որ ճորտութիւնը պէտք է վերացնել, բայց չէր վստա-
հանում այդպիսի մի վճռական քայլ անելու, մասամբ
իւրօպացում բոնկուած 1830 թ. յուլիսեան յեղափո-
խութեան ապաւորութեան տակ : Եթէ կառավարական
շրջաներում տիրում էր տարատամ վիճակ, մատնուած
էին մեծ տարակուանքների, հասարակութեան վերին
խռաւորում, մասնաւորապէս յառաջազէմ մասւորա-
կանների շրջանում միանցամայն տարրեր տրամադրու-
թիւններ էին իշխում : Ճորտութեան վերացումը հա-
մարւում էր ժումանակի հրամայական պահանջ : Բնող-
հանուր ազատախոհ զազափարական շարժման ազգե-
ցութեան տակ ազնուականներից շատերը իրենց յօժար
կուրով անձնական ազատաթիւն էին տալիս իրենց
այն նորտ զիւղացիներին, որոնք ցանկութիւն էին
յացանում : Այս շարժումը օր աւուր ուժեղանում էր
ամրող Յօնական և Գօնական թուականներին : Յիշեալ

«Յընտանեկան կենցազավարութեանն եւ առհասարակ ի յարաբերութիւնոն առ եղեալոն շուրջ զինեւ՝ երեւելի հանդիսանացը եւ զանազանէր հեղութեամբ եւ քաղցրութեամբ բարեհամբոյը բարուցն։ Ամենեքին՝ որք ճանաչէին զնա, յիշեսցեն զնա ի բարի, եւ հեղցեն վասն նորա արտասուս ցաւակցութեան»։

II.

ՅՈՎ.ՃՒՆՆԵՍ ՅՈՎ.ԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՆԵՈՒ-
ԹԻՒՆԲ

Յովհաննէս Լազարեանի աղջային հասարակական-կրթական զործունէութիւնը արտայցտուել է զլխաւորապէս երկու մայրաժաղաքների Հայոց եկեղեցիների եւ Լազարեան ձեմարանի կառավարութեան մէջ, որպէս հոգարարձու այդ աղջային հաստատութիւնների այդ պաշտօնների մէջ նա մնացել

Հաղորդագրութիւնը ցոյց է տալիս, որ ազնուական կալուածատէր Յովհաննէս Լազարեանը եւս համակիր էր այդ աղասամիտ շարժման եւ ինքն էլ իր հերթին աղասութիւն էր տալիս իր ճորտերից նրանց որոնք ցանկութիւն էին ունենում ճորտութիւնից աղասագրուելու։ Փոքր ինչ առաջ տանելով մեր խօսքը, աւելացնենք, որ Դրիմի պատերազմը (1853—1855), որ շատ աննպաստ կերպով վերջացաւ Ռուսաստանի համար, բացայցայ կերպով ապացուցեց, որ զիւղացիութեան աղասագրումը ճորտութիւնից այլ եւս անհնարին է յետաձգել։ Եւ արդարեւ, նիկոլայ Ա. ի որդին՝ կայսր Ալեքսանդր Բ. թ. 1861 թ. փետրուար 19ին կայսերական հրովարտակով Հոչակեց զիւղացիների աղասութիւնը ճորտութիւնից, որի հետեւաներով Ռուսաստանում սկսուեց բարենորոգութիւնների մի փայլուն ժամանակաշրջան։

է 1818 թուից մինչեւ իր մահը՝ 1858 թ.,
ուղիղ 40 տարի:

Հայոց եկեղեցիների կառավարութեան
մասին աեղեկութիւններ չունինք, իսկ ինչ
վերաբերում է ձեմարանին, այդ մենք կը
տեսնենք ձեմարանի պատմութեան մէջ. այս-
տեղ արձանագրենք միայն, որ նա՝ իր հօր
նման, սիրել է ձեմարանը, գուրզուրացել
նրա վրայ եւ ջանք չի խնացել ձեմարանի
պայծառութեան յառաջադիմութեան համար:

Խանդավառուած մի մտքով՝ բերել ըստ
հնարաւորութեան մեծագոյն չափով օգուտ
իրենց կրթական հիմնարկութեան՝ ձեմարա-
նին ու նաև ամեն կերպ զարկ տալ Հայոց
լեզուի, գրականութեան ու պատմութեան
զարդացմանը, երկու եղբայրները՝ Յովհան-
նէսն ու Խաչատուրը յղանում են նախ, ձե-
մարանին կից տպարան հիմնելու փայլուն
միտքը, եւ ապա հարց են բարձրացնում հիմ-
նելու Մոսկուայի համալսարանում Հայոց լե-
զուի ու դպրութեան յատուկ ամբիոն:

Երկու ձեռնարկներից առաջինը պսակ-
ուում է կատարեալ յաջողութեամբ, եր-
կրորդը, որ կարող էր անթիւ օգուտներ բե-
րել Հայոց լեզուի ու դպրութեան ուսումնա-
սիրութեան ու զարդացման գործին, դժբախ-
տաբար, անյաջութեան է մատնեում:

Տպարանի կատարած մշակութային դերի
մասին խօսք կը լինի ձեմարանի պատմու-
թեան մէջ. այստեղ միայն ասենք, որ այդ

տպարանը հիմնուել է 1829 թուին, որ նրա վրայ երկու եղբայրները ծախսել են 50.000 ռուրլի թղթագրամ, իսկ հետագայում եւս 32.162 ռուրլի արծաթ, տպարանի ընդարձակման ու պահպանութեան համար։ Տպարանը, նախ ծառայում էր ձեմարանի կարիքները բառարարելուն՝ տպագրում էր գառագրքեր, բլանկաւոր թղթեր, մատեաններ, տետրակներ, աշակերտների եւ ուսուցիչների դրական-գիտական հեղինակութիւնները, իսկ այնուհետեւ կատարում զրոխ պատուէրները։

Այստեղ են տպագրուել Աբովկուայում լոյս տեսած հայ մամուլի որդանները («Հիւսիսափայլ», «Ճռաքաղ» և այլն) ու նաեւ զանազան բառարաններ։

Ի միջի այլոց, 1838 թ. Յովհաննէս Լազարեանը լոյս է ընծայել, տպագրելով ձեմարանի տպարանում Ալէքսանդր Խուզարաշեանի Հայերէն-Ռուսերէն բառառանը, բագկացած երկու հատորից, ծախելով իր սեփական միջոցներից 72.000 ռուրլի թղթագրամ։ Այս բառարանը ժամանակին ունեցել է արտակարգ նշանակութիւն եւ մեծապէս գնահատուել է հայ հասարակութեան մտաւորական շրջանակներում։ Կայսրն իսկ՝ Նիկոլայ Ա.-ը այդ առթիւ յայտնել էր իր «բարձրագոյն հաճութիւնը» Յովհաննէս Լազարեանին⁸։

*

⁸ Տե՛ս Մ. Մոկրեանցի «Յիշատակարան», էջ 28, մաս գ.։

1829 թուին Յովհաննէս Լազարեանը գրաւոր, իմաստօրէն ձեւակերպուած ու լրջօրէն պատճառաբանուած դիմում է անում Մոսկուայի Համալսարանի Հոգարարձու գեներալ-մայոր Պիսարեևին, առաջարկելով Մոսկուայի համալսարանում ստեղծել յատուկ ամբիոն Հայոց լեզուի ու գրականութեան :

Այս դիմումի մէջ բերուած պատճառաբանութիւններն ու նկատումները այնքա՞ն արժէ քաւոր են ինքնըստինքեան եւ ազատագոյց հեղինակի ո՛չ միայն նրա նուիրումի հայ զրին ու զրականութեան, այլև նրա լուսաւոր մտքի, ուստի անհրաժեշտ ենք համարում առաջ բերել նրա բովանդակութիւնը գէթ քաղուածօրէն :

«Հայոց լեզուն — ասուած է այդ դիմումի մէջ — եւ զորութիւնը, որպէս մի ճիշդ արեւելեան լեզուների, որոնք ուսումնասութրում են արտասահմանի բոլոր համալսարաններում ու նաև մեր Հայքենի համալսարաններում, արժանի է հաւասարապէս ուշադրութեան, ինչպէս իր ներքին արժանիքներով գիտական անսակէտից, նոյնպէս և քաղաքական պատճառներով :

«Հայ պատմապիրները, ինչպէս ևն՝ Մարերբաս Կատինան 150 տարի Ք. Ն. ա., Մովսէս Խորենացին Վրդ դարում, Եղիշէ, Ղազար Փարագեցի, Արէլ Քարիր (?) , Պատրիարք Յովհաննէս, Օհան Առաքել (?) , Մովսէս Կա-

դանկատուացի եւ շատ ուրիշները նշանառոր
են թէ իրենց ոճի գեղեցկութեամբ եւ թէ իրենց
տուած տեղեկութիւնների կարեւորութեամբ։
Նրանք խօսելով իրենց հայրենիքի մասին,
խօսում են նաև Բիւզանդիոնի, Յոյների,
Պարսից արքաների, արարների, տաճիկների,
մոնղոլների, Խաչակրաց արշաւանքների եւ
առհասարակ ամրողջ Արեւելքի մասին,
ոկտած Խրդ զարից մինչեւ նորագոյն ժամա-
նակները։ Այնուղ, ուր յունական եւ հոռո-
մէական զրողների պատմութիւնը ընդհա-
տում է, լրացնում են հայ պատմագիրները
իրենց երկերով։

«Այս իսկ նկատումով Փրանսիական կա-
ռավարութիւնը, հետամուտ մի նպատակի,
այն է՝ լրյու սփոել զիտութեան վրայ, հաս-
տատել է Փարիզի Համալսարանում Հայոց
լեզուի ու Հայոց զպրութեան յատուկ ամ-
րիոն։

«Արեւելագէտները, որոնք ուսումնասի-
րել են Հայոց լեզուն, հետախուզել են Արեւ-
ելքի հնութիւնները եւ հրատարակել IV եւ
Vրդ դարերի պատմազիրների գեղեցիկ ստեղ-
ծագործութիւնները»։

Այնուհետեւ հեղինակը պատճառարա-
նում է իր առաջարկի անհրաժեշտութիւնն ու
նպատակայաբմարութիւնը նաև նրանով, որ
կազան քաղաքի համալսարանը ունի թուր-
քերէն լեզուի ամրիոն եւ դա անհրաժեշտ է
համարուել այդ լրջանի համար, որովհետեւ

նրա ազգաբնակութեան մի խոչոք մասը կաղմում ևն թուրքերը :

Հայոց լեզուի ամրիոնը Մոսկուայի համալսարանում նոյն նկատումով նոյնքան անհրաժեշտ է, քանի որ Մոսկուան անընդհատ գրառում է բազմաթիւ հայեր, մանաւանդ «Հայոց Նահանգի» միացումից յետոյ Ռուսաստանին⁸:

Հեղինակը չի մոռանում մատնանշելու նաև քաղաքական ու տնտեսական հանգամանքների վրայ, որոնք նոյնպէս խօսում են յօդուտ իր առաջարկի իրազործման անհրաժեշտութեան:

«Մեր հայրենիքում, — ասում է նա — բացի այս պատճառներից, որոնք վերաբերում են Հայոց լեզուի ու գլորութեան բարձրարժանիքներին, կան եւ քաղաքական հանգամանքներ, որպէս հետեւանք Միջին Ասիայի հողամասերի սահմանակից լինելուն մեր կայսրութեան, մանաւանդ որ կայսեր Նիկոլայ Պալլովիչի ներկայ օրհնեալ թագաւորութեան օրօք նրա պետութեան սահմանների մէջ է առնուած յաւէտ յիշատակելի Արարատը: Ներկայումս Հայ ժողովուրդը, բնակուող Ռուսաստանում եւ նահանգում, որ

⁸ Յաւօք սրտի, մենք չգտանք վիճակաղբական աեղեկութիւններ Մոսկուայի հայ զաղութիւ թուական աճման մասին: «Սովորական Հայաստան» ամսագրում (47 թ. Ա. 9) Գ. Մատվանեանը հաղորդում է, որ 1779 թուին Մոսկուայում կար 42 հայ ընտանիք, իսկ 1810 թուին այդ թիւր բարձրացաւ 60ի, իսկ հետագայում առելի մեծացաւ»: Միայն այսքանիր...

կոչում է Հայկական . . . սպառում է, որ
նրա մայրենի լեզուն կցուի ուսանող երիտա-
սարդութեան պարագմունքներին» :

Ծարունակելով իր առաջարկի հիմնառումը,
հեղինակը մատնանշում է այն առեւ-
տրական շահագրգռութիւնների վրայ, որ
Ծիռսաստանը ունի և որոնց նա միշտ հետա-
մուտ է եղել Արեւելքում :

Բայց Հայոց լեզուի ուսումնասիրութիւնն
ու տարածումը կարեւոր է նաև կառավա-
րական վարչական գործերի համար նոր նուա-
ճուած Հայոց գաւառներում :

Ի վերջոյ, հեղինակը պատրաստակամու-
թիւն է յայտնում հոգալու արժանաւոր
Հայագէտներ հրաւիրել, ինչպէս և իր ծախ-
սով արամագրել բոլոր անհրաժեշտ զիտա-
կան ձեռնարկները, եթէ Մոսկուայի համա-
յարամում հաստատուի Հայոց լեզուի ու
զպրութեան յատուկ ամրիոն¹⁰:

Յովհաննէս Լազարեանի ոյս խնդրագիրը
Մոսկուայի համարաբանի հոգարարձուն ու-
զարկում է ժողովրդական լուսաւորութեան
նախարար իշխան Լիվէնին նոյն 1829 թ. հոկ-
տեմբեր 22ին :

Նախարարը նոյն թուի նոյեմբեր 9ին տա-
լիս է իր հետեւեալ ժխտական պատասխանը,

¹⁰ Այս գիրումի, ինչպէս և կառավարութեան
պատասխանի լրիւ բովանդակութիւնները ուսւերէն լե-
զուով բերուած են ձեմարանի 50ամեակին նուիրուած
Հրատարակութեան մէջ, էջ 13—15:

որ կը կին առաջ ենք բերում միայն մի հատուածը.

«Ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնը արդէն ուշագրութեան է առել մեր հայրենիքում արեւելեան լեզուների, ի թիւս որոց նաեւ Հոյոց լեզուի, ուսումնակիրութեան անհրաժեշտութիւնը, բայց քանի որ հնարաւորութիւն չկայ մեր խրաքանչիւր համալսարանում ունենալ ամէն մի լեզուի համար դասաւուներ, հետեւարար նախարարութիւնը մտագիր է Ս. Պետերբուրգում հիմնել մի ընդարձակ մասնաճիւղ, ուր կ'աւանդուին բոլոր արեւելեան լեզուները։ Նախարարութիւնը հարկադրուած է այսպէս վարուելու նաեւ նրա համար, որ մեր բոլոր համալսարանները, ի թիւս որոց նաեւ Մոսկուցինը, չեն կարող արեւելեան լեզուների ուսումնասիրութեան համար ունենալ բոլոր հարուստ օժանդակ միջոցները, որոնցմով օժտուած է Ս. Պետերբուրգը. այնուեղ են՝ Գիտութիւնների Ակադեմեան, Կայսերական Հոյեկական գրադարաննը, որոնք կայսեր ողորմածութեան չնորհիւ, ունին թանկարժէք արեւելեան գրադարաններ եւ ուր համախմբւում են մարդիկ, որոնք հոչակուած են իրենց գիտութիւններով արեւելեան գպրութեան մէջ եւ այդպիսով գիւրացնուած են ամէն մի արեւելեան լեզուի համար բազմաթիւ ու ձեռնհաս դասաւուներ ունենալը։

«Այս մտադրութիւնը՝ հիմնել մայրաքա-

դաքում բոլոր արեւելեան լեզուների մի մասնանիւղ, արգէն խալ արժանացել է նախնական բարձրադոյն բարեհաճութեան . . .» :

Անկարելի էր ուրանալ, որ նախարարութեան ժխտական պատասխանը չառ լուրջ կերպով էր հիմնաւորուած եւ որեւէ առարկութիւն չէր վերցնում, ուստի Յովհաննէս Լազարեանը հարկադրուած եղաւ համակերպուել, ու նոր քայլեր չանել, թէ եւ, անշուշտ, նա ցաւ զգաց, որ իր ցանկութեան իրազործումը տեղի պիտի ունենաց ձեմարանի շրջանակից զուրս եւ առանց իրենց՝ Լազարեանների վեհանձն օժանդակութեան . . .

Վերջացնելով մեր խօսքը Յովհ. Լազարեանի կրթական գործունէութեան մասին, մենք չենք կարող չասել մի քանի խօսք նաև Լէօի այն կարծիքի մասին, որ իրը թէ Լազարեանները ընդհանրապէս եւ Յովհաննէս Լազարեանցը մասնաւորապէս, իրենց գպրոցական-կրթական գործունէութեան մէջ աշխատել են նմանուել Ս. Ղազարի Մխիթարեաններին ու մրցման մէջ են եղել նրանց հետ :

Լէօն իր այս տեսակէտը չառ ցայտուն կերպով յայտնել է մասնաւորապէս իր «Ստեփանոս Նազարեանցի կենսագրութիւնը» հեղինակութեան ներածութեան մէջ :

«Զէ կարելի ասել — զրում է Լէօն — թէ հաց հոգեւորականութիւնը չէր զգում Մխիթարեանների մտաւոր վերազանցութեան ան-

յարմարութիւնը։ Կար դժգոհութիւն, կար դիմադրելու ցանկութիւն։ Բայց պակասում էր ոյժը։ Դիմադրողները հաւասար զէնքեր չունեին։

«Այս իրողութեան վրայ ուշադրութիւն էր դարձրել կոմս Յովհաննէս Լազարեանը, ինչպէս վկայում է Յովակիմ Լազարեանը 1820 թուականին հրատարակած իր մի շրջարականի մէջ։ Նա հասկացել էր, որ կարօիկ վարդապետների դէմ մրցելու համար պէտք է նրանց պէս ուսումնական հոգեւորականներ պատրաստել։ Եւ այս միտքը դարձել էր մի լաւ դպրոց բաց անելու շարժառիրներից մէկը։ Իր եղբօր հետ համաձայն էր և Յովակիմ Լազարեանցը» (Էջ 22—23)։

Նոյն Ներածութեան մէջ Լէօն կրկնում է նոյն գաղափարը, ասելով՝

«Յովակիմ Լազարեանը գմիռում է Վենետիկ, մոռանում է նոյն խոկ որ իր դպրոցը Ս. Ղազարի դէմ մրցող մի հիմնարկութիւն պիտի լինի, խնդրում է Մխիթարեան միաբանութիւնից երկու վարդապետ ուղարկել ուսուցչութիւն անելու համար (Ճեմարանում)» (Էջ 26)։

Իսկ Էջ 29ում ասում է.

«Մխիթարեաններին նմանվելու, Մխիթարեաններին դիմադրելու ցանկութիւնը այնին մեծ էր, որ 1823 թուականին Լազարեանների դպրոցում կազմուեց Հայկական հոգութիւնների սիրողների Ընկերութիւն»։

Եւ ապա՝ «Հարկաւոր էր ունենալ եւ սեփական տպարան, ինչպէս ունեին Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանները։ Յովակիմ Լազարեանի ժառանգները մի հարուստ տպարան էի նուիրեցին իրենց ձևարանին (1829)»¹¹։

Բաւականանանք այս մէջբերումներով։

Թող՝ ներուի մեզ ասելու, որ Լէօփ այս բացատրութիւնները մենք համարում ենք լրականութեան ո՛չ համապատասխանող ունաւու, թւում է, թէ մակերեսային ու ձեւական է։

Լազարեանների հոյակապ տոհմի բարոր անդամների, սկսած ցեղապետ Ղազար Նազարեան Լազարեանից, կենսագրականների, նրանց կեանքի ու գործունէութեան հետ ծանօթութիւնը չի կարող առիթ տալ նման մի տեսակէտի համար. անհնարին է երեւակայել, որ նրանք իրենց դպրոցական-կրթական գործունէութեան մէջ առաջնորդուած լինեն նման շարժառիթներից թէ ընդհանրապէս եւ թէ մասնակի կերպով՝ «մրցման ու գիմազրութեան կամ Մխիթարեաններին նմանուելու» մոտիվներից մզուած լինեն։

Այս սքանչելի եւ անզուգական տոհմի բարոր ներկայացուցիչները այնքան խոր, այնքան լաւ ծանօթութիւն ունէին իրենց ժամանակի հոյ իրականութեան շատ տիսուր պի-

¹¹ Բոլոր ընդգծումները մերն են։

համի հետ, որ միանգամայն ինքնարերարար
պիտի գացին այն համոզումին եւ այն լուսա-
ւոր մտքին, որ միակ միջոցը պայքարելու
տիրող մտաւոր խաւարի գէմ՝ գպրոցն է,
ուսումն ու կրթութիւնն է եւ որ միայն լաւ
հիմունքների վրայ դրուած գպրոցի միջոցով
է, որ նրանք կարող են զարկ տալ հոյ լե-
զուին, հոյ գրին ու գրականութեան:

Այս պարզ մտքին գալու համար նրանք
կարիք չունէին ջանալ նմանուելու Միթթա-
րեաններին: Հոյ իրականութիւնը ինքնին ա-
զաղակում էր ու պահանջում լոյս ու կրթու-
թիւն:

Բացի այդ, Լազարեանների ազգասիրու-
թիւնը, հայրենասիրութիւնը, նրանց սէրը
գէպի ուսումն ու կրթութիւնը, նրանց մշտա-
կան մտահոգութիւնները լոյս ու կրթութիւն
տարածել իրենց հայրենակիցների մէջ՝ կազ-
մում էր նրանց մեծ հոգու բնական պա-
հանջը. դա մի ժառանգական աւանդութիւն
էր, որ անցնում էր սերունդէ սերունդ, հօ-
րից որդուն: Արհեստական ոչինչ կար նրանց
մէջ. Լազարեանները մի ինքնատիպ ու մոլե-
սանդ սպասաւորներ էին իրենց սիրեցեալ
ազգի:

Նրանց լոլոր կրթական ձևնարկները
րիսում էին մի բաղձանքից՝ դարձնել ձեմա-
րանը լուսաւորութեան մի կենտրոն հոյ ժո-
ղովրդի համար: Եւ նրանք ո՛չ մի ծախսի
կամ գժուարութեան առաջ կանգ չէին առ-

նում ոյժ տալու ձեմարանի հեղինակութիւնը
բարձրացնելու, զօրացնելու և ընդարձա-
կելու նրա կրթական դերը։ Այս բաղձանքից
էր, որ միանգամայն բնականարար ու տրա-
մարանօրէն բխում էր նրանց այս կամ այն
կրթական ձեռնարկի նախաձեռնութիւնը։

Թերեւս, արտաքին նմանովութիւն կար
նրանց ու Մխիթարեանների կրթական —
գրական ձեռնարկների միջեւ, բայց ո՞չ երբեք
նմանուելու շարժառիթ։

Այս բոլորով հանդերձ չպիտի մոռանալ,
որ թէ կոմս Յովհաննէս Լազարեանը, ձե-
մարանի հիմնադիրը, և թէ նրա բոլոր յա-
ջորդները լաւ կրթուած մարդիկ էին եւրո-
պական իմաստով։

Իսկ եթէ ի նկատի առնելու լինենք, որ
թէ կոմս Յովհաննէս Լազարեանը և թէ նրա
եղբայրները ապրել են 18րդ դարի երկրորդ
կեսին, երբ Փրանսական լուսաւորիչների
յառաջադէմ գաղափարները ողողել էին ամ-
րող Եւրոպան և հասել Եկատերինա Բ.
կայսեր գահին, որ Լազարեանները չէին կա-
րող մնալ այդ հսկայ մտաւոր շարժումից
գուրս և զերծ նրա բարերար ազգեցու-
թիւնից, — ակամայ պիտի գանք նոյն եզրա-
կացութեան, որ Լազարեանները որեւէ պատ-
ճառ չունէին իրենց հայեացքները սեւեռած
պահել դէպի Ս. Ղազարը և ընդօրինակել
նրանց, առաւել եւս մրցութեան մէջ մտել
նրանց հետ...

ի վերջոյ, Լէօն, յենուելով աղա Յովակիմի 1820 թ. «Յայտարարութեան վրայ առ խոր համազգիս», ասում էր, որ կոմս Յովհաննէս Լազարեանը ուշադրութիւն էր դարձրել այն դժողովութեան եւ դիմադրելու ցանկութեան վրայ հանդէպ Մխիթարեանների:

Այս մատնանշումը մի կատարեալ թիւրիմացութեան արդիւնք է, քանզի այդ Յայտարութիւն-շրջաբերականի մէջ ակնարկ անդամ՝ չկայ այն մասին, որ կոմսը համակուած լինէր նման տրամադրութիւններով . . .

ԳԼՈՒԽԻ Է.

ԽԱԶԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

(1789—1871)

ԵՒ

ՄԱՆՈՒԿԻՆ ՅՈՎՃԱՆՆԵՍ ԽԱԶԱՏՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

(1844—1850)

Խաչատուր Լազարեանը՝ աղա Յովակիմի երկրորդ որդին՝ ծնուել է 1789 թ. Յունիս մէկին:

Աղա Խաչատուրի պետական ու ազգային հասարակական-կրթական գործունէութիւնը տեւել է՝ շատ երկար՝ 1801 թ. սկսած մինչեւ իր մահը՝ 1871 թ.:

Չնայած, որ նրա երկու կենսագիրները՝ Մաերեանցն ու Պրոֆ. Զինովիւր, գրել են իրենց երկասիրութիւնները նրա կենդանութեան ժամանակ, այսու հանդերձ այս կենսագրականն էլ շատ պակասաւոր է: Կրկին

մեզ օգնութեան են գալիս բարձրագոյն Հրովարտակներն ու Հրամանագրերը:

1818թ. աղա Խաչատուրը եղել է Լազարեան Ճեմարանի Հոգարարձուի՝ իր մեծ Եղբօր աղա Յովհաննէսի օգնականը, իսկ վերջինին՝ մահից յետոց՝ Հոգարարձու թէ Ճեմարանի և թէ երկու մայրաքաղաքների Հայոց եկեղեցիների:

Ճեմարանի Հոգարարձուի օգնականի պաշտօնը այդ ժամանակ վերացուել է:

Խաչատուր Լազարեանը իր սկզբնական կրթութիւնը ստացել է իր ընտանիքում՝ ծնողների մօտ: Այնուհետեւ պատրաստուել է եւ աւարտական քննութիւն տալով Պետերբուրգի Մանկավարժական Ճեմարանում ստացել է 1812թ. յունիս 15 վկայական, որից երեւում է, որ բացի ընդհանուր կրթական առարկաներից (թուարանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն ևայլն) նա սովորել է ֆրանսերէն ու զերմաներէն լեզուները, Պետական տնտեսագիտութիւն, Հռովմէական և քրէական իրաւունքները, բնական օրէնքները, ընդհանուր և մուսաց վիճակագրութիւն, ժամանակագրութիւն, բնաբանութիւն ևայլն:

Իր ծառայութեան ցուցակից խմանում ենք, որ պետական ծառայութեան է մտել 1801թ.:

Իր երկարատեւ ծառայութեան ժամանակաշրջանում նա հասել է բարձր աստիճան-

ների՝ Գաղտնի Պետական Խորհրդականի և
Կայսերական Դրան Սենեկապետի (Կամեր-
իեր) կոչումը. ստացել է բազմաթիւ շքան-
շաններ, մեղալներ ու թանկապին նույնը-
ներ: Բարձրագոյն շքանշաններից յիշատա-
կենք միայն՝ Ա. Յովհաննու Երուսաղէմաց-
ւոյ (1816), Ա. Աննայի Ա. աստիճանի (1848)
և Պարսից Շահից Առիւծի և Արեգակի ա-
սաջին աստիճանը 1853թ.:

Նասրէդդին Շահի այդ առթիւ տրուած
Հրովարտակի մէջ ի միջի այլոց ասուած է.

«Ազգ եղեւ մեզ, թէ արժանաւորագոյնն
պատուոյ՝ պերճափառն՝ վեհանձնն Խաչառուր
Յովակիմեան Լաղարեանց, ընդարձակեալ եւ
առաւել յոյժ պայծառացուցեալ է զԱրեւե-
լեան Լեզուաց Ճեմարանն ի Մոսկուա քա-
ղաքի՝ ... յորում աւանդին մանկանց՝ բաց
յայլոց դիտութեանց՝ նա եւ օտար լեզուք,
Արարացոց, Պարսից եւ Տաճկաց. որով և
Հրահանդեալ պատրաստին քարգմանի ըն-
տիրք եւ միանգամայն պիտանացուք Պարս-
կաստանի, որպիսի եղեն որդին եւ եղօր-
որդին զերաստինան Խամայիլ (Ստեփան)
Խանի, որք վարժեցան ի նմին շահարեր Ճե-
մարանի¹»:

Խաչառուր Լաղարեանը եղել է պատուա-
տոր անդամ Պետերբուրդի և Մոսկուոյի
բնագննաց ընկերութեան, Պետերբուրդի և

¹ Տե՛ս Ա. Մակրեանցի «Յիշատակարան», էջ 72,
Բ. մաս: Ընդդումները մերն են:

Մոսկուայի Ազատ Տնտեսական Բնկերութեան, Անդամ Կայսերական Բնկերութեան Շինական տնտեսութեան եւ Փարիզի Ասիական ընկերութեան (1847թ.) :

Պետական ծառայութիւնից յիշատակենք միայն, որ պաշտօնավարել է Կայսերական Դիւանում Արտաքին գործոց, Արտաքին գործոց Նախարարութան մէջ եւ ապա Ռուսական պատերազմի ժամանակ գտնուել է ռուսական բանակում Խորհրդականի պաշտօնուի²:

* *

Ազա Խաչատուրի գրեթէ ամրող կեանքն ու գործունէութիւնը նուիրուած են եղել Լազարեան Ճեմարանին, որի կրթական բարելաւումն ու նիւթական ապահովութիւնը կազմել են նրա մշտական խնամքի առարկաները: Ճեմարանի պատմութեան մէջ առելի կը պարզուի, թէ որքա՞ն բեղուն է եղել նրա գործունէութիւնը Ճեմարանի կեանքի մէջ եւ որպիսի՝ մեծ ծառայութիւններ է նա մատուցել Ճեմարանին ու թողել անջնջելիր հետքեր: Ճեմարանը նոյնքան մօտ է եղել նրա

² Ա. Մակրեանցի «Յիշատակարան», էջ 95, գ. մաս, ուր թարգմանաբար րերսուած է «Ակադեմի ժողովածուից» հետեւեալ հատուածը:

«Ի պատերազմին (Ռուսաց) ընդդէմ Տաճկաց յամին 1828, ի Կայսերական Գլխաւոր բնակարանի՝ ի տեսչութեան Արտաքին գործառնութեանց պահնէր Պետական Խորհրդականն Խաչատուր Լազարեանց: Բարբարազագոյն հրամանի չողաւ նա ապա ի Մոլդավիա և ի Վալաքիա զանազան յանձնաբարութեամբը»:

սրտին, որքան որ իր հօր եւ եղբօր սրտին։
Նրա այդ ծառայութիւնը գնահատուած է
եղել ո՛չ միայն ձեմարանի աշակերտութեան,
ուստցութեան եւ հայ հասարակութեան
կողմից, այլ եւ կառավարութեան կողմից։
Յէշատակենք միայն մի դէպք։

1853 թ. մայիս 20ի բարձրագոյն Հրո-
վարտակի մէջ ասուած է.

«...Յարատեւ ջերմեռանդութիւն Զեր
առ պայծառութիւն ձեմարանին Արեւելեան
Լեզուաց... եւ բազմապատիկ նուիրարերու-
թիւնքն առատաձեռնեալք ի Զէնջ յօդուտ
այսր ձեմարանի՝ արժանի եղեն հանապազ
Մերում առանձին ուշադրութեան։ Յարդե-
լով Մեր զայդչափ զգովանի եւ զբարեփոյթ
ճիգն Զեր ի տարածումն լուսաւորութեան,
... Ամենաողորմածարար պարզեռում եմք
Զեզ ... զԵքանչան Ասպետական կարգի Ս.
Աննայի առաջին աստիճանի, զարդարեալ կայ-
սերական թագիւ...»։

Ձեմարանի կեանքից էլ բերենք միայն
մի դէպք, որ վճռական նշանակութիւն ու-
նեցաւ եւ տուեց ձեմարանին այն կազմա-
կերակութիւնը, որը այնուհետեւ մնաց ան-
փոփոխ։

Ձեմարանում մինչեւ 1872 թ. արեւելեան
լեզուների դասաւանդութիւնը կամ խառն է
եղել ընդհանուր կրթական առարկաների հետ,
կամ եթէ զատուել է, բայց կրկին զրեթէ ան-
կազմակերպ գիճակում է եղել։ Միայն

1872 թ. են բացւում յատուկ մասնագիտական դասարաններ արեւելեան լեզուների համար, իրենց առանձին կանոնագրութեամբ, ուսուցչական կազմով ու բիւջեով:

«Մասնագիտական դասարանների նոր կանոնագրի մշակումը, — պատմում էլ վրացերէն լեզուի ու գրականութեան դասատողը. Խախանովը — սկսուեց Խաչատոր Յովակիմեան Լաղարեանի օրօք: Երբ 1871 թ. դեկտեմբեր 14ին կանոնագրը արդէն վերջնականապէս մշակուած ու պատրաստ էր, արդէն կնքել էր իր մահկանացուն այդ մեծահոգի տոհմի վերջին ներկայացուցիչը:

«Պատկառելի ծերունին միշտ բերել էր կենդանի մասնակցութիւն Մասնագիտական դասարանների ճակատագրի տնօրինութեան մէջ. նաև հետեւում էր նրանց կազմակերպութեան, հոգ էր տանում, որպէս զի խրաքանչիւր առարկայի ամբիոնը թափուր չմնայ եւ ժամանակին ունենայ իր դասախոսին. անձամբ քննութեան էր առնում Ճեմարանի վարչութեան կողմից կազմած դասախոսների անուանացուցակը. Պետերբուրգից ուղարկում էր հաշուետուութեան կանոնները, վերստուգիչ պալատի կողմից ընդունուած, որոնցով Ճեմարանը պիտի առաջնորդուէր պետական դանձարանից ստացուած գումարների գործադրութեան հաշուետուութեան ժամանակ: Նրա օրօք էր, որ առաջին անդամ՝ Մասնագիտական դասարանների ծախ-



Խաչատրութ Լազարեանց

սերր իր վրայ առաւ Պետական Գանձարանը,
յատկացնելով տարեկան 18·365 ոռորի
90 կոպ.» :

«Ետաշատուր Յովակիմեան Լազարեանցը
գերեզման իջաւ սյն ժամանակ, երբ բոլոր
թիւրիմացութիւնները վերացած էին եւ Մաս-
նագիտական դասարանների կազմակերպու-
թեան խնդիրը լուծուած էր ամենայաջող
կերպով :

«Հանդուցեալ Հոգարարձուի նախօրօք
կատարած դիմումի համաձայն, 1871 թ. դեկ-
տեմբեր 20ին իշխան Սիմեոն Դաւիդովիչ
Աբամելիք-Լազարեանը հաստատուեց որպէս
Ճեմարանի պատուաւոր Հոգաբարձու եւ սցդ
կոչումը պիտի մնար նրա տոհմի մէջ ժառան-
գարար մէկ որդուց անցնելով միւսին՝³ :

Ետաշատուր Լազարեանին է պատկանում
նաեւ մի այլ խոչոր կրթական գործի կեանք
տալու նախաձեռնութիւնը, որի մասին խօսք
կը լինի քիչ սառըեւ եւ որը, ցաւօք սրտի,
կապուած է մի մեծ դժբախտութեան հետ.
... Անողոք ճակատագիրը ո՛չ խնայեց իր վե-
հանձն ծնողներին ու հարազատներին եւ ո՛չ
էլ Ճեմարանի բախտը....:

Դա՝ Ճեմարանի նախակրթական դասա-
րանի բացումն էր, որի անհրաժեշտութիւնը

³ Տե՛ս «Երեսունամեկակը Մասնագիտական Դասա-
րանների Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց»,
ոսւսերէն Հրատարակութիւնը: Մոսկուա 1903, էջ
XXII + 147. Մէջրերումը՝ տե՛ս էջ 18—19. Ընդ-
դումը՝ մերն է:

վաղուց զգացւում էր և որը իր դպրութեամբ դուռ բացարեց նոր հայ չքաւոր մանր երեխաների կրթութեան առաջ :

Խաչատուր Լազարեանի անունը, ինչպէս արդէն յիշատակել էինք, կապուած է նաև Ճեմարանի տպարանի հիմնարկութեան ու պահպանութեան հետ :

Ինչ վերաբերում է Ճեմարանի նիւթական ապահովութեան, ապա այդ գործում երկու եղբայրների՝ Յովհաննէսի և Խաչատուրի՝ զոհարերութիւնները, կարելի է ասել, գերազանցել են տոհմի բոլոր միւս անդամների նուիրատուութիւնները իրենց առատաձեռնութեամբ :

Լազարեան Ճեմարանի 50ամեակի առթիւ լոյս տեսած հրատարակութեան մէջ յիշատակուած են Լազարեան տոհմի անդամների կողմից արուած նուիրատուութիւնների գումարները։ Այդ հաշուեատուութիւնից երեսում է, որ 60 տարուայ ընթացքում՝ 1804թ. մինչև 1864թ. միմիայն Ճեմարանին արուած գրամական նուէրները կազմում են մի պատկառելի գումար՝ 662·782ռուբլի արծաթ կամ շուրջ երկու միլիոն ռուբլի թղթագրամ։ Այդ գումարից Յովհաննէսին և Խաչատուրին՝ երկու եղբայրներին բաժին է ընկնում՝ 502·437ռուբլի արծաթ. բացի 200·000ռուբլոց, որ նուիրաբերել է Խաչատուրը Ճեմարանի 50ամեակի առթիւ 1865թ. ապրիլ 2ին։

Այդ գումարների մէջ չեն մտնում այն

անշարժ կալուածների արժէքները, որ նույի-
րաբերել են Լազարեանները Ճեմարանին, եր-
կու մայրաքաղաքների եկեղեցիների նորո-
դութիւնների համար ինչպէս և նրանց կից
չէնքների կառուցման վրայ ծախսուած դրամ-
ները, տպարանի հիմնարկութեան ու նախա-
կրթարան դաստիանի համար արուած նուէր-
ների գումարները:

* *

Գալով Խաչատուր Լազարեանի ազգային
հասարակական գործունեութեան, ղժրախ-
տարար, տեղեկութիւնների բացակայութեան
հետեւանքով, քիչ բան կարող ենք ասել:

Մեր ներածութեան մէջ արդէն յիշատա-
լի էինք Խաչատուր Լազարեանի նամակի
մի մասը, դրուած Եփրեմ կաթողիկոսին
1811 թ. յուլիս 6ին: Այստեղ աւելացնենք,
որ Յովհաննէսն ու Խաչատուրը խիստ մտա-
հոգուած էին ուսուցիչներ պատրաստելու
խնդրով Հայոց դպրոցների ու Ճեմարանի
համար: Խաչատուր Լազարեանը այդ խնդրի
լուծման միակ միջոցը տեսնում էր նրանում,
որ Էջմիածինը յանձն առնի Հայագէտ ուսու-
ցիչներ պատրաստելու գործը:

«Բարւոք համարեսնջիք — դրում է նա
յիշեալ նամակի մէջ — օր մի առաջ այդք
զերկոտասան սրամիտ և բարեւար մանկախ
ընտրել եւ զնոսա ի անկեան միում Աթոռոյդ
յանձնել ումեմն առաջին բանական եւ ու-

սեալ անձին, որ է դպրի, վարդապետի կամ
եպիսկոպոսի, իցէ թէ Ներսէս սրբազանին
խել, զմանկտիան զայնս ի քերականութեան
եւ ճարտասանութեան լեզուի մերում լաւա-
պէս կըթել, ի աստուածաբանութեան, ովատ-
մութեան, աշխարհագրութեան եւ ի տաղա-
չափութեան որքան որ յազգի մերում ի լե-
զուի եւ ի մատեանս զտանին»:

Նամակի վերջում Հեղինակը յոյս է յայտ-
նում, որ Աթոռը ապագայում մեծամեծ
օգուտներ կը ստանայ, նման մի դպրոցից, —
«զի... լաւ եւ պիտանի անդամս, նուիրա-
կանս, տուածնորդս, ուսուցիչս, այս' եւ հայ-
րապետութեան արժանաւոր անձն էք ունե-
լոց⁴»:

Մ. Մսկերեանի բերած պաշտօնական դա-
նական նամակների ու դրութիւնների ցուցա-
կից խմանում ենք, որ երբ 1834 թ. Պետեր-
բուրգում կազմուել էր մի կոմիտէ մշակելու
Հայոց եկեղեցւոյ սահմանադրութիւնը՝ ա-
պագայ «Պօլօժէնիան», Խաչատուր Լազա-
րեանը նշանակւում է կառավարութեան կող-
մից անդամ այդ կոմիտէի:

Այսպէս բոլոր տեղեկութիւնները, որ
ունեցել ենք մեր ձեռքի տակ, պարզ ու ակ-
նայացանի կերպով՝ որ այդ զարմանալի տոռհմի
բոլոր անդամները, սկսած պապից՝ ցեղա-
տիալ Ղազար Լազարեանից, մինչեւ թոռները,

⁴ Տե՛ս Լէօ, «Պատմ. Երեւանի թէս. դպրոցից», էջ 92:

տոհմի վերջին շառաւիդ աղա Խաչատրութը՝
նկատուել են թէ կառավարութեան եւ թէ
համայն հայ ազդի կողմից, որպէս հարա-
զար ու հեղինակաւոր ներկայացուցիչներ,
որոնց կարելի էր դիմել թէ հայցելով խոր-
հուրդներ պետական գործերի մասին լինի
թուսաստանի, լինի հայ ժողովրդին վերա-
րերդ, թէ նիւթական օդնութիւն եւ թէ բա-
րեխօսութիւն ու միջնորդութիւն զանազան,
նոյն խոկ մասնաւոր, անհատական կարիք-
ներին բաւարարելու համար։ Եւ Լազարեան-
ները չեն մերժում ոչ ոքի, չնայած իրենց
բազում աշխատանքներին ու հոգերին։

Միաժամանակ աչքի է զարնում նաև այն
ջերմ եւ անկեղծ սէրը, յարդանքը, այն հա-
մերաշխութիւնը, որ տիրել է այդ զարմա-
նահրաշ տոհմի բոլոր անդամների մէջ փո-
խաղարձարար։ Մի կատարեալ նահապետա-
կան հայ ընտանիք, ուր ցեղացին աւանդները
սրբութեամբ պահպանուել են չուրջ 130 տա-
րուայ ընթացքին։

Պրոֆ. Զինովեւը, ի միջի ոյլոց, յիշա-
տակում է մի մասնաւոր գէպք, որ իրօք ար-
ժանի է ուշադրութեան եւ որը միաժամա-
նակ ցոյց է տալիս, թէ հեռաւոր հայ գա-
ղութներում որքա՞ն էր բարձրացել Ռուսա-
տանի հմայքը 1826—1829 թթ. պատերազմնե-
րից յետոյ եւ մասնաւորապէս Արեւելեան
Հայաստանի ազատութիւնը պարսկական եւ
տաճկական տիրապետութիւնից ինչպիսի՝

խոր ու խանդավառ տարաւորութիւն էր թողել այդ հեռաւոր շրջաններում :

1829թ. Հնդկաստանում, Ամարան քաղաքի բնակիչ ոմն Յովսէփ Յովհաննիկս Ամարխանը դիմում էր արել Ռուսաստանի Հայոց թեմակալ առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսին, յայտնելով, որ կամքնում է իր բնտանիքով և հսկայ հարստութեամբ փոխադրուել Հայաստան, Ռուսաստանի հովանաւորութեան տակ, և որ մտադիր է իր հարստութիւնը զործագրել յօդուտ իր հայրենակիցների թէ իր կենդանութեան ժամանակ և թէ իր մահից յետոյ, նուիրելով իր եկամուտից տարեկան 5 լաք ուուփի (կէս միլիոն ոուրլի), միաժամանակ խնդրում է հաղորդել իրեն որոշ տեղեկութիւններ Ռուսաստանի մասին :

Ներսէսը այդ գրութիւնը ուղարկում է Խաչատուր Լազարեանին. վերջինս կոմս Բեկենդորֆի միջոցով ներկայացնում է կայսեր՝ Նիկոլ Ա. ին Ամարխանի խնդրագիրը :

1830թ. գեկտեմբեր 3 թուակիր նամակով կոմս Բեկենդորֆը յայտնում է Խաչատուր Լազարեանին, որ Ամարխանի խնդիրը ներկայացրել է կայսեր որը բարեհաճել է մակագրել՝

«Թո՞ղ նա զայ այստեղ, իսկ նրա պահանջած տեղեկութիւնները ես ինքս կը տամ նրան, երբ նրան տեսնեմ» :

Այնուհետեւ պատմութիւնը լոռում է և
որեւէ տեղեկութիւն չկայ այդ հայ մեծահա-
րուստ մարդու ճակատագրի մասին⁵:

Մի ուրիշ անհատական փոքրիկ դէպքի
մասին հաղորդում է Մ. Մոերեանցը:

Մի ուն հայազգի Սարաֆով դիմում է
Խաչատուր Լազարեանցին, խնդրելով, որ նա
բարեխօսի կայսեր առաջ թոյլտուութիւն
ստանալու ծառայել ոռու կօգակների հեծելա-
գունդի մէջ:

Խաչատուր Լազարեանը սիրով բարեխօ-
սում է և 1828 թ. օգոստոս 6ին ստանում
կայսեր բարեհաճ հաւանութիւնը:

Մի դէպք էլ Ղազարոս Աղայեանի կեան-
քից:

Պետերբուրգում Աղայեանը շատ ծանր
նիւթական վիճակում է եղել: Մի կիրակի
օր նա գնում է Հայոց եկեղեցի եւ այնտեղ
երգում իր անուշ ձայնով: Խաչատուր Լա-
զարեանին; որ ներկայ է լինում պատարա-
դին, շատ դուր է դալիս Աղայեանի ձայնը և
հրաւիրում է նրան իր մօտ: Աղայեանը ներ-
կայանում է և ահա՛ ինչպէս է պատմում նա
այդ դէպքի մասին իր «Իմ կեանիքի զլսաւոր
դէպքերը» յուշերում.

⁵ Հետաքրքրութիւնից զուրկ չի լինի ստուգել, թէ
այս Ամարիանը արդեօք այն Ամիրխանեաննը չէ, որի
հակայ Հարստութեան շուրջ, վերջին պատերազմից ա-
ռաջ, այնքան մեծ աղմուկ բարձրացաւ մամուլի մէջ,
երբ բազում ժառանդներ հանդէս եկան. ամենուրեք
եւ նոյն իսկ մի շարք պետութիւններ ցոյց տուին մեծ
շահագրգռութիւն:

«Վեր բարձրացանք փառաւոր սանդուղներով եւ հասանք մինչեւ ընդունարան։ Այստեղ դիմաւորեց ինձ բարեսիրտ ծերունին (վեհապն Խաչատուր աղա Լազարեանը, իր տոհմի վերջին ծերունի շառաւիզը), որին խոր գլուխ տուի, մի հինգ րոպէ խօսեց հետո, ասելով, որ ինձ շատ հաւանել է, եւ խնդրում է, որ ամէն շարաթ կիրակի ժամումը երգեմ։ — Դուք ոռճիկ կը ստանաք, ասաց, եւ բնակարան, իսկ այս առէք ձեզ առժամանակ։ Այս ասելով տուաւ ինձ մի նամակի ծրար։ Ես առայ, գլուխ վեր ըերի, եւ դուրս եկայ լուռ ու մունջ։ Երբ ծրարը բաց արի, միջին 25 մանէթ գտայ։ Նոյն օրը ինձ սենեակ տուին Հայկական եկեղեցու զաւիթում։ Ամսական նշանակեցին 30 մանէթ։

«Վեհապնը Եկեղեցու պաշտօնեաներին ստէպ—ստէպ ճաշի էր հրաւիրում, ուր գրսի հայերից ներկայ էր լինում միայն գեներալ Սուլթանչահը։ Դուրս գալիս սովորաբար ստանում էինք եւ ընծաներ մի—մի ծրարով. իմի մէջ սովորաբար 30 մանէթ» (Էջ 69—70)։

Անշուշտ, նման դէպքեր շատ են եղել Լազարեանների կեանքում, բայց որոնց մասին տեղեկութիւն չկայ գրականութեան մէջ, թերեւս պահպանուած լինին նրանց տոհմային թղթակցութիւնների մէջ, որոնք գտնուում են Ա. Հայտաստանում։

Երբ նման դէպքերի մասին Լազարեանների կեանքի մէջ տեղի ունեցած՝ մենք կար-

դում ենք, ակամայ մեր միտքը անդրադառնում է մեր ժամանակակից հայ պաշտօնեաներին, որոնք ամենուրեք օտար կառավարական շրջաններում ունին բարձր դիրք եւ վայելում են կատարեալ վստահութիւն. ի՞նչ վերաբերմունք են նրանք ի յայտ բերում դէպի իրենց ազգակիցների խնդրանքներին ու կարիքներին: Յաւով պիտի արձանադրենք, որ մեծ մասը չի հետեւում Լազարեանների օրինակին եւ այդ ո՛չ միայն մասնաւոր, անհատական դէպքերում, ոյլ եւ երրինդիրը վերաբերում է ազգային կենսական շահներին...: Երկիւդ են քաշում, որ իրենց միջնորդութիւնը՝ իրենց ծառայած կառավարութեան մօտ կարող է կասկածներ յառուցել իրենց բարեյուսութեաննկատմամբ...
Այո՛, հներից մեր զարմանահրաշ պապերից դեռ շատ բան ունինք սովորելու...

ՄԱՆՈՒԿԻՆ ՅՈՎՃԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ
(1844—1850)

Խաչատուր Լազարեանը 1819 թ. ամռանացել էր «ընդ չքնաղագունեղ դեղով մարմնոց եւ սուաքինի ոգւոյն բարեմասնութեամբք» իշխան Մանուկ թէյ Միքայեանի դստեր կատարինէի հետ: Մինչեւ 1844 թ. նա ունեցել է միայն աղջիկ երեխաներ, բայց միշտ էլ երազել էր ունենալ մի արու զառակ, որ միար ժառանդ ու շարունակով Լազարեան տոհմի:



Յովհաննէս Խ. Լազարեանց

1844թ. մայիս 12ին ծնողների երազը վերջապէս կատարում է եւ ունենում են արու գաւակ: Ծնողների, ինչպէս եւ հօրեղբօր՝ Յովհաննէսի ուրախութիւնը անսահման էր:

Հէնց այդ ժամանակ, կայսեր հրաւէրով 1843թ. յունիսին եկել էր Պետերբուրգ Հայոց նորընտիր կաթողիկոս Ներսէս Եստանալու իր ընտրութեան հաստատութիւնը կայսեր հրավարտակով եւ իջեւանել էր ազա թաշատուրի տանը: Կաթողիկոսը, որ իր 76 տարեկան հասակում նոր էր ծանր հիւանդութիւնից առողջացել, ներկայ է լինում նորածինի մկրտութեան եւ ինքն է օծում երեխային մեռնում եւ անունը դնում Յովհաննէս, մայիս 23ին¹:

Դժբախտաբար, նորածին Մանուկ Յովհաննէսը վատառողջ էր: Ծնողները որոշում են տանել երեխային արտասահման ու դիմել

¹ Ի գիպ, ազա թաշատուրի տանը, Ներսէս կաթողիկոսի հետ հանդիպում է ունենում գերմանացի ականաւոր ճանապարհորդ Բարոն Օգոստոս Փոն Հալստիառզէնը. ծերունազարդ կաթողիկոսը խոր տպաւորութիւն է թողնում նրա վրայ եւ նա մեծ զովասնքով է խօսում Հայոց կաթողիկոսի մասին. «... եօթանոնամենց ալեզարդ, սպիտակափառ, փոքրհասակ ծերունի — դրում է նա ի միջի այլոց — որոց կերպարանն յայտ տանէր զհեղութիւն, զկարովամտութիւն եւ զբարեմտութիւն»: Յետոյ հաղորդում է նաև, որ «այս այր բարեջան կառոյց եւ զզործարան ազակւոյ ի շրջակաց Տփխիսոյ»: Տե՛ս Փօն Հակոբհառուղին, «Ճանապարհորդութիւն յայսկոյս կովկասու, այն է՝ ի Հայոց եւ ի Վիրու»: 1872թ. Վաղարշապատ: Աէլրերումը՝ էջ 276—278:

այնտեղի ականաւոր բժիշկների օդնութեան։
Նոյն 1844 թ. ազա Խաչատուրը ամբողջ գեր-
դաստանով մեկնում է արտասահման, ուր
մնում է ամբողջ երեք տարի։ Այդ ժամա-
նակամիջոցում նա այցելել է գրեթէ բոլոր
Երկիրների մայրաքաղաքներն ու մեծ քա-
ղաքները՝ Կովկաս, Վարչաւա, Վիեննա, Վե-
նետիկ, Գենուա, Նիցցա, Պիդա, Լիվոռնո,
Ֆլորենցիա, Միլան, Առևլուրուրդ, Շտուտ-
գարդ, Հայզելբերդ, Մանհայմ, Մայն,
Ֆրանկֆուրտ, Վիզբադէն, Կեռլն, Ամսէն,
Բրիստուէլ, Փարիզ, ուր մնում են Երկար ժա-
մանակ եւ ապա մեկնում են Շվեյցարիա,
այստեղից Գերմանիայի վրայով, ծովով վե-
րապանում են Կրոնշտադ – Պետերբուրդ
Օդոստոս 12ին 1847 թուին։

Բժիշկները ամէն տեղ վստահեցնում են
եւ յոյս տալիս, որ Երեխան երկար կ'ապրի,
չնայած որ մանուկ Յովհաննէսը վերջնակա-
նապէս ապաքինուած չէր։

Մ. Մոերեանցը պատմում է, որ ըստ իր
տեղեկութիւնների, առած ականատեսներից,
— «վաղապոյն քան զոր բնութեանն պահանջէ
կարդ՝ զարթեան, ասեն, ի նմա ոգեկան
զօրութիւնք, եւ իրբեւ առն կատարելոյ՝
Երեւեցան նորա ձիրք մտացն ընդ նոսին՝ եւ
ոէր առ առաքինութիւն, զգացումն զորովոյ,
կարեկցութիւն առ ընկերս, այլովքն հան-
գերձ»։ Առանձնապէս կարեկից է եղել չքա-
ռորների ու տառտաղողների հանդէս։ Մի-

բում էր յաճախ սցցելել բանս և նիւթապէս օգնել բանտարկեալներին։ Յ տարեկան հասակում նա արտայայտել է մեծ հետաքրքրութիւն ու սէր դէպի ուսում։ Սիրում էր մասնաւորապէս ընութիւնը և հետաքրքրուում երկնքի կեանքով։ ուզում էր տեղեկութիւններ աստղերի, լուսնի և արեւի մասին։ Հարցնում էր, թէ ո՞վ է կառավարում աշխարհը, ի՞նչպէս է որ երկնակամարը մնում է կախուած առանց սիւների։ ո՞վ է ասլրում երկնային աշխարհում և ի՞նչպէս են այդ իմանում մարդիկ։ Խոյս էր տալիս մանեկական խաղերից։ չէր սիրում խաղալիքներ։ սիրում էր ընթերցանութիւն բարոյագիտական բովանդակութեամբ գրքերի ու լսել մեծերի զրոյցները։ սիրում էր նայիլ նկարներին։ Յաճախ ասում էր հօրը, որ պէտք չունի ո'չ պատիւների, ո'չ շքանշանների և ո'չ էլ հարստութեան։ Յաճախ կրկնում էր՝ «ոչինչ ինձ պէտք չէ»։

Մահը համարում էր աշխարհի մեծագոյն բարիքը . . . թւում էր, որ նա նախազգում էր իր մօտալուտ մահը . . . բժիշկներին ատում էր և հրաժարուում էր ընդունել դեղօրայք։ Սիրում էր ներկայ գտնուել յուղարկաւորութիւններին . . .

«Եւ աւուրբք ինչ յառաջ քան զմեռանելն՝ ընկողմնեցաւ, ասեն, ի վերայ սեղանոյ, իրրու այն թէ՝ զմեռելոյ բերիցէ զնմանութիւն»։

Երբեմն հիւանդանում էր եւ դրութիւնը այնքա՞ն ծանր էր լինում, որ առողջանալու որեւէ յոյս չէր մնում: Բայց Երբ առողջանում էր, ծնողներն եւ հօրեղբայր Յովհաննէսը այնչափ ուրախանում էին եւ յոյսերով լցում, տեսնելով «զաճումն ըստ մարմնոյ եւ զաջողապէսն զարգանալ ի բնական ձիրս ոգւոյն»:

1850 թ. նոյեմբեր 24ին երեխան ծնողների աչքի առջեւ խաղալիս է եղել, Երբ յանկարծ նկատում են, որ երեխան խորասուզուել է մի անսովոր տիրութեան ու նեղուրտութեան մէջ... բժիշկների խորհուրդով յաջորդ օր երեխային կառքով տանում են դրօսանքի, բայց այդ էլ որեւէ օգուտ չի բերում: Միւս օր, նոյեմբեր 26ին, կէսօրից յետոյ, ժամը 4ին երեխան վախճանուում է 6½ տարեկան հասակում, խոր, անդարմանելի վիշտ պատճառում ծնողներին եւ հօրեղբօրը՝ աղա Յովհաննէսին...

«...Այդ մահը, — ասում է Լէօն — ողբացին ամէնքը իրբեւ ազգային կորուստ»: ամէն կողմից թափուել էին ցաւակցութիւններ:

Ստեփաննոս Նաղարեանցը իր «Յաղագս Փորձական Հոգեբանութեան ճառ»ը նուիրել էր «բարեբանեալ յիշատակի վաղամեռիկ եղելոյ մանկանն Յովհաննու Խաչատրեան Լազարեանց», որին հետեւում է այս ոտանաւորը.

Յաւերժացեալ դու

Բաղդ յաչաղկոտ թէ ոչ շնորհեաց
Առ կենդանեօքդ ըզթեղ պաշտել
Ի Քոյդ շիրխմ տուրք արտասուաց
Թողցի՛ զայս իմ երկ նուիրել² :

Մանուկ Յովհաննէսը ի՞նչ հիւանդութեամբ էր տառապում, որ այնքան վաղ գերեզման տարաւ նրան, — ստոյգ յայտնի չէ : Ոմանց կարծիքով երեխան վախճանուել է ուղեղի բորբոքումից, իսկ Մ. Մակրեանի տակով, երեխան տառապելիս է եղել զերնոտութեամբ :

Մանուկ Յովհաննէսի շիրխմը ունի հետեւել արձանագիրը .

«Ո՛չ ասու հինօրեայ մարմին կայ ծերոյ,
Այլ՝ զոդ եօթնամւոյ հրաշաղեղ մանկան .
Ոյր դէմք, միտք ըզգօն, բարք ազնըւական,
Յուսաղիր յոդունց լինէին բարւոյ
Է՛ր նաւ վառք, պըսակ, պարծանք, խընդութիւն,

Համայն և ժառանդ Տոհմին Գերազանց,
Ծընունդ Խաչատրոյ Վեհին Լազարեանց :
Մեծին ի ծընունդս կանանց՝ համանուն :
Նովաւ ակն ունէր մանկտին Արամայ
Բարեգործ Զարմին կրթել ըզպըտուզ .
Բզնոյն ազդ յազդէ մըշտընջենաճիւղ
Անձկա՛յր տեսանել ի դարս բազմամեայ :

² ՏԵ՛Ր Լէօ, «Մա. Նազ. Կենսագր.», Մաս Բ., էջ 391—392 :

Այլ մահկանացուաց նա վաղ ի միջոյ
Փոխեցաւ, յանանց ճեպեաց մուտ ի կեանս՝
Առ ոչինչ համա՛յն համարեալ զոր կանս.
Զի այնպէս Վերնոյն կամացն էր հաճոյ^{3»}:

* *

Վշտահար ծնողներն եւ հօրեղբայր Յովլ-
հաննէսը երեխայի մահուան առթիւ եւ նրա
յիշատակին բազում բարեգործական քայլեր
են անում, առատաձեռն նուէրներ են տալիս
աղքատներին, տնանկներին, բայց ամենից
էականն այն էր, որ նրանք յղանում են մի
շատ գեղեցիկ միտք, որ այնքա՛ն հարազատ
էր Լազարեաններին եւ այնքան համապա-
տասխան նրանց տոհմի աւանդութիւններին.
նրանք որոշում են յաւերժացնել Մանուկ
Յովհաննէսի յիշատակը, բաց անելով ձեմա-
րանում նախակրթարան դասարան 14 ձրիա-
վարժ հայ աղքատ մանուկների համար եր-
կու տարուայ դասընթացնով. այդ նպատա-
կով եղբայրները նուիրում են 60·000 ռուբլի
արծաթ կամ 180·000 ռուբլի քարտամ:

1851 թ. փետրուար 12ին կայսրը այդ
առթիւ յատուկ չնորհակալութիւն է յայտ-
նում երկու եղբայրներին:

Այդ նախակրթարանի համար եղբայր-
ները մշակում են յատուկ կանոնագրութիւն,

^{3»}Տե՛ս Ա. Մակրեանց, Յիշատակարան», էջ 35,
Ա. մաս:

որ ստանում է կառավարութեան հաւանութիւնը և գործադրութեան մէջ դրւում:

Այդ կանոնադրի մէջ կայ մի ուշադրաւ յօդուած, որ պատիւ է բերում նրա հեղինակների ողջամտութեան և իրապէս նախատեսութեան: Այդ յօդուածում ասուած է, որ այդ դասարանի Հայոց լեզուի, Ըուսաց լեզուի և թուաբանութեան դասատուն պիտի լինի ծագումով հայ: Այդ դասարանը յատկացւում է այն հայ մանուկներին, որոնք ո՛չ դպրոցական սկզբնական կրթութիւն ունին եւ ոչ էլ գիտեն ռուսերէն: Այդ դասարանը պիտի կրի՝ «նախակրթական բաժին մատղահաս Յովհաննիւ Լազարեանց» անունը:

Այս նախակրթարանը յիշատակուած պայմաններով ու ծրագրով գործել է մինչեւ 1917/18 ուսումն. տարուայ վերջը: Այնուհետեւ, Հոկտեմբերեան յեղափոխութեան հետևանքով ձեմարանի գոյութեանը վերջ տրուեց և ձեմարանը վերածուեց «Հայ Մշակոյթի տան» . . . :

1887թ., Երբ մենք մտանք Լազարեան ձեմարանի առաջին դասարանը, նախակրթարանի յիշեալ առարկաների դասատուն էր, ձեմարանի նախկին սան, անուանի բանաստեղծ Սմբատ Շահազիզը: Երբ սա 1897թ. թողեց վերջնականապէս ձեմարանը, նրան փոխարինեց Կարապետ Կուսիկեանը, որպէս Հայոց լեզուի դասատու ու նաև նախակրթարանի դասատու: Այս վերջին պաշ-

տօնը, նրա մահից յետոյ, ևս ստանձնեցի, որը եւ վարեցի մինչեւ 1917/18 ուսմի. տարուայ վերջը:

Երկու խօսքով անդրադառնալով սյդդասարանի պատմութեան, ասենք, որ Շահազիզի օրօք նախակրթարանը բաղկացած էր երկու բաժանմունքից՝ սյրբենական, անգրադէտ մանուկների համար, եւ աւագ բաժանմունքից. Երկուսն էլ զետեղուած էին մի դասարանի մէջ եւ ուսուցիչը պարապում էր միաժամանակ երկու բաժանմունքների աշակերտների հետ:

Հետագայում սյրբենական բաժանմունքը զատուեց ու կազմեց առաջին նախակրթարան դասարան, ուր դասաւանդում էր Ճեմարանի վերակացու Ստեփան Տէր-Մարգարենը:

Իմ օրօք կատարուեց Երկրորդ բարենորոգումը:

Նկատելով, որ Երկու նախակրթարանների աշակերտները Երկու տարուայ ընթացքում ի վիճակի չեն լինում ճեռք բերել բաւարար չափով գիտելիքներ ու զարգացում, ինչպէս և իւրացնել ուռւսաց լեզուն, որպէս զի կարողանան յաջող կերպով առաջին դասարանի դասընթացքը, որն այդ ժամանակ ունէր շատ բարդ ծրագիր՝ դասաւանդում էին լատիներէն եւ հայերէն գրաբար լեզուները, բացի ընդհանուր առարկաներից, ևս առաջարկեցի, յատուկ զեկոյց ներկայացնելու համար առաջարկեցի առաջարկեցի, յատուկ զեկոյց ներկայացնելու համար առաջարկեցի:

լով ձեմարանի տեսչութեան և Մանկավարժական Խորհուրդին, բացանել նաև միջին նախակրթարան դասարան, ուրիշ խօսքով՝ նախակրթարանի երկու տարուայ դասընթացքը վերածել երեք տարուան:

Առաջարկս հաւանութիւն գտաւ և բացուեց Միջին նախակրթարան դասարանը յատուկ ծրագրով. այդ դասարանի դասաւանդութիւնն էլ յանձնուեց ինձ:

Այսպէս շարունակուեց մինչեւ 1917/18 ուս. տարուայ վերջը:

Յիշատակենք, որ աւագ նախակրթարանի դասարանում կախուած էր Մանուկ Յովհաննէսի խւզաներկ նկարը:

ԳԼՈՒԽԸ Բ.

ԳԵՐԱՊԵՏ ՊԱՇԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ :

Յովակիմ Ղազարեան Լազարեանցի կրտսեր որդին էր՝ գնդապետ Ղազար Լազարեանցը:

¹ Այս կենսագրականը կազմելիս մենք օգտագույն գլխաւորապէս՝

ա. «Նկարագիր Գաղթականութեան Հայոց կ Պարսկաստանէ ի Բուռաստան», 1832: ի Մոսկով: ի տպագրատան Հայկական ձեմարանի Տեարց Լազարեանց, էջ 104:

բ. Մ. Մոերեանց, «Յիշատակարան» եւայլն: Հեղինակի տեղեկութիւնները զբեթէ ամբողջովին քաղուած են մեր առաջին աղբիւրից:

գ. Վ. Պոտոս, «Վերածնութիւն Հայաստանի», Պարիս 1904:

դ. Ա. Երիցեան, «Կովկասահայք» և. այլն:



Դազմոն Յ. Լազարեանց

Սրա անունը սերտօրէն կապուած է 1827—1828 թթ. ոռւս-պարսկական եւ մասսամբ էլ ոռւս-տաճկական 1829 թ. պատերազմների հետ եւ մասնաւորապէս 40·000 պարսկահայերի դաղթի հետ դէպի «Հայկական նահանգը» :

Մ. Մսերեանը եւ ՊրոՓ. Զինովեւը գրեթէ տեսութիւններ չեն տալիս նրա անձնական կեանքի մասին. չեն հազորդում անդամ նրա ծննդեան ու մահուան թուականները . . . :

Նրա շատ համառօտ ծառայութեան ցուցակից եւ կայսերական հրովարտակներից մենք խմանում ենք միայն հետեւեալը .

Գնդապետ Ղազար Լազարեանցը ստացել է իր կրթութիւնը Ճանապարհների Հաղորդակցութեան դպրոցում, ուր մտել է 1810 թուին :

1813 թ. սկսում է իր զինուորական ծառայութիւնը Հուսարների Սումսկի զօրագունդի մէջ. մի տարի անց՝ 1814 թ. փոխադրւում է թիկնապահ (գվարդիա) հուսարների զօրագունդը :

1826 թ. յունուար 28ի կայսերական հրովարտակով ստանում է զնդապետի աստիճան :

Որպէս առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ կոմս Պասկեւիչի մօտ, նա մասնակցել է 1828 թ. օգոստոս 5ի եւ 9ի ճակատամարտներին՝ Ախալցխա ամրոցի գրաւման ժամանակ եւ իր ցոյց տուած այդ կոխիւներում քաջադործութիւնների համար ստացել է Ա.

Աննայի 2րդ աստիճանի շքանչան 1829թ.
սեպտ. 16ին:

1828թ. նա մասնակցել է նաեւ Ղարսի
նուաճման կուռում եւ նոյնպէս ի յայտ բերել
ուշագրաւ քաջազործութիւններ:

Պարսկահայերի դժուարին եւ բարդ, նաեւ
մեծ շտապողականութեամբ տարուած գաղթի
կազմակերպութիւնը մեծ յաջողութեամբ կա-
տարել է եւ, ինչպէս ինքն է վկայում իր
պաշտօնական գրութեան մէջ առ կոմս Պաս-
կեւիչը՝ «ընկալայ ի ձէնջ զքաղցրն վասն
իմ զգովարանութիւն»:

Նոյն այդ գաղթի ժամանակ Գնդապետ
Լազարեանը ի յայտ էր բերել մեծ եռանդ,
վարչական բարձր կարողութիւններ ու մեծ
ազդասիրութեան ջերմ եւ անկեղծ զգացում-
ներ, ինչպէս եւ մարդասիրական վեհ հոգի,
որով մեծապէս թեթեւացրել էր զաղթական-
ների կրած թշուառութիւնները:

Բայց ինչպէս պատահեց, որ գնդապետ
Ղազար Լազարեանը ստանձնեց պարսկա-
հայերի գաղթի զեկավարութիւնը:

Կոմս Պասկեւիչը — ասում էն մեր յի-
շալ աղբիւրների հեղինակները միաբերան
— կովկասի ռուսաց զօրաբանակի ընդհանուր
հրամանատարը, ի նկատի առնելով, որ ռուս-
պարսկական պատերազմը, որի նախապատ-
րաստական աշխատանքների մէջ էր ռուս
սպարապետը, պիտի տարուի այնպիսի շրջան-
ներում, ուր հայ աղջարնակութիւնը եւ թիւ
էր, եւ որակ, եւ որ բացի այդ — նոր նուա-

ձուելիք դաւառները պարսից ու տաճկաց տիրապետութեան օրով ամայացել էին ու աւերուել, միտք է յղանում հայերին Պարսկաստանից դաղթեցնել այդ շրջանները։ Այդ նպատակով Սպարապետը իր այդ մտադրութիւնը լաւագոյն կերպով իրագործելու համար անհրաժեշտ է համարում իր ձեռքի տակ ունենալ մի հայ պաշտօնեայ, որ զիրք ունենար եւ միաժամանակ վայելէր հայերի վստահութիւնը, լինելով նաեւ հաւատարիմ ոռւսաց պետութեան։ Եւ նա ընտրում է այդ պաշտօնի համար դնդապետ Ղազար Ղազարեանին, որը ամէն կողմից լիովին համապատասխանում էր ու բաւարարում այդ պայմանները։

Պասկեւիչը զիտէր, որ գնդապետ Ղազար Ղազարեանը հոչակաւոր տռհմի դաւակ էր, որ հարուստ էր, որ լաւ կրթուած, ամենքից սիրուած ու յարդուած զինուորական էր Պետերբուրդի բարձր շրջաններում։

Եւ ահա՝ 1827 թ. ապրիլին Պասկեւիչը զիմում է կայսեր եւ յայտնելով, թէ «կորհուրութիւն ունիմ մի այնպիսի աստիճանաւորի, որ ամենայնիւ հաւատարիմ լինի Տէրութեան եւ միանգամայն մեծարոյ եւ պատկառելի Հայոց աչքում, խնդրում եմ, որ Գնդապետ Ղազարեանը, որն այժմ գտնուում է կոմս Կոմարովսկու հրամանատարութեան ներքոյ, ուղարկուի ինձ մօտ ի պաշտօն առանձին յանձնաբարութեանց»։

Կոյսրը տալիս է իր Համաձայնութիւնը, եւ զնդապետ Լազարեանը անմիջապէս մէկնում է Կովկաս եւ ներկայանում Պառկեւիչին, որը ընդունում է նրան սիրալիօրէն, նշանակում է Թաւրիզի քաղաքապետ (1827 թ. Հոկտեմբերին) եւ ապա տալիս գրաւոր անհրաժեշտ հրահանգներ գաղթի կազմակերպութեան վերաբերմամբ, ձեւակերպուած 19 յօդուածների մէջ, 1828 թւի փետրուար 26ի թուով:

Այդ հրահանգների մէջ ամենից ուշագրաւ յօդուածը Յրդն է, ուր ասուած է, որ՝ շպիտի ստիովել, առաւել եւս բանութիւն գործադրել հայերին գաղթեցնելու համար, այլ միայն համոզել ու բացատրել, որ հայերը ընդդունելով քրիստոնեայ կայսեր հպատակութիւնը, նրանք ձեռք կը բերեն խաղաղ եւ ապահով կեանք՝ «ընդ հովանաւորութեամբ բարերար օրինացն ուսւաց²»:

Գրեթէ միւնոյն ժամանակ Ներսէս Աշտարակեցին, որ նոյնպէս մտահոգուած էր պարսկահայերի գաղթի խնդրով, ուզում էր թէ փրկել նոցա պարսից ծանր լուծի տակից եւ թէ չէնցնել հայրենի ամայի երկիրը:

«Էջմիածնի բարօրութեան համար — գրում է Երիցեանը — կարեւոր էր Արարատեան աշխարհը լցուի, չէնանայ հայ բնակիչներով»: Այս նպատակով, «Ներսէսը գեռ 1827 թ. զեկումբերին զրեց Պառկեւիչին, թէ

² Տե՛ս «Ներսէս գաղթ», էջ 72:

Հարկ է դաղթեցնել հայերին Պարսից սահման-ներից դէպի ոռւսաց նուաճուած երկիրը³ :

Այսպիսով ոռւս-պարսկական պատերազ-մի երկու մեծ գործիչները միեւնոյն միտքն են յղանում, որն եւ գործադրում է գնդա-պետ Լազարեանի գործօն օժանդակութեամբ :

Հետազայ դէպքերը ցոյց տուին, որ Պաս-կեւիչը չէր սխալուել իր ընտրութեան մէջ, յանձնարարելով զնդ. Լազարեանին պարս-կահայերի գաղթի դեկապարութիւնը :

Պարսկահայերը, տեսնելով ոռւսաց զօ-րարանակում մի բարձրաստիճան հայ զինուո-րականի, այն էլ մեծահամբաւ Լազարեան տոհմից, վերաբերուեցին ամենայն վստահու-թեամբ ու սիրով դէպի նա եւ շտապեցին յայտնելու նրան իրենց պատրաստակամու-թիւնը գաղթելու Ռուսաստան եւ հետեւել նրա խորհուրդներին :

Հազիւ թէ տարածուեցաւ համբաւն, թէ «Լազարեւն եղեւ քաղաքասկետ Դավրիժու, անյապաղ յամենայն նահանգաց Ատրապատա-կանի, արագ փութացան Հայք ի Դավրէ» : «Ազգակից մեր ևս, — ասէին նոքա ցլազա-րեմեր — բարեխօս լե՛ր վասն մեր առ բարե-սիրտ եւ մեծ արքայն ինքնակալն համայն ոռւսաց. բարեխօս լեր առ երեւելի զօրա-պետն նորա: Նուիրաբերեմք զանձիս մեր ընդ հովանեսու աջոյն նիկողայոսի: Ուրախ

³ Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 312:

ևմք մեք կեալ եւ մեռանիլ ընդ տէրութեամբ
նորա⁴ :

Լազարեանը անմիջապէս տեղեկացրեց
Պատկեւիչին, որ Հայերը պատրաստակա-
մութիւն են յայտնում դաղթելու Ռուսաս-
տան :

1828թ. Դէյկարխան վայրում ոռւսները
կապեցին Հաշտութեան նախնական դաշն
պարսիկների հետ։ Այդ դաշնադրութեան մէջ
Պատկեւիչը յատուկ պայման էր դրել; որ
Հայերը ազատ պիտի լինեն դաղթելու Ռու-
սաստան եւ որ պարսիկները արգելք չպիտի
լինեն դաղթին :

Պարսիկները, սակայն տրամադիր չէին
Դէյկարխանի պայմանադիրը հաւատարմու-
թեամբ կատարելու, հետեւարար ուազմական
գործողութիւնները վերսկսուեցին։ Ռուսաց
զօրքը յաղթական ընթացքով առաջ շար-
ժուեց, գրաւեց Արդերելը, Միանէն եւ պատ-
րաստ էր արշաւելու Թեհրանը գրաւելու, երբ
պարսիկները նորից հաշտութիւն խնդրեցին։
Պատկեւիչը եւ Պարսից կողմից թաղաժառանգ
Արբաս Միրզան հանդիպեցին Թիւրքմենչայ
ամրոցում, ուր եւ կնքուեց վերջնական հաշ-
տութեան դաշն :

Բատ այդ դաշնագրի Պարսիկները պար-
տաւոր էին վճարել պատերազմական տու-
ղանք՝ 20 միլիոն արծաթ դահեկան աստի-
ճանարար եւ բատ այնո՞ւ էլ ոռւսաց զօրքը

⁴ «Նկար. դաղթ» , էջ 29—30:

պիտի յետ քաշուէր Երասխ գետի միւս ամիր :
Այս դաշնագրով էլ նախատեսուեց ու հաս-
տառուեց հոյերի անարգել գաղթը դէպի
Անդրկովկաս :

Ատրպատական էին եկել նաև Ներսէս
արքեպիսկոպոսի — որն այդ ժամանակ զօրա-
վար Կրասովսկու և գնդապետ Բօրօղինի հետ
միասին կազմում էր Հոյկական նահանգի
ժամանակաւոր կառավարութիւնը, — ներ-
կայացուցիչները՝ Ստեփաննոս Եպիսկ. Ենով-
քեանն ու Նիկողայոս Վարդապետ Արցովսկ-
ցին քարոզելու և յորդորելու հոյերին դաղ-
թել հոյրենի երկիր :

«Ի սկզբան — գրում է Գնդ. Լազարեանը
իր յիշեալ զեկոյցի մէջ Պատկեւիչին, — որ-
պէս ինձ՝ նոյնպէս եւ բազմաց թուեցաւ դործդ
(գաղթը) ո՛չ դժուարին ինչ⁵, քանի որ
հոյերը իրենք իրենց խակ յօժար կամքով էին
ցանկութիւն յայտնել գաղթելու Ռուսաստան :
Սակայն երբ վրայ է հասնում մոմենտը, երբ
նրանք պիտի լքէին՝ «զերեզմանք աշխատա-
սէր նախնեաց իւրեանց, որ թողեալ էին
նոցա ի ժառանգութիւն զրայնածաւալ եւ զար-
գաւանգարեր գաշտո» . . . եւ «զներկայ հստ-
առատունն ընդ ապագայ անյայտին փոխանա-
կել», — դժուարացան եւ տառանուեցին .
նոյնպէս եւ նեստորականները : Վերջիններս
առաջինները եղան, որ պահանջեցին, որպէս
զի ոռւս կառավարութիւնը վճարի իրենց

⁵ ՏԵ՛Ր «Եկար. դաղթ.», էջ 81 :

թողնելիք ստացուածքի ամբողջ արժէքը : Հայերը պահանջեցին միայն մի երբորդ մասը իրենց ամբողջ ունեցածի արժէքի, ու նաև որ արամազրուին փոխազրական միջոցներ չքաւորների, երեխաների, ծերերի և անկարողների համար :

Արգարացի էր հայերի պահանջը ու համեստ, քանի որ չնայած ուսւոպարսկական դաշնագրի՝ թոյլատրում էր զաղթողներին ծախել իրենց անշարժ կայքը, բայց այդ անհամարին եղաւ՝ Պարսից կառավարութիւնը խստի արգելել էր իր հայտակներին զնել զաղթող հայերի կալուածները :

Լազարեանը շտապեց անձամբ զեկուցելու Պասկեւիչին հայերի բազմանքների ու պահանջների մասին :

Սպարապետը ընդառաջեց հայերի պահանջներին և կարգադրեց, որ արքունի զանձարանից փոխառութիւն տրուի հայերին՝ 14.000 սուլի զահեկան և 400 արծաթ ոուրլի հինգ տարի ժամանակով⁶ :

«Պէտք է խոստովանել — ասում է Պօտոտոն — որ ոուսների կողմից զաղթականնե-

⁶ Բատ Ա. Երիցեանի՝ 25.000 սուրլի էր տրուած 10 տարի ժամանակով, իսկ բատ Պօտոտի՝ 50.000 մանէթ : «Այդ զումարը — ասում է Պօտոտն — չափազանց անբաւարար էր, քանզի «զերդաստանովութիւն» թուման էր միայն հասնում, մինչդեռ մի հասրակ է արժում էր 12—15 արծաթ մանէթ» : Վերածնութիւն», էջ 19:

Մ. Մոկրեանը, Հիմնուելով «Ակտերի ժողովածուիք» վրայ, ասում է, որ ամէն մի զերդաստանի հասնում էր 10 արծաթ սուրլուց ուշ աւել, էջ 43 ծան. :

⁷ Պօտոտ, էջ 18—19:

րին առաջարկած պայմանները, արդարեւ, ծանր էին եւ չէին կարող կասկած եւ երկմտութիւն չյարուցանել:

«Հայոց ունեցած ամբողջ կարողութիւնը՝ իրենց անշարժ կալուածները, տները, պատառու այդիք եւ արգաւանդ դաշտերն էին երեսի վրայ ձգելու եւ հեռանալու: Բնական էր, ուրեմն, որ նոքա պահանջէին Ռուսաստանից, որ իւրեանց բարձի թողի արածների արժողութեան գէթ երրորդ մասը վերադարձնէին իւրեանց»:

«...Նոյն ինքն Լազարեանը ճշտապէս կատարելով Պասկեւիչի հրամանը, չէր աշխատում չողոքորթել հայերին անիրազործելի յոյսերով: Նա ուղիղ ասում էր նոցա, թէ ինչ որ նրանք Պարսկաստանում թողնում են, չեն կարող զանել Երասխի միւս ափին, թէ ամենամեծ օգնութիւնը, որ կարելի է տալ ամէն մի գերդաստանի 5 արծաթ մանէթից աւելի չի լինել, բայց թէ նոքա կարող են վստահ լինել, որ թէ իրենք եւ թէ իւրեանց սերունդը անդորրութիւն կը վայելէն իւրեանց հաւատակից պետութեան հովանաւորութեան ներքոյ»:

Պետական օժանդակութիւնը, արդարեւ, չրաւարարեց դաղթողների բաղմաթիւ կարիքները հոգալու համար: Աւելի եւս գրութիւնը ծանրացաւ, երբ գաղթողները հասան Նախիջևան եւ զգացուեց հացի մեծ պակասութիւն: Այդ ժամանակ Գնդ. Լազարեանը, չվստահանալով ինդրել Պասկեւիչից նոր

դրամական օժանդակութիւն, ինքը փոխարի-
նաբար վերցրեց մի թիֆլիսեցի Հայից 2000
ռուկի և բաժանեց գաղթականներին: «Բա-
նակ Հայոց գաղթականաց լցու առանու-
թեամբ: Պատկեւիչ պատկապարդեաց զայս
գործ գովարանութեամբ իւրով⁸»:

1828 թ. մարտ 30ին Լազարեանը վերա-
դառնալով Պատկեւիչի մօտից, հրատարակեց
հետեւեալ շրջաբերական նամակը, ուղղուած
Ատրպատականի Հայերին.

«Քրիստոնեայք.

«Լսելի եղեւ յականջո խմ, թէ արք չա-
րամիտք ջանան ո՛չ միայն հրապարակել
զսուտ և զանպատեհ զրոյցս, այլեւ տալ եր-
կիւդ մեծ որոց կամին անցանել յօրհնեալ
Ռուսաստան. Եւ զայս օրինակ կամին դար-
ձուցանել զձեղ ի գովելի ցանկութենէ որտի
ձերոյ:

«Եւ ևս առ ի հերքել զայս ամենայն ըստ
պարտեացն՝ որովք բեռնաւորեալ եմ ի Սպա-
րապետէն, եւ ի հաւատարմութենէ ազդին՝
որ առ իս, յայտ առնեմ ձեղ, թէ մեծահոգի
Ինքնակալն ամենայն Ռուսաց պարզեւէ
այնոցիկ որք ցանկան գաղթել՝ զալպահով,
զիսաղաղ և գերջանիկ տեղի ապաստանի ի
յընդարձակ Կայսրութեան իւրում:

«Ի զաւառն Երեւանայ՝ Նախիջեւանայ
և Ղարապաղու, զորս զուք ընտրեսոջիք,
տացի ձեղ լայնատարած եւ արգասաւոր եր-

⁸ «Եկարագր. գաղթ.», էջ 64:

կիր, որ արգէն խոկ ըստ մասին սերմանեալէ. եւ ի պաղոյ նորին զտասներորդ մասն միայն տաջիք Տէրութեան. եւ յընթացս վեց ամաց ազատ լիջիք յամենայն հարկատութենէ. եւ որք միանդամ աւելի աղքատ իցեն ի ձէնջ՝ տացի նոցա օդնութիւն չուելոյ:

«...Ի Ռուսաստան տեսջիք զթոյլառութիւն ամենայն կրօնից, եւ զհաւասարութիւն իրաւանց Ռուսաց ընդ այլոց հպատակաց Կայսերն. անդ մոռաջիք զամենայն նեղութիւնո զորս կրեցիք. անդ զտջիք զնոր հայրենիք բնակեալ ի քրիստոնէից, եւ ոչ եւս տեսջիք զսուրբ կրօնոն մեր ի նեղութեան, անդ կեցջիք ընդ հովանաւորութեամբ օրինաց, եւ զդասջիք վաղագոյն զրարերար ազգեցութիւն նոցին. հուսկ ապա անդ վիճակ ձեր բարեգոյն լիցի. եւ փոխանակ սակաւուն զոր կորուսջիք՝ անդ տացի ձեզ հարիւրապատիկ: Ճշմարիտ է՝ թէ թողուք զերկիր ծննդեան ձերոյ, որ սիրելի է ամենեցուն. բայց մտածելն՝ թէ բնակելոց էք ի քրիստոնեաց Տէրութեան, պարտի ազգել ի ձեզ զմեծ ցնծութիւն:

«Քրիստոնեայք ճապաղեալք ի զաւառս Պարսկաց՝ տեսցեն վերջապէս զանձինս ժողովեալ ի մի վայր. եւ զիտէ՞ք արդեօք, թէ բարութիւնք մեծ ինքնակալին Ռուսաց ո՞րշափ ունի վարձատրել զհաւասարմութիւն ձեր:

«Փութացարո՞ւք, բարեկամք իմ, ժամանակն անդին է. զօրքն մեր ընդ հուսդ զատարելեսցեն զդաւառսն Պարսկաստանի. յայնժամ

դուցէ բազում՝ արգելու դիցեն ձեզ (Պարսիկք), և մեք կորուսանիցեմք զմիջոցս պաշտպանելոյ եւ ասպահով առնելոյ զգալուստն ձեր. զուցէ՛ք զատկաւն եւ ի սուկաւ ժամանակի, և առատօրէն ընկալջիք զամենայնն եւ ի մշտնջենաւորս» :

Պոլկովնիկ Էւ Կաւալեր Կայսեր Ռուսաց
Դաղարոս Լազարեանց⁹:

Ի 30 մարտի :

Ի քաղաքս Ռուբո՞մի:

Այս շրջարերական նամակը ունեցաւ բարերար ազգեցութիւն հայ ազգարնակութեան տրամադրութիւնների վրայ. ամրող Առապատականի հայերը ամէն կողմից, նոյն իսկ հեռաւոր Դաղիլին քաղաքից, շտապեցին արձանագրուելու պատրաստուել զաղթի և համախմբուել Երասխի ափին:

Շրջարերականը, արդարեւ որ կազմուած էր շատ խոհուն կերպով, իրերի իրական վիճակն էր առարկայօրէն ներկայացնում, առանց կեղծիքի, առանց չափազանցութիւնների, առանց մեծամեծ ու սին խոստումների:

Լազարեանը չէր սխալուել նաև իր նախատեսութեան մէջ, ասելով, որ Ռուսաստանում «ընդ հովանաւորութեամբ հաստատուն օրինաց զգասջիք վաղագոյն զբարերար ազդեցութիւն նոցին» :

⁹ Տե՛ս «Նկար. զաղթ.», էջ 77—79:

Եւ յիրաւի, հայ ժողովուրդը, Երբ ունեցել է հաստատուն օրէնքներ, որոշ իրաւակարգ, Երբ բռնազրուիկ կամայականութիւններն ու ապօրինի կեղեքումներն ու հալածանքները վերացել են նրա կեանքից, նա իր անման ստեղծագործ կորովով հրաշքներ է դորձել:

Իր 4000 տարուայ պատմական կեանքի մէջ նման մշակութային ու քաղաքակրթական «Հրաշքներ» բազում անդամներ է ի յայտրեր:

Եթէ ուղենայինք շեղուել մեր բուն նիւթից, կարող էինք բերել թէ Հայոց պատմութիւնից եւ թէ բոլոր ազգերի կեանքից ցոյց տալու համար, որ մարդկային հասարակութիւնները՝ մեծ հաւաքականութիւններից սկսած մինչեւ վոքրագոյնները, յառաջադիմել են, խոշոր նուաճումներ են կատարել, Երբ այդ հասարակութիւնների, այդ հաւաքականութիւնների մէջ իշխել են իրաւունքն եւ օրէնքը, երբ յարգանքն դէպի օրէնքը եղել է կենզանի եւ ո՛չ դատարկ հնչիւն...

Քանի որ 1828 թ. մարտի 9ին սուսաց զօրաբանակի մեծ մասը, ըստ Թիւրքմէնչայի հաշտութեան դաշնագրի պիտի թողնէին Ատրապատականը, եւ միայն մի վոքր մասը՝ զօրավար Պանկրատովի հրամանատարութեան տակ, պիտի մնային Սալմաստ-Ռուրմիա, մինչեւ պատերազմի տուղանքի վերջնական վճարումը, ուստի Լազարեանը շտապեց շրջելու բոլոր այն վայրերը, ուր դեռ

չէր եղել. նա զնաց Մարադա, Ուրմիայում թողնելով հայազգի ևնթագնդապետ Մովսէս Զաքարեան Արդուքեան-Երկայնաբազուկին, որպէս շրջանի գաղթականական դործի վարիչ, տալով նրան դրամ և անհրաժեշտ հրահանգները:

Մարադայում էլ հայերը մեծ ուրախութեամբ ընդունեցին Լազարեանին և գաղթը սկսուեց մեծ թափով:

Երբ պարսիկները տեսան, որ հայերը խումբ-խումբ լքում են իրենց տուն տեղը և դադթի ճանապարհը բռնում, ամայեցնելով իրենց Երկիրը, քայքայելով երկրի անտեսական կեանքը, աշխատեցին ամէն կերպ արդելք լինել ու կասեցնել գաղթը¹⁰:

Նրանք ասում էին հայերին, որ Ռուսաստանում ճորտեր կը դառնան, որ ոռւները նրանց զինուորական ծառայութեան կը պարտագրեն, խոստանում էին մեծամեծ արտօնութիւններ շնորհել, ևթէ մնալու լինեն:

Բայց միայն պարսիկները չէին, որ նման ջանքեր էին թափում խանդարել հայերի

¹⁰ Մօստիր հաշուով համարում են, որ Պարսկաստանը հայերի գաղթով վեստուել է շուրջ 32 միլիոն ոռորդու չափ:

«Եկար գալր» Անյայտ Հեղինակը, ի միջի այլոց սցդ առթիւ գրում է. «Թէպէտ եւ նեղէին հայք ի Պարսկաստան, սուկայն փութաջան աշխատասիրութեամբ իւրեանց եւ վաճառականութեամբ տային Պարսկաստանի եկամուռ ամի ամի զ100.000 թուման, կամ 1.600.000 ոռորդի թուղթ գրամս, զորմէ վկայեաց հրամանաւրն Դրիբախտով ի յայտարարութեան իւրում առ Պեներալ վիցէ կանցելարն զրաֆ Նէսոէրոսն»: Էջ 67, ծանօթ.:

գաղթը մուսաստան, այլ եւ անզլիացիները, այդ յաւիտենական անհաշտ մքցակիցներն ու հակառակորդները ուսւներին Մերձաւոր Արեւելքում:

Լուր էին տարածել, որ Լազարեանը բոնութեամբ է գաղթեցնում Հայերին, որ իրր թէ «իրենց ականջներով են լսել. 200 ընտանիքից», որ իրենց բոնութեամբ են տանում . . . :

Այս սուս լուրերն ու զրպարտութիւնները հերքելու համար, Լազարեանը հրախրեց Ռւրմիոյ կուսակալ Ասկէրխանին, այնուհետեւ նաև անզլիացի Վիլլոկին, ինչպէս եւ մի Փրանսիացու՝ ոմն Սէմենց ստուգելու, թէ որքա՞ն ճիշտ են այդ լուրերը: Ասկէրխանը ուզարկեց իր որդուն: Բոլոր հարց ու փորձերին գաղթող Հայերը միեւնոյն պատասխանն էին տալիս, թէ՝

«Մենք զերադասում ենք ուսաց խոտն ուտել, բայ Պարսից հացը»:

Թէ եւ Կրկիրը դեռ ծածկուած էր ձիւնով եւ կենզանիների կերի պակաս էր զգացւում, այնուամենայնիւ զաղթողները սկսեցին համախմբուել Երասխի տիին, քանի զեռ ուսուզօրքը չէր պարագել Ատրապատականը:

Ի հարկէ, անախորժ դէպքեր էլ տեղի ունեցան:

Այսպէս «Տաճիկք — կարդում ենք «Նկարագիր զաղթականութեան Հայոց»ի մէջ — ի զոլորշամբարձ եռացումն անզօր կատաղութեան իւրեանց՝ ովոէին զանէծս ի վերաց

գաղթականաց եւ անդամ անդամ քարաձիկի խոկ լինէին առ նոսա : Աիրաք Հայոց բորբոքեցան ի բարկութիւն արդարութեան, սակայն աստիճանաւորք ոռուաց բարձին զընդդիմութիւն տաճկաց, զվրէժ գաղթականաց եւ զարիւնհեղութիւն ի ձեռն իմաստուն խրատուց իւրեանց» (Էջ 41) :

Ապրիլի 20ին ոռուաց զօրքը սկսեց քաշուել Ատրպատականից :

Գաղթողները Ռւրմիայից, Սալմաստից և Խոյից շոապեցին հասնել Արաքսի ափը և մաս-մաս անցնել զետը :

1828թ. մարտի 16ին առաջին ամենամեծ կարաւանը ճանապարհ ընկաւ Ատրպատականից՝ Թաւրիզից, Մարզղայից եւ ոյլ վայրերից : Գարունը սկսուել էր, բնութիւնը մարթամօրէն արթնանում էր ձմեռուայ քնից . . .

40.000 հայերի անցքը Արաքսից ներկայացնում էր չափազանց սրտառուչ եւ խորապէս յուզիչ տեսարան . . .

Եւ այս պատկերը յաւերժացրեց կտակի վրայ ոռու տաղանդաւոր Նկարիչ ակադեմիկոս Մաշկովը, որը Պասկեւիչի հրաւերով եկել էր ոազմաճակատ, ականատես էր եղել կոխներին, ականատես եղաւ նաև հայերի գաղթին :

Այդ նկարի նկարագրութիւնը տուել է Պոտոպոն :

«Հեռուում, — ասում է նա — կտակի վրայ երեւում են Մասիսը, Երասիսը և Երեւանու

ճանապարհի վերայ ընկած գիւղերը։ Պատկերի աջ կողմը ինքը Լազարեանը հրամաններ է տալիս Հայ տանուտէրերին եւ աւագներին։ Նրան շրջապատել են նրա թիկնապահները, անդլիական եւ պարսկական ներկայացուցիչները, իսկ յետին գծի վերայ երեւում է գաղթականների ընդարձակնստուածքը¹¹։

Ա. Երիցեանն եւս խօսելով այդ նկարի մասին հետեւեալ խօսքերով է արտայայտուած իր ապաւորութիւնը.

«Գաղթականութիւն 40.000 Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան ընդ կարգադրութեամբ գնդապետի Դ. Յ. Լազարեանց յամի 1828 նկարը տիսուր մտածմանց մէջ է զցում մեզ եւ ակամայ Երեւակայել տալիս գաղթականաց կրած թշուառութիւնները գեռ եւս ճամբորդութեան միջոցին¹²։


* *

40.000 Հայ գաղթականների մուտքը Հայոց Նահանգը, բնականաբար, չէր կարող առանց դժուարութիւնների, առանց մեծ տառապանքների ու նոյն իսկ կեանքի կորուստների անցնել...։ Եւ արդարեւ, ամենից առաջ զգացուեց Հացի պակասութիւն, որից շատ տառապեցին գաղթականները։ Լազարեանը, որ դեռ Խոյումն էր, լուր առնելով

¹¹ Տե՛ս Պօտոտո, էջ 21։

¹² Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 332։

Հաւատաց կամուս կամուս 1828թ կամուս կամուս ի պատճեն գրքի համար



նորեկների ծանր վիճակի մասին, շտապեց Նախիջևան (մայիս 19ին) ուր գլխաւորապէս կուտակուել էին գաղթականները։ Թէեւ նա պաշտօնապէս Երասխի այս ափում անելիք չունէր, այսու հանդերձ նրա վեհանձն սիրոն ու հայրենասիրական զգացումները չհանդուրժեցին եւ նա գաղթականների վիճակը թեթևացնելու նպատակով մի թիֆլիսիցի հայից իր պատասխանառութեամբ փոխարինարար վերցրեց 2000 ռուբի և բաժանեց գաղթականների մէջ։

Այնուհետեւ Պասկեւիչի կարգադրութեամբ դիմեց Երևանի ժամանակառոր կառավարութեան, որի անդամներից մէկը Ներսէս արքեպիսկոպոսն էր, և խնդրեց չուտափոյթ օդնութիւն հասցնել։

1828 թ. փետրուար 26ին Պասկեւիչի Լազարեանին տուած հրահանդների մէջ արդէն տրուած էին ուշագրաւ ցուցմունքներ գաղթականներին տեղաւորելու պայմանների մասին։

Գաղթականները պիտի բնակութիւն հաստատէին ամբողջ գիւղերով. լեռնային տեղերի բնակիչները պիտի տեղաւորուէին լեռնային ըրջաններում, իսկ գաշտայինները՝ գաշտավայրերում. չպիտի բնակեցուին կալուածատէրերի հողերում, այլ արքունի պատ հողամասերում. եթէ արքունի հողերի պակաս եղաւ, թոյլատրում էր բնակութիւն հաստատել վանքապատկան կալուածներում. քրիստոնեանների նոր գիւղերը չպիտի խառն

լինէին մահմեղական բնակիչների հետ և
ոյլն:

Այժմ Պասկեւիչը եւս տեղեկանալով
դաղթականների ծանր կացութեան մասին,
հրամայեց ցրուել գաղթականներին Արարա-
տեան աշխարհի այն վայրերը, ուր հացի պա-
կառութիւն չկար, այն է՝ Երեւանի գաւառ-
ներն ու Ղարաբաղ:

Լազարեանը մայիս 22ին Նախիջեւանից
վերադառնում է Խոյ, ուր գեռ չմեկնած հայ
դաղթականներ կային: Նրանց փոխադրու-
թեան գործը յանձնարարից զօրապետ Ար-
դութեան-Երկայնարագուկին, իսկ ինքը մեկ-
նեց Ղարսի կողմերը, միանալու ոռւս զօր-
քին, որ պատրաստում էր Ղարսը գրաւելու:
Յունիս 29ին տեղ հասնելով, համառօտ կեր-
պով զեկոյցեց Պասկեւիչին գաղթականու-
թեան փոխադրութեան ու վիճակի մասին:

Այսպէս, $3\frac{1}{2}$ ամսուայ ընթացքում՝ 1828
միեւրուար 26ից մինչեւ յունիս 11ը, Լազա-
րեանին յաջողուել էր փոխադրել Պարսկաս-
տանի հայերից իրենց հայրենի Երկիրը՝ 8249
ընտանիք¹³:

*

Այս Հազարաւոր Հայերի գաղթականու-
թեան պատմութիւնը թէեւ մեր բուն նիւթից
զուրս է եւ մենք կանգ առանք այն չափով,

¹³ Տե՛ս «Եկարագը. Գաղթ.», էջ 94:

որքան որ պէտք էր ներկայացնելու Գնդ . Ղ. Լազարեանի դերը այդ բարդ գործում , այսու հանդերձ հարկ ենք համարում մի քանի կարեւոր լրացուցիչ տեղեկութիւններ եւս տալ եւ ասկա անցնել այն տիսուր վախճանին , որը վիճակուեց Գնդ . Լազարեանին այնքա՞ն փոյլուն գործունէութիւնից յետոյ . . . :

Կեանքը իրօք որ մի առեղծուած է . . . : Յաճախ ամենաառաքինի մարդիկ զոհ են գնում սեւ ապերախտութեան , իշխանաւորների անձնական կրքերից բխած . . .

Այդպիսի տիսուր ճակատագիր ունեցաւ գնդ . Ղ. Լազարեանը . . . :

*

Ա. Երիցեանի վկայութեամբ դադթական-ները ունեցել են մեծ թուով մեռնողներ . այդ երեւում է , — ասում է նա — այն պաշտօնական մարդահամարից , որը երկու տարի անց , այն է՝ 1831 թ . կատարուել է տէրութեան կողմից :

Ըստ այդ մարդահամարի գաղթած 8249 մնից մնացել էր՝ 6946 տուն , պակասուել էր 1303 գերդաստան . . . 40·000ից կամ փոքր ինչ աւել հոգուց մնացել էին՝ 35·000 հոգի . . . :

Այդ մարդահամարից երեւում է նաև , որ պարսկահայ գաղթականները տեղաւորուել էին Հայոց Նահանգում հետեւեալ կերպով՝

Երեւան քաղաք՝	366	ընտանիք կտմ	1·715	շունչ
Երեւանի մահալներ՝				
բուժ՝	4·193	„ „ „	21·853	„
Նախիջեւան քաղաք՝	265	„ „ „	1·110	„
Նախիջեւանի մահալներ՝				
Հալներութ՝	1·872	„ „ „	9·542	„
Օրգուրաթ քաղաք՝	36	„ „ „	182	„
Օրգուրաթի Հըջամահալներ՝				
կայքութ՝	214	„ „ „	1·158	„
Ամէնքը՝	6·946	ընտանիք կտմ	35·560	շունչ

Բացի այդ՝ մի քանի հարիւր գերդաստաններ անցել էին Ղարաբաղ, իսկ ոմանք էլ յրուել հասել էին մինչեւ Թիֆլիս¹⁴:

Էջոն համարում է, որ 1826—1828 և 1829 թթ. յետոյ, պարսկահայ եւ տաճկահայ դաղթերից յետոյ, Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնների մէջ բնակութիւն էին հաստատել՝ 57·226 հոգի¹⁵. արդ, եթէ ի նկատի առնելու լինենք, որ 100·000 տաճկահայ դաղթականների մեծ մասը տեղաւորուել էին Թիֆլիսի Նահանգում՝ Ախալցխա, Ախալքալաք քաղաքներում եւ շրջակայ գիւղերում, պիտի համարիլ, որ տրուած թիւը՝ 57·226ը՝ ընդհանուր առմամբ համապատասխանում է Երիցեանի գրած տեղեկութիւններին:

Այդ նոր դաղթած հայերը ամենուրեք անմիջապէս լծուեցին շինարար աշխատանքների, բայց, դժբախտարար, ո՛չ ամենուրեք

¹⁴ Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 335—337:

¹⁵ Էջո, «Երեւ. թեժ. դոլոցի պատճ.», էջ 113—114:

Հանդիսպեցին համակրանքի և ստացան ան-
հրաժեշտ օժանդակութիւն . . . :

Յարական ռեժիսորի ներկայացուցիչները
շատ վաղ սկսեցին ցոյց տալ իրենց զէպի
հայերը ունեցած նախապաշարումների ար-
տայայտութիւնները . . . :

Այսպէս, Ա. Երիցեանը բերում է Եր-
կու ուսու հեղինակաւոր անձանց հետեւեալ
վկայութիւնները այդ մասին .


«Մուս աստիճանաւոր Զուրարէվը, որ
պաշտօնով ուղարկուած էր Ղարաբաղ, 1830
թուի ապրիլ 20ին գրում է Պատկեւիչին՝
«Անցեալ պարսկական պատերազմի անմահ
քաջազործութեանց կարգում անշուշտ շատ
նշանաւոր տեղ է բռնում Հայոց Պարսկաս-
տանից մեր Երկիր գաղթելը։ Հայք մի ժո-
ղովուրդ են, որ այս Երկրում ամենից շատ են
հաւատարիմ մեր տէրութեանը եւ, կարելի է
ասել, նոքա ամենաազնիւն են գոնէ հազա-
րակ ժողովուրդի մէջ։ Պարսկաստանից գաղ-
թած հայք նշանաւոր են օրինակելի աշխա-
տասիրութեամբ։ Նոցա մեծ մասը արհեստա-
ւոր են, շատ օգտաւէտ եւ շատ հազուազիւտ
կովկասում։ Դժբախտաբար, ոյս օգտաւէտ
ժողովուրդը շափից գուրս ճնշւում է Ղարա-
բաղում։ Մի կողմ թողնելով բնիկ հայերին,
որոնք կեղեքում են թուրք բէկերից, կը յի-
շեմ միայն գաղթականների մասին։ Ղարա-
բաղի տեղական (ուսու) իշխանութիւնը Հայոց
զէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենա-
լով, աններելի կերպով նեղացնում է նոցա



Հայոց եկեղեցին եւ Լազարեան Ճեմարանը



Ճեմարանի գլխավոր մուտքը Հայոց փողոցից



Էւ մինչեւ հիմա նոքա շունին հաստատ բնակութիւն։ Նոցա տուել են շատ անրերը հոգեր, իսկ Մեղրի Գեռւնէյի մահալում տուած հոգերն էլ շատ քիչ են» :

Այնուհետեւ նոյն աստիճանաւորը նկարագրում է Ղարաբաղի գաղթականների վիճակը շատ մոայլ դոյներով

Նոյնպիսի տիսուր տպաւորութիւններ էր ստացել սուս հոչակառոր զրող Գրիբօեդովը, որը լիազօր դեսպանի պաշտօնով 1828 թ. սեպտեմբերին թևհրան էր գնում :

Գաղթականների թշուառութիւնն եւ սուս պաշտօնեանների անընդունակութիւններն ու գեղծումները իր աչքերով տեսնելով, նա զրել էր Պասկեւիչին և խնդրել՝ «Գոնի Թիֆլիսի Հայոց (Ներսիսեան) ուսումնարանի աշակերտներից մի քանի պաշտօնեայ ուղարկեայդ կողմերը» :

Բայց գժրախտութիւնը նրանումն էր, որ հէնց ինքը Պասկեւիչը պատկանում էր այն սուս աստիճանաւորների շարքին, որոնք ցարական ուժիմի օրով այնքա՞ն տողորուած էին մեծ նախապաշարումներով հայերի հանգեց :

Պասկեւիչը վաղուց արդէն սրել էր իր ստամբուլը Ներսէս Աշտարակեցու դէմ, մոռանալով նրա անդնահատելի ծառայութիւնները, մատուցած սուս-պարսկական պատերազմի ժամանակ սուս զօրքին և հէնց իր՝ Պասկեւիչի յաջողութիւններին :

Կուբացած իր անձնական թշնամութիւնից զօրավար Կրասովսկու դէմ, որի հետ Ներսէսը սերտ բարեկամութիւն ունէր, Պասկեկելիչը նախ փորձեց լարել Ներսէսին Կրասովսկու դէմ, բայց վրիպեց. Ներսէսը մնաց հաւատարիմ Հայոց նահանգի առաջին զինուորական Նահանգապետին և էջմիածնի ազատարարին, որ թողել էր բոլոր հայերի սրտերում ամենալաւ յիշողութիւններ :

Պասկելիչը, վրիպելով իր սագրանքների մէջ Ներսէսի հանդէպ, երբ իմացաւ, որ զնդ. Լազարեանը բարեկամական նամակագրութիւն ունի Հայոց մեծ հոգեւորականի հետ, որոշեց վրէժխնդիր լինել նաև Լազարեանից . . . :

Եւ այս երեք անմահ դործիչները հերթով զոհ զնացին Պասկելիչի ոխակալութեան . . . նա բազում զրպարտութիւններով կարողացաւ դրդել կառավարական բարձր շրջաններին Կրասովսկուն յետ կանչել Պետերբուրդ, իսկ Ներսէսին ուղարկել աքսոր Քիշենեւ, որպէս Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ . . . :

Բայց Պասկելիչը իր կոողիտ հալածանքների մէջ կանգ չառաւ իր այնքա՞ն հաւատարիմ գործակիցների դէմ. նրա սնոտի վասահրութիւնն ու կրքառութիւնը այնքան կուրացրին նրան, որ նա չատ հեռուները զնաց եւ մինչեւ իսկ փորձեց արատաւորել պարսկահայ դաղթականներին, չպրտելով նրանց երեսին որքան անհիմն, նոյնքան եւ

ստոր մեղադրանքներ, իրու թէ հայերը դադիւն են Ծովասատան ոռուսական ոսկուց շլացած . . . :

Բարեբախտաբար, պատմութիւնը պահպանել է այն գրութիւնը, որ Գնդ. Դ. Լազարեանը ուղղել էր Պասկեւիչին և արիաբարյետ մղել կոմսի այդ հրէշային զրապարտութիւնը:

Այդ գրութեան մէջ, ի միջի այլոց առուած էր.

«Հայք ոռուսաց ոսկու համար չեն զաղում, այլ նորա զոհում են իրենց բոլոր ունեցուածքը, եւ այն կարծիքը, որ ունի՛ դուք նոցա մասին, նոցա չի կարող վերաբերուիլ . . . » :

« . . . Վաստահանում եմ ասել, որ դուք լցնելով ձեր ձեռք բերած երկիրները այնպիսի մի վաճառաշահ եւ աշխատասէր ժողովուրդով, տէրութեան համար այնպիսի մի մեծ աղքիւր բաց արի՛, եւ որքան մեծ ծախս եւս արած լինէր կառավարութիւնը զադրականների վերայ, ինքը աւելորդով շահուած է¹⁶» :

Ակներեւ է, որ Պասկեւիչը չպիտի մարսէր Լազարեանի այդ արի ելոյթը:

Եւ չմարսեց. Պետերբուրգ յղած իր զեկոյցները, լցուած զրապարտութիւններով և մի քանի ստոր դաւադիրների՝ հոյ, ոռու ու վրացի, վկայութիւններով ամրապնդուած,

¹⁶Տե՛ս Պօտոտո, «Վերածնութիւն», էջ 21. Բնդ-զծութեները մէրն են:

ունեցան իրենց տիտոր հետեւանքը Լազարեանի համար . . . :

Դաւագիրները իրենց ամբաստանութիւնների մէջ ասել էին, որ պարսկահայերի զաղթի կազմակերպութիւնն ու յաջողութիւնը Լազարեանը միայն իրեն է վերապրել, մինչդեռ նրա զերը եղել է շատ չնշին, որ նա Ներսէս Աշտարակեցու հետ միշտ նամակագրութիւն է ունեցել և նրա մօտիկ բարեկամն է և այլն, և այլն :

1829 թ. զնզապետ Ղազար Լազարեանը խիստ հրաման է ստանում վերադասնալ Պետրոսուրդ . . . :

Պետրոսուրդ Հասնելով, Լազարեանցը անմիջապէս հրաժարւում է պետական ծառայութիւնից . . . :

Այնուհետեւ այլեւս տեղեկութիւն չկայ նրա մնացորդ կեանքի ու մահուան մասին . . . :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա.Ա.Ա.Բ ԵԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԳԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարեգործութիւնը՝ Լազարեան հոյակապ տոհմի բոլոր անդամների մեծագոյն ստաքինութիւններից մէկն է եղել։ Բարեգործութիւնը կազմել է նրանց աղնիւ հոգու ու լայն սրտի բնական պահանջը։ Եւ որ ուշագրան է, նրանք իրենց բարի գործերը կատարել են սոսնց աղմուկի, համեստորէն և առանց սպասելու բարոյական փոխ հատուցումի։

Առաստ ձեռքով նրանք օգնութեան են հա-

ուել բոլոր կարիքաւորներին՝ անհատ թէ հասարակական հիմնարկ, առանց խորութիւն դնելու նրանց մէջ՝ ցեղացին թէ կրօնական։ Ընդառաջել են թէ իրենց հայրենակիցների՝ նիւթական, կրօնական, կրթական, առողջապահական կարիքներին եւ թէ իրենց նոր հայրենիքին՝ ուսւո ժողովրդին եւ հասարակութեան։

Անհնարին է թուել մի առ մի նրանց արած նուիրատուութիւնները. յայտնի է միայն որ բարեգործական նպատակով արուած յատեցումները կազմում են մի շատ խոշոր զումար՝ աւելի քան երկու միլիոն ոռորդի, չհաշուած Լազարեան Շեմարանին, նրա տպարանին, հինգ հայ եկեղեցիներին արուած նուիրատուութիւնները։

Պրոֆ. Զինովիևը, անդրադառնալով այս խնդրին, տալիս է հետեւեալ թանկադին տեղեկութիւնները։

«Կէս դարուց առելի է, ինչ ներկայ Հոգարարձուի (այսինքն՝ Խաչատուր Ցովակիմեան Լազարեանի։ Յ. Թ.) Նախահայրերը, աղքականները անընդհատ նուիրարերել են խոշոր դրամագլուխներ քրիստոնէական զանազան դաւանանքների եկեղեցիների կառուցման համար, ապահովելով մշտական եկամուտներով նրանց գոյութիւնը՝ տոկոսներով անձեռնմխելի գումարներից կամ թէ տներից ու զանազան շենքերից ստացուելիք եկամուտներով։ Նուիրատուներն էին՝ ցեղապետազար Նախարեան Լազարեանը, սրա չորս

զաւակները՝ Յովհաննէս, Խաչատուր, Մինաս և Յովհակիմ, ապա Յովհակիմի զաւակները՝ Յովհաննէս, Խաչատուր, Յարութիւն և Դաղար իրենց ընտանիքներով։ Կէս դարուայ ընթացքում նրանք նուիրարերել են զանազան բարեգործական նպատակների համար շուրջ երկու միլիոն արծաթ ոռուրլի (կամ շուրջ 6 միլիոն ոռուրլի թղթադրամ)։

2. «Կառուցել են երկու մայրաքաղաքներում հինգ հայկական քարաշէն եկեղեցիներ իրենց կից շնչնքերով, որոնք բերում են մշտական եկամուտ։

3. «Զանազան քաղաքներում եւ գիւղերում՝ Մոսկուայի, Տուլայի, Պետրովում, կառուցել են 20ից ո՛չ պակաս քարաշէն եկեղեցիներ, իրենց կից տներով ու բնակարաններով քահանաների եւ միւս եկեղեցական պաշտօնեանների համար։

4. «Պետր Նահանգում, իրենց կալուածներում, զործարաններում եւ գիւղերում լազարեանները բաց են արել բազմաթիւ զպրոցներ, որոնցից մի քանիսներում կիրառուել են լանկաստերի մեթոդը։ Կառուցուել են՝ հիւանդանոցներ, դեղատներ, ծերունիների համար ապաստաններ, որբանոցներ, ապահովելով երեխանների ապրուստը։

«Բացի այս ամէնը միշտ նուիրարերում էին գումարներ յօգուտ զպրոցների, ապաստանների ինչպէս երկու մայրաքաղաքներում, այնպէս էլ կայսրութեան միւս քաղաքներում։

«Եման բարեգործական ձեռնարկներից

դուրս նրանք իրենց հաշուով տպագրում էին
զանազան գրքեր ու ձրի բաժանում :

«Այսպէս, օրինակ, Նիկոլայ Ա. կայսեր
կեանքի վերջին ժամերի նկարագրութիւնը
հաշտուր Յովակիմեան Լազարեանը թարգ-
մանել է տալիս Հայերէնի և Վրացերէնի, իր
հաշուով լոյս ընծայում եւ ապա գրքի սպա-
ռումից գոյացած ամրող հասոյթը նուիրում
յօդուտ Սեւաստապոլի պատերազմի ժամբա-
նակ սպանուած ու վիրաւոր զինուորների ըն-
տանիքների» :

Այս տեղեկութիւնները հաղորդելուց յե-
տոյ Պրոֆ. Զինովիել հետեւեալ ընդհանուր
եղբակացութիւնն է հանում .

«Այս բոլոր նուիրատուութիւնները բա-
րեգործական նպատակներով ի մի ձուլելով,
կարելի է երեւակայել թէ ինչպիսի՝ բարիք-
ներ եւ օգուտներ են տուել Լազարեանները
Կառավարութեան եւ Հայ ազդին։ Այս առա-
քինի սխրագործութիւնները մասնաւորապէս
կարեւոր են նոր սերունդի կրթութեան ու
դաստիարակութեան տեսակէտից, քանի որ
շատերը իրենց չքաւորութեան հետեւանքով
եւ այնպիսի վայրերում, ուր չկան գպրոցներ,
հնարաւորութիւն են ստացել կրթութիւն
ձեռք բերել։ Միակ արդարամիտ տուրքը այդ-
րարերարութիւնների համար՝ անսահման,
ազնիւ երախտագիտութիւնն է մարդկանց
սրտերում¹» :

¹Տե՛ս Պրոֆ. Զինովիել, «Պատմական ուրուապիծ
Լազարեան ձեմարանի» եւ այլն, էջ 89—90։

Լազարեանների առաստաձեռնութիւնը չի սահմանափակուել Ռուսաստանով՝ հայ և ռուս ժողովուրդների կարիքներին ընդառաջելով։ Նրանք չեն մոռացել ո՛չ իրենց ծննդավայր՝ Եւ Զուղան եւ ո՛չ էլ իրենց հայրենակիցներին Հնդկաստանում։

«... Տոհմի վեհազնեայ Լազարեանց, — պատմում է Յարութիւն Տէր-Յովհաննեանը — պահէին զթղթակցութիւն ընդ հայրենակից համազգիսն խրեանց որք ի Պարսս եւ ի Հնդիկս այլ մինչ ի կենաց աշխարհի ի յաւիտենականն փոխեցան կեանս վեհազնեայ սերունդքն Լազարեան որք ի Զուղայ տեսին զարեւ եւ շնչեցին զկենսական զօդ, բարեշաւիդ որդիք նոցա, ծնեալքն ի Ռուսաստան ոչ եւս դարձուցին զքաղցր մտադրութիւն խրեանց ի Զուղայ։ Այլ արհին Թաղղէոս առաջնորդն Զուղայու խելահաս զոլով թէ քանի օդտակար է զարձուցանելն նոցին վեհազնութեանց Տեարցն Լազարեանց զուշազրութիւնն խրեանց ի Զուղայ ի հոգս հայրենաց խրեանց, սկսեալ ի 1852 տարւոյ սկիզբն արար զթղթակցութեանն ընթացս շարունակելոյ ընդ նոցին վեհազնութեանցն, կարեւոր խնդրանոք ազդացին իրողութեանց, յորմէ զարթուցեալ նոցին վեհազնութեանցն առատաշնորհ հայրենասիրութիւն, բաղդաւոր արարին զԶուղայ արժանի համարելով զնա խրոցն մտազրութեանց։ Եւ յամի 1853 առաջեցին զմասնաւոր դրամական նապաստ վասն Ամենափրկչի վաճաց եւ վասն կուսանաց Անա-

պատի. Եւ յամի 1855 եւ 1857 առաքեցին զրանկագին եկեղեցական զգեստ բաւական ծախիւք պատրաստեալ տալով յիշատակ Ամենափրկիչ Վանին, ըստ այնմ մասին յարգելով զիսդիր Սրբազն Թաղղէոս արքեպիսկոպոս Առաջնորդին Զուղայու² :

Մի այլ տեղում նոյն հեղինակը հաղորդում է.

«Աղայ Յովհաննէս Լազարեան ի գրութեանն իւրում յամի 1793 յն նոյեմբերի յիշատակէ, «Մեր Դաշտի³ Թարգիրեցեաց եկեղեցւոյն էլ՝ զրած ևմ պարոն Խաչիկ Արգարեանին որ նուէրք հասուցանէ» :

Միւնոյն նամակիի, մէջ Յովհաննէս Լազարեանցը գրում է.

«Անցեալ տարին զրեալ էի Հաշտարխան Պարոն Մկրտում Գալտանովին, որ նա երկու հարիւր բուպլի հասուցանէ ձեզ... Եւ վասն ապագային եւս խոստանամ որքան կենդանի ևմ մնալոց, սկսեալ այս առաջիկայ տարիս 1794 թուէն՝ ամէն տարի 10 թուման տեղիս հասարակ փող նուէրք մասուցանել ուրբ Ամենափրկիչ վանքիդ եւ մասն ինչ կուսանաց վանքին՝ եւ Թարգիրեցւոց մահլաթի եկեղեցւոյն, եւ քանի եկեղեցի որ կայ Զուղայ այժմուս չէն եւ ի պաշտօնի, խնդրեմ այն

²Տե՛ս Հեղինակի «Պատմ. Նոր Զուղայու» եւ այլն, էջ 105—106. ընդգծութեաբը մէրն են: Յ. Թ.:

³«Դաշտ» կոչում էր Ն. Զուղայի այն թաղաժառը, ուր գտնուում էր Աղապարեանցի կամ Նազարէթեանցի տունը, ուր ապրել է Խօնա Մանուկի թոռը՝ Նազարէթը, Լազարեանցի նախահայրը:

Եկեղեցեաց որքանութիւնն եւ անուանքն գրէք ինձ, որ նոցա եւս յիշէք մատուցանեմ : Եւ երբ որ ընծայս ստանայք ինդրեմ կարդ դնէք ի մէջ վանքին, որ ամենայն տարի յունվարի 12 յատուկ պատարագ մատուցանէք վասն իմ ծնողացս, Եւ վասն իմ միայնակ որդի Յարութիւնին, որ թիվը 1791 յունվարի 12 վախճանեցաւ, Եւ յետ սուրբ պատարագին հասարակութեամբ պաշտօն կատարէք⁴ :

Այս նամակին պատասխանում են Ն. Զուզիր Ամենափրկիչ վանքի հոգարարձութիւնն եւ երկու վարդապետներ 1795 թ. օգոստոս 20ին : Յայտնելով իրենց ցաւակցութիւնը աղա Յովհաննէսի որդու վաղահաս մահուան առթիւ, զրում են, որ բոլոր եկեղեցիներում անմիջապէս կատարուել է Ս. Պատարագ եւ ապա հոգեհանգիստ : Ի վերջոյ յոյս են յայտնում, որ նա օգնութեան կը զայ Ամենափրկիչ վանքին :

Իրօք զարմանալի մարդ է եղել աղա Յովհաննէս Լաղարեանցը իր բազմակողմանի հետաքրքրութեամբ, չնայած իր բազում զրադմունքներին, որոնք կապուած էին նրա բարձր դիրքի եւ պաշտօնների հետ : Նոյն նամակում նա հարցնում է .

«... 1743ումն ես Զուզուց վերկարման՝ Տէր Գէորգ քահանայ կայր միականի . կենդանի⁵ է այժմ թէ վախճանեալ է, եւ զաւակ է մնացեալ աշխարհական են թէ Քահանայ են՝ ինդրեմ մեզ ծանուցանել» :

⁴ Ibid. էջ 108—109:

Նոր Զուղացի պատմիչը հաղորդում է նաեւ մի ուրիշ փաստ։ Խօսելով Ն. Զուղացի Սուրբ Կատարինէ Անապատ Կուսանոցի մասին, գրում է.

«Բայտ արձանագրութեանն Եղելոյ ի սմին կուսաստանի, շինեցաւ այս Անապատ ի թուականին Հայոց Ռէզի (1623), արդեամք եւ ծախիւք բարեպաշտօն Խօջայ Եղիազարու, որ էր պատի իշխանապետին Եղիազարու Նահապետին տոհմի վեհազնեայ Լազարեանց»։

Ծանօթութիւնից էլ իմանում ենք, որ կուսանոցում պահւում է «Գալարածոյ թուղթ» արձանագրութեամք Անապատի կառուցման մասին, եւ որ այդ թղթի մէջ ասուած է, ի միջի այլոց, որ՝

«Զարդարեալ է ջահիւք եւ լապտերօք արար տեղի պատարագի եւ փառարանութեան անմահ թագաւորին Քրիստոսի...»⁵։
Ու նաեւ՝

«... Լինելի սոյն խօջայ Եղիազարու պատի իշխանապետին Եղիազարու աստի լինի յայտ, զի ի նմին արձանագրութեան յետ եկեղեցւոյ շինութեանն յայտնելոյ՝ յիշատակի «Աստուած օրհնէ նախ զիօջայ Եղիազարն որ շինեաց զեկեղեցին խըցերով եւ տնտես տնելովն եւ ետ եկեղեցւոյն մէկ խաչ, մէկ Աւետարան, մէկ այսմաւուրք, մէկ սկիհ, մէկ շուրջառ, մէկ սաղաւարդ, մէկ աւազանի ծածկոց, երկու մոմպան, մէկ սկոհան»⁶։

⁵ Ibid. Հ. II, էջ 236:

⁶ Ibid. Հ. II, էջ 236 :

Ն. Զուղայի յիշեալ սկասմիչը այնուհետեւ առաջ է բերում ։ Զուղայի եկեղեցիներում պահպանուած «Յիշատակարան»ներից հետեւեալ տեղեկութիւնները Լազարեանների կողմից արուած նուիրատուութիւնների մասին։

ա. Սուրբ Լուսաւորիչ կամ Սուրբ Միհանայ եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Աստուած օրհնէ զխօջայ Մանուկն՝ զկողակից Մարիամն եւ զորդին Եղիազարն, որ ետուն ի զուռն սուրբ եկեղեցւոյն (թաղին Դաւրիժեցւոց) մէկ կոստղած ոսկետուի մագաղաթ Աւետարան, Ա. ատենի սաղմոսարան, Ա. ժամագիրք, Ա. տօնացոյց, Ա. աւազանի վարագոյր իւր շամփրովն, մէկ մեծ մոմզան, մէկ զալամքար վարագոյր, Ա. շուրջառ, եւ զխորանն մեծացոյց եւ բարձրացոյց եւ նորոգեաց յիշատակ իւրն եւ իւր ծնողացն Ղազարին եւ Խաթէին յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք» :

բ. Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Աստուած օրհնէ Պարոն Աղազարն կողակիցն Բաղրին եւ զվարդենին, եւ զորդիքն Մանուկն եւ զԱպաֆարն, որ ետ եկեղեցւոյն (սուրբ Լուսաւորչի) Ա. մեծ զխւանի խալի, Ա. բանաֆչ ատլաս նաշի (զագաղի) ծածկոց, Բ. պղընձէ պատկեր, Ա. չիթ սուղանի» :

գ. Յիշատակագիր ի կուսանաց Անապատի .

«Աստուած օրհնէ զԽօջայ Եղիազարն . . .
և դիւր որդի Նազարէթն անփորձ պահէ» :

Դ. Արձանագիր իւ սուրբ Լուսաւորիչ
(սուրբ Մինա) Եկեղեցւոց .

«Յիշեցէք իւ Քրիստոս զԽօջայ Աղազարն
և զծնօղսն Մանուկն եւ զՄարիամն եւ Հան-
դուցեալ որդին Վալիղէն, եւ նորարողը Ո-
Մանուկն եւ զկենակից Բատունն որ ետուն
զուրբ Կաթողիկէն ծածկել, յիշեցէք առ
Աստուած» :

Ե. Յիշատակագիր սուրբ Լուսաւորչի
Եկեղեցւոյ .

«Աստուած օրհնէ զՊարոն Աղազարն Եւ
իւր կողակիցն Բատրին եւ որդիքն Աղայ Մա-
նուկն, Աղայ Սաֆարն որ ետուն յիշատակ
սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյն Ա. զառ թիր-
վանդայ շուրջառ, Ա. սաղաւարդ իւր խա-
չովն, Ա. քաշած զառ ուրար, Ա. ջուխտ զառ
րազրանդ (թեւնոց), Ա. շապիկ, Ա. սկհւոյ
զառ աղլուխ, սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ
միջի մուհաջարն քաշեց, վերնատունն շի-
նեց . . .» :

*

Վերոյիշեալ տեղեկութիւնները այնքա՞ն
խօսուն են ու այնքա՞ն ցայտուն ապացոյցներ
Լազարեան տոհմի բոլոր անդամների առա-
քինութեանց, սկսած իրենց նախահայրերից
մինչեւ տոհմի վերջին շառափղը՝ Մանուկն
Յովհաննէս Խաչատրեան Լազարեանը, որ
որ եւ է մեկնարանութեանց ու լուսարանու-
թեանց կարիքը չկայ :

Եթէ մեր այսօրուայ բազմաթիւ հայ հարուստները, միլիոնատէրերը, սկսած Կալի-Փորնիայի 15 հայ միլիոնատէրերից մինչեւ Լոնդոն-Փարիզում բազմած նաևթի թաղաւոր Կիւլպէնկեանը հետեւէին Լազարեանների օրի-նակին, հայ գաղթաշխարհում մենք չէինք ու-նենայ կարիքաւորներ եւ հայ գաղթաշխարհը սփռուած կը լինէր դպրոցներով, դրակա-րաններով, հիւանդանոցներով, մեր դրակա-նութիւնը ու գրագէտները չէին գտնուի այն ողորմելի վիճակում, որի մէջ այսօր նրանք հոգեպէս եւ բարոյապէս տառապում են . . . :

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵԽԵԼԵԱՆ 16901ԱՅ

(1815—1918)

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Հասարակական կարիքները պիտի բաւարարուին իր հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու զանիքներով» — առել էր ձեմարանի տեսուչ, յետագայում վերատեսուչ, Դէորդ Քանանեանը իր ճառի մէջ, արտասանած ձեմարանի 50ամեակի միառաւոր հանդէսին :


Եւ, տարակոյս չկայ, որ առել էր մի ձշմարտութիւն, որ առաւելապէս վերաբերում է այն ազգերին, որոնք զուրկ են պետական անկախութիւնից, պետական հարազար իշխանութիւնից :

Հայ ժողովրդի պատմութիւնը, մասնաւորապէս սկսուած 15րդ դարի սկզբից, երր Ռուբինեանց հարստութեան անկումով հայ ժողովուրդը կորցրեց իր անկախ գոյութիւնը, իր պետականութիւնը, տալիս է բազմաթիւ ցայտուն ապացոյցներ յիշեալ մտքի կատարեալ ձշմարտութեան :

Պատմական այդ մոմէնտից սկսած Հայ ժողովրդի հասարակական ու մշակութային յառաջադիմութիւնը ընթացել է Հէնց Հայ «հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու զանիքներով» :

Մի Մխիթար Արքահայր Սեբաստացի (1676—1749) իր մեծատաղանդ յաջորդներով Աւենետիկում ու Վիեննայում, մի Ներսէս Աշտարակեցի իր Ներսիսեան դպրոցով, մի Գէորգ Դ. կաթողիկոս իր Գէորգեան Ճեմարանով իջմիածնում, Ազարարեան Եղբայրներ իրենց «Ազարարեան դպրոցով» Հաշտարիանում, Խալիլիան դպրոցը Թէոդոսիայում, Ն. Նախիջևանի դպրոցը ևւ, վերջապէս, Դորպատի Հայ ուսանողների փայլուն փաղանդը, — Եղել են մի—մի գործօն ոյժեր, որոնք կերտել են Հայ մշակոյթի հոյակապտաճարը ևւ արգելք են եղել Հայ ժողովրդի սպազմայնացման օտար պետութիւնների քայլայիշ ազդեցութեան տակ:

Լազարեանները եւս եղան այդ գործիչներից, որոնք բերին իրենց հարուստ բաժինը Հայ ազգացին մշակոյթի զարդացման ևւ նրա հասարակական կեանքի յառաջադիմութեան: Եւ այդ արին, Հիմնելով հեռաւոր հիւսիսում՝ Մոսկուայում, իրենց Ճեմարանը, որ եղաւ մի լուսառու Փարոս ամրող մի զար պետականութիւնից զուրկ Հայ ժողովրդի համար: Եւ այդ մի ժամանակ էր, երբ Հայութիւնը օտարների, ծանր լուծի տակ



Հեմարտն Արեւելիան Լեզուաց



Հեմարտնի Գ. Նախակրթաբանի աշակերտները

խարիստում էր խոր ազիտութեան խաւարի մէջ . . . :

Եւ Լազարեան ծեմարանը եղաւ «Մուկովեան Արէնի Հայոց . . .» :

*

Լազարեանները իրենց դպրոցի հիմքը դրեցին 1815 թուին, այսինքն՝ մի ժամանակ, երբ Արեւելեան Հայաստանը հեծեծում էր ասիական բռնակալների բիրտ կրունկի տակ, երբ Հայութիւնը, անկարող լինելով ապրիլի իր մայրենի հողի վրայ, անընդհատ դադարում էր թէ իր հարեւան՝ Վրաստանը և թէ հեռաւոր երկիրներ, իսկ Հայրենիքում մնացածները, գտնուելով մտաւոր խաւարի մէջ, զոհ էին ամէն կարգի նախապաշտումների . . .

Այդ օրերին շատ սուր կերպով էր զգացւում մի կանոնաւոր և հաստատուն հիմքերի վրայ գրուած դպրոցի կարիքը: Եւ ծնունդ առան իրար ետեւից, նախ, Լազարեան ծեմարանը եւ առա 1824 թ. Ներսիսան դպրոցը Թիֆլիսում:

«Կարելի է համարձակ կերպով ասել, — զրում է Լէօն — որ եթէ մեզանում չլինէին Լազարեանները և Ներսէս Աշտարակեցին, ուստահայերը գեռ շատ երկար թաղուած կը մնային ասիական խաւարի մէջ: Նրանց դպրոցներն էին մեզ կեանքի հրաւիրողները. այդ դպրոցներից էր, որ հայի խաւար հորիդոնի վրայ բացուեց գարնանային առաւօտը:

Դրանք երկուորեակներ էին, միատեսակ էին
մտածում, գործում։ Երկուսի դաւանանքը
միւնոյնն էր, երկուսն էլ միւնոյն ձանա-
պարհով էին ընթանում¹։

*.

Արդ, ի՞նչ «դաւանանք» ունէր Ճեմա-
րանը, ի՞նչ նպատակների էր հետամուռ նա,
— սպարզենք երկու խօսքով, մանրացնենք
ընդհանուր գաղափարը։

Ճեմարանի կանոնագրի մէջ, սպարբուած
միայն 1830 թ., 15 տարի անց իր հիմնա-
դրութիւնից, Ճեմարանի նպատակը ճեւս-
կերպուած է հետեւեալ կերպով։

«Նպատակ Ճեմարանին՝ է վարժել
դհայագգի և զօտարազգի մանկունս կարեւո-
րագոյն ուսմանքը Եւրոպական և Ասիական
լեզուաց, այնպէս՝ զի աւարտողքն ի նմա
զընթացս ուսմանց ըստ սահմանագրեալն
կարգի, Եթէ իցեն յաշխարհական վիճակէ՝
կարիցեն ծառայել Տէրութեան՝ մտանելով
յարքունի սպատամունս թէ՛ ի Զինուորականս
և թէ՛ ի Քաղաքականս. իսկ Եթէ իցեն յեկե-
զեցականաց Հոյոց՝ կարիցեն ծառայել հայ-
րենի Եկեղեցւոյ իւրեանց՝ ստանձնելով զպաշ-
տոն Եկեղեցական՝ ըստ անօրէնութեան հո-
գեւոր իշխանութեան²։

¹ Ա. Ա. «Ետեղաննոս Նազարեանցի կենսագր.»,
էջ 33։

² Մ. Մակրեանց, «Ցիշատակարան», մասն Պ.,
էջ 14։

Ճեմարանի հիմնադիրները, սակայն, իրենց մտքում ու հոգում գուրզուրացել են շատ աւելի բարձր ու լայն նպատակներ, քան այդ պաշտօնական ձեւակերպութիւնն է արտարերում:

Նրանց նպատակն է եղել, նախ, իրենց սաներին տալ այնպիսի ընդհանուր կրթութիւն, որպէս զի նրանք ի վիճակի լինեն առանց դժուարութիւնների հանդիպելու ստանալ բարձրագոյն կրթութիւն Մոսկուայի համալսարանում, Երկրորդ՝ որպէս զի սովորեն արեւելեան լեզունները, որոնց թւում առաջին հերթին Հայոց լեզուն, պատմութիւնն ու կրօնը, թէ գործնական եւ թէ զուտ գիտական նպատակներով: Յայտնի է նաև, որ նրանք ունեցել են մի այլ բազմանք եւս՝ իրենց բարեպաշտ սրտերում՝ տալ հայ եկեղեցուն կրթուած հոգեւորականներ, որոնց պահանջը այդ օրերին խիստ զգալի է եղել:

«Հայ հոգեւորականութիւնը, — գրում է Ա. Երիցեանը, — տգէտ էր, ըմբոստ, անպատկառ, ո՛չ իւր կարգը եւ ո՛չ պատիւը ձանաչող. Եկեղեցիք թալանուած, ազգային Եկամուտները յափշտակուած, ազնուականք եւ իշխանականք — անուսք, գոռողք իւրեանց ցեղական ծաղմամբ, բայց զաղբելի վարք ու բարքի տէր, կեղեքիչք, հարստահարիչք ուամիկների ու տկարների. Ժողովուրդն ընկղմուած խաւարի մէջ, բարոյալէս ըն-

կած, օտարամոլութեան հակուած, խղճալի
ու ցաւալի դրութեան մէջ . . .³» :

Ահա այս վիճակն էր, որ ի նկատի ունէին
Լազարեաններն եւ ձգտում էին, որ իրենց
Ճեմարանը գար ու ամոքէր միանգամայն ազ-
գային բոլոր ցաւերը : Եւ երբ Հայոց կաթո-
ղիկոսը դիմում արեց եւ առաջարկեց Լազա-
րեաններին, որպէս զի Ճեմարանում յատուկ
հոգեւոր բաժին բացուի կրթուած հովիտներ
պատրաստելու, որոնք ապագայում ծառա-
յէին հայ եկեղեցուն, Լազարեանները սիրով
ընդառաջնեցին վեհափառի ցանկութեան, բաց
արին Ճեմարանում 1841թ. հոգեւոր բաժան-
մունք յատուկ ծրագրով եւ ընդունեցին 15—20
աշակերտներ իրենց հաշուով, թէ եւ նման մի
քայլ չափազանց ծանրաբեռնում էր Ճեմա-
րանի կրթական ծրագիրն ու խճողում այն :

Բայց էականը Լազարեանների համար
Ճեմարանի կետնքի այդ սկզբնական շրջանում
այն չէր, թէ պաշտօնական կանոնագիրը ի՞նչ
սահմաններ էր գծում նրա կրթական գործի
համար, առաւել եւս հոգ չէր, որ ծրագիրը
խճողում էր մի շարք նպատակների հետա-
մուտ լինելով, էականը այն էր, որ նրանք
կամենում էին, որ իրենց կրթական հաստա-
տութիւնը լինի Հայոց դպրոց, դառնար մի
լուսատու ջահ Հայութեան համար, լինէր մի
տաքուկ օջախ հայ չքաւոր երեխանների հա-

³ Ա. Երիցեանի ճեռագիր դրութիւնից է քաղել
Ս. Մալիսասեանը իր «Պատմ. Ներսիսեան դպրոցի»
դրքոյի մէջ, էջ 8:

մար եւ նրանք կրթուէին ու դաստիարակուէին հայ ոզով, ապագայում լինեն հայ ազգի պիտանի զաւակներ։ Ազգային մընլորտ էին ուղում ամենից առաջ ստեղծել իրենց գարոցում։ Եւ պիտի ասել, որ այդ նպատակին նրանք լիովին հասան։ Այդ օրուանից սկսած ձեմարանում իշխել է հայի շոնչ, ազգային ոզի, որ, կարելի է ասել առանց չափազանցութեան, հրաշքներ է գործել։ Ձեմարան էին մտնում Երեխաներ, որոնց համար հայերէնը օտար լեզու էր։ Նրանց մայրենի լեզուն եղել է չերքէզերէն⁴, ուստի բէն կամ որեւէ դժուար հասկանալի հայերէն դաւառարարառառ։ Մի քանի տարի անց, ամէն ինչ կերպարանափոխուել է, այդ աշակերաները ոչ միայն սկսել են ազատ հայերէն խօսել ու գրել, այլ եւ սիրել են Հայոց լեզուն, իսկ ոմանք նոյն իսկ նուիրուել նրա ուսումնասիրութեան։

«Լազարեան ձեմարանը, — ասում է նրա նախկին սան Երուանդ Շահազիզը, — եղել է Հայոց ամենահին մեծ ու կանոնաւոր ուսումնաբանը, որ առաջինն է սկսել ուսումնական մարդիկ տալ ազգին⁵։

ՁԵՄԱՐԱՆԸ ԿԱՐՈՂԱԳԵԼ Է ԻՐ ՍԱՆՆԵՐԻ ՄԷջ

⁴ Փայլուն օրինակ է ծառայում ձեմարանի Հայոց լեզուի ապագայ ուուցիչ՝ կարապետ Կուսիկեանը, որը մտնում է ձեմարան, լինելով չերքէզախօս . . . :

⁵ Տե՛ս Եր. Շահազիզ, «Մկրտիչ Յովոէֆեան կմին», կենսագրական-դրական անութիւն։ Թիֆլիս 1900, էջ 270

զարգացնել նոեւ սէր դէպի բարձրագոյն կրթութիւն :

Դոկտ. Արտաշէս Արեղեանը իր «Քերովքի Պատկանեանը Դորպատում» յօդուածի մէջ տալիս է թանկագին տեղեկութիւն այդ մասին :

«Զաշուած ազատ ունկնդիրները, — գրում է նա, — Դորպատի համալսարանի գերմանական շրջանում, որ տեսեց մինչեւ 1889թ. եւ ոռոսականացաւ այնուհետեւ, այդ համալսարանը յաճախած են թուով մեկ քառասնեակ արձանագրուած, խելական հայ ուսանողներ : Այդ քառասնեակ հայ ուսանողները մի կարեւոր մասով Մոսկուայի Լազարեան ձեմարանին նախկին սաներ եղած են⁶» :

*

Լազարեան ձեմարանը՝ չնորհիւ իր աղպային ողու, իր ծրագրին, որ հնարաւորութիւն էր տալիս բարձրագոյն ուսում ստանալու եւ թէ այն հանգամանքի, որ գտնւում էր Ռուսաստանի մտաւոր կենտրոնում, Մոսկուայի համալսարանի կողքին, շատ շուտով է ձեռք բերում մեծ համբաւ ու համակրանք հայ հասարակութեան լայն շրջաններում : Նրա համբաւը տարածուել հասել է մինչեւ Հնդկաստան ու դրաւել հայ նոր սերունդին ու դարձել նրա գեղեցիկ երազների առարկան :

⁶Տե՛ս «Հանգէս Ամսօրեայ», 1947թ. Հոկտ.—Դեկտ., էջ 627. ընդգծումները Դոկտ. Ա. Արեղեանինն է :

«Իննը տարեկան հասակումս, — պատմել է իր մասին Մկրտիչ կմինը իր յորելիսնի ժամանակ 1886 թ. — հայրս ինձ տարաւ Ն. Զուղայից Հնդկաստան, Կարկամիա, և տուեց «Հայոց Մարզասիրական ձեմարանը»: Այստեղ Ես առաջին անգամ իմացայ Լազարեան ձեմարանի զոյութեան մասին, որ իմ մտածողութեան, ցնորքներիս առարկան գարձաւ, և Ես չհանգստացաց մինչեւ որ չնստայ մի սուեդական առեւտրական նաւ, որ զնում էր Սովոկ-Հօլմ: Ես անցայ Ասիան, Աֆրիկէն, Եւրոպան և Սուեզի ու Փինլանդիոյ վրայով հասայ Մոսկուա — բազմալի ձեմարանը՝ 1830 թուին⁷, Երբ 14—15 տարեկան մի պատանի էի⁸:

Բայց ինչո՞ւ և ի՞նչպէս է եղել, որ Լոգարեան ձեմարանը իր ծննդեան վաղ օրերից սկսած կարողացել է այդքա՞ն մեծ համբաւ ձևոք բերել ու դրաւել հայ մատադ սերունդի սրտերը, դառնալ նրա ուսումնատենչ երազների առարկան:

Մեր կարծիքով, բացի վերը յիշատակած հանգամանքներից, դրա ամէնաէական պատճառներից մէկն եղել է այն, որ ձեմարանը իր հիմնագրութեան առաջին իսկ օքուանից եղել է ապարատակարգային դպրոց և ընդունել է իր գիրկը ամենից առաջ հայ ժո-

⁷ Ուրիշ ազրիւրներում մատնանշուած է 1829 թ. աշունը:

⁸ Եթ. Շահազիզ, «Մկրտիչ կմինի կենսագրը», էջ 58—59:

դովրդի որք ու չժառոր երեխաներին Հայաստանի ամենախուլ անկիւններից հաւաքած, մինչդեռ մեր թեմական դպրոցներն եւ նոյն իսկ Ներսիսեան զպրոցը իր կեանքի առաջին շրջանում եղել են սոսկ հայ արտօնեալ դասակարգերի՝ ազնուականների, առեւտրականների ու հոգեւորականների երեխաների կրթարաններ :

Այս հանգամանքը վճռական դեր է կատարել ձեմարանի ժողովրդականացման ու ընդհանուրի համակրանքը գրաւելու դործի մէջ :

Լազարեաններն իրենց այս ժողովրդասէր ձգտումը իրազործելու նպատակով հինգ սկզբից յատկացրել են որոշ հիմնազրամ 30 հայ. որը ու չքաւոր երախաններ ըսդաւելու համար, որպէս իրենց թոշակաւորներ : Այդ երեխանները եղել են գիշերօթիկ, որոնց ազրուածն ու կրթութիւնը միանգամայն ապահոված է եղել: Հետագայում նրանց թիւը 30ից բարձրացրել են ու հասդրել 44:

Այսպիսով, Լազարեանները մատուցել են հայ ժողովրդի խոնարհ խաւերին այնպիսի մէծ բարիք, որի գնահատանքի համար չկայ շափ ու կշխ :

*

Տարակոյս չկայ, — ինչպէս մէնք ցոյց տուինք մեր Ներածութեան մէջ, — որ Լազարեան ձեմարանի բազմարդիւն դործունէութեան ու գոյութեան յարատեւութիւնը

երաշխաւորուած է Եղել հէնց սկիզբից նրա-
նով, որ ձեմարանի հիմնադիրները իրենց
պայծառատեսութեան մէջ ընտրել են Մոս-
կուան որպէս վայր իրենց դպրոցի համար :
Եւ Մոսկուան, որպէս Ռուսաստանի հոգե-
մտաւոր կենտրոն իր մեծահամբաւ համալ-
սարանով, թողել է ձեմարանի կրթական-
դաստիարակչական դործի վրայ խիստ բա-
րերար ազգեցութիւն :

Մոսկուայի համալսարանը միշտ Եղել է
յառաջագէմ գաղափարների շտեմարան ու
մտաւոր ազատամիտ հոսանքների հնոց,
չնայած երկրում տիրող քաղաքական ան-
նպաստ պայմանների, իսկ Երբեմն նոյն իսկ
անհանդուրժելի դարձած պետական ոչժի-
մին .

«ՄԵծ իւլք եւ հեռատեսութիւն ցոյց
տուեց Յովակիմ Լազարեանը մանաւանդ իր
դպրոցի համար տեղ ընտրելու գործում, —
ասում է Լէօն : Մոսկուան թէեւ հեռու էր
Հայերի բնակութեան տեղերից, բայց իրրեւ
Ռուսաստանի մտաւոր առաջնակարգ մի
կենարոն, կարող էր մի բարեկարգ դպրոցի
բոլոր յարմարութիւնները տալ⁹» :

Բայց Մոսկուան եւ նրա համալսարանը
ո՞չ միայն յարմարութիւններ են տուել, այլ
եւ բարոյական ու գաղափարական փոխա-
գարձ կատ են հաստատել, որից մեծապէս
օգտուել են Երկու կողմէրը :

⁹ Լէօն, «Մտեփ. Նազ. Կենսագր.», էջ 17:

Այս մասին արտայայտուել է նաև Մոսկովյայի Համալսարանի քեկտոր Գարբիչը Իվանովը. Ճեմարանի 75ամեակի առթիւ իր ներկայացրած ուղերձի մէջ:

«...Ես կենդանի կերպով զգում եմ, — ասուած է այդ ուղերձի մէջ, — ու մեծապէս զնահատում այն հոգեկան կապը, որ զոյութիւն ունի Ճեմարանի և Համալսարանի միջեւ. այս երկու հաստատութիւնները կապուած են միմեանց հետ ընդհանուր նպատակով՝ գիտութեան զարկ տալ ու կրթութիւն տարածել մեր հայրենիքում, երկուսն էլ ունեցել են ընդհանուր զործիչներ և փոխադարձարար սնուել են մէկը միւսից, — Ճեմարանը մատակարարել է Համալսարանին Կիմնաւոր գիտական պատրաստութեամբ և նկնդիրներ, Համալսարանը՝ Ճեմարանին հասուն դասատուններ ու գաստիարակներ:

«Ճեմարանին վիճակուած է եղել լուծելու մի շատ զժուարին խնդիր՝ ընտելացնել գիտութեան և պետութեան ընդհանուր կրթութեան գետնի վրայ Երեխաններին ու պատանիներին, որոնք ծնուած են եղել ու մեծացել են հեռաւոր ծայրագուառում միանգամայն իւրայատուկ պայմաններում՝ ընութեան, կենցաղի ու լեզուի: Տարրեր տարրերի ընտելացումը պետական ընդհանուր օրդանիզմին, Ճեմարանը — որքան ինձ վիճակուած է եղել գիտելու իմ երկարամեայ ծառայութեան ընթացքում, — լուծել է միշտ յաջողութեամբ, պատրաստելով արժանաւոր

գործիչներ ամենատարրեր ասպարէզներում
ծառայելու թէ իրենց հարազատներին և թէ
ընդհանուր հայրենիքին¹⁰» :

Ճեմարանի համբաւին և յաջողութեան
մէծապէս նոպաստել է նաև մի երբորդ շատ
կարեւոր հանդամանք . դա այն է , որ Ճեմա-
րանը իր գոյութեան առաջին 56 տարուայ
թիւք գտնուել է իր հիմնադիրների ու
նրանց սոհմի անդամների անմիջական հեղի-
նակաւոր ու լուսամիտ դեկավարութեան ներ-
ֆոյ . եզել է նրանց մշտական խնամքի ու-
ղուրդութանքի առարկայ , որով և կանխել
են ամէն տեսակ կողմնակի անրազձայի մի-
ջամտութեան ամէն հնարաւորութիւն :

Այս հանդամանքը փրկել է ճեմարանը
ներքին փոթորիկներից , որոնցով այնքա՞ն
հարուստ են եզել մեր ազգային դպրոցները
և որոնք այնքա՞ն աղէտաւոր անդրադար-
ձումներ են ունեցել նրանց կրթական գործի
վրայ . . .

Մի հեղինակաւոր ձեռք միշտ ամուր սրա-
հել է ճեմարանի կրթական ու վարչական
գործերի դեկը ու վարել այն անշեղ կերպով
մի ուղղութեամբ , մի ողով և այդպիսով ա-
պահովել նրա կրթական-գաստիարակչական
գործի բնականոն գարգացման ընթացքը :

Ի հարկէ , այդ չի նշանակում , որ Ճեմա-
րանը իր կեանքի մէջ չի հանդիպել մէծամէծ

¹⁰ Տե՛ս «Լազ . ճեմարանի 75ամեւրկը» , ոուսերէն
լեզուով :

գժուարութիւնների, բայց ամէն մի դժուարութիւն, ամէն մի աննպաստ հանդամանք յաղթահարուել է նրա ղեկավարների հմուտ ու հեղինակաւոր ձեռքով և ապահովուել նրա կեանքի խաղաղ ընթացքը:

Կայ Եւ մի չորրորդ հանդամանք ձեմարանի կեանքում, որն ո՞չ միայն ապահովել է նրա դպրոցական գործի անխախտ զարգացումն ու յաջողութիւնը, այլ եւ գրաւել է հայ եւ ոռւս հասարակութեան լայն շրջանների համակրանքն ու վստահութիւնը, ինչպէս եւս ապահովել կառավարութեան մշտամեւ բարեացակամ վերաբերմունքը, քանզի ձեմարանը երբեք կառավարութիւնից չի պահանջել նիւթական օժանդակութիւն, չի ծանրաբեռնել կրթական նախարարութեան առանց այն էլ լղարիկ րիւջէն:

Այդ հանդամանքը՝ ձեմարանի դրամական միջոցներով միշտ ապահովուած լինելի է եղել, չորհիւ Լազարեանների անօրինակ զոհարերող ոգու ու նրանց մշտատեւ զուրգուրանքին իրենց կրթական հաստատութեան վրայ:

Ահա՛ մի հանդամանք, որից զուրկ են եղել մեր ազգային դպրոցները հայրենիքում եւ որն այնքան աղէտարեր է եղել նրանց բնականոն զարգացման համար . . .

Լազարեանները սկսած 1804—1864 թ. նուիրարերել են ձեմարանին՝ 662, 787 ոռորդի

արծաթ, որ թղթաղբամով կազմում է չուրջ 2,000·000 ռուբլի կլոր թուով¹¹:

Վերջապէս, կար նաև մի այլ շատ կարեւոր խնդիր, որի բարեյաջող լուծումը միայն կարող էր թէ՝ յարատեւել ձեմարանի գոյութիւնն եւ թէ՝ զնել այն նպաստաւոր պայմանների մէջ պետական կրթական հաստատութիւնների չարքում:

Այդ խնդիրի լուծումով չափազանց մտահոգուած էր ձեմարանի կառուցողը՝ աղաթովակիմ Լազարեանը: Եւ երբ նրան իր կեանքի արեւմուտքին յաջողուեց բարեյաջող լուծում տալ, նա հանդիստ սրտով զերեզման իջու:

Ձեմարանը մասնաւոր կրթական հաստատութիւն էր. «Տեարց Լազարեանց Հայկական դպրոց» էր եւ իրբեւ ոյզովիսին շատ խախուտ էին՝ նրա իրաւական հիմունիքները կայսրութեան դպրոցական ցանցի մէջ:

«Չնայած Լազարեան դպրոցի բարոյական նշանակութեան ու նիւթական միջոցների անընդհատ աճման, — ասում է Գէորգ Քանանեանը, — չնայած որ ձերունի Յովակիմ Լազարեանի ոյժերի սպառման հետեւանքով նրա երկու աւագ որդիները օգնում էին նրան, այսու հանդերձ ձեմարանի ապագայի ապահովութեան միտքը չարունակում էր անհանդառութիւն պատճառել հեռատես Հոգա-

¹¹ Լազարեանների նուիրտառութիւնների մահապատճան հաշիւը ներկայացուած է Յաւելուածում:

րարձուին։ Դպրոցի գոյութիւնը թւում էր նրան խախուտ, քանի նա շարունակում էր միայ որպէս մի մասնաւոր դպրոց, հետեւարար ևնթակայ ամեն տեսակ պատահարների ու նրա կառավարիչների անձնական կամքից կախում ունեցող մի հաստատութիւն, քանի որ նա կը մնայ առանց որոշ օրէնքով հաստատուած կանոնագրի, առանց իրաւունքների նրա պաշտօնեաների համար և պետական իշխանութեան պաշտպանութիւնից զուրկ։ Այս նպատակով արուած բոլոր փորձերը վրիպեցին ու անհետեւանք մնացին։ Ոչ մի ծրագիր, որ նպատակ ունէր զնել ձեմարանը կրթական մինիստրութեան հովանուտակ, չունեցաւ յաջողութիւն . . . : Վերջապէս, միտք յղացան զնել ձեմարանը մի որ և է պետական բարձրաստիճան ու ազգեցիկ անձնաւորութեան հովանուորութեան տակ։ Եւ նրանք ընտրեցին կոմս Արակչէելին, որը ժամանակի ամենահզօր պետական դէմքն էր^{12»}։

Այդ նպատակով էլ Յովակիմ աղան և նրա երկու որդիքը՝ Յովհաննէսն ու Խաչատուրը 1824 թ. յունիս 19ին խնդրագիր ևն ներկայացնում կայսեր Ալէքսանդր Ա.ին։

Այդ խնդրագրի մէջ, ի միջի այլոց, ասւած էր հետեւեալը.

«Ութամեայ փորձը ապացուցեց մեզ մէր դպրոցի իրական օգտաւէտութիւնը։ Մեր ու-

¹² Տե՛ս Գ. Քանանեանի ճառը «Ձեմարանի 50ամեակին» մէջ, էջ 23։

սումնաբանում բացի այն գիտութիւններից, որոնք սովորաբար աւանդուում են բարձրագոյն գպրոցներում, աւանդուելու են նաև արեւելեան լեզուներ, որով նա հանդիսանալու է միակը իր տեսակի մէջ եւ տարրերուելու է բոլոր միւս գպրոցներից։ Բայց նոյն փորձը ցոյց տուեց, որ այս կրթական հաստատութիւնը, որ կազմակերպուած է առանձնայատուկ կանոններով եւ մի ուրիշ ազգի համար, պահանջում է յատուկ հովանաւոր ունենալ, ինչպէս եւ յատուկ իրաւունքներ ու կանոնազիր^{13»}։

Եւ Լազարեաններ ցանկութիւն են յայտնում Ճեմարանի հովանաւորի պաշտօնի մէջ անսնել կոմս Արակչեւին։

Միաժամանակ նոյն խմաստով ու բովանդակութեամբ կայսեր ներկայացնում է խնդրազիր նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմը։

Լազարեանները դիմում են կոմս Արակչեւին ու խնդրում, որ ստանձնի այդ պաշտօնը։

Կոմսը տալիս է իր համաձայնութիւնը Եւ կայսրը յատուկ հրովարտակով նշանակում է 1824 թ. նոյեմբեր 8ին, Արակչեւին Ճեմարանի Գլխաւոր պետ կամ Գլխաւոր Կառավարչապետ։

Այնուհետեւ այդ պաշտօնը ստանձնում են մի շարք ականաւոր ու բարձրաստիճան

¹³ Տե՛ս «Լազ. Ճեմարանի 50ամեակցի Յաւելուածի մէջ, էջ 6»։

պետական գործիչներ. այդ կարգը շարունակւում է մինչեւ 1872 թ., երբ Ճեմարանը վերջապէս ընդունում է ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան գպրոցական ցանցի մէջ և հաստատում է նրա վերջնական գպրոցական ծրագիրն ու կանոնագիրը, որոնցով եւ Ճեմարանը առաջնորդում է մինչեւ իր գոյութեան վախճանը 1918 թուին :

Այսպիսով Ճեմարանի իրաւական վիճակը կարգադրուում է, որով ո՛չ միայն ապահովում է նրա յարատել զոյութիւնը, այլ եւ հնարաւորութիւնն է ստեղծելում նրա ճամրին պատահած բոլոր զժուարութիւնները դիւրին կերպով յաղթահարելու. դեռ աւելին, չնորհիւ Կառավարչապետների յաջող ընտրութիւններին եւ նրանց բարեացակամ վերաբերմունքին թէ դէպի Լազարեաններն եւ թէ դէպի նրանց գպրոցը, վերջինս շարունակարար ստանում է նոր իրաւունքներ ու արտօնութիւններ. հետեւանքը լինում է այն, որ Ճեմարանի դիրքը ապահովվում է ու նաձեռք է բերում հայ և ուսւ հասարակութիւնների համակրանքն ու վատահութիւնը:

Կոմի Արակչեւը մնում է դլխաւոր կառավարչապետի պաշտօնի մէջ մինչեւ 1827 թ. հոկտեմբեր 12ը. նրան փոխարինում է կոմու Ալեքսանդր Բենկենդորֆը՝ 1828—1844 թթ. ապա յաջորդարար՝ Խշխան Օրլովը, որ վարում է այդ պաշտօնը մինչեւ 1860 թ. նոյն տարում նշանակվում է պետական քարտու-



Լազարեանիների Յուշարձանը
Ճեմարանի պարտէզում



Ճեմարանի բննութիւնների դահլիճը

դար գաղտնի խորհրդական վլատիմիք Բուտկովը, որին 1870 թ. յաջորդում է կրթական մինիստր Կոմի Տոլստոյը մինչեւ 1872 թ. և լինում է վերջին զլիաւոր կառավարչապետը այդ թուին, ինչպէս ասացինք, ձեմարանը նոր ծրագրով ու նոր ներքին կանոնագրով մտնում է ժողովրդական լուսաւորութեան պետական դպրոցների ցանցի մէջ, որով ձեմարանի իրաւական վիճակը վերջնականացնելով որպէս որոշում է ու ամբապնուում:

Ձեմարանը այդպիսով սկսած 1824 թ. աստիճանաբար աւելի ու աւելի է գրաւում թէ կառավարութեան ուշադրութիւնն եւ թէ ուսու եւ հայ հասարակութիւնների հետաքրքրութիւնն ու համակրանքը: Այդ, ի միջի այլոց, երեւում է այն բազմաթիւ այցելութիւններից, որոնց արժանանում է ձեմարանը սկսած կայսրից մինչեւ ականաւոր ուսու եւ եւրոպական դիտնականները, հայ եւ ուսու բարձրաստիճան հոգեւորականները:

Մ. Մոերեանցը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մանրամասն անուանացուցակը այն բարոր անձանց, որոնք այցելութիւն են տուել ձեմարանին: Այդ անուանացուցակից երեւում է, որ 40 տարուայ ընթացքում՝ մինչեւ 1855 թ. ձեմարանը այցելել էն 253 հոգի:

Մի գաղափար տալու համար թէ որքան լայն ու մեծ համբաւ է ունեցել այդ ժամանակաշրջանում ձեմարանը առաջ ենք բերում

այդ անուանացուցակից մի քանի հանրածառոթաներ :

1. Կայսր Նիկոլայ Ա. եւ թագաժառանդ Ալէքսանդր Նիկոլայենիչ, հետապայում կայսր Ալէքսանդր Բ.:
2. Պարսից իշխան Խոսրով Միրզա, Թաթարի շահի թոռը, սլարսից դեսպանի ուղեկցութեամբ:
3. Օսմանեան դեսպան Խալիլ փաշան իր շքախմբով:
4. Անգլիայի դեսպան լորդ Դեւոնշիրը:
5. Ալէքսանդր Հումբուլդ, դերման հոչակաւոր գիտնական եւ ճանապարհորդ իր գիտնական ուղեկիցներով:
6. Կոմս Արակչէլեր:
7. Մոսկուայի մետրոպոլիտ Ֆիլարետը, մի քանի անգամ:
8. Վրաստանի էկզարին ու Վրաց թագաւորի ժառանդ Անտոնը:
9. Կոմս Ալեքսանդր Բեկենդորֆ:
10. Լուսաւորութեան նախարար իշխան Լիվէն:
11. Կոմս Սպերանսկին, որ Նիկոլայ Ա. կայսեր օրով կազմեց Ռուսաստանի Օրէնքների հոչակաւոր ժողովածուն:
12. Մոսկուայի Համալսարանի հոգաբարձու իշխան Օրոլենսկի, ուղեկցութեամբ համալսարանի պրոֆեսորների:
13. Պարսկաստանի ոռւսաց դեսպան և հոչակաւոր գրող Գրիբոեդով:
14. Բանաստեղծ Գնէդիչը:

15. Բանաստեղծ Պուշկինը :
16. Ներգործական խորհրդական Խուզարաշեւ :
17. Պատմագիր Ալբգէյ Գլինկա :
18. Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսէս Ե. Աշտարակեցին :
19. Արտաքին գործոց նախարար Իշխան Գորչակով :
20. Բանաստեղծ Ժուկովսկի :
21. Կոմս Պոտեռմին :
22. Իշխան Բագրատիոն :
23. Օսման փաշա հանդերձ ընկերակիցներով :
24. Վիճակաւոր Առաջնորդ Հայոց Նոր Նախակաւանի և Բեսարաբիայի Մատթէոս Արքեպիսկոպոս, և այն եւայլն :
- Այս այցելութիւնները անհետեւանք չէին
մնում . այցելուները մեկնում էին գո՞ւ ձեմարանում տիրող կարգապահութիւնից , աշակերտների յառաջադիմութիւնից ու կրթական գործի լաւագոյն կազմակերպութիւնից :
Կոմս Բենկենդորֆը , օրինակ , այցելելով
1836թ . ձեմարանը , ներկայացրել էր կայսեր հետեւեալ զեկոյցը :

«Ձեմարանս այս հիմնեալ ի Լազարեանց տոհմէ՝ յարատեւէ ցարդ զամս 21 , առանց իրիք նպաստից ի կողմանէ Տէրութեան , և ամենայն իրաւամբք մարթի համարել մի յօդտակարագոյն եւ յարդիւնարեր շինուածոց եղելոց ի կայսրութեան :

«Արեւելեան ձեմարանս այս իրրու կեն-

դրոնական գլխաւոր շինուած ազգին Հայոց՝
է իրրու պարտէզ իմն, եւ կերպաւորէ յին-
քեան զսերմանս՝ յորոց վաճառականութիւնն
եւ քաղաքականութիւնն քաղէ զպառուզս՝ ըն-
տանութեամբ ընդ ժողովուրդս Ասիոյ:

«Ի ձեմարանի աստ ընդունին զկրթու-
թիւն մանկունք եկեալք ի նորանուած նա-
հանդացն Հայաստանի եւ յայլ զանազան քո-
ղաքաց Հարաւակողմանն Ռուսաստանի. այլ
առաւելագոյն հաւաստիք ընդհանուր հաւա-
տարմութեան՝ զոր ունի ձեմարանս այս ի
Մոսկուա, մարթի համարիլ այն՝ զի յոլովք
յազնուականացն Ռուսաց, եւ ծնողք այլոց
ազգաց տան զորդիս իւրեանց յայս ձեմա-
րան՝ նախամեծար զսոյն քան զայլոն համա-
րելով: Ի մանկանց անտի դաստիարակելոց
ի ձեմարանիս՝ ի սկզբանէ մինչեւ ցայժմ
իրրու չորեք հարիւր անձինի մտեալ են ի
Զինուորական եւ ի Քաղաքական ծառայու-
թիւնս: Ոմանք յայնցանէ նուիրեալ են զին-
քեանս ուսումնական վիճակի, եւ ամենեքին
հանապազորդեն ի ծառայութեան օդուտ
Տէրութեան՝¹⁴:

Այսպէս ձեմարանի համբաւը տարա-
ծուել է ամենուրեք ու զրաւել հայ երեխա-
ներին աշխարհի ամենահեռաւոր վայրերից.
միաժամանակ հաստատուել են մասնաւոր՝
նուիրատուութիւններով թոշակաւորներ:

ձեմարանի վարիչներն էլ խրախուսուած

¹⁴ Ե. Մանկանց, «Յիշատակարան», մաս Գ,
էջ 89. ընդզծումները մերն են:

համակրանքի ու վստահութեան բազում արտայրայտութիւններից ոչ մի ջանք չեն խնայել ոյժ տալու ձեմարանի վերելքին, բարձրացնելով աշակերտութեան կրթական մակարդակը, դրաւելով ժամանակի ամենածեռնհասդաստուններին եւ ապա նիւթական առատաձեռն նուիրատուութիւններով օժտել ձեմարանը կրթական անհրաժեշտ պարագաներով՝ ֆիզիքական կարինետ, մատենադարան եւ աշակերտական յատուկ դրադարան, հանքարանական կարինետ, աշխարհագրական քարտէաներ եւայլին:

Եւ Լազարեանների ոյս ջանքերը, անխոնջ աշխատանքներն ու նուիրումը չեն մնացել առանց գնահատանքի՝ նրանք արժանացել են մեծամեծ պատիւների ու փառքի:

*

Ամէն մի դպրոցի վերելքը, նրա ներքին կեանքի խաղաղ ընթացքը մեծապէս կախում ունի նրա զեկավարի կամ զեկավարների անձնական արժանաւորութիւններից ու բարոյական նկարագրից:

Սա մի ճշմարտութիւն է, որ կեանքի փորձառութիւնը բազմիցս հաստատել է. ամենացայտուն ապացոյցը տուել են մեր աղքային դպրոցները, մասնաւորապէս Ներսիսեան դպրոցն ու Երեւանի թեմական դպրոցը:

Անկարելի է կարդալ այդ դպրոցների պատմութիւնները առանց հոգեկան սարսուռի . . .

Երբ այդ դպրոցների ղեկավար-տեսուչները եղել են Ալամդարեանի, Պետրոս Շահշեանի, Սեղրակ Մանդինեանի նման տաղանդաւոր մանկավարժներ ու կրթական գործին նուիրուած անձնաւորութիւններ, ապա դպրոցները ծաղկել են ու տուել առատ հունձ, եւ ընդհակառակը խոռվացոյզ վիճակ են ապրել, երբ օրինակ, Բժ. Ա. Շահնազարեանի¹⁵ նման մեծամիտ ու դպրոցական գործին անտեղեակ մարդիկ են եղել կանչուած ղեկավարելու կրթական ղժուարին, նուրբ ու պատասխանատու գործը:

Լազարեանները այնպիսի խոր ըմբոնում են ունեցել յիշեալ մտքի ճշմարտութեան, որ սկզբից եւեթ ջանացել են տալ իրենց դպրոցին հմուտ մանկավարժներ՝ տեսուչներ, ուսուցիչներ ու դաստիարակներ. Եւ միաժամանակ պահել նրանց իրենց աշալուրջ հսկողութեան տակ: Շնորհիւ այդ հանգամանքին է, որ ձեւմարանը եղել է մի հարազատ օջախ հեռաւոր անկիւններից եկած հայ որբ ու չքաւոր երեխանների համար:

Բայց իւրացնել մի ճշմարտութիւն, զիտակցել մի անհրաժեշտ կարիք, զեռ չի նշանակում կարողանալ այն իրազործել, կարողանալ բաւարարել զիտակցուած կարիքը.

¹⁵ Բժ. Ա. Շահնազարեանը եղել է Երեւանի թեժական դպրոցի տեսուչ 1898—1899 ուս. տ. լէօն իր Երեւանի թեժ. դպրոցի պատմութեան մէջ մանրամասն նկարագրում է այն խոռվացոյզ վիճակը, որին ենթակայ է եղել դպրոցը այդ «տեսչի» օրով, էջ 383—418:

այդ երկու հանգամանքների միջև եղած տարածութիւնը շատ մեծ է :

Եւ արդարեւ, երբ Յովակիմ աղան ձեմարանի հիմքը զրեց ու դպրոցը բաց արեց իր դոները Հայ Երեխանների համար, նամէկն մէկ կանգնեց հմուտ ուսուցիչներ ճարելու դժուարին խնդրի առջեւ : Զէ՞ որ այդ ժամանակ Հայ իրականութիւնը չէր տալիս որեւէ հնարաւորութիւն այդ խնդրի բարեյաջող լուծման համար : Որաեզի՞ց ճարել իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնած զասատուներ ու զեկավար-տեսուչներ :

Եւ Յովակիմ աղան ուրիշ ելք չգտաւ բացի այն, որ հարկադրուած զգաց, հակառակ իր կրօնական Հայեացքների, դիմել Ս. Ղաղարի Մխիթարեանների՝ դիմել նախ Վենետիկ եւ ապա Վիեննա եւ խնդրել ուղարկել ձեմարանի համար երկու ուսումնական վարդապետներ¹⁶ :

Վենետիկն ու Վիեննան մերժում են Եւ Յովակիմ աղան մատուցում է անելի . . .

Լազարեանները, սակայն, երջանիկ ասողի տակ էին ծնուած : Լուր առնելով, որ Ս. Խջմիածնում զանուամ է մի նախկին կաթոլիկ վարդապետ, Յովակիմ աղան անմիջապէս դիմում է կատարում եւ խընդրում, որ այդ վարդապետին ուղարկեն ձե-

¹⁶ Յովակիմ աղայի կրօնական Հայեացքների ու նրա՝ Հանգէալ կաթոլիկ Մխիթարեանները ունեցած արամազդրութիւնների մասին, մենք արդէն խօսել ենք Յովակիմ աղայի կենսագրականի մէջ :

մարանի համար : Դա՝ Սերովի վարդապետն էր : Շուտով զտնուեց նաև նման մի երկրորդը, դա՝ Միքայէլ վարդապետ Սալյանը ենն էր :

Այս երկու վարդապետները, մանաւանդ վերջինը, շատ խոչոր դեր են կատարել Ճեմարանի կրթական գործի կանոնաւորման ու բարեկարգման մէջ, մասնաւորապէս հայողիտութեան մարզում, և թողել են անջնջելի հետքեր :

* *

Ճեմարանի ուսուցիչներն եւ ուսուցչապետները չեն գոհացել սոսկ իրենց առարկաների գասաւանգութեամբ . զգալով գասագրքերի մեծ պակասը, յօրինել են նաև բարձաթիւ դասազրելեր, ձեռնարկներ, ընթերցարաններ, բառարաններ : Նրանց օրինակին հետեւել են նաև Ճեմարանի նախկին սաները :

Այս կողմից էլ Լազարեան Ճեմարանը կատարել է գնահատելի գործ ընդհանրապէս հայ մատադ սերունդի կրթութեան առարբէզում, քանզի Ճեմարանի ուսուցչութեան պատրաստած դասագրքերը գործ են ածուել նաև նոյն ժամանակուայ բոլոր Հայոց դպրոցներում, որոնք տառապելիս են եղել դասագրքերի բացակայութեան ցաւով :

Ճեմարանի ուսուցչութեան կազմած դասագրքերի մեծ մասը տպագրուել են Ճեմարանի սեպհական տպարանում ու Հրատարակուել Ճեմարանի կողմից :

Մի գաղափար տալու համար, թէ այդ
ասպարէզում՝ որքա՞ն մեծ ու արժէքաւոր
կործ է կառարուած, առաջ ենք բերում այդ
Հրատարակութիւններից ցանկը, օգտուելով
մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից:

1. 1819թ. «Ծաղիկի գիտութեանց», աշ-
խատասիրեալ ի Սերովի վարդապետէ ի
միաբանութենէ Սրբոյն Աթոռոյն էջմիածնի,
ի պէտո դպրոցաց Հայաստանեաց, զարդա-
րեալ 52 պատկերօք: Ի Մոսկով, ի տպա-
րանի Օգոստեայ Սիմոնեանց, 1819թ.:

«Այս դասագիրքը, — ասում է Աչօն, —
այդպիսի վերնագիր էր կրում այն պատճա-
ռով, որ համառոտ տեղեկութիւններ էր տա-
լիս դիտութեան բոլոր ձիւղերից, այն է.
I. Յաղագս այլ եւ այլ կրօնից (բնական կրօն,
Կրօն Հրէից, Կրօն Քրիստոնէից, Հեթանո-
սութիւն, որ է դիցարանութիւն, Մահմե-
դականութիւն, Կռապաշտութիւն): II. Փի-
լիսոփայութիւն (Տրամարանութիւն, Բնարա-
նութիւն, Բնական վիտասանութիւն, Տնկա-
րանութիւն, Կենդանաբանութիւն, Զափա-
րերական Մակացութիւնք, Աստեղաբաշխու-
թիւն): III. Աշխարհագրութիւն: IV. Պատ-
մութիւն¹⁷:

2. 1821թ. — Յարութիւն քահանայ
Ալամդարեան, «Համառոտ բառարան ի Ռու-
սաց լեզուէ ի հայ: Մոսկավա, 1821:

¹⁷ Աչօն, «Եր. թեմ. դպր. ոպատմ.», էջ 220:

3. 1827թ. — «Քերականութիւն գրաստ լեզուի Հայոց նորակարգ նննվ» . ի պէտք աշակերտաց գերահռչակ ձեմարանին կառուցելոյ ի Մոսկով, ի պայտապատճերմ Տեարց Եղիազարեանց : Ի լոյս ընծայեաց Միհայէլ Ծ. Վարդապետ Սալլանքեանց Կոստանդնուպոլսեցի, միարան Սրբոյ Էջմիածնի, նուիրակ աստուածապատիւ Կաթողիկոսի, յաջորդ վիճակաւոր արքեպիսկոպոսի, կարգավար (ոէքթոր) յիշեալ ձեմարանի, դատաքննիչ (ցէնդօր) տպագրելի մատենից, ասպետ եւ դասատու Աստուածարանութեան, Փիլիսոփայութեան եւ Հայկարանութեան : Մոսկվա :

Լէօն վկայում է, որ Սալլանթեանի այս դասագիրքը դարձել էր շատ գործածական մեր ազգային դպրոցներում :

4. 1831թ. — «Գաղափար Հայկական վայելչագրութեան», գծագրեաց Սիմեօն Սուլթանշահեանց, ի լոյս էած Հայկական ձեմարան Տեարց Լազարեանց, որ ի Մոսկով . 1831:

«Կանոնաւոր վայելչագրութիւն — պրում է Լէօն այս առթիւ, — սովորցնելու հոգուերն էլ աչքի առաջ ունեցաւ բարեկարգուած հայ գպրոցը : Դարձեալ Լազարեան ձեմարանն էր, որ առաջին անգամ հրատարակեց գեղագրութեան օրինակներ 1831թ. ¹⁸» :

5. 1827թ. — Յակոբ եւ Գաւիր Ար-

¹⁸ Անդ, էջ 241 :

զանեաններ (Ճեմարանի նախկին սաներ), «Հայոց քաղաքութեան պատմութեան մի փորձ», *Մոսկվա*, 1827թ.:

6. 1831թ. — Նոյն Սալլանքեանը հեղինակել էր կրկին Լազարեան ճեմարանի աշակերտութեան համար մի ստուար հատոր՝ «Կրօնագիտութիւն քրիստոնեական ըստ ուղղափառ դաւանութեան Առաքելական եկեղեցւոյ լուսաւորչակրօն Հայոց»: *Մոսկվա*:

7. 1833թ. — Յովսէփ Զերբէզեան (Ճեմարանի նախկին սան, *Սալլանթեանին աշակերտած*), «Սիզբունիք քրիստոնեական վարդապետութեան» կամ «Համառօտութիւն Արքազան Պատմութեան և Կրօնագիտութեան»: *Մոսկվա*, 1833:

8. 1836թ. — Միքայէլ Ռ. Վ. Սալլանքեան, «Ճարտասանութիւն»: *Մոսկվա*, 1836:

9. 1838թ. — Աղեքսանդր Խուդաբաշեանց, «Բառարան ի հայ լեզուէ ի Ծոււս»: *Լոյս* է ընծայել աղա Յովհաննէս Յովակիմեան Լազարեանը, ծախսելով 72.000 ռուբլի թղթադրամ: Տպարան Լազ. Ճեմարանի: *Մոսկվա*, 1838թ.¹⁹:

10. 1839թ. — Յովհաննէս Եղիազարեան — Սիմեոն Արայեանց Բայազետցի (Ճեմարանի նախկ. աշ.): «Քերականութիւն Հայոց լեզուի»: *Մոսկվա*, 1839:

11. 1842թ. — Յովսէփ Օրբելի (Ճեմ.

¹⁹ «Ակտերի ժողովածուցի մէջ ծախքը ցոյց է արուած աւելի ովակաս զումար՝ 50.000 ռուբ. թղթադրամ»:

նախ. աշ.), «Համառօտութիւն Սրբազն
Պատմութեան»։ Մոսկվա, 1842։

12. 1846 թ. — Մկրտիչ Էմին, «Գրա-
րադարձ Քերականութիւն»։ Մոսկվա, 1846 թ.։

13. 1849 թ. — Մկրտիչ Էմին, «Բնափր
հատուածք, քաղեալք ի գրոց նախնի եւ արդի
մատենագրաց Հայոց, հանդերձ բառագրովք
ի Հայկականէ ի Ռուսաց բարբառ ի պէտո
աշակերտաց Լազարեան ձեմարանի Արեւե-
լիան լեզուաց»։ Մոսկվա, ի տպագրատան
նորին ձեմարանի, 1849։

14. 1851 թ. — Ստեփաննոս Նազա-
րեանց, «Յաղագս փորձական հոգեբանու-
թեան նաև»։ գրաբար, բայց գրական-պատ-
մական ներածութեամբ աշխարհաբարի գրա-
կան զարդացման կարեւորութեան մասին,
որպէս հայերի լուսաւորութեան համապա-
տասխան միջոց ներկայիս։ Մոսկվա, 1851.
Եր. Ժ. + 80։

Այս զիրքը տպագրուած է Լազարեան-
ների ծախսով եւ նուիրուած է վաղամեռիկի
մանուկ Յովհաննէս Խաչատրեան Լազարեանի
յիշատակին։

15. 1853 թ. — Ստեփաննոս Նազարեանց,
«Առաջին հոգեղէն կերակութ հայազգի երե-
խաների համար»։ 1853 թ.։

16. 1853 թ. — Ստեփ. Նազարեանց;
«Վարդապետարան Կրօնի», Հասարակաց
Հայախոսութեամբ, Մոսկվա, 1853 թ.։

17. 1857 թ. — Ստեփ. Նազարեանց, «Բն-
քերցարան»։ Ժողովածութարդմանական եւ

ինքնուրոյն յօդուածների, աշխարհաբարբ:
Մաս Ա., 1857թ. և Մաս Բ., 1858թ.:

18. 1850թ. — Մսեր Մսերեանց,
«Հայոց եկեղեցւոյ հաւատոյ Հանգանակ»,
ընդարձակ, գրաբար, Մոսկով:

19. 1850թ. — Նոյնը, համառօտ, գրա-
բար:

20. 1850թ. — Նոյնը, համառօտ, աշ-
խարհաբարբ:

21. 1859—1862թ. — Նոյնը լրացումնե-
րով ու յաւելումներով 2րդ և 3րդ հրատա-
րակութիւն:

22. 1850թ. — Մսեր Մսերեանց, «Եոր
Ռւխտի Սրբազն Պատմութիւն», Համառօտ,
աշխարհաբարբ. Մոսկով, 2րդ տպագրութիւն
1861թ.:

23. 1861թ. — Մսեր Մսերեանց, «Բն-
դարձակ Հրահանգ Հայոց Եկեղեցւոյ», Աշ-
խարհաբարբ. Մոսկով:

24. — — Մսեր Մսերեանց, «Հրահանգ
նարտասանութեան», ի պէտս աշակերտաց,
Զեռագիր:

Էջոր վկայութեամբ Մ. Մաներեանի կրօնի
դասադրքերը տարածուած էին համարեա ա-
մէն տեղ եւ շատերը բազմաթիւ տպագրու-
թիւններ ունեցան:

25. Գաբրիէլ Երիցփուխով (Ճեմ. նախկ.
սահ.), Ռուս-Հայկական բառարան. Թիֆլիս:

26. 1859թ. — Զարմայր Մսերեանց,
«Հայերէն պատկերազարդ Այբբենարան»,
Մոսկով:

27. 1863 թ. — Զարմայր Մսերեանց,
«Հայ եւ Ռուս Այբբենարան» . Մոսկով:

28. 1856 թ. — Ուլիան Յովհաննիսեան
(Ճեմ. նախկ. սան), «Պատմութիւն Հայա-
տանի, Սմբատի» . Մոսկով, 1856 :

29. 1858 թ. — Ուլիան Յովհաննիսեան,
«Պատմութիւն Հայատանի, Կիրակոսի» .
Մոսկով, 1858 թ.:

30. 1855, 1856, 1858 և 1859 թ. — Ու-
լիան Յովհաննիսեան, «Հայատանի նոր
բնար», Երգերի և բանաստեղծութիւնների
ժողովածու:

31. — — Ուլիան Յովհաննիսեան, Պարո-
կերէն լեզուի դասագիրք:

32. 1872 թ. — Միքայէլ Միանարեան
(Ճեմ. նախկ. սան), «Կանոնաւոր և վայե-
լուչ զրութեան պատմութիւնն ու տեսու-
թիւնը. ծրագրական փորձառութիւն հան-
դերձ զանազան ծանօթութիւններով, յաւե-
րածներով և զրասեղանների ու անատօմի-
կական ստուերագրերով: Պետերբուրգ:

33. 1873 թ. — Միքայէլ Միանարեանց,
«Հայկական կանոնաւոր և վայելուչ զրու-
թիւն: Լայպցիկ:

34. — — Հրատարակութիւն Միքայէլ
Միանարեանցի, «Ազգային կրթութիւն»,
Հրատարակական ընթերցանութիւնքիզուարդ
Լարուլէի. թարգ. Մ. Տէր Գրիգորեանի:

35. 1868 թ. — Հրատարակութիւն Մ.
Միանարեանցի, «Խնամատարութիւն Երե-
խայոց մարմնական և բարոյական», շաբա-

գրութիւն կոմքի, անդյիացոց թագուհու բժիշկի և էղինքուրդի արքունի բժշկական համալսարանի անդամի։ Պետերբուրգ։

Մ. Միանսարեանցի այս հրատարակութիւնների առթիւ լէօն գրում է.

«Դասագրքերի հրատարակութեան ուղղութեամբ մեծ գործ է կատարել Մ. Միանսարեանցը, որ հայ դպրոցական գործին անմիջապէս մասնակից չի եղել, բայց այդ գործին սիրահար էր։ Նա մի զինուորական էր, որ 1860 թուականներին և 1870 թուականների սկզբներում մի շարք զնահատելի հրատարակութիւններ արաւ, որոնք նուիրուած են դպրոցական և մանկավարժական հարցերին։ Այդ համեստ մշակն էր, որ առաջին անգամ մտցրեց մեր դպրոցները զծած տետրակեների գործածութիւնը, որ այժմ տարածուած է ամէն տեղ։ Նախ և առաջ նա հրատարակեց մի ամրող հատոր գրութեան արուեստին և նրա ուսուցման գործին նուիրուած։ Ապա Լայպցիգում տպագրել տուեց իր հեղինակած օրինակները և առանձնապէս զծած տետրակեներ՝ աշակերտների գործածութեան համար»²⁰։

Բայց ձեմարանը չէր բաւարարւում միայն դասագրքեր կազմելով ու հրատարակելով։ Հեղինակները աշխատում էին նաև մտցնել նոր, աւելի դիւրին մեքողներ, մանաւանդ գրագիտութեան գործում։

²⁰ Տե՛ս Լէօ, «Պատմ. Երեւանի թեմ. դպր.», էջ 242։

«Հայ դպրոցներում, — ասում է Լէօն, — ծեծն էր որ տանում էր աշակերտին դպրոց և հարկագրում էր նրան սովորել։ Տանջանքներով իւրացնելով գրավարժութիւն, աշակերտը անցնում էր տւելի անհարկաւոր, տւելի բթացնող վարժութիւնների վանկերով, զիր կապելով, կարդալ ամբողջ մի կանոն Սաղմոս, ապա ժամապրքի աղօթքների մէջ զեգերել։

«...Գրագիտութիւն ուսուցանելու սիստեմն էլ մեր աւանդական՝ Այրենարան, ից կամ Քերական, ից հեռացած չէր. գոնէ դեռ 1842 թ. Լազարեան Ճեմարանի տպարանից հրատարակուած է Սաղմոսի առաջին կանոնը, վանկերի բաժանուած, երեխաններին սովորցնելու համար²¹։»

ԶԵՆՔ յիշատակում այն բազմաթիւ մեծարժէք գիտական ուսումնասիրական աշխատանքները, գրական—գեղարուեստական երկասիրութիւնները, որոնց հեղինակներն են եղել Ճեմարանի նախկին սաները. նրա ուսուցիչներն եւ ուսուցչապետները՝ հայերէն, ոռուսէրէն, վրացէրէն, պարսկէրէն, թուրքէն եւ եւրոպական լեզուներով, նախ, որովհետեւ այդ աշխատանքների մանրամասն ցանկը բերուած է Լազ. Ճեմարանի 50ամեակին եւ ապա մանաւանդ Լազ. Ճեմարանի Լիկոնի 30ամեակին նուիրուած հրատարակութիւնների մէջ. բացի այդ, մէր ներկայ աշ-

²¹ Անդ, էջ 230—232։



Գեղորգ Պ. Բանիանիսան

խաստանքների շրջանակներից դուրս գործ է , միաժամանակ «Հանդէս Ամառեայ»ի սուզէջերը չեն թոյլատում այդ :

Մենք սահմանափակուեցինք դասագրքերի հրատարակութեան խնդրով եւ այն էլ ձեմարանի առաջին 50ամեակում լոյս տեսած , քանդի այդ ժամանակաշրջանումն էր , որ դասագրքերի խնդիրը հրատապ բնոյթ էր կրում և նրանց պակասը չափաղանց աննպաստ տեղադարձումներ էր ունենում ընդհանրապէս հայ դպրոցական գործի վրայ : Շեշտենք մի անդամ էլ , որ Լազարեան ձեմարանը ժամանակի հայ դպրոցների համար կենսական նշանակութիւն ունեցող աշդ գործի մէջ բերել է իր քանիկագին օժանդակութիւնը , կատարելով գերազանցօրէն մշակութային անգնահատելի աշխատանիք :

* *

Լազարեանները , որպէս ձեմարանի կրթական գործի ղեկավարներ , մի զարմանալի հոտառութիւն ունէին զգալու նրա առօրեայ կեանքի կարիքների պահանջը եւ ապա շտապել անմիջապէս բաւարարել այն , որպէս զի ձեմարանը չտուժի որեւէ պակասից :

20ական թուականներին նրանք զգացին , որ ձեմարանը անհրաժեշտ կարիք ունի սեպհական տպարանի եւ որ այդ տպարանը կարող է նաեւ իրոշոր գործ կատարել ազգային մտքի լուսաւորութեան համար :

Եւ ահա՝ նրանք՝ հոգարաբծու Յովհաննէս աղան եւ նրա եղրայր Խաչատուր աղան ,

որ այդ ժամանակ վերատեսչի պաշտօնն էր վարում, միաժամաբար հիմնում են սևոհական տպարան Ճեմարանին կից և այդ նպատակով յատկացնում են իրենց սևոհական միջոցներից 30.000 ռուրլի թղթադրամ :

Հիմնելով տպարանը, նրանք ջանք չեն խնայում զնելու այն այնպիսի մի բարգաւաճ վիճակում, որպէս զի նա ընդունակ լինի արժանաւոր կերպով կատարել իր ընդհանուր մշակութային դերը և ապա կարողանայ Ճեմարանի բոլոր պէտքերը լրացնել :

Նոր նուիրատուութիւններով, որոնց ընդհանուր գումարը կազմում է 70.662 ռուրլի թղթադրամ, նրանք ձեռք են բերում և օժտում ապարանը զրեթէ բոլոր լեզուներով տառեր՝ Հայերէն, ռուսերէն, լատիներէն, յունարէն, Փրանսերէն, գերմաներէն, իտալերէն, անգլիերէն, հունգարերէն, վրացերէն, տաճկերէն, պարսկերէն և անգամ սերբերէն :

Այդ օրերին Մոսկուան չունէր նման մի հարուստ և բոլոր յարմարութիւններով օժտուած տպարան :

Լազարեանները պահել են իրենց ձեռքում տպարանը մինչեւ 1858թ. այսինքն՝ 29 տարի, այնուհետեւ կազմակով տուել են Պրոֆ. Մ. Կմինին :

1863թ. տպարանի կառավարութիւնը Լազարեանները յանձնել են Մամոնտովին և բերել է Ճեմարանին տարեկան 1610 ռուրլի էկամուս :

«Ճեմարանի դործունէութիւնը, — առում է Պրոֆ. Զինովեւը, — յօդուտ Հայոց ազգի մտաւոր յառաջազիմութեան չի սահմանափակում սոսկ Ճեմարանի չորս պատերով։ Ունենալով սեփական տպարան, Ճեմարանը իր ծախօսով հրատարակել է զանազան հանրօգուտ դրքեր և դասագրքեր հայերէն լեզուով։ Ժամանակ առ ժամանակ նա ուղարկել է այդ դրքերը միանգամայն ձրի (ընդգծ. մերն է) Հայոց գպրոցներին։ Վերջին ութ տարուայ ընթացքում (1855—1863 թթ.) այդ ճեւով ուղարկուած են գպրոցներին եւ զանազան անձանց շուրջ 2242 օրինակ դրքեր եւ 295 հատ դիմանկարներ, բնութեան տեսարանների նկարներ, փորագրութիւններ եւ այլն։ Բացի այդ, նուիրաբերուած է Մոսկուացի Հասարակաց թանգարանին եւ մասնագարանին՝ 80 օրինակ դիրք, 18 դիմանկարներ եւ 4 հատ վիմատիոգ բնութեան տեսարանները ²²։

Որեւէ հնարաւորութիւն չկայ թուելու այն բազմաթիւ հրատարակութիւնները, որոնք լոյս են ընծայուած Լազարեանների տպարանից նրա գոյութեան ընթացքին։ Այդ տպարանում են տպագրուել Ճեմարանի աշակերտների, ուսուցիչների եւ ուսուցչապետների դրական—գեղարուեստական եր-

²² Տե՛ս Պրոֆ. Ալէքսէյ Զինովեւ, «Պատմական ուրուագիծ Լազ. Ճեմարանի, Լազարեանների համառակնագրականներով», 1863 թ. Մոսկուա, Տպարան Լազ. Ճեմ.։

կերը, բանասիրական, լեզուագիտական եւ ամէն կարդի գիտական բազմաթիւ ուսումնա-սիրութիւններ :

Յիշատակենք միայն մի քանի մեծարժէք հրատարակութիւնների անունները, որոնցից մի քանիսը միայն ճեմարանի տպարանում կարող էին տպագրուել, որպէս ժամանակի ամենաբարդաւաճ եւ միակ տպարանը, որ ունէր բոլոր արեւելեան լեզուներով տառեր .

1. 1836թ. «Պօլօժէնիէ»ն Հայերէն լեզուով, թարգմանութեամբ Միքայէլ արքեպ. Սալլանթեանի :

2. Ալ. Խուդարաշեանի «Բառարան ի Հայ լեզուէ ի Ռուս», 1838թ.:

3. «Հայ ժողովուրդի պատմութեան տեսութեան վերաբերող ակտերի ժողովածուն» (1833—1838թթ. ռուսերէն լեզուով) :

4. «Լազարեան ճեմարանին վերաբերող բարձրագոյն հրովարտակների ու հրամանադրերի ժողովածու» (1839թ. ռուսերէն) :

5. «Ճառեր եւ Հաշուեատութիւն, արտասանուած Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց 50ամեակի առթիւ տեղի ունեցած Հանդիսաւոր Հաւաքոյթին» : Մոսկուա 1865 (ռուսերէն) :

6. «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» . Շարադրեալ ի Մսերայ Մազիստրոսէ եւ առպետէ Գրիգորեան Մսերեանց : Մոսկուա, 1856թ. (Հայերէն) :

Եթէ ճիշտ է, որ առհասարակ ամէն մի գործի մէջ հանրային կեանքի բոլոր ասպարէզներում բացակայում է նալաստաւոր մթնուրատ, չկայ դաղափարական ոգի ու խանդավառութիւն, ապա այդ գործը չի կարող տալ բեղմնաւոր արդիւնքներ, ապա այդ բացարձակ ճշմարտութիւն է կրթական գործի մէջ:

Յայտնի է, որ այն դպրոցները, ուր իշխել է բիւրոկրատական ոգին, ուր չոր ու ցամաք ձեւականութիւնների պահապանութիւնն է եղել զեկափարող սկզբունքը, այդ դպրոցները չեն տուել շօշափելի արդիւնքներ:

Լազարեան Ճեմարանը, բարերախտարար, նման դպրոցների շարքից դուրս է մնացել:

Ճեմարանի կառուցողը, նրա երկրորդ հիմնադիր Յովակիմ աղան առաջին իսկ օրուանից ստեղծել է իր դպրոցում այն աղդասիրական-հայրենասիրական մթնոլորտը, ներշնչել այն սէրը դէպի ազգն ու նրա մշակոյթը՝ լեզուն, պատմութիւնը, գրականութիւնն ու կրօնը, որն այնուհետեւ աւանդարար պահպանել են նրա որդիները և ապա կտակել Ճեմարանի ուսուցչական ու վարչական կազմերին, հայ թէ ուռա:

Լազարեանները նոյն իսկ իրենց պաշտօնական գբութիւնների մէջ, ուղղուած կառավարական բարձր շրջաններին, երրեք առիթ չեն փախցրել իրենց ձեռքից ասելու ու շեշտելու, որ Ճեմարանը Հայոց դպրոց է իր միանդամայն առանձնայատուկ պայմաններով:

Եւ կառավարութիւնը խրացրել է այդ տեսակէտը և ըստ այնմ էլ վերաբերուել:

Ճեմարանի ազգային բնոյթի պահպանման մեծապէս նպաստել է նաև այն, որ նրա բեկտորները, վերատեսուչներն կամ տեսուչները մեծ մասամբ եղել են անուանի և ազգեցիկ հայ մարդիկ, իսկ Հայոց լեզուի ու կրօնի դասասուները նոյնպէս ազգային ոգով ներշնչուածներ եւ կարողացել են պատուատել այն նաև աշակերտութեան²³:

Այդպիսիք են եղել, օրինակ, Աերովրէ վարդապետը, Սալլանթեանը, Մկրտիչ էմինը, Գէորգ Քանանեանը, Մուր Մուրեանը, Մմրատ Շահազիզը, Մանուկ Մադթեանը, Մտեփաննոս Նազարեանը, Միքայէլ Նալբանդեանը, Յարութիւն քահ. Պոպովիշեանը, Կարապետ Կուսիկեանը և մի շարք ուրիշները:

Թէ որքան կենդանի ու անխախտ է պահպանուել ճեմարանում ազգային ոգին և մարդասիրական վերաբերմունքը դէպի հայ երեխաները, ցոյց են տալիս հետեւեալ դէպքերը:

80ական թուականների վերջերքին, Գէորգ Քանանեանի վերատեսութեան օրով և մերաշակերտութեան ժամանակ, ճեմարանից

²³ Ճեմարանի Կանոնազրի մէջ՝ Հիմնադիրների ցանկութեամբ, պայման է գրուած, որ նրա տեսօբէններից մէկը՝ վերատեսուչը կամ տեսուչը պիտի լինի ծագումով հայ: Այս պայմանը պահպանուած ու զործագրուած է ճեմարանի ամբողջ դոյցութեան ընթացքում:

շատ սակաւ, բացառիկ դէպքերում էին գիշերօթիկ հայ երեխաներից վտարում Ճեմարանից, իրենց չարութիւնների կամ անյառաջաղիմութեան համար, թէեւ յաճախ էին լինում ուռու ուսուցիչների ու դաստիարակների կողմից նման առաջարկներ :

Այդպիսի դէպքերում, ինչպէս ևս անձամբ լսել եմ հայ եւ ոռու ուսուցիչներից, Քանանեանը միշտ բողոքել է եւ արգելք եղել, առելով՝

«Ճեմարանի հիմնադիրները՝ Լազարեանները՝ — յաճախ ասելիս է եղել Գէորգ Քանանեանը, — այս Ճեմարանը բաց անելիս, նպատակ են ունեցել բերել ամենահեռաւոր դիւդերից հայ երեխաներ, կրթել նրանց, դաստիարակել եւ ապա վերադարձնել իրենց հայրենիքը, որպէս պիտանի մարդիկ. նրանք ոլէտք է տարածեն լոյս ու գիտութիւն իրենց յիտամնաց գիւղերում։ Հիմնադիրների այդ վուճ նպատակից անթոյլատրելի շեղում ու նրանց կտակին հակառակ գործ պիտի լինէր, եթէ մենք ոկտէինք դիւրին կերպով Ճեմարանից գուրս նետել երեխաներին իրենց ուսումը չտարտած ու պատշաճ դաստիարակութիւն չստացած։ Դուք ի՞նչ էք սպասում այդ հեռաւոր անկիւններից, տղէտ միջավայրերից եկած գիւղացի երեխաներից։ Մենք ջանք չպիտի խնայենք նրանց ուղիղ ճամբիր վրայ դնելու համար եւ ո՛չ թէ մեր աշխատանքը գիւրացնելու նպատակով յետ ուղարկենք

Երեխաններին այնտեղ, որտեղից որ նրանք եկել են» :

Մի ուրիշ ուշագրաւ դէպքի մասին հազորդում է Երուանդ Շահազիղը, Միքայէլ Նալբանդեանի կենսագրութեան մէջ :

«Ճեմարանի աշակերտներից մէկը պատմում է հետեւեալը իր եւ իր դասընկերների տպաւորութիւնների մասին, ստացած Միքայէլ Նալբանդեանից :

«Ես Երրորդ դասարանի աշակերտ էի, Երբ ճեմարանի առաջին երեք դասարանի Հայոց լեզուի ուսուցիչ Յովհաննիսեանը (Ոսկան Տէր-Գրիգորեանը) թողեց իր պաշտօնը եւ լուր տարածուեցաւ, որ Խաչատուր աղայի առանձին հաճութեամբ այդ պաշտօնին նշանակուել է Նախիջեւանցի Միքայէլ Նալբանդեանցը : Մւնք օր է ց'օր սպասում էինք նորան, որովհետեւ նոր ուսուցիչը գեռ Պետերբուրգումն էր : Մէկ օր էլ յանկարծ էմինի հետ դասարան մտաւ մի բարակ-բարակ, միջին հասակով երիտասարդ : Տեսուչը նորան ծանօթացը մեղ հետ, յայտնելով, որ այսուհետեւ նա պէտք է մեղ Հայոց լեզուի դաս տայ : Մեր առաջ կանգնած էր Միքայէլ Նալբանդեանցը : Ճշմարիտը խոստովանած նրա չոր կազմուածքը, դէմքի խոժոռ զծադրութիւնը, սամիրած ընչացքով ու մօրուքով երեսը եւ կարճ Փրակը առաջին նուագ շատ էլ ախորժելի տպաւորութիւն չարին մէր վրայ : Բայց այդ անախորժութիւնը շարունակուեցաւ մինչեւ տեսչի նորան մեղ ծա-

նօթացնելու պաշտօնական ծխակառարութեան վերջանալը, որովհետեւ երբ որ տեսուչը զնաց եւ նա ամբիոն բարձրանալով, սկսաւ իր առաջին դասը, նա կերպարանափոխուեցաւ. նրա առանց այն էլ փայլուն աչքերը կրակով լցուեցան եւ երեսը մի այնպիսի գեղեցիկ ու զրաւիչ արտայայտութիւն ստացաւ, որ խոկոյն յափշտակեց մեր սիրուեւ ընդ միշտ կապեց մեզ իւր հետ: Նա խօսում էր ազատ այն ժամանակուայ մաքուր աշխարհաբարով, չէր կմկում, չէր կակազում. նա բառերը հնչում էր մաքուր առոգանութեամբ եւ, որ գլխաւորն է, նախագառութիւնները շատ ճարտարութեամբ կոկում էր եւ միտքը յայտնելու համար բառեր ու ոճեր չէր որոնում:

— «Տղա՛յֆ, քողնենի զրաբարը. այսուհետեւ մենիք աշխարհաբար պէտք է սովորենի»: — այս խօսքով նա սկսաւ իւր գտախօսութիւնը: Եւ մենք սկսանք աշխարհաբար սովորել»:

«Մէկ անգամ ես, — շարունակում է իր խօսքը նոյն աշակերտը — որ արդէն զրաբարի ճաշակը մասամբ առել էի, հարցրի.

«Վարժապե՞տ, ապա մենք ե՞րբ պէտք է քերականութիւն, զրաբար ոճեր սովորինք»:

— «Ոներ սովորելը մի ապարդիւն աշխատանիք է, իսկ քերականութիւնը միայն միջոց է եւ ո՛չ նպատակ», — պատասխանեց նա եւ սկսաւ այդ նիւթի վրայ երկար խօսել:

— «Մենի պէտք է Հայերէն մտածել սովորենի, — ահա՛ մեր ուսմունի գլխաւոր նպատակը», — ասում էր նա ²⁴:

Եւ այս ամէնը միայն միտարուայ ուսուցչական գործունէութեան ընթացքում . . .

Եր. Շահազիզը իր նոյն երկի մէջ, կանգ առնելով այն գործօնների վրայ, որոնք 50ական թուականներին վառ էին պահում աղպային ողին թէ ձեմարանում և թէ Մուկուսայի հայ Հասարակական կեանքի մէջ, զրում է.

«Թիֆլիսը՝ չնորհիւ Ներսիսեան դպրոցի և նրա ուսումնաւարտների, չնորհիւ մայրաքաղաքից վերադարձած կրթուած երիտասարդների գեռ նոր էր միայն սկսել Հայկական կեանքի մտաւոր ասպարէզում նշանակութիւն ունենալ: Մոսկովումն էր Լազարեան ձեմարանը, Մոսկովումն էր ուսանողական շրջանը, Մոսկովումն էին ազրում Մակը, իմինը, Նազարեանցը, որոնք այդ ժամանակուայ Հայոց մտաւոր կեանքի փայլուն ասուղերն էին Համարուում: Նազարեանցը առաջ իրեւ ձեմարանի ուսուցիչ, յետոյ իրեւ Համալսարանի ազատ ունկնդիր, ծանօթացաւ ձեմարանի կեանքին, մտաւ հայ Հասարակութեան մէջ և բնականապէս մօտեցաւ թէ գործիչներին և թէ ուսանողութեան: Լազարեան ձեմարանը, որտեղ ժողովուած էին

²⁴ Տես Եր. Շահազիզ, «Միքայէլ Նալբանդէանի կենապրութիւնը», էջ 46—47, 48. ընդգծումները ժերն են:

Հայոց աշխարհի ամէն կողմից երեխաններ, որտեղ անմահ հիմնադիրների անհուն հոգացողութեամբ իսնամւում էր հայկական կեանքը և պահպանում հայկական ոգին^{25»}:

Լազարեան ձեմարանում տիրող ազգային ոգու զարգացմանն ու պահպանմանը ո՛չ պակաս չափով նոպաստել են հենց իրենք ձեմարանի սաները, մասնաւրապէս Լազարեանների որդեզիրները՝ թուով 30—44 հոգի»:

Հաւաքուած Հայոց աշխարհի խուլ անկիւններից, նրանք բերել էին իրենց հետ հանապետական ընտանիքների սովորութիւնները, ազգային աւանդութիւնները հայրենիքի կարօտը, որոնցով եւ վարակում էին միւս աշակերտներին:

Ձեմարանի հայկական մթնոլորտը բարեար ազգեցութիւն էր ունեցել աշակերտների վրայ, թէ ձեմարանում եղած նրանց ժամանակ եւ թէ իրենց հետապայ հասուն կեանքի ընթացքում:

Եւ այդ արտայայտուել է ամենից առաջ նրանց գրական ստեղծագործութեան մէջ:

Արդէն 1829 թ. Մ. Ապլանթեանի նախաձեռնութեամբ ձեմարանի աշակերտները հրատարակում են իրենց գրական փորձերը մի յատուեկ ժողովածուի մէջ՝ «Մուզայք Արարատեան» խորագրով:

Այնուհետեւ դալիս են աշակերտների բազմաթիւ ներբողական ձօները, նուիրուած

²⁵ Աճդ, էջ 51:

Լաղարեաններին դանագան ուրախ թէ տիսուր
առիթներով՝²⁶:

Ապագայ ականառոր բանաստեղծ եւ ձեմարանի Հայոց լեզուի դասատու Սմբատ Շահազիզը, զեռ 6րդ դասարանի աշակերտ
գրում է իր «Ազատ ժամեր» խորագրով բանաստեղծութիւնները, որոնք յետոյ՝ 1860 թ.
րոյս են տեսնում առանձին զրքոյկով:

Աւանդական սովորութիւն էր, որ աշակերտութիւնը հրատարակում էր իր ձեռագիրի հանդեսները՝ շարաթաթերթեր, ամսաթերթեր. մի սովորութիւն, որ շարունակուել է ձեմարանի գոյութեան ամբողջ ընթացքում:

Իսկ թէ ձեմարանի ուսումնաւարտները
ինչպիսի՝ առատ հունձք են տուել Հայ աղային մշակոյթին, այդ, ի հարկէ, հնարաւոր չէ՝ մէկ ու մէկ յիշատակել:

Մի աղօտ դաղափար կարող է տալ ձեմարանաւարտների անուանացանկը, որ կցուած է այս աշխատանքին:

*

Աւարտելով մեր ընդհանուր տեսութիւնը,
եզրափակում ենք այն հեղինակների վկայութիւններով, ուր ընդհանուր ամփոփ Հայեացք է ձգուած ձեմարանի հիմնադրման շարժանիթների, հետապնդած նպատակների ու կտարած դերի վրայ մեր ազգային մշակոյթի զարգացման զործում:

²⁶ Մ. Մսկրեանը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մի շարք նման զրութիւններ: Տես Գ. մաս, զւ. հրառու:

Այստեղ մենք նախապատռութիւնը տարիս ենք, նախ, ձեմարանի վերատեսուչ Գէորգ Քանանիանի եւ ապա առաջ բերում մի նորագոյն վկայութիւն, որ պատկանում է ԽՀ Հայաստանի գրող Գ. Ստեփանիանին :

«Բայ իր ժամանակի եւ ըստ իր ծագման — առում է Գ. Քանանիանը, — ինչպէս եւ ըստ իր հետազայ ճակատագրի, ըստ իր գաղափարի եւ նպատակների, որոնք գրուած էին ձեմարանի հիմնադիրների կողմից, մեր դպրոցը հանդիսանում է մի անօրինակ երեւյթ Կայսրութեան կրթական հաստատութիւնների շարքում։ Եւ արդարեւ, հնարաւո՞ր է արդեօք մատնանշել մի այլ դպրոց, որն $\frac{3}{4}$ դար առաջ կեսնք ստանար չնորհիւ մի տոհմի առատաձեռնութեան եւ ապա ինքն իր մէջ սնուելով, հայթայթէր այնքան կարողաւթիւններ, որ հասնէր այն չափերի ու կայունութեան, որը նա ունի այսօր²⁷։ Կարելի՞՞ է, արդեօք, բերել մի ուրիշ դպրոցի օրինակ, որը պարփակէր իր մէջ այնքա՞ն իրարից տարրեր նպատակներ եւ ապա հետեւելով կայսրութեան մէջ զարգացող կրթական բոլոր սիստեմներին, անչեզ ու անխախտ կերպով իրագործէր այդ նպատակները երեք քառորդ դար եւ այդպիսով յաւերժացնէր հիմնադիրների թողած աւանդներն ու կամքը։ Կարելի՞՞ է, արդեօք, զտնել մի տեղ, ուր

²⁷ Այս ճառած առուած է ձեմարանի 75ամեակի հանդիսաւոր հաւաքոյթին 1890 թ., Տէ՛ս «Լազ. ձեմ. 75ամեակը» հրատարակութեան էջ 1—3։

միեւնպյն տոհմից դործիչների մի երկար շարք, որոնք յաջորդարար մէկը միւսի յետեւից, որբութեամբ պահելով հայրերի տւանդը, նուիրէին իրենց հարազատ հիմնարկութեան ո՛չ միայն իրենց գրամական միջոցների յաւելեալը, այլ եւ իրենց հողին, և անդն ու անձնական աշխատանքը: Վերջապէս, կարելի՞ է մատնանշել մի այլ դպրոցում մի այնպիսի երեւոյթ, որ հաւաքելով իր հովանու տակ ամենասարրական զիտելիքներից ու գաստիարակութիւնից զուրկ երեխաներ, եւ դպրոցը հասնէր այնպիսի՛ մեծ արդիւնքների, որպէս զի բնութեան ծոցում սնուած այդ երեխաները, իրենց հետագայ զարգացման ընթացքում, կարողանացին մրցել իրենց ընկերների հետ, որոնք չընապատուած են ծնողական հոգատարութեամբ եւ իրենց մտաւոր զարգացման համար ունին բոլոր նպաստաւոր պայմանները:

«Ստեղծելով իրենց դպրոցը, — որին հաղիւ 12 տարի անց իր հիմնադրութեան օրից վիճակուած էր վերածուելու Արեւելեան լեզուների ձեմարանի, — մեծահոգի հիմնադիրները ոգեւորուում էին մզումներով, — թէեւ ճիշտ է ո՛չ իրար նման մզումներով, — բայց հաւասարապէս վեհ ու աղնիւ:

«Երանց զեկավարող հիմնական սկզբունքը մինում է, ի հարկէ, նոյնը՝ դպրոցը լինի լուսուորութեան մղիչ ոյժ իրենց հայրենակիցների համար, որոնց կարիքները շատ լաւ

ծանօթ էին նրանց եւ իրենց որտին շատ մօտ
էին ընդունում :

«Դէպի այս մարդասիրական գերը Լա-
դարեաններին մզում էին՝ նրանց հասարա-
կական բարձր գիրքը, նիւթական լայն մի-
ջոցները եւ, վերջապէս, նրանց կենդանի,
գեռ եւս չթուլացած կապը կրօնով, լեզուով
ու ծագումով իրենց մօտիկ ազգարնակու-
թեան հետ, նրա կարկառուն ներկայացուցիչ-
ների հետ, հոգեւոր թէ աշխարհիկ, կովկա-
սում, Անդրկովկասում եւ ամբողջ ասիական
Արևելքում :

«Բնդհանուր կրթութիւն տալով իրենց
հայրենակիցների երախաններին, միաժամա-
նակ տալ նրանց իրենց մայրենի լեզուի ու
կրօնի հիմնաւոր գիտելիքներ՝ եղել են նրանց
ջերմ ու աւանդական ցանկութիւնը :

«Բայց Լազարեան տոհմը, խորապէս
նուիրուած մէծ Ռուսաստանին, որ զարձել
էր նրա համար մի նոր հայրենիք, ցանկացաւ
օդտառէտ լինել նաեւ նրան, այսպէս տած՝
հարազատ դարձնել նրան՝ իրենց ստեղծուե-
լիք կրթական հաստատութիւնը։ Եւ մենք
տեսնում ենք, որ նրա գոյութեան առաջին
խոկ տարիներից սկսած, ձեմարանի գոները
սիրալիօրէն բաց են բոլոր երեխաների հա-
մար, առանց կրօնի ու ցեղային խարութեան։

«Բայց կար եւ մի այլ միտք, որ զի-
տակցւում էր պարզ ու յատակ կերպով եւ
որը դրուած էր ստեղծուող զպրոցի հիմքում։

«Ասիական Արեւելքը, որի հետ Լազարեան տոհմը կապուած էր անջնջելի յիշողութիւններով, մօտենում էր աստիճանաբար կայսրութեան։ Բացւում էր նոր ընդարձակ դաշտ ուստական ազգեցութեան համար։ Զէնքի յաղթանակները պէտք էր ամբազնդել քաղաքակրթութեան ազգեցութեամբ։ Հերթական խնդիր էր դարձել նոր ասիական երկիրների ուսումնասիրութիւնը, խաղաղ շփման միջոցներ հաստատել ասիական ցեղերի ու ժողովուրդների հետ։ Գրաւիչ էր թւում ունենալու կայսրութեան սրտում մի այնպիսի կրթական կենտրոն, որը միաժամանակ բաւարարէր թէ կայսրութեան կարիքներին և թէ տոհմային աւանդներին։ Արեւելքան լեզուների ուսումնասիրութիւնը կազմեց նոր դպրոցի հիմքը։

«Այսպիսով Լազարեանների դպրոցը պէտք էր համապատասխաննէր միաժամանակ երեք հիմնական նպատակների՝

ա. լինել հայ երախանների համար կրթութեան լուսատու ճրագ,

թ. լինել Ռուսաստանի համար արեւելքան լեզուների ուսումնասիրութեան կենտրոն,

և գ. լինել ընդհանուր կրթութեան դպրոց ամէնքի համար^{28»}։

*

²⁸Տե՛ս «Լազ. Շեմ. Դամեկակը», Գ. Քանանեանի ձառը, էջ 1—3։



Պրոֆ. Միքայ Զավֆար

«Մոսկուան, — գրում է Գ. Ստեփանեանը, — Հանդիսացել է Հայկական մշակոյթի խոչորագոյն օջախներից մէկը:

«Եթէ 16—17րդ դարերում Մոսկուան գերազանցապէս հանդիսանում էր անտեսական, առեւտրական մի կենտրոն Հայ վաճառականութեան համար²⁹, ապա Հայ առեւտրական բուրժուազիայի զարթօնքի տարիներին, ամբողջ 19րդ դարի ընթացքում հանդիսանում էր նաև մի մտաւոր լուսաւորական կենտրոն Հայութեան համար»: Այսուհետեւ Հեղինակը անցնելով Լազ. Ճեմարանին, գրում է.

«Լազարեան Ճեմարանը իր 100ամեաց դոյցութեան ընթացքում կատարել է մեծ աշխատանք Հայկական դրական պարփակութեան զարգացման, Հայ երիտասարդութեան ոռուական առաջաւոր կուլտուրացին Հաղորդակից դարձնելու ուղղութեամբ:

«Լազարեան Ճեմարանի միջոցով է, որ Հայ ժողովրդի առաջաւոր ներկայացուցիչները հնարաւորութիւն ստացան Մոսկուայում բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելով դրական-բանասիրական մանկավարժական, դաստիարակչական լայն գործունէութիւն ծառալիլ Հայարնակ քաղաքներում: Լազարեան Ճեմարանում դասախոսէում էին այնպիսի աչքի ընկնող դէմքեր, ինչպիսիք էին Գ. Խալա-

²⁹ Հեղինակը Հաղորդում է, որ «1779թուին Մոսկուայում կար 42 Հայ ընտանիք: 1810թ. այդ թիւը բարձրացաւ 60ի, իսկ Հետազայում առելի եւս մեծացաւ»:

թեանը, Մ. Էմինը, Ա. Շահաղիզը, Ստ. Նագարեանը եւ ուրիշները։ Այստեղ էր դասախոսում նաեւ մեծ յեղափոխական դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանը։

«Բարձր դաստիարակութիւն ստացած այս մարդկանց չնորհիւ է, որ աճեց բանասէրների եւ մանկավարժների մի մեծ թիւ։ Ճեմարանի սաներից էին մեր բանաստեղծները՝ Յովհաննէս Յովհաննիսեան, Ալ. Շատուրեան³⁰, Վ. Տէրեան, եւ ուրիշներ, որոնք տարիների ընթացքում խոչըր կրթական գործունէութիւն ծաւալեցին Հայ գլորցներում, հանդիսացան Հայ գրականութեան աչքի ընկնող ուժերը։ Լ. Ճեմարանում էր սովորել եւ ապա դասախոսել Հռչակաւոր լեզուագէտ եւ Հայկարան Ն. Մառը։

«Լազարեան Ճեմարանը ունէր իր սեփական տպարանը, որտեղից բազմաթիւ գրքեր էին լոյս տեսնում, այդ թւում մի քանի պատմագիրների՝ ինչպէս Յովհ. Դրասիսանակերացու, Եղիշէի, Կիրակոս Գանձակեցու, Մ. Կաղանկատուացու, Ստեփաննոս Օրբելանի եւ ուրիշների գործերը։

«Հիմնականում Լազարեան Ճեմարանի շուրջը համախմբուած ուժերն էին, որ 19րդ դարի կէսերին ստեղծեցին Մոսկուայի Հայ մամուլը։ 1858 թ. Մ. Նալբանդեանի եւ Ստ.

³⁰ Ճիշտ չէ, որքան մենք գիտենք, Ալ. Շատուրեանը Ճեմարանի սան չի եղել. մենք նրա անուան չենք հանդիպել Ճեմարանի սաների եւ ո'չ մի անուանացուցակում կամ որևէ մատնանշում այլ աղբիւրներում։

Նազարեանցի ջանքերով հիմնադրւում է «Հիւսիսափայլը», որը խոչոր գեր կատարեց հայ իրականութեան մէջ, տղիտութեան ու յետամենացութեան մերկացման, առաջառոր դադափարների տարածման ուղղութեամբ։ «Հիւսիսափայլ»ին աշխատակցում էին Ռ. Պատկանեանը, Ս. Շահազիզը, Մ. Մաղաթեանը, Բաֆֆին եւ ուրիշները։

«Հիւսիսափայլ»ից բացի, Մոսկուայում լոյս են տեսել մի քանի ուրիշ պարերականներ՝ «Ճուաքաղ», «Հանդէս գրականական եւ պատմական», «Նոր Փորձ» ևայլն։

«Յօական թուականներին Մոսկուայում հաւաքուած հայ երիտասարդների սերունդն էր³¹, որ առաջին լուրջ փորձեր կատարեց ուստական գրականութեան լաւագոյն նմուշների թարգմանութեան ուղղութեամբ³²։ «Հիւսիսափայլ»ի էջերում լոյս տեսան մի շարք ինքնուրոյն եւ թարգմանական կարեւոր երկեր, որոնք մնում են հայ գրականութեան ամենայաջողած էջերի թւում։

«Մոսկուայում կենտրոնացած այդ սերնդի ջանքերով էր դարձեալ, որ 1859 թ. յունուարի 27ին Միքայէլ Ստեփանեանի բնակարանում հայ ուսանողների ջանքերով ու ակտիւ մասնակցութեամբ ներկայացուեց Վա-

³¹ Որի մի խոչոր տոկոսը կազմում էին լ. Ճեմարանի շրջանաւարտները։

³² Յիշտատակենք Մ. Մաղաթեանին, որ թարգմանել էր Լերմոնովի Հռչակաւոր Պօէմ՝ «Դեւը»։ Այդ թարգմանութիւնը մինչեւ այսօր էլ մնում է լաւագոյնը։

նանդեցու «Արխատակէս» պիեսը եւ մի լօդեւիլ:

«Բառ էութեան այս ներկայացումը հանդիսանում է արեւելահայ թատրոնի առաջին լուրջ փորձը, որը իր վրայ հրաւիրեց նաև մամուլի ուշագրութիւնը։ Միք. Նալբանդեանը այդ առիթով «Հիւսիսակայլ»ում գրած ռեցենդիայում ողջունում էր հայ ուսանողների թատերասիրական յիշեալ քայլը եւ ցանկութիւն էր յայտնում տարեկան դէմ երկու անգամ՝ այդպիսի ներկայացումներ տալու։

«Ամրող 19րդ դարի երկրորդ կեսի ընթացքում Մոսկուան հանդիսանում էր կուլտուրական մտաւորական այն կենտրոնը, որին յառած մնում էին հայ առաջաւոր բոլոր զբողների ակնարկները՝ Դ. Աղայեան, Պ. Պոօշեան, Յովհ. Յովհաննիսեան եւ որիշները . . .»։

*

Ի վերջոյ, պարզենք մի կարեւոր խնդիր եւս, որ տարածայնութեան տեղիք էր տուել 1913 թուին, երբ հարց ծագեց՝ տօնելու ձեմարանի գոյութեան 100ամեակը։ Ե՞րբ տօնել յորեւեանը՝ 1914ին թէ 1915ին, ուրիշ խօսքով, ե՞րբ է եղել ձեմարանի հիմնադրութիւնը՝ 1814ին թէ՝ 1815ին։

1913ին ձեմարանի վերատեսուչն էր Պրոֆ. Պա՛լ Գիդուլեանովը, որն որոշ պրադտումներ կատարելով եկել էր այն համոզման, որ ձեմարանի հիմնադրութիւնը եղել է 1814ին, հետեւարար 100ամեակը լրանում

է 1914ին եւ ո'չ թէ 1915ին։ Այս իսկ պատճառով նա կարգադրեց ձեռնամուխ լինել նախապատրաստական աշխատանքների։ Սակայն, ինչպէս յայտնի է, 1914 թ. ծագեց առաջին համաշխարհային պատերազմը և յորելեանը տեղի չունեցաւ։

Պրոֆ. Գիդուլեանովը որոշ տուեալներ ունէր մտածելու, որ ձեմարանի հիմնադրութիւնը տեղի է ունեցել 1814 թ. թէեւ մինչ այդ ընդունուած է եղել 1815ը, բայց կը տեսնենք, որ առելի ճիշդը հինգ 1815 թուականն է։

Ձեմարանի իրական հիմնադիրն ու կազմակերպիչը՝ Յովակիմ աղա Լազարեանցը իր ծանօթ «Յայտարարութիւն առ իւր համագովիս» գրութեան մէջ, լոյս տեսած 1820 թուին, հետեւեալ տեղեկութիւններն է տալիս մեզ հետաքրքրող խնդրի մասին։

«... յամին 1814 եկեալ իմ ի Ս. Պետրուրդայ աստ ի Մոսկով՝ օդնականութեամբն Աստուծոյ, եւ բարեհաճութեամբ օրհնեալ ազգախնամ Տէրութեան»՝ ձեռն արկի շինել զլացնանիստ հոյակապ Համալսարան ³³։ Եւ յետ ծախելոյ առելի քան զ200 հազար ոռուրի ի սեփական գոյից խմոց՝ բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յարքունական գանձանակէ (այն է զտոկոսիս բարդեալս ի բազում

³³ «Համալսարանի» անուն՝ ի թղթի տառ եւեթ տեսանի ընծացեալ ձեմարանին Լազարեանց, եւ այն՝ յայտ է թէ՝ ըստ կամս կարծեաց կամ ըստ առանձին ինչ հաճացից շարադրողի բանիցդ։ Մոեր Մոերեանց։

ամաց հետէ ի մայր գումարէ անդը մուծելոյ յինէն, ըստ զօրութեան կատկի գերազանց եղբօր իմոյ Աղայ Յովհաննիսի), հազիւ թէ հասուցի զայն յիւր աւարտ ի 1816, եւ ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկածին մանկունս յամենացն շրջակայ նահանգաց, եւ սկիզբն կալայ ի ձեռն քաջակիրթ դաստիարակաց վարժել զնոսա ի փառս մարդասիրին Աստուծոյ՝³⁴»:

Այս տողերից պարզ երեւում է, որ
ա. Ճեմարանի հիմքը դրուած է 1814թ.;
թ. Շէնքի կառուցումն աւարտուել է
1816թ.;

զ. Առաջին ուսումն. տարին սկսուել է՝
1817թ. յունուարին:

Այսուհետեւ Մաեր Մաերեանցը իր «Յիշատակարանի Երրորդ մասում, գլուխ երկրորդում տալիս է Լազարեան Ճեմարանի շինութեան պատմութիւնը, որը սկսում է այսպէս.

«Տեարց Լազարեանց Ճեմարանն Արեւելեան լեզուաց որ ի Մասկուա կառուցեալ է յամի Տեառն 1815, ի ներգործական Պետական Խորհրդականէ եւ ի Հրամանատար Ասպետէ ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց, եւ յեղբօրէ նորա ի Յովհակիմոյ Լազարեան Լազարեանց . . .»:

³⁴ Տե՛ս Մաեր Մաերեանց, «Յիշատակարան», էջ 57, Մասն Ա., ընդգծումները մերն են:

Այս տողերին Մ. Մուրեանցը կցել է հետեւեալ ծանօթութիւնը .

* «Հիմնարկութիւն ձեմարանիս սկսեալ եւ վճարեալ յընթաց 1813 եւ 1814 ամաց, իսկ դաստութիւնն ի նմա սկսեալ է յամի 1816 (տե՛ս ի Կարգադր. ձեմ. յէջ 12) ³⁵» :

Այս տեղեկութիւններից, որոնք հիմնուած են նոյնպէս պատմական արժէք ունեցող փաստաթղթի վրայ, հետեւում է, որ՝

ա. Ճեմարանի հիմքը զրուած է 1813թ.:

բ. Շէնքի կառուցումը սկսուել է 1813թ., շարունակուել եւ աւարտուել է 1814թ.:

գ. Դասաւանդութիւնը սկսուած է 1816թ. յունուարին :

Այս տուեալների մէջ եւս խօսք չկայ 1815թ. մասին :

Պրոֆ. Ալ. Զինովիևը ճեմարանի իր համառոտ պատմութեան 32րդ էջում գրում է.

«1814թ. մայիս 10ին օրհնուեցին՝ գոյութիւն ունեցող նախկին տունը, տեղը եւ հիմնադրութիւնը նոր շէնքի...: Մի տարի անց, 12 մայիս 1815թ. սկսուեց դասաւանդութիւնը ճեմարանը մտած աշակերտաների համար, գլխաւոր հսկողութեամբ հիմնադրի եւ Հոգարարձու Յովակիմ Լազարեանի» ³⁶:

Այս տուեալներից հետեւում է, որ՝

ա. Ճեմարանի հիմքը զրուել է 1814թ. մայիս 10ին :

³⁵ Անդ, Մասն Պ., էջ 12:

³⁶ Տէ՛ս Պրոֆ. Զինովիւ, էջ 86:

թ. Մի տարի անց՝ 1815 թ. մայիսին
սկսուել է առաջին ուսումն. տարին:

Ճեմարանի պարտիզում Լազարեանների
յիշատակին կառուցուած բուրդի վրայ եղած
արձանագրութեան մէջ մատնանշուած է Ճե-
մարանի հիմնադրութեան թուականը՝ Մայիս
մէկ 1815 թ.³⁷:

Մ. Մսերեանցը յիշատակում է նաև
Մոսկուայի մի ուսու լրագրի վկայութիւնը,
ուր ասուած է թէ՝

«Յամին 1814 թ. կանգնեցաւ ի մայրա-
քաղաքի մերում ուսումնարան նոր՝ ծախիւք
երկուց եղարց՝ Յովհաննու և Յովակիմայ
Լազարեանց³⁸ . . .» :

Պետերբուրգի «Ռուս. Ինվալիդ» կիու-
պաշտօնական թերթում 1825 թ. գրուած է
եղել՝

«. . . Այսու եղանակաւ հիմնաւորեալ յա-
մին 1816 Հայկական Ճեմարանն Լազա-
րեանց . . .» :

Վերջապէս կայ մի այլ պատմական փաս-
տաթուղթ, ուր տեղեկութիւն կայ Ճեմարանի
հիմնադրման թուականի մասին։ Այդ փաս-
տաթուղթը մեր վերը յիշատակած խնդրա-
գիրն է, որ Յովակիմ աղան և նրա երկու որ-
դիքը՝ Յովհաննէսն ու Խաչատուրը ներ-
կայացրել էին կայսեր Ալէքսանդ Ա. ին 1824 թ.

³⁷Տե՛ս Մ. Մսերեանցի «Յիշատակարան», Մասն Գ,
Էջ 92:

³⁸Անդ, Էջ 94:

յունիս 19ին։ Այդ խնդրագիրը սկսում է հետեւեալ բառերով։

«Ուրամիայ փոքր ապացուցեց մեր դպրոցի իրական օգտաւէտութիւնը» եւայլն։

Եթէ ձեմարանում դաստանդութիւնը սկսուել է 1815 թ. մայիս 12ին, ինչպէս վկայում է Պրոֆ. Զինովեևը, ապա 1824 թ. յունիս 19ին կը լինի ուղիղ 8 տարի։ ուրեմն, ձեմարանի հիմնադրութեան թուականը համարւում է 1815 թուականը։

Զանց ենք առնում հայկական ազրիւրների (Երիցեան, Լէօ եւայլն) տեղեկութիւնները։

Եթէ այս բոլորի վրայ աւելացնելու լինենք, որ ձեմարանի 50ամեակը կատարուել է 1865 թ. Խաչատուք աղա Լազարեանցի կենդանութեան օրով, իսկ 75ամեակը՝ 1890 թ., այսինքն՝ միշտ ընդունուած են եղել 1815 թ. ձեմարանի հիմնադրութեան, թւում է, որ հէնց 1815 թ. պիտի ընդունել եւ անխախտ պահպանել։ Զիսախտենք, ուրեմն, պատմական աւանդութիւնն ու շփոթ չառաջացնենք մտքերի մէջ։ ընդունենք ընդ միշտ 1815 թ., որպէս ձեմարանի հիմնադրութեան իսկական թուականը։

ԳԼՈՒԽԻ Բ.

ԱՅՉԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԱՄԱՉԻՆ
ՇՐՋԱՆՈՒՄ

(1815—1837)

Լազարեան Ճեմարանը իր կեանքի առաջին ժամանակաշրջանում, որ ընդգրկում է 1815—1837 թուականները, չի ունեցել ոչ մի իրաւունք, ոչ մի առանձնաշնորհում. նա եղել է սոսկ մի համեստ մասնաւոր դպրոց՝ «Տեարց Լազարեանց Ճեմարան» :

Այս շրջանում նրա հիմնադիրն ու կառուցանողը՝ աղա Յովակիլի Ղազարեան Լազարեանը հետամուտ է եղել շատ համեստ կրթական նպատակի՝ յագեցնել Ռուսաստանի հայ ազգարնակութեան մատաղ սերունդի ուսման ծարաւը, գլխաւորագէս հայ որբ ու չքաւոր երեխանների շարքից, եւ տալ նրանց պատշաճ դաստիարակութիւն :

Բնական էր, որ Յովակիլ աղան բաւարուէր այդքանով, որովհետեւ իր դպրոցը դեռ չէր ճանաչուած կառավարութիւնից, իրաւագուրկ էր եւ բացի այդ դժուար էր գտնել ուսուցչական հմուտ կազմ :

Հազիւ է յաջողւում նրան Ճեմարան բերել նախ Յարութիւն քահ. Ալամդարեանին, որ արդէն 1824 թ. փոխադրուում է նորարաց Ներսիսեան դպրոցը Թիֆլիսում, եւ ապա Սերովիկ վարդ. Պատկանեանին ու Միքայէլ Ծ. Վ. Սալլանը եանին, որոնք դպրոցի կըր-

թական գործը արդէն դնում են պատշաճ բարձրութեան վրայ:

Այդ ժամանակ ձեմարանը ունեցել է միայն չորս դասարան, ինչպէս ընդունուած էր կայսրութեան այդ ժամանակուայ գիմնազիոններում:

Դաստանգուող պուարկաներն են եղել՝ Կրօն (ոռւս ուզգափառ եւ հայ լուսաւորչական եկեղեցիների), Տքամարանութիւն, Հայոցէն (հայ երեխաների համար), Ռուսերէն, Լատիներէն, Ֆրանսերէն, Գերմաներէն հանգերձ դրականութեամբ, Մաթեմաթիկա, Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Վիճակագրութիւն (սոտատիստիկա), Նկարչութիւն, Վայելչագրութիւն եւ Պար¹:

Ձեմարանը ոյս ծրագրով եւ փոքրաթիւաչակերտներով գործել է ամբողջ 12 տարի:

Թէ եւ Յովակիմ աղան, ի նկատի առնելով իր ծերութիւնն ու սովառող ոյժերը, ձեմարանի կառավարութիւնը արդէն 1818 թուին յանձնել էր իր երկու աւագ որդիներին՝ Յովհաննէսին եւ Խաչատուրին, առաջինին նշանակելով հոգաբարձու, իսկ երկրորդին՝ նրա օգնական եւ ձեմարանի առաջին:

¹ ՊրոՓ. Զինովեևը յիշատակում է նաև «Իրաւունքներ», մինչդեռ Գ. Քանանեանի տուած ծրագրի մէջ այդ պուարկան բացակայում է: Մենք զերազանեցինք հետեւել Գ. Քանանեանին, քանի որ «Իրաւունքներ» բառը չառ անորոշ է, յայտնի չէ՝ թէ խօսքը ո՞ր իրաւունքի մասին է՝ Ռուսական թէ՛ Հոռվմէտական իրաւունքի կամ թէ իրաւունքի ընդհանուր տեսութեամբ մասին է:

վերատեսուչ (դիրեկտոր), այնուամենայնիւ շարունակում է մինչեւ իր մահը բերել իր խնամքն ու մասնակցութիւնը ձեմարանի գործերին :

Ծնորհիւ այս երեք լաղարեանների եռանգուն ու գուրզուրալից գործունէութեան, ձեմարանը իր զոյութեան հէնց առաջին վեց տարում ցոյց է տալիս կրթական գործում այնքան նշմարելի յաջողութիւն, որ գրաւում է հայ հասարակութեան ուշադրութիւնն ու պատճառում մեծ ուրախութիւն։ Դրան մեծապէս նպաստում է այն հանգամանքը, որ շրջանաւարտների քննութիւնները տեղի էին ունենում իրապարակաւ, ներկայութեամբ Մոսկուայի հայ եւ ոռու հասարակութեան ներկայացուցիչների, Մոսկուայի համալսարանի ուսուցչապետների ու նաև ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան տեղական բարձր պաշտօննեանների :

1821 թուի աւարտական քննութիւնները, օրինակ, ինչպէս վկայում է այն ժամանակույց ոռու մամուլը², առանձնապէս մեծ ուրախութիւն էր պատճառում հայ հասարակութեան, ի տես այն աչքի դարնող յառաջադիմութեան, որ ցուցադրել էին Հայաստանի հեռաւոր անկիւններից եկած հայ երեխաները։ Այդ տարին ձեմարանը տալիս է 12

² «Մոսկուայի Վէգումոստի» թերթը 1821 թ. Փետրուար 9, նաև «Ակադեմի Ժողովածու», հար. Գ, էջ 44. մատնանշուած են Գ. Քանանեանի հառի մէջ ձեմարանի 50ամեակի առթիւ առուած։

շրջանաւարտ Գիմնազիոնական ընդհանուր կրթութեամբ, որոնցից 5 հոգի յատուկ քննութիւններ տալով մտնում են Մոսկուայի համալսարանը ստանալու բարձրագոյն կրթութիւն։

1820-ական թուականների սկիզբներին աշակերտների թիւը սկսում է բազմանալ ։ Ճեմարանը ընդունում է նաև ուսման վարձ վճարող դիչերօթիկ և երթեւեկ աշակերտներ առանց ցեղային ու կրօնական խորութեան։ 1825 թուին ճեմարանը ունէր արդէն 75 աշակերտներ, որոնցից 30ը Լազարեանների թոշակաւորներն էին՝ հայ որբ ու չքաւար երեխաններ։

Այսպէս դպրոցի մօտեցումը հասարակութեան ունենում է իր շատ բարերար աղդեցութիւնը։ Այս հանդամանքը ցոյց է տալիս, որ Լազարեանները առողջ տեսակէտներ ունեն դպրոցական գործի մասին։

Այս յաջողութիւնը, սակայն, չի բաւարարում հոգաբարձու Յովակիմ աղային։ Ճեմարանը մնում էր մի համեստ մասնաւոր դպրոց... նա մտահոգուած էր, նախ, կրթական ծրագիրն ընդարձակելու և ճեմարանի իրաւական վիճակը ամուր հիմքերի վրայ դնելու խնդիրներով։

«Մի կողմից — ասում է ճեմարանի վերատեսուչ Պրոֆ. Միլերը — Լազարեանները երազում են իրենց դպրոցի աշակերտներին սալ այնպիսի կրթութիւն, որպէս զի նրանք

պատշաճ պատրաստականութիւն ձեռք բերելով կարողանան մտնել Մոսկուայի համալսարանը, միաժամանակ լինելով Պարսկաստանից Ռուսաստան տարագրուածի զաւակներ եւ միանդամայն գիտակցելով Ռուսաստանի մեծ նշանակութիւնն ու շահերը Արեւելքում, նրանք մտածում են իրենց զպրոցում մտցնել նաև արեւելեան լեզուների գառաւանդութիւնը, զարձնել ձեմարանը կենտրոն արեւելեան լեզուների ուսումնասիրութեան համար: Այսպիսով Խաղարեանների զպրոցը պիտի հետամուտ լինէր երեք հիմնական նախականական արագործման. նախ՝ լինել կանոնադր դպրոց հայ երեխանների համար, որոնք այդ ժամանակ գրեթէ զրկուած էին ուսում ստանալու հնարաւորութիւնից, ասդա՞լինել արեւելեան լեզուագիտութեան կենտրոն եւ վերջապէս՝ լինել ընդհանուր կրթութեան դպրոց, որ պատրաստում է իր սաներին մտնելու համալսարան³»:

Աղա Յովակիմը, նախազգալով իր մօտայուտ մահը, ձգտում է ապահովել ձեմարանի իրաւական գիճակը, լաւ գիտակցելով, որ իր զպրոցը, որպէս մի մասնաւոր կրթական հաստատութիւն, չի կարող յարատել դոյցութիւն ունենալ, կարող է բազում պատահականութիւնների ենթարկուելով վտանգուել: Միաժամանակ նա ցանկանում էր

³ Տե՛ս «Լազ. ձեմ. մասնագիտ. զասարանների Յամակարչութեանը, էջ Բ, Պրոֆ. Միլլէրի ձառը: Բնդզծումները իմն են:

ձեռք բերել ձեմարանի համար օրէնքով հաստատուած կանոնագիր, իրաւունքներ ձեմարանի ուսուցիչների եւ միւս պաշտօնեաների համար եւ վերջապէս ենթարկել ձեմարանը Կրթական նախարարութեան:

Այս իմաստով Յովակիմ աղան դիմում է անում կառավարութեան, սակայն բաւարարութիւն չի ստանում . . . :

Բայց աղա Յովակիմն այն մարդկանցից չէր, որ անյաջողութիւնից ձեռնթափ են լինում: 1823 թ. նա նորից դիմում է կառարում կառավարութեան, առաջարկելով նախագիծը ի հաստատութիւն ձեմարանի Կանոնագրի, ըստ որի ձեմարանը պիտի կոչուէր՝ «Լազարեանների Հայկական Գիմնազիա», իսկ դպրոցական ծրագրի մէջ մտցնել երեք արեւելեան լեզուների դասաւանդութիւն՝ Արարեքնի, Պարսկեքնի եւ Տաճկերէնի:

Այս դիմումը թէեւ քննութեան է առնում եւ նոյն իսկ արժանանում Դպրոցական Գլխաւոր Վարչութեան Գիտական Կոմիտէի հաւանութեան, այնուամենայնիւ ընթացք չի ստանում եւ դրական արդիւնք չի տալիս . . . :

Այս անյաջողութիւններից յետոյ աղա Յովակիմի եւ նրա օղնական երկու որդիների ջանքերը ուրիշ ուղղութիւն են ստանում. նրանք երջանիկ միտք են յդանում դնել ձեմարանը մի պետական բարձր ու հեղինակաւոր անձնաւորութեան իշխանութեան ու հոգանաւորութեան ներքոյ, որի օժանդակու-

թեամբ ի վիճակի կը լինեն աւելի դիւրին
կերպով երագացնել իրենց նպատակներն ու
բաղձանքները :


Նրանք կանգ են առնում ժամանակի ա-
մենազօր պետական անձնաւորութեան վրայ,
ոյն է՝ Կոմս Արակչեւի վրայ, որի հետ Լա-
զարեանները բարեկամական կապեր ունեին
և որը օժտուած էր կայսեր Ալէքսանդր
Առաջինի կողմից արտակարգ իրաւունքնե-
րով ու իշխանութեամբ :

Լազարեանների խնդրին միացնում է
նաև իր դիմումը Ամենայն Հայոց Կաթողի-
կոս Եփրեմը :

Կայսրն ու Կոմսը տալիս են իրենց հա-
մաձայնութիւնը, և կոմս Արակչեւը նշա-
նակւում է կայսեր յատուկ հրովարտակով
Լազարեան Ճեմարանի առաջին Գլխաւոր Կա-
ռավարչապետը սկսած 1825 թուից :

Ուշադրաւ է ժողովրդական լուսաւորու-
թեան նախարար ծովակալ Ալէքսանդր Շիշ-
կովի հետեւեալ կարծիքը, յայտնուած ոյզ
առթիւ .

«Ի նկատի առնելով, որ Լազարեանների
Հայկական գպրոցը չի մտնում համալսարա-
նական շրջաններում եղած պետական գպրոց-
ների կազմի մէջ, որոնք իրենց Կանոնադրով
ենթակայ են ամէն մի համալսարանական
շրջանի իշխանութեան, որ նա մինչեւ այժմ
ենթակայ չի եղել ժողովրդական լուսաւո-
րութեան նախարարութեան և հանդիսանում
է մի առանձնացատուկ կրթական հաստա-



4. 543

H. L. Munn

տութիւն, որը ծառայում է մեծ մասամբ հայ երեխաների կրթութեան գործին, ուստի ժողովրդական լուսաւորութեան նախարարը գտնում է, որ այդ դպրոցը, առանց խախտելու լուսաւորութեան նախարարութեան մէջ ընդունուած ընդհանուր օրէնքները, կարող է այդ նախարարութեան կախումից ազատ համարուել եւ գտնուել յատուկ վարչութեան իրաւասութեան ներքոյ, որից այդ դէպրում կախուած կը լինի մշակել նաև կանոններ այդ դպրոցի համար⁴»:

Նախարարի այս կարծիքի վրայ յենուելով, կայսրը հաստատում է կոմս Արակչէւին յիշեալ պաշտօնի մէջ և կոմսը գործի է անցնում 1825 թուից:

Այժմ արդէն աղա Յովակիմը կարող էր հանգիստ սրտով փակել իր աչքերը առ յաւէտ՝ նրա դպրոցը ստացել էր այն իրաւական ապահովութիւնը, որին նա ձգտում էր եւ որի մասին նա տարիներ շարունակ երազել էր:

Եւ արգարեւ, հազիւ մի տարի անց, 1826 թ. յունուար 21ին Յովակիմ Ղազարեան Լազարեանը վախճանուում է, թողնելով ձեմարանը իր երկու որդիների խնամքին:

Ճեմարանի վիճակի մէջ մինչեւ 1837 թ. մեծ փոփոխութիւններ տեղի չունեցան:

⁴ Տե՛ս «Լազ. ճեմ. 50ամեակը», Յաւելուած, էջ 9։ ուր բերուած են պաշտօնական դրամթիւնների եւ կայսերական հրովարտակների ընազրերը։

Մացուեց երեք արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, որը սակայն պարտագիր չէր բոլոր աշակերտների համար, այլ միայն նրանց համար, որոնց ընտրում էր ձեմարանի Խորհուրդը կամ թէ որոնք իրենց յօժար կամքով ուզում էին սովորել այդ լեզուները։ Աւելացաւ դասաւանդուող առարկաների թիւը, որով աշակերտները բաւական ծանրաբեռնուեցին։ Այսու հանդերձ ձեմարանը շարունակում էր լինել հանրակրթական դպրոց, որ պատրաստում էր իր սաներին մանելու համարսարան, բարձրագոյն կրթութիւն ստանալու։

1829 թուին եւ այնուհետեւ յաջորդ տարիներին ձեմարանում առանդում էին հետեւեալ առարկաները։

1. Կրօն (Հայ եւ ուս. դաւանութիւնների)։ 2. Տրամարանութիւն եւ Բարոյացիութիւն։ 3. Պատմութիւն եւ Վիճակագրութիւն։ 4. Թուարանութիւն։ 5. Երկրաչափութիւն։ 6. Եռանկիւնաչափութիւն։ 7. Հանրահաշիւ (ալգերրա)։ 8. Ֆիզիկա։ 9. Բնական պատմութիւն։ 10. Քերականութիւն։ 11. Ճարտասահութիւն։ 12. Էստատիկա (Գեղեցկագիտութիւն)։ 13. Բնդհանուր եւ Ռուսաց պատմութիւն։ 14. Աշխահագրութիւն։ 15. Լեզուներ՝ Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Արարերէն, Պարսկերէն, Տաճկերէն հանդերձ իրենց պրականութեամբ։ 16. Նկարչութիւն։ 17. Վա-

յեւսպրութիւն . 18 . Գծագրութիւն . 19 .
Երաժշտութիւն և 20 . Պար ⁵ :

Կոմս Արակչէնի գլխաւոր կառավարչաւ-
ութիւնը շարունակուեց մինչեւ 1827թ . :
Նրան յաջորդեց կոմս Ալեքսանդր Բենկեն-
դորֆը — 1828թ . , Համաձայն Լազարեան-
ների և Ռուսաստանի հայերի վիճակաւոր
Յովհաննէս արքեպիսկոպոսի խնդրանքնե-
րին , ուղղուած կայսեր :

Նոյն 1828թ . կառավարչական բարձր
շրջաններում քննութեան է առնեում արեւե-
լապէտների մասնակցութեամբ ու մշակուում
ձեմարանի Համար Նոր Կանոնագիր , բայց
նրա վերջնական վաւերացւումը յետաձգւում
է եւ միայն ձեմարանի անունն է փոփոխու-
թեան ևնթարկում եւ անուանում է՝ «Լա-
զարեանների Հայկական ձեմարան Արեւե-
լեան լեզուաց» :

Չնայած այս անյաջողութեան , ձեմա-
րանի ներքին կեանքը չնորհիւ Լազարեան-
ների խնամքին եւ Սալլաթեանի հմուտ դե-
կամարտթեան ու նաեւ Մոսկուայի Համա-
լսարանի բարերար ազգեցութեան , կրթական
դորձը ձեմարանում շարունակում է զար-
դանալ եւ ձեռք բերել բարի համբաւ թէ կա-
ռավարական բարձր շրջաններում եւ թէ հայ
ու ոռու հասարակութիւնների մէջ :

⁵ Առարկանների անունների յիշատակութեան մէջ
բացակայում է միատեսակութիւն մեր ձեռքի տակ
հղած ազրիւրների մէջ : Մենք հետեւցինք Գ . Քա-
նանեանի առած աեղեկութեան :

1830թ. Ճեմարանի հոգարարձու Յովհաննէս Լազարեանը չի սպասում Ճեմարանի նոր կանոնագրի հաստատման և կարգադրում է տպագրել եղած կանոնագիրը հայերէն լեզուով հայերի համար:

Այդ կանոնագրի մէջ Ճեմարանի նպատակը ճեւակերպուած է հետեւեալ կերպով.

«Ճեմարանի զերագոյն նպատակն է տալ նրա մէջ ուսանող հայ երեխաններին ընդհանուր կրթութիւն և պատրաստել օգտակար ծառայողներ հայրենիքին քաղաքացիական ու զինուորական մարզերում։ Բայց զրա հետ սեբորէն կապուած են երկու յատուկ նպատակներ՝ նախ, ուսումն մայրենի լեզուի և նրանց դաւանանքի հիմունքների, որպէս զի Ճեմարանը դառնայ հայ երեխանների դաստիարակութեան կենտրոն ու նաև բոլոր հայ դպրոցների համար ուսուցիչներ ու դաստիարակներ պատրաստող հիմնարկ։ Երկրորդ՝ գործնական ուսումնասիրութիւն տրեւելեան լեզուների։ Այս բոլորի հետ միասին նաև հոգացողութիւն կրթութիւն տալու հայ հոգեւորականութեան երեխաններին»⁶։

1829թ. Լազարեանները հիմնում են իրենց սեփական տպարանը, Ճեմարանին կից, որ մեծապէս նպաստում է կրթական գործի յաջողութեան, տպագրելով մի շարք դասագրքեր։

⁶ Տե՛ս «Լազ. Ճեմ. 75ամեակը», Քանանեանի հառը, էջ 12։

Բայց եւ այնպէս պէտք էր զդացւում ստանալ ձեմարանի համար որոշ առանձնաշնորհումներ եւ բարձրացնել նրա իրաւական դիրքը:

Օգտուելով նոր գլխաւոր Կառավարչապետ կոմս Յևելենդորֆի բարեացակամ վերաբերմունքից, Լազարեանները 1835 թուին հետեւեալ դիմումն են կատարում, խնդրելով ձեմարանի համար կայսրութեան պետական գիմնազիոններին վերապահուած բոլոր առանձնաշնորհումներն ու իրաւունքները:

Եւ որովհետեւ այդ դիմումը պարունակում է իր մէջ հետաքրքրական տեղեկութիւններ ձեմարանի նիւթական ու կրթական վիճակի մասին, տալիս ենք այն ամբողջութեամբ, որ ուսւերէն լեզուով բերուած է ձեմարանի 50ամեակին նուիրուած հրատարակութեան Յաւելուածում (էջ 16—17) .

«Լազարեան ձեմարանը — գրում են դիմումի հեղինակ Լազարեանները — հիմնուած Մոսկուայում 1815 թ., առանց կառավարութեան զրամական օժանդակութեան, արդէն չուրջ 20 տարի է որ գոյութիւն ունի: Դասընթացքը՝ գիմնազիոնական է. բացի այդ աւանդուում են նաև հայերէն, պարսկերէն, արաբերէն ու տաճկերէն լեզուները: Այդ ժամանակամիջոցում ձեմարանի հաշուով սովորել են 160 հոգի եւ գիշերօթիկ երեխաներ չուրջ 240 հոգի, ընդամենը չուրջ 400 աշեկերտ, որոնցից 60 հոգի չըջանաւարտներ մտել են համալսարան:

«Լազարեան Շեմաբանի Հիմնադիրները
1814 թ. սկսած մինչև 1834 թ. նուիրարե-
րել են Շեմաբանին շէնքերով ու դրամով մոտ
1,028.000 ռուբլի, չհաշուած 200.000 ռուբլի
Հիմնադրամը, որ ի պահ է արուած Ա. Պե-
տերուրդի Խնամակալական Խորհուրդին:
Բացի այդ, Լազարեանները արել են նաև Հե-
տեւեալ նուիրարերութիւնները՝ ա. 6.000
հատոր գիրք Եւրոպական և արեւելեան լե-
զուններով գրադարան կազմելու համար.
թ. հաւաքածոներ նկարների, դիմանկար
պատկերների, փորագրութիւնների. գ. կաղ-
մել են Հանքարանական կարինեա և ձեռք են
րերել Փիղիքոյի ու մաթեմաթիկայի համար
զանազան գործիքներ ու գլորոցական պի-
տոյքներ: Շեմաբանը ունի իր հիւանդանոցը
աշակերտների համար և այլ Հիմնարկներ
(խոհանոց, բաղնիս և այլն):

«Այս տարի էլ Լազարեանները նուիրա-
րերել են 42.500 ռուբլի:

«Շեմաբանի Հիմնադրութեան ժամանակ
զնուած են Երկու քարաշէն տուն, իսկ
1828 թ. Շեմաբանի կողքին ուրիշ քարաշէն
տուն, որի մէջ բացուած է տպարան տպա-
գրելու Եւրոպական և արեւելեան լեզունե-
րով գրքեր: Այս բոլոր աները րերում են Շե-
մաբանին տարեկան 10.000 ռուբլի եկամուտ:

«Շեմաբանի պահպանութեան համար
ստացւում են Հետեւեալ եկամուտները՝ Հիմ-
նադրամի տոկոսներ, տների վարձ ու տպա-
րանից եկամուտ, գումար՝ 20.000 ռուբլի:

Մայսքը ձեմարանի պահպանութեան համար կազմում է տարեկան մօտ 45.000 ռուբլի: Պակասը լրացւում է գիշերօթիկներից ստացող 650 ռուբլի տարեկան վճարից, որը չառշափառը է, համեմատած պետական ու մասնաւոր դպրոցներում ընդունուած վճարի հետ: Այնուամենայնիւ եթէ պակաս է լինում, այդ պակասը լրացնում են Լազարեանները իրենց սովորական նուիրարերութիւններով:

«Արդ, ձեմարանը, որ կրթական տեսակէտից հաւասար է գիմնազիոններին, որն ունի մեծահամբաւ դասատուներ մայրաքաղաքի գիտնականներից, որն իր ներքին բարեկարգութեամբ պակաս չէ պետական դպրոցներից, որն արդէն պատրաստել է բազմաթիւ կրթուած երիտասարդներ պետական ծառայութեան համար, որոնցից ոմանք մտել են գինուորական ծառայութեան մէջ, ի միջի այլոց նաև թիկնապահ զօրագունդերի մէջ, — ամենայն արդարութեամբ արժանի է ունենալու գիմնազիոնների իրաւունքներ: Հասարակութեան վստահութեան ապացուց է նաև այն, որ ձեմարանը ունի լրիւ թուով գիշերօթիկ աշակերտաներ: Ուսման մէջ ձեմարանի սաների ցոյց տուած յառաջադիմութիւնն ու դաստիարակութիւնը ապացուցուած են համալսարան մտնող աշակերտների յաջող քննութիւններով»:

Այս գիմումը պատարեց կատարեալ յաջողութեամբ շնորհիւ գլխաւոր կառավար-

չապետ կոմս ԲԵՆԿԵՆԴՈՐՓԻ ՀԵՂԲԻՆԱԿԱՆՈՐ
ԱՊԱՇՏԱՊԱՆՈՒԹԵԱՆ : 1837 թուին Լազարեան
ՃԵՄԱՐԱՆԸ ՍՈՏԱՆՈՒՄ Է մի շարք առանձնա-
ՀՆՈՐՀՈՒՄՆԵՐ, ԿԱՆՈՆԱԳԻՐ Է ՀԱՅՄԱՐԵՈՒՄ Է
ԵՐԿՐՈՐԴ Կարգի դպրոց ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԴՊՐՈ-
ԳԱԿԱՆ ցանցի մէջ, որով Է ՃԵՄԱՐԱՆԸ
ՄՈՒՆՈՒՄ Է իր զարդացման ԵՐԿՐՈՐԴ ՎԻՌԱ
ՄԵջ :

ԳԼՈՒԽ Գ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ԾՐՁԱՆՈՒՄ

(1837—1848)

Լազարեանների 1835 թ. դիմումի եւ
կոմս ԲԵՆԿԵՆԴՈՐՓԻ միջամտութեան այդ դի-
մումին յաջող ընթացք տալու՝ մեծապէս
նպաստեցին Կայսեր Նիկոլա Ա.ի եւ ապա
թաղաժառանգ Ալէքսանդր Նիկոլաեւիչի ՃԵ-
ՄԱՐԱՆԻՆ տուած այցելութիւնները :

1834 թ. Հոկտեմբեր 4ին այցելում է ՃԵ-
ՄԱՐԱՆԸ Կայսրը ուղեկցութեամբ կոմս ԲԵՆ-
ԿԵՆԴՈՐՓԻ : Կայսրը մանրամասնօրէն գիտում
է ՃԵՄԱՐԱՆԻ շէնքի բոլոր մասերը, հետա-
քրքրուում է կրթական գործով, խօսում է
երկու աշակերտների հետ, ինչպէս եւ տաճ-
կերէն լեզուի գասատուի հետ, լսում է ՃԵ-
ՄԱՐԱՆԻ վերատեսչի զեկոյցը եւ զոհ հեռա-
նում ՃԵՄԱՐԱՆԻց :

«Յետ այցելութեան բարեհաճեցաւ ինք-
նակալ կայսրն յայտնել գլխաւոր իշխանա-
պետի ձեմարանի (իմա՛ կոմս Բենկենդոր-
ֆին) զիւր բաւականութիւն զքաջ յօրինուա-
ծոյ և զբարեկարգութենէ», — պատմում է
Մ. Մաերեանցը, առնելով այդ տեղեկութիւնը
«ի Գում. Բարձր Հրովարտ.»:

1837 թ. Նոյեմբեր 25ին ձեմարանին
այցելութիւն է տալիս թագաժառանգը, որին
ընդունում են Գլխաւոր Կառավարչապետ
կոմս Բենկենդորֆին և Հոգարարձու Յով-
հաննէս Յովակիմեան Լազարեանցը:

Թագաժառանգը եւս, ծանօթանալով ման-
րամասն ձեմարանի ընդհանուր վիճակի հետ,
կրկին գոհ սրտով հեռանում է, յայտնելով
իր գոհունակութիւնը «զկարգառորութենէ և
զբարեշինութենէ նորին¹»:

Այս երկու այցելութիւններին արձագան-
գում են մայրաքաղաքի ոռւս մամուլի օր-
գանները, որոնց թւում «Հիւսիսային Մեղու»
օրաթերթը, արձանագրելով վեհապետների
գոհունակութիւնը ձեմարանից :

Վերջապէս, 1837 թ. սեպտեմբեր 30ին
Մինիստրների Կոմիտեուը հաղորդում է կոմս
Բենկենդորֆին իր հետեւեալ որոշումները,
հաստատուած կայսեր կողմից, ի գործա-
զրութիւն:

¹ Տես Մ. Մաերեան, «Յիշտակարան», Մաս Գ,
էջ 45:

Այդ որոշումների համաձայն՝

ա. Լազարեան ձեմարանը ստանում է այն բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումները, որոնք վերապահուած են պետոթեան բոլոր երկրորդ կարգի դպրոցներին:

բ. Այդ հիման վրայ, ձեմարանի բոլոր պաշտօնեաները՝ Հոգարարձուն, Վերատեսուչը, տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, տնտեսն ու բժիշկը հոչակւում են պետական պաշտօնեաներ և իրաւունք ունին որպէս այդպիսիները ստանալու նրանց համար սահմանուած բոլոր աստիճաններն ու շքանշանները, համապատասխան իրենց կրթութեան, դիրքի, ցոյց տուած և ուղին ու կատարած աշխատանքների:

գ. Ձեմարանը ենթարկւում է ժողովրդական լուսաւորութեան Նախարարութեան վերին հսկողութեան, թէեւ դեռ չի մտնում նրա դպրոցական ցանցի մէջ:

դ. Թոյլատրուում է ձեմարանի տնտեսական մասի կառավարութեան համար ունենալ յատուկ Տնտեսական Խորհուրդ, որը պիտի գործի համաձայն այն կանոնների, որոնք կը մշակուին Գլխաւոր Կառավարչապետի կողմից: Խորհուրդի մշտական անդամներն են՝ Հոգարարձուն, Վերատեսուչը, տեսուչը և միերկու հոգի աւագ ուսուցիչներից:

ե. Հոգարարձուի կոչումը յատկացւում է Լազարեան տոհմի աւագ անդամին. այս կոչումը ժառանգարար անցնելու է տոհմի անդամներին սերունդից սերունդ: Այն դէպ-

քում, երբ տոհմի սերունդը ընդհատուեց, նշանակւում է նրամերձաւոր աղքականներից մէկը կամ ընտրւում է Հայ ազգից, համաձայնութեամբ Ս. էջմիածնի Հայոց վեհափառ Կաթողիկոսի ու Ռուսահայոց թեմակալ Առաջնորդի, պայմանաւ, որ ընտրեալը իր աստիճանուի համապատասխան լինի իր այդ պաշտօնին:

զ. Հոգարարձուն հաստատւում է իր պաշտօնի մէջ կայսեր բարձրագոյն հրամանալրով, իսկ ձեմարանի վերատեսչի և րուր միւս պաշտօնեանների ընտրութիւնը կատարում է Հոգարարձուն՝ Գլխաւոր Կառավարչապետի համաձայնութեամբ:

Ե. Ամէն տարուաց վերջում ներկայացնել Գլխաւոր Կառավարչապետին և Ժողովրդ. Լուսաւորութեան Նախարարին ձեմարանի մուտքի և ելքի դրամական հաշիւնները, ինչպէս և զեկոյցներ ձեմարանի կրթական վեճակի մասին:

ը. Ձեմարանի Հոգարարձուին, վերատեսչին, տեսչին, ուսուցիչներին, բժշկին, և միւս պաշտօնեաններին թոյլատրուում էր ունենալ նշանազդեստ (մունդիր) և նշանազդեստի Փրակ, որպիսիք յատկացուած էին Մոսկուայի ուսումնական շրջանի գիմնազիոններին, իսկ աշակերտներին՝ նշանազդեստ (մունդիր) մոյզ կանաչազդոյն կտորից կարմիր եղբով (Կահ), բարձր սեւազոյն օձիքով, զեղին (ոսկեգոյն) կոճակներով,

դարդարուած կայսերական զինանշանով
(герб) և զլիարկ նոյն կտորից կարմիր եղ-
րով (канц):

թ. Լազարեանների որդեգիրները պար-
տաւորում են իրենց ուսման ընթացքը ձե-
մարանում և Համարսարանում աւարտելուց
յետոյ ծառայել ձեմարանում, որպէս դասա-
տուններ ո՛չ պակաս քան վեց տարի:

Այսպիսով, ձեմարանի իրաւական վի—
ճակը զգալիօրէն բարւոքում է և նրա
հմայքը հասարակական կեանքի մէջ բարձրա-
նում է :

Աշակերտութեան թիւը սկսում է տաել
տարէց տարի. ձեմարանը իր ներքին կեանքի
մէջ ստանում է նոր ոյժ, նոր թափ իր կրթա-
կան բարձր նպատակները լաւազոյն կերպով
իրակործելու:

Այսու հանդերձ զուտ ուսումնական
մասը՝ բուն կրթական գործը աւելի է բար-
դանում մի քանի նոր միջոցառումների հե-
տեւանքով . . . :

«Այդ ժամանակաշրջանում՝ 1837—1848
թթ., — նկատում է Գ. Քանանեանը, — նոր
դորձնական պահանջեր դրուեցին ձեմարա-
նին, որոնք հակասում էին մանկավարժա-
կան սկզբունքներին: Դասընթացքի միաս-
նականութիւնը խախտում է, զիջելով իր
տեղը գիտութիւնների և առարկաների խճող-
ման: Նպատակների բազմազանութիւնն ա-
ռաջ է բերում պահանջների բազմատեսակու-

թիւն աշակերտների խմբաւորումի մէջ եւ
ստեղծում է անխուսափելի շփոթ ուսման
ծրագրի մէջ։ Միեւնոյն դպրոցում կազմւում
են առանձին բաժանմունքներ, որոնցից
իւրաքանչիւրը ունէր իր ուսման ծրագիրը։
Դիմնագիտնական դասընթացքը կորցնում է
իր ներդաշնակութիւնը, մի բան, որ անհրա-
ժեշտ պայման է ամէն մի դպրոցի կանոնա-
ւոր դարձացման համար։ 1841 թ. մարտ 4ին
Ճեմարանում հաստատում է առանձին բա-
ժանմունք հոգեւորականութեր պատրաստելու
Հայ լուսաւորչական Եկեղեցու համար, հա-
մաձայն Վեհափառ կաթողիկոսի եւ Սինոդի
մտայնացումի ու ցանկութեան²։

«Այս բաժանմունքը թերեւս, առանց
իւսակելու Ճեմարանին, պսակուէր ցանկալի
յաջողութեամբ, եթէ որ նրա աշակերտների
դասընթացքը չենթարկուէր կրծատումների
եւ նրանք չդրուէին բացառիկ վիճակում³։

² իջմիածնի Սինոդի 1837 թ. փետր. 22ի արձա-
նագրութեան մէջ ասուած է ի միջի այլոց հետեւեալը.

«Էջմիածնի Սինոդը ուրիշ յարժարագոյն եւ Հայ
Եկեղեցու օգուտին համապատասխանող միջոց չի
տեսնում, որպէս ամենահաստատուն եւ էական մի-
ջոց՝ եթէ ոչ Մոսկուայի Լազարեան Ճեմարանում հիմ-
նել առանձին բաժանմունք պատրաստելու հոգեւորա-
կան դասից երիտասարգներ Հայոց դաւանանքի, որոնք
ուսուցչութիւն անէին Հայոց թեմական դպրոցներում
եւ բնդունէին հոգեւոր կոչում։»

³ Այս բաժանմունքի ծրագիրը մշակել էին Կա-
թողիկոսն ու Սինոդը, իսկ ներքին գործոց նախարա-
րութեան կողմից արուած էին լրացումներ եւ ազա-
կացներ 1841 թ. մարտ 4ի հրամանագրով հաստա-
տուէլ։ Այս բաժանմունքը պիտի ունենար 15—20 ա-
շակերտներ, որոնք ազատ էին կացուած սովորելու

Գ. Քանանեանը, չարունակելով իր այս
քննադատական խօսքը, ասում է . «Այդ շե-
ղումի հետ միասին գպրոցի ընդհանուր ծրա-
գրից, գպրոցի ուսումնական ծրադիրը ծան-
րաբեռնուում է նաև լրացուցիչ դասախոսու-
թիւններով այն աշակերտների համար,
որոնք պիտի պատրաստուէին առեւտրական
ասպարէզ մտնելու համար. այս բաժան-
մունքի աշակերտներն էլ զրուած էին բա-
ցառիկ վիճակում : Վերջապէս կազմւում է
աշակերտների մի երրորդ խմբակցութիւն,
բազկացած կովկասեան սահմերից, որոնք
պիտի հետեւէին առանձին դասընթացքի» :

«Մի խօսքով, — ասում է վերատեսուչ
Պրոֆ. Վ. Միլլէրը, հաստատելով Գ. Քա-
նանեանի քննադատական խօսքի ճշմարտու-
թիւնը, — այդ ժամանակաշրջանում Ճեմա-
րանը իր մէջ ամփոփում էր միաժամանակ
չորս կարգի գպրոցներ՝ Գիմնազիոն, Հո-
գեւոր դպրոց (սեմինարիա), Առեւտրական
բաժին և Արհեելեան լեզուների դպրոց :
Մաստակարարելով ամէն մէկին փոքր չափով
գիտելիքներ, Ճեմարանը անկարող եղաւ իր
հիմնական նպատակն իրազործելու, այն է՝

լուսիներէն, իսկ մաթեմատիկական գիտութիւնները
պիտի սովորէին աւելի սահմանափակ ծրագրով, քան
Ճեմարանի միւս աշակերտները : Եթանք պիտի սովո-
րէին՝ Աստուածարանութիւն, Աստուածաշունչի մէկ-
նարանութիւն, Եկեղեցական Պատմութիւն, Պատա-
րադի մէկնարանութիւն, Բարոյագիտութիւն :

Տե՛ս Գ. Քանանեանի ճառը «Յամեակակցում» էջ 28
և Պրոֆ. Զինովեևի «Պատմ. լ. Ճ.», էջ 48:

լինել գիմնազիոն եւ տալ իր աշակերտներին
ընդհանուր կրթութիւն⁴» :

Դպրոցական ծրագրի այս խճողումն ընա-
կանաբար, չէր կարող երկար ժամանակ տե-
ւել, քանի որ աշակերտութեան ընդհանուր
ձգուումը՝ մտնել համալսարան, մնում էր ան-
խախտ. զգացումն էր հրամայական պահանջ
կրթական ծրագրի հիմնական բարեփոխման,
որն եւ տեղի ունեցաւ յաջորդ Գլխաւոր Կա-
ռավարչապետի օրով:

1844թ. Հոկտեմբերի 12ին, կոմս Բեն-
կենդորֆի մահից յետոյ, այդ պաշտօնը
ստանձնեց իշխան Ալեքսեյ Օրլովը:

Բարենորոգման ծրագիրը երկար ժամա-
նակ քննութեան է ենթարկուում կառավարա-
կան շրջաններում, երբեմն մասնակցութեամբ
Յովհաննէս եւ Խաչատուր Լազարեանների,
եւ ի վերջո մշակուում է նոր կանոնագիր, որ
հաստատում է կայսերական հրամանագրով
1848թ. Մայիս 10ին եւ ապա անմիջապէս
գործադրութեան մէջ դրւում: Այդ օրուա-
նից ձևաբանը մտնում է իր գարզացման
երրորդ փուլի մէջ, որ տեսում է մինչեւ
1865թ.:

⁴ Տե՛ս «Լ. Ճ. լեկէոնի 30ամեակը», էջ գ. եւ Դ.
բոլոր ընդդումները մերն են:

ԳԼՈՒԽ Դ.

ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԴԱՏՄԱՆ ԵՐԲՈՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(1848—1865)

I.

1848 թ. մայիս 10ին բարձրագոյն վաւերացման արժանացած ճեմարանի Նոր կանոնագիրը բաց էր անում ճեմարանի առջև այնպիսի լուսաւոր հեռանկարներ, որ Խաչատրուր Յովակիմեան Լազարեանը Ս. Պետերբուրգից դալիս է Մոսկուա և նոյն թուի սեպտեմբեր 20ին կազմակերպում է շքեղ հանդէս ճեմարանում, նպատակ ունենալով հրապարակաւ յայտնելու ճեմարանի և հայ հասարակութեան սրտաբուխ չնորհակալութիւնները Կայսրին, Ժողովրդ. Լուսաւորութեան Նախարարութեան և ճեմարանի Գլխաւոր կառավարչապետ իշխան Օրլովին:

Այս հանդէսին ներկայ են եղել պետական զինուորական ու քաղաքացիական ականաւոր անձինք ու նաև Համալսարանի պրոֆեսորներ ու դիտնականներ :


Ինչումն էր կայանում Նոր կանոնագրի էռթիւնը, ի՞նչ բարիքներ էր նա բերել ճեմարանին, որ այդքա՞ն մեծ ուրախութիւն էր պատճառել Լազարեաններին և հայ հասարակութեան :

Համաձայն մեր ճեռքի տակ եղած աղբիւնների հաղորդագրութեան՝ հետեւեալ էական բարեփոխութիւններն էին կատարուած :



K. Hauška

•Բերուլի Պատկանեան



ա. Ճեմարանը հոչակւում էր առաջին կարգի, այսինքն՝ բարձրագոյն դպրոց, համահաւասար իրաւունքներով և առանձնաշնորհումներով ժողովրդական Լուսաւորութեան Նախարարութեան Ենթակայ բոլոր բարձրագոյն դպրոցներին, մասնաւորապէս Ճեմարանը հաւասարւում էր այն ժամանակուայ համբաւաւոր լեկուններին՝ Դեմիդովսկիի, Բեղրօրօդկոյի և Ռիչելիոյի:

թ. Ճեմարանի հինգդասեան դասընթացքը վերածւում էր ութդասեան դասընթացքի. արեւելեան լեզուների դասաւանդութիւնը թէ և պիտի տարուէր բոլոր ութ դասարաններում, բայց մասնագիտորէն պիտի ուսումնասիրուէին վերջին երկու դասարաններում (7րդ և 8րդ). դիմնազիւնական դասընթացքի առարկաները, ի մէջ առեալ լատիներէնը, պահպանւում էին:

գ. Նոր Կանոնագրով, և ապա 1849 թ. դեկտ. 21ին կատարուած լրացումներով ու փոփոխութիւններով, ուսման ծրագրի մէջ մտնում էին հետեւեալ առարկաների դասաւանդութիւնը. 1. Կրօն և Եկեղեցական պատմութիւն. 2. Արեւելեան լեզուներ՝ Հայերէն, պարսկերէն, տաճկերէն, թուրքերէն, արաբերէն, վրացերէն¹. 3. Ռուսաց լեզու և դրականութիւն. 4. Մաթեմաթիկա. 5. Ֆիզիքա. 6. Աշխարհագրութիւն և վիճակա-

¹ Հայերէնը պարտադիր էր Հայ երեխաների համար, վրացերէնը՝ վրացի, թուրքերէնը՝ թուրք աշխատների համար:

գրական տեղեկութիւններ . 7. Ռուսաց և
ընդհանուր պատմութիւն . 8. Ռուսաց օրի-
նագիտութիւն . 9. Լատիններէն . 10. Ֆրան-
սերէն . 11. Գերմաններէն . 12. Վայելչա-
զրութիւն . 13. Նկարչութիւն եւ դժագրու-
թիւն . 14. Մարզանք եւ 15. Պար :

դ. Ճեմարանի Վարչութիւնը ունենալու
էր հետեւեալ կազմը . 1. Գլխաւոր կառավար-
չապետ . 2. Հոգաբարձու . 3. Վերատեսուչ
(զիրեկտոր) . 4. Տեսուչ (ինսպեկտոր) .
5. Խորհուրդ եւ 6. Դիւան (պրաւլնիկ) :

Ե. Իւրաքանչիւր գիշերօթիկ աշակերտի
համար , որ սովորում է իր սեփական հա-
շուով , սահմանուոմ էր ուսման վարձ՝
300 ռուրլի արծաթ տարեկան եւ 35 ռուրլի
մուտքի վճար հազուսափ ու սպիտակեղինի
համար . Երթեւեկ աշակերտների համար ,
որոնք ցանկանում էին ստանալ նախաճաշ ,
նշանակուած էր տարեկան 160 ռուրլի ար-
ծաթ :

զ. Ռւսուցչական կազմը պիտի ունենար՝
4 պլոֆեսորներ , 11 աւագ ուսուցիչներ ,
5 կրտսեր ուսուցիչներ եւ ազա որոշ թուով
դաստիարակներ ու վերակացուներ :

Բացի այդ ամէնը , նոր կանոնագրի մէջ
մտցրուած էր , որպէս հիմնաժկան սկզբունք ,
նաեւ այն , որ Ամենայն Հայոց կաթողիկոսը
հանդիսանում է Ճեմարանի Առաջնադոյն ան-
դամը , իսկ Ռուսաստանի Հայոց թեմակալ
առաջնորդները համարում էին պատուա-
կալ անդամներ :

Միաժամանակ ձեմարանի Հոգաբարձուն, որպէս զեկավար իր զպրոցի, ստանում էր Համալսարանի և Աւսումնական շրջանի Հոգաբարձուներին (попечитель округа) համահաւասար իրաւունքներ . Լազարեանները ճանաչում էին իրենց զպրոցի անկախ տէրեր, իսկ ձեմարանը՝ ստանում էր անկախ դիրք :

Տարակոյս չկայ, որ 1848թ. Կանոնագիրը, որ յաջորդ տարին ենթարկուեց միքանի փոփոխութիւնների ու լրացումների, մի շատ շօշափելի քայլ էր ձեմարանի իրաւական, կրթական ու վարչական մասերի բարեկարգման մէջ : Այդ էր պատճառը, որ այդ Կանոնագիրը առաջ բերեց ընդհանուր դոհունակութիւն թէ ձեմարանի ներսում և թէ դուրսը՝ հասարակական լայն շրջաններում : Եւ մենք ստորեւ կը տեսնենք, որ դրա հետեւանքը եղաւ այն, որ ծայր տուեց մի շարք մասնաւոր նույիրատուութիւնների ձեմարանում թօշակաւոր աշակերտներ պահելու նպատակով :

Այս բոլորով հանդերձ, 1848թուի Կանոնագիրը ունէր խոչոր պակասներ և չբերեց այն, ինչ որ համարում էր բաղձայի և անհրաժեշտ՝ կրթական ծրագրի մէջ մտցնել ներդաշնակութիւն ու նրա հետապնդած աւանդական նպատակների պահպանութիւնը :

Ձեմարանի ստանդական հիմնական նպատակն էր՝ տալ իր սահմերին անպիսի լուրջ կրթական պատրաստականութիւն, որ նրանք

կարողանային անարգել՝ առանց բննութեան
ստանալ բարձրագոյն՝ համալսարանական
ուսում։ 1848 թ. Կանոնագիրը հետապնդում
էր դրան միանգամայն հակառակ նպատակի։
Մի շարք արտօնութիւններ տալով, նա ջա-
նում էր աւելի մեծ զարկ տալ արեւելեան լե-
զունների ուսումնասիրութիւններ, հարկադրել
աշակերտներին նուիրուել այդ մասնագիտու-
թեան, զերագասել այն՝ համալսարանական
կրթութիւնից։ Կառավարութիւնը պէտք ու-
նէր արեւելեան լեզուններ իմացող պաշտօ-
նեանների՝ գործելու զիւանագիտական աս-
պարէզում։ պէտք էին թարգմաններ, պէտք
էին պետական կեանքի մի շարք մարզերում
ծառայողներ։

«1848 թ. մայիս 10ի Կանոնագրով —
ասում է վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլեր,
— 5 դասարանոց Լազարեան Ճեմարանը բա-
րեփոխուեց ու վերածուեց 8 դասարանոց
դպրոցի, որի առաջին վեց դասարանները
դիմնագիտնական դասընթացք պիտի ունե-
նային եւ երկու լիկէոնական։ Սակայն ա-
րեւելեան լեզունները աւանդում էին նաև
դիմնագիտնական դասարաններում ընդհա-
նուր կրթական առարկաների հետ միասին
և շարունակում են աւելի մասնագիտականո-
րէն ուսումնասիրուել լիկէոնական դասա-
րաններում։ Երկու բաժանմունքների ծրա-
գիրը չափազանց խայտարդէտ էր։ այն ակն-
կալութիւնները, որ սպասում էին Նոր Կա-
նոնագրով մտցրուած բարեփոխութիւնից,

չարդարացան։ Ճեմարանի սաները նախկին ձեւով ճղտում էին համալսարան մտնել։ արեւելեան լեզուներով լուրջ զբաղուողների թիւը շատ սահմանափակ էր։ շատերը այդ պարագմունքների վրայ նայում էին որպէս մի տհաճ պարտականութեան վրայ, քանզի որպէս Կովկասեան որդեգիրներ, կաչկանդուած էին։ այս իսկ պատճառով գիմնազիոնական դասարաններում արեւելեան լեզուների դասաւանդութիւնը արդիւնաւէտ չէր։ Հետզհետէ ճեմարանի Խորհուրդի մէջ կարծիք է ստեղծւում, որ անհրաժեշտ է վերաբննութեան ենթարկել ճեմարանի կանոնագիրը²։

Նոյն կարծիքն ունի նաև Գ. Քանանեանը։

«17 տարուայ փորձը (1848—1865), — ասում է նա, — ցոյց տուեց, որ Նոր Կանոնադրի հիմնական միտքը՝ խրախուսել ճեմարանի աշակերտներին զբաղուել արեւելեան լեզուներով եւ չնայած նրանց տրուած բաղմաթիւ առանձնաշնորհումներին, որոնք նպատակ ունէին յետ պահելու աշակերտներին համալսարան մտնելուց, — 17 տարուայ փորձը համոզեցուցիչ կերպով ապացուցեց, որ ճեմարանի աշակերտների մշտական ճղտումը դէպի համալսարան մնացել է անխախտ»։

«Նոր Կանոնագրի ընդհանուր վերաբննութիւնը եւ ծրագրի էական բարեփոխու-

² Տե՛ս «Լազ. ճեմ. 30ամեակը», էջ Ե, Պրոֆ. Միլլէրի հառը։

թիւնը մեր դպրոցի ամենաչօշափելի պահանջն էր կազմում³ :

1848 թուի Կանոնագրի այս պակասաւոր կողմերը, ի հարկէ, դուրսը, հասարակական շրջաններում, չէին գիտակցւում. նրանք գոհ էին, որ ձեմարանը հոչակուած է բարձրագոյն դպրոց, եւ որ նա ստացել է մի շարք առանձնաշնորհումներ եւ իրաւունքներ :

Հասարակութիւնը իր այդ տրամադրութիւնը արտայայտեց դրամական նուիրատուութիւններով՝ մասնաւոր թոշակաւորներ պահելու ձեմարանում :

1. Դեռ 1842 թ. Մոսկուոյի հայ վաճառական Եսայի Գասպարեանը նուիրել էր 50.000 ռուբլի, որպէս զի Երկու որր հայ Երիխաններ հայ առեւտրականներից ուսանեն ձեմարանում որպէս իր որդեկիրներ :

Կայսրը արձագանգում է այս նուիրատուութեան, տալիս է իր հաւանութիւնն եւ պարզեւատրում Գասպարեանին Ս. Ստանիսլավի շքանշանով :

Ուշագրաւ է նուիրատուի պատճառարանութիւնը. նրա դիմումի մէջ, ի միջի այլոց, ասուած է.

«Զրալուելով մի քանի տարի առեւտուրով Ասիայի հետ եւ զգալով, թէ որքա՛ն մէծ օգուտներ կարող էր ստանալ այդ առեւտուրից Ռուսաստանը, եթէ այդ առեւտուրը կա-

³Տե՛ս «Լազ. Ձեմ. 50ամէկակը», Գ. Քանանեանի ճառը, էջ 31:

տարուէր կրթուած վաճառականների ձեռքով
իմ Հայրենակիցներից, ևս որոշեցի ևս այլն» :

2. 1849 թ. Թիֆլիսի քաղաքացի Յովհաննես Մնացականնեամբ նուիրում է 15·000 ռ.
2 որդեզիր պահելու ձեմարանում Անդրկով-
կասի հայ չքաւոր ընտանիքների զաւակնե-
րից իր անունով։ Կայսրը հաստատում է այս
նուիրատուութիւնն և հրամայում յայտնել
նուիրատուին Ն. Կ. Մ. չնորհակալութիւնը։

3. 1857 թուին իշխան Քարաման Արդու-
րեան-Երկայնաբազուկն է նուիրում 11·340 ռ.
արծաթ. մի որդեզրի համար իր անունով.
որդեզիրը պիտի ընտրուէր Անդրկովկասի
հայ չքաւոր ազնուականներից կամ չքաւոր
իշխաններից։ Այս նուիրատուութիւնն եւս
ընդունում է ևս գործազրութեան մէջ զըր-
ւում։

4. 1864 թ. Յովհաննէս Դաւթեան Դե-
րեանովը եւ նրա ամուսինը նուիրում են
10·000 ռ. արծաթ. 2 որդեզիր պահելու
իրենց վաղամեռիկ որդի Քրիստափոր Դե-
րեանովի անունով չքաւոր երեխաններից։

5. 1866 թ. Մոսկուայի փոքրաթիւ հայ
Համայնքը նուիրում է 6000 ռուրլի հաւաքած
Հանգանակութեամբ, ի յիշատակ կայսեր
Ալէքսանդր Բ. ի հրաշագործ փրկութեան
1866 թ. ապրիլ 4ին, մի որդեզիր պահելու
ձեմարանում, թոշակը պիտի անուանուէր
«Ալէքսանդրեան» և տրուէր ձեմարանում
սովորող սաններից ամենաընդունակին։

6. 1867թ. ձեմարանի հոգաբարձու կաշտուք Յովակիմեան Լազարեանցը ի յիշատակ կայսեր ու թագաժառանդի այցելութեան, տրուած ձեմարանին, ինչպէս եւ թագաժառանդի եւ նրա ամուսնու մեծ իշխանուհի Մարիա Ֆէոդորովնայի առաջին այցելութեան Մոսկուային, նուիրում է 10.000ռ. 2 որդեգրի համար ուսւագնուականներից ու պետական պաշտօնեաններից։ Մէկ թոշակը կոչուելու էր «Ալեքսանդրեան-Մարիինսկի»։

7. 1867թ. Եզոր Թամամշեւը, Թէֆլիսեցի, մահից առաջ կտակով նուիրում է 10.000 ռուրլի մի որդեգրիր պահելու ձեմարանում իր անունով։ Որդեգրը պիտի ընտրուէր Անդրկովկասի հայ չքաւոր աղնուականներից կամ միւս դասակարգերից, զերագասելի են որը երեխանները։

8. 1870թ. այրի տիկին Ելիզարէք Յովակիմեան Հայրապետովայ, ծն. Լազարեանը, նուիրում է 10.600 ռուրլի մի զիշերօթիկ եւ 2 կէս-զիշերօթիկ որդեգրիներ հայ որբերից պահելու ձեմարանում։ Թոշակաւորները պիտի անուանուէին՝ «Որդեգրիներ Ելիզարէք Յովակիմեան Հայրապետովայի, ծն. Լազարեանի»։

9. 1873թ. Պետական Խորհրդական Յովաննէս Գրիգորեան Ամիրովի կտակի համացայն կտակարարները նուիրում են 15.000ռ. 2 որդեգրի համար հայ չքաւոր երեխաններից,

որդեգիրները կոչուելու էին «Ամիրովի որդեգիրներ» :

10. 1879թ. Զօրավար Մ. Դ. Սկոբելենի անուան թոշակ :

Կալուզայի Նահանգական Ազնուականութիւնը ի նկատի առնելով զօրավար Սկոբելենի մասուցած մեծ ծառայութիւնները Հայրենիքին, նուիրում է 6000 ռուբլի մի որդեգիր պահել նրա անուան մի որեւէ բարձրագոյն գպրոցում : Զօրավարը ցանկութիւն է յայտնում, որ նուիրատուութիւնը արուի Լազարեան ճեմարանի Լիկէոնին :

11. 1880թ. այրի տիկին Եկատերինա Եմմանուելովնա Լազարեանը (ամուսինը Հոգարարձու Խաչ. Լազարեանի) — մահից առաջ կտակով նուիրում է 40.000 ռուբլի իր անունով 5 որդեգիրներ պահել Լազ. ճեմարանում, երկու որդեգիր սուսահպատակ չքաւոր Հայերից և 3 որդեգիր օտարահպատակ չքաւոր Հայերից :

12. 1868թուին ոռոսահայերի մէջ միոք է յղանում Լազարեան ճեմարանի հարցաքննութիւնների շքեղ դահլիճում զնել վերջին Հոգարարձու Խաչատուր Լազարեանի մարմարէ կիսանդրին և պահել Լազարեանների անուան մի որդեգիր ճեմարանում ի պատիւ այն մեծամեծ բարիքների, որոնք մասուցուած են այդ Հոյակապ տոհմի կողմից : Հանգանակութեամբ Հաւաքւում է 2459 ռուբլի :

Հոդաբարձուի մահից յետոյ՝ 1883թ.
ի կատար է ածւում հայերի այդ ցանկութիւնները:

13. 1876թ. և 1878թ. Արքեպիսկոպոս
Սարգիս Հասան-Զալալեանը մահից առաջ
երկու կտակով թողնում է 25·000 ռուբլի
արծաթ., որպէս զի 125 տարուց յետոյ, երբ
այդ դրամագլուխը աճելով կը կազմի
12,000·000 ռուբլի, ապա այդ գումարի տո-
կոսներով հիմնել եւ պահել գպրոցներ հայ
երեխաների համար: Հանգուցեալը մահից
առաջ ցանկութիւն է յայտնում, որ կտա-
կուած գումարը յանձնուի Լազարեան Ճեմա-
րանին, որն եւ պիտի հսկողութիւն ունենայ
ժամանակին իրագործելու հանգուցեալի
կտակը:

Հանգուցեալի կտակակատարները դրամը
յանձնում են Ճեմարանին 1882թ.:

14. 1888թ. Համաձայն հանգուցեալ Պե-
տական Խորհրդական Դանիել Գաբրիէլեան
Քանանեանի կտակի՝ Լազ. Ճեմարանում
հաստատում է մի որդեգիր «Քանանեան»
անունով: Հանգուցեալը, ինչպէս երեւում է
1866թ. Վլատիկաւկազի դատախազի գրու-
թիւնից, կտակել էր 10·000 ռուբլի, որպէս
զի այդ գումարի տոկոսներով մի որդեգիր
պահուի իր անունով Ճեմարանում եւ մրցա-
նակ տրուի լաւագոյն աշխատանքի համար
Հայոց գրականութեան մասին: Որդեգիրը
պիտի լինէր Ղզլարի չքաւոր հայ երեխանե-

րից, գերապատութիւն տալով Քանանեան
տոհմի երեխաներին:

15. 1887 թ. Տոհմական պատուակալ
քաղաքացի Գրիգորիյ Եակովլեսիչ Մատ-
վելեւը մահից առաջ կտակում է 12.700 ռ.,
Լազ. Ճեմարանին, որպէս զի նրա տոկոս-
ներով իր անունով մի որդեգիր պահուի:
Որդեգիրը պիտի ընտրուի նախապատուու-
թիւն տալով Մատվելեւի տոհմի Երեխանե-
րին, Հակառակ դէպքում, ուրիշ տոհմի Երե-
խաներից, Ճեմարանի ոռւս ուղղափառ դա-
ւանանքին պատկանող սաներից:

16. 1887 թ. այրի տիկին Եկատերինա
Գաշեւսկին նուիրում է 7000 ռ. մի որդեգիր
պաշելու Ճեմարանի սան իր Հանգուցեալ
որդի Յակոբ (Եակով) Գաշեւսկու անունով:
Որդեգիրը պիտի ընտրուէր ոռւս չքաւոր ազ-
նուականների որբերից:

17. 1888 թ. Համաձայն կտակի Հանգու-
ցեալ Ալեքսանդր Մելիքսենդելով Տէր-Յա-
կոբիանի Հաստատուում է Ճեմարանում մի
որդեգիր նրա անունով, որի Համար նուի-
րաբերուած է 10.000 ռուբլի: Համաձայն
կտակի, որդեգիրը պիտի ընտրուէր Գորի
քաղաքի չքաւոր Հայ Երեխաներից:

18. 1890 թ. Հաստատուում է Հաշտար-
խանի բնակիչ Եսայի Էդելխանովի կտակի
համաձայն նրա անուան որդեգիրներ Լազ.
Ճեմարանում Հաշտարխանի չքաւոր Հայ
Երեխաներից, թուով այնքան, որքան նուի-

բարերուած 36·900 սուրլի գումարի տոկոսները կը թոյլատրեն :

Բացի այս մասնաւոր անձանց որդեգիրներից, Լազարեանները ունեցել են ձեմարանում, նրա հիմնադրութեան առաջին խելօրուանից, 30 որդեգիրներ, որոնց թիւը աստիճանաբար աճելով 90ական թուականներին հասել էր 44ի :

Առանձին գաւառական հայ համայնքներ եւս ունեցել են որդիգիրներ Լազարեանների հաշուին :

Այսպէս, Նոր Զուղայի պատմիչ Յառութիւն Տէր-Յովհաննեանը հազորդում է, որ Ն. Զուղայի Թագէոս արքեպիսկոպոսի խնդրանօք Լազարեանները ընդունում են իրենց որդեգիրների շարքը երկու Զուղայեցի երեխաններին : 1857 թ. սեպտեմբերի սկզբին Մոսկուա են հասնում եւ մտնում ձեմարան երկու Զուղայեցի մանուկներ՝ Մարտիրոս Յովհաննիսեան եւ Արդար Հայրապետեան :

Վ. Ագուլիսի (Գողթան) հայ համայնքն էլ ունեցել է երկու որդեգիրներ, կրկին Լազարեանների հաշուին : Ժամանակի ընթացքում երկուսը դարձել էր մէկ :

1887 թ. Վ. Ագուլեցի Մկրտիչ Բարխուդարեանը (յետագայում խմբագիր «Հանդէսդրականութեան ու պատմութեան»ի) աւարտելով ձեմարանը, վերադառնում է իր ծննդավայրը եւ նրա փոխարէն ընտրւում է ծխական դպրոցի աշակերտ Յովսէփ Թագէոսեանը (տողերիս գրողը), որը մեկնում է

նոյն թուի Օգոստոս մէկին Մոսկուա : Սրան ընդունում է ազուլեցի, յայտնի հասարակական գործիչ Մելքոն Փանևանիք, որ այդ ժամանակ Մոսկուայի Հայոց Ա. Խաչ եկեղեցու երէցփոխ էր, և տեղաւորում նրան ձեմարանում :

Յառօք սրտի, մենք տեղեկութիւն չունենք՝ թէ ո՞վ է Եղել Մկրտիչ Բարխուդարեանից առաջ եւ ո՞վ է փոխարինել Յովաչփ Թաղէռականին, 1895 թուին երբ նա աւարտում է իր ուսումը ձեմարանում, վերջապէս, ե՞րբ է Վ. Ազուլիսի հայ համայնքը այդ արտօնութիւնը ստացել Լազարեաններից :

Հայ հասարակութեան գնահատելի վերաբերմունքն եւ մանաւանդ նրա նախկին սաների երախտագիտական զգացումները հանդէպ իրենց alma mater-ի փայլուն արտայայտութիւն է ստանում 1850 թուին, երբ Թիֆլիսի աչքառու հայ քաղաքացիներն ու ձեմարանի նախկին սաները, գլխաւորութեամբ Ներսէս Ե. կաթողիկոսի եւ մասնակցութեամբ Սարդիս վարդապետ Զարալեանցի ու Կարապետ վարդապետ Շահնազարեանցի, նուիրարերում են ձեմարանին 74 հատ հազուագիւտ ձեռագիրներ եւ հայերէն քանկարդէք զրբեր :

Այդ առթիւ նուիրատուները ուղղել էին ձեմարանի հոգաբարձու Յովհաննէս աղա Լազարեանին հետեւեալ ողեշունչ նամակը

* Տե՛ս յիշեալի «Պատմ. Ն. Զուզայու», էջ 105:

Ճեմարանի նախկին սան Ստեփան Մատինեանի ստորագրութեամբ .

«Ծառ տարիների ընթացքում Թիֆլիսի հին գրքերի առեւտրականներն ու Եղբարք ինքիաջեանները, Հաւաքելով Հայկական հնութիւններ, կազմել են չառ թանկարժեք և Հազուագիւտ գրադարան Հայկական ձեռագիրների: Վենետիկի, Կալկաթայի և Զմիւնիայի հայ գիտական ընկերութիւնները գրագրութեան մէջ էին ձեռք բերելու այդ ձեռագիրները:

«Մէնք, Զեր նախկին սանները, միշտ պահպաննելով երախտագիտութեան անշեղ զգացումներ զէպի մեր կրթութեան հեղինակները, վաղուց երազում էինք արտայատել մեր երախտագիտութեան զգացումները մի ընդհանուր քայլով առ մեր բարերարները: Յոյս չունենալով իրազործել մեր մտադրութիւնը մի գործով, որ արժանի լինէր Զեր բարձր անձնաւորութեան ուշագրութեանը, մէնք ձեռք բերինք այս թանկագիրն ձեռագիրները նուիրաբերելու նպատակով Զեր Ճեմարանին, որի ներսում մէնք ստացել ենք մեր բարոյական գաստիարակութիւնն ու մտաւոր զարգացումը, որը կազմում է մեր կեանքի Երջանկութեան հիմը: Թիֆլիսի հայ սպատուաւոր քաղաքացիներից շատերը իմանալով մեր մտադրութիւնը, թախանձանօք խնդրեցին թոյլ տալ բերելու նաեւ իրենց մասնակցութիւնը մեր այս համեստ ձեռնարկին, ցանկանալով Զեր սանների հետ միասին

արտայայտել իրենց խոր յարդանքի և անկեղծ երախտադիտութեան զգացումները դէպի Զեր տոհմին ու Զեր անձնաւորութիւնը Զեր այն անխոնջ խնամքի համար, որ Դուք ունեցել էք Հայկազեան երիտասարդութեան դաստիարակութեան ու յառաջադիմութեան մասին։ Եւ ամէնքը յանձնաբարեցին ինձ, որպէս առաջին ընթացաւարտ սան, որը խորին ակնածութեամբ յիշում է Զեր երջանկայիշատակ հօր՝ Յովակիմ Լազարեանի ծնողական խնամքը մեր մասին, — խնդրել Զերդ գերազանցութիւնը ընդունել Զեզ յատուկ ներողամտութեամբ այս ձեռագիրները, ո՛չ որպէս նուէր, այլ որպէս երախտադիտութեան արտայայտութիւն բոլոր հայերի առ Զեզ, որպէս դեղումն որդիական սիրոյ իրենց բարերար-հօր հանդէպ։

Նամակը ստորագրել են 91 հոգի, որոնց թւում կան, բացի վերը յիշածներից, նաև իշխան Քարաման Արդութեան-Երկայնարազուկը, իշխան Վասիլի Արդութեան-Երկայնարազուկը, Լորիս-Մելիքովը, Ռուսաստանի ազգայի դիկտատորը, Պետրոս Շանչեանը, Ներսիսեանի պարոցի տեսուչը, և այլն։ Կարելի է ասել, որ Թիֆլիսի այդ ժամանակուայ հայ հասարակութեան ընտրանին էր բերել իր մասնակցութիւնը⁵։

Իրենք՝ Լազարեաններն էլ ամէն կերպ չանում էին ժողովրդականացնել իրենց

⁵ Տե՛ս «Լազ. ճեմ. 50ամէկակը», Յաւելուած, էջ 84—86։

դպրոցը ու բարոյական կապեր հաստատել հայ, ուսւ ու եւրոպական ականաւոր անձանց հետ:

Այս նպատակով նրանք պատռակալ անդամներ էին ընտրում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն ձեւով ու գործով արտայայտել էին իրենց բարեացակամ վերաբերմունքը ձեմարանի հանդէպ:

Եւ ձեմարանը 1865 թուին արդէն ունէր 108 հոգի պատռակալ անդամներ, ընտրուած աշխարհի բոլոր ծագերից ու ազգերից:

Այդ անուանացուցակի մէջ նշմարելի տեղ են դրաւում հայ եւ օտար գիտնականներ, հայ բարձրաստիճան հոգեւորականներ ու պետական բարձր պաշտօնեաները:

*

Այս ժամանակաշրջանում տեղի է ունենում մի ողբերգական գէպք, որ անհուն վիշտ է պատճառում Լազարեանների ամրող գերդաստանին ու հայ հասարակութեան, բայց որը միաժամանակ տխուր առիթ է ծառայում մի նոր կրթական մեծարժէք ձեռնարկի սկզբնաւորութեան ձեմարանում:


1850 թ. վախճանեում է Խաչատուր Յովակիմեան Լազարեանի մինուճար զաւակը՝ տոհմի շարունակող միակ ժառանգը՝ մասուկն Յովհաննիս կաչատուրեան Լազարեանը . . . :



Ա. Ե. Բ. Դախտակրթաբանների
ոշակերտները. աջ՝ Կարապետ Կուսիկեան
ձախ՝ Առեփան Տէր-Մարգիսեան



Լիլենի Ա. Դասընթացքի ուսանողները
ձախ՝ Պրոֆ. Միրզա Զավֆար
աջ՝ Պրոֆ. Ալուայեան



Վշտահար ծնողները որոշում են յաւերժացնել նրա յիշատակը և նուիրում են 60·000 ռուբլի արծաթ (180·000 ռուբլի թղթադր.) բանալու մի նախակրթարան դասարան նրա անունով :

1851թ. Փետրուար 7ին հայրն ու հօրեղբայրը՝ Յովհաննէս Լազարեանը, գրաւոր դիմում են կատարում գլխաւոր կառավարչապետ կոմս Օրլովին և յայտնում իրենց ցանկութեան մասին :

Այդ նամակի մէջ ասուած էր .

«Զրկուելով մեր մինուճար ժառանգից, փոքրահասակ Յովհաննէս Լազարեանից, որը մեր տոհմի շարունակողի յոյսն էր մեզ ներշնչում եւ միաժամանակ պիտի լինէր իր նախահայրերի սկսած բարի գործերի շարունակողը, մենք որոշեցինք հանգուցեալի անունից նուիրել 60·000 ռ. արծաթ, որպէս զի ծեմարանում բացուի մի նախակրթարան դասարան, ուստի վստահանում ենք ցանկութիւն յայտնել, որ այդ բաժանմունքը, որը հիմնուելու է նրա յիշատակին, կրի՝ «Նախակրթարան բաժանմունք մանուկ Յովհաննէս Լազարեանի անունը» :

Այս զիմումը յարգւում է . կայսրը տալիս է իր հատանութիւնը և 1851թ. Փետրուար 10ին սկիզբ է առնում այդ նոր կրթական ձեռնարկը, իր ներքին կանոնագրով ուսումնական դրագրով :

II.

1848թ. Նոր Կանոնագիրը, ասացինք,
չնայած իր մի շարք մեծ առաւելութիւններին, ոյնուամենայնիւն նա չէր լուծում ձեմարանի կրթական ծրագրի բարեփոխման հետ կապուած բոլոր խնդիրները։ Նրա վերաքննութեան պահանջը շատ շուտ զգացուեց։

Մասնաւորապէս բաւարարուած չէր ձեմարանի վերջին հոգաբարձուն՝ ծերունի ետաշատուր Լազարեանը։ Որքան նրա տարիքը յառաջանում էր, այնքան զօրանում էր նրա մէջ մտահոգութիւնը ձեմարանի ապագայի նկատմամբ ու նրա վերջնական նպատակայարմար ծրագրի մասին։

Ձեմարանի յարատեւութեան միակ գրաւականը նա տեսնում էր միայն մի միջոցի մէջ՝ ենթարկել ձեմարանը ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան եւ նրա անմիջական ղեկավարութեան։

Այս միտքն ու բաղձանքը նոր չէին. այդ միտքը յղացել էր գեռ նրա հայրը՝ Յովակիմ աղան, բայց այդ ուղղութեամբ նրա թափած ջանքերը յաջողութեամբ չէին պատկուել

Ձեմարանը արդէն բոլորում էր իր 50ամեակը, բայց զեռ զանուում էր անորոշ զինակում թէ իրաւական տեսակէտից, թէ կրթակած ծրագրի մէջ ներդաշնակութիւն մտցնելու անհրաժեշտութեան կողմից։

Նոյն մտահոգութիւններն ունէր նաև ձեմարանի նոր գլխաւոր Կառավարչապետ

Վլադիմիր Բուտկովը, որ յաջորդել էր կոմս
Օրլովին 1860 թուին:

Վ. Բուտկովի ուշադրութիւնից չսպրզեց
այն շատ կարեւոր հանգամանքը, որ Ռու-
սաստանի ընդհանուր բարենորոգումների
շարքում Ալեքսանդր Բ. կայսեր օրօք, ար-
դէն կայսեր կողմից հաստատուած էր և
հրատարակուած նոր դպրոցական կանոնա-
գիր ամբողջ կայսրութեան բոլոր գիմնա-
զիոնների համար. ըստ այդ Կանոնագրի գիմ-
նազիոնների շրջանաւարտները իրաւունք էին
ստացել առանց քննութեան մտնելու հա-
մալսարան: Արդ, Եթէ ձեմարանը շարունա-
կէր դուրս մնալ կայսրութեան միջնակարգ
դպրոցների ցանցից, ապա նրա ուսումնա-
ւարտները չպիտի կարողանային անարդել
ժանել համալսարան . . . :

Այս հանգամանքը ի նկատի առնելով,
ձերունազարդ հոգարաբարձուն պատուիրում է
ձեմարանի վերատեսուչ Պրոֆ. Բաբստին,
որ 1864 թ. Մայիս 23ից այդ պաշտօնի մէջ
էր, — կազմել իր նախագահութեամբ յա-
տուել յանձնաժողով մշակելու ձեմարանի
համար նոր Կանոնագիր, համաձայնեցնելով
ձեմարանի ուսումն. ծրագիրը 1864 թ. ընդ-
հանուր դպրոցական ծրագրի հետ:

Յանձնախմբի անդամներն էին՝ Պրոֆ.
Մ. Էմինը, Պրոֆ. Ստ. Նազարեանցը, Պրոֆ.
Տիխոնրաւովը, տեսուչ Գ. Քանանեանը և
երկու ուսուագուցական ծրագրի հետ:

Յանձնախումբը սկսեց իր աշխատանքները 1864 թ. Նոյեմբերին և եկաւ այն եղածակացութեան, որ Ճեմարանը պիտի պահպանի իր մասնագիտական նպատակը՝ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը՝ պատրաստելու երիտասարդ ուսանողներին ծառայելու Արեւելքում, միաժամանակ պիտի նախկին ձեւով ունենայ իր գիմնազիոնական դասընթացքը. միայն վեց դասարանների վրայ աւելացնել նաև հօֆներորդը. բացի լատիներէնից աւանդել նաև յունարէնը և այդպիսով Ճեմարանի գիմնազիոնական բաժինը հաւասարեցնել պետական գիմնազիոններին, համաձայն 1864 թ. Պետական գորրոցների Նոր Կանոնադրի, որով Ճեմարանի աշակերտաները հնարաւորութիւն կ'ունենան անարգել, առանց յատուկ քննութեան, շարունակել իրենց կրթութիւնը համալսարանում:

Արեւելեան լեզուների դասաւանդութեան նկատմամբ Յանձնախումբը դալիս է այն եղածակացութեան, որ նրանց դասաւանդութիւնը Գիմնազիոնական դասարաններում պիտի խոպառ վերացնել և կենտրոնացնել յատուկ մասնագիտական դասարաններում՝ Լիկէոնում, եւ որպէս զի այդ լեզուները հիմնովին իւրացուին, երկու տարուայ դասընթացքը վերածել երեք տարուայ դասընթացքի:

Կրթական գործի միայն նման կազմակերպութեամբ Ճեմարանը ի վիճակի կը լինի լրիւ ու պատշաճ ձեւով իրագործել իր հիմնական երկու նպատակները՝ տալ իր սահե-

րին լրիւ ու լուրջ միջնակարգ կրքուրիւն եւ ապա արեւելեան լեզուների ուսումնասիրուրիւնը դնել ամուր հիմքերի վրայ : Այս պայմաններում միայն ձեմարանը իրագործած կը լինի իր հիմնաղիրների ի սկզբանէ հետապնդած նպատակները ու նաև յարատեւել իր գոյութիւնը, գուրս գալով իր իրաւական ներկայ խախուտ վիճակից :

Յանձնախումբը միաժամանակ վերացրեց հոգեւորականներ պատրաստելու առանձնայտուկ ծրագրի կիրառումը գիմնազիոնական բաժնում, արտայայտելով այն առողջ միտքը՝ որ հոգեւորական դասի համար պատրաստուող սաներն եւս պիտի ունենան լուրջ մտաւոր զարգացում եւ ընդհանուր կրթութիւն, քանզի ինչպէ՞ս կարելի է լինել կըրթուած ու արժանաւոր հովիւ իր հօտի համար առանց լրիւ միջնակարգ՝ գիմնազիոնական ուսումի:

Յանձնախումբը, ներկայացնելով իր այս բարենորոգչական ծրագիրը, հրաւիրեց Հոգարարձուի ուշադրութիւնը այն հանդամանքի վրայ, որ նրա կիրառումը կը պահանջի նոր յաւելեալ զբանական միջոցներ, մինչդեռ ձեմարանը չունի այդ միջոցները պահանջուած ծախսերը հոգալու :

Խաչատոր Լազարեանը անմիջապէս (Մարտ 25ին 1865թ.) յայտնեց ձեմարանի վարչութեան, որ նուիրում է ձեմարանին 200.000ռուբլի այդ յաւելեալ ծախսերը ծածկելու համար :

Այս խոչոք նուիրատուութիւնը խոք տպաւորութիւն է թողնում ձեմարանի թէ վարչութեան և թէ Յանձնախմբի անդամների վրայ և ապա արժանանում նաև կոյսիր ուշագրութեան, որ չի յապաղում պարզեւատրել նուիրատուին Սպիտակ Արծուի չքանչանով :

«Այս ծրագիրը, — ասում է վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլէրը — պէտք էր առանց յառաջման գործադրել, քանի որ 1864 թ. դիմնադիտների Նոր Կանոնագիրը մտել էր իր ոյժի մէջ և ձեմարանին վտանգ էր սպառնում՝ զրկուել իր ընթացաւարտ աշակերտներին համալսարան ուզարկելու իրաւունքից : Այս իսկ պատճառով ձեմարանի գլխաւոր Կառավարչապետ Բուտկովի թոյլտուութեամբ ոկտոբեց Նոր Կանոնագրի աստիճանական գործադրութիւնը (Երկու հին լեզուների՝ լատիներէնի և յունարերէնի դասաւանդութիւնը) գիմնազիոնական դասարաններում և միաժամանակ աստիճանական զատումը այդ դասարաններից արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, որոնք պիտի կենտրոնացնին բարձրագոյն կամ Մասնագիտական դասարաններում » :

Այս բարենորոգումը զուդադիսկեց ձեմարանի 50ամեակին, որը Հոգարարձուն՝ կաչատուր Լազարեանը ուզում էր մեծ հանդիսաւորութեամբ տօնել, և արդէն պատ-

⁶ ՏԵ՛ս «Լ. Ճ. 30ամեակը», էջ 2—է :

բաստուում էր Պետերբուրգից Մոսկուա դալ
և ներկայ լինել հանդէսին, չնայած որ հի-
ւանդութիւնից ծերունին շատ էր տառա-
պում: Բայց վիճակուած չէր նրան այդ ու-
րախութեան մասնակից լինել:

Վախճանուում է այդ ժամանակ Մեծ իշ-
խան գահաժառանգը և տօնակատարութիւնը
տեղի չի ունենում. յետաձգւում է աշխան՝
Ակապեմբեր 12ին նոյն 1865 թուին. այդ ժա-
մանակ Հոգարարձուն արդէն մեկնել էր ար-
տասահման բուժուելու:

Յորելենական հանդէսը թէեւ շատ հա-
մեստ կերպարանք ունէր, այնուամենայնիւ
մամուլի և հասարակութեան ուշադրութեան
առարկայ եղաւ: Այսպէս, յայտնի հրապա-
րակախօս Կատկովը իր թերթում՝ «Մոս-
կուայի Լրաբեր»ում («Մոսկովսկի Վէդո-
մուստի») գրել էր հետեւեալ ուշադրաւ տո-
ղերը.

«Լազարեան Շեմարանը Արեւելեան լե-
զուաց տօնեց իր զոյսւթեան 50ամեակը:
Հանդէսը յաւէրժացուած չէր կերուխումով,
որը նման դէպքերում սովորական են, եւ
չունէր արտաքին փայլ ու չուք, բայց ամենա-
փառահեղ յորելեաններն իսկ նրա համեմա-
տութեամբ զարկանում են: Հասարակութեան
յայտնեցին երկու ծանրակշիռ տեղեկութիւն՝
Հոգարարձուն զարդարել էր հանդէսը նուի-
րաբերելով խոշոր գումար՝ 200.000 ռուբլի
և որ Շեմարանը այդ նուիրատուութիւնը,
որ թագաւորական առատաձենութեամբ էր

արուած, կ'օգտագործի բարեկարգելու այն
եւրոպական ձեւով։ Կարելի՞ էր, արդեօք,
աւելի փոսյլուն ձեւով տօնել մի զպրոցի յո-
րելեանը» :

*

Նոր կանոնագրի բարերար ազգեցութիւնը
ձեմարանի կեանքի վրայ շատ շուտով ար-
տայայտուց. ամենից առաջ աշակերտների
թիւը սկսեց աճել: 1866—1867 ուս. տարում
ձեմարանը ունէր միայն 144 գիշերօթիկ և
9 հոգի երթեւեկ աշակերտներ, ընդամէնը՝
153 հոգի: 1874—1875 ուս. տարում ձեմա-
րանը արդէն ունէր՝ 185 գիշերօթիկ և 49 եր-
թեւեկ աշակերտներ, ընդամէնը՝ 234 հոգի:

Բայց մի հիմնական խնդիր մնաց չլու-
ծուած՝ ձեմարանի իրաւական վիճակը շա-
րունակում էր մնալ անորոշ, որ մեծ ան-
հանգստութիւն էր պատճառում թէ ծերունի
հոգարարձուին և թէ հայ հասարակութեան:
Աաշատուր Լազարեանը այն տարիքում էր,
որ կարող էր անակնկալօրէն կնքել իր մահ-
կանացուն և ձեմարանը կը մնար անտէր-
անտիրական . . . :

Այս գետնի վրայ առաջ եկաւ հասարա-
կութեան մէջ մտքերի շփոթ . . . : Ոմանք կար-
ծիք էին յայտնում, որ ձեմարանը պիտի
փոխագրել կովկաս, իսկ ամենայն Հայոց կա-
թողիկոս Գէորգ Դ. յայտարարեց, որ կա-
շատուր Լազարեանի մահից յետոյ ձեմա-
րանը պիտի հնիմարկուի նրա հոկտութեան
և հովանաւորութեան . . . :

Այս առաջարկներից Ե՛ւ ո՛չ մէկը չէր ժպտում իրեն՝ Ա. Լազարեանին:

Այս ծանր մոմենտին մի նոր անակնկալ հարուած իջաւ ձեմարանի դլխին :

Վերատեսուչ Բարստը, որ յաճախ արձակուրդներ էր վերցնում ու բացակայում ձեմարանից, իր հրաժարականը տուեց. Հոգարարձուն, թէեւ դառնութեամբ, ընդունեց հրաժարականը:

Միեւնոյն ժամանակ դլխաւոր Կառավարչապետը, առանց խորհրդակցելու ձեմարանի վարչութեան եւ Հոգարարձուի հետ, խորհրդակցելով իր հրաժարականը տուած վերատեսուչ Բարստի հետ, կայսերական հրամանագրով հրատարակում է 1868 թ. Ապրիլ 14ին հետեւեալ որոշումները:

1. Թողնել Լազարեան ձեմարանը իր ներկայ պայմաններում մինչեւ Հոգարարձուի վախճանը, իսկ նրա մահից յետոյ ձեմարանը իր ամբողջ շարժական ու անշարժ ունեցուածքով, որ պիտի կազմի նրա անձեռնմխելի սեպհականութիւնը, փոխանցել ժողովրդ. լուսաւորութեան նախարարութեան, մտցնելով ձեմարանը այդ մինիստրութեան դպրոցական ցանցի մէջ:

2. Ընդ միշտ պահպանել նրա Լազարեան անունը:

3. Թողնել անձեռնմխելի ներկայումս դոյութիւն ունեցող թոշակների քանակը, սահմանուած հայ չքաւոր երեխաների համար:

4. Այժմ Հանքարաբձուի փոխարէն հաստատել պատուակալ Հոգարաբձուի կոչում եւ այդ կոչումը վերապահել Խաղարեանների տռհմի աւագ անդամին:

5. Ճեմարանի կրթական ծրագրի մէջ մտցնել լատիններէնի եւ յունարէնի դասաւանդութիւնը հանդերձ պետական զիմնադիոնների լրիւ դասընթացքով եւ կիրառել այն բոլոր որոշումները, որոնք նախատեսուած են 1864 թ. Նոր Կանոնագրով:

Եւ ո՞չ մի խօսք արեւելեան լեզուների մասին. պարզ էր, որ այդ որոշումների հեղինակները վերացրել էին այն ու ճեմարանը վերածել մի հասարակ միջնակարգ դպրոցի . . . :

Այդ որոշումների հրատարակութիւնը ստաջ բերին մեծ տրատնչներ հասարակութեան ու մամուլի մէջ եւ շատ ծանր տպաւորութիւն թողին ճեմարանի վարիչների վրայ . . . :

«Այսպիսով, — ասում է վերատեսուչ Պրոֆ. Միլլերը, — այս բարենորոգումների ծրագիրը, որ մշակուած էր Մոսկուայում եւ որը նպատակ ունէր պահպանել արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, զատելով նրանց մասնագիտական դասարաններում, կանգ առաւ կէս ճանապարհին: Լիկէոնական դասարանները աստիճանարար պիտի փակուէին եւ ճեմարանը պիտի դառնար Մոսկուայի զիմնադիոններից մէկը . . . :

«Այս անտեկնեալ տնօրինումը ձեմարանի հակատագրի եւ արեւելագիտութեան ոչոքի չբաւարարեց՝ ամէն կողմից եւ հասարակական շրջաններում եւ մամուլի մէջ բարձրացան տրտունջներ արեւելեան լեզուների դաստաննդութեան վերացման պատճառով, մի բան, որը կարիք ունէր բարեփոխութեան եւ ո՛չ ջնջելու։ Ձեմարանի կրթական ծրագրի աններդաշնակութիւնը եւ նրա բազմազանութիւնը խաթարում էին ընդհանուր կրթական դործը, բայց եւ այնպէս իր գոյութեան մի շարք տարիների ընթացքում ձեմարանը պահպանում էր արեւելեան լեզուների ուսումնասիրութիւնը եւ տուել է լաւ պատրաստուած պաշտօնեաններ վարչական ու դիւանագիտական մարզերում Արեւելքում (անուանենք Հէնց Պոլոսյ մեր այսօրուայ արտակարգ գեսապան Զինովիւին, որ մեր Լիկէոնի 1851 թ. շրջանաւարաններից է եւ պարսկական զրականութեան մագիստրոս)։ միաժամանակ ձեմարանը իր շուրջն էր հաւաքել արեւելագէտ պրոֆեսորներ ու դաստուներ։ զրա հետ միասին ձեմարանը ասպել էր իր Եկամուտներով եւ առանց զրամական օժանդակութեան կառավարութեան կողմից։

«Բարերախտարար ձեմարանի համար, այս տխուր կացութիւնը երկար չտեւեց։ Ծնորհիւ նոր վերատեսուչ նիկոլայ Դաւիդովիչ Դելենինվի, որն իր պաշտօնի մէջ մտաւ 1869 թ. ապրիլին, եւ նաւմանաւանդ տեսուչ Դէորդ Քանիանին և ուանդին, ինչողէս եւ աղ-

գեցիկ աջակցութեան ձեմարանի Նոր Գլխաւոր Կառավարչապետ և միաժամանակ Ժողովրդ։ Լուսաւորութեան նախարար կրմս Դեմետրի Անդրեևիչ Տոլստոյի⁷ ձեմարանի և արեւելագիտութեան ճակատագիրը որոշուեց ամենաբարեյաջող կերպով։

«Կոմս Տոլստոյը, լսելով Գ. Քանանեանի զեկոյցը, պատրաստուած ձեմարանի Խորհուրդի կողմից, մեծ համակրանքով վերաբերուեց արեւելեան լեզուների դաստանդութեան և ձեմարանի իրաւունքների վերանորոգման խնդրին։ Արդիւնքը եղաւ այն, որ համաձայն Կոմս Տոլստոյի այդ խմաստով յարուցած բարեխօսութեան 1870թ. Մայիս 30ին կայսեր բարձրագոյն հրամանը եղաւ՝ «քունի Լազարեան ձեմարանում Մասնագիտական դասարանները⁸։

Բայց Գլխաւոր Կառավարչապետը այդքանով էլ չըրաւականացաւ։ Նա ձեմարանի շահերը այնքան իր սրտին մօտ էր առել, որ իր աշխատանքները առաջ տարաւ, որպէս զի միանգամ ընդ միշտ ձեմարանի թէ կրթական ծրագիրն և թէ իրաւական վիճակը հաստատուն հիմքերի վրայ դնի։

Կոմսը ժամանում է Մոսկուա 1870 թ. Օգոստոս 21ին. Երկու օր նուիրում է ձեմարանի ծանօթութեան չենքի և ապա ձեմա-

⁷ Գլխաւոր Կառավարչապետի պաշտօնը կոմս Տոլստոյը, համաձայն Հոգաբարձուի խնդրանքին, բնուանեց 1870 թ. Մայիսին։

⁸ Տե՛ս «Լ. Ճ. Ի. կայսերի 30ամեակը», էջ կ—ժ։

բանի պատմութեան հետ կապուած բոլոր ժամանակամասն եւ ուշադիր ուսումնասիրութեան։ Օգոստոս 25ին նա հրամակում է ժողովի ձեմարանի վերատեսչին, տեսչին, պրոֆեսորներին եւ դասատուներին. լսում է ամէնքի կարծիքը եւ այնուհետեւ մշակում է ձեմարանի համար նոր դպրոցական Ծրագիր ու Կանոնագիր, որն այնուհետեւ 1871 թ. հաստատում է բարձրագոյն հրամանագրով։ 1870 թ. Հոկտեմբերին բացում են Մասնագիտական դասարանները նոր հիմունքներով։

«Նոր կանոնագրի գործադրութիւնը, — ասում է Գ. Քանանեանը — թողեց ամենուրեք շատ մխիթարական եւ ուրախալի տպաւրութիւն։ չորս կողմից ստացուեցին ողջոյնի արտայայտութիւններ, որոնց թւում նաև ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Դ.ից⁹։

Այդ տպաւրութեան տակ հայ համայնքները ցանկութիւն են յայտնում դնել ձեմարանի Հարցաքննութեան շքեղ դահլիճում (Актовая зала) ձեմարանի Հոգաբարձուի՝ Խաչատուր Լազարեանի մարմարէ կիսանդրին հանգանակուած զումարով, որն եւ իրազործում են 1870 թուին։

*

⁹ Տե՛ս «Լազ. ձեմ. 75ամեկակը», էջ 44։

Լաղարեանի Շեմաբանի առաջին 50ամ-
մետկի համառօտ տեսութիւնը, որտ ապրած
զարդացման վուլերի հակիրճ նկարագրու-
թիւնը, որն ստիպուած եղանք հասցնել մին-
չեւ 1871թ., որպէս զի ամբողջացրած լի-
նենք ընդհանուր պատկերը, եզրափակում
ենք Գ. Քանանեանի խօսքով, առուած Շե-
մաբանի 50ամմետկի հանդիսաւոր հաւաքոյ-
թին՝ 1865թ. Մեզտեմբեր 12ին:

— «Մենք տեսնում ենք, որ անթիւ էին
Լաղարեան տոհմի մասուցած ծառայու-
թիւնները Շեմաբանին. այդ տոհմի անդամ-
ները ո՞չ միայն ստեղծեցին մի մեծ հաստա-
տութիւն յօդուա ամբողջ հասարակութեան,
այլ եւ պահպանեցին այն ամբողջ 50 առ-
րուայ ընթացքում: Միաժամանակ մենք չենք
կարող լուսութեամբ անցնել այն անձանց ըե-
րած ծառայութիւնները, որոնք մեծապէս
նպաստեցին մեր դպրոցի ներքին կեանքի
զարդացման:

«Հիմնադիրների միտքը դարձնել իրենց
հաստատութիւնը իրենց հայրենակիցների
բարոյական ու մտաւոր վերածնութեան վայր,
պահանջում էր միջոցներ, որոնցից զբկուած
էր հայ աղղը, որ քաղաքական ճակատագրի
քմայքով կարուած էր հին ժամանակներում
ունեցած իր հարուստ մտաւոր գանձերից:
Պէտք էր նորից ստեղծել այդ միջոցները, այդ
ուսումնական գործիքները, սովորելու իրենց
մայրենի լեզուն ու կրօնը: Ծանր ու դժուա-
րին էր պարտականութիւնը այն անձանց,

որոնց վստահացել էին Լազարեան ձեմա-
րանի առաջին սաների կրթութիւնը՝ սովո-
րեցնելու նրանց իրենց մայրենի լեզուն և
իրենց նախահայրերի հաւատքը։ Բայց այդ
գժուարութիւնը յազթահարուած էր զործու-
նէութեամբ ու ջանքերով այն սնձանց, որոնք
բերին իրենց տաղանդն ու ջանքերը ձեմա-
րանի յառաջադիմութեան զործին։ Խօսելով
այդ սնձանց մասին, մենք չենք կարող չի-
շատակել զոնէ մի քանիսներին՝ Սալլան-
թեանին, Էմինին, Մուսեանցին ու Նազա-
րեանցին։ Էմինի հեռաւոր Հնդկաստանից
գալն արդէն ապացոյց էր, որ վաղ ժամա-
նակներից ոկտոս ձեմարանը իրեն ձգող մի
ոյժ էր։ Ձեմարանում սուանալով իր կրթու-
թիւնը, Պ. Էմինը լիովին հասուցեց իր բա-
րոյական պարտքը իր alma mater-ին։ Նա ձե-
մարանի սաների ձեռքը տուեց դպրոցական
ձեռնարկներ իւրացնելու գրարարն ու Հայոց
հին գրականութիւնը, իսկ ուռւա գրականու-
թեան նա նուիրաբերեց հայկական դպրու-
թեան և պատմութեան յիշատակարանների
թարգմանութիւնները։ Երախտագիտական
խօսք ունինք ասելու նաև զիտնական արքե-
պիսկոպոս Սալլանթեանին, Պ. Մուսեանցին
և Պն. Նազարեանցին իրենց աշխատանքների
ու զործունէութեան համար։ Սրանցից իւրա-
քանչիւրը բարեխղճօրէն և աղնուօրէն բե-
րել է իր աշխատանքը յօդուտ այն զործի,
որը մատնանշուած է եղել Հիմնադրի կող-
մից։

«Մի չափազանց ուշադրաւ եւ համակրելիքնի երեւոյթ եւս նկատուած է Լազարեան ձեմարանի ամբողջ կէս տարուայ կեանքի մէջ :

«Սակաւ չեն դէպքերը, երբ մի հիմնարկութիւն, որի մէջ համախմբուած են լինուած այլացեղ եւ այլակրօն տարրեր, արհամարհելով նրա վեհ կոչուամը, գառնուած է ասպարէդ կրօնական ու ցեղային կորստարեր հակամարտութեան : Հազիւ թէ գտնուի մի այլ հիմնարկութիւն նոյն չափով, ինչ չափով Լազարեան ձեմարանն է եղել ազատ ու մաքուր այդ սկզբունքներից : Ազնիւ ծառայութիւնը դաստիարակութեան վսեմ գործին երրեք չի մթագնուել որ եւ է կողմնակի ձգտումների խառնուրդով : Այն անձինք, որոնք կանգնած էին մեր դպրոցի գլուխը, ինչպէս եւ նրանք, որոնք ղեկավարել են երիտասարդութեան դաստիարակութեան ու կրթութեան գործը, հաւասարապէս պարզ ու յստակ կերպով ըմբռնել են իրենց պարտականութիւնների վեհութիւնը եւ խանդախոռուած ազնիւ քաղաքացու եւ ազնիւ դաստիարակի ոգով, ներշնչել են նոյնը իրենց աշակերտներին : Ձեմարանի տարեգրութեան մէջ չի կարելի մատնանշել նոյն իսկ մի դէպք, որը այդ իմաստով մի մութ րիծ դրոշմէր նրա զործիչների անուան վրայ : Ձեմարանի բազմաթիւ այլակրօն սաները միշտ կապուած են եղել միմիանց հետ, որպէս մի ընտանիքի զաւակներ : Նրանց սրտերում խորապէս արմա-

ասցել էր մի զիտակցութիւն, «ը նրանք եղ-
րայրակիցներ են և զաւակներ մի մեծ Երկրի:
իր յիսնամեաց կեանքը բոլորելով, Լազա-
րեան Ճեմարանը կարող է պարծանքով թուել,
որ նրա ծոցում սնուել են, մեծացել եւ այդ
զգացումների մէջ ամբացել հազարից (1000)
աւելի սաներ ¹⁰. այլապան կրօնների, այլա-
զան ձագումով, որոնք այսօր ցրուած են լայ-
նատարած Ռուսաստանի բոլոր ծայրերում եւ
որոնք ծառայել ու ծառայում են նրան, նուի-
րելով իրենց մտաւոր ու բարպական ոյժերը:
Շատերը նրանցից իրենց վաստակով ու
չնորհքներով դարձել են արժանաւոր քաղա-
քացիներում, նրանք ամէնքը զանազան առօպա-
րէզներում եւ հասարակական գործունէու-
թեան զանազան աստիճաններում, պատկա-
նում են պետութեան օդաւանէ ու ու ազնիւ ծա-
ռայողների շարքին»:

**

¹⁰ Իրօք՝ 1128 Հոդի:

ԳԼՈՒԽ Ե.

Ա.ԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՑԻՄԱՄԵԱՎԻ
ԱՌԱՋԻՆ 25ԱՄԵԱԿՈՒՄ
(1865—1890)

Այս 25ամեակում, ինչպէս եւ հետագայում՝ մինչեւ իր գոյութեան վախճանը՝ 1918թ., ձեմարանը չի ենթարկուել որ եւ է ցնցումի կամ լուրջ փոփոխութիւնների: Նրա կեանքը ընթացել է խաղաղ ստեղծադործ աշխատանքների մէջ, որով աւելի եւս մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել հայ և ուսւ հասարակութիւնների մէջ: Այդ ժողովրդականութեան առաջին հետեւանքը եղել է այն, որ աշակերտների թիւը աստիճանաբար աճելով 1890թ. հասել է 300 հոգու, որոնցից գիշերօթիկների թիւը միշտ գերակշռել է երթեւեկների թուի հետ համեմատած, իսկ գիշերօթիկների մէջ հայ երեխաները կազմել են ահազին մեծամասնութիւն: Աշակերտների այս քանակը պահպանուել է մինչեւ վերջ:

Հին շէնքի տարողութիւնը այդքան աշակերտների համար անբաւարար էր, ուստի ձեմարանի վարչութիւնը ընդարձակել էր կից նոր շէնքերով: Կառուցուել էր հսկայ դահլիճ մարզանքի համար, իսկ նրա վերին յարկում՝ երկու մեծ սենեակներ, որոնք յետաղայում յատկացուեցին գիշերօթիկ աշակերտութեան սերտողութեան ժամերի համար: Այն նոր շէնքը կառուցուեց Բեսարա-

բեայի հայ կալուածատէր Մանուկ Բէյի նիւթական միջոցներով։ Այս իսկ պատճառով մարդանքի ընդարձակ սրահը կոչւում էր՝ «Մանուկ Բէյի սրահ»։ 1928 թուին այս սրահն ու վերի երկու սենեակները Հրդեհի ճարակ էին դարձել։

Ճեմարանի նախկին Կանոնագրերի որոշ յօղուածներ դեռ շարունակում էին պահպանել իրենց ոյժը եւ ստեղծել շփոթ։ Հարկ զգացուեց ընդհանուր վերաքննութեան ենթարկել բոլոր եղած Կանոնագրերը, ոկտած 1848 թուից, եւ մի վերջնական ամրողական Կանոնագիր տալ Ճեմարանին։

Այս նպատակով Հոգաբարձուի կարգադրութեամբ կազմուում է յատուկ յանձնաժողով վերատեսչի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ տեսչի, դասատուների ու պրոֆեսորների։

Այդ յանձնախումբը իր աշխատանքները աւարտում է դեկտեմբեր 14ին, երբ արդէն կնքել էր իր մահկանացուն Ճեմարանի վերջին հոգաբարձուն՝ Խաչատուր Յովակիխմեան Լազարեանը։

Այս նորամշակ Կանոնագիրը կայսերական բարձրագոյն հրամանով հաստատուում է 1872 թ. 16 դեկտեմբերին, որով առաջնորդուել է այնուհետեւ Ճեմարանը մինչեւ 1918 թ.։

Այս Կանոնագրի մշակման ու վաւերացման մեծամարդէս նպաստել էր ինքը դիմաւոր Կառավարչապետը՝ ժողովրդ. լուսաւորու-

թեան նախարար Կոմս Տոլստոյը, որեւ անմիջապէս կանոնադրի հաստատումից յետոյ ներկայացնում է իր հրաժարականը — գլխաւոր կառավարչապետութիւնից, քանի որ Նոր կանոնագրով այդ պաշտօնը վերացուել էր եւ ձեմարանը ևնթարկուել էր ժողովրդ։ լուսաւորութեան նախարարութեան։

Այդ առթիւ ձեմարանը 1873 թ. փետրուար 12ին չնորհակալական սրտառուչ ուղերձ է ներկայացնում կոմս Տոլստոյին այն մեծ ստեղծագործ ու բեղուն աշխատանքների համար, որ կոմսը ցուցադրել էր իր կառավարչապետութեան ևոամեայ գործունէութեան բնթացքին յօդուտ ձեմարանի։

1881 թ. յունիս 23ին վերատեսուչ Դելիանովի թողնում է իր պաշտօնը, շրջապատուած բնդհանուր անկեղծ համակրանքի զգացումների արտայացառութիւններով ուսուցչութեան եւ աշակերտութեան կողմից։

Նոյն տարին վերատեսչի պաշտօնը ստանձնում է ձեմարանի տեսուչ Գէորգ Քանանեանը, որը մնում է այդ պաշտօնի մէջ մինչեւ իր մահը՝ 1897 թ., թողնելով լաւագոյն յիշատակներ ձեմարանին բերած իր բազմամեայ բեղուն գործունէութեամբ եւ իր ստանձին հօգատարութեամբ ձեմարանի գիշերօթիկ աշակերտների մասին։ Միշտ բարի, միշտ ուշադիր զէպի նրանց կարիքներն եւ հեղինակաւոր որաշտպանը նրանց շահերի։

Ձեմարանի 75ամեակին՝ 1890 թուին իր արտասահմած հատի մէջ, նա հետեւել կեր-

պով էր նկարագրել ձեմարանի վիճակը, երկրորդ յիսնամեակի առաջին 25ամեակում.

— «Վերջին 25ամեակում ձեմարանը տուել է 250 հոգի ուսումնաւարտներ։ Ներկայումս գիմնազիոնական դասարաններում ուսանող աշակերտների թիւը հասել է 300 հոգու, որ աննախընթաց է ձեմարանի պատմութեան մէջ։ Գիշերօթիկ աշակերտների թիւն էլ հասել է մի այնպիսի աստիճանի, որից աւելին անհնարին է աեղանորել ձեմարանի ներկայ չէնքում։ Աշակերտութեան բարոյական վիճակը կատարելապէս միսիթարական է ու գոհունակութիւն է պատճառում զպրոցի զեկավարներին։ Սէր զէպի աշխատանք, համեստութիւն ու բարի ուղղութիւն, որին հետեւում են մեր սաները, հանդիսանում են նրանց յատկանչող գծերը։ Բացի մի քանի բացառիկ զէպքերից, որոնք պահանջեցին կարդապահական խիստ միջոցներ կիրառել, մենք չենք կարող մատնանշել մի հատիկ անմիթարական երեւոյթ։ Աշակերտների յառաջադիմութիւնը, որը չափում է նրանց վերջնական քննութիւնների տուածարդինքով, իսկ այդ արդիւնքը զնահատուած է՝ ձեռնհաս իշխանութեան կողմից, մէսցում է, որ գիմնազիոնական կրթութիւնը ձեմարանում դրուած է ամուր հիմքերի վրաց եւ որ ձեմարանը պատռուավ կը դիմանայ ամէն համեմատութեան, ամենալուրջ պահանջներ իսկ ներկայացնելով։ Ծնողների վերաբերմունքը զէպի մեր դպրոցը վեր է ա-

մէն ակնկալութիւններից՝ նաև հիմնուած է կատարեալ վստահութեան ու համակրանքի վրայ դէպի մեր դպրոցը:

«Մասնագիտական դասարանների (լի-կէոնի) ուսանողներին անդրադառնալով, մենք կարող ենք մատնանշել այն մի շարք միջոցները, որոնք երաշխառորել են արեւելեան լեզուների ուսումնասիրութեան լուրջ յառաջադրմութիւնը։ Մեր ձեռքում կան պաշտօնական փաստաթղթեր, որոնք վկայում են, որ մեր մասնագիտական դասարանների շրջանաւարտների ուսման մակարդակը հասել է բարձալի բարձրութեան եւ նրանք ոչ մի բանում համալսարանների ուսանողների ուսման մակարդակից ցածր չեն։ Ամենից միիթարականը այն է, որ ձգտումն դէպի մասնագիտական դասարանները այլ եւս չի պայմանաւորուած, ինչպէս անցեալումն էր, ծառայութեան արտօնութիւններ եւ իրաւունքներ ստանալու ակնկալութեամբ, այլ դիտակից ցանկութեամբ ուսումնասիրել արեւելեան լեզուները։

Արեւելեան լեզուների յաջողութիւնը առաջ է բերել պահանջ կազմակերպել երեկոյեան դասընթացքներ բաւարարելու համար կողմնակի ունկնդիրներին, որոնք ցանկութիւն ունին սովորելու այս կամ այն արեւելեան լեզուն»։

*

1890 թ. դեկտ. 20ին ճեմարանի Պատուակալ Հոգարարձուի եւ Պետերբուրգի ու

Մոսկուայի Հայոց Եկեղեցիների հոգաբարձուի պաշտօնների մէջ է հաստատում իշխան Սիմեոն Դափդովիչ Աքամելիքը, վերապահելով նրան իրաւունք կոչուելու՝ Աքաբելիք-Լազարեւ եւ այդ կոչումը պահպանելու իր տռհմի մէջ։

Այդ 25ամեակում Ճեմարանին այցելութիւն են տուել՝ Պարսից Նասրէզդին Շահը, Բրասիլիայի կայսր Դօն-Պեղրօն, ուղեկցութեամբ ժողովրդ. լուսաւորութեան նախարար կոմս Տումանյի, կոմս Միքայէլ Տարիելովիչ Լօրիս-Մելիքովը, Ասիական զեպարտամենտի պետ Զինովիևը, — երկուսն էլ Ճեմարանի նախկին աշակերտներ, — Եւրոպական դիտնական-ասորագէտ Ժիւլ Օպուկերտը, արեւելագէտ Փոն Միւլէրը եւ ուրիշները։

Այս այցելութիւնները պարզ ցոյց են տալիս, որ Ճեմարանը շարունակում է մնալ ընդհանուր հետաքրքրութեան եւ ուշադրութեան առարկայ։

*

Մէր խօսքը փոքր ինչ առաջ տանելով, առենք, որ Գ. Քանանեանի մահից յետոյ վերաստուչ Նշանակուեց Մոսկուայի համալսարանի ուսուցչապետ եւ ականառոր դիտնական Վսեպոլոդ Միլլերը, որը մի բարեսիրտ, մեծահոգի, ազնուարարոյ ու կատարեալ հումանիստի բարձր նկարագրով անձնաւորութիւն էր։

*

Նրա վերատեսչութեան օրով ձեմաբանի
տանկական մթնոլորտը որեւէ փոխինման
չենթարկուեց :

Բայց, ցաւօք որտի, բոլորովին հակա-
ռակ չունչ փչեց, երբ նրան յաջորդեց
Պրոֆ. Վասիլի Գիղուլեանովը, որպէս վե-
րատեսուչ (директор), իսկ տեսչի (инспек-
տոր) պաշտօնով Հրատիրուեց Հայ անուանի
հայագէտ Կարապետ Կոստանեանը 1911
թուին :

Երկուսն էլ չոր ու ցամաք բիւրոկրատ-
ներ էին . . . :

Պրոֆ. Գիղուլեանովը շատ քիչ էր հե-
տաքրքրում աշակերտութեան կեանքով . ա-
շակերտութիւնը ամրողջովին գտնուում էր
տեսչի՝ Կարապետ Կոստանեանի Հոկոզու-
թեան ու զեկավարութեան ներքոյ : Եւ առ,
որպէս մի խստարարոյ վարչական անձ, շատ
շուտով վերածեց գիշերօթիկ երեխաների
սոօրեայ կեանքը մի կատարեալ զօրանոցի . . .
Ճեմարանը կորցրեց իր նախկին ընտանեկան
օջախի բնոյթը . . . ծայր տուին խիստ պա-
տիժները ամենասովորական երեխայական
չարութիւնների համար : Այդ պատիժների
շարքում ամենից դաժանը այն էր, որ տե-
սուչը, առանց Մանկավարժութեան ու Դաս-
տիարակների Խորհուրդների գիտութեան,
ճեմարանից երեխաներին յաճախ արտաքսում
էր . . . :

Սրանց իշխանութիւնը վերջ գտաւ
1917 թ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնից

յետոյ . 1918 թուին , երբ ինքը ձեմարանը
de factō այլ եւս դոյտթիւն չունէր , իսկ
1918 թ . աշնանը նա իր վախճանը գտաւ նաև
de jure . . . ձեմարանը վերածուեց «Հայ
Աշակեցթի Տան» . . . :

*

ձեմարանի վերջին 25ամեակի մասին
մեր գրածները մեծ մասամբ մեր եւ Թէհրա-
նուում գտնուած ձեմարանի նախկին սաների
յուշերի վրայ են հիմնուած . գրել այդ ժա-
մանակաշրջանի՝ 1890—1918 թթ . պատմու-
թիւնը անհնարին եղաւ մեզ համար , քանզի
մենք չունէինք ձեռքի տակ եւ ո՛չ մի պաշ-
տօնական աղբիւր կամ փաստաթուղթ այդ
ժամանակաշրջանին վերաբերեալ :

Պիտի սպասել մինչեւ Երեւանի Հայոց
կառավարութիւնը վերջապէս հրատարակու-
թեան կը տոյ Լազարեանների ու ձեմարանի
հարուստ արխիսի նիւթերը կամ Երեւանում
կը գտնուի մի ձեռնհաս անձ , որ յանձն
կ'առնի գրելու ձեմարանի լրիւ պատմու-
թիւնը , օդտապործելով այդ արխիսիը :

Բնդ հատելով այստեղ ձեմարանի մեր
այս շատ հակիրճ պատմական ընդհանուր
տկնարկը , անցնում ենք մի քանի մասնաւոր
կարեւորագոյն խնդիրների լուսարանութեան ,
որոնք սերտօրէն կապուած են ձեմարանի
Շհամեայ ներքին կեանքի հետ եւ որոնք լրաց-
նում եւ ամրողացնում են մեր այս ընդհա-
նուր տեսութիւնը :

ԳԼՈՒԽ Զ.

1. ՃԵՄԱՐԱՆԸ, ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ՎԱՌ ՀՆՈՑ
ԵՒ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՆ

ՃԵմարանի հիմնադրութիւնն ու գոր-
ծունէութիւնը Մոսկուայում՝ «Ռուսաստանի
սրբում», Ռուսաստանի մշակութային, հա-
սարակական-քաղաքական կեանքի կենտրո-
նում, հարկաւ, չէր կարող զերծ մնալ այս
կամ այն չափով նրա բարերար ազգեցու-
թիւնից։ Եւ զերծ էլ չմնաց։

ՃԵմարանը հիմնուել է Ռուսաստանի եւ
եւրոպայի քաղաքական կեանքի մի շատ նշա-
նաւոր ժամանակաշրջանում։

1812 թ. հայրենական պատերազմը Նա-
պոլէոն Ա. կայսեր աշխարհակալութեան
դէմ, Վիեննայի 1814—1815 թ. Վեհաժո-
ղովը, իր «Սրբազն Ռւխտի» ճնշող ու յե-
տադիմական շունչով, Մետտերնիխի բռնա-
կալական միջամտութիւնները պետութիւն-
ների ներքին կեանքի մէջ եւ ազգային շար-
ժումների ջախջախումը՝ կործանարար ազ-
գեցութիւն ունեցան Ալէքսանդր Ա.ի ազ-
տախոհ տրամադրութիւնների վրայ . . .։ Նա
աստիճանաբար խորասուզուեց միստիցիզմի
մէջ, դադարեց գործօն հետաքրքրութիւն
ցուցադրել պետական գործերի մէջ եւ կա-
ռավարական ամրողջ իշխանութիւնը վերա-
պահեց կոմս Արակէեւին, որը, շուտով իր

անուահման իշխանութեան վրայ յենուելով, դաժան պայքար մղեց ամէն մի ազատախոհ մտքի ու ձգտումների դէմ . . . :

Եթէ Եւրոպայի և Ռուսաստանի կառավարական շրջաններում տիրում էր ամենայիտադէմ ձգտումներ ու տրամադրութիւններ, առաջ միանդամայն այլ տրամադրութիւններով էին վարակուած հասարակական շրջանները, յառաջադէմ ու ազատատենչ մտաւորականութիւնը:

Ֆրանսիական մեծ Յեղափոխութեան թողած ազատախոհ աւանդները գեռ շատ թարմ էին ամենուրեք: Ռուս ազնուական մտաւորականութիւնը մասնաւորապէս վարակուած էր յեղափոխական տրամադրութիւններով: Հայրենական պատերազմը, որ սերտ շփումների առիթներ տուեց ուսւ սպայութեան ծանօթանալու աւելի մօտիկից Եւրոպական քաղաքակրթութեան եւ նրա մտաւորական շրջաններում տիրող ազատատենչ ձգտումների հետ՝ բաց արեց նրա աչքերը հայրենիքում տիրող հասարակական-քաղաքական անհանդուրժելի կացութեան վրայ:

«1812թ. հայրենական պատերազմի ժամանակ, — ասում է ոսւս պատմաբան Պրոֆ. Պլատոնովը, — ոսւս զօրքը իր մէջ առարտութիւ ազնուականներ հայրենիքի պաշտպանութեան համար, իսկ կոիւները, մղուած Եւրոպայի ազատագրութեան համար (Նապուլէոնի իշխանութիւնից), շփման մէջ դրին ոսւս զօրքի մէջ ծառայող ազնուականներին

Եւրոպական կեանքի հետ։ Առաջ սուս մարդիկ շատ քիչ էին գնում Արեւմտեան Եւրոպա, իսկ ազատագրական պատերազմի ժամանակ շատերը մնացին այնտեղ եւ երկար ժամանակ ապրում էին այնտեղ։ Հասկանալի է, որ նրանք ենթարկուեցին եւրոպական կարգերի ուժեղ ազդեցութեան, մօտիկից ծանօթացան ժամանակակից մտաւոր շարժման հետ եւ իրենց հետ մուսաստան բերին ամբողջ զրադարաններ։ Եւրոպական հասարակական կեանքի յառաջադիմութիւնը, որ հետեւանք էր 18րդ դարի ազատամիտ զավարմանների ազդեցութեան, զերմանացինների ազգային գիտակցութեան զարգացումը, գերման փիլիսոփացութեան փիլիսումը՝ վարակում էին ու հիացնում ուսումարդկանց։ Համեմատելով եւրոպական կեանքը հայրենիքում տիրող կարգերի հետ, մեր նախահայրերը սկսեցին քննազատական աչքով նայել ուսու իրականութեան վրայ, աևսնում էին նրա պակասները, նրա յետամնացութիւնը, զիտակցում էին, որ արդէն հնացած էր ճորտատիրական իրաւունքը, որը կազմում էր ուսու հասարակական կարգերի հիմքը եւ որն Արեւմտեան եւրոպացում վաղուց վերացել էր¹։

Ահա այս տպաւորութիւնների ներքոյ էր, որ մուսաստանում սկսուեցին ուժեղ հասարակական-քաղաքական շարժումներ, որոնք

¹ Տե՛ս Պրոֆ. Պլատոնով (ПЛАТОНОВ). «Մուսաստամութեան համառու զարնթացք», էջ 353—354։

մի կողմից արտացոլուեցին գրականութեղա-
րուեստական մարզում, միւս կողմից ընդու-
նեցին յեղափոխական բնոյթ . . . : Ռուս աղ-
նուական յառաջադէմ ու սպասախոհ մտա-
ւորականների շրջանները, տոգորուած հան-
րապետական-ժողովրդավար դադավարնե-
րով, կամեցան բոնի կերպով ոչնչացնել
ցարական բանապետական բիժիմը և առա-
ջին հերթին վերացնել ճորտատիրութիւնը:
Յայտնի է, որ այս վերջին շարժումը յանդեց
1825 թ., Աղէքսանդր Ա. կայսեր մահից ան-
միջապէս յետոյ, այսպէս կոչուած ‘Ինկա-
րիստների’ ապստամբուրեան, որը սակայն
վրիպէց եւ նոր կայսեր՝ Նիկոլայ Ա.ի ձեռ-
քով գաֆանօրէն զսպուեց . . . ²:

Չնայած Նիկոլայ Ա.ի դաժան ուժիմին,
ուսւ հասարակութեան մէջ չմեռան իսպա-
տպատաժնէ զադափարներն ու ձգտումները.
Կրտնք իրենց արտայայտութիւնը գտան ուսւ
գրականութեան մէջ :

«Ռուս գրականութիւնը, — ասում է
իյտնով Ռազմումնիկը, — եղաւ այն Փոկուար.
որ հաւաքում էր իր մէջ կեանքից ցոլացող
հառագայրները» :

Եւ արդարեւ, 40ական և 50ական թուա-
կաններին ուսւ գրականութիւնը հասաւ այն-
պիսի վերելքի, որ տուեց մտքի և գեղա-
րուեստի այնպիսի մեծ ապահովներ, որ-

² Դեկաբրիսանների շարժման մտսին տե՛ս մեր
յօդուածը՝ «Յուստրեր», 1828 թ. Հոկտեմբեր-Նոյեմ-
բեր:

պիսիք էին՝ Բէլինսկի, Հերցէն, Օղարեով, Ստանկեւիչ, Ակսակով, Խոմեակով, Զաւդակեւ եւ առաջ Չերնիշեւսկի, Դօրոլիուրով, Բակունին, Գրանովսկի եւ մի շարք ուրիշները :

Գրողների այս փայլուն վասդանդն էր, որ նախապատրաստեց ուսւ հասարակական կարծիքը 60ական թուականների մեծ բարեփոխութիւնների համար :

Գրականութեան մէջ կարմիր թելով անցնում էր մի գերազոյն միտք՝ պիտի ոչնչացնել նորտափրութիւնը, մեծագոյն չարիքը ուսւ կեանքի եւ խոչընդոտը հայրենիքի յառաջադիմութեան :

Գրականութեան գօրավիդ եղան քաղաքական դէպքերը, առաջին հերթին՝ Դրիմի պատերազմը (1855 թ.), որ միանգամայն բացայսյակեց ցարական բոնակալ ոչժիմի պարտութիւնը, տիրող հասարակական-քաղաքական կարգերի կատարեալ անպէտքութիւնը: Միւս կողմից, այդ պատերազմը մեծապէս նպաստեց ժամանակի յառաջադէմ դադարիաների ու ազատախոհ տրամադրութիւնների գօրացմանն ու տարածմանը հասարակութեան լայն շրջաններում :

«19րդ դարի երկրորդ քառորդի սկիզբը — ասում է իվանով Ռազմամինիկը — նշանաւոր էր մի շարք կարեւորագոյն գէպքերով, մի շարք յեղաշրջումներով: 1825 թուականը հանդիսանում է սահմանը, որտեղից սկիզբ է

առնում նոր քաղաքական սիստեմ՝, նոր պետական ժամանակաշրջան։ դա մի տարի էր, երբ քաղաքական յեղաշրջման փորձը վրիպեց, բայց եւ մի տարի էր, երբ վերջ գտաւ պայքարը գրական քաղքէնիութեան դէմ։ դա, վերջապէս, մի տարի էր, երբ յեղափոխական ռոմանտիզմը եւ ռոմանտիկ ազատամտութիւնը կորուսաի մատնուեցին, երբ փչացաւ ռուս մտաւորականութեան լաւագոյն մասը եւ երբ ծնունդ առաւ նոր մտաւորականութեան սաղմը, այն մտաւորականութեան, որ տուեց այնքան հարուստ պտուղներ՝³ :

Ահա՛ այս նոր մտաւորականութիւնն էր, որ ստեղծեց 40ական եւ 50—60ական թուականների հասարակական մեծ շարժումը։

Այս մտաւորականութեան ուսուցիչներն էին՝ եւրոպական ականաւոր փիլիսոփաները՝ Կանար, Ֆիլատէն, Ֆուրիէն, Ֆէյերախը եւ նա մանաւանդ Հեղէլը։ որը բացարձակապէս իշխում էր մտաւորականութեան մտքի վրայ։

«Հեղէլի փիլիսոփայութիւնը, — ասում էր Հերցէնը, — յեղափոխութեան ալգերրան է։ նա միանդամայն ազատագրում է մարդուն եւ քար քարի վրայ չի թողնում ոչինչ քրիստոնէական աշխարհից, աւանդութիւնների աշխարհից»։

³ Տե՛ս Խվանով-Բագրումնիկ, «Պատմ. ռուս Հայութակական մտքի», էջ 92։

«Պատմութիւն 19րդ դարի ոռուս գրականութեան» հեղինակ Նազարէնկօն բացատրում է Հեղէլի այդ միտքը, առելով՝

«Հերցէնը, բնորոշելով Հեղէլի փիլիսոփայութիւնը որպէս յեղափոխութեան ալգերրա, ուզում էր առել, որ նրա մէջ պարփակուած է յանիտենական պայքարի, զարդացման եւ յառաջադիմութեան գաղափարը⁴» :

Ահա՝ այն մինուլորոր, որով շրջապատուած էր Լազարեան ձեմարանը իր ուսուցիչներով, իր աշակերտութեամբ եւ իր նախկին սաներով՝ Մոսկուայի համալսարանի հայուսանողներով :

Եւ պարզ է, որ ձեմարանը եւս չնշում էր նոյն մինուլորոր, ապրում էր նոյն մտաւոր ու բարոյական գաղափարներով, որոնք նրան մղում էին դարձնելու իր հայեացքը հայ իրականութեան վրայ :

Յաւոք որտի, մեր գրականութեան մէջ ուռու յառաջադէմ մտքի աղղեցութիւնը հայ կեանքի վրայ ուսումնասիրուած չէ յատկապէս, առաւել եւս նրա աղղեցութիւնը ձեմարանի կեանքի վրայ :

Կան միայն փշրանքներ, որոնցից մի քանիսը առաջ ենք բերում :

«Պետական կեանքն էր մղումներ տալիս եւ մեր կեանքին, — գրում է Լէօն իր «Պատմութիւն Երեւանի թեմ. դպրոցի» երկի

⁴ էջ 213:

ժէջ. — Դրխմի պատերազմը սուս կեանքի փորձաքարն ու վերանորոգիչը հանդիսացու: Բազմաթիւ հնացած կարգերի հետ աւանդութիւնների շարքն էր մտնում եւ դասակարգային դպրոցը՝ չինովնիկներ պատրաստելու ու ժողովուրդը դաստիարակութիւնից հեռու պահելու ձգտումներով: Ժողովրդական ազատ ազգային դաստիարակութիւնը, համամարդկային հումանիտար գաղափարները՝ նոր դպրոցի հիմնաքարերն էին դառնում եւ մանկավարժութիւնը, ընդդրկելով եւրոպական սկզբունքները, դառնում էր հասարակական առաջիւազացութեան փայլուն փարոսներից մէկը: Եւ մեզանում էլ, այս բոլոր պարագաների դրզմամբ բարձրանում էին կրթական պահանջները, մեզանում էլ դպրոցը դառնում էր հասարակական հոգացողութեան առանձին կարեւոր առարկայ ⁵»:

Մի ուրիշ վկայութիւն:

«Դորապատի նման մի մտաւոր կենտրոն էր Լազարեան ճեմարանը, — զբում է լ. Մանուէլեանը, — որտեղ 40ական թուականներին թագաւորում էր «Հայկական ողին» և մշակւում էր աշխարհիկ լեզուն: Ռ. Պատկանեանը ⁶ գրում է. «Քառասուն տարի սրանից առաջ մենք աւելի հայ էինք, հայերէնին աւելի տեղեակ. մենք զարգանում էինք հայ-

⁵ Տես էջ 220:

⁶ Ղ. Պատկանեանը աւաբակէ է Լազ. Ճեմարանը 1848—1849 թ.:

կարկան գրականութեան մէջ և միայն Հայ գրողներ լինելու համար էինք պատրաստում»։ Մեր բանաստեղծի այս վկայութիւնը առհիմն չէ՝ եթէ նկատի առնենք, որ զրեթէ բացառապէս Լազարեան ձեմարանն էր մատակարարում ընտիր ուսանողներ Դորպատի համալսարանին⁷։

Աւելի ցայտուն կերպով արտայայտուել է բանաստեղծ Մմբատ Շահազիզը, ձեմարանի նախկին սան և երկարամեայ ուսուցիչը ձեմարանում։

Երուանդ Շահազիզը «Սմբատ Շահազիզի Կենսագրութիւնը» իր աշխատանքի մէջ պատմում է հետեւեալլ.

«Իւրիյ Վեսելովսկու զրուածներից մէկում՝ «Խուսաց ազդեցութիւնը ժամանակակից հայ գրականութեան վրայ», 1909թ. մէջ է բերուած Շահազիզի մի նամակը, որը պատասխան է զրուածքի հեղինակի նրան ուղարկած հարցաթերթի, թէ նա իր ուսանողութեան օրերում ուսական ի՞նչ ազդեցութիւնների է ենթարկուած եղել։

— «Խօսք չի կարող լինել, որ իմ վրայ, ինչպէս եւ ամբողջ սերունդի վրայ, — պատասխանել էր Մմբատ Շահազիզը — ուժեղ ազդեցութիւն են զործել ուժիորմների դարաշրջանը և նրա անդրադարձումը ուսւանան կեանքի վրայ։ «Լեւոնի վիշտը», որտեղ մերկացւում են Հայ իրականութեան մութ

⁷Տե՛ս լ. Մանուկյան, «Պատմ. ուսւահայ գրական», Հ. Ա., էջ 89. ընդդժումները մերն են։

Երեւոյթները, զգալի չափով ստեղծուել է այն ոգեւորութեան շնորհիւ, որ առաջ էր եկել դիւղացիների ազատութեան հետեւանքով (1861 թ. փետր. 19)։ Յիշում եմ, թէ որքան սրտիս մօտ էի ընդունում այդ անցքը . . .» :

«Բնկելներիս շրջանում ես պատկանում էի այն երիտասարդների թուին, որոնք ամենից աւելի եռանդով էին հետեւում ոռւս ամսագրերին, օրինակ, «Սովորեմեննիկ»ին⁸ եւ եւ նրանց մէջ արծարծուող խնդիրներին . . . 1859 թուի «Սովորեմեննիկ»ից է առնուած «Լեռնի վշտի» երգերից մէկի բնարանը։ Դորրովիւրովի «Սիրելի բարեկամ», ես մեռնում եմ» բանաստեղծութեան ընթերցումը ներշնչեց ինձ սեփական մի բանաստեղծութիւն զրելու «Իդէան», որն սկսում է համարեա այնպէս, ինչպէս Դորրովիւրովի բանաստեղծութիւնը, բայց կրում է այլ բնոյթ եւ վերաբերում է հայերի վիճակին⁹։

Ծանօթ իրողութիւն է, որ Միքայէլ Նալբանդեանը, որ եղել է Ճեմարանում Հայոց լեզուի դասատու, ունեցել է լայն ծանօթութիւններ եւ նոյն իսկ սերտ բարեկամութիւն ժամանակի ոռւս ականառոր զրական, հասարակական ու քաղաքական գործիչների հետ,

⁸ «Սովորեմեննիկ» (Современник) ամսաթերթ էր, որը վարում էր Զերնիշեւսկին եւ առա Դորրովիւրովը եւ հանգիսանում էր ժամանակի մամուլի մենալուրջ օրդանը եւ հետեւում էր այսպէս կոչուած «Արեւտեանականների» ազատախոհ ուղղութեան։

⁹Տե՛ս էջ 75։

մասնաւորապէս Հերցէնի հետ, եւ վայելել է
նրանց խոր յարգանքն ու անկեղծ համա-
կրանքը:

Թէ ի՞նչ խոր ապաւորութիւն է թողել
Մ. Նալբանդեանը Ճեմարանի աշակերտու-
թեան վրայ եւ ի՞նչ ոգով է տարել նա իր
դասաւանդութիւնը, — այդ մասին սոսրեւ
կը խօսինք, ուրիշ խնդրի կապակցութեամբ:

Այժմ մի այլ վկայութիւն եւս :

«Ռուսաստանի ազատարար շարժումը
բարերար ազգեցութիւն ունեցաւ մահաւանդ
հայութեան այն մասի վրայ, որ մօտիկ էր
կանգնած այդ շարժմանը՝ Մոսկուայի յառա-
ջադէմ երիտասարդութեան: Հայերի համար
եւս բացուեց ապագայի գեղեցիկ հեռանկար
եւ սկսուեց եռանդուն աշխատանք¹⁰»:

*

Ճեմարանը իր ներսում, իր ներքին
կեանքի մէջ եւս ունէր պայմաններ, որոնք
զուգաղիպելով դրսում, արտաքին աշխար-
հում տեղի ունեցող զաղափարական հո-
սանքներին, առևցին այնքան առատ հունձ:

«Որպէս զի հունտը յաջող հունձ տայ,
անիրածեշտ է նպաստաւոր մթնոլորտ», —
ասել է պետական ականաւոր ոռու գործիշ
Սպերանսկին:

Եւ արդարեւ զրոի մթնոլորտն ու ներսի
մթնոլորտը, զուգորդուած իրար հետ, դար-
ձրին Լազարեան Ճեմարանը ազգային մշա-

¹⁰ Տե՛ս լ. Մանուկյան, «Պատմ.» ուսումնաց
զբակչ.»:

կոյթի զարդացման մի աղղակ ու աղղային
ոգու մի վառ հնոց :

Ճեմարանի աղղային ոգին ու սէրը գէպի
աղղային մշակոյթի գանձերը՝ լեզուն, գրա-
կանութիւնը, պատմութիւնն ու կրօնը սեր-
մանել ու աճեցրել էին ամենից առաջ իրենք
Լազարեանները, սկսած Ճեմարանի կառու-
ցող Յովակիմ աղայից, որը եւ շարունակե-
ցին նրան յաջորդած երկու զաւակները՝
Յովհաննէսն ու Խաչատուրը ունենալով իրենց
օժանդակ իրենց ընտանիքների անդամներին :

Այսուհետեւ նրանց զօրավիզ են հանդի-
սացել ու շարունակողները եղել՝ հայ ուսու-
ցիչները, տեսուչներն ու վերաստեսուչները :

Ալամդարեան, Սերովբէ վարդապետ,
Սալլանթեան, Մ. Էմին, Մ. Մսերեանց,
Մտ. Նազարեանց, Միքայէլ Նալբանդեան,
Գէորգ Քանանեան, Մմրատ Շահազիզ, Մա-
նուկ Սաղաթեան, Յարութիւն քահ. Պոպո-
վեան, Քրիստափոր Քուչուկ-Յովհաննիսեան,
Կարապետ Կուսիկեան, Լեւոն Սարգսեան եւ
մի շարք ուրիշները, — եղել են մի-մի լու-
սատու ճրագներ, որ լուսաւորել են աշա-
կերտութեան միտքը, ներչնչել աղղային ոգի
մդել գէպի աղղային մշակոյթի դանձերի ու-
սումնասիրութիւնը :

Արդէն Սալլանթեանի օրօք 1829 թ. Ճե-
մարանի աշակերտութիւնը լոյս է ընծայում
«Մուզայֆ Հայաստանի» գրական ժողովա-
ծուն, սեփական գրական ստեղծագործու-
թեան առաջին պատուղները :

Մ . Մսերեանը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մի շարք ձօներ , ուղերձներ , ողբեր , գրուած ձեմարանի աշակերտների կողմից եւ գլխաւորապէս նուիրուած Լազարեաններին , նրանց կեանքի ուրախ թէ տիսուր օրերի առթիւ :

Այնուհետեւ պիտի յիշատակել հայկական ներկայացումները՝ գրում , որոնց յաճախում էին աշակերտները , եւ թէ ներսում՝ իրենց աշակերտների կողմից կազմակերպուած :

Տողերիս գրողը , օրինակ , 80ական թուականների վերջերքին , ձեմարանի աշակերտ , ներկայ է եղել Պետրոս Ադամեանի «Համլէթ»ի ներկայացման եւ ստացած խոր տպաւորութիւնը դեռ այօր էլ չառ թարմ է :

Աշակերտութեան կազմակերպած ներկայացումների մասին ձեմարանում , մեզ թանկագին տեղեկութիւններ է տալիս Պրոֆ . Զինովեւը :

«Վերատեսուչ Ն . Դ . Դելեանովի օրօք , — գրում է Պրոֆ . Զինովեւը — մի նոր սովորոյթ էլ մտաւ ձեմարանի աշակերտութեան կեանքի մէջ , որը , մեզ թւում է , կարող է որոշ նշանակութիւն ունենալ հայ ժողովրդի զարգացման համար : Մի քանի տարի առաջ ձեմարանի աշակերտները Ծննդեան տօներին կազմակերպեցին ընտանեկան ներկայացում հայերէն լեզուով : Այդ ձեռնարկը

¹¹ Ն . Դ . Դելեանովը վերատեսուչ է եղել 1856—1861 թթ . :

սցնալիսի մեծ յաջողութիւն ունեցաւ, որ այդ օրուանից սկսած առէն տարի տեղի էին ունենում նման ներկայացումներ, արժանանարկ Մասկուայի հայ հասարակութեան բացայաց համարկանքին. նա նոյն իսկ սիրով դրամական նուէրներ էր տալիս երիտասարդ դերասաններին ¹²» :

Հետազայում, 80ական թուականներին, ներկայացումներին փոխարինեցին չքեղ պարահանդէսները, որոնց մեծ հաճոյքով այցելում էին հայ եւ ոռու հասարակութիւնը, մանաւանդ ոռու դպրոցների երկսեռ աշեկերտութիւնը ¹³:

Այդ պարահանդէսները առիթ էին տալիս ձեմարանի գիշերօթիկ աշակերտութեան շփման մէջ մտնել իրենց հասակակից ոռու երկսեռ երիտասարդութեան հետ եւ ծանօթութիւններ հաստատելներանց ընտանիքների հետ:

Այդ պարահանդէսները բարերար ազգեցութիւն էին ունենում ձեմարանի աշակերտութեան դաստիարակութեան վրայ:

Մի որոշ չափով արտայացտիչ են հանդիպահում աշակերտութեան մտաւոր ձգտումների, դրականութեան հետաքրքրութեան ու

¹² Տե՛ս Պրոֆ. Զինովեև, «Պատմ. Լազ. ձեմ.», էջ 80:

¹³ Հայերէն եւ ոռուէրէն լեզուներով աշակերտական ներկայացումները տեղի են ունեցել ձեմարանում նուեւ վերատեսուչ Մելլէրի օրոք՝ 1900ական թուականներին, — ինչպէս վկայում են Թէհրանում դրանուած ձեմարանի նախակին սաները:

ազգային ողու՝ իրենց աշակերտների լոյս
ընծայած ձեռագիր շաբաթաթերթերն ու ամ-
սաթերթերը :

Ի վերջոյ, բերենք միերկու յիշողու-
թիւն — վկայութիւններ նախկին սաների
իրենց ուսուցիչների թողած բարոյական մեծ
ազգեցութեան մասին :

«Եմինի դասախոսութիւնները, — զրում
է Ռ. Պատկանեանը, — մի շարք դրական,
պատմական կրթողական քարոզներ էին,
որոնք խորունկ տպաւորութիւն էին գործում
մեր պատանեկան զգայուն սրտերի վրայ,
որ շատերիս մէջ անջնջելի մնաց և շատե-
րիս համար, թերեւս, մի տեսակ ուղեցոյց
աստղ՝¹⁴» :

— «Ճեմարանի հայ ուսուցիչներից, —
զրում է Եր. Շահաղիզը, — Սմբատ Շահա-
ղիզը միայն և միայն հաւանել է Միք. Նալ-
րանդեանին, որի ուսուցչութիւնը թէ և կար-
ճատել է եղել, բայց նրա ցանած սերմերը
ասուք պտուղներ են տուել, և նրա խօս-
քերը՝ «հայերէն մտածել պէտք է սովորել»,
Ճեմարանի աշակերտութեան մէջ աւանդա-
րար անցել են սերնդէ սերունդ։ Որքան մէնք
զիտենք, նրա այս կարճատել ուսուցչութեան
ժամանակ Ճեմարանում, Սմբատ Շահաղիզը
չի աշակերտել նրան, բայց ընդունել է նրա
թողած աւանդը և նոյնը յետադայում, իր

¹⁴ Հ. Մանուկյան, «Պատմ. ուսու. դրակ.»,
Մասն Բ., էջ 54:

ուսուցչութեան տարիներին, քարողել իր ա-
շակերտաներին¹⁵» :

Ահա՛ եւ իր՝ Ամբատ Շահաղիզի անձնա-
կան զգացումների ու մտքերի ոգեշունչ ար-
տայայտութիւնը, որ նա կցել է «Լեւոնի
վիշտը» պոէմային։ Նրա այդ տողերին առիթ
է ծառայել Ճեմարանի 50ամեայ յորելեանը։
Բերում ենք այդ գեղեցիկ կտորը ամբողջու-
թեամբ։

«Յիսներորդ տարին Ճեմարանիս հիմնա-
դրութան ահա լրանում է¹⁶, մի ցանկալի
տպաւորութիւն բերելով բոլոր բարեացակած
սրտերին։ Այս՝, յիսուն տարի ապրել է նա
գեղեցիկ յառաջադիմութեամբ։ յիսուն տարի
գնացել է իւր գժուարին եւ յի ճախորդու-
թեամբ ճանապարհը։ Գոհութիւն նորա ան-
ցելին, որ կազմել է մեզ մի դալարուն ներ-
կայ, եւ գոհութիւն նորա ներկային, որ տա-
լու է մեզ մի առաւել նախանձելի ապագայ։

«Դեռարո՞յս պատանիք, ժրաջան եղէք
այդ սուրբ ասպարէզի վերայ։ պատրաստե-
ցէք ձեզ որդի մարդկութեան եւ ազգութեան։
ոհ, քանի՛ մեծակշիռ էր ձեր մատաղ կեանքի
խորհուրդը, ինչ ձեր իմանկաղին ժամանակը
զործ դնէիք նորա զարգացման եւ հաստա-
տութեան, քանի՛ բարձրանալու էր Ճեմա-

¹⁵ Տե՛ս Եր. Շահաղիզ, «Ամբ. Շահաղիզի կեն-
սուրը», էջ 17։

¹⁶ Հեղինակը այդ տողերը գրել է 1864 թ. սեպտ.
դիբքը լոյս է տևել 1865 թ., Ճեմարանի 50ամեակին։
Ընդդումները հեղինակին է։

քանը արժանի պարծանքով, որ պատրաստ է օժանդակել ձեզ ամենայն միջոցներով, եթէ միայն կամէիք ուսանել ազնիւ և անխռով աշխատասիրութեամբ:

«Ազնի՛ւ սրտեր, լցուեցէք ամենաքաղցր չօշափմունքով, պատրաստ կացէք բերել ձեր անկեղծ շնորհակալիքը այդ փառաւոր օրի տօնախմբութեան. զիտէ՞ք, — սիրոյ եւ երախտագիտութեան զգացմունքն է որ մեծարելի է կացուցանում մարդուս անունը: Շնորհակալ լինինք խոստովանող սրտով պատուական Հողարարձուիս Խաչառոյ Յովակիմեան Լազարեան, որ լուսաւորեալ գործակցութեամբ բարեկարգել է վիճակը ձեմարանիս եւ ոչինչ չէ՝ խնայել նորա պայծառութեան համար թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

«Խաղաղութի՛ւն Զեզ, ազգառէր Հիմնադիրք ձեմարանիս. Զեր անունը անմոռաց է, Զեր գործը անմահ, որ ահա վերստին անմահանում է այս տօնախմբութեան օրը:

Երախտագիտ Հեղինակը»:

*

Այսպէս ձեմարանը արտաքին ու ներքին ազդակների շնորհիւ դարձաւ ազգային ոզուվառ հենց եւ միաժամանակ հանդիսացաւ հայ մշակութային ու հասարակական կեանիքի վերածնութեան խոշոր գործօններից մեկը հայ կեանիքի պատմական ամենաբախտորոշ ժամանակաշրջանում:

Հայ ոգին ձեմարանում այնքա՞ն զօրեղ
էր և այնքա՞ն ցայտուն իր արտայայտու-
թիւնների մէջ, որ անդամ ոռւս աշակերտ-
ները վարակւում էին այդ ոգով, հետա-
քրքրում հայ գրականութեամբ, պատմու-
թեամբ ու լեզուով, լցում համակրանքով
զէսի հայ ժողովուրդը: Իւրիշ վեսելովսկին,
ձեմարանի նախկին աշակերտ, հանդիսա-
նում է ամենագեղեցիկ օրինակներից մէկը:

Վերջապէս, բաւական է մի հայեացք
ձգել ձեմարանի շրջանաւարտների անուանա-
ցանկի վրայ, որ բերուած է յաւելուածում,
համոզուելու համար, թէ որքա՞ն հարուստ
և արդիւնաւէտ հունձք է տուել ձեմարանը
հայ ժողովրդին վաղ ժամանակներից սկսած:

Տարակոյս չունենք, որ երր մի օր գրուեց
Լողարեան ձեմարանի ընդարձակ ու լրիւ
պատմութիւնը, ապա նա կը կազմի հայ ժո-
ղովրդի վերածնութեան պատմութեան ոսկի
էջերից մէկը:

ԳԼՈՒԽ Ե.

ԱՇԽԱԲԾ ՀԱԲԱՐԻ ՑԱՂԹԱԿՆԱՅԻ ՃԵՄԱՐԱԿԱՌԱՄ

Աշխաբհարարի ու գրարարի շուրջ
մզուած պայքարի պատմութիւն չէ՝, որ ա-
նելու ենք. այդ խնդիրը մեր նիւթից դուրս է.
մենք սոսկ հակիրճ հայեացք ենք ուզում նե-
տել ձեմարանի այն դերի վրայ, որ նա խա-
ղացել է իր ներսում աշխարհարարի յաղթա-

Նաևի համար, որն այնուհետեւ անդրագարձել է ձեմարանի պատերից դռւրսմզւած պայքարի զարդացման ու յաղթանակի վրայ:

Յաւօք սրբի, այս խնդրի լուսարանութեան համար էլ պակասում են տեղեկութիւնները, գոնէ մեր ձեռքի տակ եղած աղրիւրների մէջ հազիւ գտանք մի քանի արժէքաւոր տուեալներ:

*

19րդ դարի սուաջին 50տմեակում, ինչպէս յայտնի է, գերազանցօրէն իշխել է գրաբարը հայ կեանքի ու գրականութեան մէջ. ձեմարանն այդ ժամանակաշրջանում բացառութիւն չի կազմել: Միայն 60ական թուականներին է, որ աշխարհաբարը հայ կեանքում ստանում է քաղաքացիական իրաւունք, որն եւ ճանաչւում է հանրութեան կողմից:

Լազարեան ձեմարանն իր սկզբնական շրջանում ունեցել է գրաբարի մի շարք ծայրացեղ պաշտպանները: Այդպիսիք էին՝ Միհայէլ Ծ. Վ. Սալլանքեանը, մազիստրոս Մսեր Մսերեանցը՝ ձեմարանի կրօնուսոյցը, Մկրտիչ Էմինը՝ հայկարանութեան դաստուն:

Սրանք աշխարհաբարին նշանակութիւն չեին տալիս, համարելով այն անմշակ, անկանոն ու գոեհիկ....:

Մոեր Մոերեանցը նոյն իսկ 1854 թ., երբ գրելիս է եղել իր «Յիշատակարանը կենաց եւ գործոց Լազարեան տոհմի», գրել է

այդ Յիշատակարանը ո՛չ միայն գրաբար լեզուով, այլ եւ հարկ է համարել մի կրքոտ ու խիստ ելոյթ ունենալ աշխարհաբարի դէմ, իր նախարանի մէջ:

«Ի մատենագրութեանս յայսմիկ՝ — գրում է հեղինակը — զՊրոցն, այն է զհինն, զկանոնաւորն եւ զհարազատն մեր ի կիր արկի բարբառ, եւ ո՛չ զնորն չմշակեալ, խմա՛ զուամկացն՝ զկողմանց կողմանց զԱշխարհիկն անոււանեալ՝ ազխազուր (կոչո) լեզու։ Զի որչափ համեղական եւ ազդոյ եւ զեղեցիկ առաջինն է, այնչափ անհամ է վԵրջինն, թոյլ, տղեղ, անհեթեթ, եւ զուրկ միանգամայն ի կարի կարեւորացն կանոնաց ուղղախօսութեան, որպէս եւ շատք իսկ ո՛չ յաննշանից աբանց՝ որ քաջահմուտք լեզուիս ճանաչին, մկայեն անաչառապէս» :

Մկրտիչ Էմինը եւս եղել է գրաբարի համոզուած եւ անզիջող պաշտպան :

«Երբ 1858 թուին, — պատմում է Մ. Էմինի կենսագրութեան մէջ Երուանդ Շահագիզը, — սկսուեց հրատարակուել «Հիւսիսափայլը» եւ ասպարէզ իջան գործելու Մ. Նազարեանցը, Մ. Նալբանդեանցը եւ զոցա համախոհները, ներհակ կուսակցութեան կողմն անցաւ Մ. Էմինը, առանց իրան աշխատանք տալու հասկանալու զործի հանգամանքները, առանց յարգելու հակառակորդների կարծիքները եւ ըմբոնելու նոր քարոզիչների ասածների իսկական իմաստն ու զօրութիւնը» (էջ 26) :

Տայց կեանքի բնական զարգացման հրաժայականը, ժամանակի ողին իր ստեղծագործ չունչով ստիլում ևն հնի ամենակառաղի խել պաշտպաններին գլուխ խոնարհելու բռնել զիջումների ճամբան:

Այդպէս էլ եղաւ գրարարի պաշտպանների հետ . . . :

Դեռ 1827թ. Սալլանթեսնը հարկադրուած է լինում հրատարակել իր «Քերականութիւն գրաքար լեզուի Հայոց նորակարգ ոնուվ . . .»:

1850 եւ ապա 1861թթ. Մոեր Մոերեանցը, տուրք տալով ժամանակի պահանջին, հրատարակում է կրօնի իր չորս դաստիքերը նոյնպէս աշխարհարար լեզուով:

Ստեփանոս Նազարեանցի Հեղինակութիւնները, լոյս տեսած 1851թ., 1853թ., 1857թ. նոյնպէս աշխարհարար են:

Այդ հարկադրանքին զործածել աշխարհարարը, ամենից առաջ հէնց ձեմարանի աշակերտներն էին բերում իրենց օգնութիւնը:

Ճեմարանի հիմնադրութեան առաջին խել օրուանից աշակերտները, մասնաւորապէս Լազարեանների որդեգիրները, գալիս էին Արեւելեան Հայաստանի խուլ անկիւններից, գիւղերից ու քաղաքներից, երեխաներ, որոնք խօսում էին իրենց զաւառների բարբառով: Այդ ուսմիկ երեխանների ներխուժումը ճեմարան օր ըստ օրէ ուժեղանում էր եւ նրանց թիւը բազմանում: Ճեմարանի դաստունները մատնուած էին անելի՝ երեխա-

ները դրաբարը չէին հասկանում . . . : Եւ ուսուցիչները ստիպուած եղան խօսել նրանց հասկանալի աշխարհարար լեզուով : Այսպէս հետզհետէ աշխարհարարը դառնում է ձեմարանի գործածական լեզուն :

«Լազարեան ձեմարանում է սկսւում մշակուել մի պարզ, հանրամատչելի աշխարհարար լեզու, — զրում է լէօն : Սկիզբը դրեց Յովակիմ Լազարեանը . ապա նրա գործը շարունակեցին ձեմարանի ուսուցիչները : Աշակերտները հաւաքւում էին զանազան երկիրներից . ամէն մէկը բերում էր իր երկրի խօսակցական հայերէնը, գաւառարարառը : Ուսուցիչները հետեւում էին նրանց խօսակցութիւններին, մաքրում էին լեզուն գաւառարանութիւններից, օտար բաներից եւ մշակում էին մի հարազատ հայերէն, որ դրաբար չէր, բայց գաւառարարառ էլ չէր, այլ բոլոր տեղերից եկածներին հասկանալի մի լեզու¹» :

Մի ուրիշ հեղինակ վկայում է .

«Լազարեան ձեմարանը հիմնուելով 1815 թ. մի որեւէ 35 տարուայ ընթացքում, այն է՛ 1850 թ. ստեղծել էր իր լեզուն» :

Այդ լեզուն՝ աշխարհարարն էր, որ արդէն հաստատել էր ձեմարանում իր տիրապետութիւնը :

Ահա եւ մի այլ հեղինակաւոր վկայութիւն՝ Սեդրակ Մանդինեանի յուշը : Նա սո-

¹ՏԵՇ լէօն, «Ստ. Նազար. կենսագր.», Հ. Ա., էջ 39:

վորել է ձեմարանում դրեթէ միաժամանակ
Սմբատ Շահազիղի հետ:

Ա. Շահազիղը առարտել է ձեմարանի
գիմնազիոնական դասընթացքը՝ 1859—1860
ուս. ա., իսկ լիկէոնը՝ 1861—1862 թթ.:

Եղբակ Մանդինեանը առարտել է ձե-
մարանի միջնակարգ դասընթացքը՝ երկու
տարի ուշ՝ 1862—1863 թթ.:

Երուանդ Շահազիղը Սմբատ Շահազիղի
կենսագրականի մէջ առաջ է բերում Սեղբակ
Մանդինեանի հետեւեալ յուշը.

«Սեղբակ Մանդինեանը, որ ձեմարանի
այդ ժամանակուայ աշակերտներից է եղել,
վկայում է, որ աշակերտները սիրելիս են
եղել լսել Սմբատ Շահազիղի սահուն եւ «ուռ-
ճացած» աշխարհաբար լեզուն, որ իր կա-
նոնաւորութեամբ, իր մի նոր չլսուած
ու չտեսնուած բան, տարրեր եղածներից,
գրաւում, հմայում էր ամէնքին» (տե՛ս Սե-
ղբակ Մանդինեանի յորելենական նամակը
«Սմբատ Շահազիղեանի երեսնամեայ յորե-
լեանը» գրքի մէջ):²

Սմբատ Շահազիղը առանձնապէս խոչոր
գեր է կատարել աշխարհաբարի մշտկման,
ինչպէս եւ նրա ժողովրդականացման գոր-
ծում թէ ձեմարանում եւ թէ ձեմարանից
գուրս:

² Տե՛ս Եր. Շահազիղ, «Սմբ. Շահազիղի կեն-
սագր.», էջ 24:

«1860թ., Ա. Շահաղիզը — ոպատմում է եր. Շահաղիզը — աւարտում է Լազարեան ձեմարանի գիմնազիոնական ընթացքը և մանում է Լիկէոն, որը բաղկացած էր երկու դասարաններից և կազմում էր ձեմարանի արեւելագիտութեան մասնագիտական եօթներորդ եւ ութերորդ բարձր դասարանները։ Այսուեղ էլ նա իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է Հայերէնի վրայ, անդադար կարդալով, անդադար կառարելագործուելով զրարարագիտութեան մէջ և հետզհետէ կոկելով, մշակելով իր աշխարհաբար լեզուն, եւ նախապատրաստուելով ու տալով նրան այն ձեւն ու գոյնը, որ մենք յետոյ տեսնում ենք «Լեռնի վշտի» մէջ³։

Այսուհետեւ, երր 1873թ. վախճանուում է Մսեր Մսերեանցը, Ա. Շահաղիզն է ստանձնում Հայերէնի դասերը բարձր դասարաններում. իր այս պաշտօնում, նա վերացնում է ճարտասանութեան դասաւանդութիւնը, գործածութիւնից հանում Մ. Էմինի և Սալլանթեանի քերականութիւնները եւ պատրաստում է, իրբեւ քերականութեան ձեռնարկ, իր սեփական ձեռագիր տետրակը աշխարհաբարի համար⁴։ Բացի այս բոլորից, որ գլխաւորն է, նա մացնում է աշխարհաբարի շարադրութիւնը⁵։

³ Անդ՝ էջ 23։

⁴ Ես լաւ յիշում եմ, որ Հէնց այդ տետրակով էլ ես և իմ դասընկերներն էինք սովորում 80ական թուականների վերջերքին եւ 90ականի սկիզբներին։

⁵ ՏԵ՛ս անդ, էջ 26։

Ինչպէս յայտնի է 1865 թ. է լոյս տեսել նրա «Լեւոնի վիշտը» աշխարհաբար լեզուով, ուր ներբռդում է այն, տաելով, որ՝
 «Ժամանակակից գրում եմ լեզուով,
 Որ ամենայն մարդ կարդայ, հասկանայ . . .» :

Նոյն պօչմայի երրորդ դլխում նա արդէն հանդէս է զալիս պայքարողի զերում յօդուտ «Ժամանակակից լեզուի» եւ պարսաւանքներ ուղղում դրաբարի մոլեուանդ պաշտպանների հասցէին :

Միքայէլ Նալբանդեանի, թէեւ կարձատեւ ուսուցչութեան օրով, կատարած զերը ձեմարանում աշխարհաբարի նկատմամբ եղել է ո՞չ պակաս զօրաւոր։ Այդ մասին վերը արդէն յիշատակեցինք :

*

Այսպէս, առանց չափագանցութեան կարող ենք տեսել, որ Լազարեան ձեմարանը եղել է Հայոց լեզուի, Հայոց գրականութեան, պատմութեան ու լեզուագիտութեան մի անպաշտօն ակադեմիա — «Մոսկովեան Արէնի Հայոց» :

Հետեւելով ժամանակի յառաջադէմ ու պատարար ողուն, ձեմարանը աշխարհաբար լեզուի խնդրում էլ մեծապէս նպատել է այն պայքարին, որ տասնեւակ տարիներ մղուել է աշխարհաբարի յաղթանակի համար ձեմարանում ու ձեմարանի պատերից դուրս աղդային հասարակական կեանքի մէջ :

Այդ պայքարի մէջ ուրախալին ու ող-
ջունելին, ի դէպ, այն է, որ աշխարհարարի
կողմնակիցներն ու պաշտպանները չհետեւե-
ցին գրաբարի պաշտպանների տվել օրինա-
կին և երբեք ո՛չ նուաստացրին, ո՛չ ուրա-
ցան գրաբարի մէծ արժէքը, նրա լեզուական
հարատութիւնը, նրա ճկնութիւնը, նրա կա-
նոնաւորութիւնը, նրա հմայիչ զեղեցկու-
թիւնն ու քաղցրահնչութիւնը :

Աշխարհարարի յաղթանակը մի անգամ
եւս եկաւ առացուցելու, որ հասարակական
կեանքի ընականոն հոլովոյթի ընթացքը ան-
կարելի է փոխել մարդկանց քմահաճոյքով,
որ պատմական յառաջադիմութեան անիւը
անհնարին է յետ մղել նոյն խոկ ամենաուժեղ
անհատների կամքով, որ նա զարգանում է
կեանքի մէջ իշխող կոյր ոյժերի անդրդուելի
հարկադրանքի ներքոյ :

Ժամանակի մատարականութեան իմա-
ցականութեան աստիճանից է կախուած ըմ-
բռնել ժամանակի ողին ու պահանջները.
ըմբռնել տուեալ հասարակական հաւաքս-
կանութեան պատմական զարգացման ուղին
եւ ըստ այնմ զործել :

Աշխարհարարի պաշտպանները, մամա-
ւորապէս Լազարեան Ճեմարանը պարծանքով
կարող են արձանագրել, որ Յօական թուա-
կանների Հայոց շքեղ վերածնութեանը ո՛չ
միայն անմաս չեն մնացել, այլ եւ բերել են
իրենց խոչոր վաստակը :

ԳԼՈՒԽԻ Բ.

ՃԵՄԱՐԱՆԸ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՐՉԱՎԱՆ
ԿԱՂԱՔԸ
(1815—1890)

ՃԵՄԱՐԱՆԸ ԱԿՂՋԻՑ ունեցել է միայն դի-
շերօթիկ աշակերտներ՝ Լաղարեանների որ-
դեպիրները. այնուհետև ժամանակի ընթաց-
քում ընդունուել են նաև երթեւեկներ ու նոր
զիշերօթիկներ՝ ժամանաւոր նուիրատունների
որդեպիրներ եւ կամ սեփական հաշուով սո-
վորողներ:

Գիշերօթիկ աշակերտների 9/10րդը եղել
են հայ երեխաններ եւ շատ փոքրաթիւ ուսու-
երեխաններ. այսպէս, օրինակ, 80ական թուա-
կաններին, զիշերօթիկ աշակերտների թիւը
հասել էր չուրջ 160 հոգու, որոնցից միայն
15 հոգի ուսու երեխաններ էին: Մեծ ժամը
եկած էին Արարատեան աշխարհից, իսկ մի
փոքր ժամը՝ Հիւսիս, Կովկասից: Իմ աշա-
կերտութեան ժամանակ կային նաև 3 հոգի
Պոլսեցի հայ երեխաններ, որոնցից միայն
մէկը աւարտեց ՃԵՄԱՐԱՆՆ ու համալսարանը,
եղաւ բժիշկ եւ մնաց Ռուսաստանում, միւսը՝
4րդից դուրս եկաւ, իսկ երրորդը՝ ստորին
դասարաններից հեռացաւ:

Աշակերտների թուի ժամին 1815 թ. մին-
չեւ 1865 թ. չկան սիստեմատիկ տեղեկու-
թիւններ. մի քանի առւեալներ զանազան ժա-
մանակների համար արդէն յիշատակուած են
մեր պատմութեան ընթացքին:

Հետեւեալ տախտակի վրայ մատնանը-
շուած էն աշակերտների թուի մասին տեղե-
կութիւններ սկսած 1865 թ. մինչեւ 1890 թ.
այդ տուեալները մէնք քաղել ենք «Ապ-
հեմ. 75ամեակիլ» հրատարակութիւնից :

Այս տախտակից երեւում է՝

ա. Որ աշակերտների թիւը աստիճանա-
բար աճել է և այդ աճումը աւելի ուժեղ է
եղել 1872 թ. յետոյ, երբ ձեմարանը նոր

թիւի համար տախտակ

և նեմարանի աշակերտների քուի 1865—1890 թթ.

Թթ.առաջն. տարի	$\frac{\text{Աշակերտների թիւ}}{\text{թթ. պահ}}$					
1865/66	159	13	146	—	95	3
1866/67	153	9	144	—	98	11
1867/68	161	23	138	—	94	17
1868/69	157	25	132	96	97	16
1869/70	162	22	140	96	94	—
1870/71	156	20	136	97	89	11
1871/72	177	23	154	104	92	8
1872/73	183	29	154	101	95	4
1873/74	223	43	180	114	95	3
1874/75	234	49	185	132	94	3
1875/76	241	66	175	—	94	—
1876/77	241	63	178	149	94	10

Առաջնական մասնակիցների թիվ	Առաջնական մասնակիցների գումարը					
1877/78	248	67	181	154	93	7
1878/79	242	65	177	157	92	9
1879/80	256	69	187	—	88	9
1880/81	246	64	182	171	91	8
1881/82	240	63	177	168	90	11
1882/83	216	47	169	149	94	21
1883/84	228	72	156	149	96	12
1884/85	246	74	172	156	98	12
1885/86	242	71	171	156	96	11
1886/87	246	84	162	152	100	10
1887/88	259	95	164	160	98	9
1888/89	275	109	166	159	96	6
1889/90	273	117	156	158	101	7
Ընդամենը՝	5464	1382	4082	2778	2364	218*

Կանոնադրութ անցել է ժողովրդ - լուսաւորութեան միջնակարդ ու բարձրագոյն դպրոցների չարք .

թ. Որ զիշերօթիկ աշակերտները միշտ կազմել են մեծամասնութիւն երթեւեկների համեմատութեամբ :

գ. Որ Հայ Երեխաները կազմել են ձեմարանի ամբողջ աշակերտութեան 60—75% ը

* Մի այլ աեղում մասնակցուած է՝ 224:

այդ է պատճռուը, որ Լազարեանները միշտ համարել են, որ Ճեմարանը հայկական դպրոց է, թէև դպրոցական բոլոր առարկաները աւանդուել են ոռւսերէն լեզուով, բացի Հայոց լեզուից, Հայոց պատմութիւնից ու կրօնից:

Դ. Որ վերջին 25ամեակում Ճեմարանը տուել է տարեկան չուրջ 9 չքջանաւարտներ, մինչդեռ նախկին 50ամեակում նրանց թիւը եղել է չափ աւելի բարձր¹: Այս երեսոյթը բացատրւում է նրանով, որ 1872 թ. նոր Կանոնադրութ կրթական ծրագրի մէջ մոցրուած էր երկու հին լեզուների՝ յատիներէնի եւ յունարէնի դասաւանդութիւնը, որոնք չտվագանց զժուարացրել էին աշակերտների ուսման զործը եւ նուազացրել ընդհանուր յասաջադիմութեան առկուսը. շատերը ստիպուած էին յինում կէս ճամբրին մնալ եւ հեռանալ դպրոցից. քչերն էին հանում մինչեւ Տրդ դասարանն եւ աւարտում . . . :

ՄԵնք շատ լու յիշում ենք, որ երբ 1887 թ. մտանք Ճեմարանի առաջին դասարանը, այդ դասարանում կայինք 57 հոգի,

¹ Թէև առաջին 50ամեակում ճեմարանաւարտների թիւը բայտնի չէ իւրաքանչիւր ուսումն. տարու համար, բայց զիտենք, որ 1848/49ից մինչեւ 1864/65 ուսուարիների ընթացքում՝ այսինքն 17 տարուաց մէջ ճեմարանը տուել է 399 ուսումնաւարտներ, այսինքն՝ միջին հաշուած տարեկան 24 հոգի եւ այդ այն ժամանակներում, երբ աշակերտութեան թիւը շատ աւելի պակաս է եղել, քան հետազոտում Այսոքս, օրինակ, 1825 թ. ճեմարանը ունեցել է միայն 75 աշակերտ, 1863 թ. — 136, իսկ 1865 թ. — 159:

բայց երբ 1895 թ. մենք աւարտեցինք, Տրդ
աւարտական դասարանը, հասել էին միոյն
17 հոգի, և դա համարում էր շրջանաւարտ-
ների մեծ թիւ:

*

Ճեմարանի ուսուցչական և վարչական
կազմերի մասին չկան տեղեկութիւններ մեր
ձեռքի տակ եղած աղբիւրներում, բացի ոյն
մի քանի հակիրճ վկայութիւններից, որոնք
վերաբերում են՝ Մկրտիչ Եմինին, Ամրատ
Շահապիդին, Միքոյէլ Նալբանդեանցին Քա-
նանեանին, Միլլէրին, Կոստանեանին և
որոնք արդէն վերը յիշատակուած են:

Սկզբնական շրջանում ճեմարանի ընդ-
հանուր վերահսկողութիւնը ստանձնել էին՝
Հոգարարձուն և նրա օգնականները, որոնք
կրում էին զանազան անուններ զանազան ժա-
մանակներում՝ թեկոր, կոմանդիր, վերա-
տեսուչ և ոյն։ Հետազոյում միոյն վերջ-
նականապէս հաստատում են՝ վերատեսուչ
(դիրեկտոր) կոչումը։

Մ. Եմինը եղել է առաջին տեսուչը՝
1850 թուից սկսած։

Առաջին վերատեսուչը եղել է գնդապետ
Զելեսնին, եթէ չհաշուինք Խաչատուր Լա-
զարեանին, որ միաժամանակ եղել է Հոգա-
րարձու և վերատեսուչ։

Արդ, յիշատակենք միոյն վարչական
մարմինների կազմերը ժամանակագրական
կարդով։

Գլխաւոր կառավարչապետներ

1. Կոմս Ալեքսէյ Անդրէեւիչ Արակէեւ՝
1824—1827 թթ.:
2. Կոմս Ալէքսանդր Խրիստոֆորովիչ Բեն-
կենդորֆ՝ 1828—1844 թթ.:
3. Կոմս Ալեքսէյ Ֆեոդորովիչ Օբլով՝ 1844
հոկտ. 12ից—1860 թ.:
4. Գաղտնի խորհրդական Վլադիմիր Պե-
տրովիչ Բուտկով՝ 1860—1869:
5. Կոմս Դիմիտրի Անդրէեւիչ Տոլստոյ՝
1870—1872 (միաժամանակ ժողովրդ.
լուսաւ. Նախարար):

Վերատեսուչներ :

1. Խաչատրուր Յովակիլիմեան Լազարեան՝
1826—1849 թթ.:
2. Գնդապետ Զելենին՝ 1850—1856:
3. Նիկոլայ Դաւիդովիչ Դելենով՝ 1856—
1861:
4. Ներգործական Խորհրդական Եանուար
Միխայլովիչ Նէվէրով՝ 1861—1864:
5. Պրոֆ. Բարսոս, Իվան Կոնդրատեևիչ՝
1864—1868:
6. Գ. Քանանեան՝ վերատեսչի պաշտօնա-
կառար և միաժամանակ տեսուչ՝ 1868—
1869:
7. Նիկոլայ Դաւիդովիչ Դելենով՝ 1869—
1881:
8. Գէորգ Քանանեան՝ 1881—1897:

9. Պրոֆ. Վահագուստ Ցեղազարովիչ Միլիբ,
1897—1911:
10. Պրոֆ. Պատել Վասիլեսիչ Գիդուլեանով՝
1911—1917:

Տեսուչներ:

1. Մկրտիչ Էմին՝ 1850—1861:
2. Գևորգ Քանանեան՝ 1861—1881:
3. Լէզնչուլյան՝ մինչեւ 1897թ.:
4. Պրոֆ. Գրիգոր Խալա-
թեան՝
5. Գառապարեան՝
6. Իսահակ Թանգեան
(Թանգով)՝
7. Կարապետ Կոստանեան՝ 1911—1917թթ.

Պատուակալ հոգաբարձուներ:

1. Իշխան Սիմեոն Դաւիդովիչ Արամելիք-
Լազարեան:
2. Իշխան Սիմեոն Սիմեոնովիչ Արամելիք-
Լազարեան:

*

Աջակերտութիւնը օժտուած է Եղել գործական անհրաժեշտ պիտոցքներով ու կրթական միջոցներով:

- Մատենադարանում Եղել են՝ առ 1863թ.՝
- ա. Գրքեր հայերէն, ռուսերէն, պեր-
մաներէն, Փրանսերէն և միւս
եւրոպական լեզուներով, ինչպէս
եւ արեւելեան լեզուներով . . . 5·256

- թ. Զեսաղիքներ ոռւսերէն, Հոյերէն
 և արեւելեան լեզուներով 227
 Այդ 227 ձեսաղիքներից ոռւսե-
 րէն և արեւելեան լեզուներով՝
 85, մնացեալը՝ Հոյերէն:
 գ. Ֆիզիքոյի կարինեառում զանազան
 գործիքներ 164
 դ. Հանքարանական կարինեառում 4.772
 է. Հին դրամների հաւաքածոյ (բաղ-
 կացած ոսկի, արծաթիչ զանազան
 հին և նոր դրամներու մեղադնե-
 րով) . 2.421
 զ. Աշխարհաղբական քարտէզներ,
 ատլասներ, դիմանեկարներ, նկար-
 ներ և այլն . 1.186
 է. Երկրագունդեր, մեծ ու փոքր 6.000

Մատենադարանի դրացուցակը 1861 թ.
 կազմել է յատուկ յանձնախումբ, բաղկա-
 ցած Յ Հոգուց, որոնցից մէկը եղել է՝ վերա-
 կացու, Մանուկ Սալահեանը, Լեռմոնտովի
 «դեւ» պօէմոյի անդուզական թարգմանիչը:

»

Ճեմարանի դիմաւոր գեղեցիկ ու ճաշա-
 կառոր մուտքի դիմացի պատից կախուած էին
 ոսկեգոյն շրջանակների մէջ, կապոյտ դպնով
 ներկուած մեծ տախտակներ, որոնց վրայ
 ոսկեզօծ տառերով զրուած էին ճեմարանի
 այն շրջանաւարտների անուն-ազգանունները,
 որոնք արժանացել էին ոսկէ և արծաթիչ մե-
 զայների:

Այդ տախտակների վրայ առ 1862 թուականը արձանագրուած էն՝ 125 անուններ:

Այդ անունների մէջ կան հանրածանօթանձանց անուններ, ինչպիսիք են՝ Յակոր Եւ Դաւիթ Արզանեանները, Սիմէոն Սուլթանշահ, Յովսէփ Զէրքէղեան, Պետրոս Շահշեան, Գարբիէլ Խատիսեան, Սերովէ Պատկանեան, Կարապետ Եղով, Զարմայր Մսերեանց, Սմբատ Շահազիդ եւ այլն:

*

Մի քանի խօսք եւս դիշերօթիկ աշակերտների ներքին կեանքի մասին, հիմնուելով մեր յուշերի վրայ, երբ եղել ենք ութը (8) տարի դիշերօթիկ աշակերտ ճեմարանի դիմագիոնական բաժնում (1887—1895 թթ.), իսկ հետագայում՝ վերակացու, դաստիարակ եւ ուսուցիչ՝ 1909—1918 թթ.:

Դիշերօթիկ աշակերտաները ապրել են փակ կեանքով ճեմարանի չորս պատերի մէջ, զրեթէ առանց լոյս աշխարհ տեսնելու . . . :

Ստանալով սնունդ բաւարար չափով, հաղուստ, ուսում, աշակերտութիւնը կրուրուած է եղել մարդկային հասարակութիւնից . . . Նրա միակ մխիթարանքը եղել է ամենօրեայ զրօսանքը դասերից յետոյ, վերակացուների հակողութեան ներքոյ. զոյդզոյդ գնում էինք զրօսանքի զրեթէ միշտ միեւնոյն փողոցներով. հազուագիւտ զէպքերում էր փոխում այդ մարշրուտը. զրօսանքը տեսում էր մի ժամ:

ՄԵԾ միսիթարանք էր աշակերտութեան համար, երբ տօն կամ կիրակի օրերին դնում էինք թատրոն . . . : Մեր միապաղազ առօրեայ կեանքի մէջ այդ այցելութիւններն էին, որ մտցնում էին լուսոյ ձառագայթ . . . :

Մոսկուայի Կօրչի թատրոնը, որ եղել էր Ճեմարանի նախկին աշակերտ, ամէն կիրակի օր առաւօտեան, երբ ներկայացւում էին ոլիեսներ աշակերտութեան համար, ուղարկում էր 30—40 հատ ձրի տոմսեր. նոյնը անում էին Մոսկուայի երկու կայսերական թատրոնները արքայական տօների ժամանակ :

Աշակերտութեան օրուայ կեանքի ժամերը դասաւորուած ու սահմանուած էին՝ թէյի նախաճաշի, ճաշի, դասերի, դասերի պատրաստութեան, քնելու ու խաղալու համար :

Աժառուայ արձակուրդներին աշակերտներին տանում էին ամարանոց՝ ամէն տարի միեւնոյն գիւղը՝ Ֆիլի, և միեւնոյն ամարանոցը . . . բարերախտաբար, ամարանոցը գտնուում էր մեծահարուստ Շելապուտինի հսկոյ անտառի կողքին. յաձախ էինք դնում այդ անտառը սունկ կամ ելակ հաւաքելու: Հեռու չէր եւ Մասկուա-գետակը, ուր Ճեմարանը ունէր սեփական վայտէ լողարանը. լաւ եղանակներին, ճաշից առաջ, դնում էինք լողանալու, որ մեզ մեծ հաճոյք էր պատճառում :

Բախտաւոր էին այն գիշերօթիկ աշակերտները, որոնք ամառուայ արձակուրզներին մեկնում էին իրենց ծննդավայրերը, իրենց ծնողների մօտ, իսկ ուսումն տարրուաց ընթացքում Մոսկուացում ունէին ազգականներ կամ մօտիկ ծահօթներ։ Ամէն շաբաթ երեկոյ կամ կիրակի ու տօն օրերին ոյզպիսիները արձակուրդ էին ստանում և ոյզպիսով հնարաւորութիւն էին ստանում, այսպէս ասած աշխարհ դուրս գալու, մարդաւոնելու, նոր ապաւորութիւններ ստանալու։

Գիշերօթիկ երեխաների մասնաւոր նամակադրութիւնը ազատ էր ամէն հոկտեմբիւնից ու քննութիւնից։

Միայն Երր դրամ էին ստանում, անսուչը այդ գրամական նամակները աշակերտի ներկայութեամբ բաց էր անում, նամակը տալիս իրեն, իսկ դրամը պահում եւ առզա ամէն շաբաթ օր վոքրիկ գումարներով տալիս՝ սկսած 20կոսպէկից . . .

Բացի դրաւոր, հիմնական մասենազարանից, ձեմարանը ունէր նաև զրադարձն աշակերտութեան համար՝ հայերէն և ուսերէն ընթերցանութեան զրքերով։

Աշակերտներից մէկն էր վարում ոյզ զրադարձնը։ Ամէն օր դասերից յետոյ զրադարձներում էին զրքեր։

Պիտի ասել, որ հայ Երեխաների մէջ ընթերցամիրութիւնը շատ թոյլ էր, մինչդեռ

ոյն մի քանի ոռուս գիշերօթիկ Երեխաների
ձեռքից զիրքը վար չէր գրւում . . . :

Կիրակի և տօն օրերին աշակերտները
վերակացուների առաջնորդութեամբ զոյլ-
զոյլ զնում էին Ս. Խաչ եկեղեցին, որ զըս-
նում էր Շեմարանի գիմաց նոյն Հայոց փո-
ղոցի վրայ :

Կարգապահական խիստ պատիժներ
չկոյին՝ անկիւն կանգնեցնել, արձակուրդից
զրկել, խոլ ծայրացնող զէպքերում առանձ-
նոցնել 1—2 ժամով մի լուսաւոր ունեա-
կում (Կարցեր) :

Շեմարանը ունէր վոքրիկ հիւանդանոց,
իր ֆելգչերով ու զթութեան քոյրով : Ամէն
օր Երեկոյեան, առաջին սերազութիւնից յե-
տոյ, ֆելգչերը անհրաժեշտ զեղօրացքով,
զալիս էր և ընդունում Երեխաներին, որոնք
որեւէ կարիք էին ունենում : Մանր հիւանդ-
ներին տեղաւորում էին հիւանդանոցում,
բժշկի հսկողութեան ու խնամքին ենթակայ :

Ազատ ժամերին աշակերտները խաղում
էին Շեմարանի ընդարձակ պարտէզում, ա-
մառը, խոլ ձմեռը՝ մարզանքի համար կա-
ռացուած մէծ սրահում՝ Մանուկ Բէյի սրա-
հում :

Աշակերտութեան մէջ սովորութիւն կար,
որ յառաջազէմ աշակերտները կամ բարձր
գասարանների աշակերտները օգնում էին
սոսորին գասարանների թոյլ աշակերտներին
գասեր պատրաստէլու մէջ : Ունեւոր աշա-
կերտների ծնողները երբեմն վարձատրում

էին իրենց թոյլ երեխացի հետ պարագող ա-
շակերտին :

ԳԼՈՒԽ Թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՔ ՀԵՄԱՐԱՆՈՒՄ

Ի՞նչ զիմակում է եղել մանկավարժական
դործը ձեմարանում, — այս հարցումին
դժուար է փոքր ի շատէ լրիւ պատասխան
տալ, քանի որ դրեմէ տեղեկութիւններ չկան
մեր ձեռքի տակ եղած աղբիւրներում :

Անշուշտ, գոյութիւն չի ունեցել որեւէ
մանկավարժական սիստեմ, մանաւանդ սկզբ-
րնական շրջաններում, որ կիրառուած լինէր
ամբողջ ձեմարանում, լինէր ընդհանուր ու
պարտադիր բոլոր ուսուցիչների համար :
Նոյն իսկ մեր աշակերտութեան օրերին
80ական թուականների վերջերքին և 90ական
թուականների սկզբում, երբ վաղուց ար-
դէն ձեմարանը մտած էր ժողովրդական լու-
սաւորութեան նախարարութեան դպրոցա-
կան ցանցի մէջ, մի ընդհանուր մանկավար-
ժական սիստեմ գոյութիւն չունէր . իւրա-
քանչիւր ուսուցիչ վարում էր իր դասաւան-
դութիւնը իր ըմբռնած ձեւով, իր փորձա-
ռութիւնից դուրս բերած հասկացողութեան
համաձայն . . . :

Կան կցկառուր տեղեկութիւններ միայն
կարգապահութեան խնդրի մասին :

Կարելի է որպէս մի ընդհանուր դիտո-
ղութիւն ասել, որ մինչեւ 60ական թուական-

ների մեծ բարենորոգողական ժամանակա-
շրջանը, պետական դպրոցներում իշխել են
շատ խիստ կարգապահական կարգեր եւ որ
ձեմարանը բացառութիւն չի կազմել այդ
տեսակէտից։ Յայտնի է, օրինակ, որ ձեծը
համարուել է թոյլատրելի միջոց պահպանե-
լու դպրոցում կարգապահութիւն, եթէ չխօ-
սնք ժամանակաւոր առանձացման կամ այլ
պատժական միջոցների մասին։

Տեղեկութիւնները ասում են, որ ձեմա-
րանում էլ հետեւել են նոյն կարգապահա-
կան խիստ միջոցներին, թէ եւ ձեմարանի
հիմնադիրների մշտական ցանկութիւնն է
եղել, որ ձեմարանը իր որբ ու չքաւոր երե-
խանների համար, հեռաւոր երկիրներից եկած
ու զրկուած ծնողական խնամքից ու դուր-
դուրանքից, լինի մի ընտանեկան օջախ։

Յայտնի է, օրինակ, Խաչատուր Լազա-
րեանի մարդասիրական հայեացքները ման-
կավարժական գործի նկատմամբ։

Իր մի նամակի մէջ, զրուած Եփրեմ կա-
թողիկոսին դեռ 1811 թ., հետեւեալ կար-
ծիքն էր նա յայտնել Հայոց զպրոցներում
կիրառելիք ուսման մեթոդի մասին։

— Դպրոցում ուսուցումը պիտի լինի՝
«Համեստ, թարց (առանց) խիք ցաման,
բարկութեան եւ զանից պատժոյ հմտեցու-
ցանել, զի բարկութիւն, սպանալեօք ահա-
ցուցանելն եւ խիստ պատժելն բարբարոսա-
կան է գործ, միշտ խոռվեցուցիչ եւ յուսահա-

տեցուցիչ աշակերտի, նմանապէս եւ տաղակութիւն ուսուցչին¹»:

Չնայած Լազարեանների մարդասիրական այս ոգուն, Ճեմարանում կիրառուել են կարգապահական խիստ միջոցներ:

Եր. Շահագիզը, Մ. Իմինի կենսադրութեան մէջ պատմում է, որ նրա տեսչութեան օրօք (1850—1860) գանակոծութիւնը կիրառուելիս է եղել, որպէս մի միջոց պահպանելու Ճեմարանում կարգապահութիւնը:

— «Պարզ ու ճիշտ է եւ այն, — զբում է Եր. Շահագիզը, — որ. Մ. Իմինը իրրեւ գաստիարակ եղել է չափից դուրս ձատապահ եւ խօտապահանջ, որի պատճառով եւ իր տեսչական զործունէութեան մէջ նա բազմաթիւ եւ խոչոր անբաւականութիւնների և անախորժութիւնների պատահել...: Նրա տեսչութեան օրով, օրինակի համար, գտնակոծութիւնը, որ այն ժամանակները ուսումնարանական օրէնքով թոյլատրուած մանկավարժական խրատական միջոցներից մէկն է եղել, չափազանց իշխող զեր է կատարել Լազարեան Ճեմարանում: Պատմում են, որ նա համարեա միշտ ներկայ գանուելով աշակերտներին գանակոծելու զործովութեան, սովորութիւն է ունեցել յաճախակի խրախուսել զարկողներին, «Ենթե, արմանская кожа толста!» (= Զարկէք, Հայի կաշին հաստ է) խօսքերով»:

¹ Տե՛ս լէօ, «Պատմ. Եր. թեմ. զորոցի», էջ 92:

Եթէ ի նկատի առնելու լինինք նաև
Սմբատ Շահազիզի հետեւեալ կարծիքը Մ.
Էմինի մասին, թերեւս, Եր. Շահազիզի վե-
րոյիչեալ պատճութիւնը Էմինի խստապա-
հանջութեան մասին չհամարուի չափա-
գանցութիւն, ինչպէս առաջին հայեացքից
թւում է :

«Էմինը — առում է Սմբ. Շահազիզը,
— մի պաղարիւն եւ սառնասիրու մարդ էր.
Նա կարծէս թէ ծանօթ չէր զզացմունքների
աշխարհի հետ. նա, կարելի է ասել, աւելի
զզում էր խելքով, քան թէ սրոով։ Այս
պատճառով նա միշտ ծանրաբարոյ եւ ան-
յոզզողդ երեւելով, իւր աշակերտներին ահ
ու երկիւդ էր ազգում, քան թէ սէր ու հա-
մակրութիւն, մի յատկութիւն, որ մանկա-
վարժութեան ասովարէզում չի կարող լինել
այնքան բեզմնաւոր ու նարատակայարժար։
Էմինի մասին առհասարակ առում են, որ նա
իւր տեսչութեան ժամանակ եղել է բիւրո-
կրատ եւ Փորմալիստ, բայց այդ ուղիղ չէ.
մի այդպիսի կարծիք առաջացել է նրա բնա-
ւորութեան յիշեալ զանդուածից, որ ամէն
տեղ եւ ամենից դիտէ խստիս պահանջել կար-
գապահութիւն եւ մի չնչին զանցառութիւնը,
որ այնքան սեփական է մանուկ սերնդի
յարափոփոխ հոգեկան երեւոյթներին, են-
թարկում է երբեմն անարժան պատիժների։
Այսպիսի գէպքեր շատ են պատահել Էմինի
վարչութեան չրջաններում։ Էմինը ապրել է

թի ժամանակ, երբ որ եւ է բարի խստանուածքով մարդը պիտի լինէր խստապահանջ եւ անագործոցն, ինչպէս եւ ներշնչում էր Նիկոլայեան ռեժիմը²:

60ական թուականներին, երբ կործանուած էր ու վարկարեկուած Նիկոլայ Ա. բանագետական ռեժիմը, երբ Ռուսաստանում ծնունդ առան ազատատենչ եւ հումանիտար դադախարները, երբ հասարակական կեանքը վերից վար բարեփոխման ճամրու վրայ էր, երբ հասարակական կեանքի միջնորդար խոտացած էր մի կողմից զերմանական փիլիսոփայութեան առաջաւոր գաղափարներով, միւս կողմից 1848 թ. Փետրուարեան յեղափոխութեան ազգեցութեան առակ էր զտնուում ժամանակի յառաջադէմ մտաւորականութիւնը, որի հումանիտար գաղափարների քարոզչութիւնը ամենից առաջ թափանցել էր համարաբանները ու ազանաեւ միւս դպրոցները, — բնականաբար փոխուեցին եւ մանկավարժական հայեացքներն ու կարգապահական մեթուանները:

Արդէն ողահանջուում էր մեղմ ու մարդասէր վերաբերմունք զէպի աշակերտութիւնը, ներողամտութիւն հանդէպ մանուկ սերունդի բնական զանցառութիւններն ու չարութիւնները: Տիրում էր այն համոզումը, որ մեղմութեամբ, բարութեամբ, ներողամ-

² Տե՛ս Եր. Շահազիզի, «Ամբ. Շահազիզի կենսագրութիւնը», էջ 16—17:

առովեամբ, անյիշաչարութեամբ կարելի է զաստիարակչական դործում հասնել շատ աւելի մեծ դրական արդիւնքների, քան խստութիւններով:

Լազարեան ձեմարանն էլ ունեցաւ իր ներկայացուցիչը այդ մարդասիրական հայեացքների մանկավարժական դործում ի գէմս նոր վերատեսչի՝ Պ. Նէվէրովի (1861—1864) :

Նէվէրովի մարդասիրական ընթացքին այնուհետեւ հետեւել են Գէորգ Քանանեանը, մանաւանդ իր վերատեսչութեան օրօք, ուսուցիչ Ամրատ Շահազիղը, վերատեսչ Վուլէրը և այլն:

Մեր աշակերտութեան տարիներին՝ 1887—1895 թթ. Գէորգ Քանանեանը վերատեսուչ էր, որի օրօք ո՛չ միայն ծեծը երբեք չի կերառուել, այլ եւ իշխել է չափազանց մեղմ ու համբերատար մթնոլորտ:

Մենք կարող էինք յականէ անուանէ յիշատակել դէպքեր, երբ եղել են չափազանց չար ու անհանդիստ երեխաներ, որոնք, անտարակոյս, մի ուրիշ վերատեսչի օրօք չէին հանդուրժուի գպրոցում, բայց որոնք այնուամենայնիւ շարունակեցին իրենց ուսումը, աւարտեցին ձեմարանը, համալսարանը և եղան հասարակութեան օգտառէտ անդամներ՝ մէկը որոնէս իրաւարան, միւսը որպէս բժիշկ:

Նոյն բարեսիրա, համբերատար ու վեհանձն ողին շարունակուեց նաև Քանանեանի յաջորդի՝ Պրոֆ. Վ. Միլէրի օրօք, որ մի տիպիկ արխատոկրատ էր, բարեհամրոյր ընտառութեամբ, իսկական հումանիստ:

Սակայն իրերի այս վիճակը խախտուեց երր Պրոֆ. Միլէրից յետոյ, 1911 թ. վերատեսչի պաշտօնը ստանձնեց Պրոֆ. Պաւել Վասիլենիչ Գիգուլեանովը, իսկ տեսչի պաշտօնի Համար, տեսուչ Խոահակ Թանգեանից յետոյ Հրաւիրուեց Հոյազէտ Կարապետ Կոստանիսանը:

Երկուսն էլ չոր ու ցամաք բիւրոկրատներ, Երկուսն էլ խորթ էին, ձեմարանին ու նրա զեղեցիկ աւանդներին . . . :

«Յայտնի դիտնական, լեզուարան, պատմաբան եւ արեւելագէտ Պրոֆ. Վանվոլոդ Միլէրից, նախկին վերատեսչից յետոյ, — գրում է Արսէն աւ. քահ. Սիմէոնեանցը «Հայրենիք» ամսագրում³, — եկել էր նրան վոխարինելու Մոսկուայի կայսերական համալսարանի եկեղեցական իրաւունքի Պրոֆ. Պ. Վ., Գիգուլեանովը, մի ըստ ամենայնի սահմանափակ ընդունակութեանց եւ պատրաստութեան տէր անձ, իր բարոյական դիմագծով չափազանց յեղյեղուկ, իր քաղաքա-

³ Հայրենիք ամսագիր, 1947, Բիւ 3, Մայիս-Յունիս, էջ 104:

կան Հայեացքներով սեւ Հարիւրեակային, և ուրեմն դէմ բոլոր Ռուսիոյ Հպատակ վոքք ազգերուն, նաև Հայերուն» :

Այս վկայութիւնը միանգամայն ճիշտ է ու համապատասխան իրականութեան :

Իսկ Կարապետ Կոստանեանի մասին մենք մեր յուշերի մէջ գրել էինք նոյն «Հայրենիք» ամսագրում (1946 թ. մարտ-ապրիլ համարում) հետեւեալը .

«Կորապետ Կոստանեանի տեսչութեան օրօք ձեմարանի աշակերտների առօրեայ կեսնքը վերածուեց ցարական օրերի զօրանոցի . . . : Էինելով մինչեւ ուղն ու ծուծը րիւրոկրտա՝ նա վերացրեց նաև ոյն գեղեցիկ ու խմաստալից աւանդութիւնը, որ թողել էր նախկին վերատեսուչ հանգուցեալ Քանանեանը և որին հետեւել էր Պրոֆ. Միլյէրը: Քանանեանը միշտ խստիւ հակառակում էր և թոյլ չէր տալիս Հայ գիշերօթիկ աշակերտներին արտաքսել ձեմարանից, եթէ նոյն խակ նրանք աչքի էին ընկնում իրենց չարութեամբ և ուսման մէջ քիչ յաջողակ էին, համարելով որ նման խստութիւնները հակառամ են ձեմարանի հիմնադիրների թողած մարդասիրական աւանդներին:

«Կ. Կոստանեանը օտար էր Լազարեանների աւանդներին և չափազանց ինքնուրոյն իր մանկավարժական ըմբռնումների մէջ: Եւ առանց մի վայրկեան խոկ տատանուելու, նա առաջ էր տանում զպրոցական կարգա-

սպահութեան նկատմամբ իր ունեցած խստապահանջ հասկացողութիւնները ու այդպիսով խախտում ձեմարանի դարաւոր մարդասիրական աւանդները . . . :

«Կ. Կոստանեանը հայ Երեխաններին արտաքսում էր ամենափոքր չարութիւնների ու կոպիտ արտայացուութիւնների համար և այդ անում էր առանց խորհրդակցելու զաստիարակ-իւրակացուների հետ կամ մանկավարժական ժողովի համաձայնութիւնն առնելու, միանգամացն ինքնիշխան կերպով . . . :

«Նա կանչում էր Երեխային, պատուիրում նրան հաւաքել իր իրեղէնները և ապա դրամ տալիս ծառային Երեխայի ճանապարհածախսի համար և ծառայի հետ ուղարկում կայարան, որն և ճամրու էր դնում Երեխային դէպի իր ծննդավայրը . . . :

«Երեխանների արտաքսումը ձեմարանից վերջին տարիններում ուղղակի համաձարակի բնոյթ էր ստացել . . . »:

1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութիւնը վերջ տուեց վերատեսչի ու տեսչի պաշտօնավարութեան, ինչպէս եւ իր՝ ձեմարանի դոյութեան, որ շարունակուեց միայն մինչեւ 1917—1918 տառումն. տարուայ վերջը: 1918 թ. աշնանը ձեմարանը վերածուեց «Կ. Հայաստանի հայ Մշակոյթի տան . . . »:

ԳԼՈՒԽԻ Ժ.

ԱՐՁԱՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ՃԵՄԱՐԱՆԻ ՃԻՄՆԱԴԻԲՆԵՐԻ

ՃԵՄԱՐԱՆԻ պարտէզում բարձրանում է մի բարձր բուրդաձեւ արձան, որ կառուցուած է ի յիշատակ նրա հիմնաղիքների եւ սրանց ընտանիքների մի քանի անդամների:

Արձանը բուրդի ձեւ ունի՝ բարձրութիւնը՝ 30 կանգուն. չինուած է թուջից (չուղունից) եւ կշռում է՝ 1000 վութ. ծախսուած է՝ 15.000 ռ. թղթաղբամ:

Բուրդի վրայ քանդակուած են հիմնաղիքների մարմարէ կիսանդրիները:

Արձանի վրայ կան մի շարք մակաղբութիւններ հայերէն եւ ոսւսերէն լեզուներով՝ արձակ եւ չափածոյ: Ծուսերէն բանաստեղծութիւնների հեղինակն է՝ Մոսկովյի համալսարանի Պրոֆ. Մերզլեակովը, իսկ հայերէն մակաղբութիւններն ու ոտանաւորները յօրինուած են ճԵմարանի աշակերտների կողմից:

Առաջ ենք բերում միայն մի քանիսը, քաղելով Մ. Մակերեանցի «Յիշատակարան»ից եւ Պրոֆ. Զինովևի գրքից:

Բուրդի առաջնեւի մասում, որը նայում է զէպի ճԵմարանը, վերեւում զրուած է ոուսերէն՝

«Добродетель бессмертна!» («Առաքի-
նուրիւնն անմասն է») :

*Արձանի տուղեւի կողմը, որ նոյուժ է
զէպի ձևմարանի շենքը՝ Հարցաքննութեան
զահլիճը (Актовая зала), ոնի հետեւալ
մակադրութիւնը.*

«ՏԱԼԱՐԾ ԱՅՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑԵԱՆ Է ՅԱ-
ԽՈՒՐԾ ԹԱԳԱՄԻՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՍԵՐ ԱՎԵՔՇՈԱՆԴՐ Ա-Ի
ՅԱՄԻ 1815, Ի ՄԱՅԻՍ 1»:

«ԵԽԿՈՂԱՅՈՍ Ա. ԿԱՅՍԵՐ ՊԱՐԳԵՒԵԱՅ ԱՐԵՒԵ-
ԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ ՃԵՄԱՐԱՆԵՐ ԱԱԶԱՐԵԱՆԵՑ ԶԱՄԵ-
ՆԱՑՆ ԻՐԱՀՈՒՆՆ ԵՒ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆ, ՇՆՈՐՀԵԱԱՆ
ԼԻՑԵՅԻՑ, Ի 10 ՄԱՅԻՍ Ի 1848 ԱՄԻ»:

*Արձանի աջ կողմուժ, Յովհաննէս Լա-
զարեան Լազարեանցի պատկերի ներքեւուժ՝*

«Դասեսցի ի կանառ շողշողուն աստեղաց
Անաղօս արուսեակն լոյս ի յազգ Հայկա-
գանց .

Գերապանձն Յովհաննէս Փառք իւրոց Հայ-
րենեաց

Դաբնազարդ նեմեսցէ յաղբական կամա-
րաց» :

«Բարելի շառաւիդ յարմատոց Դիւցազանց,
Որդեգիր մօր բարւոյ Ռուսիոյ սահմանաց,
Յանձնանձիչ տղայոց հայրազուր անմոռաց
Ճշմարիտ հասուցող իւր զպարտ հայրե-
նեաց» :

Արձանի ձախ կողմում, Յովակիմ Լազարեան Լազարեանցի պատկերի ներքեւում՝

«Ազգաշեն զործութեայ դու Խշխան Վեհապահն»՝

Մե՛ք բորովիքս ի բարբառ պակասիմք ի մտաց :

Զարքիցէ Հոմերոս պարագլուխն հազներ-
գուաց .

Ուսուցէ ներբողել վայելուչ ըստ ար-
դեանց» :

«Բարութակ դու չենաղ ի տոհմէ ժաշազանց
Հայկազեան զըրոհիս ես պատկ պարձա-
նաց :

Անմոռաց կատարիչ զպատուէր կտակաց .
Բարձրացար ի պատիւ, եւ ի փառ հայրե-
նեաց» :

Արձանի Լուսեի կողմում, Յովակիմ Լա-
զարեանի ամուսնու՝ Աննա Սարգսեան Լա-
զարեանցի եւ նրա որդու Յարութիւն Յովա-
կիմեան Լազարեանցի՝ թիկնազահ զօրքի
գնդապետի եւ ասպետի՝ պատկերների ներ-
քեւում».

«Ընդէ՞ր յայս անշունչ տախտակ ժարեղէն
Զանուն քո բարի սեւակաւ զրեն,

Զոր քո որդիքս տառիւմ ուկեղէն

Մայր մեր « զրեցաք ի սիրտ մարմնեղէն» :

«Որդի հարազատ հօր իւր համանման,
Փառաց հայրենեաց արձան անսասան ,

Ի դաշտ Արեսի արի զօրական,
Ժառանգորդ անմահ անմռաց անուան» :

**Շատ աւելի յաջող էն Պրոֆ. Մերզլեա-
կովի յօրինած ոռուերէն բանաստեղծութիւն-
ները :**

**Այսպէս, կոմս Յովհաննէս Լազարեանին
նուիրուած էն հետեւեալ տողերը .**

„От древня племени Армении рожденный
Российей-матерью благой усыновленный,
Гайканы! ваших он сирот не позабыл!
Рассадник сей души признательной тво-
ренье!

Даря чадам здесь покой и просвещенье,
Отчизне той и сей он долг свой заплатил.

**Յովհակիմ աղա Լազարեանցին նուիրուած
էն՝**

Сей, брата своего достойнейший ревни-
тель

Начатый подвиг им устроил, расширил:
Соплеменных покров, безродных охра-
нителъ,

Для церкви, для наук, для блага бедных
жил.

**Աննա Սարգսեան Լազարեան և Յարու-
թիւն Յովհակիմիան Լազարեանին¹ նուի-
րուած էն՝**

¹ Յարութիւն Յովհակիմիան Լազարեանցը նուիրել
էր իր սեպհական միջոցներից ձեմարանին 50.000
ռուբլի, երբ հայրը նախապատրաստական աշխատանք-
ների մէջ է եղել ձեմարանի հիմքը դնելու : Կանան
Լայզեանցի արթինահեղ կուռած 1813 թ. :

Как добра мать, сирот с горячностью
любила,
И памятник себе в сердцах их утвердила!

**

Средь мира благ Творец, гроза среди
врагов,
Во цвете лет он пал за веру и отцов!

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹՅԻՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԼԻԿՈՌՆԻ
ԿԱՐՄ

ԱՐԵՒԵՎԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳԱՍՏՐԱՆՆԵՐԻ

Երկու խօսք

Լաղարեան Ճեմարանի պատմութիւնը
ամբողջացած չէր լինի, կիսակատար գործ
կը լինէր, եթէ չներկայացնէինք համառօ-
տակի նաև Լիկէոնի պատմութիւնը :

Այս աշխատանքի մէջ, սակայն, մէնք
չունինք ինքնուրոյն մաս. մէնք ամփոփել ենք
1903 թուին Մոսկուայում՝ լոյս տեսած ոու-
սերէն լեզուով Հրատարակութիւնը՝ «Լազա-
րեան Ճեմարանի Մասնագիտական դասա-
րանների 30ամեակը», որ նոյնոյէս մի համա-
ռու Յիշատակարան է Լիկէոնի անցեալի եւ
յորեւենական ժամանակի վիճակի :

Մէնք չգիտենք, կա՞յ արդեօք որեւէ այլ
ուսումնասիրական աշխատանք Լիկէոնի մա-
սին թէ՞ ոչ, բացի լիշեալից, սակայն ամե-
նայն հաւանականութեամբ կարելի է ենթա-
դրել որ նման աշխատանք գոյութիւն չունի,
քանզի մեր բոլոր պրապտումների ժամանակ
ակնեկութիւններ առնել Լաղարեան Ճեմա-

բանի մասին, մենք չենք հանդիպել որ եւ է ակնարկի կամ մատնահշումի այդպիսի մի գործի վրայ :

Թերեւս Լազարեան տոհմի եւ Շեմարանի արխիվում լինին նիւթեր Լիկոնի մասին, որոնք անմատչելի են մեզ :

Կան մի քանի տեղեկութիւններ Շեմարանի 50ամեակին եւ 75ամեակին նուիրուած հրատարակութիւնների մէջ, որոնք վերարերում են Լիկոնի անցեալին եւ որոնք լիովին օգտագործուած են մեր ներկայ աշխատասիրութեան երկրորդ մասում :

—

1872 թ. դեկտեմբեր 16ին բարձրագոյն հրամանով հաստատուած նոր Կանոնադրով Արևելեան լեզուների դաստանդութիւնը Շեմարանում վերջնականապէս դատուած է պիմնագիտնական դասընթացքից եւ սուսնում միանդամայն անկախ կազմակերպութիւն, իր յաստեկ ուսումնական ծրագրով, իր առանձին բիւտջով ու ներքին վարչութեամբ, ոյսուհանդերձ նա չարունակում է միալ Շեմարանի ծոցում, նրանից անբաժան թէ իրաւականօրէն, թէ բարոյապէս ու նաեւ ենթակայ Շեմարանի բարձր վարչական կազմի հակողութեան ու խնամքին :

Լիկոնը այս կազմակերպութեամբ պահպանեց իր գեցութիւնը անփոփոխ մինչեւ 1918 թ., երբ Շեմարանի գոյութիւնը վերջ

դուռ նոր քաղաքական-պետական կեանքի ստեղծումով ամբողջ Ռուսաստանում :

Որո՞նք էին այս Նոր Կանոնագրի զլիսաւոր հիմունքները . ի՞նչ բարեփոխութիւններ էին մացրուած ձեմարանի կրթական ծրագրի մէջ :

Առաջին եւ ամենաէական բարեփոխութիւնը կայանում էր նրա մէջ, որ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը վերջնականապէս զատում էր ձեմարանի գիմնազիոնական դասընթացքից եւ կենտրոնացւում էր յատուկ Մասնագիտական դասարաններում կամ Լիկեննում, որը կազմելով ձեմարանի անբաժան մասը, ենթարկուած ձեմարանի վերատեսչութեան, ստանում էր իր ներքին կեանքի մէջ ինքնավար կազմակերպութիւն . նա պիտի կառավարուէր յատուկ Խորհուրդով, նախադահութեամբ ձեմարանի վերատեսչի (դիրեկտոր), մասնակցութեամբ ձեմարանի տեսչի, Լիկէոնի պրոֆեսորների ու դասախոսների :

Այս ինքնավարութիւնը, թէ եւ չափաւոր սահմաններում զծուած, անհրաժեշտ էր արեւելեան լեզուների դասաւանդութեան բնականոն զարգացման համար :

Այսպիսով, Լազարեան ձեմարանը արեւելեան լեզուաց պարփակում էր իր մէջ երկու կրթական հաստատութիւններ՝ գիմնազիոնական բաժին իր յատուկ ուսումն ծրագրով, սահմանուած Կայսրութեան բոլոր

գիմնազիոնների համար, համաձայն 1864 թ. պետական դպրոցների Կանոնագրի, եւ Մասնագիտական Դասարաններ կամ Լիկեռն, յատուկ ուսումն. ծրագրով եւ իրաւունքներով, համահաւասար Կայսրութեան Համալսարանների մի մասնաճիւղի՝ արեւելեան լեզուների յատուկ ուսումնասիրութեան համար: Ճեմարանի այս կազմակերպութիւնը միանդամայն համապատասխանում էր նրա հիմնադիրների սկզբից ի վեր հետապնդած ճեմարանի հիմնական նպատակներին՝ առաջնական իրենց դպրոցը այնպիսի ընդհանուր կրթութիւն տուող մի հիմնարկ, որի շրջանաւարտներն առանց արգելքի ու դժուարութեան ի վիճակի լինին մտնելու համալսարան ու ստանալ բարձրագոյն ուսում, եւ ք. արեւելեան լեզուների դաստանդութիւնը դնել այնպիսի հիմքերի վրայ, որպէս զի ուսանողները պատրաստուէին թէ գիտական աշխատանքների համար արեւելեան ազգերի մշակոյթի ուսումնասիրական ասպարէզում եւ թէ ճեռք բերեն ճեռնհասութիւն վարելու պետական պաշտօններ Արեւելքում, որի հետ Ռուսաստանի փոխյարարերութիւնները օրէցօր զարգանում ու աւելի սերտանում էին:

Երկրորդ: Ճեմարանի Մասնագիտական դասարանները ստանում էին այն բոլոր իրաւունքներն եւ առանձնաշնորհումները, որոնցով օժտուած էին Կայսրութեան համալսարանները, համաձայն 1863 թ. յունիս 18ի նոր

Կանոնագրի, սակայն առանց իրաւունքի գիտական կոչումներ տալու իր շրջանաւարտներին։ Դրա փոխարէն եւ որպէս զի խրախուսուած լինին ուսանողներին նուիրելու արեւելեան լեզուների ուսման, Լիկէոնի շրջանաւարտները ստանում էին Ժ եւ ԺԲրդ կարգի աստիճանները¹։ Լիկէոնի պրոֆեսորներն ու դասախոսները ստանում էին այն բոլոր առանձնաշնորհումները, որոնք վերապահուած էին համալսարանների պրոֆեսորներին ու դասախոսներին, որպէս պետական պաշտօնեանների ստանալ չքանչաններ, բարձրանալ իրենց կարգի կամ աստիճանի մէջ, ըստ 1722 թուի օրէնքի, սահմանուում էր համապատասխանութիւն ստանալիք ուսման կենսաթոշակի չափերի միջեւ համալսարանների պրոֆեսորների ստացած ուսման կենսաթոշակի հետ, եւ այլն։

Երրորդ, Լիկէոնի դասընթացքը վե-

¹ Պետրոս Մեծը, կամհնաւով պետական ծառայութեան մէջ ոչնչացնել ազնուական ծառման սկզբանը, որին վերապահուած էին մեծ առանձնաշնորհումներ հանդէպ ո՛չ ազնուական ծառում ունեցող պետական ծառայողների, եւ փոխարինել այն անձնական արժանիքների սկզբունքով, 1722 թ. Հրատարակեց «Յուցակ ծառայութեան աստիճանների» օրէնքը, ըստ որի բոլոր պետական պաշտօնեանները բաժանուում էին 14 կարգի կամ աստիճանի։ Ամենից ստորը՝ 14րդն էր, որից եւ սկսում էր ամէն մի պետական պաշտօնեայիր ծառայութիւնը եւ աստիճանաբար բարձրանում մինչեւ առաջին կարգը, համապատասխան ցուցադրած իր եռանդի, չնորհքի, նուիրումի ու աշխատանքի արդիւնաւէտութեան։ Այս օրէնքը իր ոյժի մէջ էր ամրող մուսաստանում մինչեւ 1918 թ.։

բածւում էր եռամեայ դասընթացքի փոխանակ նախկին երկամեայի : Լիկէոնը պիտի ունենար՝ 6 պրոֆեսորներ, մի դոցենտ եւ երկու ուսուցիչ հետեւեալ առարկաների համար :

1. Հայերէն լեզու եւ դպրութիւն, 2. Ռուսաց լեզու եւ դպրութիւն, 3. Արարերէն լեզու եւ դպրութիւն, 4. Պարսկերէն լեզու եւ դպրութիւն, 5. թուրքօ-տաճկական լեզու, 6. Արեւելքի պատմութիւն, 7. Վրացերէն լեզու, 8. Պարսկերէնի ու տաճկերէնի գործնական ուսում եւ 9. արեւելեան լեզուների գեղագրութիւն :

Առաջին դասարանի համար սահմանուած էր՝ շարաթական 30 ժամ, իսկ երկրորդ եւ երրորդ դասարանների համար՝ 28ական ժամ պարագմունքներ, չհաշուած շարաթական մէկական ժամ արեւելեան լեզուների գեղագրութեան համար բոլոր երեք դասարաններում :

Բացի այդ հայ ուսանողները պարտաւոր էին լսել դասախոսութիւններ Հայոց դպրութեան մասին շարաթական Յական ժամ բոլոր երեք դասարաններում . վրացի ուսանողներն ու Կովկասեան որդեգիրները՝ վրացերէն լեզու շարաթական 2ական ժամ բոլոր երեք դասարաններում :

1875թ. սահմանուում է նաեւ Ֆրանսերէն լեզուի դասաւանդութիւն, յատկացնելով 2ական ժամ բոլոր երեք դասարաններում

այն ուսանողների համար, որոնք կը կամե-
նային պատրաստուիլ ծառայելու Արտաքին
Գործոց Նախարարութեան մէջ:

Այսպիսով Լիկէոնի դասացուցակը իր
փոփոխութիւններով ու լրացումներով ներ-
կայացնում էր հետեւեալ պատկերը.

Լիկէոնի դասացուցակը	Դասավանդիչները			
	I	II	III	Ընդուն.
	Դասաբան			
Հայերէն լեզու եւ դպրութիւն	3	3	3	9
Արարերէն լեզու եւ դպրութիւն . . .	4	4	4	12
Պարսկերէն լեզու եւ դպրութիւն	4	4	4	12
Թուրքօտանէկան լեզու	4	4	4	12
Արեւելքի պատմութիւն	2 ²	2	2	6
Մուսաց դպրութիւն	3	2	2	7
Վրացերէն լեզու	2	2	2	6
	22	21	21	64

Գործնական աշխատանքներ				
Տաճէրէն				
Պարսկերէն				
Արեւելէան զեղագրութիւն	1	1	1	3
	23	22	22	67
1875 թուից նաեւ Փրանսերէն լե- զութիւց շարաթական 2 ժամ՝ ամէն մի դասարանում	2	2	2	2
	25	24	24	69

² 1899/1900 թուից՝ 3 ժամ:

³ 1902 թուից 4ական ժամ՝ ամէն մի դասարանում:

1873 թուից մացրուած են արարերէն լեզուի համար
գործնական վարժութիւնների ժամեր:

Մասնագիտական դասարանների ուսուցչական կազմը:
1902 թվականի եւ տարեկան բիւջէն

		Ուսուցչական բյուջեամենական բառութիւն
1.	Օրդինար պլոֆեսորներ	3
2.	Լքսուրար—օրդինար պլոֆեսորներ	3
3.	Վրացերէնի դասենու	1
4.	Տաճկերէնի եւ պարսկերէնի դասատուներ	2
5.	Արեւելեան լեզուների գեղա-	
	դրութեան դասատու որ ստանձ-	
	նում է դասախոսներից որեւէ	
	մէջէնը	1
6.	Ճեմուրանի վերատեսուչին յա-	
	ւելեալ	1
	Բնութամէնը	— 20.225
7.	Դոգրոցական պիտոյքներ	— 266
8.	Մասնագիտական դասարանների համար	— 1.500
9.	15 Կովկասեան որդեղիբների համար եւ 4 ն. կ. Մեծու-	
	թեան որդեղիբների համար ..	7.600
	Ամբողջը	— 29.591

Ուսուցչական անձնական կազմը հետա-
դայ տարիներում ենթարկւում է մի շարք
փոփոխութիւնների, միշտ նպաստակ ունենա-
լով ուժեղացնել այդ կազմը աւելի կարող
դիտական ոյժերով:

1872 թուին մենք ունինք երեք հայ ակա-
նաւոր պլոֆեսոր—դասախոսներ՝ Ս. Էմին,
Հայկական պլոբութեան դասատու,

զարեանց՝ Պարսկերէն լեզուի ու դպրութեան դասատու և Գէորգ Քանանեան՝ Արեւելքի հին ու միջին դարերի պատմութեան դասատու :

Այսուհետեւ Մոսկուայի Համալսարանի յայտնի Պրոֆ. Ա. Գերիկն Հրատիրուում է Արեւելքի պատմութեան նոր դարաշրջանի դասախոս :

Գէորգ Քանանեանի մահից յետոյ, նրա դասերը ստանձնուում է նոր վերատեսուչ Պրոֆ. Ա. Միլլերը :

Մ. Էմինին փոխարինում է Գր. Խալարեանը, նրա աշակերտը :

Ռուսաց դպրութեան դասատու Պոպովին փոխարինում է Մոսկուայի Համալսարանի Պրոֆ. Ալեքսէյ Վեսելովսկին, որն, ի գէպ, Հայասէր մէկն էր, ինչպէս և նրա որդին՝ Իւրիյ Վեսելովսկին :

Մո. Նազարեանցին փոխարինում էն ուրիշները և ի վերջոյ Հրատիրուում է աշխարհահռչուչակ լեզուագէտ Պրոֆ. ակադեմիկոս Ֆ. Կորչը պարսկերէն լեզու ու դպրութեան ամբիոնի համար, իսկ պարսկերէն գործնական դասերի համար իրանցի Միրզա Զաֆար Տէր-Զաքարովը :

Վրացերէնի դասատու է Հրատիրուում վրացի Ա. Խախանովը :

Խոլամի պատմութեան և արարական դպրութեան ամբիոնը ստանում է 1901 թ. Պրոֆ. Կրիմսկի :

Միաժամանակ ջանք է տարւում ճոխացնելու Լիկէոնի կրթական ծրագիրը, սահմանելով նոր սուարկաների դաստանդութիւն :

Այսպէս, 1898 թ. սահմանւում են համեմատական լեզուագիտութեան ու հին պարսկերէն լեզուի դասընթացքներ, որոնք յանձնւում են ձեմարանաւարտ լեզուագէտ կեւոն Մսերեանցին :

Սահմանւում եւ նույն ազգագրութեան դասընթացքներ, որի համար հրատիրում է Մոսկ. համալս. Պրոֆ. Խարուգինը :

1880 թ. արարերէնի դործնական դասերի համար հրատիրում է Միխայիլ Օսիպովիչ Ատտայիա, որը միաժամանակ գիմնազիոնական բաժնում վարում էր դաստիարակի պաշտօն :

1901 թ. սահմանւում է սարտերի լեզուի դաստանդութիւնը, որն ստանձնում է Միրզա Աբդուլլա Գաֆարովը :

Մէկ ուրիշ կարեւոր նորութիւն է մտցնում է 1891 թ.: Այդ թուականից սկսած Լիկէոնի ուսանողներին պարտադրում են յաճախել Մոսկ. համալսարանի իրաւաբանական մասնանիւդը եւ հետեւել իրաւաբանական գիտութիւններից՝ քրէական, քաղաքացիական ու պետական իրաւունքի դասիստութիւններին :

Պրոֆ. Վ. Միլլէրի վերատեսչութեան օրոք ուսումն. ծրագրի սուարկաների վրայ

աւելանում է նաև մահմեղական իրաւունքի դասաւանդութիւնը:

Այս բոլոր բարենորոգումներն ու խնամքը՝ բարձրացնել Լիկէոնի գիտական մակարդակը, դրաւում են հասարակութեան, մասնաւորապէս արեւելագէտների ուշադրութիւնը, համակրանքն ու վստահութիւնը և լիկէոնը ձեռք է բերում մեծ համբաւ համաւրոպական գիտական աշխարհում:

Արեւելագէտների բոլոր միջազգային համագումարներին Լազարեան Ճեմարանը սիրով հրաւիրուում է բերելու իր թանկագին մասնակցութիւնը:

Լիկէոնի ուսանողների գիտական աշխատանքները արժանանուում են հրապարակային գնահատանքի:

Այսպէս, 1882 թ. Համառուսական ցուցահանդէսում Լիկէոնի ուսանողների արեւելեան գեղագրութեան օրինակները ստանում են երկրորդ կարգի վկայական, որը համահաւասար էր արծաթէ մեղալի:

Լիկէոնի ուսանողները տպագրում են արեւելագիտութեան վերաբերեալ իրենց գիտական աշխատանքները, հանդէս են գալիս գիտական զեկույցներով Մոսկուայի Կայսերական Հնագիտական Բնկերութեան Արեւելեան Յանձնաժողովում և արժանանում ուշադրութեան ու գնահատանքի:

1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդէսին Լազ. Ճեմարանի Լիկէոնը ստա-

նում է ոսկէ մեղալ իր կատարած գիտական լուրջ ուսումնասիրական աշխատանքների համար՝ մասնաւորապէս 887 թ. Հայկական Աւտարանի հրատարակութեան համար:

Լիկէոնի աճող ու տարածուող գիտական հաստատութեան համբաւը առաջ է բերում հետաքրքրութիւն նաև օտար կառավարական շրջաններում, ինչպէս եւ Եւրոպայի արեւելագէտների շարքերում:

1876 թ. Լիկէոնին այցելութիւն են տալիս ականաւոր արեւելագէտներ՝ Պրոֆ. Շեֆֆէրը, Ժիւլ Օպակերտը, Ֆոն-Միւլէրը, իսկ 1900 թ. Բերլինի համալսարանի Պրոֆ. Հարտմանը, իսկ 1881 թ. մահմեղական գիտնական մոլլա Փիրաձէն:

Ամենքը միարերան վկայում են, որ Լիկէոնի ուսանողները ցուցադրում են մեծ յաջողութիւններ արեւելեան լեզուների իւրացման գործում:

1873 թ. մայիս 3ին այցելում է Ճեմարանը Պարսից Շահնշահը Նասրէդդինը, որին Ճեմարանի կողմից ողջունում են Պրոֆ. Ստեփան Նազարեանցը պարսկերէն լեզուով, իսկ Պրոֆ. Մարկոսը՝ արարերէն. աշակերտները երգում են Հայերէն երգեր: Շահին ցոյց են տալիս արեւելեան լեզուներով գրքերի եւ Ճեռագիրների գրադարանը:

Ն. Դելեանովի վերատեսչութեան օրոք Ճեմարանին այցելութիւն է տալիս Բրագի-

լիսցի կայսրը, որն առանձնապէս հետաքրքրւում է արեւելեան լեզուների դասաւանդութիւնով :

Այս առթիւ, Պրոֆ. Խախանովը, որի դրչին է պատկանում Լիկէոնի 30ամեակի պատմութիւնը, նկատում է, որ Ճեմարանը եւ մասնաւորապէս Լիկէոնը մեծ բարզաւաճման է հասնում վերատեսուչներ՝ Ն. Դելեանովի եւ մանաւանդ Գէորգ Քանանեանի օրօք :

«ՅՇ տարուայ ընթացքում, — ասում է նա — Գ. Քանանեանը Ճեմարանի հոգին էր. նա իր ճեռքումն էր պահել Լիկէոնի լաւագոյն կազմակերպութեան բոլոր հոգսերի զեկավարութիւնը։ Նրան է պատկանում, ի միջի այլոց, Լիկէոնի գրադարանի համար առանձին շէնքի կառուցման պատիւը. նրա անմիջական հսկողութեան տակ է կատարուած շէնքի կառուցման գործը» :

Լիկէոնը ընդունուում էին այն աշակերտները, որոնք աւարտել էին ճեմարանի դիմնագիտնական լրիւ դասընթացքը եւ առհասարակ պետական միջնակարգ դպրոցները եւ ստացել հասունութեան վկայական, թէ որպէս իսկական ուսանողներ, թէ որպէս աղատ ունկնդիրներ :

1888 թուին ազատ ունկնդիրների թիւը այնքան է բազմանում, որ Լիկէոնի խորհուրդը որոշում է սահմանել նրանց համար երեկոյեան դասընթացքներ :

Ազատ ունկնդիրների կազմը եղել է շատ բազմազան՝ հասարակութեան բոլոր խաւերից. կային՝ զինուորականներ, քահանաներ և մեծ մասամբ պետութեան բարձրագոյն դպրոցների ուսանողներ:

Հետեւեալ տախտակը տալիս է լրիւ պատկեր Լիքէոնի ուսանողների թէ կազմի մասին և թէ նրա զարգացման փուլերի մասին 30 տարուայ ընթացքում:

Տախտակ

Լիքէոնի ուսանողների կազմի ու շրջանաւարտների թուի 30 տարուայ ընթացքում: 1871/72—1901 թ.

Թուանիք. տարի	Ուսանողների ընդհանուր առ ցուշուարի	Լիքէոնի Ուսանողների	Ուսանոց ունկնդիրների	Լիքէոնի զինուորական դպրոցների	Լիքէոնի Զինուորական դպրոց
1871/72	7	5	2	2	—
1872/73	18	10	8	4	—
1873/74	17	7	10	—	3
1874/75	20	10	10	2	6
1875/76	15	6	9	—	1
1876/77	42	5	37	7	3
1877/78	57	7	50	7	8
1878/79	48	19	29	4	17
1879/80	30	17	13	3	10
1880/81	18	15	3	3	4
1881/82	15	15	—	2	5
1882/83	23	21	2	3	5
1883/84	16	15	1	2	3

| Առանձին տարբեր պահեցությունների մասին տվյալներ |
|--|--|--|--|--|--|
| 1884/85 | 19 | 18 | 1 | 2 | 6 |
| 1885/86 | 22 | 16 | 6 | 2 | 4 |
| 1886/87 | 33 | 26 | 7 | 1 | 5 |
| 1887/88 | 29 | 24 | 5 | 2 | 4 |
| 1888/89 | 29 | 26 | 3 | 1 | 7 |
| 1889/90 | 27 | 26 | 1 | 1 | 6 |
| 1890/91 | 27 | 26 | 1 | 5 | 5 |
| 1891/92 | 24 | 24 | — | 5 | 3 |
| 1892/93 | 33 | 31 | 2 | 5 | 6 |
| 1893/94 | 37 | 34 | 3 | 5 | 9 |
| 1894/95 | 35 | 32 | 3 | 3 | 9 |
| 1895/96 | 31 | 26 | 5 | 3 | 7 |
| 1896/97 | 24 | 20 | 4 | 6 | 3 |
| 1897/98 | 30 | 23 | 7 | 3 | 7 |
| 1898/99 | 33 | 26 | 7 | 3 | 5 |
| 1899/1900 | 36 | 30 | 6 | 1 | 10 |
| 1900/01 | 55 | 48 | 7 | 1 | 8 |
| 1901/02 | 56 | 50 | 6 | 2 | 14 |
| ընդամենը՝ | 906 | 658 | 248 | 90 ⁴ | 183 ⁵ |

⁴ 658 ուսանողներից, միայն 90 հոգի են որ ձեռաբանի դիմուազիոնական դասընթացքը աւարտելով՝ ուսումն շարունակել են Լիկէոնում իրենց բարձրագոյն կրթութիւնը ստանալու համար. միջին հաշուով 30 տարւայ մէջ՝ միայն 3 հոգի տարեկան:

Այս մի նոր ապացոյց է, որ ձեռաբանի միջնակարգ բաժնում շատ ուժեղ է եղել ձգուումը դէպի Համալսարան:

⁵ Լիկէոնի ուսումնաւարտների անուանացուցակում ցոյց է տրուած 184 անուն:

Աւելացնենք, որ առ 24 հոկտեմբեր
1902թ. լիկէոնը ունեցել է 62 ունկնդիրներ,
որոնցից 47 հոգի խսկական ուսանողներ և
15 հոգի ազատ ունկնդիրներ :

Այսպիսով, ունկնդիրների թիւը 30 տա-
րուայ ընթացքում բազմացել է 9 անգամ :

30 տարուայ ընթացքում լիկէոնը ունե-
ցել է 184 շրջանաւարտներ, որոնցից ոմանք
գործել են դիւանագիտական ասպարէզում
Արեւելեան և այլ երկիրներում՝ Պարսկաս-
տան, Թիւրքիա, Եգիպտոս, Բրազիլիա և
այլն : Ոմանք՝ պետական-հասարակական աս-
պարէզում, ոմանք էլ՝ արդիւնաբերական
բնագաւառում Ռուսաստանի ներքին գաւառ-
ներում, Միջին Ասիայում, Կովկասում :

Այդ 184 ուսումնաւարտներից 142 հոգի
ուուներ են եղել, 22 հոգի հայ-լուսաւորչա-
կաններ և 20 հոգի այլ դաւանանքներից :

Հայերի չնչին թիւը բացատրւում է նրա-
նով, որ ցարական ոեժիմի օրօք հայ երիտա-
սարդութեան առաջ փակ են եղել ոչ միայն
դիւանագիտական ծառայութեան համար
դուները, այլ եւ մի շարք այլ դրաւիչ պաշ-
տօններ ստանալու հնարաւորութիւնից զուրկ
է եղել . . . :

Այս 184 շրջանաւարտների հետագայ ճա-
կատագրի մասին տեղեկութիւնները պարկա-
սում են, յայտնի է միայն, որ նրանցից 40 հոգի
ծառայելիս են եղել Արեւելքում դիւանագի-
տական և վարչական ասպարէզներում՝ Պո-
լիս, Թէհրան, Մէջէդ, Աստրաբադ, Դա-

մասկոս, Գահիրէ, Բոմբէյ, Բաղդադ եւ այլն.
50 Հոգի ծառայելիս են եղել ներքին գործոց
նախարարութեան եւ ժողովրդ. լուսաւորու-
թեան նախարարութեան մէջ՝ Կովկասում,
Ղրիմում, Անդրկասպեան երկրում:

*

Արեւելեան լեզուների ուսուցման զարկ
տալու եւ աւելի մեծ թուով ուսանողներ
զրաւելու համար սահմանուել են թոշակներ,
բացի այդ ձեմարանը իր կողմից տուել է
չքաւոր ուսանողներին դրամական նպաստ,
ազատել է ուսման վարձից, հայթայթել է
մասնաւոր վճարովի զաներ ու տուել մատ-
շելի արժէքով նախաճաշ եւ ճաշ:

Ուշագրաւէ, որ 30 տարուայ ընթացքում
Լիկէոնի ուսանողների մէջ տեղի չեն ունեցել
ոչ մի խլրտում. կամ դժգոհութիւն ու բո-
ղոքի արտայայտութիւններ թէ ներքին կեան-
քից անբաւական լինելու հետեւանքով եւ թէ
քաղաքական գետնի վրայ:

Այս երեւոյթը բացատրւում է մասամբ
նրանով, որ ուսանողների թիւը եղել է շատ
սահմանափակ, մասամբ էլ, որովհետեւ Լի-
կէոնի դասախոսների ամրողջ կազմն ու ձե-
մարանի վարչութիւնը չափազանց ուշագիր
ու հոգատար վերաբերմունք են ցուցադրել
ուսանողների հանդէպ եւ հաստատել մտե-
րիմ յարարերութիւններ ու բարոյական կազ
նրանց հետ, ոչ միայն նրանց ձեմարանում

ևզած ժամանակաշրջանում, այլ եւ երբ, աւարտելով իրենց դասընթացքը լիկէոնում, կեանք են մտել:

*

Լազարեան Ճեմարանի դլխաւոր ղեկավարութիւնը հետամուտ է Եղել ո՛չ միայն այն անոմիջական գործնական նպատակներին հասնելու լաւագոյն կերպով, որոնք դրուած են Եղել լիկէոնի առաջ, այն է՝ պատրաստել գործիչներ ծառայելու Արեւելքում, այլ եւ չանք չի խնայել զարկ տալու գուտ զիտնական ուսումնասիրութեան Արեւելեան լեզուների, զրականութեան, հնութիւնների եւ այլն, ուրիշ խօսքով՝ զնել արեւելագիտութիւնը լուրջ հիմքերի վրայ:

Այսպէս, 1888 թ. պետական խորհրդական Դանիէլ Քանանեանի նուիրարերուած գումարը յատկացւում է Հայոց լեզուի ու պատմութեան մասին դիտական լաւագոյն աշխատանքների հեղինակներին:

Եւ 1894 թ. այդ մրցանակը՝ 400 ռուբլի արւում է Բեռլինի համալսարանի Փիլիսոփայութեան Դոկտոր Գաղբաշեանին Հայ Բագրատունիների պատմութեան ուսումնասիրական աշխատանքի համար:

Այսուհետեւ Պ. Հայկունին պարզեւած արւում է՝ «Նիւրեր ժամանակակից հայերի սվորոյրի իրաւունքի մասին» ուսումնասիրական գործի համար:

Մ. կմինը կտակում է Լիկէոնին 10·000 ռ., որպէս զի նրա տոկոսներով հրատարակուեն նիւթեր եւ ուսումնասիրութիւններ Հայկական ազգագրութեան մասին:

Այդ դումարի տոկոսներով սկսած 1893 հրատարակուած են Հէնց իր կմինի մի շաբք երկասիրութիւնները եւ ապա հինգ ուրիշ ուսումնասիրական գործեր Պրոֆ. Գր. Խալաթեանցի խմբագրութեամբ եւ «Եմինի ազգագրական ժողովածու» անուան տակ:

Ի յիշատակ հանգուցեալ Գէորգ Քանանի Լիկէոնի Խորհուրդը հաստատում է յատուկ Փոնդ պարզեւատրելու լաւագոյն ուսումնասիրական աշխատանքների հեղինակներին Ծուսաստանում ապրող արեւելեան ազգերի պատմութեան եւ ազգագրութեան վերաբերեալ:

1899 թ. սկսած ձեմարանի վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլէրի նախաձեռնութեամբ Լիկէոնի խորհուրդը ձեռնամուխ է լինում հրատարակելու Լիկէոնի պրոֆեսորների եւ ուսանողների ուսումնասիրութիւնները «Արեւելագիտութեան Երկեր» ընդհանուր խորագրի տակ: Մինչեւ 1903 թ. հրատարակուած են 12 հատոր:

Բացի այդ 1899 թուին ձեմարանի պատուակալ Հոգարարձու իշխան Սիմէոն Սիմէոնովիչ Արամելիք-Լազարեանի դրամական միջոցներով եւ Պրոֆ. Գրիգոր Խալաթեանի խմբագրութեամբ Լիկէոնը հրատարակել է 887 թուի Հայկական ամենահին Աւետարանը

ըստ այն ձեռագրի, որը ձեմարանի սեպհականութիւնն է եղել:

Միաժամանակ Լիկէոնի պրոֆեսորներն ու դասատուները չափազանց մտահոգուած են եղել դասազբքեր յօրինելու խնդրով և նրանցով օժտել ուսանողներին, քանզի դասագրքերի բացակայութիւնը, մանաւանդ սկզբնական շրջանում, չափազանց դժուարացրել էր դասաւանդութեան գործը:

Այսպէս, օրինակ, յայտնի է, որ Ստ. Նազարեանցը պարսկերէնի քերականութիւնը թելադրելիս է եղել, իսկ ընթերցանութեան բնադիրները զրելիս զրատախտակի վրայ, որտեղից ուսանողները արտագրել են և սովորել կարդալը. անծանօթ բառերի թարգմանութիւնը ինքը Նազարեանցն է ասելիս եղել, քանի որ բառարաններ չկային:

Լիկէոնի այս կենսական պահանջին ընդառաջելով, Խորհուրդը ձեռնամուխ է լինուած դասագրքերի կազմութեան ու հրատարակութեան գործին:

Շատ երկար կը լինէր մի առ մի թուել բոլոր հրատարակութիւնները այդ ուղղութեամբ արուած, բայց, որպէս մի նմոյչ, ասենք, որ 80ական թուականներին լոյս է տեսնուած Պ. Աստայի արարերէն լեզուի քերականութիւնն ու ընթերցանութեան ձեռնարկը, այնուհետեւ Միրզա Զաֆարի Հեղինակութեամբ պարսկերէն լեզուի քերականութիւնն էւ ուսւազարկական խօսակցութեան ձեռնարկը և այլն:

Լիկէոնի կրթական գործի յաջողութիւնը պահանջում էր նաեւ ուսանալ ճոխ զրադարձն, արեւելեան եւ եւրոպական լեզուներով գրքերի, որոնցից կարողանային օգտուել թէ ուսանողները եւ թէ պրոֆեսորները։ Այս գործին Լիկէոնը ձեռնամուխ է լինում սկզբից՝ 1872 թուից, աստիճանաբար միջոցներ հայթայթելով ու ճոխացնելով գրադարանը։ Միաժամանակ գրադարանը ստացել է նաեւ նուէրներ՝ Մ. Էմինից՝ 1280 անուններ 2505 հատոր, Գ. Քանանեանից՝ 917 անուններ 1388 հատոր եւ այլն։

Գրադարանը 1902 թուին ունէր ընդամէնը գրքեր՝ 7610 անուններով 13.737 հատոր։ Ծախսուած է գրքերի զնման համար՝ 35.272 ռուբլի։

Ծնորհիւ Գ. Քանանեանի ջանքերի գրադարանի համար կառուցուել է 1896 թ. յատուկ շէնք, որի համար գրամական միջոցներ տրամադրել է Գրիգոր Էմմանուիլովիչ Մանուկ Բէյը։

Լիկէոնի գրադարանից օգտուել են ո՛չ միայն Լիկէոնի ուսանողներն ու պրոֆեսորները, այլ եւ կողմնակի մարդիկ՝ համալսարանների ուսանողներն ու պրոֆեսորները, Մոսկուա ժամանած գիտնականները։ Պատահել են դէպքեր, երբ գրադարանից գրքեր են ուղարկուած եղել այլ քաղաքներ եւ այլ հաստատութիւններին, ինչպէս, օրինակ, կազան քաղաքի Հոգեւոր Ակադեմիային, Կազան քաղաքի համալսարանին եւ այլն։

Լիկէոնի պլրովեսորները միաժամանակ
Հրատարակել են բազմաթիւ մեծարժէք գի-
տական աշխատանքներ՝ ինքնուրոյն ուսում-
նասիրութիւններ եւ թարգմանական, ոռուե-
րէն, հայերէն եւ եւրոպական լեզուներով⁶.

Հայ պլրովեսորներից՝

Մկրտիչ Էմինը ունի 42 գործ.

Գէորգ Քանանեանը՝ 6 գործ.

Ստ. Նաղարեանցը՝ 14 գործ.

Գր. Խալաթեանցը՝ 29 եւ 16 իր խմբագրու-
թեամբ

Լեւոն Մսերեանցը՝ 35 գործ.

*

Որպէս ամփոփումն Լիկէոնի կատարած
խոչոր գերի մասին, առաջ ենք բերում վե-
րատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրի ճառի Եղբա-
րիակման խօսքը, ասուած 1902 թ. Լիկէոնի
30ամեակի առթիւ կազմակերպուած հանդէ-
սին.

«Մասնագիտական դասարանների (Լի-
կէոնի) 30ամեայ պատմութիւնը ապացուցա-
նում է, որ այն դրամական միջոցները, որ
պետութիւնը բաց է թողնում ուսուցչապետ-
ների ու դասախոսների պահպանութեան հա-
մար, միանդամայն արդիւնաւէտ կերպով են
ծախսուել, քանզի նրանք ամենայն բարե-

⁶Տե՛ս մանրամասն ցուցակը «Լ. Ճ. 30ամեակը»,
էջ 111—114, 125—127, 140—142:

խղճութեամբ են կատարել իրենց պարտականութիւնները եւ պատրաստել են բաւական թուով օգտաւէտ գործիչներ պետութեան համար թէ Ռուսաստանի սահմաններում եւ թէ մահմեդական Արեւելքում :

«Իր հերթին Լազարեան ձեմարանը, պահպաննելով իր հիմնադիրների աւանդները, 30 տարուայ ընթացքում ծախսել է մեծ գումարներ պահպաննելու Լիկէոնը, մատակարարելով շէնքին վառելիք, լուսաւորութիւն, նորոգութիւններ կատարելով եւ այլն. տրամադրել է իր գիւանը, իր ծառայողներին եւ կառուցել է գրադարանի համար յատուկ շէնք : Նուազագոյն գնահատանքով այդ գումարը, ծախսուած 30 տարուայ ընթացքում, 200.000 ռուբլուց աւելի է :

«Այսպէս, ժողովրդական լուսաւորութեան Նախարարութեան եւ Լազարեան ձեմարանի միացեալ միջոցներով ասլահովուել է մեր համեստ հաստատութեան բարդաւաճումը, որն ըստ իր կարողութեան բաւարարել է թէ պետութեան կարիքները, մատակարարելով արեւելազէտ-պաշտօնեաններ եւ թէ ընդառաջել հասարակութեան ձգտումներին՝ ուսումնասիրել արեւելեան լեզուները եւ զարկ տալ ուսուս արեւելազիտութեանը⁷» :

⁷ Տե՛ս «Լ. Ճ. 30ամեակը», էջ իլ.—ի՛լ:

ՅԱԿԱՐԵԱՆՆԵՐԻ

Լազարեանների դրամական նուիրատուուրիւնները
Ճեմարանին :

1.	Յովհաննէս Ղազարեան	Լազա-				
	բեանի կտակով թողած որովէս					
	անձեռնմինլի դումար՝ 200·000 ռ.	ռուբ.	արժանք			
	թղթադրամ կտմ	57·142	85 ⁵ /7			
2.	Յովհակիմ Ղազարեան Լազարեանը					
	Ճեմարանի չէնքի կառուցման եւ					
	այլ պէտքերի համար (3 նուազով)	65·210	53			
3.	Յովհաննէս Ղազարեան Լազա-					
	բեանի կինը՝ Կոմսուհի Կատարինէ					
	Լազարեանը կտակով	2·857	14 ² /7			
4.	Մինսո Ղազարեան Լազարեանը					
	(2 նուազով)	10·603	84 ⁴ /7			
5.	Յովհաննէս Յովհակիմեան Լազա-					
	բեանց եւ Խաչատուր Յովհակիմեան					
	Լազարեանը (18 նուազով)	502·437	55½			
6.	Խաչատուր Լազարեանի կինը՝ Կա-					
	տարինէ իմմանուէլեան Լազա-					
	բեանը (5 նուազով)	24·530	95			
	<hr/>					
	Բնդամէնը	662·782	75			

Բացի այդ Խաչատուր Լազարեանը Ճե-
մարանի 50 ամեակի առթիւ նուիրաբերել էր՝
200·000 ռուբլի:

Այս բոլորի հետ միասին Լազարեանները
հոգացել են բոլոր ծախսերը՝ ա. մատենա-
դարանի համար, որ առ 1865 թ. ունէր
6.000 հատոր գիրք, ք. հանքարանական կա-
րինետի կաղմութեան համար, ինչպէս եւ
Փիղիքայի, մաթեմաթիկայի զանազան գոր-
ծիքներ գնելու, գ. նկարներ, պատկերներ,
հին դրամներ եւ այլն:

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ

Ա.ԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՇԲՁԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ
1820—1916 ԹԹՅ., ՀԱՆԴԵՐՁ ԽԲԵՆՑ ՀԱՄԱՍՈՍ ԿԵՆ-
ՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ,

Ներկայացնելով այս համառօտ անուա-
նացուցակը մենք, ի հարկ է, նպատակ չենք
ունեցել տալու լրիւ ցանկը. դա նաեւ հնա-
րաւոր չէ ու աննպատակ, քանզի ձեմարանի
շրջանաւարտների թիւը հասնում է հազար-
ների: Մեր նպատակն էր այս շատ համառօտ
ցանկով ազօտ գաղափար տալ այն հսկայա-
կան կրթական ու ազգային-հասարակական
գերի մասին, որ կատարել է Լազարեան ձե-
մարանը իր 100ամեայ դոյտութեան ընթացքին
թէ ուստի պետական եւ թէ մանաւանդ հայ
կեանքի բոլոր մարդերում:

Այս անուանացուցակը կաղմելիս մենք
օգտուել ենք հետեւեալ աղբիւրներից.

1. «Լ. Ճ. 50ամեակը», 2. «Լազ. Ճեմա-

րանի 75ամեակը» ոռւսերէն պաշտօնական հրատարակութիւններից, 3. Պրոֆ. Զինովի Հազ. Ճեմ. Համառօտ պատմութիւնը» (ոռւսերէն) և 4. Մսեր Մսերեանցի «Յիշատակարան»ից :

Այսուհետեւ քաղել ենք տեղեկութիւններ բաղմաթիւ գրքերից, ուր եղել են յիշատակութիւններ Հազ. Ճեմարանի շրջանաւարտների մասին. վերջապէս, Թէհրանում դըտնուած Ճեմարանի նախկին աշակերտների և իմ անձնական յուշերից :

Մեր ցանկութիւնը պահպանել նաեւ ժամանակադրական կարգը նրանց ուսման աւարտելու մէջ, — անհնարին եղաւ, քանզի մեր զլիսաւոր աղբիւրների մէջ չառ սակաւ են նման ցուցմունքները :

1. Յակոբ Արզանեան

2. Դաւիթ Արզանեան

Համալսարանաւարտ : Յակոբը եղել է տեսուչ Ներս. դպրոցի՝ 1830—1835 ու նաև 1857—1858 թ. լեզուագէտ՝ գիտնականի համբաւով։ 1827ին Երկուոր միասին գրել ու հրատարակել են՝ «Հայոց թագաւորութեան մի փորձ»։ «Դարաստան հատուկտոր դրուածոց Հայ Մատենագրաց ի պետս ընթերցանութեան եւ թարգմանութեան ի Հայ լեզուէ ի Ռուս»։ 1838 թ. Թիֆլիս։ Դաւիթը եղել է 1848 թ. Ներս. դպրոցի Հոգարարձութեան անդամ։

3. Աստուածատուր Արարատեան

Աշակերտել է Ալամդարեանին և . Ճեմա-
րանում, ապա ուսուցիչ Ներս . դպրոցի .
1823թ . աղա Յովակիմն էր ուղարկել Ներ-
սէս Աշտարակեցուն, այդ ժամանակուայ
Առաջնորդին :

4. Ներսէս Արարատեան

Աշակերտել է Ալամդարեանին և . Ճեմա-
րանում . 1824—1830թթ . ին ուսուցիչ Ներ-
սիս . դպր . Աւանդել է՝ հայերէն, ոռուերէն եւ
վայելչագրութիւն : Սրան եւս աղա Յովա-
կիմն էր ուղարկել Ներսէս Աշտարակեցուն
1823թ . :

5. Յովիաննիկս Ալդադանեան

Աշակերտել է Ալամդարեանին և . Ճեմա-
րանում . Ուսուցիչ Ներս . դպր . : Սրան եւս
աղա Յովակիմն էր ուղարկել Ներս . Աշտա-
րակեցուն :

6. Գաբրիէլ Երեցփուխով

1854թ . կազմել ու հրատարակել էր
«Ռուս-Հայկական քառարանը» :

7. Սիմեոն Սուլբանչահեանց

1831թ . Հեղինակ՝ ««Գաղափար Հայ-
կական վայելչագրութեան» . դժագրեաց Սի-
մեոն Սուլմանչահեանց, ի լոյս էած Հայկա-
կան Ճեմարան Տեարց Լազարեանց, որ ի
Մօսկով : Հետագայում զօրավար Պետերբուր-
գում . որ մեծապէս նպաստեց, Նալբանդեանի

խնդրանոք, «Հիւսիսափայլի» կառավարական
թոյլտուութիւնը առնուելուն:

8. Յովհաննէս Եղիազարեան

9. Միքայէլ Պատկանեան

1839թ. Հրատարակել է՝ «Քերականութիւն Հայոց լեզուի»: Մոսկուա: Աւուցիչ,
թատերագիր, Հայ թատրոնի հիմնադիրներից
մէկը: Կոմիկանեան գօրաբանակի Պարենա-
ռորման քննիչ:

10. Խաչառուր Դաւթեանց 1852/07

Բժիշկ Թիֆլիսում:

11. Յովսէփ Զերքեզեան

Աշակերտել է՝ Սալլանթեանին: 1833թ.
Հրատարակել է՝ «Սկզբունք քրիստոնէական
վարդապետութեան»: Մոսկուա: Կատաղի
հակառակորդ Ս. Նազարեանի եւ նոյնքան կա-
տաղի պաշտպան գրաբարի: Հեղինակ՝ «Դա-
սագիրք Հայոց պատմութեան», 1861թ.
Թէոդոսիա:

12. Մկրտիչ Էմիլի 1829 աշնան. Խ. աւար-
տել է 1834թ.

Համալսարանաւարտ 1838թ. Ն. Զու-
զայեցի: Կալկաթայից Եկած Ճեմարան:
Այնուհետեւ 1838թուից ուսուցիչ Հայոց լե-
զուի Ճեմարանում. տևուչ՝ 1580—1860թ.:
Յետագայում Պրոֆ., Ճեմարանի Լիկո-
նում՝ Հայագիտութեան դասախոս: Վիճ.
1890թ. Դեկտ. 13ին:

13. Յարութիւն Ալամդարեանց

(Քահանայ, յետոյ վարդապետ)

Ուսուցիչ Լազ. Ճեմարանում: 1842թ.ից
տեսուչ Ներս. դպրոցի: Լեզուագէտ ու դրա-
կան տաղանդով օժտւած: Խոշոր դեր է կա-
տարել Եփրեմ կաթողիկոսի օրօք եւ Ներսէս
Աշտարակեցու առաջնորդութեան ժամանակի:
Աքսորուել է Հաղբատ, յետոյ անցել Քիշինեւ
եւ ապա Ս. Խաչ վանքը, ուր սպանուել է
1834թ. Հեղինակ՝ ա. «Համառօտ բառարան
ի Ծուսաց լեզուէ ի Հայ»: Մոսկ. 1821թ.:
Բ. «Հրահանդ քրիստոնէական վարդապետու-
թեան ի պէտս մանկանց Հայաստանեայց
սուրբ Եկեղեցւոյ»: 1825թ. Թիֆլիս:

14. Միւայէլ Միանսարեան 1849/50

(Հետազայում զինուորական)

Հեղինակ գծած տետրակների, որ այնու-
հետեւ գործածութեան մէջ է մտել մեր
դպրոցներում: Լոյս է ընծայել՝ ա. «Կանո-
նաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնը
ու տեսութիւնը»: Ծրագրական փորձառու-
թիւն հանդերձ զանազան ծանօթութիւննե-
րով, յաւելուածներով եւ գրասեղանների ու
անառօմիկական ստուերագրերով: Պետեր-
բուրգ, 1872: Բ. «Հայկական կանոնաւոր եւ
վայելուչ գրութիւն»: Լայպցիգ. 1873. Միա-
ժամանակ հրատարակիչ Հետեւեալ գործերի:

ա. «Ազգային կրթութիւն, հրապարակային ընթերցանութիւնք էղուարդ լարուէի. թարգման. Մ. Տէր-Գրիգորեանի: 1867. բ. «Խնամատարութիւն Երեխայոց մարմնական եւ բարոյական. շարադրութիւն Կոմրի, անգլիացոց թագուհու բժշկի եւ Էղինըրուրդի արքունի բժշկական համալսարանի անդամի»: Պետերբուրգ 1868. գ. «Քնար Հայկական»ի Հրատարակիչ: դ. Հեղինակ «Bibliographia»ի ուր հաւաքուած են այն բոլոր գրուածքների անունները, որոնք վերաբերում են Կովկասին եւ Անդրկովկասին:

15. Ռաֆայէլ Պատկանեան 1848/49

Բանաստեղծ «Գամառ Քաթիսա»: Աշակերտէ է Մ. Էմինին:

16. Սերովի Պատկանեան 1848/49

Ուսուցիչ եւ բանաստեղծ :

17. Կարապետ Եզեան (Եզով) 1850/51,
1852/53

Պետական բարձր պաշտօնեայ: Հեղինակ ուսուերէն լեզուով «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ» արժէքաւոր գրքի ու նաև՝ «Մ. Էջմիածնի եւ Ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը», Թիֆլիս 1905. Պահպանողական, մուլեռանդ լուսաւորչական, նուիրուած հայ և կեղեցուն:

18. Ալեքսանդր Ռուտինեանց 1850/51

Թիֆլիսեցի: Դորպատի Համալսարանը
աւարտած (1852—1856). Գիւղատնտես: Պե-
տական պաշտօնեայ: Հանրային գործիչ:
Ունի զրած յիշողութիւններ Դորպատի հայ
ուսանողների կեանքի մասին:

19. Գեորգ Հախվերդեանց

«ՍայաթՆովայի» Հրատարակիչը 1852թ.:
Աշակերտել է Մկրտիչ Էմինին:

20. Գրիգոր Աղափիրեանց 1848/49

Համալսարանաւարտ-Դորպատում (1849
—1851): Ա. Էջմիածնի միարան: Եպիսկո-
պոս եւ ապա առաջնորդ Վերին Ազուլիսում:

21. Պետրոս Շանշեանց (Ճեմարանում մին-
չեւ 1855թ. սովորողների ցուցակի մէջ է
զտնուում):

Համալսարանաւարտ: 1849 թ. աեսուչ
ներս. դպրոցի: «Լուսամիտ, լայն հայեացք-
ների, գաղափարական մարդ, մեղմ բնաւո-
րութեամբ եւ հաստատ համոզումներով»:
Հեղինակ՝ «Համառօտութիւն քրիստոնէական
ուսման Հայաստանեայց առաքելական Ա.
Եկեղեցւոյ» եւ «Ռւսումն. պարտուց». Պոլիս
եւ ապա Երուսաղէմ՝ 1873—1874 թ.:

22. Սարգիս Տիգրանեանց

1830ին աւարտ. Համալսարանը: Այսու-
հետեւ եղել է ուսուցիչ Լ. Ճեմարանում,

Նոր-Նախիջևանի դաւառական դպրոցներում, Սիմֆերոպոլիի Գիմնազիայում եւ տեսուչ Խալիլեան դպրոցի: Վախճ. Եյսկում (Հիւս. Կավկ.) 1875թ.:

23. Զարմայր Մսերեանց 1852/53, 1854/55

1859թ. Հրատարակել է՝ «Հայերէն պատկերագրգ այրբէնարան», իսկ 1863թ.՝ «Հայեւ ոռւս այրբէնարան» Մոսկուա: Խմբագիր «Ճռաքաղ»ի եւ «Փարոս Հայաստանի» կիսամեայ հանդէսի, 1879—1881թ.: Նաեւ խմբագիր ոռւս, «Համբաւարեր Ռուսիոյ» հանդէսի:

24. Քրիստափոր Յովհաննիսեան (Քուչուկ) 1854/55, 1875

Ուսուցիչ Հայոց լեզուի լ.՝ Ճեմարանում: Հեղինակը բազմաթիւ գիտական աշխատանքների Հայաստանի պատմութեան եւ հնագիտութեան մասին:

25. Մանուկ Սադարեան 1857/58

Վերակացու լ.՝ Ճեմարանում. Լերմոնտովի «Դեւ» պօէմայի անդուզական թարգմանիչը:

26. Սմբատ Շահազիզ 1859/60, 1861/62

Բանաստեղծ: Հեղինակ «Լեռնի վիշտը» պօէմայի, «Հրապարակախօս ձայն»ի, «Ամառնացին նամակների», «Ազատութեան ժամքը» բանաստեղծութիւնների եւ այլն: Նախ վերակացու լ.՝ Ճ. Հւ յետոյ բազմամեայ ուսու-

ցիչ Հայոց լեզուի լ. Ճեմարանում մինչեւ
1897թ.: Աշտարակեցիր: Աշխատակից «Հիւ-
սիսափայլ»ի: Վախճ. Մոսկուայում 1907թ.
դեկտ. 24ին, 67 տարեկան հասակում:

27. Յովհաննես Տէր-Յակոբեան 1859/60,
1861/62

Ա. Շահաղիզի մտերիմ բարեկամը Ճե-
մարանից սկսած. դասընկերներ են եղել: Հե-
տագայում Բաքուի նաւթարդիւնարերողնե-
րից:

28. Սեդրակ Մանդինեան 1857/58—1869/63

Մանկավարժ: 1876թ. տեսուչ Ներս.
դպրոցի, ապա Շուշու եւ Երեւանի թեմ.
դպրոցների, դասախոս Գէորգեան Ճեմարանի
եւ գրական գործիչ: Վախճ. 72 տարիքում
1915թ. նոյեմբ. 28ին Հեղինակ՝ ա. «Դպրո-
ցական սահմանադրութիւն», թ. Աննկա-
վարժական տարակուսանքներ մեր մէջ»,
գ. «Ուսման նախագիծ աղդ. ուսումնարան-
ների համար» եւ այլն:

29. Ամիր Թաւրիզեան — Ամիր-Դովլաթ
1862/63

Պարսկահայ, թարգման Պարսից շահի
արքունիքում:

30. Յովսէփ Օրբելի (Քահանայ)

Հեղինակ՝ «Համառօտութիւն Արքական
Պատմութեան, հանդերձ համառօտ բառա-

բանիւ ի Հայ լեզուէ ի ոռւս վասն բառից ի
ամա պարունակելոց, ի պէտս հայազգի ման-
կանց. աշխատասիրեաց Տիրացու Յովսէփ
Տէր-Յովակիմեան Օրբելի, որ աշակերտեցաւ
ի Տեարց Լազարեանց Հայկական Ճեմարանին
Արեւելեան լեզուաց»։ Մոսկուա. կրօնուսոյց
Թիֆլիսի գիմնազիոնում։

31. Գէորգ Դոդոյինեան 1852

Ուսուցիչ Ներս . դպրոցի եւ ազա տեսուչ
նոյն դպրոցի։ Համալսարանաւարտ։ Ծն.
1831 թ. Սիմֆերոպոլ քաղաքում. Հեղինակ՝
«Երդ պանդուխտ պատանեկի (Ծիծեռնակ)
1854 թ. Դորպատում։

32. Ռոկան Յովհաննիսեանց

1. Ճեմարանի Հայոց լեզուի ուսուցիչ,
որին փոխարինեց Մ. Նալբանդեանը 1853 թ.
Հեղինակ՝ ա. «Սմբատի Հայաստանի պատ-
մութիւնը»։ Մ. 1856 թ. թ. «Կիրակոսի Հա-
յաստանի պատմութիւնը»։ Մ. 1858. գ. «Հա-
յաստանի նոր քնարը»։ Երդերի ու բանաստեղ-
ծութիւնների Ժողովածու 1855 թ. Մոսկ.
գ. «Դասագիրք պարսկերէն լեզուի»։

33. Խամայիլ (Ստեփան) Խանի որդիի եւ եղ- քօրոքդիի (անունները անյայտ են)։

Եղել են թարգմանիչներ Պարսից Շահերի
արքունիքում։ Պարսկահայեր։

34. Աբգար Սարգիսեան 1864/65

Թարգման Նասրէդդին Շահի մօտ : Ունի
ուռւսերէնից Հայերէնի թարգմանական աշ-
խատանքներ : Ն . Զուղայեցի :

35. Մարտիրոս Դաւիթի Խանինեան (Ամիր-Թու-
ման) 1864/65

Զօրավար . Պարսկաստանի զինուորական
շտարի պետ :

36. Յովհաննիկս Միքաֆեան

Պետական խորհրդական Թիֆլիսում :
Այնուհետեւ Ս . Էջմիածնի գատախազ (պրո-
կուրոր) :

37. Ստեփան Մատինեան

Ս . Էջմիածնի պրոկուրօրի տեղակալ :
1848 թ . եղել է Ներս . դպր . Հոգաբարձու-
թեան անդամ :

38. Գեորգ Սուրենեանց 1850/51 , 1852/53

Ուսուցիչ Լ . Ճեմմարանի :

39. Գալուստ Զարիլսով

Ն . Նախիջեւանի Հայոց Հոգեւոր թեմ .
դպրոցի բեկառոր : Հասարակական գործիչ :
Ն . Նախիջեւանի ինքնավարութեան անդամ :

40. Գրիգոր Զալխուշեան

Փաստաբան : Հասարակական անուանի
գործիչ : Ն . Նախիջեւանի քաղաք . ինքնա-
վարութեան անդամ :

41. Գրիգոր Կարախանեան 1886

Գրաքննիչ Թիֆլիսում 1890 թ.:

42. Քալանք-ար Քալանքարեան

Պաշտօնեայ Շուշու դատաստանական
Հիմնարկներում:

43. Տէր Ստեփան Տէր-Ստեփանեան

Աւագ քահանայ Գորիսում:

44. Աղէքսանդր Մատինեան 1850/51

Ճեմարանի 50ամեակի առթիւ, 1865 թ.
Նուէր էր ուղարկել ճեմարանին հին ձեռա-
զիբներ՝ 74 հատ եւ զրգեր, զնուած Թիֆլի-
սում մի շարք քաղաքացիների եւ նախկին
աների միջեւ հանդանակուած զումարով.
Նուէրը ուղարկուած էր մի սրտառուչ նա-
մակի հետ, որի տակ ստորագրել էր ինքը:

45. Ասուածառուր Արարատեան

Աւսուցիչ եւ ազա պաշտօնեայ իջմիածնի
Մինողի եւ Կոնսիստորիայի: Յայտնի Յա-
րութիւն Ասուածառուրեան Արարատեանի
(Վաղարշապատցի), իսկական պետական
խորհրդականի՝ Եղրօր որդին էր: Ինքը Յա-
րութիւն Արարատեան շատ մօտ է Եղել Լա-
զարեանց մեծահռչակ զերդաստանին: (Տե՛ս «Յարութիւն Արարատեանի կեանքը», էջ թ.):

46. Տէր-Աստուրեան

Գեներալ-լեյտենանտ:

47. Լեւոն Խօջայիանց

Ուսուցիչ կղմիածնի Գէորգեան ձեմա-
րանում :

48. Նիկողայոս Մատ

Հոչակաւոր արեւելագէտ, Հայագէտ եւ
վրացագէտ, Հիմնադիր Յարեթաբանութեան
տեսութեան լեզուագիտութեան մէջ։ Պրոֆ.
Պետքըրուրդի համալսարանի արեւելագիտա-
կան մասնաճիւղում՝ իրրեւ Հայագիտութեան
ու վրացագիտութեան ամբիոնի դասախոս :

49. Յովհաննէս Յովհաննէսիան

Բանաստեղծ ու նաեւ ուսուցիչ կղմիածնի
Գէորգեան ձեմարանում 1890 թ.։

50. Աստուածատուր Պիտանիանց 1889

Ուսուցիչ կղմիածնի Գէորգեան ձեմա-
րանում 1890 թ. եւ ապա Հարկերի տեսուչ։

51. Վարդգէս Սուրենիանց

Նկարիչ։ Ուսուցիչ կղմիածնի Գէոր-
գեան ձեմարանում 1890 թ.։

52. Սիմեոն Շահնազարեան

Բժիշկ։ Եղել է 1897—1898 թ. ուսումն.
աարում, կարճ ժամանակով Երեւանի Հայոց
թեմ։ Պարոցի տեսուչ։

53. Լեւոն Մսիրեանց

Բարբառագէտ։ Դասախոս լ. ձեմ. Լի-
կէոնում։ Հեղինակ բազմաթիւ դիտ., աշխա-
տութիւնների։

54. Պետրոս Սիմեոնիանց 1850/51

Ն. Նախիջևանցի : Դորպատի համալսարարության 1851—1853 թ. : Դպրոցական գործիչ : Խմբագիր «Մեղու Հայաստանի» 1863 թ. Ղեկավար դէմք պահպանողական ուղղութեան :

55. Համբարձում Փափազեանց 1848/1849

Կ. Պոլսեցի : Աւարտել է Դորպատի համալսարանը 1849—1851 թթ. : Յետագային հոգեւորական :

56. Քերովքէ Պատկանեան 1849/50

1843 մտել է Ճեմ. եւ աւարտել 1850ին : Աշակերտել է Մ. Էմինին : 1851 թ. մտնում է Դորպատի համալսարանը, բայց չի աւարտում : 1857 թ. աւարտում է Պետերբուրգի Մանկավարժական Ճեմարանը : Աւսուցիչ Թիֆլիսում : 1861 թ. նշանակվում է Պետերբուրգի համալսարանի Արեւելեան մասնաճիւղի Հայոց լեզուի դասախոս : Դր. եւ պրոֆեսոր Հայագիտութեան : Ունի բազմաթիւ դիտական ուսումնասիրական աշխատանքներ նուիրուած դլիսաւորապէս Հայոց լեզուին եւ Հայոց պատմութեան : Հիմնագիր Հայ բարբառագիտութեան : Ծն. Ստաւրապոլում 1833 թ. եւ վախճ. 1889 թ. ապրիլ 2ին :

57. Ատամանեան Կոստանդին 1893/94, 1898

Աւսուցիչ Բաքւում :

58. Բահարքեանց Առաքել 1874

Փոխ վերատեսուչ Ն. Նախիջևանի Հոգ. թեմ. դպրոցի:

59. Արեանց Խաչատոր

Աւարտել է Մոսկ. համալսարանը: Բժիշկ Թիֆլիսում: Ծնած վերին Ագուլիսում:

60. Արիստակէս (Ռուսում) Զարդարեան

Մն. Գողթան զաւ. Ն. Ագուլիսում: Ճեմարաննը աւարտելուց յետոյ աւարտել է Մ. Համալսարանը բժշկ. մասնաճիւղը: Բժշկութեամբ պարապել է Թիֆլիսում եւ ձեռք բերել մեծ հոչակ: Հրաւիրուել է որպէս Ն. Կ. Մ. Միիսայիլ Նիկոլաևիչի պալատական բժիշկ. այդ պաշտօնում մնացել է մինչեւ 1905 թ. յեղափոխութիւնը: Յայտնի էր որպէս շատ համակրելի հասարակ. գործիչ. եղել է Կովկասի Հայոց հրատարակչ. ընկերութեան վարչութեան անդամ: Երկու տարի բժշկութիւն արել Թաւրիզում ու յետոյ վերադարձել նորից Թիֆլիս, ուր եւ վախճանուել է: Ունէր նկարչութեան չնորհք: Գրել է մի քանի գրքոյկներ զօկերի բարրառով:

Մարդասէր, ազգասէր եւ մասնաւորապէս քնքուչ զզացումներ էր տածում դէպի Գողթանն ու զողթանցիները:

61. Անսնիս Սուլթան Շահ 1853/54

Բժշկ: Հասարակ. գործիչ: Աշխատակից «Հիւսիսափայլ»ի: Հեղինակ՝ «Հայոց

ազգի լուսաւորիչք» վիստական դրուածքի:
Վախճանած Ղղարում 1900թ.:

62. Սարգիսեան Աբգար 1864/65

Թարգման Նասրէղդին Շահի ժօտ: Ունի
թարգմանական աշխատանքներ ուսուերէնից՝
Հայերէնի: Ն. Զուղայեցի:

63. Սարգիսեան Լեւոն 1873/84

Գողթանի Յղնա (Յանանար) գիւղից:
Ծն. 1862թ. Աւարտել է Մոսկ. համալսա-
րանի բնագիտական բաժինը: Ուսուցիչ Լազ.
Ճեմ. և Ներսիսեան դպրոցում (1889թ.):
Հեղինակ «Հին ցաւ», «Ժողովրդակ. կրթու-
թիւնը մեղանում», «Այց Թիւրքաց Հայաս-
տանին»: Տեսուչ Շուշլայ թեմ. դպրոցի:
Հեղինակ «Մայրենի խօսք» (Կ. Կուսիկեանի
հետ) ընթերցարանութեան ձեռնարկի: Քա-
ղաքագլուխ Ալէքսանդրապոլի: (Լենինա-
կանի): Մով. իշխ. օրոք: 1921թ. դեսպան
կ. Հ. Թահարանում: Վիճ. 1926թ.:

64. Համբարձում Թումանեանց 1877/88

Պարսկաստանի հանրածանօթ թուժա-
նեան Առեւտրական Տան անդամ: Ապրում է
Փարիզում:

65. Երուանդ Շահաղիզ

1882. Ն. Նախիջեւանի թեմ. դպրոցի
Հայոց լեզուի դասատու: Աչքառու գրակա-
նագէտ. ունի բազմաթիւ գրական-պատմա-
կան-կենսագրական ուսումնասիրութիւններ:

Հեղինակ՝ «Մկրտիչ Յովսէփեան կմին» կենազգութեան, «Ամբատ Շահազիդ»ի կենազգութեան (1944թ.): Խ. Հայաստանում ստացել է «Դոկտոր Փիլոլոգիական գիտութիւնների» կոչումը:

66. Մկրտիչ Բարխուդարեան 1886/87

Ծն. Գողթանի Վ. Ազուլիս աւանում: Համալսարանաւարտ: Խմբագիր կիսամետ «Հանդէս գրականութեան եւ պատմութեան»: Լոյս Են տեսել Եօթ ստուար հատորներ 1888—1896թթ.: Աւնէր տպարան Մոսկւայում 1889թուից:

67. Կանկանեան

Բժիշկ Կաղզմանում:

68. Մամիկոնեան

Բժիշկ Կաղզմանում:

69. Մակաշեան Սուրեն

Բժիշկ. գործել է Երեւանում, Թեհրանում և Իրանի այլ քաղաքներում:

70. Կարապետ Կուսիկեան

71. Մինաս Բերբերեան (80ական թուականներին)

Ն. Նախիջևանցի:

72. Երիյ Վեսելովսկի (80ական թուականներին)

Ռուս գրական գործիչ: Աւնի հայ գրականութեան նուիրած մի շարք աշխատանքներ: Անկեղծ ու ջերմ հայաէր:

73. Ալեքսէյ Զիվիլեգեան

Աւարտել է Մ. Համալս. պատմա-լեզուագիտական մասնաճիւղը: Պրոֆ. պատմութեան: Ունի ոռւսերէն լեզուով մի շարք պատմագիտական աշխատանքներ: Ներկայիս Խ. Հայաստանում է աշխատում:

74. Եակուլով Ալէքսանդր

Աւարտել է Մ. Համալս. իրաւաբան. մասնաճիւղը եւ ապա որպէս փաստաբան զործել Մոսկուայում:

75. Քալանք-արեան Արտեմ 1891

Մի Փիլմայի ներկայացուցիչ Բաքւում:

76. Բահար-բեան Լեւոն 1891/92, 1895

Աւարտել է Մ. Համալս. իրաւաբան: Գործել է Բաքւում:

77. Ամբարդանով Ալէքսիանոս 1900

Պետերբուրգի Պետական Բանկի պաշտօնեայ:

78. Տէր-Սարգիսեանց Ստեփան

(Ազատ ունկնդիր 1889 թ.)

Վերակացու Լազ. Ճեմ. եւ Դաստառնախակիթաբանի առաջին բաժանմունքի Լազ. Ճեմաբանում:

79. Սեփերեան Գէորգ

Առեւտրական Միլանո քաղաքում (Իտալիա):

80. Պետրոսեան Ղազարոս 1895, 1898

Պոլսեցի: Լազ. Ճեմ. Լիկէոնից յետոյ
մտնում է Մ. Համալսարանի բժշկական մաս-
նաճիւղը, որը եւ աւարտում է: Գործել է
թուսաստանի գաւառական քաղաքներում:

81. Ալէքսանդր Ներսիսեան առ. 1895

Իրաւարան Մոսկուայում: Աւարտ. Մոսկ.
Համալս. իրաւարանական մասնաճիւղը:

82. Ստեփան Քաբանակեան առ. 1895

Աւարտել է Մոսկ., Համալս. պատմա-լե-
զուագիտ. մասնաճիւղը, գրականութեան
բաժինը: Ուսուցիչ Ներսիս. դպրոցի ոռուե-
րէն լեզուի: Գնահատուած արտասանող:
Թատրոնական դործիչ Թիֆլիսում:

83. Յովսէփ Թադէոսեան 1887—1895

Ծն. Գողթանի Վ. Ազուլիս աւանում
1873թ.: Սկզբնական կրթութիւնը ստացել է
գիւղի ծխ. դպրոցում. Միջնակարգը՝ Լազ.
Ճեմարանում: Բարձրագոյնը՝ Մոսկ. Հա-
մալս. պատմա-լեզուագիտական բաժնի
պատմական մասնաճիւղը 1900թ.: Երկու եւ
կէս տարի եղել է ուսանող Բերլինի և Միւն-
խէնի Համալսարաններում, լսել է Հասարա-
կական գիտութիւններ ու պատմութիւն:
Պաշտօնավարել է, որպէս ուսուցիչ՝ Թիֆ-
լիս քաղաքի Հայոց Յովնանեան դպրոցում
(2 տարի), որպէս տեսուչ՝ Ախալցխայի և
Բաթումի դպրոցներում: Եղել է ուսուցիչ

Լազարեան Ճեմարանում (1909—1918) : Հ . Հ .
օրօք եղել է Երեւանի գաւառական ինքնավա-
րութեան Վարչութեան Նախագահ : 1921—
1929 թ . Թաւրիզի Հայոց գիմնազիոնի հիմ-
նադիրներից մէկը եւ ուսուցիչ : 1929—1831 թ .
Թէհրանի Հայոց գպրոցում ուսուցիչ : 1931 թ .
Հիմնադիր եւ առաջին իմբարդիր (5 տարի)
«Ալիք» թերթի : Խմբագիր՝ «Նաւասարդ» ,
«Լոյս» եւ «Արփի» գրական-գիտական ամսա-
դիրների : Աւնի բազմաթիւ գրական ինքնու-
րոյն ու թարգմանական աշխատանքներ : Աշ-
խատակցել է՝ «Հայրենիք» եւ «Մուրճ» ամ-
սադիրներին , «Հայրենիք» , «Յուսարեր» եւ
«Յառաջ» օրաթերթերին , «Նոր Գիր» գրա-
կան Հանդէսին եւ «Հանդէս Ամսօրեայ» ու-
սումնաթերթին :

84. Յակոբ (Եաշա) Եակուլով

Աւ . Լազ . Ճեմ . եւ Մոսկ . Համալսարանի
Իրաւաբանական բաժինը : Շատ շուտով ձեռք .
բերել անուանի վաստարանի անուն Մոս-
կուսցում : Մասնագէտ քրէական իրաւունքի :

85. Մամիկոն Գէորգեան

Ծն . Գողթանում՝ վ . Ազուլիսում :
Աւարտ . Մոսկ . Համալս . իրաւաբանական
մասնաճիւղը : Ներկայումս՝ ի . Հայոստա-
նումն է գործում :

86. Գարեգին Աքարեկեան

Ծն . վ . Ազուլիսում : Աւ . Մոսկ . Հա-
մալսարանի բժշկական մասնաճիւղը :

87. Պալասանեան Ռուբէն

ԲԺ. ԹԵՀՐԱՆՈՒՄ :

88. Ֆրէնդէան Ալէֆսանդր 1899 թ.:

Սկզբ. կրթութիւնը ստացել է ԹԵՀՐԱՆԻ
Հայկագեան դպրոցում: 1899 թ. անցել է
Լազ. Ճեմարան: Երկար տարիներ սրաշտո-
նավարել է իրանի պետական հիմնարկնե-
րում:

89. Մելիք-Յովսէփէան Յարութիւն 1909—
1916

Վաճառական ԹԵՀՐԱՆՈՒՄ :

90. Յակոբէան Գալուստ 1905—1915

Ճարտարագէտ-մեքենագէտ ԹԵՀՐԱՆՈՒՄ :

91. Յակոբէան Սուրէն 1906—1915

Տնտեսագէտ: Գործում է ԹԵՀՐԱՆՈՒՄ :

92. Յովսէփ Կուսիկէան

Բարձրագոյն ուսումն. ստացել է Մոսկ.՝
Համալսարանում, աւարտելով պատմա-լե-
զուագիտական մասնաճիւղը: Ներկայումս
գործում է Խ. Հայաստանում: Պատմագիտա-
կան աշխատանքներ ունի. աշխատակցում է
«Խ. Հայաստան» եւ այլ հանդէսներին Երե-
ւանում:

93. Դեմետրի Կարապետէան 1909—1917

Ծն. Ն. Զուղացում 1909 թ. Սկզբ. կրթու-
թիւնը ստացել է Ն. Զուղացի ծխական դպրո-

ցուց։ Լազ։ Շեմ։ լիկէոնում սովորել է
1½ տարի (Պր. Մառի և Օրբելիի ժա-
մանակ), յետոյ անցել Մոսկուոյի Պետ-
Երաժշտանոցը։ Նուպում է թառ ջութակի
վրոյ։ Ներկայիս՝ Թհհրանի Երաժշտանոցի
թառ ջութակի դասասունն է։

94. Գուրգէն Տէր-Մկրտչեան 1909—1916

Երաւարան։ Գործում է Թէհրանում որ-
ոպէս առեւտրական-արդիւնարերող։ (Առնի
կարտօնաժի զործարան։)

95. Միքայէլ Մանդինեան

Թիֆլիսեցի։ Բժիշկ։ Վիճակասահ-
մանում։

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. «Լազարեան Ճեմարանի 50ամեակը», Հաւաքածոյ ճառերի, Հաշուետուութեան, բարձրագոյն հրովարտակների, պաշտօնական զրադրութիւնների, ճեմարանաւարտների անուանացուցակով և այլն: Թուսերէն: Տպարան Լազ. Ճեմարանի: 1865, 4^o, Մոսկուա:
2. «Լազարեան Ճեմարանի 75ամեակը», Հաւաքածոյ նոյնանման նիւթերի: Մոսկուա, Տպարան Գաստուկի, 1891թ., էջ թ + 250 և չորս տախտակներ զիհակագր. ուղեկութիւններով: Թուսերէն:
3. «Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Գաստրանիների 30ամեակը» (1872—1902), Հաւաքածոյ ճառերի, Հաշուետուութեան, պատմական ակնարկի, Անուանացուցակ ուսանողների, դաստանների զիհական աշխատանքների ցանկ և այլն: Մոսկուա 1903: Թուսերէն:
4. Պրոֆ. Ալեքսէլ Զինովիւ, «Լազարեան Ճեմարանի արեւելեան լեզուաց պատմական ակնարկ, հանդերձ համառօս կինսագրական տեղեկութիւններով Լազարեան տոհմի անդամների մասին»: Մոսկուա 1863թ.: Տպարան Լազ. Ճեմարանի: Թուսերէն:
5. Մսեր Մագիստրոս Գր. Մսերեանց, «Յիշատակարան կինաց և գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի»: Տպարան Արեւելեան լեզուաց Ճեմարանի Տեարգ Լազարեանց: ի Մոսկուա 1856:
6. Աղ. Երիցեանց, «Կովկասահայց ԺԹ. դարում: Մասն Ա. և Մասն Բ. (1831—1842): Թիֆլիզ 1895:
7. Աղ. Երիցեանց, «Ներսէս հայսկոպոսը Գանիէլ կարողիկոսի ժամանակ»: Թիֆլիզ 1877:

8. «Յիշատակարան բազմերախտ հոգաբարձուի Յովհաննու Յովակիլիմեան Լազարեանց»: *Մոսկուս* 1859, Տպարան Լազ. Ճեմ. Արեւելեան Լեզուաց:
9. Գառիք Անանուն, «Ֆուսահայերի հասարակական գարգացումը 19րդ դարում»: Հ. Ա. 1916 թ.:
10. «Բարձրագյուղ Հրովարտակի, Կանոնագրութիւնք և Յուցակ Լազարեանց Ճեմարանի Արեւելեան Լեզուաց ի Մոսկով և Կանոնք նորին բարձրագոյն հասատեալք», Ժամանուր Տ. Հոգարտարձուի Լազարեանց Ճեմարանի ի յիշատակ մատադահառ Յովհաննու Խաչատրեան Լոգարեւի: Ի Մոսկով, ի Տպարանի Լազարեանց Ճեմարանի Արեւելեան Լեզուաց: 1852: (Հոցիրէն և Առուերէն բնագրեռով:)
11. Լեօ, «Յովսէփ կարողիկոս Արդուքեան», *Թիֆլիս* 1902:
12. Լեօ, «Հայկական Տպագրութիւն», Հ. Ա. Եւ Հ. Բ.:
13. Լեօ, «Ստեփանոս Նազարեանց», Հ. Ա. Եւ Հ. Բ. *Թիֆլիս* 1902:
14. Լեօ, «Փատմ. Երեւանի քեմական հոգեւոր դպրոցի, 1837—1912»: *Թիֆլիս* 1914:
15. Ստ. Մալյասեանց, «Համառօս պատմութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի 75ամեակը», Շուշի 1913 թ.:
16. «Կարաբաղի Հայոց Հոգեւոր քեմական դպրոցի 75ամեակը», Շուշի 1913 թ.:
17. Նիկոլ Ադրայեան, «Փատմութիւն Հայոց գրականութեան». Ներածութիւն: Պէյրութ 1947, Տպ. «Յոյս»:
18. Երուանդ Շահազիզ, «Մկրտիչ Յովսէփեան կմին», Կենսագրական էտիւդ: *Թիֆլիս* 1900:
19. Երուանդ Շահազիզ, «Մերատ Շահազիզի Կենսագրութիւնը»: Երեւան 1944:
20. Լեւոն Մանուկեան, «Ֆուսահայ գրականութեան պատմութիւն», Հու. Ա., Բ., Գ., և Դ., 1909—1911: *Թիֆլիս*:

21. Վ. Պօտոս (ռուս պատմաբան), «Վերածնուրին Հայաստանի», Առուսերէնից թարգմ. Պ. Պ. (Արտասահութիւն «Բանասէր» հանդէսից) : Պարփակ 1904:
22. Յարուրին Թ. Տէր-Յովիկիանիանց, «Պատմուրին Նոր Զուղայու որ յլկապահան, աշխատասիրեալ Նոր Զուղայեցւոյ Առենազպրէ Ամենափրկչեան Արրօյ վանաց» : Ն. Զուղա, Տպարտն Ամենափրկչեան Ս. վանաց, 1880 թ. : Հ. Ա. Է. 1881 թ. Հ. Բ. :
23. «Իլիւան Հայոց Պատմուրեան», Ամրագրեց Գիւտքան. Ազգանեանց : Գիրք Ա. Է. Բ. 1780—1834 : Թիֆլիս 1893 :
24. Գիւտքան. Ազգանեանց, «Կարենյ գաղըթ» (1829—1830) : Թիֆլիս 1891 :
25. Կարապետ Եզեանց, «Ա. Լջմիածնի Մայր Արռոի եւ Ռուսաց կառավարուրեան յարաքերուրինների ծագումը» : Թիֆլիս 1905 :
26. Վ. Գ. Զարդարեան, «Յիշատակարան» : Հայ երեւանիներու կենսագրութիւնները, ձեռագրերը, գրութիւնները և այլն : 1512—1912. Հայկական ապագրութեան 400ամեաց յարելեանի տակթուի : Երկրորդ Հատոր : 61 կենսագրութիւն 126 լուսատիոն պատկերներուի : 1911 թ. Կ. Պոլիս :
27. Մխիթար Վարդապետ, «Հայերը Ռուսաստանում» : Վաղարշապատ 1906 :
28. Ղազարոս Աղայեան, «Եմ կեանի գլխաւոր դեսթիքը» :
29. «Նկարագիր Գաղքականուրեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» : 1832, ի Առոկով ի տպարտնի Հայկական ճեմարտնի Տեսրց Լազարէանց :
30. Գր. Զանգեան, «Եղբայրական Օզնուրին Հայերին», Առոկուաւ : Առուսերէն :
31. Ամբատ Շահագիզ, «Եւունի Ալիշտը» : Պոէմա : 1865 թ. Տպարտն Լազարէան ճեմարտնի,

32. «Բազմավեպ», Հասոր թէ : Վենետիկ 1887 թ. :
33. «Հանդէս Ամսօրեայ», Հոկտ.—Դեկտ. 1947:
34. «Սինմ», ամսագիր, 1947 թ. մարտ, թ. 3: Երաւառագիր :
35. «Հայրենիք», ամսագիր, 1946, մարտ—ապրիլ: Գումարն :
36. «Սովհատական Հայաստան», ամսագիր, 1947, ահուակարեր, թ. 9:
-

ՈՒՂՂԵԼԻՔ

Լ. Տ	ՏԱՐ	ՏԱՐԱՄԸ Է	ՊԻՄԻ ԼԻՆԻ
9	5 ն.	ԱՀԲԱԿՅ	ԱՀԲԳՅ
11	7 ն.	Թէ առանձին ցանկի բաց թողնել այս մէջ	բառերը
31	2 զ.	այն արիական	այն արիանուս
41	3 զ.	ԱԼԷ քաէ յօնիսայի	ԱԼԷ քաէ յեւնայի
48	1 ն.	ցուցադրած վերա— ցուցադրած պար- րերմունքն	սաւելի վերա— րերմունքն
49	7 ն.	ընթացքներին	ընթացքին
96	6 զ.	ԿԵՆՈՐՈՆԱԿԱՆ	ԿԵՆՈՐՈՆԱԽՈՎՈ
102	2 ն.	ԳԼԵՆԿԱՆ	ԳԼԻՆԿԱՆ
109	4 ն.	ԳԼԵՆԿԱՆ	ԳԼԻՆԿԱՆ
111	11 ն.	Վազանգուսկի	Վանգանկովսկի
151	3 ն.	զործնահետեւանիք— ների	զործնական հետեւ. ևանքների
152	5 ն.	Շահըմանեան	Շահամիքան
154	9 զ.	ԿԱՆՐԻՆԳՆ	ԿԱՆՐԻՆԳՆ
154	7 ն.	Ի Տամարէն	Ի Թամարէն
163	15 զ.	Գեղարտակրին	Գեղարդակրին
164	4 զ.	Ժայշնացումն	Ժայշզացումն
193	5 ն.	շթարս-բիտմիստրի	շտարս-բուտմիստրի
212	13 զ.	ժամուլի որդաները	ժամուլի օրդան— ները
212	8 ն.	Ճախելով	Ճախսելով
217	9 ն.	Հայկական գրադա— րանը	Հակայական գրա— դանը
220	10 զ.	դրականութեան	իրականութեան
223	3 զ.	առաջ էր	առաջ է

1 վ. = վերելիք : ն. = ներքելիք :

225	2	<i>q.</i>	(Կամելիկեր)	(Կամելիկեր)
246	1	<i>h.</i>	դաստիու:	դաստիու հւ դաս-
				տիարակ:
278	13	<i>q.</i>	Տուլայի Պերմ հւ	Տուլայի, Պերմ
337	15	<i>q.</i>	զբականագիտու-	զբականութեան
				թեան
352	2	<i>q.</i>	Երադացնել	իրականացնել
365	14	<i>q.</i>	մտացնացումի	մտացնացումի
368	15	<i>h.</i>	(Հուսաւորու) էկան	(Հուսաւորու)-
				թեան
414	2	<i>q.</i>	Զատղաեւ	Զատղաեւ
423	3	<i>h.</i>	Մելլէրի	Միլլէրի

ՊԱՏԿԵՐՆԵՐ

էջ

1. Լազար Ն. Լազարեան	98
2. Յովհաննէս Դ. Լազարեանց	115
3. Յարութիւն Յ. Լազարեանց	132
4. Մինաս Լ. Լազարեանց	158
5. Յովակիմ Լազարեանց	172
6. Յովհաննէս Յ. Լազարեանց	192
7. Յարութիւն Ե. Լազարեանց	195
8. Խաչատուր Լազարեանց	229
9. Յովհաննէս Խ. Լազարեանց	239
10. Գնդապետ Ղազար Յ. Լազարեանց	249
11. Գաղքականութիւն 4000 Հայոց Պարսկաստանէ Ռուսաստան 1828ին	267
12. Հայոց եկեղեցին և Լազարեան Ճեմարանի ..	272
13. Ճեմարանի գլխաւոր մուտքը Հայոց փողոցից	272
14. Ճեմարան Արեւելիան Լեզուաց	288
15. Ճեմարանի Գ. Նախակյրքարանի աշակերտները	288
16. Լազարեանների Յուշարձանը	304
17. Ճեմարանի բննութիւնների դահլիճը	304
18. Գէորգ Պ. Քանանեան	320
19. Պրոֆ. Միրզա Զաֆֆար	336
20. Մկրտիչ Էմին	352
21. Քերովք Պատկանեան	368
22. Ա. Եւ Բ. Նախակյրքարանների աշակերտները. աջ՝ Կարապետ Կուսիկիան .. ձախ՝ Ստեփան Տէր-Մարգիսեան	384
23. Լիկէոնի Ա. դասընթացքի ուսանողները .. ձախ՝ Պրոֆ. Միրզա Զաֆֆար .. աջ՝ Պրոֆ. Աստայեան	384

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Մ Ա Տ Ե Ւ Ը Թ Ա Ր Ա Ն

Մ Ա Տ Ե Ւ Ը Թ Ա Ր Ա Ն

- Ճ Կ Բ . Ա կ ի ն ե ա ն Հ . Ե . , Ե ղ ի չ է վ ա ր դ ա ո ւ հ ա ս ե լ ի ւ թ ի ւ ն ի ւ ն Հ ա յ ո ց պ ա տ ե ր ա զ մ ի ն . ք ն ն ա կ ա ն ո ւ ս ո ւ մ ի ս ա ս ի ր ու թ ի ւ ն : Հ ա յ տ . Գ . : 1952 , Է ջ բ . 530 :
գ . Փ ր . 7 . —
- Ճ Կ Բ . Ա կ ի ն ե ա ն Հ . Ե . , Կ ա ր մ ի ր ն Վ ա ր դ ա ո ւ հ ա ս ե լ ի ւ թ ի ւ ն Հ ա յ ո ց պ ա տ ե ր ա զ մ ի ն : Հ ա յ տ . Գ . : 1951 , Է ջ բ . Է + 96 :
գ . Փ ր . 1 . —
- Ճ Հ . Պ օ լ ո ւ ս ա ն Հ . Ե . , Գ ա յ շ ա մ ձ ն ե ա ն ե ւ թ ր ն կ ր ե ա ն ի ւ գ ե ր դ ա ս ա տ ա ն ե ր ը : 1951 , Է ջ բ . Ե + 222 :
գ . Փ ր . 1 . 2 0
- Ճ Հ Ա . Ո ս կ ե ա ն Հ . Հ . , Գ ն ո ւ ն ե ա ց ե ւ թ շ ո ւ ն ե ա ց ն ա յ ա ր ա ր ու թ ի ւ ն ե ր : 1952 , Է ջ բ . Է + 156 :
գ . Փ ր . 3 . —
- Ճ Հ Բ . Ա կ ի ն ե ա ն Հ . Ե . , Բ ա ղ է չ ի Դ պ ր ո ց ը 1500—1704 . Ն պ ա ս ա մ մ ը Հ ա յ ո ց Ե կ ե ղ ե ց ւ ո ց Պ ա տ մ ու թ ե ա ն ե ւ թ ա տ ե ն ս պ ր ու թ ե ա ն : 1952 , Է ջ բ . Է + 390 :
գ . Փ ր . 5 . —
- Ճ Հ Գ . Ա կ ի ն ե ա ն Հ . Ե . , Մ ա տ ե ն ս պ ր ա կ ա ն հ ե տ ա զ օ տ ո ւ թ ի ւ ն ե ր . Հ ա յ . Ե . 1953 :
գ . Փ ր . 5 . —
- Ճ Հ Դ . Ո ս կ ե ա ն Հ . Հ . , Տ ա ր օ հ — Տ ո ւ ր ու ր ե ր ա ն ի վ ա ն ք ե ր ը : 1953 , Է ջ 371 (24 պ ա տ կ ե ր ո վ) :
գ . Փ ր . 5 . —
- Ճ Հ Ե . Ո ս կ ե ա ն Հ . Հ . , Ա ր ց ա խ ի վ ա ն ք ե ր ը : 1953 , Է ջ բ . 256 :
գ . Փ ր . 3 . —
- Ճ Հ Զ . Թ ա ղ է ս ս ա ն Յ . , Պ ա տ մ ու թ ի ւ ն Լ ա զ ա ր ե ա ն ա ռ ա հ մ ի ւ թ ի ւ ն Լ ա զ ա ր ե ա ն ճ ե մ ա ր ա ն ի ա ր ե ւ ե լ ե ա ն լ ե զ ու ց : 1953 , Է ջ բ . Է + 516 : (23 պ ա տ կ ե ր ո վ)
գ . Փ ր . 5 . —
- Ճ Հ Ի . Պ օ լ ո ւ ս ա ն Հ . Ե . , Ո ս կ ե ա ն ե ւ թ ր ն ը ր ի ւ ն կ ա ր պ ա տ ա ն ե ր ը : 1953 , Է ջ բ . 120 :
գ . Փ ր . 1 . 5 0

Liausgt.

Մ Խ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Գ Բ Ա Վ Ա Շ Ա Բ Ե Ա Ն Օ Ց

Librairie des Pères Mechitharistes

Vienne VII/62, Mechitaristengasse 4 (Autrich')



9|66 է զ. Փր. 5.—:

0003891

ՀՀ Ազգային գրադարան



NL0003891

